

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

**ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՏԹԵՎՈՍ - ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ**

ԲՈՔ ԱԹԼԻ

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ
(ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ. ՄԱՐԾԱԼ, ՏԵԽԱՍ
2000 (Վերանայված 2007)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

| | |
|--|-----|
| Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց..... | 2 |
| Բացման խոսք..... | 9 |
| Մատթևոսի ներածություն..... | 11 |
| Մարկոսի ներածություն..... | 17 |
| Ղուկասի ներածություն | 24 |
| Հովհաննեսի ներածություն..... | 32 |
| Գործք Առաքելոցի ներածություն..... | 40 |
| Հռոմեացիների ներածություն | 49 |
| 1 Կորնթացիների ներածություն | 54 |
| 2 Կորնթացիների ներածություն..... | 62 |
| Գաղատացիների ներածություն | 69 |
| Եփեսացիների ներածություն | 74 |
| Փիլիպեցիների ներածություն | 83 |
| Կողոսացիների ներածություն | 89 |
| Թեսաղոնիկեցիներին ուղղված նամակների ներածություն | 98 |
| Հովվական թղթերի ներածություն. 1 և 2 Տիմոթեոս և Տիտոս | 108 |
| Տիտոսի ներածություն | 116 |
| Փիլիմոնի ներածություն | 118 |
| Եբրայեցիների ներածություն | 121 |
| Հակոբոսի ներածություն | 127 |
| 1 Պետրոսի ներածություն..... | 133 |
| 2 Պետրոսի ներածություն..... | 142 |
| 1 Հովհաննեսի ներածություն..... | 147 |
| 2 և 3 Հովհաննեսի ներածություն..... | 153 |
| Հուդայի ներածություն | 155 |
| ՀԿ մարգարեության ներածություն..... | 160 |
| Հայտնության ներածություն | 165 |
| Հավելված Մեկ | 183 |
| Հավելված Երկու..... | 192 |
| Հավելված Երեք..... | 196 |

Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վստահելի ճշմարտության անձնական ուսումնասիրություն

Կարո՞ղ ենք մենք իմանալ ճշմարտությունը: Որտե՞ղ գտնել այն: Կարո՞ղ ենք այն տրամաբանորեն հաստատել: Արդյո՞ք գոյություն ունի վերջնական ապացույց: Արդյո՞ք կան բացարձակ ճշմարտություններ, որոնք կարող են առաջնորդել մեր կյանքը, մեր աշխարհը: Արդյո՞ք կյանքն իմաստ ունի: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք գնում: Այս հարցերը, որոնց շուրջ բոլոր բանական մարդիկ խորհում են, հետապնդել են մարդկային բանականությանը ժամանակի գոյությունից ի վեր (Ժող.1:13-18; 3:9-11): Կարող են հիշել իմ անձնական փնտրտուքները կյանքիս ինտեգրման կենտրոնի համար: Ես դարձել եմ Քրիստոնյա հավատացյալ երիտասարդ տարիքում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիքում նշանակալի մարդկանց վկայությունների վրա: Երբ հասունացա, հասունացան նաև իմ և ինձ շրջապատող աշխարհի մասին հարցերս: Պարզ մշակութային կամ կրոնական կլիշեները չէին իմաստավորում իմ կարդացած կամ վերապրած փորձառությունները: Դա շփոթության, փնտրտուքի, երազանքների և հաճախ հուսահատության զգացողության ժամանակ էր՝ ի դեմս այս անգամ, բարդ աշխարհի, որտեղ ապրում էի:

Շատերը պնդում էին, որ ունեն այս կարևոր հարցերի պատասխանները, թեև հետազոտելուց և խորհելուց հետո հասկացա, որ նրանց պատասխանները հիմնված էին (1) իրենց անձնական փիլիսոփայության, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառության կամ (4) հոգեբանական կանխատեսումների վրա: Ես կարիք ունեի ստույգության որոշակի աստիճանի, վկայությունների, ինչ-որ բանականության, որի վրա կարող էի հիմնել իմ աշխարհայացքը, ինտեգրման կենտրոնը, ապրելու իմ նպատակը:

Այս բոլորը ես գտա Աստվածաշնչի իմ ուսումնասիրության մեջ: Սկսեցի փնտրել արժանահավատության փաստեր, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական հուսալիության մեջ, որը հաստատված է հնագիտությամբ, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրտության մեջ, (3) իր ամբողջացվելու համար ավելի քան հազար վեց հարյուր տարի տևած Աստվածաշնչի պատգամի միաբանության մեջ և (4) մարդկանց վկայությունների հիման վրա, որոնց կյանքերը Աստվածաշնչի հետ շփվելու արդյունքում ընդմիշտ փոխվել էին: Քրիստոնեությունը, որպես հավատքի և դավանանքի միավորված համակարգ, կարողանում է աշխատել մարդկային կյանքի բարդ հարցերի հետ: Այն ոչ միայն ապահովեց բանական հիմք, այլ նաև աստվածաշնչյան հավատքի փորձառական առանձնահատկությունը ինձ տվեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել եմ իմ կյանքի ինտեգրման կենտրոնը՝ Քրիստոսին, երբ հասկացա այն Սուրբ Գրքի միջոցով: Դա արբեցնող փորձառություն էր, զգացական ազատագրում: Համենայն դեպս, ես դեռ կարող եմ հիշել այն ցնցումը և ցավը, որ վերապրեցի, երբ հասկացա, թե այս գրքի քանի տարբեր մեկնություններ էին պաշտպանվում, երբեմն նույնիսկ միևնույն եկեղեցիների և միևնույն մտածելակերպի դպրոցների ներսում: Աստվածաշնչի ներշնչված լինելու ու արժանահավատության հաստատումը դեռևս վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս եմ հիմնավորում կամ հերքում Աստվածաշնչում շատ խրթին հատվածների տարբերվող և իրարամերժ մեկնությունները, որոնք կատարվել են այնպիսի մարդկանց կողմից, որոնք պնդում են դրա հեղինակությունը և արժանահավատությունը:

Այս աշխատանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտը: Ես գիտեի, որ Քրիստոսի հանդեպ իմ հավատքը բերել է անսահման խաղաղություն և ուրախություն: Իմ մշակույթի հարաբերականության, իրարամերժ կրոնական համակարգերի դոգմատիզմի և հարանվանական գոռոզամտության մեջ միտքս փափագում էր բացարձակ ճշմարտությունների: Անտիկ գրականության մեկնությանը ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու իմ փնտրտուքների մեջ զարմացա, որ հայտաբերեցի իմ իսկ պատմական, մշակութային, հարանվանական և փորձառական շեղումները: Աստվածաշունչը հաճախ ես կարդացել էի միայն իմ սեփական հայացքները հաստատելու համար: Ես օգտագործել էի այն որպես դոգմայի աղբյուր հարձակվելու ուրիշների վրա, մինչ վերահաստատում էի իմ իսկ անհաստատ կողմերն ու թուլությունները: Որքա՞ն ցավալի էր այս գիտակցումն ինձ համար:

Չնայած որ երբեք չեմ կարող լինել օբյեկտիվ, այնուամենայնիվ կարող եմ դառնալ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները՝ ընդունելով դրանք և դրանց առկայությունը: Ես տակավին չեմ ազատվել դրանցից, սակայն առճակատվել եմ իմ սեփական թերությունների հետ: Հաճախ մեկնաբանը լավ Աստվածաշունչ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք թվարկել մի քանի նախադրյալներ, որոնք ես ներառում եմ իմ Աստվածաշնչյան սերտորության մեջ, որպեսզի դուք՝ ընթերցողներդ, կարողանաք ինձ հետ միասին դրանք ուսումնասիրել:

I. Նախադրյալներ

1. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը բացառապես ներշնչված՝ միակ ճշմարիտ Աստծո ինքնահայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բնագրի աստվածային հեղինակի (Հոգու) մտադրության լույսի ներքո, որը գրվել է մարդու կողմից՝ հատուկ պատմական միջավայրում:


2. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է հասարակ բոլոր մարդկանց համար: Աստված հարմար է գտել պատմական և մշակութային համատեքստում հստակ խոսել մեր հետ: Աստված չի թաքցնում ճշմարտությունը, այլ ուզում է, որ այն հասկանանք: Հետևաբար, այն պետք է մեկնաբանվի այդ օրերի լույսի ներքո և ոչ թե մեր: Աստվածաշունչը չպետք է նկատի ունենա մեր համար մի բան, որը նկատի չի ունեցել առաջին անգամ կարդացողների կամ լսողների համար: Այն հասկանալի է միջին հասկացողության տեր մարդկանց համար և կիրառում է նորմալ հաղորդակցության միջոցներն ու տեխնիկաները:
3. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը ունի մի պատգամ և մի նպատակ: Այն ինքն իրեն չի հակասում, թեև պարունակում է խրթին և պարադոքսալ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց ինքը Աստվածաշունչն է:
4. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (ներառյալ մարգարեությունները) ունի միայն մեկ նշանակություն՝ հիմնված բնագրի ներշնչված հեղինակի մտադրության վրա: Թեև երբեք չենք կարող կատարյալ վստահությամբ ասել, որ գիտենք բնագրի հեղինակի մտադրությունը, սակայն շատ ցուցանիշներ մատնանշում են դա.
 - ա. ժանրը (գրական ձևաչափը), որը ընտրվել է արտահայտելու ուղղերձը
 - բ. պատմական միջավայրը կամ հատուկ իրավիճակը, որը երևան է բերել այդ գրությունը
 - գ. ամբողջական գրքի, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժնի գրական համատեքստը
 - դ. գրական բաժինների տեքստային կառուցվածքը (ուրվագիծը), երբ դրանք կապ ունեն ընդհանուր ուղղերձի հետ
 - ե. պատգամը փոխանցելու համար կիրառված քերականական առանձնահատկությունները
 - զ. բառերը, որոնք ընտրվել են պատգամը ներկայացնելու համար
 - է. զուգահեռ հատվածները

Այս կետերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը դառնում է տվյալ հատվածի մեր ուսումնասիրության առարկան: Նախքան Աստվածաշնչի լավ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը թույլ տվեք պատկերել մի քանի աննպատակահարմար մեթոդներ, որոնք օգտագործվում են այսօր, պատճառ հանդիսանալով մեկնաբանությունների տարբերության, և հետևաբար պետք է դրանցից խուսափել.


I. Աննպատակահարմար մեթոդներ

- Ա. Անտեսելով Աստվածաշնչյան գրքերի գրական համատեքստը և կիրառելով յուրաքանչյուր նախադասություն, ենթանախադասություն կամ նույնիսկ առանձին բառեր որպես ճշմարտության սահմանումներ, որոնք կապ չունեն հեղինակի մտադրության կամ ընդլայնված համատեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «տեքստային ապացույց»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը փոխարինելով այն ենթադրյալ պատմական միջավայրով, որը քիչ է պաշտպանվում կամ ընդհանրապես չի պաշտպանվում հենց տվյալ տեքստի կողմից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և կարդալով այն որպես առավոտյան լրագիր՝ գրված հատուկ միայն արդի Քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և տեքստը ներկայացնելով խորհրդապատկերներով որպես փիլիսոփայական, աստվածաբանական ուղղերձ, որն ընդհանրապես կապ չունի այն առաջին անգամ լսողների և բնագրի հեղինակի մտադրության հետ:
- Ե. Անտեսելով բնագիր ուղղերձը, այն փոխարինելով սեփական աստվածաբանությամբ, սիրված վարդապետությամբ կամ ժամանակակից թողարկմամբ, որոնք չեն առնչվում բնագրի հեղինակի նպատակի և արձանագրված ուղղերձի հետ: Այս երևույթը հաճախ հաջորդում է Աստվածաշնչի առաջին ընթերցմանը, որպես միջոց հաստատելու խոսողի հեղինակությունը: Սա հաճախ կոչվում է «ընթերցողի արձագանք» («ինչ է նշանակում տեքստն ինձ համար»):

Առնվազն երեք կապակցված բաղադրիչներ կարելի է գտնել մարդկային բոլոր գրավոր հաղորդակցությունների մեջ.



Նախկինում ընթերցանության տարբեր մեխանիզմներ կենտրոնացել են այս երեք բաղադրիչներից մեկի վրա: Սակայն Սուրբ Գրքի ներշնչանքն ավելի հարմար է հաստատել հետևյալ փոփոխված սխեմայով:



Իրականում բոլոր երեք բաղադրիչները պետք է ընդգրկված լինեն մեկնաբանության գործընթացին: Ստուգելու նպատակով, իմ մեկնաբանությունը կենտրոնանում է առաջին երկուսի վրա՝ բնագրի հեղինակի և տեքստի: Հավանաբար ես արձագանքում եմ այն շահարկումներին, որոնք նկատել եմ (1) տեքստի խորհրդապատկերորեն ներկայացնելու կամ հոգևորացնելու մեջ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանության մեջ (ինչ իմաստ ունի ինձ համար): Շահարկում հնարավոր է յուրաքանչյուր փուլում:

Մենք պետք է միշտ ստուգենք մեր շարժառիթները, հակումները, մեխանիզմները և կիրարկումները: Բայց ինչպե՞ս ենք մենք դրանք ստուգում, եթե մեկնաբանությունների համար սահմաններ և չափանիշներ գոյություն չունեն: Ահա այստեղ է, որ հեղինակի նպատակը և տեքստային կառուցվածքը ապահովում են մի քանի չափանիշներ՝ հնարավորինս սահմանափակելու ճիշտ մեկնաբանության շրջանակը:

Սուրբ Գրքի ընթերցանության այս աննպատակահարմար մեխանիզմների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշունչը լավ կարդալու և մեկնաբանելու համար այն մի քանի հնարավոր կերպերը, որոնք առաջարկում են հիմնավորման և հաստատման աստիճան:

II. Աստվածաշնչյան լավ ընթերցանության հնարավոր կերպեր

Այս պահին ես չեմ քննարկում հատուկ ժանրի պատկանող մեկնաբանության մեխանիզմներ, այլ ընդհանուր հերմենևտիկ սկզբունքներ, որոնք հարմար են աստվածաշնչյան բոլոր տեքստերին: Հատուկ ժանրի վերաբերող լավ գիրք է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով» Չոնդերվան հրատարակչության (*How To Read The Bible In All Its Worth* Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդը կենտրոնանում է առաջնահերթ ընթերցողի վրա, որը թույլ է տալիս Սուրբ Հոգուն լուսավորել Աստվածաշունչը անձնական ընթերցանության չորս ցիկլերի միջոցով: Այս մեթոդը Սուրբ Հոգուն, տեքստը և ընթերցողին դիտարկում է ոչ թե երկրորդական դերում, այլ առաջնային: Այն նաև ընթերցողին պաշտպանում է մեկնաբանների անհարկի ազդեցությունից: Ես լսել եմ, թե ինչպես են ասում. «Աստվածաշունչը շատ լույս է զգում մեկնաբանությունների վրա»: Այս ասելով նպատակ չունեմ թերագնահատել սերտողությանը օգնող մեկնությունները, այլ խնդրել, որ դրանք անպատեհ չկիրառեք:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնությունները հիմնավորել հենց տեքստից: Վեց ոլորտներ ապահովում են առնվազն սահմանափակ հիմնավորումներ.

1. Պատմական միջավայրը
2. Գրական համատեքստը
3. Քերականական կառուցվածքը (շարահյուսություն)
4. Արդի բառապաշարի կիրառությունը
5. Համապատասխան գուգահեռ հատվածները
6. Ժանրը

Մենք պետք է կարողանանք ապահովել մեր մեկնաբանությունների հիմքում ընկած պատճառներն ու տրամաբանությունը: Աստվածաշունչը մեր հավատքի և դրա կիրառման համար միակ աղբյուրն է:

Ցավոք Քրիստոնյաները հաճախ համաձայնության չեն գալիս Աստվածաշնչի ուսմունքների և հիմնավորումների շուրջ: Ընթերցանության այս չորս ցիկլերը նախատեսված են ապահովելու հետևյալ մեկնաբանական հասկացությունները՝

1. Ընթերցանության առաջին ցիկլը

- ա. Կարդացեք գիրքը մեկ անգամ նստելով. ևս մեկ անգամ կարդացեք այն այլ թարգմանությամբ, լավագույն դեպքում մեկ այլ թարգմանական տեսությամբ:
 - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
 - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Փնտրեք ամբողջ գրքի գլխավոր նպատակը: Գտեք գրքի թեման:
- գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական մի բաժին, պարագրաֆ կամ նախադասություն, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման
- դ. Գտեք գերակշռող գրական ժանրը
 - (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմվածք
 - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստասիրական գրականություն, սաղմոսներ)
 - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ, պոեզիա)
 - դ) Օրենսգիրք
 - (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմվածքներ (Ավետարանները, Գործքը)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Հայտնության գրականություն

2. Ընթերցանության երկրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ նյութերը
- բ. Ընդգծեք հիմնական թեմաները և համառոտ սահմանեք դրանց բովանդակությունը
- գ. Ստուգեք ձեր նպատակի սահմանումը և ընդլայնեք ընդհանուր նկարագրությունը սերտողությանը օժանդակող միջոցներով

3. Ընթերցանության երրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել պատմական միջավայրը և հենց Աստվածաշնչի միջից հատուկ իրավիճակներ այդ գիրքը գրելու համար
- բ. Թվարկեք պատմական իրողություններ, որոնք նշված են Աստվածաշնչյան տվյալ գրքում
 - (1) հեղինակը
 - (2) տարեթիվը
 - (3) ստացողները
 - (4) գրի առնվելու հատուկ նպատակը
 - (5) մշակության միջավայրի առանձնահատկությունները, որոնք կապված են գրքի գրի առնվելու նպատակի հետ
 - (6) պատմական դեպքերի և դեմքերի հետ կապված խոսքերը
- գ. Ընդլայնեք ձեր ուրվագիծը՝ սխեման, պարբերությունների մակարդակի՝ աստվածաշնչյան գրքի տվյալ բաժնի համար, որը մեկնաբանում է: Միշտ գտեք և ընդգծեք գրական ժանրը: Սա կարող է լինել մի քանի գույի կամ պարբերություն: Այն հնարավորություն է տալիս ձեզ հետևելու բնագրի հեղինակի տրամաբանությանն ու տեքստային կառուցվածքին:
- դ. Ստուգեք պատմական միջավայրը սերտողությանը օժանդակող միջոցներով

4. Ընթերցանության չորրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք տվյալ գրականական բաժինը մի քանի թարգմանություններով
 - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
 - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Գտեք գրականական կամ քերականական կառուցվածքը
 - (1) կրկնվող արտահայտությունները, Եփես.1:6,12,13
 - (2) կրկնվող քերականական կառուցվածքները, Հռոմ.8:31
 - (3) հակադրվող հասկացությունները

- զ. Թվարկեր հետևյալ կետերը
- (1) կարևոր տերմինները
 - (2) անսովոր տերմինները
 - (3) կարևոր քերականական կառուցվածքները
 - (4) հատկապես դժվար բառերը, հատվածները և նախադասությունները
- դ. Գտեք համապատասխան զուգահեռ հատվածները
- (1) թեմայի շուրջ փնտրեք տվյալ ուսմունքի հետ կապ ունեցող ամենահստակ հատվածը, կիրառելով ա) «սիստեմատիկ աստվածաբանության» գրքեր, բ) համագոր հատվածները նշող Աստվածաշնչեր, գ) համաբարբառներ
 - (2) ձեր թեմայի շրջանակներում գտեք հնարավոր պարադոքսալ զույգ: Բազմաթիվ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են բարբառային զույգերով. շատ հարանվանական հակասություններ ծնվում են աստվածաշնչյան լարվածության միայն կեսի համար «տեքստային ապացույց» ներկայացնելու պատճառով: Ամբողջ Աստվածաշունչն է ներշնչված և մենք պետք է փնտրենք դրա ամբողջական պատգամը, որպեսզի մեր մեկնաբանության համար ապահովենք սուրբգրային բալանսը:
 - (3) Գտեք զուգահեռներ նույն գրքի, հեղինակի կամ ժանրի ներսում. Աստվածաշունչը հանդիսանում է իր իսկ լավագույն մեկնաբանը, քանի որ հեղինակը մեկն է՝ Սուրբ Հոգին:
- ե. Օգտագործեք սերտողությանը օժանդակող միջոցներ ստուգելու պատմական միջավայրի և դեպքերի ձեր ուսումնասիրությունները:
- (1) սերտողության Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանությունների գրքեր (այս դեպքում ձեր սերտողության ընթացքում թույլ տվեք անցյալի ու ներկայի հավատացյալ համայնքին օգնեն և ուղղեն ձեր անձնական սերտողությունը):

III. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Այժմ անցում ենք կատարում կիրառությանը: Դուք ժամանակ տրամադրեցիք հասկանալու տեքստը իր բնագրի միջավայրում: Այժմ պետք է այն կիրառեք ձեր կյանքի, մշակույթի մեջ: Աստվածաշնչի հեղինակությունը ես սահմանում եմ հետևյալ կերպ. «հասկանալ, թե ինչ էր ասում բնագրի հեղինակը իր օրերի համար և կիրառել այդ ճշմարտությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բնագրի հեղինակի՝ թե՛ ժամանակի և թե՛ տրամաբանության մեջ, մեկնաբանության նպատակին: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի որևէ պատգամ մեր օրերի համար մինչև չհմանանք, թե ինչ էր դա արտահայտում իր օրերի համար: Աստվածաշնչի պատգամը չպետք է երբևէ փոխի իր իմաստը:

Ձեր կազմած մանրակրկիտ ուրվագիծը՝ ըստ պարբերությունների (ընթերցանության երրորդ ցիկլը) կլինի ձեր ուղեցույցը: Կիրառությունը պետք է կազմվի ըստ պարբերությունների և ոչ թե մի խոսքի հիման վրա: Բառերն իմաստ ունեն միայն համատեքստի ներսում. նախադասության ենթամասերը նույնպես իմաստ են արտահայտում միայն համատեքստի ներսում. նախադասությունները նույնպես իմաստավորվում են համատեքստի ներսում: Միակ ներշնչված անձնավորությունը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում՝ բնագրի հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լույսի ներքո: Մակայն լուսավորված լինելը դեռևս ներշնչանք չէ: Որպեսզի ասենք, որ «այսպես է ասում Տերը», մենք պետք է մնանք բնագրի հեղինակի նպատակի մեջ: Կիրառությունը պետք է կապված լինի հատկապես ամբողջ գրքի, գրականական բաժնի և պարբերության մտքի զարգացման ընդհանուր նպատակի հետ:

Թույլ մի տվեք, որ մեր օրերի խնդիրները մեկնաբանեն Աստվածաշունչը. թողեք, որ Աստվածաշունչը խոսի: Հնարավոր է այդ անելու համար մեզնից պահանջվի տեքստից հանել սկզբունքներ: Մա հավաստի կլինի, եթե տեքստը պաշտպանի տվյալ սկզբունքը: Դժբախտաբար, շատ դեպքերում մեր սկզբունքները պարզապես «մերն» են և ոչ թե տեքստինը:

Աստվածաշունչը կիրառելու հարցում կարևոր է հիշել, որ Աստվածաշնչյան տվյալ տեքստի (բացառությամբ մարգարեությունների) համար միայն մեկ նշանակությունն է ճիշտ: Այդ նշանակությունը կապված է բնագրի հեղինակի մտադրության հետ, երբ նա կիրառում էր իր օրերի որևէ ճգնաժամ կամ

կարիք: Հնարավորին շատ կիրառություններ կարող են սերվել այս մեկ նշանակությունից: Կիրառությունը հիմնված կլինի նամակը ստացողների կարիքների հիման վրա, սակայն պետք է կապված լինի բնագրի հեղինակի նպատակի հետ:

IV. Մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունները

Մինչ այժմ քննարկեցի մեկնաբանության և կիրառության մեջ առկա տրամաբանական և տեքստային գործընթացները: Այժմ թույլ տվեք համառոտ քննարկել մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունը: Հետևյալ ստուգացանկը ինձ օգտակար է եղել.

1. Աղոթեք, որ Սուրբ Հոգու օգնի ձեզ (տես՝ 1 Կորնթ.1:26-2:16)
2. Աղոթեք անձնական ներման և ձեզ հայտնի մեղքերից մաքրվելու համար (տես՝ 1 Հովհ.1:9)
3. Աղոթեք Աստծուն ավելի ճանաչելու ցանկության համար (տես՝ Մաղմ.19:7-14; 42:1ա; 119:1ա)
4. Կիրառեք ցանկացած նոր գաղափար անմիջապես ձեր կյանքի համար
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Դժվար է պահել տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև հավասարակշռությունը: Հետևյալ մեջբերումները օգնել են ինձ բավասավորելու այս երկուսը.

1. Ջեյմս Վ. Սայր, *Սուրբ Գրքի Աղավաղում*, էջ 17-18, (James W. Sire, *Scripture Twisting*)
«Լուսավորություն գալիս է Աստծո ժողովրդի մտածելակերպի վրա և ոչ թե միայն հոգևոր էլիտայի: Աստվածաշնչյան Քրիստոնեության մեջ գուրու դասակարգում գոյություն չունի, ո՛չ լուսավորյալներ, և ո՛չ էլ մարդիկ, որոնց միջոցով պետք է հատուկ մեկնաբանություններ կատարվեն: Այսպիսով, մինչ Սուրբ Հոգին տալիս է իմաստության, գիտության և հոգևոր զանազանության հատուկ պարզւները, Նա չի նշանակում այս պարզւներով օժտված Քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանները: Իր ժողովրդից յուրաքանչյուրը կարող է սովորել, քննել և զանազանել Աստծո Խոսքը, որը նաև հեղինակություն է հանդիսանում նույնիսկ այն մարդկանց համար, որոնց Աստված հատուկ կարողություններ է տվել: Ամփոփելով, ուզում եմ կիսվել իմ ենթադրությամբ ամբողջ գրքի վերաբերյալ. Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն մեր մեծագույն հեղինակությունն է բոլոր այն հարցերում, որոնց մասին խոսվում է այնտեղ. այն ընդհանրապես առեղծվածային չէ և կարող է ցանկացած մշակույթի մեջ ապրող հասարակ մարդու համար լիովին հասկանալի լինել»:
2. Ըստ Կիրկգարդի, տեղ գտած Բերնարդ Ռեմի, *Բողոքական Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, էջ 75 գրքում (Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*):
Համաձայն Կիրկգարդի, Աստվածաշնչի քերականական, բառային և պատմական ուսումնասիրությունը անհրաժեշտ է, սակայն առաջնային է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Մարդը պետք է կարդա Աստվածաշունչը *որպես Աստծո Խոսք*՝ սիրտն իր բերանի մեջ առած, իր ոտքի ծայրերի վրա կանգնած, ակնկալությամբ և Աստծո հետ հաղորդակցվելով: Աստվածաշունչը անմտությամբ, անուշադրությամբ, ակադեմիկորեն կամ մասնագիտորեն կարդալը դեռ չի նշանակում ընթերցել այն որպես Աստծո Խոսք: Երբ մեկն ընթերցում է այս Գիրքը որպես սիրո նամակ, այն ժամանակ է, որ կարդում է Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք»:
3. Հ. Հ. Ռոուլի *Աստվածաշնչի Արդիականությունը*, էջ 19 (H.H. Rowley in *The Relevance of the Bible*):
«Ոչ մի Աստվածաշնչյան լիարժեք գիտելիք չի կարող տիրել նրա բոլոր զանձերին: Այն չի հերքում նմանօրինակ գիտելիքները, քանի որ կարևոր են այն լիարժեք հասկանալու համար: Սակայն դա պետք է առաջնորդի այս գրքի հոգևոր զանձերի հոգևոր գիտությանը, եթե ուզում եք այն լիարժեք լինի: Իսկ այդ հոգևոր գիտության համար անհրաժեշտ է ավելին, քան ողջամտությունն է: Հոգևոր բաները հոգևորապես են քննվում և Աստվածաշունչն ուսումնասիրողը պետք է ունենա հոգևոր ընկալունակությամբ մոտեցում, Աստծուն գտնելու մեծ փափագ, որպեսզի կարողանա հանձնվել Նրան, եթե ուզում է հասնել գիտական ուսումնասիրություններից վեր՝ բոլոր գրքերից ամենահրաշալի Գրքի ավելի հարուստ ժառանգությանը»:

V. Այս մեկնաբանության գրքի մեթոդը

Այս *Սերտողության Ուղղեցույց Մեկնաբանության Գիրքը* նախատեսված է ձեր մեկնաբանական գործընթացին հետևյալ կերպ աջակցելու համար՝

1. Ամեն գիրք համառոտ ծանոթացնում է պատմական միջավայրի հետ: «Ընթերցանության երրորդ ցիկլը» վերջացնելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Ամեն գլխի սկզբում կան համատեքստային հասկացություններ: Սրանք կօգնեն ձեզ տեսնելու, թե ինչպես է կառուցված գրականական բաժինը:
3. Ամեն գլխի կամ հիմնական գրականական բաժնի սկզբում տրված են մի քանի պարբերության բաժանումներ արդի թարգմանություններից և դրանց պատկերավոր լուսաբանումները:

- ա. Աստվածաշնչի Միացյալ Ընկերության Հունարեն տեքստը, չորրորդ խմբագրություն (UBS⁴)
- բ. Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը, խմբագրված 1995 (NASB)
- գ. Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (NKJV)
- դ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV)
- ե. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV)
- զ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն և պետք է հիմնավորվեն ըստ համատեքստի: Իրարից տարբերվող թարգմանչական տեսություններ և աստվածաբանական տեսանկյուններ մի քանի թարգմանությունների հետ համեմատելով հնարավորություն ենք ունենում վերլուծելու բնագրի հեղինակի մտքերի ենթադրյալ կառուցվածքը: Ամեն պարբերություն ունի մեկ հիմնական ճշմարտություն: Չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել մի պարբերությունից պակաս հատված: Նաև հիշեք, որ ամեն պարբերություն կապված է նախորդ և հաջորդ պարբերության հետ: Այդ իսկ պատճառով այդքան կարևոր է ամբողջ գրքի պարբերությունների բաժանումը: Մենք պետք է կարողանանք հետևել բնագրի ներշնչված հեղինակի կողմից հաղորդած թեմայի տրամաբանական հաջորդականությանը:

4. Բոքի գրառումները հետևում են ըստ համարների մեկնաբանության մոտեցմանը: Սա մեզ ստիպում է հետևել բնագրի հեղինակի մտադրությանը: Այդ գրառումները տեղեկություններ են ապահովում մի քանի ոլորտներից.
 - ա. գրական համատեքստից
 - բ. պատմական, մշակութային հասկացություններից
 - գ. քերականական տեղեկություններից
 - դ. բառային սերտոդություններից
 - ե. համապատասխան գուգահեռ հատվածներից
5. Մեկնաբանության ընթացքում որոշ տեղերում ՆԱՍՍ (NASV, թարմեցված 1995-ին) թարգմանությանը կրթացնեն մի քանի այլ ժամանակակից թարգմանության տարբերակներ.
 - ա. Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (NKJV), որը հետևում է “Textus Receptus”-ի տեքստային ձեռագրերին:
 - բ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV), որը բառ-առ-բառ վերանայում է Վերանայված Ստանդարտ Տարբերակի Եկեղեցիների Ազգային Խորհրդից:
 - գ. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV), որը Ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության համարժեք դինամիկ թարգմանությունն է:
 - դ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB), որը Ֆրանսիական Կաթոլիկ դինամիկ համարժեք թարգմանության վրա հիմնված Անգլերեն թարգմանությունն է:
6. Նրանց, ովքեր չեն կարդում հունարեն, անգլերեն թարգմանությունների համեմատությունները կօգնեն ճանաչելու տեքստում առկա խնդիրները.
 - ա. ձեռագրային փոփոխությունները
 - բ. բառի այլընտրանքային նշանակությունները
 - գ. քերականորեն բարդ տեքստերը և կառուցվածքը
 - դ. խրթին տեքստերը, թեև անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, այլ միայն թիրախավորում են տվյալ հատվածները ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրության համար
 - ե. Յուրաքանչյուր գլխի վերջում տրված են թեմատիկ քննարկումներ, որոնք փորձում են թիրախավորել այդ գլխի հիմնական մեկնաբանության թեմաները:

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

I. ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ա. ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ

1. Տեր (ՅԱՀՎԵ / Kurios)
2. Աստված (Էլոհիմ / Թեոս)
3. Մարդու Որդի
4. Աստծո Որդի
5. Փրկիչ
6. Հիսուս
7. Քրիստոս

Բ. ՏԵՔՍՏԵՐԻ ԵՎ ԹՎՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

1. Մասրեթիկ Տեքստ
2. Սեպտուագինտա (Յոթանասանաց)
3. Թարգումներ
4. Վուլգատա
5. Փեշիթա
6. Մեռյալ Ծովի Մագաղաթներ

Գ. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿ)

Դ. ՏԵՔՍՏԱՅԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՈՒԻ)

Ե. ՀՈՒՆԱՐԵՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՉԴՈՒՄ ԵՆ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԵՔ)

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿԸ

III. ԱՌԱՋԻՆ ԴԱՐԻ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Ա. Ջրային տարածքները.

- | | |
|--------------------|-----------------|
| 1. Միջերկրական Ծով | 4. Էգեյան Ծով |
| 2. Սև Ծով | 5. Նեղոս Գետ |
| 3. Ադրիատիկ Ծով | 6. Հորդանան Գետ |

Բ. ՆԿ-ում նշված երկրները.

- | | |
|------------|----------------|
| 1. Եգիպտոս | 10. Գաղատիա |
| 2. Հուդա | 11. Պամփյուլիա |

3. Սամարիա
4. Դեկապոլիս
5. Գալիլիա
6. Սիրիա
7. Փյունիկե
8. Կիլիկիա
9. Կապադովկիա

12. Լիկիա
13. Ասիա
14. Բյուրթանիա
15. Պոնտոս
16. Աքայա
17. Մակեդոնիա
18. Իլիրիկիում ????
19. Իտալիա

Գ. ՆԿ-ում նշված կղզիները .

1. Կիպրոս
2. Կրետե
3. Պատմոս
4. Սիցիլիա
5. Մալտա/ Մելիտենե

Դ. Խոշոր քաղաքները .

1. Ալեքսանդրիա
2. Մեմֆիս
3. Երուսաղեմ
4. Անտիոք
5. Տարսոն
6. Եփեսոս
7. Պերգամոն
8. Կորնթոս
9. Աթենք
10. Հռոմ
11. Թեսաղոնիկե

ՄԱՏԹԵՎՈՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Մինչև Վերածննդի՝ Բարեփոխման ժամանակները, սովորեցնում էին, որ Մատթևոսի Ավետարանն է առաջինը գրվել (և մինչ այժմ էլ Հռոմի Կաթոլիկ եկեղեցին այդպես է համարում):

Բ. Այն ամենաշատ կրկնօրինակված, մեջբերված Ավետարանն է կաթողիկոսության մեջ և առաջին երկու դարերի ընթացքում եկեղեցում անցկացվող ծառայությունների ժամանակ:

Գ. Ուիլյամ Բարբլեյը *Առաջին Երեք Ավետարանները* գրքում, էջ՝ 19 /William Barclay *The First Three Gospels*/ ասում էր. «Երբ անդրադառնում ենք Մատթևոսին, մենք դիմում ենք մի գրքի, որը կարելի անվանել Քրիստոնեական հավատքի ամենակարևոր եզակի փաստաթուղթը, քանի որ դրանում ունենք Հիսուսի կյանքի և ուսմունքների ամենալիարժեք և ամենահամակարգված արձանագրությունը»:

Պատճառը գրքում Հիսուսի ուսմունքների թեմատիկ զարգացումն է: Այն կիրառվել է նորադարձներին (հրեա և հեթանոս) Հիսուս Քրիստոս Նազովրեցու կյանքի և պատգամների վերաբերյալ սովորեցնելու համար:

Դ. Այս գիրքը տրամաբանական կապ է ստեղծում Հին և Նոր Կտակարանների, հրեա և հեթանոս հավատացյալների միջև: Այն օգտագործել է Հին Կտակարանը խոստում-իրականացում ձևաչափի մեջ, ինչպես որ Գործք Առաքելոցի առաջին քարոզներն էին անում, որոնք կոչվում են *kerygma*: Հին Կտակարանը մեջբերված է ավելի քան հիսուն անգամ և ակնարկված շատ ավելին: Նաև ՅԱՀՎԵԻ համար գործածվող ունուններն ու անալոգիաները կիրառվում են Հիսուսի համար:

Ե. Հետևաբար Մատթևոս Ավետարանի նպատակներն էին ավետարանչությունը և աշակերտությունը՝ Մեծ Հանձնարարության երկու կարևոր կետերը (28:19-20):

1. Դրանց նպատակն էր օգնել նորադարձներին, նրանց տեղեկացնելով Հիսուսի կյանքի և ուսմունքների վերաբերյալ:
2. Դրանց նպատակն էր աշակերտել հրեաներին և հեթանոսներին Քրիստոնեական ապրելակերպի համար:

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Չնայած որ հունարեն ՆԿ-ի ամենավաղ կրկնօրինակները (մ.թ. 200-400) ունեն «Ըստ Մատթևոսի» վերնագիրը, գիրքն անանուն է:

Բ. Վաղ եկեղեցու միաձայն ավանդույթն այն է, որ Մատթևոս (նաև հայտնի որպես Ղևի, տես՝ Մարկ. 2:14; Ղուկ. 5:27,29) հարկահավաքը (տես՝ Մատթ. 9:9; 10:3)՝ Հիսուսի աշակերտն է գրել Ավետարանը:

Գ. Մատթևոս, Մարկոս և Ղուկաս ավետարանները զարմանալիորեն նման են.

1. Դրանք հաճախ համապատասխանում են ՀԿ-յան մեջբերումների հարցում, որոնք բացակայում են Մագորեթիկ Տեքստում /MT/ և Սեպտուագինտայում /LLX/,
2. Դրանք հաճախ մեջբերում են Հիսուսի խոսքերից անսովոր քերականական կազմությամբ և նույնիսկ հազվադեպ հունարեն բառեր,
3. Դրանք հաճախ գործածում են հունարեն հենց միևնույն բառերով կազմված արտահայտություններ և նախադասություններ,
4. Ակնհայտ է, որ գրականորեն իրարից փոխառված գրքեր են:

- Գ. Մի քանի տեսություններ են առաջ քաշվել Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի (Մինուպտիկ՝ Համանման Ավետարանների) միջև եղած կապի վերաբերյալ:
1. Վաղ եկեղեցու միասնական ավանդույթն այն է, որ այս Ավետարանը գրել է Մատթեոսը (Ղևի)՝ հարկահավաքը և Հիսուսի աշակերտը: Մատթեոս Առաքյալը միաձայն հաստատված է եղել որպես այս գրքի հեղինակ մինչև Վերածննդի՝ Բարեփոխման ժամանակները:
 2. Մոտ 1776-ին Ա.Ի.Լեսինգը (իսկ հետագայում Գիսլերը 1818-ին) տեսականորեն ներկայացրեց Համանման («միասին տեսնել») Ավետարանների զարգացման մեջ բանավոր փուլ: Նա պնդում էր, որ դրանք բոլորն էլ կախված էին ավելի վաղ գոյություն ունեցող բանավոր ավանդույթներից, որոնք հեղինակները խմբագրել էին իրենց լսարանի համար՝
 - ա. Մատթեոսը՝ հրեաների
 - բ. Մարկոսը՝ հռոմեացիների
 - գ. Ղուկասը՝ հեթանոսների
 Դրանցից յուրաքանչյուրը կապ ուներ Քրիստոնեության մի առանձին աշխարհագրական կենտրոնի հետ:
 - ա. Մատթեոսը՝ Սիրիայի Անտիոքի
 - բ. Մարկոսը՝ Իտալիայի Հռոմի
 - գ. Ղուկասը՝ Պաղեստինի, Ծովի մոտ գտնվող Կեսարիայի
 - դ. Հովհաննեսը՝ Փոքր Ասիայի Եփեսոսի:
 3. Տասնիններորդ դարի սկզբում Ջ.Ջ.Գրիգրախը տեսականորեն ներկայացրեց, որ Մատթեոսը և Ղուկասը գրել են Հիսուսի կյանքի դեպքերը իրարից կատարելապես անկախ և առանձին: Մարկոսը գրել է համառոտ Ավետարան, փորձելով խորհրդածել այս մյուս երկու արձանագրությունների շուրջ:
 4. Քսաներորդ դարի սկզբում Հ. Ջ. Հոլցմենը տեսականորեն ներկայացրեց, որ Մարկոսը առաջին գրավոր Ավետարանն է եղել և որ Մատթեոսը և Ղուկասը գործածել են նրա Ավետարանի կառուցվածքը, դրան ավելացնելով մի առանձին փաստաթուղթ, որը պարունակում էր Հիսուսի խոսքերը և կոչվում է Q (գերմաներեն *quelle* կամ «աղբյուր»): Սա կոչվեց կամ պիտակավորվեց որպես «երկու աղբյուր» տեսություն (նաև հաստատված է 1832թ-ին Ֆրեդերիկ Ելեյրմասչերի կողմից):
 5. Հետագայում Բ.Հ. Սթրիթերը տեսականորեն ներկայացնում է «երկու աղբյուր» տեսությունը խմբագրված տեսքով, որը կոչվում է «չորս աղբյուր» տեսություն, որը ներառում է «պրոտո Ղուկասը» ավելացրած Մարկոսը և Q:
 6. Համանման Ավետարանների ձևավորման հետ կապված վերը նշված տեսությունները միայն ենթադրություն են: Չկա որևէ պատմական կամ գործնական ձեռագրային ապացույց ո՛չ “Q” աղբյուրի և ո՛չ էլ «պրոտո Ղուկասի» համար:

Ժամանակակից գիտությունը պարզապես չգիտի, թե ինչպես են ձևավորվել Ավետարանները, և ո՛չ էլ այն, թե ովքեր են դրանք գրել (նույնը կարելի է ասել ՀԿ-յան Օրենքի և Հին մարգարեների համար): Այնուհանդերձ տեղեկությունների պակասը չի ազդում որպես պատմական և իհարկե որպես հավատքի արձանագրություններ այս գրքերի ներշնչանքի կամ վստահելիության վերաբերյալ Եկեղեցու ունեցած տեսակետի վրա:
 7. Ակնհայտ նմանություններ կան կառուցվածքի և բառապաշարի մեջ Համանման ավետարանների միջև, սակայն գոյություն ունեն նաև շատ տարբերություններ: Այս տարբերություններն առկա են ականատեսի դեպքերում: Վաղ եկեղեցուն չէր հուզում Հիսուսի կյանքի դեպքերի շուրջ այս երեք ականատես հեղինակների տարաձայնությունները:

Հնարավոր է այս թվացյալ տարաձայնություններին պատճառը եղել է լսարանը, որին ուղղված էր Ավետարանը, հեղինակի գրելաոճը և առկա տարբեր լեզուները (արամերեն և հունարեն): Պետք է ասել, որ այս ներշնչված հեղինակները, խմբագիրները կամ հավաքագրողները ազատ էին ընտրելու, մշակելու, հարմարեցնելու և ամփոփելու Հիսուսի կյանքի դեպքերը և ուսմունքները (տե՛ս՝ *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Ինաստով* գիրքը, գրված Ֆիի և Սոյուրատի կողմից, էջ՝ 113-148):

Ե. Պապիասի՝ Երապոլիսի եպիսկոպոսի (մ. թ. 130) կողմից վաղ եկեղեցու մի ավանդույթ կա, որը արձանագրվել է Եվսեբիոսի *Պատմական Եկեղեցի* 3:39:16 /*Historical Ecclesiasticus* 3:39:16/ գրքում, որ Մատթեոսն իր Ավետարանը գրել է արամերենով: Սակայն ժամանակակից գիտությունն այս ավանդույթը չի ընդունել հետևյալ պատճառներով՝

1. Մատթեոսի հունարեն լեզուն չունի արամերենից հունարենի թարգմանության առանձնահատկություններ:
2. Կան հունարեն բառախաղեր (տես՝ 6:16; 21:41; 24:30)
3. ՀԿ-յան հիմնական մեջբերումները Մեպտուագինտայից (LXX) է և ոչ թե Մագորեթիկ Եբրայերեն Տեքստերից:

Հավանական է, որ 10:3 ակնարկ է Մատթեոսի հեղինակ լինելուն: Այստեղ նշվում է «հարկահավաք» բառը իր անունից հետո: Այս ինքնախարագանող մեկնաբանությունը չկա Մարկոսում: Մատթեոսը նաև հայտնի անձ չէր ՆԿ-ում կամ առաջին եկեղեցում: Ինչո՞ւ պետք է այսքան շատ ավանդույթ ձևավորվեր նրա անվան և այս առաջին առաքելական Ավետարանի շուրջ:

III. ՏԱՐԵԹՎԸ

Ա. Ավետարանի տարեթիվը տարբեր կերպերով կապված է Համանման Ավետարանների խնդրի հետ: Ո՞ր Ավետարանն է գրվել առաջինը և ո՞վ է ումից օգտվել:

1. Եվսեբիոսը իր *Պատմական Եկեղեցի*, 3:39:15-ում ասում է, որ Մատթեոսը կիրառել է Մարկոս Ավետարանը որպես կառուցվածքային ուղեցույց:
2. Օգոստինոսն այնուհանդերձ Մարկոսին անվանում է «ճամբարային հետևորդ» և Մատթեոսին հապավող:

Բ. Լավագույն մոտեցումը կլինի այն, որ փորձենք հավանական տարեթվերի սահմաններ գծել՝

1. Այն պետք է, որ գրված լինի նախքան մ. թ. 96թ. կամ 115 թթ.
 - ա. Հռոմեացի Կլեմենտը (մ. թ. 96) Մատթեոսի Ավետարանից մի ակնարկ է կատարում Կորնթացիներին ուղղված իր նամակում:
 - բ. Իգնատիոսը (մ. թ. 110-115թթ)՝ անտիոքցի երեցը, մեջբերում է Մատթեոս 3:15 *Չնյոռնիսցիներին*, 1:1 ուղղված իր նամակում:
2. Ավելի դժվար հարցն այն է, թե որքա՞ն վաղ կարող էր այն գրված լինել:
 - ա. Ըստ երևույթին դեպքերի արձանագրումից հետո, որը կլինի 30-ականների կեսերին:
 - բ. Ինչ-որ ժամանակ պետք է որ անցած լիներ դրա անհրաժեշտության, շարադրման և շրջանառման համար:
 - գ. Ի՞նչ կապ կա 24-րդ գլխի և մ. թ. 70թ-ին Երուսաղեմի կործանման միջև: Մատթեոսի որոշ հատվածներ վերաբերում են գոհաբերության համակարգին, որը դեռևս գործում էր (5:23-24; 12:5-7; 17:24-27; 26:60-61): Սա նշանակում է, որ տարեթիվը նախքան մ. թ. 70թ. է:
 - դ. Եթե Մատթեոսի և Մարկոսի Ավետարանները գրվել են Պողոսի ծառայության ընթացքում (մ. թ. 48-68թթ), ինչո՞ւ նա երբեք չի մեջբերում այդ գրքերից: Իրենեոսին մեջբերում է Եվսեբիոսը իր *Պատմական Եկեղեցի* 5:8:2, ասելով, որ Մատթեոսը գրել է իր Ավետարանը, երբ Պետրոսն ու Պողոսը Հռոմում էին: Պետրոսն ու Պողոսը երկուսն էլ սպանվել են Ներոնի իշխանության օրոք, որն ավարտվել է մ. թ. 68-ին:
 - ե. Ժամանակակից գիտության ամենավաղ ենթադրությունը մ. թ. 50թ. է:

Գ. Շատ գիտնականներ հավատում են, որ չորս Ավետարանները ավելի շատ կապ ունեն Զրիստոնեության աշխարհագրական կենտրոնների հետ, քան ավանդական հեղինակների: Մատթեոսը հնարավոր է գրվել է Սիրիայի Անտիոքում՝ իր հրեական-հեթանոսական եկեղեցական խնդիրների պատճառով, ըստ երևույթին մ. թ. 60թ-ին կամ առնվազն մ. թ. 70թ-ից առաջ:

IV. ՈՒՄ Է ՈՒՂՂՎԱԾ ԳԻՐՔԸ

Ա. Քանի էր Ավետարանի հեղինակն ու տարեթիվն անհայտ են, ստացողները նույնպես հայտնի չեն: Կարծես լավագույն տարբերակը հավատացյալ հրեաներն ու հեթանոսներն են: Առաջին դարի Սիրիայի Անտիոքի եկեղեցին լավագույնս է համապատասխանում այս պրոֆիլին:

Բ. Եվսեբիոսը մեջբերում է Ռրոզինեսին իր *Պատմական Եկեղեցի* 6:25:4-ում, որ այն գրվել է հրեա հավատացյալների համար:

V. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Ա. Ինչպե՞ս է այս Ավետարանը կառուցված: Մենք կարող ենք լավագույնս հասկանալ բնագրի ներշնչված հեղինակի մտադրությունը, երբ վերլուծենք ամբողջ գրքի կառուցվածքը:

Բ. Գիտությունն առաջարկում է մի քանի կառուցվածք.

1. Հիսուսի աշխարհագրական շարժը՝
 - ա. Գալիլիա
 - բ. Գալիլիայի հյուսիսային մասը
 - գ. Պերեա և Հուդա (երբ ճամփորդում էր Երուսաղեմ)
 - դ. Երուսաղեմում

2. Մատթևոսի հինգ թեմատիկ բաժինները: Դրանք տարբերվում են իրենց հաճախակի հանդիպող արտահայտությամբ՝ «Եվ երբ Հիսուսը վերջացրեց այս բաները» (տես՝ 7:28; 11:1; 13:53; 19:1; 26:1): Շատ գիտնականներ այս հինգ բաժինները դիտարկում են որպես Մատթևոսի կողմից փորձ պատկերելու Հիսուսին որպես «նոր Մովսես», յուրաքանչյուր բաժնում Մովսեսի հինգ գրքերի հետ համանմանության սկզբունքով (Շննդոց, Ելից, Ղևտ, Թվոց, 2 Օրինաց):
 - ա. Քրիստոսի կառուցվածք, որը հաջորդում է պատմության և դատողության բաժինների միջև:
 - բ. Աստվածաբանական, կենսագրական ձևաչափ, որը կիրառում է հաճախ հանդիպող «այդ ժամանակից Հիսուսն սկսեց...» (տես՝ 4:17; 16:21), ըստ այդմ գիրքը բաժանելով երեք մասի (1:1-4:16; 4:17-16:20; և 16:21-28:29):
 - գ. Մատթևոսի շեշտադրումը ՀԿ-յան մարգարեական հատվածների վրա կիրառելով «կատարվեց» բանալի տերմինը (1:22; 2:15,17,23; 4:14; 8:17; 12:17; 13:35; 21:4; 27:9 և 27:35):

Գ. «Ավետարանները» յուրահատուկ գրական ժանր են: Դրանք կենսագրական չեն: Դրանք պատմական դեպքեր չեն, այլ հանդիսանում են հատընտիր աստվածաբանական, խիստ կառուցվածքային գրական աշխատություններ: Ավետարանի յուրաքանչյուր հեղինակ ընտրել է Հիսուսի կյանքի դեպքերից և ուսմունքներից այնպես, որ դրանք բացառիկ կերպով ներկայացնում են Նրան այն մարդկանց ում ուղղված է տվյալ գիրքը: Ավետարանները ավետարանչական գրքույկներ էին:

VI. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեսիա, 1:1
2. Կույս, 1:23,25
3. Էմմանուել, 1:23
4. Մոգ, 2:1
5. Նագովրեցի, 2:23
6. Ապաշխարել, 3:2
7. Խոստովանել, 3:6
8. Փարիսեցիներ, 3:7

9. Սաղուկեցիներ, 3:7
10. «Նրա կոշիկները հանել», 3:11
11. «Սա է Իմ սիրելի Որդին», 3:17
12. «Տաճարի աշտարակ», 4:5
13. «Սարգարենների Օրենքը», 5:17
14. «ապահարգանի թուղթ», 5:31
15. «Նրա ոտքերի պատվանդանը», 5:35
16. ժողովարան, 6:2
17. «նեղ դարպաս», 7:13
18. դպիր, 8:19
19. «դիվահար», 8:28
20. «սեղանին հենվելով», 9:10
21. տիկեր, 9:17
22. արնգահարներ/փողհարներ, 9:23
23. առաքյալներ, 10:2
24. լուծ, 11:29,30
25. «այս կամ գալիք դարում/աշխարհում», 12:32
26. առակ, 13:3
27. որոմ, 13:25
28. «ծերերի ավանդույթը», 15:2
29. դժոք, 16:18
30. այլակերպվել, 17:2
31. լուսնոտ, 17:15
32. «երկդրամյան տուրք», 17:24
33. դահեկան, 20:2,9
34. Օվաաննա տառացի «փրկիր մեզ հիմա», արամերեն՝ «արքայական իշխանություն», 21:9
35. «ցավերի սկիզբ», 24:8
36. «ավերմունքի պղծությունը», 24:15
37. տաղանդ, 25:20
38. «ամբողջ Ատյանը», 26:59
39. «երկնքի ամպերով գալիս», 26:64
40. «Արյան արտ», 27:8
41. պալատ, 27:27
42. «Գողգոթա», 27:33
43. «բայց ոմանք երկմտեցին», 28:17

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Չորաբաբել, 1:12
2. Հերովդես, 2:13
3. Դավթի Որդի, 9:27
4. Մարդու Որդի, 10:23
5. Իմ Ծառան, 12:18
6. Բեհեզգերուդ, 12:24
7. Հերովդիա, 14:6
8. Սիմոն Հովնանի որդի, 16:17
9. «քահանայապետներն ու ժողովրդի ավագները», 21:23
10. Հերովդեսական, 22:16
11. Ռաբբի, 23:7
12. Կայիափա, 26:3
13. Պիղատոս, 27:2
14. Բարաբբա, 27:16
15. Մարիամ Մագդաղենացի, 27:56
16. Հովսեփ Արիմաթացի, 27:57

VIII. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Բեթլեհեմ, 2:1
2. Հուդայի անապատ, 3:1
3. Գալիլիա, 3:13
4. Նազարեթ, 4:13
5. Կափառնայում, 4:13
6. Սողոմ և Գոմոր, 10:15
7. Բեթսաիդա, 11:21
8. Սիդոն, 15:21
9. Կեսարիայի Փիլիպպեի, 16:13
10. Չիթենյաց լեռ, 21:2
11. Գեթսեման, 26:36

IX. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ են Մատթևոսի և Ղուկասի տված սերնդաբանությունները իրարից տարբեր:
2. Ի՞նչ ընդհանրություն ունեն Թամարը, Ռախաբը և Հռութը:
3. Ի՞նչ ընդհանրություն ունեն Եղիան և Հովհաննես Մկրտիչը:
4. Ի՞նչ է «Երկնքի Արքայությունը»:
5. Սատանան ի՞նչ էր փորձում անապատում, որ Հիսուսն աներ:
6. Բացատրե՛ք 5:17 ձեր իսկ խոսքերով:
7. Բացատրե՛ք 5:48 ձեր իսկ խոսքերով:
8. Բացատրե՛ք 7:6 ձեր իսկ խոսքերով:
9. Ինչո՞ւ է 8:5-13 այդքան անսովոր և կարևոր:
10. Բացատրե՛ք 10:38 ձեր իսկ խոսքերով:
11. Բացատրե՛ք 10:19 ձեր իսկ խոսքերով:
12. Ինչո՞ւ էր Հիսուսը բժշկում Շաբաթ օրով:
13. Ո՞րն է Հոգու դեմ հայհոյությունը (12:31-32):
14. Սերմնացանի առակում ինչպե՞ս է ծլարձակումը կապված պտղաբերության հետ (13):
15. Բացատրե՛ք 13:44 ձեր իսկ խոսքերով:
16. Բացատրե՛ք 15:11 ձեր իսկ խոսքերով:
17. Բացատրե՛ք 16:20 ձեր իսկ խոսքերով:
18. Բացատրե՛ք 18:8 ձեր իսկ խոսքերով:
19. Արդյո՞ք յուրաքանչյուր հավատացյալ ունի պահապան հրեշտակ:
20. Բացատրե՛ք 19:17 ձեր իսկ խոսքերով:
21. Բացատրե՛ք 21:18-19 ձեր իսկ խոսքերով:
22. Ինչո՞ւ Հիսուսը գուլի 23-ում դպիրների և փարիսեցիների հետ այդքան կոպիտ խոսեց:
23. Ո՞րն է 24:36-ի կարևորությունը:

ՄԱՐԿՈՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Վաղ եկեղեցին սովորաբար շրջանցել է Մարկոս Ավետարանի կրկնօրինակումը, սովորելն ու սովորեցնելը՝ նախընտրություն տալով Մատթևոսին և Ղուկասին, քանի որ Մարկոսին դիտարկել է որպես «ընթերցողի ամփոփագիրք» տարբերակ (այսինքն՝ կամուրջ հանդիսացող ավետարան), մի տեսակետ, որը մասնավորապես հետագայում սահմանվեց Օգոստինոսի կողմից:

Բ. Հույն վաղ եկեղեցու հայրերը կամ երկրորդ դարի ապոկրիֆները (հավատքի պաշտպանները) հաճախ չեն մեջբերումներ կատարում Մարկոսից:

Գ. Աստվածաշնչյան մեկնաբանությանը ժամանակակից պատմա-քերականական մոտեցման մեկնարկից ի վեր Մարկոսի Ավետարանը մի նոր կարևորություն ձեռք բերեց, քանի որ այն սկսեց դիտարկվել որպես առաջին գրի առնված Ավետարան: Թե՛ Մատթևոսը և թե՛ Ղուկասը օգտվել են այս Ավետարանից, որպեսզի ներկայացնեն Հիսուսի կյանքն ու դերը:

II. ԺԱՆՐԸ

Ա. Ավետարանները ժամանակակից կենսագրականներ կամ պատմություններ չեն: Դրանք հատրնտիր աստվածաբանական փաստաթղթեր են, որոնք կիրառվել են ծանոթացնելու Հիսուսին տարբեր յարանների հետ և նրանց առաջնորդելու Հիսուսին հավատալու: Դրանք Նրա կյանքից «բարի լուրի» դեպքեր են՝ ավետարանչության նպատակով (Հովհ. 20:30-31):

Բ. Մարկոսը նշում է չորս տարբեր պատմական միջավայր և աստվածաբանական նպատակ՝

1. Հիսուսի կյանքը և ուսմունքները
2. Պետրոսի կյանքը և ծառայությունը
3. վաղ եկեղեցու կարիքները
4. Հովհաննես Մարկոսի ավետարանչական նպատակը

Գ. Չորս Ավետարանները բացառիկ են Մերձավոր Արևելյան և Հունահռոմեական գրականության մեջ: Ներշնչված հեղինակները ունեին հոգով առաջնորդվող առաջադրանք ընտրելու Հիսուսի ուսմունքներից և գործերից այնպես, որ դրանք հստակ հայտնեն Նրա բնավորությունը և/կամ նպատակը:

Նրանք այս խոսքերն ու գործողությունները դասավորել են տարբեր կերպերով: Օրինակներից մեկը կարող է լինել Մատթևոսի Ավետարանի Լեռան Քարոզի (Մատթ. 5-7) և Ղուկասի Ավետարանի Հարթավայրում Քարոզի միջև համեմատությունը: Ակնհայտ երևում է, որ Մատթևոսը հակված էր հավաքագրելու Հիսուսի բոլոր ուսմունքները մի երկար քարոզի մեջ, մինչ Ղուկասն այս նույն ուսմունքները սփռում էր իր Ավետարանի ամբողջ բովանդակությամբ: Նույնը կարելի է ասել նաև Մատթևոսի կողմից Հիսուսի բոլոր հրաշքները մեկտեղ հավաքելու, իսկ Ղուկասի կողմից՝ դրանք իր ամբողջ Ավետարանով տարածելու մասին:

Սա ակնարկում է Ավետարանի հեղինակների կողմից ոչ միայն Հիսուսի ուսմունքները հավաքելու և դասավորելու կարողության մասին, այլ նաև դրանք հարմարեցնելու իրենց իսկ աստվածաբանական նպատակների հետ (կարդացե՛ք Ֆիի և Սոյուարտի *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Բնաստով*, էջ՝ 113-134 /Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*): Ավետարաններն ընթերցելիս պետք է շարունակ այս հարցը ինքներս մեզ ուղղենք, թե հեղինակներն ի՞նչ աստվածաբանական նպատակով են գրել այս գրքերը: Ինչո՞ւ է հատկապես այն դեպքը, այն հրաշքը, այն դասը գրվել հե՛նց այստեղ:

Դ. Մարկոսի Ավետարանը Կոյնե Հունարենի գեղեցիկ օրինակ է, որը եղել է Միջերկրական տարածաշրջանի ժողովուրդների երկրորդ լեզուն: Մարկոսի մայրենի լեզուն եղել է

արամերենը (ինչպես Հիսուսինը և առաջին դարի Պաղեստինի բոլոր հրեաներինը): Մարկոսի Ավետարանին բնորոշ է այս սեմական համն ու հոտը:

III. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Ավանդության համաձայն Հովհաննես Մարկոսն իր այս Ավետարանի գրառման մեջ նույնականացվում է Պետրոս Առաքյալի հետ: Աշխատությունն ինքնին (բոլոր մյուս Ավետարանների պես) անանուն է:

Բ. Պետրոսի ականատես-հեղինակ լինելու ևս մի փաստ կարող է հանդիսանալ այն, որ Մարկոսը չի արձանագրում Պետրոսի անձամբ ներգրավվածությամբ երեք հատուկ դեպքեր:

1. նրա ջրի վրայով քայլելը (տես՝ Մատթ. 14:28-33)
 2. Փիլիպպեի Կեսարիայում Տասներկուսի հետ հավատքի համար Պետրոսի խոսելու փաստը (տես՝ Մատթ. 16:13-20), Մարկոսում միայն 8:27-30 և «այս ժայռի վրա» և «երկնքի արքայության բանալիները» հատվածներն են բաց թողնված:
 3. Իր և Հիսուսի համար տանարի տուրքը մուծելը (տես՝ Մատթ. 17:24-27)
- Գուցե Պետրոսի համեստությունը իրեն թույլ չի տվել, որ այս դեպքերն իր քարոզներում նշի:

Գ. Վաղ եկեղեցու ավանդույթը՝

1. I Կլեմենտում, որը գրվել է Հռոմում մ.թ.95թ-ին, ակնարկվում է Մարկոսը (ինչպես և *Հերմեսի Հովիտը /Shepherd of Hermes/*):
2. Պապիասը Երապոլիսի եպիսկոպոսը (մոտ մ.թ. 130-ին), գրեց *Տիրոջ Խոսքերի Մեկնությունները*, որոնք մեջբերված են Եվսեբիոսի կողմից (մ.թ. 275-339թթ) իր *Պատմական Եկեղեցի* 3:39:15-ում: Նա պնդում է, որ Մարկոսը Պետրոսի թարգմանիչն էր, որը ճշգրտորեն, բայց ոչ ժամանակագրական հերթականությամբ, արձանագրել է Հիսուսի վերաբերյալ Պետրոսի հիշողությունները: Ըստ երևույթին Մարկոսը վերցրել և վերամշակել է Պետրոսի քարոզները և դրանցով մատուցել ձևավորված Ավետարանը: Պապիասը հայտարարում է, որ այս տեղեկությունը ստացել էր «հովվից», որը հնարավոր է վերաբերում էր Հովհաննես Առաքյալին:
3. Ջասթին Մարթիրը (մ.թ. 150) մեջբերում է Մարկոս 3:17, ավելացնելով, որ այն Պետրոսի հուշերից է գրվել:
4. Մ.թ.շուրջ 180թ-ին Մարկոս Ավետարանի համար գրված Հակամարկիոնիտ Նախաբանը ընդունում է Պետրոսին որպես Մարկոս Ավետարանի ականատես վկա: Այն նաև ասում է, որ Ավետարանը գրել է Մարկոսը Իտալիայից՝ Պետրոսի մահից հետո (ըստ ավանդության Հռոմում՝ մ.թ. 65-ին):
5. Իրենեոսը, գրելով մոտ մ.թ.180թ-ին, Հովհաննես Մարկոսին նշում է որպես Պետրոսի թարգմանիչ և նրա մահից հետո նրա հուշերի հավաքագրող (տես՝ *Contra Haereses* 3:1:2):
6. Ալեքսանդրիացի Կլեմենտը (մ.թ. 195) պնդում է, որ նրանք, ովքեր լսեցին Պետրոսի քարոզը Հռոմում, խնդրեցին Մարկոսին, որ այդ քարոզներն արձանագրի:
7. Մուրատորյան Ձեռագիրը (այսինքն՝ կանոնը), որը գրվել է մ.թ. 200թ-ին Հռոմից, թեև տեքստի ոչ ամբողջական լինելուն, կարծես թե հաստատում է, որ Հովհաննես Մարկոսն է արձանագրել Պետրոսի քարոզները:
8. Տերտուղիանոսը (մ.թ. 200թ) իր *Մարկիոնին Հակառակ* (4:5) գրքում ասում է, որ Մարկոսը հրատարակել է Պետրոսի հուշերը:
9. *Քարոզչի Աստվածաշնչյան Մեկնաբանություն* գրքում, հատոր 8, էջ՝ 606, Ուոլթեր Ուեսսելը */The Expositor's Bible Commentary, Walter Wessel/*, հետաքրքիր մեկնաբանություն է ներկայացնում, ասելով, որ վերը նշված վաղ եկեղեցու ավանդույթները բխել են եկեղեցու աշխարհագրական առումով տարբեր կենտրոններից:
 - ա. Պապիասը Փոքր Ասիայից,
 - բ. Հակամարկիոնիտ Նախաբանը և Մուրատորյան Ձեռագիրը երկուսն էլ Հռոմից,
 - գ. Իրենեոսը (տես՝ *Adv. Haer.* 3.1.1) Ֆրանսիայի Լիոնից: Իրենեոսի ավանդույթը նաև կարելի է գտնել Տերտուղիանոսում (տես՝ *Adv. Marc.* 4.5)՝ Հյուսիսային Աֆրիկայից և

Ալեքսանդրիացի Կլեմենտը՝ Եգիպտոսից (տես՝ *Hypotyposeis* 6 մեջբերված Եվսեբիոսի կողմից, *Պատմական Եկեղեցի*, 2.15.1-2; 3.24.5-8; 6:14:6-7): Վաղ Զրիստոնեության կողմից ավանդույթի լայն ընդունելության պատճառով աշխարհագրական այս բազմազանությունը վստահություն է ներշնչում դրա հավաստիության հարցում:

10. Համաձայն Եվսեբիոսի *Պատմական Եկեղեցի* 4:25, Որոզինեսի (մ.թ.230) *Մատթեոսի Մեկնաբանություն* գրքում (նախքան հինգերորդ դարը Մարկոս Ավետարանի մեկնաբանության որևէ մեկի կողմից գրված մեզ հայտնի որևէ գիրք չկա) ասվում է, որ Մարկոսն Ավետարանը գրել է այնպես, ինչպես Պետրոսն է բացատրել նրան:
11. Եվսեբիոսն ինքը քննարկում է Մարկոսի Ավետարանը իր *Պատմական Եկեղեցի* 2:15-ում և ասում, որ Մարկոսը արձանագրել է Պետրոսի պատգամները մարդկանց քարոզելիս, որպեսզի այդ նույն պատգամները կարողանային լսել բոլոր եկեղեցիներում: Եվսեբիոսն այս ավանդույթը հիմնավորում է Ալեքսանդրիացի Կլեմենտի գրքերով:

Դ. Ի՞նչ գիտենք Հովհաննես Մարկոսի վերաբերյալ՝

1. Նրա մայրը ճանաչված հավատացյալ էր, ում տանը հավաքվում էր եկեղեցին (հավանաբար Վերջին Ընթրիքի գիշերը, տես՝ Մարկ. 14:14-15; Գործք 1:13-14; Գործք 12:12): Նա հավանաբար այն անանուն մարդն էր, որ փախավ Գեթսեմանի պարտեզից (Մարկ. 14:51-52):
2. Նա ընկերակցեց իր քեռուն՝ Բառնաբասին (տես՝ Կող. 4:10) և Պողոսին Երուսաղեմից Անտիոք վերադառնալիս (Գործք 12:25):
3. Առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ նա Բառնաբասի և Պողոսի գործընկերն էր (Գործք 13:5), բայց տեսնում ենք հանկարծ վերադառնում է տուն (Գործք 13:13):
4. Ավելի ուշ Բառնաբասը կամենում է Մարկոսին իր հետ վերցնել երկրորդ միսիոներական ճամփորդությանը, սակայն սա Բառնաբասի և Պողոսի միջև տհաճ տարաձայնության պատճառ է դառնում (Գործք 15:37-40):
5. Հետագայում նա նորից միանում է Պողոսին և դառնում նրա ընկերն ու գործակիցը (Կող. 4:10; 2 Տիմ. 4:11; Փիլիմոն 24):
6. Նա Պետրոսի համագործակիցն ու ընկերն էր (1 Պետ. 5:13) հավանաբար Հռոմում:

Ե. Հիսուսի կյանքին անձնապես տեղյակ լինելը կարծես հաստատվում է 14:51-52-ով, որտեղ Գեթսեմանի պարտեզից մի մերկ տղամարդ է փախնում, անմիջապես Հիսուսի ձերբակալումից հետո: Այս տարօրինակ և ընդհանրապես անակնկալ մանրամասնությունը թվում է արտացոլում է Մարկոսի անձնական փորձառությունը:

IV. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Ավետարանը ականատեսի արձանագրություն է և Հիսուսի կյանքի, գործերի և ուսմունքների մեկնաբանություն, ըստ երևույթին վերցված Պետրոսի քարոզներից: Դրանք հավաքագրվել և բաժանվել են նրա մահից հետո, ինչի մասին են վկայում Անտիմարկիոնիտ Նախաբանը և Իրենեոսը (որը նաև ավելացնում է, «Պողոսի մահից հետո»): Թե՛ Պետրոսը և թե՛ Պողոսը նահատակվեցին Ներոնի իշխանության օրոք (մ.թ. 54-68թթ) Հռոմում (եկեղեցու ավանդույթը): Ճշգրիտ տարեթիվն անհայտ է, բայց եթե ճիշտն ասենք, ապա Մարկոսի տարեթիվը վաթսուևականների կեսերին է:

Բ. Հավանական է, որ Անտիմարկիոնիտ Նախաբանը և Իրենեոսը նկատի չունեն Պետրոսի մահը, այլ Հռոմից նրա հեռանալը՝ դուրս գալը: Գոյություն ունի որոշակի ավանդական վկայություն (այսինքն՝ Չասթին և Հիպոլիթոս), որ Պետրոսը Հռոմ է գնացել Կլավդիոսի իշխանության օրոք (մ.թ. 41-54), (Եվսեբիոսի *Պատմական Եկեղեցի* 2:14:6):

Գ. Թվում է, թե Ղուկասն ամփոփում է Գործք Առաքելոցը վաթսուևականների սկզբին՝ Պողոսը դեռ բանտում: Եթե ճիշտ է, որ Ղուկասն իր Ավետարանը գրելիս օգտագործել է Մարկոսի

Ավետարանը, ապա այն պետք է, որ գրված լինի Գործքից առաջ և հետևաբար ավելի շուտ քան վաթսուներկանների սկիզբը:

- Դ. Մարկոս Ավետարանի տարեթիվն ու հեղինակը ոչ մի կերպ չեն ազդում այս Ավետարանի պատմական, աստվածաբանական, ավետարանչական ճշմարտությունների վրա: Հիսուսն է հանդիսանում, և ոչ թե մարդկային որևէ հեղինակ, այս գրքի կենտրոնական կերպարը:
- Ե. Չարմանալի է, որ Ավետարաններից և ոչ մեկը (նույնիսկ Հովհաննեսը՝ գրված մ. թ. 95-96.) չի մեջբերում կամ ակնարկում մ. թ. 70թ-ին հռոմեացի գեներալ՝ հետագայում կայսր, Տիտոսի ձեռքով Երուսաղեմի կործանումը (տես՝ Մատթ. 24; Մարկ. 13; Դուկ. 21): Մարկոսը հավանաբար գրվել է նախքան այս դեպքը: Նույնիսկ հավանական է, որ Մատթեոսը և Դուկասը գրվել են Հուդայականության վրա եկած այս մեծ դատաստանից առաջ: Պարզապես կարելի է ասել, որ համանման Ավետարանների շարադրման տարեթիվերն այս պահի դրությամբ անհայտ են (ինչպես և միմյանց հետ դրանց գրական կապը):

V. ՈՒՄ Է ՈՒՂՂՎԱԾ ԳԻՐՔԸ

Ա. Մարկոսը կապված է Հռոմի հետ վաղ եկեղեցու մի քանի գրողների կողմից՝

- 1. 1 Պետրոս 5:13
- 2. Անտիմարկիոնիտ Նախաբան (Իտալիա)
- 3. Իրենեոս (Հռոմ, տես՝ *Adv. Haer.* 3:1:2)
- 4. Ալեքսանդրիացի Կլեմենտը (Հռոմ, տես՝ Եվսեբիոսի *Պատմական Եկեղեցին* 4:14:6-7; 6:14:5-7)

Բ. Մարկոսը հատուկ կերպով չի նշում իր Ավետարանը գրելու նպատակները: Այս հարցի շուրջ գոյություն ունեն մի քանի տեսություններ.

- 1. Ավետարանը հանդիսացել է որպես ավետարանչական գրքույկ՝ բուկկետ (տես՝ 1:1), որը գրվել է հատուկ հռոմեացիների համար (տես՝ 1:15; 10:45):
 - ա. Հրեական տարրերը թարգմանված են (տես՝ 7:3-4; 14:12; 15:42)
 - բ. Արամերեն բառերը թարգմանված են (տես՝ 3:17; 5:41; 7:1,34; 10:46; 14:36; 15:22,34)
 - գ. բազմաթիվ լատիներեն բառերի կիրառությունը (տես՝ դահիճ – 6:27; շուկա – 7:4; մարդահամար – 12:14; գրոշ - 12:42; պրետորիում – 15:16; հարյուրապետ – 15:39; դրոշակակիր – 15:42):
 - դ. Հիսուսի հետ առնչվելիս ներառական լեզուն՝
 - (1) ներմուծված լեզու, որը կիրառվում է Պաղեստինի մարդկանց հետ զրույցներում (տես՝ 1:5,28,33,39; 2:13; 4:1; 6:33,39,41,55)
 - (2) ներմուծված լեզու բոլոր մարդկանց հետ խոսելու դեպքում (տես՝ 13:10):
- 2. Մ. թ. 64-ին Հռոմի հրդեհին հաջորդած հալածանքը, որտեղ Ներոնը մեղադրում էր Քրիստոնյաներին, առիթ եղավ հալածացյալների հանդեպ սարսափելի հալածանքների ակիբի: Մարկոսը հաճախ է նշում հալածանքների մասին (տես՝ Հիսուսի չարչարանքը 8:31; 9:39; 10:33-34,45 և Նրա հետևորդների չարչարանքը՝ 8:34-38; 10:21,30,35-44):
- 3. ուշացած Երկրորդ Գալուստը
- 4. Հիսուսի ականատեսների մահը, հատկապես Առաքյալների
- 5. հերետիկոսությունների աճը մեծ արագությամբ տարածվող Քրիստոնեական եկեղեցիներում՝
 - ա. Հուդայիստները (Գաղատացիները)
 - բ. Գնոստիկները (1 Հովհաննես)
 - գ. այս երկու կետերի համադրությունը (այսինքն՝ Կողոսացիների և Եփեսացիների թղթերը; 2 Պետրոս 2)

VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Ա. Մարկոսն այնպես է կառուցված, որ Հիսուսի կյանքի վերջին շաբաթը հանդիսանում է ամբողջ գրքի բովանդակության մեկ երրորդ մասը: Վերջին Շաբաթվա աստվածաբանական կարևորությունը ակնհայտ է:

Բ. Քանի որ Մարկոսը ըստ վաղ եկեղեցու ավանդության վերցված է Պետրոսի քարոզներից (այսինքն՝ հավանաբար Հռոմում), ակներև է դառնում, թե ինչու ծննդյան պատմությունը ներառված է գրքում: Մարկոսը սկսում է այն ժամանակից, երբ Պետրոսը ծանոթանում է Հիսուսի հետ Նրա արդեն իսկ չափահաս տարիքում, և աստվածաբանորեն փոխկապակցված է Հովհաննես Մկրտչի ապաշխարության և Մեսիայի գործի համար հավատքով պատրաստ լինելու պատգամին:

Պետրոսի քարոզները հաստատ գործածում էին «Մարդու Որդի» և «Աստծո Որդի» հասկացությունները: Ավետարանը արտացոլում է Պետրոսի սեփական աստվածաբանությունը Հիսուսի անձի շուրջ: Սկզբում Նա մեծն ուսուցիչ և բժիշկ էր, իսկ հետո դարձավ Մեսիան: Այս Մեսիան այն ակնկալվող հզոր ռազմական գեներալը չէր, այլ մի Չարչարվող Ծառա (տես՝ Եսայի 53):

Գ. Մարկոսի հիմնական աշխարհագրական ուրվագծին համապատասխանում են մյուս Համանման Ավետարանները (այսինքն՝ Մատթեոսը և Ղուկասը)

1. Գալիլիական Ծառայությունը (1:14-6:13)
2. Գալիլիայից դուրս ծառայությունը (6:14-8:30)
3. ճամփորդություն դեպի Երուսաղեմ (8:31-10:52)
4. վերջին շաբաթը Երուսաղեմի տարածքում (11:1-16:8)

Դ. Անգամ հնարավոր է, որ Մարկոս Ավետարանի կառուցվածքը հետևում է վաղ շրջանի Առաքելական քարոզածևին (այսինքն՝ Գործք 10:37-43; տես՝ Ս. Հ. Դոդդի *Նոր Կտակարանի Ուսումնասիրություններ*, էջ՝ 1-11 /C. H. Dodd's *New Testament Studies*/): Եթե դա ճիշտ է, ապա գրի առնված Ավետարանները եղան բանավոր ավանդույթների ժամանակաշրջանի (այսինքն՝ *kerygma*) կուլմինացիան՝ գազաթնակետը:

Ե. Մարկոս Ավետարանին հասկանչական են Հիսուսի կյանքի իրար արագ հաջորդող դեպքերը (այսինքն՝ «անմիջապես դրանից հետո», տես՝ 1:10): Մարկոսը չի արձանագրում ուսմունքներ պարունակող երկար բաժիններ, այլ արագ անցում է կատարում մի դեպքից մյուսին (այսինքն՝ իր հանախակի օգտագործվող «անմիջապես» բառը): Մարկոսի Ավետարանը հայտնում է Հիսուսին Իր գործերով: Մակայն այս արագ շարժվող դեպքերի արձանագրությունը իրար են միահյուսված ականատեսի հստակ մանրամասներով (այսինքն՝ Պետրոսի):

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ապաշխարության մկրտություն, 1:4
2. ուխտի մագից հագուստներ, 1:5
3. աղավնու պես, 1:10
4. քառասուն օր, 1:13
5. Աստծո Արքայությունը մոտեցել է, 1:15
6. ժողովարան, 1:23
7. հայիություն, 2:7
8. դպիրներ, 2:6
9. տիկեր, 2:22
10. առակներ, 4:2
11. պատմունճան՝ հանդերձ, 5:27
12. Փարիսեցիների խմոր, 8:15
13. Ետի՛ս գնա, Սատանա՛, 8:33

14. այլակերպվել, 9:2
15. դժոռք (Գեհենն), 9:47
16. բոլոր ազգերի համար աղոթքի տուն, 11:17
17. դահեկան, 12:15
18. Չատիկը, 14:1
19. նարդոս, 14:3
20. այս գավաթը, 14:36
21. ժամը մոտեցել է, 14:41
22. Պատրաստության Օր, 15:42
23. շավաթվա առաջին օրը, 16:2

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Միմոն, 1:16
2. Չերեդիոս, 1:20
3. պիղծ ոգի, 1:23
4. Ղևի, 2:14
5. Արիաթար, 2:26
6. Քանանացի, 3:18
7. Բեհեդգերուդ, 3:22
8. Լեզեոն, 5:9
9. Հերովդես թագավոր, 6:14
10. Հերովդիա, 6:17
11. Սիրիական Փյունիկեցի, 7:26
12. Բարտիմեոս, 10:46
13. Կայսր, 12:14
14. ավերմունքի պղծություն, 13:14
15. ընտրյալները, 13:20
16. սուտ Քրիստոսներ, 13:22
17. քահանայապետներ, 14:1
18. Աբբա, 14:36
19. Ասյանը, 14:55
20. Բարաբբա, 15:7,11
21. Միմոն Կյուրենացի, 15:21
22. Սողոմե, 15:40
23. հարյուրապետ, 15:45

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Հուդա, 1:4
2. Երուսաղեմ, 1:4
3. Հորդանան Գետ, 1:5
4. Նազարեթ, 1:9
5. Գալիլիա, 1:9
6. Կափառնայում, 1:21
7. Իդումեա, 3:8
8. Տիվրոս, 3:8
9. Սիդոն, 3:8
10. Գադարացիների երկիր, 5:1
11. Դեկապոլիս, 5:20
12. Բեթսաիդա, 6:45
13. Դաղմանութա, 8:10
14. Երիքով, 10:46
15. Չիթենյաց Լեռ, 11:1

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է նշանակում Հոգու մկրտություն (1:8):
2. Որո՞նք են նոր ուխտի պահանջները (1:15):
3. Ինչո՞ւ էին Հիսուսին խողովակները հիացած Նրա ուսմունքներով (1:22):
4. Ինչո՞ւ Հիսուսը թույլ չէր տալիս, որ դևերը խոսեն (1:34):
5. Ինչո՞ւ Հիսուսը այն մարդկանց ում բուժում էր, պատվիրում էր, որ ոչ որի չասեն (1:43):
6. Ինչո՞ւ է գլուխ 2-ում Հիսուսը մեղադրվում հայհոյության մեջ:
7. Բացատրե՛ք 2:17 ձեր իսկ խոսքերով:
8. Ինչո՞ւ էր Հիսուսն այդքան հաճախ բժշկում հենց շաբաթ օրը:
9. Ինչո՞ւ էր Հիսուսը առականերով սովորեցնում:
10. Բացատրե՛ք սերմնացանի առակը ձեր իսկ խոսքերով (4:3-9):
11. Ինչո՞ւ Հիսուսը չէր կարողանում այդքան շատ հրաշքներ գործել Իր հայրենի քաղաքում:
12. Գլուխ 6-ում ինչո՞ւ Հիսուսը քայլեց ջրի վրայով:
13. Բացատրե՛ք Եսայու մարգարեությունը 7:6-7-ում:
14. Բացատրե՛ք 7:15 ձեր իսկ խոսքերով:
15. Ինչո՞ւ է Մարկոսը մեջբերում Հիսուսի օգտագործած արամերեն բառերը:
16. Բացատրե՛ք 8:38 ձեր իսկ խոսքերով:
17. Ինչո՞ւ են փարիսեցիները գլուխ 10-ում Հիսուսին ամուսնալուծության մասին հարցնում:
18. Ինչո՞ւ աշակերտները զարմացան (10:26) 10:25-ում Հիսուսի ասած խոսքերի վրա:
19. Ինչո՞ւ Հիսուսը գլուխ 11-ում էլի քուռակի վրա հեծնեց:
20. Ինչո՞ւ Հիսուսը գլուխ 11-ում մաքրեց Տանարը:
21. Ինչո՞ւ է 11:28-ը այդքան կարևոր հարց:
22. Գլուխ 12-ի սկզբում արձանագրված առակն ինչո՞վ է այդքան կարևոր և ո՞ւմ է ուղղված այն:
23. Ո՞րն է Հին Կտակարանի ամենամեծ պատվիրանը:
24. Ինչո՞ւ է 13:30-ը այդքան դժվար մեկնաբանել:
25. Բացատրե՛ք 15:34 ձեր իսկ խոսքերով:

ՂՈՒԿԱՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Ղուկասը ամենաերկար Ավետարանն է: Ղուկաս-Գործք (Եթե չընդունենք, որ Եբրայեցիների թղթի հեղինակը Պողոսն է) գրքերը պարունակում են Նոր Կտակարանի բոլոր մյուս հեղինակների կողմից գրված գրքերից ամենաշատ էջերը, իսկ նա հեթանոս էր և երկրորդ սերնդի Քրիստոնյա:

Բ. Ղուկասը Նոր Կտակարանի բոլոր հեղինակներից լավագույնն է գրում Կոյնե Հունարենով, հավանական բացառությամբ Եբրայեցիների հեղինակի: Ըստ երևույթին հունարենը եղել է նրա մայրենի լեզուն: Նա նաև բարձրագույն կրթությամբ բժիշկ էր (տես՝ Կող. 4:14):

Գ. Ղուկասը շեշտադրում է Հիսուսի սերն ու հոգատարությունը այն մարդկանց հանդեպ, որոնք հրեա առաջնորդները նույնիսկ չէին նկատում՝

1. կանայք (օր.՝ Մարիամը, Ելիզաբեթը, Աննան, Մարիամն ու Մարթան, և այլն)
2. աղքատները (տես՝ Ղուկասին Երանելիները, Ղուկ. 6:20-23 և հարստության շուրջ ուսմունքները, տես՝ 12:13-21; 16:9-13, 19-31)
3. սոցիալապես, ռասայապես և կրոնապես մեկուսացվածները՝
ա. անբարո կանայք (տես՝ 7:36-50)
բ. Սամարացիները (տես՝ 9:51-56; 10:29-37; 17:11-16)
գ. բորտները (տես՝ 17:11-19)
դ. մաքսավորները (տես՝ 3:12-13; 18:9-14; 19:1-10)
ե. հանցագործները (տես՝ 23:35-43)

Դ. Ղուկասն արձանագրում է ականատեսի՝ Մարիամի հիշողությունները (այսինքն՝ Գործքի առաջին երկու գլուխները) և նաև հավանական է նրա սերնդաբանությունը (այսինքն՝ 3:23-38): Ղուկասի Ավետարանը արձանագրում է Հիսուսի հոգածությունը թե՛ հրեաների և թե՛ հեթանոսների համար:

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Վաղ եկեղեցու կողմից անանուն լինելու ավանդույթը՝

1. Իրենեուսը (մ.թ. 175-195թթ, *Հերետիկոսությունների Դեմ*, 3:1:1; 3:14:10) հատուկ ասում է, որ Ղուկասը մի գրքում արձանագրեց այն ավետարանը, որը Պողոսը քարոզեց:
2. Հակամարկիոն Նախաբանը ուղղված Ղուկասին (մ.թ. 175թ) ասում է, որ Ղուկասն է եղել Ավետարանի հեղինակը:
3. Տերտուղիանոսը (մ.թ. 150-160-220/240թթ. *Մարկիոնի Դեմ* 4:2,3; 4:5,3), ասում է, որ Ղուկասը գրել է Պողոսի ավետարանի մի հավաքածու:
4. Մուրատորիան Ձեռագիրը՝ Պատառիկը (մ.թ. 180-200թթ) Ղուկասին անվանում է որպես հեղինակ և կոչում նրան Պողոսի բժիշկ գործընկերը: Նաև ասում է, որ նա է գրել իր պատմությունը խոսքուգրույցի միջոցով (այսինքն՝ ականատեսներին հարցաքննելով):
5. Եվսեբիոսը մեջբերելով Որոզհինեսին իր Մատթեոսի մեկնությունից (*Պատմական Եկեղեցի* 6:25:6 /*Hist. Eccl.*), պնդում է, որ Ղուկասն է հանդիսանում այս Ավետարանի հեղինակը:
6. Եվսեբիոսը (*Պատմական Եկեղեցի* 3:4:2,6-7) նաև հաստատում է Ղուկասի թե՛ Ավետարանի և թե՛ Գործքի հեղինակ լինելը:

Բ. Ղուկասի հեղինակության Ավետարանի ներքին վկայությունը՝

1. Այս ավետարանը, ինչպես և շատ աստվածաշնչյան աշխատություններ, անանուն է:

2. Եթե Ղուկաս-Գործք Առաքելոց գրքերը երկու հատոր են, քանի որ ունեն միևնույն ներածությունը, ապա Գործքի «մենք» բաժինները (տես՝ 16:10-17; 20:5-16; 21:1-18; 27:1-28:16) ակնարկում են Պողոսի միսիոներական գործերի ականատեսի պատմություն:
3. Ղուկասի ներածությունն (տես՝ 1:1-4) ասում է, որ Ղուկասը ուսումնասիրել է ականատեսի կողմից տրված դեպքերը, որպեսզի գրի Հիսուսի կյանքի վերաբերյալ պատմական այս մոտեցումը, իսկ դա ցույց է տալիս, որ նա եղել է երկրորդ սերնդի Քրիստոնյա: Ղուկասի ներածությունը նաև վերաբերում է Գործքին: Ղուկասն ու Գործքը ժամանակագրորեն մասամբ համընկնում են (այսինքն՝ հարությունից հետո տեղի ունեցած դեպքերն են):

III. ՂՈՒԿԱՍ ՄԱՐԴԸ

Ա. Ղուկասի մասին Հակամարկիոն Նախաբանը (մ. թ. 175թ)

1. բնիկ Սիրիայի Անտիոքից
2. բժիշկ
3. չամուսնացած
4. Պողոսի հետևորդը
5. գրել է Աքայիայից
6. մահացել է 84 տարեկան հասակում Բոյաթիայում

Բ. Կեսարիա Եվսեբիոսը (մ. թ. 275-335թթ) իր *Պատմական Եկեղեցի* III:4:2-ում

1. Անտիոքից էր
2. Պողոսի միսիոներական ճամփորդության ընկերը
3. գրել է Ավետարանը և Գործքը

Գ. Ջերոմը (մ. թ. 346-420թթ իր *Migna* XXVI.18)

1. գրել է Աքայիայից
2. մահացել է Բոյաթիայում

Դ. Նա չափազանց կրթված մարդ էր՝

1. գերազանց Կոյնե Հունարենի քերականության իմացությունը,
2. հարուստ բառապաշարը (հատկապես բժշկական և ծովագնացության)
3. հետազոտությունների իր մեթոդները (տես՝ 1:1-4)
4. նա հավանաբար բժիշկ էր (տես՝ Կող. 4:14): Նաև Մարկոս 5:26-ում բժիշկների վերաբերյալ Մարկոսի կողմից նշված բացասական մեկնությունները բաց են թողնված դրան գուցահեռ Ղուկաս 8:43-ում: Ղուկասը գործածում էր բժշկության, դեղորայքի, հիվանդությունների և այս ոլորտի վերաբերյալ տերմիններ առնվազն 300 անգամ (տես՝ Վ. Զ. Հոբարդի *Ղուկասի Բժշկական Լեզուն* /W. K. Hobart, *The Medical Language of Luke*/ կամ ավելի լավ տարբերակ՝ Ա. Հարնիքի *Ղուկաս Բժիշկը* /A. Harnack, *Luke the Physician*/):

Ե. Նա հեթանոս էր՝

1. Կողոսացիների 4:10-11-ում Պողոսը կարծես թե տարբերություն է դնում իր օգնականների ցանկում (այսինքն՝ «նրանք, որ թվատությունիցն են») մյուս օգնականների համեմատ (այսինքն՝ Եպափրաս, Ղուկաս և Դեմաս):
2. Գործք 1:9-ում Ղուկասն ասում է «իրենց մայրենի լեզվով» նկատի ունենալով արամեերենը, որն ակնարկում է, որ դա իր լեզուն չէր:
3. Իր Ավետարանում Ղուկասը բաց է թողել Հրեաների Բանավոր Օրենքի վերաբերյալ փարիսեցիների հետ տեղի ունեցած բոլոր հակառակությունները:

Զ. Չարմանալի է, որ բոլոր մարդկանց միջից Նոր Կտակարանի մեծ մասի՝ ամենատեղաբար Ավետարանը Գործքի հետ միասին, գրող հեղինակը, քիչ հայտնի, ոչ ականատես (այսինքն՝ ոչ Առաքյալ) հեթանոս կարող էր ընտրվել: Մինչդեռ սա հանդիսանում է վաղ եկեղեցու միաձայն ավանդույթը. ո՛չ հերձվածողներին:

IV. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Երբեք չենք կարող իմանալ այն ճշգրիտ կապը, որ կա (1) Ղուկասի սկզբնական ուսումնասիրության գրառումների (հավանաբար կատարված այն ժամանակ, երբ Պողոսը Կեսարիայի բանտում էր /տես՝ Գործք 23-26 և հատկապես 24:27/); (2) նրա գրքի վերջնական տեսքի (այսինքն՝ ինչպես գիտենք Ղուկասի Ավետարանը կիրառում է Մարկոսին) և (3) Ղուկաս-Գործքի շրջանառության միջև (ուղղված Թեոփիլոսին կամ նրա համար):
- Բ. Այն պետք է, որ գրված լինի նախքան մ. թ. 95թ, եթե 1 Կլեմենտը մեջբերում կամ ակնարկում է Գործքից, իսկ Գործքը հաջորդել է Ղուկաս Ավետարանին.
1. Գործք 13:22 – 1 Կլեմենտ 18:1
 2. Գործք 20:36 – 1 Կլեմենտ 2:1
- Գ. Գործքը պետք է, որ գրված լինի նախքան հռոմեացի գեներալ Տիտոսի կողմից Երուսաղեմի կործանումը (մ. թ. 70թ).
1. Ոչինչ չի նշվում այս մարդկանց մահվան մասին՝ ա. Հակոբոս Առաքյալի (մ. թ. 62թ) ք. Պողոս Առաքյալի (մ. թ. 64-67թթ)
 2. Գործք 7 գլխում Ստեփանոսի քարոզի մեջ չի նշվում Տաճարի կործանումը, որը հզոր կերպով կարող էր լուսաբանել Աստծո պատիժը Հուդայականության հետևողներին:
 3. Պողոսը այցելում է Երուսաղեմ Գործք 21-ում և եթե Ղուկասը գրել է մ. թ. 70-ից հետո, ապա հավանաբար կնշեր իր Ավետարանում Երուսաղեմի կործանման վերաբերյալ:
- Դ. Եթե Ղուկասը գործածել է Մարկոսի Ավետարանը որպես ընդհանուր նկարագրություն՝ ուրվագիծ և/կամ Ղուկասը գրել է իր գիրքը Պաղեստինում իր ուսումնասիրության տարիներին, ապա տարեթիվը կլինի հիսունականների վերջում և վաթսունականների սկզբում (Գործքը գրված լինելով անմիջապես դրանից հետո, մինչ Պողոսը դեռ գտնվում էր Հռոմեական բանտարկության մեջ՝ մ. թ. 62-63թթ):

V. ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

- Ա. Այն ուղղված է Թեոփիլոսին (տես՝ Ղուկ. 1:1-4; Գործք 1:1): Նրա անձի շուրջ մի քանի տեսություններ կան.
1. հռոմեացի կառավարական պաշտոնյա, քանի որ Ղուկասը նրան դիմում է «գերազանց /ձերո գերազանցություն» Ղուկաս 1:3-ում, իսկ նա այս նույն տիտղոսը գործածում է Ֆելիքսի (տես՝ Գործք 23:26; 24:3) և Փեստոսի համար (տես՝ Գործք 26:25):
 2. հարուստ հովանավոր էր (հրեաների և հույների շրջանում Թեոփիլոս անունը լայն տարածում ուներ), որը օգնեց վճարել Ղուկաս և Գործք Առաքելոց գրքերը գրելու, կրկնօրինակելու և բաժանելու ծախսերը:
 3. նրա անունը նշանակում է «Աստծո սիրելի», «Աստծուն սիրող», և հետևաբար հնարավոր է այն գաղտնի ուղերձ է որոշ Բրիստոնյաների:
- Բ. Ղուկասի Ավետարանը ուղղված է հեթանոսներին.
1. Այն բացատրում է հրեական սովորությունները
 2. Ավետարանը բոլոր մարդկանց համար է (տես՝ 2:10)
 3. Մեջբերում է մարգարեություններ, որոնք վերաբերում են «բոլոր մարմիններին» (տես՝ 3:5-6, որը մեջբերում է Եսայի 40-ից)
 4. սերնդաբանությունը վերադառնում է մինչև Ադամ (այսինքն՝ բոլոր մարդիկ, տես՝ 3:38)
 5. հեթանոսների հանդեպ Աստծո սիրո արտահայտման բազմաթիվ օրինակներ (օր.՝ Ղուկասը մեծացնում է Մեսիայի խնջույքին հրավիրվածների համար սահմանները, 13:29)
 6. Հին Կտակարանյան օրինակներ, որոնք հռչակում են Աստծո սերը հեթանոսների հանդեպ (տես՝ 2:32; 4:25-77)
 7. Ղուկասի Մեծ Առաքելությունը՝ Աստծո ներման մասին բոլոր ազգերին քարոզելը (տես՝ 24:47)

VI. ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ Է ԳՐԵԼ ՂՈՒԿԱՍԸ ԻՐ ԳՐՔԵՐԸ

Ա. Բոլոր Ավետարաններն էլ գրվել են ավետարանչական նպատակով հատուկ մարդկանց խմբերի համար (տես՝ Հովհ. 20:30-31).

1. Մատթեոսը՝ հրեաներին
2. Մարկոսը՝ հռոմեացիներին
3. Ղուկասը՝ հեթանոսներին
4. Հովհաննեսը՝ հեթանոսներին

Ղուկասը յուրահատուկ կերպով նշում է Յոթանասունի առաքելության մասին (տես՝ 10:1-24): Ռաբբիների համար 70 թիվը մատնաշնում էր աշխարհի լեզուները (տես՝ Ծննդ. 10): Հիսուսի կողմից բարի լուրի 70 քարոզիչներին ուղարկելը ցույց է տալիս, որ ավետարանը բոլոր ժողովուրդների համար է:

Բ. Հնարավոր այլ նպատակներ.

1. Երկրորդ Գալստյան ուղացման հարցը պարզաբանելը.
ա. Ղուկաս 21 մի փոքր տարբերությամբ նման է Մատթ. 24, Մարկոս 13-ին՝ Քրիստոսի մոտալուտ վերադարձի և աշխարհի վերջի թեմայի շուրջ:
բ. Այնուհանդերձ Ղուկասը խոսում է համաշխարհային ավետարանչության մասին, որն իրականացնելու համար եկեղեցուն ժամանակ էր պետք (տես՝ 24:47):
գ. Նաև Ղուկասը (Պողոսի պես) շեշտադրում է, որ Աստծո Արքայությունը այժմ էլ այստեղ է (տես՝ 10:9,11; 11:20; 17:21), ինչպես նաև ապագայում:
դ. Աստվածաշնչյան գիտնականների կարծիքների և քննարկումների գեղեցիկ ամփոփում կարող էք գտնել Խարիսիս Աստվածաշնչում, հատոր 28, էջ՝ 231-235 /The Anchor Bible/:
2. Քրիստոնեությունը հռոմեական կառավարության պաշտոնյաներին ներկայացնելու՝ բացատրելու նպատակով (ինչպես և Գործքը)
ա. ներածական մասում «գերազանցություն» տիտղոսի առկայությունը
բ. Ղուկաս 23-ն արձանագրում է, որ Պիղատոսը երեք անգամ ասաց. «Ես ոչ մի հանցանք չեմ գտնում այս մարդու մեջ» (տես՝ 23:4, 14-15, 22):
գ. Գործքում կառավարության պաշտոնյաները ներկայացված են բարեհաճ լույսի ներքո և Պողոսը հռոմեացի պաշտոնյաներին հարգալից վերաբերմունքով է դիմում և ի պատասխան նրանք էլ Պողոսին էին լավ վերաբերվում (տես՝ Գործք 26:31-32):
դ. Խաչելության ժամանակ հռոմեացի հարյուրապետը նույնպես լավ վկայություն է տալիս Հիսուսի վերաբերյալ (տես՝ Ղուկ. 23:47):

Գ. Աստվածաբանական մի քանի յուրահատուկ թեմաներ կան, որոնք իրենց դերն ունեն Ղուկասի կողմից այս գրքերը գրելու նպատակի հարցում՝

1. Ղուկասը հատուկ հոգատարություն է ցուցաբերում մարդկանց որոշ խմբերի հանդեպ.
ա. աղքատներն ի դեմս հարուստների (օր.՝ Ղուկասի Երանելիները, Ղուկ. 6:20-23):
բ. անտեսվածները՝
 - (1) անբարո կանայք (տես՝ Ղուկ. 7:36-50)
 - (2) Սամարացիները (տես՝ Ղուկ. 9:51-56; 10:29-37)
 - (3) ապստամբ թափառականները (տես՝ Ղուկ. 15:11-32)
 - (4) մաքսավորները (տես՝ Ղուկ. 19:1-10)
 - (5) բորոտները (տես՝ Ղուկ. 17:11-19)
 - (6) հանցագործները (տես՝ Ղուկ. 23:39-43)
2. Ղուկասը նշում է Երուսաղեմի Տաճարը: Ավետարանը սկսում է Հրեաներով և նրանց Սուրբ Գրերով (այսինքն՝ Հիսուսը իրականացնում է ՀԿ-ի մարգարեությունները), սակայն նրանք մերժում են Նրան (տես՝ 11:14-36) և Նա դառնում է ամբողջ աշխարհի Փրկիչը (տես՝ 10:1-24) և նրանց Տաճարը փոխարինում է Իրենով:

VII. ՂՈՒԿԱՍ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ա.Մի քանի տեսություններ են առաջ քաշվել Մատթևոս, Մարկոս և Ղուկաս (Համատես Ավետարանների) Ավետարանների միջև եղած կապի վերաբերյալ:

1. Վաղ եկեղեցու անփոփոխ ավանդույթն ասում է, որ Ղուկասն է գրել Ավետարանը, որը հեթանոս բժիշկ էր և Պողոս Առաքյալի ծառայակիցը:

2. Մոտ 1776թ-ին Ա. Ի. Լիսինգը (իսկ հետագայում Գիսլերը 1818թ-ին) Համատես («միասին տեսնել») Ավետարանների ձևավորման մեջ տեսականացրեց բանավոր փուլը: Նա հիմնավորեց այն, որ դրանք բոլորն էլ կախված էին ավելի վաղ ունեցած բանավոր ավանդույթներից, որոնք հեղինակները սրբագրել էին իրենց իսկ թիրախավորած լսարանի համար`

ա. Մատթևոսը` հրեաների

բ. Մարկոսը` հռոմեացիների

գ. Ղուկասը` հեթանոսների

Դրանցից յուրաքանչյուրը կապ ուներ Քրիստոնեական որևէ առանձին աշխարհագրական կենտրոնի հետ`

ա. Մատթևոսը` Անտիոք, Սիրիա կամ Հուդա

բ. Մարկոսը` Հռոմ, Իտալիա

գ. Ղուկասը` Ծովեգրյա Կեսարիա, Պաղեստին կամ Աքայիա

դ. Հովհաննեսը` Եփեսոս, Փոքր Ասիա

3. Տասնիններորդ դարի սկզբին Ջ.Ջ. Գրիգբախը տեսականորեն ներկայացրեց, որ Մատթևոսն ու Ղուկասը գրել են Հիսուսի կյանքի դեպքերն իրարից լիովին անկախ: Մարկոսը գրել է հակիրճ Ավետարան, փորձելով խորհրդածել այս մյուս երկու դեպքերի շուրջ:

4. Քսաներորդ դարի սկզբներին Հ.Չ. Հոլցմենը տեսականորեն ներկայացրեց, որ Մարկոսը առաջին գրի առնված Ավետարանն է և որ թե՛ Մատթևոսը, թե՛ Ղուկասը կիրառել են նրա Ավետարանի կառուցվածքը, և ի հավելումն մեկ այլ առանձին փաստաթուղթ, որը պարունակում է Հիսուսի խոսքերը և կոչվում է Չ (գերմաներեն *quelle* կամ «աղբյուր» բառից): Սա անվանվեց «երկու աղբյուր» տեսություն (հաստատված Ֆրիդրիխ Շլեյերմայերի կողմից 1832թ-ին):

Ոմանք ենթադրում են, որ ՀԿ-յան իմաստասիրական գրականության պես կառուցված Հիսուսի խոսքերի մեջբերումների այս ցանկը հնարավոր է հենց այն է, ինչ Պապիասն արձանագրում է, թե Մատթևոսն է գրել: Խնդիրն այն է, որ այս ցանկի և ոչ մի կրկնօրինակը չի մնացել: Եթե եկեղեցին այդքան շատ է փայփայել Ավետարանները, ինչպես կարող էին նրանք կորցնել Հավատքի Հիմնադրի խոսքերի ցանկը, որոնցից օգտվել էին Մատթևոսն ու Ղուկասը:

5. Հետագայում Բ.Հ. Սթրիթերը տեսականորեն ներկայացրեց «երկու աղբյուր» տեսությունը խմբագրված տեսքով, որը նա կոչեց «չորս աղբյուր» տեսություն` հաստատող «պրոտո Ղուկասը», ավելացրած Մարկոսը և Չ:

6. Համատես Ավետարանների ձևավորման վերաբերյալ վերը նշված տեսությունները միայն ենթադրություն են: Գոյություն չունի ո՛չ պատմական և ո՛չ գործնական ձեռագրային վկայություն ո՛չ “Չ” աղբյուրի և ո՛չ էլ «պրոտո Ղուկասի» վերաբերյալ:

Ժամանակակից գիտությունը պարզապես չգիտի, թե ինչպես են ձևավորվել Ավետարանները և թե ովքեր են գրել դրանք (նույնը կարելի է ասել ՀԿ-յան Օրենքի և վաղ Մարգարեների մասին): Այնուհանդերձ ինֆորմացիայի պակասը չի ազդում Եկեղեցու տեսակետի վրա, որ դրանք որպես պատմական նաև հավատքի փաստաթղթեր ներշնչված են և հավաստի:

7. Համատեսական Ավետարանների մեջ ակնհայտ նմանություններ կան կառուցվածքի և բառապաշարի մեջ, սակայն կան նաև շատ ուշագրավ տարբերություններ: Ականատեսի տված պատմություններում տարբերությունները սովորական են: Վաղ եկեղեցուն չէր անհանգստացնում Հիսուսի կյանքի վերաբերյալ այս երեք ականատեսների ներկայացրած պատմություններում առկա տարբերությունները:

Հնարավոր է, որ թիրախավորված լսարանը, հեղինակի ոճը և պատմությունների մեջ գործածվող տարբեր լեզուները (արամերեն և հունարեն) թվացյալ տարբերությունների առիթ են եղել: Պետք է ասել, որ այս ներշնչված հեղինակները, խմբագիրները կամ հավաքագրողները ազատ էին Հիսուսի կյանքի, ուսմունքների դեպքերն ընտրելու, դասավորելու, հարմարեցնելու և ամփոփելու գործում (տես` *Ինչպես Կարդալ Աստվածաշունչն*

Բ. Ղուկասը հատուկ նշում է, որ ինքն ուսումնասիրել է (տես՝ Ղուկ. 1:1-4) Հիսուսի կյանքը ակա-նատեսների օգնությամբ: Պողոսի բանտարկությունը Պաղեստինի Ծովեզրյա Կեսարիայում Ղուկասին ժամանակ և հնարավորություն ընձեռեց շփվել այս մարդկանց հետ: Գլուխ 1-2 հնարավոր է արտացոլում է Մարիամի հիշողությունները (տես՝ Սըր Ուիլյամ Ռամսեյ, *Արդ-յո՞ք Հիսուսը Բեթլեհեմում է ծնվել*) ինչպես և գլուխ 3-ի սերնդաբանությունը:

Գ. Վաղ եկեղեցու մի քանի աղբյուրներ նշում են, որ Ղուկասը Պողոս Առաքյալի շրջիկ միսիոներ գործընկերն էր: Այս վաղ շրջանի աղբյուրներից մի քանիսը նաև պնդում են, որ Ղուկասի Ավետարանը գրվել է Պողոսի քարոզների ազդեցությամբ: Հնարավոր չէ ուրանալ, որ ավե-տարանի համաշխարհային առաքելության հստակ նպատակն է Ղուկասի, Գործքի և Պո-ղոսի թղթերի մարգարեությունների իրականացումը:

VIII. ՂՈՒԿԱՍԻ ՅՈՒՐԱԿԱՏՈՒԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ղուկասի առաջին երկու գլուխները յուրահատուկ են և հնարավոր է դրանք Մարիամի կողմից են գրվել /թելադրվել/, ինչպես և 3:23-28-ի սերնդաբանությունը:

Բ. Ղուկասին յուրահատուկ են հրաշքները.

1. Նայինից որբեայրու որդու վերակենդանացումը, 7:12-17
2. Շաբաթ օրը հիվանդ կնոջ բժշկությունը ժողովարանում, 13:10-17
3. Շաբաթ օրը հիվանդ տղամարդու բժշկությունը ժողովարանում, 14:1-6
4. տաս բորոտների բժշկվելը և Հիսուսին շնորհակալություն հայտնելու համար միայն մեկի վերադառնալը, որն էլ սամարացի էր

Գ. Ղուկասին յուրահատուկ են առակները.

1. Բարի Սամարացին, 10:25-37
2. Համառ ընկերը, 11:5-13
3. հարուստ անմիտը, 12:13-21
4. կորած մետաղադրամը, 15:8-10
5. երկու որդիները, 15:11-32
6. խորամանկ տնտեսը, 16:1-8
7. հարուստը և Ղազարոսը, 16:19-31
8. անիրավ դատավորը, 18:1-8
9. Փարիսեցին և Մաքսավորը, 18:9-14

Դ. Ղուկասի առակները, որոնք նաև Մատթեոսում կան, սակայն տարբերվում են

1. 12:39-46 (Մատթ. 24:43-44)
2. 14:16-24 (Մատթ. 22:2-14)
3. 19:11-27 (Մատթ. 25:14-30)

Ե. Յուրահատուկ այլ դեպքեր.

1. առաջին երկու գլուխների դեպքերը
2. Չաքեոս հարկահավաքը, 19:1-10
3. Պիղատոսը Հիսուսին ուղարկում է Հերովդեսի մոտ հարցաքննության, 23:8-12
4. Էմմաուսի ճանապարհի երկու աշակերտները, 24:13-32

Զ. Ղուկասում ամենայուրահատուկ տարրերը կարելի է գտնել 9:51-18:14-ում: Այստեղ Ղուկասը չի հենվել Մարկոսի կամ “Պ” աղբյուրի վրա (այսինքն՝ Հիսուսի խոսքերը, որոնք հավանաբար գրի է առել Մատթեոսը): Անգամ նմանատիպ դեպքերը և ուսմունքները ձևակերպված այլ կերպ: Այս բաժնի համանման թեման է «Երուսաղեմի ճանապարհին» (տես՝ 9:51; 13:22,33; 17:11; 18:31; 19:11,28), որը իրականում Նրա խաչի ճանապարհն էր:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ամուլ, 1:7
2. փրկություն, 1:68
3. փրկության եղյուր, 1:69
4. մարդահամար, 2:1
5. նախանձահույզ, 6:15
6. Աստծո թագավորություն, 6:20
7. փող հնչեցնել, 7:32
8. ժողովարանի պաշտոնյա, 8:49
9. Մարդու Որդին պետք է չարչարվի, 9:22
10. սամարացի, 10:33
11. Վա՛յ ձեզ: 11:42,43,44,47,52
12. ապաշխարեք, 13:3,5
13. նեղ դուռը, 13:24
14. սեփական խաչը տանել, 14:27
15. մամոնա, 16:11
16. Օրենքը և Մարգարեները, 16:16
17. Աբրահամի գոգը, 16:22
18. ծծումբ, 17:2
19. մինչև որ հեթանոսների ժամանակը լրանա, 21:24
20. ծերերի Ատյանը, 22:66
21. Դրախտ, 23:43

X. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Թեոփիլոս, 1:3
2. Չաքարիա, 1:5
3. Տիրոջ հրեշտակ, 1:11; 2:9
4. Գաբրիել, 1:26
5. Կյուրենիոս, 2:2
6. Աննա, 2:36
7. Տիրերիոս, 3:1
8. Հերովդես չորրորդապետը, 3:1,19
9. Կայիափա, 3:2
10. Նենման, 4:2???
11. Հարավի թագուհին, 11:31
12. Չաքարիա, 10:51
13. Ղազարոս, 16:23
14. Չաքեոս, 19:2
15. Հովսեփ, 23:50
16. Կղեովպաս, 24:18

XI. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Գալիլիա, 1:26
2. Նազարեթ, 1:4
3. Բեթլեհեմ, 1:4
4. Իսուրիա, 3:1
5. Բեթսափղա, 9:10
6. Քորազին, 10:13
7. Տիվրոս, 10:13
8. Կափառնայում, 10:15
9. Սամարիա, 17:11
10. Սոդոմ, 17:29
11. Երիքով, 19:1
12. Էմմաուս, 24:13
13. Բեթանիա, 24:50

XII. ԲՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նշանակություն ունի այն, որ Աստված առաջինը հովիվներին հայտնեց Հիսուսի ծննդյան մասին:
2. Ի՞նչ է նշանակում 2:49-ի Հիսուսի խոսքերը:
3. Ինչո՞ւ է Ղուկասում նշված սերնդաբանությունը հետ գնում մինչև Ադամ:
4. Ինչո՞վ էին աշակերտները խախտում օրենքը 6:1-5-ում: Ի՞նչ օրենք էին նրանք խախտում:
5. Բացատրե՛ք 6:46-ի Հիսուսի խոսքերը:
6. Գլուխ 17:18-23-ում ինչո՞ւ է Հովհաննեսը կասկածում, որ Հիսուսն է խոստացված Մեսիան:
7. Ինչո՞ւ էին Գենեսայրեթի մարդիկ ուզում, որ Հիսուսը հեռանար իրենց տարածքից:
8. Ձեր իսկ խոսքերով բացատրե՛ք, թե ինչ նկատի ունի 9:62-ը:
9. Ե՞րբ էր Սատանան երկնքից վայր ընկել (10:18):
10. Ինչո՞ւ էին հրեաները ասում սամարացիներին:
11. Արդյո՞ք 12:41-48 վերաբերում է պատժի աստիճաններին կամ դժողքի մակարդակներին:
12. Բացատրե՛ք 13:28-30 ձեր իսկ խոսքերով:
13. Ո՞րն է 15:11-32-ում արձանագրված «Անառակ որդու» առակի նպատակ(ներ)ը:
14. Բացատրե՛ք 16:18 ձեր իսկ խոսքերով, սակայն մի՛ մոռացեք մեկնաբանել այն իր պատմական միջավայրի լույսի ներքո:
15. Արդյո՞ք 17:34-35-ը նկատի ունի գաղտնի հափշտակությունը: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:
16. Ինչո՞ւ է 20:2-ը այդքան կարևոր հարց:
17. Ովքե՞ր են 20:2-ի խաղողի այգու մշակները:
18. Ըստ 22:3-ի արդյո՞ք հուդան պատասխանատու էր իր արարքների համար:
19. Ինչո՞ւ էր Ղուկասը կարևոր համարել արձանագրել 23:20 համարը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Մատթևոսն ու Ղուկասը սկսում են Հիսուսի ծննդյամբ, Մարկոսը սկսում է Նրա մկրտությանը, իսկ Հովհաննեսը՝ ստեղծագործությունից առաջ:

Բ. Հովհաննեսը ներկայացնում է Հիսուս Նագովրեցու կատարյալ աստվածությունը առաջին գլխի առաջին համարից սկսած և այս շեշտադրումը կրկնում է ամբողջ Ավետարանի բովանդակությամբ:

Գ. Ըստ երևույթին Հովհաննեսն իր Ավետարանը զարգացնում է Սինոպտիկ /Համատես/ Ավետարանների կարևորագույն հիմնավորումների յուրսի ներքո: Նա փորձում է լրացումներ կատարել և մեկնել Հիսուսի կյանքն ու ուսմունքները վաղ եկեղեցու կարիքների համաձայն (առաջին դարի վերջերը):

Դ. Հովհաննեսը կարծես թե Հիսուս Մեսիային ներկայացնում է կիրառելով հետևյալ կերպերը՝

1. յոթ հրաշքները՝ նշանները և դրանց մեկնությունները
2. քսանյոթ հարցազրույցներ կամ երկխոսություններ տարբեր անհատների հետ
3. հատուկ պաշտամունքի և տոնական օրեր

ա. Շաբաթը

բ. Չատիկը (տես՝ 5-6 գլուխները)

գ. Տաղավարահարացը (տես՝ 7-10 գլուխները)

դ. Հանուկկա (տես՝ 10:22-39)

4. «Ես ԵՄ» հռչակումները՝

ա. կապված Աստծո անվան հետ (ՅԱՀՎԵ)

1) Ես Նա ԵՄ (4:26; 8:24,28; 13:19; 18:5-6)

2) Աբրահամից առաջ էի ԵՄ /ԵՄ/ (8:54-59)

բ. Ստորոգյալ ուղղականներով՝

1) ԵՄ ԵՄ կյանքի հացը (6:35,41,48,51)

2) ԵՄ ԵՄ աշխարհի յույսը (8:12)

3) ԵՄ ԵՄ ոչխարների փարախի դուռը (10:7,9)

4) ԵՄ ԵՄ բարի հովիվը (10:11, 14)

5) ԵՄ ԵՄ հարությունը և կյանքը (11:25)

6) ԵՄ ԵՄ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը (14:6)

7) ԵՄ ԵՄ ճշմարիտ որթը (15:1,5)

Ե. Հովհաննեսի և մյուս Ավետարանների միջև տարբերությունները

1. Չնայած այն բանի, որ Հովհաննեսի առաջնային նպատակը աստվածաբանական է, նրա կողմից կիրառված պատմական և աշխարհագրական փաստերը ծայրաստիճան ճշգրիտ և մանրակրկիտ են: Սինոպտիկ Ավետարանների և Հովհաննեսի միջև եղած հակասությունների կոնկրետ պատճառը հայտնի չէ՝

ա. Հուդայում սկզբնական ծառայությունը (Տաճարի մաքրումը)

բ. Հիսուսի կյանքի վերջին շաբաթվա ժամանակագրությունն ու թվագրումը

2. Օգտակար կլինի, եթե ժամանակ տրամադրեք և քննարկեք Հովհաննեսի և Սինոպտիկ Ավետարանների միջև առկա տարբերությունները: Թույլ տվեք մեջբերել այս տարբերությունների վերաբերյալ Չորջ Էլդոն Լեդդին իր *Նոր Կտակարանի Աստվածաբանություն* գրքից /George Eldon Ladd *A Theology of the New Testament*/.

ա. «Չորրորդ Ավետարանը այնքան տարբեր է Սինոպտիկ Ավետարաններից, որ իրականում հարց է առաջանում, թե արդյոք Հիսուսի ուսմունքները ճիշտ է փոխանցում մեզ, թե Բրիտոնեական հավատքն այնքան է խմբագրել ավանդույթը, որ պատմությունը կյանվել է աստվածաբանական մեկնաբանության մեջ» (Էջ՝ 215):

բ. «Մեր ձեռքի տակ ունեցած ամենահավանական լուծումն այն է, որ Հիսուսի ուսմունքները արտահայտված են Հովհաննեսյան դարձվածքների միջոցով: Եթե սա ճիշտ լուծումն է, և եթե մեզ մնում է եզրակացնել, որ Չորրորդ Ավետարանը ձևակերպված

է Հովհաննեսայան դարձվածքներով, ապա հետևյալ կարևոր հարցն է ծագում. Չորրորդ Ավետարանի աստվածաբանությունը քանի՞ տոկոսով է պատկանում Հովհաննեսին և ոչ թե Հիսուսին: Ի՞նչ աստիճանի է Հիսուսի ուսմունքը այդքան փոխակերպվել Հովհաննեսի մտքում, որ այն ինչ ունենք ավելի շուտ Հովհաննեսի մեկնությունն է, քան անձամբ Հիսուսի ուսմունքների ճշգրիտ ներկայացումը» (էջ՝ 215):

- գ. Լեդդը նաև մեջբերում է Վ. Ֆ. Օլբրայթի «Վերջին հայտնագործությունները Պաղեստինում և Հովհաննեսի Ավետարանը» գրքից, Վ. Դ. Դեյվիսի և Դ. Դոբի խմբագրած *Նոր Կտակարանի Հիմքը և Դրա Էսկատոլոգիան* գրքում /W. F. Albright “Recent Discoveries in Palestine and the Gospel of John” in *The Background of the New Testament and Its Eschatology* edited by W. D. Davies and D. Daube/.

«Ոչ մի հիմնավոր տարբերություն չկա Հովհաննես Ավետարանի և Սինոպտիկ Ավետարանների միջև. դրանց միջև եղած հակադրությունը ավանդույթի վրա կենտրոնանալու մեջ է՝ Քրիստոսի որոշ ուսմունքների ենթակետերի հետ միասին, հատկապես այնպիսիների, որոնք կարծես մոտ էին Էսսենների ուսմունքներին:

Ընդհանրապես ոչինչ չկա ցույց տալու, որ Հիսուսի ուսմունքներից որևէ մեկը խեղաթյուրվել է կամ կեղծվել, կամ ինչ-որմ մի կենսականորեն կարևոր տարր է ավելացվել դրանց: Այն, որ Վաղ Եկեղեցու կարիքներն են ազդել Ավետարանում առկա եզրակացությունների վրա, դա պետք է պատրաստակամորեն ընդունենք, սակայն առիթ չունենք ենթադրելու, որ այս Եկեղեցու կարիքները պատասխանատու էին աստվածաբանական կարևորության որևէ նոր հայտնագործության կամ նորամուծության համար:

Նոր Կտակարանին քննադատորեն մոտեցում ցուցաբերող գիտնականների և աստվածաբանների ամենատարօրինակ ենթադրություններից մեկն այն է, որ Հիսուսի միտքը այնքան սահմանափակ էր, որ որևէ ակնհայտ հակադրություն Հովհաննեսի և Սինոպտիկ Ավետարանների միջև արդյունքն է առաջին Քրիստոնեական աստվածաբանների մտածելակերպի տարբերության: Յուրաքանչյուր մեծ մտավորական և անձնավորություն տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր լսարանների և մարդկանց կողմից, որոնք ընտրում են, թե ինչն է իրենց ավելի հոգեհարազատ կամ օգտակար բոլոր այն բաներից, որ տեսնում կամ լսում են» (էջ՝ 170-171):

- դ. Եվ կրկին Չորջ Ի. Լեդդից.

«Նրանց միջև տարբերությունն այն չէ, որ Հովհաննեսը աստվածաբանական է, իսկ մյուսները՝ ոչ, այլ որ բոլորն էլ աստվածաբանական են իրենց ուրույն տեսակի մեջ: Պատմության մեկնաբանությունը կարող է ներկայացնել իրավիճակների փաստերն ավելի իրատեսորեն, քան պարզապես դեպքերի ժամանակագրությունը: Եթե Հովհաննեսը աստվածաբանական մեկնաբանություն է, ապա այն դեպքերի մեկնություն է, որոնք Հովհաննեսը համոզված էր, որ տեղի են ունեցել պատմության մեջ: Իհարկե Սինոպտիկ Ավետարանների նպատակն էլ չի համարվում Հիսուսի *ipsissima verba* (բուն բառերը) փոխանցելը և ոչ էլ Նրա կյանքի դեպքերի կենսագրականը: Դրանք Հիսուսի դիմանկարներն են և Նրա ուսմունքների ամփոփումները: Մատթեոսն ու Ղուկասը ազատ են զգացել Մարկոսում առկա նյութը վերադասավորելու և փոխանցելու Հիսուսի ուսմունքները նշանակալի ազատությամբ: Եթե Հովհաննեսը Մատթեոսից ու Ղուկասին ավելի շատ ազատություն է կիրառել, ապա պատճառն այն է, որ ցանկացել է փոխանցել Հիսուսի էության ավելի խորը և ի վերջո ավելի իրական պատկերը» (էջ՝ 221-222):

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Ավետարանը անանում է, սակայն ակնարկում է Հովհաննեսի հեղինակությունը.

1. ակնատես հեղինակ (տես՝ 19:35)
2. «սիրելի աշակերտը» արտահայտությունը (թե՛ Պոլիկրատեսը, և թե՛ Իրենեոսը ընդունում են, որ դա հենց Հովհաննես Առաքյալն է)
3. Հովհաննեսը՝ Չերեդեսի որդին, երբեք անվանապես չի նշվում

Բ. Պատմական միջավայրը ակնհայտ է հենց Ավետարանից, հետևաբար, հեղինակի հարցը այնքան էլ կարևոր գործոն չէ մեկնության համար: Կարևոր է հեղինակի ներշնչված լինելու վստահությունը:

Հովհաննես Ավետարանի հեղինակն ու գրառման տարեթիվը ազդում են ոչ թե ներշնչանքի, այլ մեկնաբանության վրա: Մեկնաբանների համար կարևոր է պատմական միջավայրը՝ իրավիճակը, որը պատճառ է հանդիսացել գրքի գրառման համար: Պե՞տք է արդյոք համեմատել Հովհաննեսի դուալիզմը (1) հրեական երկու դարաշրջանների հետ; (2) արդարության Քու՛մրանի վարդապետի հետ; (3) Չրադաշտական կրոնի հետ; (4) Գնոստիկ մտածելակերպի, թե՛ (5) Հիսուսի ուրույն մտածելակերպի հետ:

Գ. Վաղ ավանդական տեսակետն այն է, որ Հովհաննես Առաքյալը՝ Չերեղեոսի որդին, եղել է որպես ականատես աղբյուր: Սա պետք է հստակեցվի, քանի որ երկրորդ դարի արտաքին աղբյուրները կարծես թե ուրիշ մարդկանց են մատնանշում այս Ավետարանի ստեղծման հարցում՝

1. Եփեսացի երեցներն ու որոշ հավատացյալներ, որոնք քաջալերել են տարեց Առաքյալին գրելու Ավետարանը (Եվսեբիոսը մեջբերում է Ալեքսանդրիացի Կլեմենտին):
2. Անդրեասը՝ Առաքյալի ընկերը (Մուրատորիան Ձեռագիրը, մ. թ. 180-200թթ, Հռոմից)

Դ. Որոշ ժամանակակից աստվածաբաններ կասկածում են մեկ այլ հեղինակի՝ հիմնված մի քանի ենթադրությունների վրա, ըստ Ավետարանի ոճի և նյութի: Շատերը ենթադրում են, որ այն գրվել է երկրորդ դարի սկզբներին (նախքան մ. թ. 115թ)՝

1. Գրվել է Հովհաննես Առաքյալի աշակերտի կողմից (Հովհաննեսյան շրջանակի ազդեցությամբ), որը հիշում էր նրա ուսմունքները (J. Weiss, B. Lightfoot, C. H. Dodd, O. Cullmann, R. A. Culpepper, C. K. Barrett)
2. Գրվել է «Հովհաննես երեցի» կողմից (Ասիայից առաջին երեցների շարքում գտնվող մեկը, որը Հովհաննես Առաքյալի աստվածաբանության և տերմինաբանության ազդեցությունն ուներ), որը սերվել է Պապիասում առկա մի անհասկանալի հատվածից (մ. թ. 70-146թթ)՝ մեջբերված Եվսեբիոսի կողմից (մ. թ. 280-339):

Ե. Ավետարանի նյութերի համար հենց Հովհաննեսը որպես հիմնական աղբյուր հանդիսանալու ապացույցներ՝

1. ներքին ապացույց
ա. հեղինակը գիտեր հրեական ուսմունքներն ու ծեսերը, և պատմում էր դրանց ՀԿ-յան տեսակետները
բ. հեղինակը ծանոթ էր Պաղեստինին և Երուսաղեմին մ. թ. 70թ-ի դեպքերից առաջ
գ. հեղինակն ասում է, որ ականատես է եղել՝
 - 1) 1:14
 - 2) 19:35
 - 3) 21:24
- դ. հեղինակը առաքյալների խմբի անդամ էր, քանի որ քաջաձանոթ էր՝
 - 1) ժամանակի և վայրի մանրամասնությունների (փորձության գիշերը)
 - 2) թվերի մանրամասներին (2:6-ում՝ ջրամանների և 21:11՝ ձկների)
 - 3) մարդկանց վերաբերյալ մանրամասների
 - 4) հեղինակը գիտեր դեպքերի մանրամասները և դրանց հանդեպ արձագանքները
 - 5) հեղինակը կոչվում է որպես «սիրելի աշակերտ»՝
 - ա) 13:23,25
 - բ) 19:26-27, 34-35
 - գ) 20:2-5,8
 - դ) 21:7, 20-24
- 6) հեղինակը Պետրոսի հետ միասին հանդիսանում էր առաքյալների ներքին օղակի անդամ՝
 - ա) 13:24
 - բ) 20:2
 - գ) 21:7
- 7) Չերեղեոսի որդի Հովհաննեսի անունը երբեք այս Ավետարանում չենք հանդիպում, որը խիստ անսովոր է, քանի որ նա Առաքելական շրջանակի ներքին անդամներից էր:

ե. Արտաքին ապացույցը՝

- 1) Ավետարանը ճանաչված հետևյալ մարդկանց կողմից՝

- ա) Իրենեուս (մ.թ. 120-202թթ), որը գործակցում էր Պոլիկարպի հետ, որն էլ ճանաչում էր Առաքյալին (տես՝ Եվսեբիոսի Պատմական Եկեղեցի 5:20:6-7) – «Հովհաննեսը՝ Տիրոջ աշակերտը, որը հենվել էր Նրա կրծքին և հենց նա էլ թողարկել է Ավետարանը Ասիայի Եփեսոսում» (Haer, 3:1:1, մեջբերված Եվսեբիոսի Պատմական Եկեղեցի 5:8:4):
 - բ) Ալեքսանդրիացի Կլեմենտը (մ.թ. 153-217թթ) – «Հովհաննեսը, որին իր ընկերները ինդրեցին և Սուրբ Հոգուց գերբնական կերպով առաջնորդվելով, շարադրեց մի հոգևոր Ավետարան» (Եվսեբիոսի Պատմական Եկեղեցի 6:14:7)
 - գ) Չաթին Սարթըրը (մ.թ. 110-165թթ) իր *Երկխոսություն Տրիֆոյի հետ* 81:4
 - դ) Տերտուղիանոսը (մ.թ. 145-220թթ)
- 2) Հովհաննեսը որպես հեղինակ՝ հիմնավորված շատ ավելի վաղ ականատեսների կողմից
- ա) Պոլիկարպը (մ.թ. 70-156թթ, արձանագրված Իրենեուսի կողմից), որը Չմյունխայի եպիսկոպոսն էր (մ.թ. 155թ):
 - բ) Պապիասը (մ.թ. 70-146թթ, արձանագրված Հռոմից, Եվսեբիոսի կողմից Հակա-մարկոնիտ Նախաբանում), որը Փոյուգիայի Հիերապոլիսի եպիսկոպոսն էր և ասվում է, որ եղել է Հովհաննես Առաքյալի աշակերտներից մեկը:

Չ. Ավանդական հեղինակի շուրջ կասկածելու պատճառները՝

1. Ավետարանի կապը գնոստիկ թեմաների հետ
2. Գլուխ 21-ը որպես ակնհայտ հավելում
3. Մինոպոլի Ավետարանների համեմատ ժամանակագրական տարբերությունները
4. Հովհաննեսը իրեն չէր վերագրի որպես «սիրելի աշակերտը»
5. Հովհաննեսի մեջ Հիսուսը գործածում է Մինոպոլի Ավետարաններից տարբերվող բառապաշար և ժանրեր:

Է. Եթե ենթադրենք, որ հեղինակը հենց Հովհաննես Առաքյալն է, ապա ինչ կարող ենք ենթադրել այս մարդու մասին.

1. Նա գրել է Եփեսոսից (Իրենեուսն ասում է «ուղարկեց Ավետարանը Եփեսոսից»)
2. Նա գրել է Ավետարանը, երբ արդեն ծեր էր (Իրենեուսն ասում է, որ նա ապրեց մինչև Տրայանոսի իշխանության գալը՝ մ.թ. 98-117):

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եթե ենթադրենք, որ Հովհաննես Առաքյալն է հեղինակը, ապա՝

1. նախքան մ.թ. 70թ, երբ Երուսաղեմը ավերվեց հռոմեացի զեներալ (հետագայում կայսր) Տիտոսի կողմից
 - ա. Հովհաննես 5:2-ում, «Եվ Երուսաղեմում՝ Ոչխարների շուկայի մոտ մի ավազան կար /անգլ. կա/, որ երբայերեն Բերթեզոհա էր կոչվում, որ հինգ սրահ ուներ. . .»
 - բ. ավելի շուտ կիրառվող «աշակերտ» տիտղոսի գործածությունը, որը մատնանշում է առաքյալների խմբին
 - գ. այժմ Մեռյալ Ծովի Մագաղաթներում հայտնաբերվել են ենթադրաբար հետագայում առաջ եկած գնոստիկ բնույթի տարրեր, որոնք ցույց են տալիս, որ դրանք կազմել են առաջին դարի աստվածաբանական ժառգոնի մի մասը
 - դ. չի նշվում ընդհանրապես մ.թ. 70-ին Տաճարի և Երուսաղեմ քաղաքի կործանման մասին
 - ե. ամերիկացի հայտնի հնագետ Վ.Ֆ.Օլբրայթը Ավետարանի համար նշում է 70-ականների վերջերն ու 80-ականների սկիզբը
2. առաջին դարի վերջում՝
 - ա. Հովհաննեսի կատարելագործված աստվածաբանությունը
 - բ. Երուսաղեմի անկումը նշված չէ, քանի որ տեղի է ունեցել գրեթե 20 տարի առաջ
 - գ. Հովհաննեսի կողմից գնոստիկ բնույթի արտահայտությունների և շեշտադրումների կիրառությունը
 - դ. եկեղեցու վաղ շրջանի ավանդույթները՝
 - 1) Իրենեուս

2) Եվսերիոս

Բ. Եթե ընդունենք, որ հեղինակը եղել է «Հովհաննես երեցը», ապա տարեթիվը կլինի երկրորդ դարի սկզբից մինչև կեսերը: Այս տեսությանը սկիզբ է դրել Դիոնեսիոսը, որը չէր ընդունում, որ Հովհաննես Առաքյալն է Ավետարանի հեղինակը (գրական պատճառներով): Եվսերիոսը, որը չէր ընդունում, որ Հովհաննես Առաքյալը Հայտնության գրքի հեղինակն է՝ աստվածաբանական պատճառներից ելնելով, զգաց, որ գտել է մեկ այլ «Հովհաննեսի» ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում՝ Պապիասի մեջբերման մեջ (*Պատմական Եկեղեցի* 3:39:5,6), որը թվարկում է երկու «Հովհաննեսների»՝ (1) Առաքյալին և (2) Երեցին:

IV. ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա. Սկզբում այն գրված է եղել Փոքր Ասիայի Հռոմեական Նահանգի եկեղեցիներին, հատկապես Եփեսոսի:

Բ. Հիսուս Նազովրեցու անձի և կյանքի դեպքերի լիակատար պարզության և խորության շնորհիվ այն դարձավ թե՛ հելլենական հեթանոս հավատացյալների, և թե՛ գնոստիկ խմբերի ամենասիրելի Ավետարանը:

V. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա. Ավետարանն ինքնին հաստատում է իր ավետարանչական նպատակը, 20:30-31

- 1. հրեա ընթերցողների համար
- 2. հեթանոս ընթերցողների համար
- 3. սկսնակ գնոստիկ ընթերցողների համար

Բ. Կարծես թե այն ունի ապոկոգետիկ ներուժ

- 1. Հովհաննես Մկրտչի մոլի հետևորդների դեմ
- 2. սկսնակ գնոստիկ սուտ վարդապետների դեմ (հատկապես Նախաբանը). այս գնոստիկ սուտ ուսմունքները նաև հիմք են ձևավորում ՆԿ-յան մյուս գրքերը գրվելու համար՝
 - ա. Եփեսացիների
 - բ. Կողոսացիների
 - գ. Հովվական Թղթերը (1 Տիմոթեոս, Տիտոս, 2 Տիմոթեոս)
 - դ. 1 Հովհաննես (1 Հովհաննեսի թուղթը հնարավոր է Ավետարանի համար բացման նամակ է հանդիսացել)

Գ. Ըստ հավանականության 20:31-ի սահմանումը որպես գրքի նպատակ կարելի է հասկանալ հավատարմության վարդապետության քաջակերություն, ինչպես նաև ավետարանչության համար, քանի որ փրկությունը նկարագրելու համար մշտապես կիրառվում է ՆԵՐԿԱԺԱՄԱՆԱԿԸ: Այս առումով Հովհաննեսը, Հակոբոսի պես, հնարավոր է բալանսի է բերում Փոքր Ասիայի որոշ խմբերի կողմից Պողոսի աստվածաբանության չափից ավել շեշտադրումը (տես՝ 2 Պետրոս 3:15-16): Չարմանալի է, որ վաղ եկեղեցու ավանդույթը Հովհաննեսին է ասոցացնում Եփեսոսի հետ և ոչ թե Պողոսին (տես՝ Ֆ.Ֆ.Բրյուսի *Պետրոս, Ստեփանոս, Հակոբոս և Հովհաննես . ոչ-պողոսյան Զրիստոնեության ուսումնասիրություններ*, էջ՝ 120-121 /F. F. Bruce's *Peter, Stephen, James and John: Studies in Non-Pauline Christianity*/):

Դ. Վերջաբանը (գլուխ 21) կարծես թե պատասխանում է վաղ եկեղեցու ունեցած հատուկ հարցերին՝

- 1. Հովհաննեսը լրացնում է Սինոպտիկ Ավետարանների դեպքերը: Սակայն այն կենտրոնանում է Հուդայում տեղի ունեցած ծառայության վրա՝ հատկապես Երուսաղեմում:
- 2. Երկու հարցեր, որոնք Հավելվածի՝ գլուխ 21-ի, բովանդակությունն են կազմում՝
 - ա. Պետրոսի վերականգնումը
 - բ. Հովհաննեսի երկարակեցությունը
 - գ. Հիսուսի վերադարձի ուշացումը

Ե. Ոմանք Հովհաննեսը դիտարկում են որպես սուրբ արարողակարգերը արհամարհող գիրք, դիտավորությամբ դրանք անտեսելով կամ չարձանագրելով, կամ էլ չքննարկելով այդ օրենքները՝ կանոնները, չնայած այն կատարյալ կոնտրաստուալ հնարավորությունների, որոնց հանդիպում ենք գլուխ 3-ում (մկրտության համար) և գլուխ 6-ում (Հաղորդության կամ Տիրոջ Ընթրիքի):

VI. ՈՒՐՎԱԳԾՈՒՄ ՀԻՄՆՎԱԾ՝

Ա. Փիլիսոփայական, աստվածաբանական Նախաբանի (1:1-18) և գործնական Վերջաբանի (գլուխ 21) վրա:

Բ. Հիսուսի հանրային ծառայության ժամանակ տեղի ունեցած յոթ հրաշք նշանները (գլուխ 2-12) և դրանց մեկնությունները .

1. Կանայի հարսանիքում ջուրը գինի դարձնելը (2:1-11)
2. Կափառնայում ժողովարանապետի որդու բժշկությունը (4:46-54)
3. Երուսաղեմում Բեթեզդայի ավազանի մոտ կաղ մարդու բժշկությունը (5:1-18)
4. Գալիլիայում շուրջ 5,000 –ի կերակրելը (6:1-15)
5. Գալիլիայի Ծովի վրայով քայլելը (6:16-21)
6. Երուսաղեմում ի ծնե կույրի բժշկությունը (9:1-41)
7. Բեթանիայում Ղազարոսի հարությունը (11:1-57)

Գ. Անհատ մարդկանց հետ զրույցներն ու երկխոսությունները՝

1. Հովհաննես Մկրտիչը (1:19-34; 3:22-36)
2. աշակերտները
ա. Անդրեասն ու Պետրոսը (1:35-42)
բ. Փիլիպոսն ու Նաթանայելը (1:43-51)
3. Նիկողեմեոսը (3:1-21)
4. Սամարացի կինը (4:1-45)
5. Հրեաները Երուսաղեմում (5:10-47)
6. Ամբոխը Գալիլիայում (6:22-66)
7. Պետրոսն ու աշակերտները (6:67-71)
8. Հիսուսի եղբայրները (7:1-13)
9. Երուսաղեմում հրեաները (7:14-8:59; 10:1-42)
10. աշակերտները վերնատանը (13:1-17:26)
11. Հրեական բանտարկության և դատավճռի ժամանակ (18:1-27)
12. Հռոմեական դատավճռի ժամանակ (18:28-19:16)
13. հարությունից հետո խոսակցությունները, 20:11-29
ա. Մարիամի հետ
բ. տաս Առաքյալների հետ
գ. Թովմասի հետ
14. վերջաբանի երկխոսությունը Պետրոսի հետ, 21:1-25
15. (7:53-8:11, շնացող կնոջ պատմությունը Հովհաննես Ավետարանի բնագրում չկար)

Դ. Հատուկ պաշտամունքի և տոնական օրերը՝

1. Շաբաթ օրերը (5:9; 7:22; 9:14; 19:31)
2. Չատկի օրերը (2:13; 6:4; 11:55; 18:28)
3. Տաղավարահարաց տոնը (8-9 գլուխները)
4. Հանուկան (լույսերի տոնը, տես՝ 10:22)

Ե. «ԵՍ ԵՄ»-ների կիրառությունները՝

1. «ԵՍ Նա ԵՄ» (4:26; 6:20; 8:24,28,54-59; 13:19; 18:5-6,8)
2. «ԵՍ ԵՄ կյանքի հացը» (6:35,41,48,51)
3. «ԵՍ ԵՄ աշխարհի լույսը» (8:12; 9:5)
4. «ԵՍ ԵՄ փարախի դուռը» (10:7,9)
5. «ԵՍ ԵՄ բարի հովիվը» (10:11,14)
6. «ԵՍ ԵՄ հարությունը և կյանքը» (11:25)
7. «ԵՍ ԵՄ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (14:6)

8. «ԵՍ ԵՄ ճշմարիտ որթը» (15:1,5)

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը /Բանը/, 1:1
2. հավատալ, 1:7
3. «աշխարհը Նրանով եղավ», 1:10
4. «բանը մարմին դարձավ», 1:14
5. ճշմարտություն, 1:17
6. Մարգարեն, 1:21
7. Աստծո Գառը, 1:29
8. «աղավնու պես», 1:32
9. Ռաբբի /Վարդապետ/, 1:38
10. «Ճշմարիտ, ճշմարիտ», 1:51
11. «Աստծո հրեշտակները բարձրանում և իջնում էին», 1:51
12. «քարե վեց ջրի կարասներ», 2:6
13. «Հրեաների իշխանավոր», 3:1
14. «վերստին ծնված», 3:3
15. «Մարդու Որդին պետք է բարձրացվի», 3:14; 12:34
16. «հավիտենական կյանք», 3:16
17. «Ես եմ կյանքի հացը», 6:35,48
18. «Տաղավարների Տոնը», 7:2
19. «Դու դե ունես», 7:20; 8:48; 10:20
20. «ցրվածները /սփյուռքը/», 7:35
21. «Հիսուսը դեռ փառավորված չէր», 7:39
22. «Աբրահամից լինելուց առաջ ԵՍ ԵՄ», 8:58
23. «ժողովարանից վտարվի», 9:22
24. «ոչխարների դուռը», 10:7
25. «Նավակատիքի /Նվիրման/ Տոն», 10:22
26. հայիոյություն, 10:36
27. «մի ավանակ գտավ և նրա վրա նստեց», 12:14
28. «ժամը», 12:23
29. «Սատանան մտավ նրա մեջ», 13:27
30. «մի նոր պատվիրան», 13:34
31. «բնակարաններ», 14:2
32. «Իմ մեջ մնացեք», 15:4
33. «Իր աչքերը դեպի երկինք բարձրացնելով», 17:1
34. «միակ Ճշմարիտ Աստվածը», 17:3
35. «աշխարհի հիմնումից առաջ», 17:24
36. զանակոծեց, 19:1
37. Կապպաթա, 19:13
38. Գողգոթա, 19:17
39. «Պիղատոսին աղաչեցին, որ նրանց սրունքները կոտրեն», 19:31
40. «Հրեաների Պատրաստության օրը», 19:42

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Հովհաննես, 1:6
2. Աստծո Որդի, 1:34
3. Մեսիա, 1:41
4. Կեփաս, 1:42
5. Նիկողեմեոս, 3:1
6. Մարգարեն, 7:40
7. Ղազարոս, 11:2
8. Երկվորյակ /Բիդիմուս/, 11:16
9. Հուդա Իսկարիովտացի, 13:2
10. Մխիթարիչը /Օգնականը/, 14:26
11. Մադոս, 18:10

12. Աննա, 18:24
13. Մարիամը, Կղեովպասի կինը, 19:25

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Գալիլիա, 1:43
2. Նազարեթ, 1:45
3. Կանա, 2:1
4. Կափառնայում, 2:12
5. Այենոն՝ Սաղեմի մոտ, 3:23
6. Սամարիա, 4:4
7. Տիրերիա, 6:1
8. Բեթլեհեմ, 7:42
9. Բեթանիա, 11:1
10. Կեդրոն, 18:1
11. Տիրերիայի ծով, 21:1

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞վ է կարևորվում Հովհաննես 1:1:
2. Ինչո՞ւ էր Հովհաննես Մկրտչի մկրտությունը անսովոր:
3. Ի՞նչ է նշանակում վերստին ծնվել:
4. Ինչպե՞ս են «հավատալն» ու «հնազանդվելը» փոխկապակցված ըստ 3:35-ի:
5. Ի՞նչ է նշանակում 4:24 խոսքը:
6. Ինչո՞ւ է Հովհաննես 5:4 գրված փակագծերում:
7. Արդյո՞ք 9:2-ը վերաբերում է վերամարմնավորմանը: Եթե ոչ, բացատրե՛ք ինչու:
8. Բացատրե՛ք 9:41-ի իրոնիան:
9. Բացատրե՛ք 10:34-35-ը ձեր իսկ խոսքերով:
10. Գլուխ 13-ում ինչո՞ւ Հիսուսը լվացավ Իր աշակերտների ոտքերը: Ո՞րն է 13-17 գլուխների միջավայրը:
11. Ինչո՞վ է կարևորվում Հովհաննես 14:6:
12. Ինչո՞վ է կարևորվում Հովհաննես 14:23:
13. Բացատրե՛ք Հովհաննես 15:16-ը:
14. Հովհաննես 17-ը կոչվում է «Հիսուսի Քահանայապետական աղոթքը»: Նա աղոթում է երեք տարբեր մարդկանց խմբերի համար: Անվանե՛ք այդ խմբերը:
15. Բացատրե՛ք Հովհաննես 18:33-38 հատվածում Հիսուսի և Պիղատոսի միջև եղած երկխոսությունը:
16. Արդյո՞ք աշակերտները ստացան Սուրբ Հոգին 20:22-ում, թե Գործքում Պենտեկոստի ժամանակ:
17. Ինչո՞վ է կարևորվում Հովհաննես 20:31:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՏՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Գործք Առաքելոցը մի անփոխարինելի կապ է ստեղծում Հիսուսի կյանքի դեպքերի (Ավետարանների) և Նոր Կտակարանի Ռոմեոյում Նրա աշակերտների կողմից Հիսուսի գործերի և խոսքերի մեկնաբանության, քարոզների և դրանց կիրառության միջև:

Բ. Վաղ շրջանի եկեղեցին ձևավորել և գործադրում էր Նոր Կտակարանյան գրքերի երկու հավաքածու. (1) Ավետարանները (չորս Ավետարանները) և (2) Առաքյալը (Պողոսի Նամակները): Սակայն, երկրորդ դարի վաղ Քրիստոլոգիական հերետիկոսությունների հետ մեկտեղ ակնհայտ դարձավ Գործք Առաքելոց գրքի արժեքը: Գործք Առաքելոցը բացահայտում է առաքելական քարոզչության (*kerygma*) բովանդակությունն ու նպատակը և ավետարանի հրաշալի արդյունքները:

Գ. Գործք Առաքելոցի պատմական ճշգրտությունը շեշտադրվել և հաստատվել է ժամանակակից հնագիտական հետազոտությունների միջոցով, հատկապես կապված հռոմեական կառավարության պաշտոնյաների հետ (օրինակ՝ *stratēgoi*, 16:20,22,35,36 /նաև կիրառվում է տաճարի պահակախմբի ղեկավարների համար, Ղուկ.22:4,52; Գործք 4:1; 5:24-26/; *politarchas*, 17:6,8; և *prōtō*, Գործք 28:7, տե՛ս Ա. Ն. Շերվին Ուայթ, *Նոր Կտակարանում Հռոմեական Հասարակությունը և Հռոմեական Օրենքը* (A. N. Sherwin-White, *Roman Society and Roman Law in the New Testament*): Ղուկասն արձանագրում է վաղ եկեղեցու ներսում տիրող լարվածությունները, նույնիսկ Պողոսի և Բառնաբասի միջև կռիվը (տես՝ Գործք 15:39): Այն ազնիվ, հավասարակշիռ, պատմականորեն և աստվածաբանորեն ուսումնասիրված գիրք է:

- Դ. Հնագույն հունարեն տեքստերում գրքի վերնագիրը գտնվել է փոքր ինչ տարբերություններով.
1. Ձեռագիր Ռ (Sinaiticus), Տերտուղիանոսը, Դիդիմեոսը և Եվսեբիոսը նշում են «Գործք» (ASV, NIV),
 2. Ձեռագիր B (Vaticanus), D (Bezae) Իրենեոսը, Տերտուղիանոսը, Կյուրենոսը և Աթանասիոսը ստորագրությամբ նշում են «Առաքյալների Գործքը» /Գործք Առաքելոց/ (KJV, RSV, NEB)
 3. Ձեռագիր A² (Ալեքսանդրիոսի առաջին սրբագրումը), E, G և Ոսկերեանը նշում են «Սուրբ Առաքյալների Գործքը»

Հավանաբար հունարեն *praxeis*, *praxis* (գործեր, կերպեր, վարք, աշխատանքներ, կիրառություններ) բառերը հանդիսանում են հնագույն Միջերկրական գրականության ժանրեր, որոնք արտահայտում են հայտնի կամ ազդեցիկ մարդկանց (օր.՝ Հովհաննեսի, Պետրոսի, Ստեփանոսի, Փիլիպոսի, Պողոսի) կյանքն ու գործերը: Հնարավոր է բնագրում գիրքը վերնագիր չի ունեցել (ինչպես Ղուկասի Ավետարանը):

- Ե. Գոյություն ունեն Գործք Առաքելոցի երկու տարբեր տեքստային ավանդույթներ: Ավելի հակիրճը դա Ալեքսանդրիականն է (MSS P⁴⁵, P⁷⁴, Ռ A, B, C): Ձեռագրերի Արևմտյան ընտանիքը (P²⁹, P³⁸, P⁴⁸ և D) կարծես թե իր մեջ ընդգրկում է շատ ավելի մանրամասներ: Հայտնի չէ, թե արդյոք դրանք հեղինակի կողմից, թե հետագայում դպիրների կողմից են ներառվել գրքի մեջ՝ համաձայն վաղ եկեղեցու ավանդության: Տեքստային գիտնականներից շատերը հավատում են, որ Արևմտյան ձեռագրերը պարունակում են հետագայի հավելումներ, քանի որ դրանք (1) հարթեցնում կամ փորձում են լուծել անսովոր կամ խրթին տեքստերը, (2) ավելացնում են հավելյալ մանրամասներ, (3) ավելացնում են հատուկ արտահայտություններ՝ շեշտադրելու Հիսուսին որպես Քրիստոս, և (4) երբեք չեն մեջբերվում առաջին երեք դարերի վաղ եկեղեցու որևէ Քրիստոնյա հեղինակի կողմից (տես՝ F. F. Bruce, *Acts: Greek Text*, pp.69-80: /Ֆ. Ֆ. Բրյուս, *Գործք. Հունարեն Տեքստը*): Ավելի մանրակրկիտ քննարկման համար դիմեք Աստվածաշնչյան Ընկերությունների Միության հրատարակչության *A Textual Commentary on the Greek New Testament* by Bruce M. Metzger /Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնաբանություն, Բրյուս Մ. Մեցգեր/, գրքին՝ էջ 259-272:

Հետագայում բազմաթիվ հավելումների պատճառով, այս մեկնաբանությունը գործ չի ունենա բոլոր տեքստային տարբերակների հետ: Եթե տեքստային տարբերակը շատ կարևոր է մեկնաբանության համար, ապա միայն այդ դեպքում այս մեկնաբանության մեջ կառնչվենք դրա հետ:

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գիրքն ինքնին անանուն է, սակայն ակնհայտ ենթադրություններ կան, որ հեղինակը Ղուկասն է:

1. Առանձնահատուկ և անսպասելի «մենք» բաժիններից (16:10-17 [երկրորդ միսիոներական ճամփորդությունը դեպի Փիլիպպե]; 20:5-15; 21:1-18 [երրորդ միսիոներական ճամփորդության ավարտը] և 27:1-28:16 [Պողոսը որպես բանտարկյալ ուղարկվում է Հռոմ]) խիստ ենթադրվում է, որ հեղինակը Ղուկասն է:
2. Երրորդ Ավետարանի և Գործք Առաքելոցի միջև կապը ակնհայտ է, երբ համեմատում ենք Ղուկաս 1:1-4-ը Գործք 1:1-2-ի հետ:
3. Ղուկասը, որպես հեթանոս բժիշկ նշվում է իբրև Պողոսի գործընկեր՝ Կող.4:10-14, Փիլիմոն 24 և 2 Տիմ.4:11: Ղուկասը ՆԿ-ում միակ հեթանոս գրողն է:
4. Վաղ եկեղեցու միաձայն վկայությունն այն էր, որ հեղինակը Ղուկասն է:
 - ա. Մուրատորիան Պատառիկը (մ.թ.180-200 Հռոմից, ասում է «հավաքված բժիշկ Ղուկասի կողմից»)
 - բ. Իրենեոսի մատենագրությունները (մ.թ.130-200)
 - գ. Ալեքսանդրիացի Կլեմենտի մատենագրությունները (մ.թ.156-215)
 - դ. Տերտուղիանոսի մատենագրությունները (մ.թ.160-200)
 - ե. Որոզինեսի մատենագրությունները (մ.թ.185-254)
5. Գրելատճի և բառապաշարի ներքին վկայությունը (հատկապես բժշկական տերմինները) հաստատում են, որ հեղինակը Ղուկասն է (Սըր Ուիլյամ Ռամսեյ և Ադոլֆ Վոն Հարներ):

Բ. Մենք ունենք Ղուկասի մասին տեղեկությունների երեք աղբյուր:

1. ՆԿ-ում երեք հատվածներ (Կող.4:10-14; Փիլ.24; 2 Տիմ.4:11) և հենց Գործք Առաքելոց գիրքը:
2. Ղուկասին ուղղված երկրորդ դարի հակա-Մարկիոն նախաբանը (մ.թ.160-180)
3. Չորրորդ դարի վաղ եկեղեցու պատմաբան Եվսեբիոսը, իր *Էկլեսիաստիկ Պատմության* մեջ, 3:4 ասում է. «Ղուկասը, լինելով ծնունդով բնիկ Անտիոքցի, իսկ մասնագիտությամբ՝ բժիշկ, գործակցելով հիմնականում Պողոսի հետ և մնացած առաքյալների հետ լինելով ավելի քիչ մտերիմ, թողել է մեզ հոգիների բժշկության օրինակներ, որոնք նրան են հասել առաքյալներից և տեղ գտել Ղուկասի երկու ներշնչված գրքերում՝ Ավետարանում և Գործք Առաքելոցում»:
4. Սա Ղուկասի ամփոփ կենսագրությունն է՝
 - ա. Հեթանոս (նշված Կող.4:12-14 Եպափրասի և Դեմասի հետ և ոչ թե հրեա օգնականների)
 - բ. Կամ Սիրիայի Անտիոքից (Ղուկասի անտի-Մարկիոն նախաբանում) կամ էլ Մակեդոնիայի Փիլիպպեից (Սըր Ուիլյամ Ռամսեյը /Sir William Ramsay/ Գործք 16:9-ի վերաբերյալ)
 - գ. Բժիշկ (տես՝ Կող.4:14) կամ առնվազն բավականին կիրթ մարդ
 - դ. Դարձի է եկել իր չափահաս տարիքում, երբ Անտիոքում բարձրացավ եկեղեցին (անտի-Մարկիոն նախաբան)
 - ե. Պողոսի ճամփորդական գործընկերը (Գործք Առաքելոցի «մենք» բաժնում)
 - զ. Չամուսնացած
 - է. Գրել է երրորդ Ավետարանը և Գործք Առաքելոցը (միանման ներածություններով, գրելատճով և բառապաշարով)
 - ը. Մահացել է 84 տարեկան հասակում, Բոյոտիայում:

Գ. Դիտարկումներ այն հարցի շուրջ, թե արդյո՞ք Ղուկասն է հեղինակը

1. Աթենքում Մարս Բլրի վրա Պողոսի քարոզի մեջ օգտագործվում է հունական փիլիսոփայության կատեգորիաներ և տերմիններ, որպեսզի ձևավորվի ընդհանուր հարթակ (տես՝ Գործք 17), սակայն Պողոսը Հռոմ.1-2 գլուխներում կարծես թե բոլոր «ընդհանուր հարթակները» (բնություն, ներքին բարոյական վկայություն) համարում է դատարկ բան:
2. Գործք Առաքելոցում Պողոսի քարոզներն ու մեկնաբանությունները նկարագրում են նրան որպես Մովսեսի հանդեպ լուրջ վերաբերվողի, սակայն Պողոսի նամակները արժեզրկում են Օրենքը, որպես խնդրահարույց և անցողիկ:
3. Գործք Առաքելոցում Պողոսի քարոզները չունեն այն նույն էսկատոլոգիական շեշտադրությունը, որ ունեն իր վաղուց գրած գրքերը (այսինքն՝ 1 և 2 Թեսաղոնիկեցիները):

4. Տերմինների, գրեյառնի և շեշտադրումների այս հակադրությունը հետաքրքիր է, բայց ոչ ամփոփիչ: Երբ նույն մոտեցումը կիրառվում է Ավետարանների հետ, Սինոպտիկների Հիսուսը Հովհաննես Ավետարանի Հիսուսի հետ համեմատած խոսում է շատ տարբեր: Սակայն, շատ քիչ աստվածաբաններ կհերքեն այն փաստը, որ երկուսն էլ ներկայացնում են Հիսուսի կյանքը:

Դ. Երբ քննարկում ենք, թե ով է հանդիսանում Գործք Առաքելոցի հեղինակը, շատ կարևոր է քննարկել այն աղբյուրները, որից օգտվում էր Ղուկասը, քանի որ շատ գիտնականներ (այսինքն՝ Ս. Ս. Թորի /C.C.Torrey/) հավատում են, որ Ղուկասը օգտագործել է արամեերեն աղբյուրի փաստաթղթեր (կամ բանավոր ավանդույթներ) իր առաջին տասնհինգ գլուխներից շատերի համար: Եթե սա ճիշտ է, ապա Ղուկասը հանդիսանում է ոչ թե այս նյութի հեղինակը, այլ խմբագիրը: Նույնիսկ Պողոսի վերջին քարոզների մեջ Ղուկասը ներկայացնում է միայն նրա ամփոփ խոսքը և ոչ թե տալիս բառացի արձանագրություն: Աղբյուրները, որոնցից օգտվել է Ղուկասը այնքան կարևոր են, որքան նրա այս գրքի հեղինակ լինելը:

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Գոյություն ունեն շատ քննարկումներ և տարածայնություններ Գործք Առաքելոցի գրառման տարեթվի շուրջ, սակայն գրքում արձանագրված դեպքերը տեղի են ունեցել մոտ մ.թ.30-63 (Պողոսը Հռոմի բանտից ազատ արձակվեց 60-ականների կեսերին և կրկին ձերբակալվեց ու մահապատժի ենթարկվեց Ներոնի իշխանության օրոք, հավանաբար մ.թ.65-ի հալածանքների ժամանակ):

Բ. Եթե ենթադրություններ կատարենք ըստ գրքի ապոկոփտիկ բնույթի՝ Հռոմեական կառավարության հետ կապված, ապա տարեթիվը (1) մ.թ.64-ից առաջ է (Հռոմում Զրիստոնյաների հանդեպ Ներոնի սկսած հալածանքների սկիզբը) և/կամ (2) կապված է մ.թ.66-73-ի հրեական հեղափոխության հետ:

Գ. Եթե փորձենք կապել Գործք Առաքելոցի և Ղուկաս Ավետարանի գրվելու տարեթվերը ըստ հերթականության, ապա Ավետարանի գրառման տարեթիվը ազդում է Գործք Առաքելոցի գրառման տարեթվի վրա: Քանի որ Տիտոսի օրոք մ.թ.70-ի Երուսաղեմի անկումը մարգարեացված էր (Ղուկաս 21), սակայն չի նկարագրվում, թվում է, որ տարեթիվը պետք է լինի մ.թ.70: Եթե այդպես է, ապա Գործք Առաքելոցի տարեթիվը՝ որպես Ավետարանի շարունակություն, պետք է լինի այն գրվելուց հետո:

Դ. Եթե մեզ անհանգստացնում է Պողոսի մասին պատմության կտրուկ ավարտը (Պողոսը դեռևս Հռոմի բանտում գտնվելիս, Ֆ. Ֆ. Բրյուս /F. F. Bruce/), ապա գրքի գրվելու տարեթիվը կապված է Պողոսի առաջին հռոմեական բանտարկության հետ, հակված՝ մ.թ.58-63:

Ե. Գործքում արձանագրված մի քանի պատմական դեպքեր իրենց պատմական տարեթվերով:

1. Կլավդիոս կայսեր օրոք համաշխարհային սովը (Գործք 11:28, մ.թ.44-48)
2. Հերովդես Ագրիպաս I-ի մահը (Գործք 12:20-23, մ.թ.44 [զարուն])
3. Սերգիոս Պողոսի փոխհյուպատոսությունը (Գործք 13:7, պաշտոնադրված մ.թ.53)
4. Կլավդիոսի օրոք հրեաների արտաքսումը Հռոմից (Գործք 18:2, մ.թ.49 [?])
5. Գաղիոնի փոխհյուպատոսությունը /բղեշիսի փոխանորդ/ Գործք 18:12 (մ.թ.51 կամ 52)
6. Ֆելիքսի փոխհյուպատոսությունը (Գործք 23:26; 24:27, մ.թ.52-56 [?])
7. Ֆեստոսը փոխարինում է Ֆելիքսին (Գործք 24:27, մ.թ.57-60 [?])
8. Հուդայի հռոմեացի պաշտոնյաները

ա. Կուսակալները

- (1) Պոնտացի Պիղատոսը, մ.թ.26-36
- (2) Մարսելիոսը, մ.թ.36-37
- (3) Մարուլոսը, մ.թ.37-41

բ. Մ.թ.41 հռոմեական կառավարման կուսակալական մոդելը փոխարինվեց կայսերական մոդելով: Հռոմի կայսր Կլավդիոսը մ.թ.41 նշանակեց Հերովդես Ագրիպաս I:

գ. Հերովդես Ագրիպաս I-ի մահից հետո՝ մ.թ. 44թ, կուսակալության մեթոդը վերահաստատվեց մինչև մ.թ. 66թ.

- (1) Անտոնիոս Ֆելիքս
- (2) Պորկիոս Ֆեստոս

IV. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Գործք Առաքելոց գրքի նպատակներից մեկը հրեական արմատներ ունեցող Հիսուսի հետևորդների՝ փակված վերնատնից մինչև կայսրի պալատ և ամբողջ աշխարհով արագ աճն արձանագրելն էր:

1. Այս աշխարհագրական սիեման Գործք 1:8-ի հետևանքն է, որը հանդիսանում է Գործքի Մեծ Հանձնարարականը (Մատթ.28:19-20):
2. Աշխարհագրական առումով այսպիսի տարածումը արտահայտվում է մի քանի կերպ.
 - ա. Կիրառելով մեծ քաղաքներ և պետական սահմաններ: Գործքում նշված է 32 երկիր, 54 քաղաք և 9 Միջերկրական կղզի: Երեք ամենամեծ քաղաքներն են Երուսաղեմը, Անտիոքը և Հռոմը (տես՝ Գործք 9:15):
 - բ. Կիրառելով կարևոր մարդկանց: Գործք Առաքելոցը կարելի է բաժանել երկու մասի՝ Պետրոսի և Պողոսի ծառայությունները: Գործքում նշված են 95-ից ավելի մարդիկ, սակայն մեծամասամբ հանդիպում ենք Պետրոսին, Ստեփանոսին, Փիլիպոսին, Բառնաբասին, Հակոբոսին և Պողոսին:
 - գ. Գոյություն ունեն Գործքում հանախակի հանդիպող երկու կամ երեք գրական ժանրեր, որոնք թվում է արտացոլում են գրքի կառուցվածքի վրա հեղինակի գիտակցական աշխատանքը:

| (1) ամփոփիչ խոսքեր | (2) անման խոսքեր | (3) թվերի կիրառում |
|------------------------|------------------|--------------------|
| 1:1-6:7 (Երուսաղեմ) | 2:47 | 2:41 |
| 6:8-9:31 (Պաղեստին) | 5:14 | 4:4 |
| 9:32-12:24 (Անտիոք) | 6:7 | 5:14 |
| 12:25-15:5 (Փոքր Ասիա) | 9:31 | 6:7 |
| 16:6-19:20 (Հունաստան) | 12:24 | 9:31 |
| 19:21 - 28:31 (Հռոմ) | 16:5 | 11:21,24 |
| | 19:20 | 12:24 |
| | | 14:1 |
| | | 19:20 |

Բ. Գործք Առաքելոցը ակնհայտորեն կապված է դավանանության համար Հիսուսի մահվան շուրջ մարդկանց թուրիմացության հետ: Հայտնի է, որ Ղուկասը գրում է հեթանոսներին (Թեոփիլոսին, հավանաբար մի հռոմեացի պաշտոնյայի): Նա օգտագործում է (1) Պետրոսի, Ստեփանոսի և Պողոսի քարոզները, ցույց տալու հրեաների ծրագրերը և (2) Հռոմի կառավարական պաշտոնյաների դրական վերաբերմունքը Քրիստոնեության հանդեպ: Հռոմեացիները Հիսուսի հետևորդներից վախենալու ոչինչ չունեին:

1. Քրիստոնյա առաջնորդների քարոզները
 - ա. Պետրոս, 2:14-40; 3:12-26; 4:8-12; 10:34-43
 - բ. Ստեփանոս, 7:1-53
 - գ. Պողոս, 13:10-42; 17:22-31; 20:17-25; 21:40-22:21; 24:10-21; 26:1-29
2. Կառավարության պաշտոնյաների հետ կապերը
 - ա. Պոնտացի Պիղատոսը, Ղուկաս 23:13-25
 - բ. Սերգիոս Պողոսը, Գործք 13:7,12
 - գ. Փիլիպպեի գորապետները, Գործք 16:35-40
 - դ. Գաղիոնը, Գործք 18:12-17
 - ե. Եփեսոսի ասիացի մեծամեծները, Գործք 19:23-41 (տես՝ հ.31)
 - զ. Կլոդիոս Լյուսիաս, Գործք 23:29
 - է. Ֆելիքսը, Գործք 24
 - ը. Պորկիոս Փեստոսը, Գործք 24
 - թ. Ագրիպպաս II, Գործք 26 (տես՝ հ.32)
 - ժ. Պոպիլիոսը, Գործք 28:7-10
3. Երբ համեմատում ենք Պետրոսի քարոզները Պողոսի քարոզների հետ, ակնհայտ է, որ Պողոսը նորարար չէր, այլ առաքելական ավետարանի ճշմարտությունների հավատարիմ քարոզիչ: Եթե ինչ-որ մեկը մյուսին կրկնօրինակում է, ապա դա Պետրոսն է (տես՝ 1 Պետրոս), որն օգտագործում է Պողոսի արտահայտություններն ու բառապաշարը: *Kerygma* –ն միասնական է:

Գ. Ղուկասը ոչ միայն Քրիստոնեությունն էր պաշտպանում հռոմեական կառավարության առջև, այլ նաև Պողոսին՝ հեթանոս եկեղեցու առջև: Պողոսը պարբերաբար հարձակումների էր ենթարկվում հրեական խմբերի կողմից (Հուդայականությանը հետևող գաղատացիներից, 2 Կորնթացիների 10-13-ի «սուպեր առաքյալներից»): Ղուկասը ցույց է տալիս Պողոսի նորմալ լինելը՝ իր ճամփորդությունների ժամանակ և քարոզների մեջ հստակ հայտնելով նրա սիրտն ու աստվածաբանությունը:

Դ. Չնայած որ Գործք Առաքելոցը նախատեսված չէր վարդապետական գիրք լինելու, այն մեզ համար արձանագրում է առաջին Առաքյալների քարոզներից տարրեր, որոնք Ս. Հ. Դոդդը անվանել է «the *Kerygma*» (այսինքն՝ Հիսուսի մասին հիմնական ճշմարտությունները): Այն օգնում է մեզ տեսնելու այն, ինչ նրանք էին զգում, որ կարևոր էր ավետարանի մեջ, հատկապես երբ խոսվում էր Հիսուսի մահվան և հարության մասին:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. KERYGMA
SPECIAL TOPIC: THE KERYGMA**

Քրիստոնեության շուրջ գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ: Մենք ապրում ենք կրոնական բազմազանության դարաշրջանում, ճիշտ ինչպես առաջին դարում: Անձամբ ես լիովին ընդունում եմ բոլոր այն խմբերին, որոնք պնդում են, որ ճանաչում են և վստահում Հիսուս Քրիստոսին: Մենք բոլորս էլ այս կամ այն հարցում տարաձայնություններ ունենում ենք, բայց հիմնականում Քրիստոնեությունը հենց Հիսուսին է վերաբերում: Սակայն կան խմբեր, որոնք պնդում են, որ Քրիստոնեական են, որոնք թվացյալ «նմանություններ ունեն» կամ «նորեկներ» են: Ինչպե՞ս կարող եմ իմանալ տարբերությունները:

Այսպես ուրեմն, կա երկու միջոց՝

Ա. Այն մասին, թե իչին են հավատում մերօրյա աղանդավորական խմբերը (հենց իրենց տեքստերից), կարող եք իմանալ կարդալով Ուոլթեր Մարթինի *Աղանդների թագավորությունը* գիրքը /Walter Martin *The Kingdom of the Cults*/:

Բ. Վաղ եկեղեցու, հատկապես Գործք Առաքելոցում Պետրոս և Պողոս Առաքյալների քարոզները, ներկայացնում են մեզ ընդհանուր պատկերացում այն մասին, թե ինչպես էին առաջին դարի ներշնչված հեղինակները ներկայացնում Քրիստոնեությունը տարբեր խմբերին: Այս առաջին «հռչակումները» կամ «քարոզները» (որոնց համար Գործքը ամփոփիչ գիրք է) հունարենում արտահայտվում է *kerygma* բառով: Այստեղ ներկայացնում եմ ձեր ուշադրությանը Գործքում տրված Հիսուսի մասին ավետարանի հիմնական ճշմարտությունները՝

1. իրականացնում է ՀԿ-յան բազմաթիվ մարգարեություններ՝ Գործք 2:17-21,30-31,34; 3:18-19,24; 10:43; 13:17-23,27; 33:33-37,40-41; 26:6-7,22-23
2. ՅԱՀՎԵՆ ուղարկեց խոստացյալին՝ Գործք 2:23; 3:26
3. հրաշքներ կատարեց, որպեսզի հաստատի Իր պատգամները և հայտնի Աստծո գթասրտությունը՝ Գործք 2:22; 3:16; 10:38
4. մատնվեց, ուրացվեց՝ Գործք 3:13-14; 4:11
5. խաչվեց՝ Գործք 2:23; 3:14-15; 4:10; 10:39; 13:28; 26:23
6. կյանքի կոչվեց հարությանը՝ Գործք 2:24,31-32; 3:15,26; 4:10; 10:40; 13:30; 17:31; 26:23
7. բարձրացվեց Աստծո աջ կողմը նստելու՝ Գործք 2:33-36; 3:13,21
8. նորից վերադառնալու է՝ Գործք 3:20-21
9. նշանակված է Դատավոր՝ Գործք 10:42; 17:31
10. ուղարկեց Սուրբ Հոգուն՝ Գործք 2:17-18,33,38-39; 10:44-47
11. Փրկիչ է բոլոր Իրեն հավատացողների համար՝ Գործք 13:38-39
12. ոչ մի ուրիշ Փրկիչ չկա՝ Գործք 4:12; 10:34-36

Ճշմարտության Առաքելական այս հիմնասյուներին արձագանքելու մի քանի կերպեր՝

1. Ապաշխարի՝ Գործք 2:38; 3:19; 17:30; 26:20
2. Հավատա՝ Գործք 2:21; 10:43; 13:38-39
3. Մկրտվիր՝ Գործք 2:38; 10:47-48
4. Ընդունիր Հոգուն՝ Գործք 2:38; 10:47
5. Բոլորը կարող են գալ՝ Գործք 2:39; 3:25; 26:23

Վաղ եկեղեցու համար այս սխեման հանդիսացել է որպես հիմնական հավատամքի հռչակում, թեև Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ հնարավոր է որևէ մաս բաց թողնեն կամ իրենց քարոզների մեջ շեշտադրեն այլ մանրամասներ: Մարկոսի ամբողջ Ավետարանը մանրամասնորեն հետևում է *kerygma*-ի Պետրոսյան տեսակետին: Մարկոսը ըստ ավանդության Հռոմում քարոզված Պետրոսի պատգամներն էր վերցնում որպես իր գրի առած Ավետարանի համար կառուցվածք: Թե՛ Մատթեոսը և թե՛ Ղուկասը հետևում են Մարկոս ավետարանի հիմնական կառուցվածքին:

- Ե. Ֆրենկ Սթեգը իր *Գործք Առաքելոց Գիրքը՝ առաջին պայքարն անարգել Ավետարանի համար* (Frank Stagg, *The Book of Acts, the Early Struggle for an Unhindered Gospel*) իր մեկնաբանության մեջ, հայտարարում է, որ նպատակը առաջին հերթին Հիսուսի մասին պատգամի (ավետարանի) զարգացումն էր՝ խիստ ազգայնական հուղայականությունից մինչև բոլոր մարդկանց հասանելի տիեզերական պատգամի: Ստեգի մեկնաբանությունը կենտրոնանում է Ղուկասի Գործք Առաքելոց գիրքը գրելու նպատակ(ներ)ի վրա: 1-18 էջերում տարբեր տեսությունների շուրջ կարելի է գտնել լավ ամփոփիչ և վերլուծական խոսքեր: Ստեգը նախընտրում է կենտրոնանալ «առանց արգելքի» /անարգել/ տերմինի վրա՝ 28:31-ում, որը գիրքն ավարտելու անսովոր կերպ է, քանի որ Քրիստոնեությունը տարածելու մեջ Ղուկասի շեշտադրությունը հասկանալու բանալին բոլոր արգելքները հաղթահարելն է:
- Զ. Չնայած որ Սուրբ Հոգին նշվում է ավելի քան հիսուն անգամ, այն չի կոչվել «Սուրբ Հոգու Գործք»: Տասնմեկ գլուխներում Սուրբ Հոգին ընդհանրապես չի նշվում: Այն նշվում է հիմնականում Գործք Առաքելոց գրքի առաջին կեսում, որտեղ Ղուկասը մեջբերում է այլ աղբյուրներից (հնարավոր է Արամերեն բնագրով գրված): Գործքը Սուրբ Հոգու մասին չէ, ինչպես Ավետարանները, որոնք Հիսուսի մասին են: Սա նպատակ չունի թերագնահատելու Հոգու դերը, այլ մեզ զգոն պահելու, որպեսզի Սուրբ Հոգու մասին աստվածաբանություն չստեղծենք հիմնականում կամ բացառապես Գործք Առաքելոց գրքից:
- Է. Գործք Առաքելոցը նախատեսված չէ սովորեցնելու վարդապետություն (տես՝ Ֆիի և Ստյուարտ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 94-112 /Fee and Stuart, *How to Read the Bible For All Its Worth*, pp.94-112/): Այսպիսի օրինակ կարող է հանդիսանալ, եթե Գործք Առաքելոց գրքից փորձենք դարձի գալու մասին աստվածաբանություն կառուցել, ինչում անշուշտ կձախողենք: Դարձի գալու հերթականությունը և առանձնահատկությունները Գործքում տարբեր են, ուստի դրանցից ո՞րն է չափանիշ հանդիսանում: Վարդապետական աջակցություն մենք պետք է ստանանք Հովվական Թղթերից:
- Սակայն, հետաքրքիր է, որ որոշ գիտնականներ (Հենզ Կոնզելման, /Hans Conzelmann/) դիտարկում են, որ Ղուկասը դիտավորյալ վերակողմնորոշում է առաջին դարի մոտալուստ էսկատոլոգիական գաղափարներին՝ ուշագած *Parousia*-ին, համբերատար ծառայելու մոտեցումով: Արքայությունը իր իշխանությամբ հիմա այստեղ է կյանքեր փոխելու համար: Այժմ նպատակը եկեղեցու գործունեությունն է և ոչ թե հանդերձյալի հույսը:
- Ը. Գործքի հավանական նպատակներից մեկը նման է Հռոմ. 9-11, ինչո՞ւ հրեաները մերժեցին Հրեա Մեսիային և եկեղեցին ձևավորվեց հիմնականում հեթանոսներից: Ավետարանի աշխարհասփյուռ էությունը Գործք Առաքելոցում մի քանի անգամ հստակ ազդարարվում է: Հիսուսը նրանց ուղարկում է ամբողջ աշխարհով մեկ (տես՝ 1:8): Հրեաները մերժում են Նրան, սակայն հեթանոսները արձագանքում են: Նրա պատգամը հասնում է Հռոմ:
- Հնարավոր է, որ Ղուկասի նպատակն էր ցույց տալ, որ հրեա Քրիստոնեությունը (Պետրոսը) և հեթանոս Քրիստոնեությունը (Պողոսը) կարող են միասին ապրել և աճել: Նրանք մրցակցության մեջ չեն, այլ միաբան են համաշխարհային ավետարանչության համար:
- Թ. Քանի դեռ նպատակը կարևոր է, ես համամիտ եմ Ֆ. Ֆ. Բրյուսի հետ (F. F. Bruce, *New International Commentary, Նոր Միջազգային Մեկնաբանություն/* էջ՝ 18), որ Ղուկասի Ավետարանը և Գործք Առաքելոցը բնագրում մեկ հատոր հանդիսանալով, Ղուկասի նախաբանը (1:1-4) նաև Գործքի համար կարող է հանդիսանալ որպես նախաբան: Թեև Ղուկասը բոլոր դեպքերի ակնատեսը չէր, դրանք մանրակրկիտ ուսումնասիրել էր և ճշգրտորեն արձանագրել, օգտագործելով իր սեփական պատմական, գրական, աստվածաբանական հիմքերը:
- Ապա Ղուկասն իր երկու գրքերում՝ Ավետարանում և պատմություններում, ուզում է ցույց տալ Հիսուսի և եկեղեցու պատմական իրողությունն ու աստվածաբանական արժանահավատությունը (տես՝ Ղուկ.1:4): Հնարավոր է, որ Գործքի նպատակը իրականացման թեման է («առանց արգելքի» տես 28:31, գրքի վերջին խոսքը): Այս թեման արժարժվում է մի քանի տարբեր խոսքերով և արտահայտություններով (տես՝ Վոլթեր Լ. Լիֆելդ, *Գործք Առաքելոց Գրքի Մեկնությունը* /Walter L. Liefeld, *Interpreting The Book of Acts*, pp.23-24/): Ավետարանը ուշագած միտք չէ, երկրորդական ծրագիր կամ մի նոր բան: Այն Աստծո կանխատեսված ծրագիրն է (տես՝ Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29):

V. ԺԱՆՐԸ

Ա. Գործք Առաքելոցը ՆԿ համար նույնն է ինչ ՀԿ-ի համար Հետուից մինչև 4 Թագավորաց գրքերը՝ պատմական դեպքերը: Սուրբգրային պատմական դեպքերը փաստացի են, սակայն չեն կենտրոնանում ժամանակագրության վրա կամ տվյալ դեպքի սպառիչ արձանագրության վրա: Դրանք իրենցից ներկայացնում են որոշակի պատմություններ, որոնք բացատրում են, թե ով է Աստված, ով ենք մենք, ինչպես կարող ենք Աստծո հետ հաշտվել, Աստված ինչպես է ուզում, որ մենք ապրենք:

Բ. Սուրբգրային պատմության մեկնաբանության խնդիրն այն է, որ հեղինակները տեքստի մեջ երբեք չեն նշում (1) թե որն է նրանց նպատակը, (2) որն է հիմնական ճշմարտությունը, կամ (3) ինչ պետք է ընդօրինակենք արձանագրված դեպքերից: Ընթերցողը պետք է խորհի հետևյալ հարցերի շուրջ.

1. Ինչո՞ւ է այս դեպքը արձանագրվել:
2. Ի՞նչ կապ ունի այն աստվածաշնչյան նախորդ նյութի հետ:
3. Ո՞րն է աստվածաբանական գլխավոր ճշմարտությունը:
4. Արդյո՞ք գրական կոնտեքստի կարևորություն կա: (Ի՞նչ դեպք է նախորդում կամ հաջորդում: Այս թեման արժարժվե՞լ է արդյոք մեկ այլ տեղ, թե ոչ):
5. Ինչքա՞ն է մեծ դրա գրական կոնտեքստը: (Երբեմն պատմության մեծ չափսերը ձևավորում են աստվածաբանական որևէ թեմա կամ նպատակ):

Գ. Պատմական դեպքը չպետք է լինի վարդապետության համար միակ աղբյուրը: Հաճախ արձանագրվում են բաներ, որոնք էական չեն հեղինակի նպատակի համար: Պատմական դեպքը կարող է լուսարանել Աստվածաշնչում մեկ այլ տեղ գրված ճշմարտություններ: Պարզապես, քանի որ տեղի է ունեցել ինչ-որ դեպք, պարտադիր չէ, որ այն լինի Աստծո կամքը բոլոր դարերի բոլոր հավատացյալների համար (օր.՝ ինքնասպանությունը, բազմակնությունը, սուրբ պատերազմը, ձեռքով օձեր բռնելը, և այլն):

Դ. Պատմական դեպքերը մեկնաբանելու լավագույն քննարկում է տրված Գորդն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչն Իր Ամբողջ Իմաստով* գրքում (էջ 78-93, 94-112):

VI. ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Դասականների կողմից ստեղծվել են Գործք Առաքելոցը առաջին դարի իր պատմական միջավայրի մեջ տեղավորելու նոր գրքեր: Այս միջկարգապահական մոտեցումը իսկապես օգնել է հասկանալու ՆԿ-ը: Այդ շարքը խմբագրել է Բրյուս Մ. Մինթերը (Bruce M. Minter):

- Ա. *Գործք Առաքելոց գիրքը իր անտիկ գրական միջավայրում /The Book of Acts in Its Ancient Literary Setting/*
- Բ. *Գործք Առաքելոց գիրքը իր հունա-հռոմեական միջավայրում /The Book of Acts in Its Graeco-Roman Setting/*
- Գ. *Գործք Առաքելոց գիրքը և Պողոսը հռոմեական բանտարկության մեջ /The Book of Acts and Paul in Roman Custody/*
- Դ. *Գործք Առաքելոց գիրքը իր Պաղեստինյան միջավայրում /The Book of the Acts in Its Palestinian Setting/*
- Ե. *Գործք Առաքելոց գիրքը իր սփյուռքի միջավայրում /The Book of Acts in Its Diaspora Setting/*
- Զ. *Գործք Առաքելոց գիրքը իր աստվածաբանական միջավայրում /The Book of Acts in Its Theological Setting/*

Նաև շատ օգտակար են՝

1. Ա. Ն. Շերվին-Ուայթ, *Հռոմեական հասարակությունն ու օրենքը Նոր Կտակարանում* (A. N. Sherwin-White, *Roman Society and Roman Law in the New Testament*)
2. Փոլ Բարնեթ, *Հիսուսը և վաղ Թրիստոնեության վերելքը* (Paul Barnett, *Jesus and the Rise of Early Christianity*)
3. Ջեյմս Ս. Ջեֆերզ, *Հունա-հռոմեական աշխարհը* (James S. Jeffers, *The Greco-Roman World*)

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «շատ անառարկելի ապացույցներ», 1:3
2. «քառասուն օր», 1:3

3. «Աստծո թագավորություն», 1:3
4. «մի ամպ Նրան ծածկեց», 1:9
5. «մի Շաբաթ օրվա ճանապարհի չափ», 1:12
6. «Արյան Ագարակ», 1:19
7. «վինակը», 1:26
8. «Պենտեկոստե», 2:1
9. «զցվեցին Սուրբ Հոգով», 2:4
10. «այլ լեզուներով խոսել», 2:4
11. «նորադարձներ», 2:10; 13:43
12. «Աստծո սահմանած խորհրդով և կանխագիտությամբ», 2:23
13. «զերեզման/ Դժողը», 2:31
14. «Աստծո աջ կողմը», 2:33
15. «ապաշխարել», 2:38; 3:19
16. «հաց կտրելը», 2:42,46
17. «աղոթքի ժամը», 3:1
18. «ողորմություն խնդրել», 3:2
19. «Սողոմոնի սրահ», 3:11; 5:12
20. «Սուրբը և Արդարը», 3:14
21. «սփոփանքի ժամանակները», 3:19
22. «տզետ և անուս», 4:13
23. «նա ննջեց», 7:60
24. «Ճանապարհը», 9:2
25. «ձեռնադրել», 9:12 (տես՝ 8:17)
26. «գունդ», 10:1
27. «Քրիստոնյաներ», 11:26
28. «գուշակություն», 16:16
29. «և նրա ամբողջ տունը», 16:33
30. «Էպիկուրյան», 17:18
31. «Ստոյիկյան», 17:18
32. «Արիսպագոս», 17:22
33. «հրեա եղվեցնողներ», 19:13
34. «կախարդության գրքեր», 19:19
35. «Արտեմիսի համար արծաթե մատուռներ», 19:24

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Թեոփիլոս, 1:1
2. կանայք, 1:14
3. Մատաթիա, 1:23
4. Սաղուկեցիներ, 4:1; 5:17
5. Աննա, 4:6
6. Կայիափա, 4:6
7. «ժողովրդի իշխաններն ու ծերերը», 4:8
8. Անանիա, 5:1; 9:10
9. Սափիրա, 5:1
10. Գամաղիել, 5:34
11. Ստեփանոս, 6:5
12. Սողոս, 7:58; 8:1; 9:1
13. Փիլիպոս, 8:5
14. Այծեմնիկ, 9:36
15. Կռռնելիոս, 10:1
16. Ագաբոս, 11:28; 21:10
17. Եվափրոս, 20:9

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Երուսաղեմ, 1:8
2. Հուդա, 1:8

3. Սամարիա, 1:8
4. Պարթևներ, 2:9
5. Կապադովկիա, 2:9
6. Պոնտոս, 2:9
7. Ասիա, 2:9
8. Փոյուզիա, 2:10
9. Պամփյուլիա, 2:10
10. Եգիպտոս, 2:10
11. Լիբիա, 2:10
12. Կյուրենե, 2:10
13. Կրետացիներ, 2:11
14. Նազարեթ, 2:22
15. Ալեքսանդրիա, 6:9
16. Կիլիկիա, 6:9
17. Դամասկոս, 9:2
18. Կեսարիա
19. Հոպպե, 9:36
20. Փյունիկիա, 11:19 Կիպրոս, 11:20
21. Տարսոն, 11:25
22. Սիդոն, 12:20
23. Փիլիպպե, 16:12
24. Բերիա, 17:10
25. Աթենք, 17:16
26. Կորնթոս, 18:1

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է 1:6-ը հայտնում, որ Առաքյալները սիսալ էին հասկացել Հիսուսին:
2. Ի՞նչ կապ կա 1:8-ի և Սատթևոս 28:19-20-ի միջև:
3. Թվարկե՛ք Առաքյալ լինելու հատկանիշները (1:22):
4. Ինչո՞ւ են «քամին» և «կրակը» ասոցացվում Հոգու հետ (2:2-3):
5. Բացատրե՛ք 2:8-ի հրաշքը:
6. Պետրոսն ասում է, որ Հովելի մարգարեությունն է իրականացել: Ուրեմն ինչպե՞ս կարող եք բացատրել 1:17 և 19-20 խոսքերը:
7. Ո՞րն է Հիսուսի «Տեր» և «Քրիստոս» կոչվելու աստվածաբանական նշանակությունը (2:36):
8. Արդյո՞ք 2:44 խոսքը աստվածաշնչյան մանդատ է կոմունիզմի համար (տես՝ 4:34-35):
9. Բացատրե՛ք 3:18-ի նշանակությունը:
10. Բացատրե՛ք, թե 4:11-ում ինչպե՞ս է ՀԿ-ը նկատի ունենում Հիսուսին:
11. Արդյո՞ք Սուրբ Հոգով լեցունությունը միշտ ուղեկցվում է Գործքում վկայություն տալու հետ:
12. Թվարկե՛ք Գործք 6-ում «Յոթի» հատկանիշները: Արդյո՞ք նրանք սարկավագներ էին:
13. Ինչո՞ւ էր Սողոսը այդքան բարկությամբ լցված Քրիստոնյաների հանդեպ (8:1-3):
14. Արդյո՞ք 8:15-16 ժամականակից հավատացյալների համար տալիս է փրկության համար դեպքերի հերթականություն:
15. Ո՞րն է լեզուների նպատակը 10:44-48-ում:
16. Ինչո՞ւ էր Պողոսը առաջին հերթին քարոզում տեղի ժողովարաններում (13:5):
17. Ի՞նչ տեղի ունեցավ Լյուստրայում, որը պատճառ հանդիսացավ, որ Պողոսն ու Բառնաբասը իրենց հանդերձները պատռեն:
18. Ի՞նչն էր Երուսաղեմի Խորհրդի նպատակը Գործք 15-ում:
19. Ինչո՞ւ Պողոսն ու Բառնաբասը վիճեցին (15:36-41):
20. Ինչո՞ւ Հոգին արգելեց Պողոսին Ասիա գնալ (16:6):
21. Ինչո՞ւ էին քաղաքի առաջնորդները այդքան անհանգիստ 16:35-40-ում:
22. Ինչպե՞ս Պրիսկիլան և Ակյուդասը օգնեցին Ապողոսին (18:24-28):
23. Ինչո՞վ է 20:21 խոսքը կարևոր:
24. Ի՞նչ նշանակություն ունի 21:9 խոսքը:
25. Ըստ Գործք 21-ի ինչո՞ւ Պողոսին բանտարկեցին Երուսաղեմում:
26. Բացատրե՛ք 23:6-7 ձեր իսկ խոսքերով:

ՀՌՈՄԵԱՅԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Հռոմեացիներին ուղղված թուղթը Պողոս Առաքյալի կողմից գրված ամենահամակարգված և տրամաբանական վարդապետական գիրքն է: Հռոմում տիրող իրավիճակները առիթ հանդիսացան, որպեսզի գրվեր այս նամակը, հետևաբար, այն «հազվադեպ» փաստաթուղթ է: Հնարավոր է ինչ-որ բան էր տեղի ունեցել, որը դրդել էր Պողոսին գրել այս նամակը: Ինչևէ այս թուղթը Պողոսի գրքերից ամենաչեզոքն է, որտեղ Պողոսը փորձում է խնդիրը լուծելիս (հավանաբար հավատացյալ հրեա և հեթանոս առաջնորդների միջև առկա նախանձի խնդիրը) հստակ ներկայացնել ավետարանը և դրա գործնական կիրառությունը ամենօրյա կյանքի համար:

Բ. Պողոսի կողմից Ավետարանի ներկայացումը Հռոմեացիներին ուղղված թղթում մեծ ազդեցություն է թողել բոլոր դարերի եկեղեցական կյանքի վրա՝

1. Օգոստինոսը դարձի է եկել մ. թ. 386թ-ին Հռոմեացիների 13:13-14 խոսքերը կարդալով:
2. Մարթին Լյութերի փրկության մասին իր հասկացողությունը արմատապես փոխվել է մ. թ. 1513թ-ին, երբ համեմատել է Սաղմոս 31:1 խոսքը Հռոմ. 1:17-ի հետ (տես՝ Ամբ. 2:4):
3. Ջոն Ուեյլին դարձի է եկել մ. թ. 1738թ-ին լսելով Լյութերի քարոզը Հռոմեացիներին ուղղված թղթի ներածության շուրջ:

Գ. Իմանալ Հռոմեացիների թուղթը նշանակում է իմանալ Բրիտոնությունը: Նամակը Հիսուսի կյանքն ու ուսմունքները ձուլում է բոլոր դարերի Եկեղեցու համար հաստատուն ճշմարտությունների:

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Հեղինակը անկասկած Պողոսն է: Նրան բնորոշ ողջույնի ձևը գտնվում է 1:1-ում: Ընդհանրապես շատերն են համաձայն այն մտքի հետ, որ Պողոսի «մարմնի խայթոցը» իր թույլ տեսողությունն էր, ուստի նամակը ֆիզիկապես գրվել է Տերտիոս դպրի ձեռքով (տես՝ 16:22):

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Հռոմեացիներին ուղղված թղթի հավանական տարեթիվը մ. թ. 56-58թթ են: Այս թուղթը Նոր Կտակարանի հազվագյուտ գրքերից մեկն է, որը կարելի է բավականին ճշգրտորեն տարեգրել: Սա կատարվում է Գործք 20:2-ը համեմատելով Հռոմ. 15:17-ի հետ: Հռոմեացիների թուղթը հավանաբար գրվել է Կորնթոսում Պողոսի երրորդ միսիոներական ճամփորդության ավարտին՝ անմիջապես Երուսաղեմ մեկնելուց առաջ:

Բ. Պողոս Առաքյալի գրքերի ժամանակագրությունն ըստ Ֆ.Ֆ.Բրյուսի և Մյուրի Հարրիսի աննշան ուղղումներով.

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|--|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |
| 3. 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. 2 Կորնթացիներին | 56 | Սակեդոնիա | 20:2 |
| 6. Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. Բանտից նամակները՝ | | | |
| Կողոսացիներին | 60-ի սկիզբ | | |
| Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| Փիլիպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. Չորրորդ միսիոն . ճամփորդությունը | | | |

| | | |
|--------------|----------------|------------|
| 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Մակեդոնիա |
| Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) |
| 2 Տիմոթեոսին | 64 մ.թ. 68) | Հռոմ |

IV. ՄՏԱՑՈՂՆԵՐԸ

Նամակն ասում է, որ հասցեագրված է Հռոմին: Մենք տեղյակ չենք, թե ով է հիմնել Հռոմի եկեղեցին:

Ա. Հնարավոր է այն հիմնվել է Պենտեկոստեին օրերին Երուսաղեմ այցելած մի քանի մարդկանց կողմից, որոնք դարձի են եկել և վերադարձել իրենց տուն և սկսել եկեղեցի (տես՝ Գործք 2:10):

Բ. Հնարավոր է հիմնվել է աշակերտների կողմից, որոնք Երուսաղեմում Ստեփանոսի մահից հետո սկսած հալածանքներից փախել էին (տես՝ Գործք 8:4); կամ

Գ. Հնարավոր է նրանք Պողոս առաքյալի միսիոներական ճամփորդությունների ընթացքում դեպի Հռոմ ճամփորդող նորադարձներ էին: Պողոսը երբեք չէր այցելել այս եկեղեցին, սակայն փափագում էր (տես՝ Գործք 19:21): Նա այնտեղ շատ ընկերներ ուներ (տես՝ Հռոմ . 16):

Ըստ երևույթին նա ծրագրում էր այցելել Հռոմ դեպի Իսպանիա իր ճամփորդության ճանապարհին (տես՝ Հռոմ . 15:28), Երուսաղեմ «սիրո ընծաները» տանելու իր ճամփորդությունից հետո: Պողոսը զգաց, որ արևելյան Միջերկրականի տարածաշրջանում իր ծառայությունն ավարտվել էր: Նա նոր դաշտ էր փնտրում (տես՝ 16:20-23): Նամակը Հունաստանից Պողոսի ձեռքից Հռոմ հասցնողը կարծես թե Ֆիբեն էր, մի սարկավագուհի, որը ճամփորդում էր այդ ուղղությամբ (տես՝ Հռոմ . 16:1): Ինչո՞ւ է այս նամակը, որը գրվել է առաջին դարում մի հրեա վրանագործի կողմից Կորնթոսի փողոցներից, այքան արժևորվում: Մարթին Լյութերը այս նամակն անվանում է «Նոր Կտակարանի գլխավոր գիրք և մաքրամաքուր ավետարան»: Այս գրքի արժեքը այն փաստի մեջ է, որ հանդիսանում է ավետարանի խորը բացատրություն մի դարձի եկած ռաբբի կողմից՝ Տարսուցի Սողոսի, որը կանչված է լինելու հեթանոսների առաքյալ: Պողոսի նամակներից շատերը մեծապես պարուրված են տեղի իրավիճակներով, սակայն ոչ Հռոմեացիներին ուղղված նամակի դեպքում: Այն հանդիսանում է Առաքյալի կյանքի ընթացքում վերապրած հավատքի համակարգված ներկայացում:

Սիրելի Քրիստոնյա, դուք զգացե՞լ եք, որ «հավատքը» («արդարություն»), «հավատուրացություն», «որդեգրություն» և «սրբագործություն») նկարագրող տեխնիկական տերմիններից մեծ մասը, որոնք կիրառվում են այսօր, ծագել են Հռոմեացիների թղթից: Աղոթե՛ք Աստծուն, որ բացի ձեզ այս սքանչելի նամակը, մինչ այսօր միասին փնտրում ենք Նրա կամքը մեր կյանքերի համար:

V. ՆՊԱՏԱԿԸ

Ա. Օգնության խնդրանք դեպի Իսպանիա իր միսիոներական ճամփորդության համար: Պողոսը իր առաքելական գործունեությունն ավարտված էր տեսնում արևելյան Միջերկրականի տարածքում (տես՝ 16:20-23):

Բ. Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև առկա խնդրին անդրադառնալու համար էր: Հավանաբար այս բանը տեղի ունեցավ Հռոմից բոլոր հրեաների վտարման և հետագայում վերադարձի հետևանքով: Այդ ընթացքում հրեա Քրիստոնյա առաջնորդներին փոխարինել էին հեթանոս Քրիստոնյա առաջնորդները:

Գ. Որպեսզի իրեն ներկայացնի Հռոմի եկեղեցուն: Պողոսն ուներ մեծաթիվ հակառակորդներ անկեղծ նորադարձ հրեաների կողմից, որոնք Երուսաղեմում էին (Գործք 15-ի Երուսաղեմի Խորհուրդը), կեղծավոր հրեաների կողմից (Գաղատացիների մեջ Հուդայիստները և 2 Կորնթ. 3,10-13), և հեթանոսների կողմից (Կողոսացիները, Եփեսացիները), որոնք փորձում էին ավետարանը ձուլել իրենց տեսությունների կամ փիլիսոփայությունների հետ:

Դ. Պողոսին ամբաստանում էին որպես վտանգավոր նորարար, որը Հիսուսի ուսմունքների վրա անխոհեմ կերպով հավելումներ էր կատարում: Հռոմեացիների գիրքը իրեն պաշտպանող համակարգված իր կերպն էր, որով ցույց էր տալիս, թե որքան ճշմարիտ է իր ավետարանը, կիրառելով Հին Կտակարանը և Հիսուսի ուսմունքները (Ավետարանները):

VI. ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ

Ա. Ներածություն (1:1-17)

1. Ողջույնի խոսք (1:1-7)
 - ա. Հեղինակը (1-5)
 - բ. Ում է ուղղված (6-7ա)
 - գ. Ողջույններ (7բ)
2. Նպատակը (1:8-15)
3. Թեման (1:16-17)

Բ. Աստվածային Արդարության կարիքը (1:18-3:20)

1. Հեթանոս Աշխարհից հրաժարվելը (1:18-32)
2. Հրեաների կամ հեթանոս բարոյախոսների երեսպաշտությունը (2:1-16)
3. Հրեաների դատաստանը (2:17-3:8)
4. Տիեզերական Դատապարտություն (3:9-20)

Գ. Ինչ է աստվածային արդարությունը (3:21-8:39)

1. Արդարությունը միայն հավատքով է (3:21-31)
2. Արդարության հիմքը. Աստծո Խոստումը (4:1-25)
 - ա. Աբրահամի ճիշտ կեցվածքը (4:1-5)
 - բ. Դավիթը (4:6-8)
 - գ. Աբրահամի կապը թվատության հետ (4:9-12)
 - դ. Աստծո Խոստումը Աբրահամին (4:13-25)
3. Արդարության ձեռք բերումը (5:1-21)
 - ա. Սուբյեկտիվ կողմը՝ անարժան սեր, անհավասար ուրախություն (5:1-5)
 - բ. Օբյեկտիվ հիմնավորում՝ Աստծո հիասքանչ սերը (5:6-11)
 - գ. Ադամ-Քրիստոս տիպաբանությունը՝ Ադամի հանցանքը, Աստծո հոգածությունը (5:12-21)
4. Աստծո արդարության հետևանքը պետք է լինի անձնական արդարությունը (6:1-7:25)
 - ա. Մեղքից ազատված (6:1-14)
 - (1) մեղքի առարկություն (6:1-2)
 - (2) մկրտության նշանակությունը (6:3-14)
 - բ. Սատանայի ծառա, թե Աստծո ծառա՝ քո ընտրությունը (6:15-23)
 - գ. Մարդու ամուսնությունը Օրենքի հետ (7:1-6)
 - դ. Օրենքը բարի է, բայց մեղքը խանգարում է բարուն (7:7-14)
 - ե. Հավատացյալի ներսում բարու և չարի հավիտենական պայքարը (7:15-25)
5. Աստծո արդարության տեսանելի արդյունքները (8:1-39)
 - ա. Հոգով կյանքը (8:1-17)
 - բ. Ստեղծագործության փրկությունը (8:18-25)
 - գ. Հոգու մշտական օգնությունը (8:26-30)
 - դ. Հավատքով արդարացվելու իրավաբանական հաղթանակը (8:31-39)

Դ. Աստծո նպատակը ամբողջ մարդկության համար (9:1-11:32)

1. Իսրայելի ընտրությունը (9:1-33)
 - ա. Հավատքի իրական ժառանգորդները (9:1-13)
 - բ. Աստծո ինքնիշխանությունը (9:14-26)
 - գ. Աստծո տիեզերական ծրագրի մեջ ընդգրկված են հեթանոսները նույնպես (9:27-33)
2. Իսրայելի փրկությունը (10:1-21)
 - ա. Աստծո արդարությունը ի հակադրություն մարդու արդարության (10:1-13)
 - բ. Աստծո ողորմությունը պահանջում է ավետարանիչներ ամբողջ աշխարհը ավետարանելու համար (10:14-18)
 - գ. Քրիստոսի հանդեպ Իսրայելի շարունակվող անհավատությունը (10:19-21)
3. Իսրայելի ձախստումը (11:1-36)

- ա. Հրեա մնացորդը (11:1-10)
- բ. Հրեաների նախանձը (11:11-24)
- գ. Իսրայելի ժամանակավոր կուրությունը (11:25-32)
- դ. Պողոսի փառաբանության պոռթկումը (11:33-36)

Ե. Աստծո Արդարության պարզևի արդյունքը (12:1-15:13)

- 1. Նվիրման կոչ (12:1-2)
- 2. Պարզևների գործածությունը (12:3-8)
- 3. Հավատացյալների փոխհարաբերությունները մյուս հավատացյալների հետ (12:9-21)
- 4. Պետության հետ (13:1-7)
- 5. Հարևանների հետ (13:8-10)
- 6. Մեր Տիրոջ հետ (13:11-14)
- 7. Եկեղեցու անդամակիցների հետ (14:1-12)
- 8. Մեր ազդեցությունն ուրիշների վրա (12:13-23)
- 9. Քրիստոսանման հարաբերություններ (15:1-13)

Չ. Եզրահանգում (15:14-33)

- 1. Պողոսի անձնական ծրագրերը (15:14-29)
- 2. Աղոթքի խնդրանքներ (15:30-33)

Է. Ետգրություն (16:1-27)

- 1. Ողջույններ (16:1-24)
- 2. Օրհնության խոսք (16:25-27)

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1. առաքյալ, 1:1
- 2. «մարմնավորապես Դավթի սերունդը», 1:3
- 3. սրբեր, 1:7
- 4. արդարություն, 1:17
- 5. Աստծո բարկությունը, 1:18
- 6. ապաշխարություն, 2:4
- 7. «Աստծո մոտ աչառություն չկա», 2:11
- 8. թվիատություն, 2:25
- 9. «Աստծո պատգամները», 3:2
- 10. արդարացած, 3:4
- 11. քավություն, 3:25
- 12. «պարծենում ենք նեղությունների մեջ», 5:3
- 13. «արդարացած լինելով Նրա արյամբ», 5:9
- 14. «արդարության պարզևր», 5:17
- 15. «նա, ով մեռած է, ազատված է մեղքից», 6:7
- 16. սրբացում, 6:19
- 17. «Աստծո Հոգին բնակվում է ձեր մեջ», 8:9
- 18. Արբա, 8:15
- 19. համբերություն, 8:25
- 20. ճանաչեց, 8:29
- 21. նախասահմանեց, 8:29
- 22. փառավորեց, 8:29
- 23. «Աստծո աջ կողմում», 8:34
- 24. «իշխանությունները . . . գորությունները», 8:38
- 25. որդեգրություն, 9:4
- 26. ուխտեր, 9:4
- 27. «գայթակղության քար», 9:33
- 28. դավանել, 10:9
- 29. հավատալ, 10:4,11
- 30. բնական ճյուղեր, 11:21
- 31. խորհուրդ, 11:25

32. Ամեն, 11:36
33. հյուրասիրություն ցուցաբերել, 12:13
34. անեծք, 12:14
35. «ենթարկվել իշխանություններին», 13:1
36. «հանել. . . հագնել», 13:12
37. «հավատքի մեջ տկար», 14:1
38. «նա, ով գորավոր է», 15:1

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Աբրահամ, 4:1
2. հայրերը, 9:5
3. Եսավ, 9:13
4. Բահադ, 11:4
5. Փիբե, 16:1
6. Պրիսկիդա և Ակյուդաս, 16:3
7. Հունիա, 16:7
8. Տերտիոս, 16:22

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Հռոմ, 1:7
2. Կենթրա, 16:1

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է 1:16 հատկանշական Պողոսին:
2. Ի՞նչ երկու կերպերով է մարդկությունը ճանաչում Աստծուն (այսինքն՝ 1-2 գլուխները)
3. Ինչպե՞ս է 1:26-27 անդրադառնում ներկայիս համասեռամոլության խնդրին:
4. Ի՞նչ կապ ունի 2:6-ը Գաղ. 6:7-ի հետ:
5. Գլուխ 3-ում 9-18 խոսքերը ՀԿ-ից մեջբերումների շարք է: Դրանք բոլորն էլ ի՞նչ աստվածաբանական ճշմարտության են վերաբերում:
6. Ինչո՞ւ է 4:6-ն այդքան կարևոր:
7. Բացատրե՛ք 4:15 ձեր իսկ խոսքերով:
8. Ի՞նչ է ասում 5:8-ը Աստծո մասին:
9. Ինչպե՞ս են 5:18 և 19 զուգահեռվում:
10. Բացատրե՛ք 6:11-ի գործնական նշանակությունը:
11. Հռոմեացիների 6:23 կոչվել է ավետարանն ասիի մեջ, ինչո՞ւ:
12. Բացատրե՛ք «Հոգու նորոգություն» և «տառի հնություն» խոսքերի միջև տարբերությունը (7:6):
13. Ո՞ւմ է նկարագրում գլուխ 7-ը:
14. Ի՞նչ է ասում 7:7-12 ՀԿ-ի օրենքի նպատակի վերաբերյալ:
15. Ինչպե՞ս է 7:19-ը առնչվում քն կյանքին:
16. Բացատրե՛ք 8:22 ձեր իսկ խոսքերով:
17. Արդյո՞ք 8:26-27 խոսում է լեզուներով խոսելու մասին:
18. Ի՞նչ կապ ունի 8:28-ը 8:29-ի հետ:
19. Ո՞րն է գլուխ 9-11-ի գրական բաժնի թեման:
20. Բացատրե՛ք 10:4 ձեր իսկ խոսքերով:
21. Բացատրե՛ք 11:7 ձեր իսկ խոսքերով:
22. Բացատրե՛ք 11:26 ձեր իսկ խոսքերով:
23. Արդյո՞ք գլուխ 12-ում նշված հոգևոր պարզկները դեռ վավեր են և գործող:
24. Բացատրե՛ք 12:20 ձեր իսկ խոսքերով:
25. Բացատրե՛ք 14:14 ձեր իսկ խոսքերով:
26. Բացատրե՛ք 14:23 ձեր իսկ խոսքերով:

1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՆՀԱՆԳԻՍՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ)

I. 1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ԹՂԹԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Այն ավելի հաճախ և ավելի շուտ է մեջբերվել վաղ եկեղեցու հայրերի կողմից, քան Պողոսի ցանկացած այլ գրվածքները, ինչն էլ ցույց է տալիս դրա կարևորությունն ու օգտակարությունը:

Բ. Մուրատորյան Պատառիկում, որը Հռոմի կանոնական գրքերի ցանկից էր (200-ական թվականներին), այն Պողոսի առաջին գրվածքների ցանկում է, որը նույնպես ցույց է տալիս իր կարևորությունը:

Գ. Պողոսը այս գործնական նամակում տարբերություն է դնում իր անձնական կարծիքների և Տիրոջ պատվիրանների միջև: Ինչևէ, դա հիմնված է ցանկացած թեմայի շուրջ Հիսուսի ուսմունքների գիտության վրա: Եթե նա կարողանար, ապա կփոխանցեր փոխանցել Հիսուսի խոսքերը: Նա հավատում էր, որ Նրա կարծիքները նույնպես ներշնչված էին և հեղինակային (տես՝ 1 Կորնթ. 7:25,40):

Դ. Եկեղեցական դաստիարակության համար Պողոսի առաջնորդության սկզբունքն էր անհատ հավատացյալների ազատությունն ընդդեմ նրանց միասնական պատասխանատվության, որը հիմնված է ոչ թե օրենքի, այլ սիրո վրա: Ամբողջ եկեղեցու առողջությունն ու անը փոխարինում է ցանկացած անձնական նախասիրության կամ արտոնության (տես՝ 1 Կորնթ. 12:7):

Ե. Այս նամակը (2 Կորնթացիների հետ միասին) մեզ է տալիս Նոր Կտակարանի եկեղեցու, նրա կառուցվածքի, մեթոդների և պատգամի մասին վաղ շրջանի օրինակներ: Սակայն, պետք է նաև հիշել, որ այս եկեղեցին խնդրահարույց էր, որը հատուկ չէր Պողոսի համայնքին:

II. ԿՈՐՆԹՈՍ ՔԱՂԱՔԸ

Ա. Հունաստանի հարավային մասի ձմեռային տրանսպորտային գոտիները (այսինքն՝ Cape Malea) շատ վտանգավոր էին: Ուստի շատ կարևոր էր, որ ցամաքային երթուղին հնարավորինս կարճ լիներ: Կորնթոսի աշխարհագրական դիրքը՝ Կորնթոսի ծոցի (Ադրիատիկ ծովի) և Մարոնական Ծովածոցի (Էգեյան ծով) միջև չորս մղոն հեռավորության վրա, կազմել է խոշոր առևտրային, նավահանգստային (մասնագիտացված խեցեգործության և հատուկ պղնձագործության այլ տեսակների մեջ) և ռազմական կենտրոն: Պողոսի օրոք, բառացիորեն հանդիպեցին արևելքի և արևմուտքի մշակույթները:

Բ. Կորնթոսը նաև հունա-հռոմեական աշխարհի խոշոր մշակութային կենտրոնն էր, քանի որ հյուրընկալել էր երկու տարին մեկ տեղի ունեցող Իսթմիան խաղերը, որոնք սկսվել էին Ք. Ա .581թ-ին (Պոսեյդոնի տաճարում): Միայն չորս տարին մեկ անգամ Աթենքում տեղի ունեցող Օլիմպիական խաղերն էին իրենց չափերով և կարևորությամբ մրցակցելի այս խաղերի հետ (Thucydides, Hist 1:13:5):

Գ. Ք. Ա. 146թ-ին Կորնթոսը ապստամբեց Հռոմի դեմ (այսինքն՝ Աքեյան լիգա) և բնաջնջվեց հռոմեացի զենեքալ Լուցիուս Մումիուսի կողմից, իսկ հունական բնակչությունը գերեվարվեց ստրկության: Իր տնտեսական և ռազմական կարևորության համար վերակառուցվում է 46-ին կամ 48-ին Հուլիոս Կեսարի կողմից: Կորնթոսը դարձավ հռոմեական գաղութ, որտեղ ապրում էին թոշակառու հռոմեացի զինվորները: Քաղաքը արտացոլում էր Հռոմը իր ճարտարապետությամբ և մշակույթով, իսկ մ. թ. ա. 27թ-ին հանդիսանում էր Հռոմի (այսինքն՝ սենատորական) վարչական կենտրոնը Աքայիայում: Ք. ա. 15թ-ին այն դարձավ կայսերական նահանգ:

Դ. Աֆրոդիտեի տաճարի տարածքը եղել է Հին Կորնթոսի ակրոպոլիսը, որը վեր էր խոյանում ավելի քան 1880 ոտնաչափ բարձրության վրա: Այս տաճարին կցված էին 1000 մարմնավաճառներ (Strabo, Geography, 8:6:20-22): «Կորնթացի» կոչվել (այսինքն՝ *Korinthiazesthai*, հնարված Արիստոֆանեսի կողմից /Ք.ա. 450-385թթ/) ասել է, թե թեթևաբարո, ապստամբ կյանքով ապրել: Այս տաճարը, ինչպես և քաղաքի մեծ մասը, ավերվել է Պողոսի այդ քաղաքը գնալուց 150 տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժից, որը կրկին պատահեց մ.թ. 77թ-ին: Հայտնի չէ, թե արդյոք պտղաբերության պաշտամունքը դեռևս շարունակվում էր Պողոսի օրերում էլ, թե ոչ: Քանի որ հռոմեացիները Ք.ա. 146թ-ին ավերել էին քաղաքը և կոտորել կամ գերեվարել քաղաքի բոլոր բնակիչներին, քաղաքի հունական համն ու հոտը փոխարինվել էր հռոմեական գաղութային կարգավիճակով (Pausanias, II.3.7): Հունական մշակույթին փոխարինած այս հռոմեական մշակույթային կոնտեքստը նշանակալի տարբերություն է մտցնում 1 Կորնթացիների թղթի մեկնաբանության մեջ:

III. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Այս քաղաքն էր, որտեղ Պողոս առաքյալը իր երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ կանգ առավ. դեպքը արձանագրված է Գործք 18:1-21-ում: Տեսիլքի միջոցով Տերը հայտնեց Պողոսին, որ շատերն են այնտեղ հավատալու և նրա ծառայության դեմ ոչ մի հակառակություն չի հաջողելու (տես՝ Գործք 18:9-10):

Բ. Պողոսի միսիոներական ռազմավարությունն էր իր օրերի յուրաքանչյուր խոշոր քաղաքում եկեղեցի հիմնելը, գիտակցելով, որ նորադարձ այցելուները, ճամփորդող առևտրականները և նավաստիները իրենց հեռանալուն պես տարածելու են ավետարանը: Ավետարանչության և աշակերտության պատասխանատվությունը ընկած էր յուրաքանչյուր տարածաշրջանի տեղական եկեղեցիների վրա:

Գ. Պողոսը գտնում է Ակյուդասին և Պրիսկիլային, որոնք նաև հավատացյալ հրեա վրանագործներ կամ կաշեգործներ էին Կորնթոս քաղաքից: Նրանց վտարել էին Հռոմից մ.թ. 49թ-ին Կլավդիոսի հրամանով (Orosius, *Hist.* 7:6:15-16) ցանկացած հրեական ծեսերի կամ ավանդույթների կիրառության պատճառով (տես՝ Գործք 18:2): Պողոսը Կորնթոս էր եկել միայնակ: Շիդան և Տիմոթեոսը հանձնարարություն էին կատարում Մակեդոնիայում (տես՝ Գործք 18:5): Նա շատ հուսալքված էր (տես՝ Գործք 18:9-19; 1 Կորնթ. 2:3): Ինչևէ նա տասնութ ամիս համբերեց և մնաց Կորնթոսում (տես՝ Գործք 18:11):

Դ. Հռոմեացի Կլեմենտի կողմից հաստատվեց այն, որ Կորնթոսի եկեղեցուն ուղղված նամակը Պողոսն է գրել՝ մ.թ. 95/96թթ (I *Clement* 37:5; 47:1-3; 49:5): Այն, որ այս նամակը գրված է Պողոսի կողմից, երբեք կասկած չի հարուցել և ոչ ոքի, անգամ ժամանակակից քննադատ գիտնականներին:

IV. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Պողոսի Կորնթոս կատարած այցի տարեթիվը հաստատվել է Դելֆիում գտնված Կլավդիոս կայսեր կողմից, որտեղ նշվում է, որ Գաղիոնը բղեշխ էր 51թ-ի հուլիսից մինչև 52թ-ի հուլիսը (տես՝ Գործք 18:12-17), ուստի կարելի է ենթադրել, որ Պողոսը Կորնթոս է ժամանել 49-50թթ:

Բ. Այդ դեպքում Պողոսի նամակը պետք է որ գրված լինի 50-ականների կեսերին: Նամակը գրվել է Եփեսոսից, որտեղ նա ծառայում էր երկու տարուց (տես՝ Գործք 19:10) մինչև երեք տարի (տես՝ Գործք 20:34):

Գ. Պողոսի գրվածքների հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ.Բրյուսի և Մյուրի Հարրիսի՝ աննշան ուղղումներով.

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|------------------------|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |

| | | | | |
|--------|---------------------|----------------|------------|----------|
| 3. | 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. | 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. | 2 Կորնթացիներին | 56 | Մակեդոնիա | 20:2 |
| 6. | Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. | Բանտից նամակները՝ | | | |
| | Կողոսացիներին | 60-ի սկիզբ | | |
| | Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| | Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| | Փիլիպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. | Չորրորդ միսիոն . | | | |
| | նամփոթությունը | | | |
| | 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Մակեդոնիա | |
| | Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) | |
| | 2 Տիմոթեոսին | 64 մ . թ . 68) | Հռոմ | |

(Ըստ հավանականության Պողոսը մահապատժի ենթարկվեց մ . թ . 65 թ-ին)

V. ՆԱՄԱԿԸ ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա . Այս նամակի ստացողները հիմնականում հեթանոսներից կազմված նորաստեղծ մի եկեղեցի էր: Կորնթոսի բնակչությունը ռասսայական և մշակութային խառնուրդ էր: Հնագիտությունից և Սուրբ Գրքից գիտենք (տես՝ Գործք 18:4-8), որ Կորնթոսում ժողովարան է եղել:

Բ . Հռոմեացի զինվորները բնակություն էին հաստատում Կորնթոս քաղաքում, երբ վերջացնում էին բանակի քսանամյա ծառայությունը: Կորնթոսը ազատ քաղաք էր, հռոմեական գաղութ և հռոմեական Աքայիա նահանգի մայրաքաղաքը:

Գ . Նամակը կարծես արտացոլում է եկեղեցում առկա մի քանի խմբերի՝ (1) հույն մտավորականներին, որոնք պարծենում էին իրենց փիլիսոփայական ավանդույթներով և փորձում էին Քրիստոնեական հայտնությունը միաձուլել իրենց ունեցած հին սովորույթներին և գաղափարական ավանդույթներին; (2) հռոմեացի բարձրաստիճան անձիք և սոցիալական վերնախավը; (3) ժողովարան հաճախող հավատացյալ հրեական մի խումբ, որը հիմնականում կազմված էր «աստվածավախ» հեթանոսներից, և (4) մեծաթիվ նորադարձ ստրուկներ:

VI. ՆԱՄԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Ա . Պողոսը Կորնթոսի եկեղեցու զարգացող խնդիրների վերաբերյալ լսել էր չորս աղբյուրներից՝

1. Քլոեսի ընտանիքից, 1:11
2. եկեղեցուց ստացված հարցադրումներով նամակից, 7:1,25; 8:1; 12:1; 16:1,12
3. Ստեփանոսի, Փորտունատոսի և Աքայիկոսի կողմից իրեն անձամբ այցելելու միջոցով, 16:17: Հավանաբար (#2) նամակը (#3) մարդիկ էին հասցրել նրան:

Հետաքրքիր է, որ Մյուրի Հարրիսը 1 Կորնթացիների գիրքը ուրվագծել է այս եկեղեցու վերաբերյալ Պողոսի ստացած ինֆորմացիայի հիման վրա:

1. բանավոր տեղեկություն Քլոեսի ընտանիքի անդամներից, որի արդյունքում Պողոսը գրել է 1-4 գլուխները:
2. բանավոր տեղեկություն եկեղեցու ներկայացուցիչներից (այսինքն՝ Ստեփանոսից, Փորտունատոսից և Աքայիկոսից), որի արդյունքում գրվել են 5-6 գլուխները:
3. եկեղեցուց ուղարկված գրավոր հարցերը, որի արդյունքում գրվել են 7-16 գլուխները:

Բ . Եկեղեցին հետևելով տարբեր առաջնորդների՝ Պողոսի, Ապողոսի, Պետրոսի և հավանաբար Քրիստոսի կողմնակիցների (տես՝ 1:12) առաջնորդությանը, բաժանված էր իրար մեջ: Եկեղեցին ոչ միայն բաժանված էր տարբեր առաջնորդների պատճառով, այլ նաև տարբեր բարոյախարատական խնդիրների և հոգևոր պարզանքների կիրառության: Հակամարտության հիմնականում Պողոսի առաքելական հեղինակության հարցն էր (հատկապես 2 Կորնթ-ում):

VII. ՊՈՂՈՍԻ ԿԱՊԵՐԸ ԿՈՐՆԹՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏ – ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Ա. Զանի՜ նամակ է Պողոսը գրել Կորնթոսին:

1. միայն երկու՝ 1 և 2 Կորնթացիներին
2. երեք. մի նամակը կորել է
3. չորս. նամակներից երկուսը կորել են
4. որոշ ժամանակակից գիտնականներ գտել են 2 Կորնթացիներում երկու կորած նամակներից պատառիկներ՝
ա. նախորդ նամակը (1 Կորնթ. 5:9) 2 Կորնթ. 6:14-17:1-ում
բ. խիստ նամակ (2 Կորնթ. 2:3-4,9; 7:8-12) 2 Կորնթ. 10-13-ում:
5. հինգ. համարելով, որ 2 Կորնթ. 10-13 հինգերորդ նամակն է, որը ուղարկվել է Տիտոսի կողմից հետագայում ավելի վատ լուրեր տեղ հասնելուց հետո:

Բ. Տեսություն #3-ը կարծես թե ավելի է համապատասխանում իրականությանը՝

1. նախորդ նամակը կորել է (1 Կորնթ. 5:9)
2. 1 Կորնթացիներին
3. խիստ գրված նամակը, որը կորել է (հավանաբար որի մի մասը արձանագրված է 2 Կորնթ. 2:1-11; 7:8-12)
4. 2 Կորնթացիներին

Գ. Իրադարձությունների հավանական հերթականությունը .

| ՏԱՐԵԹԻՎԸ | ԱՅՅԸ | ՆԱՄԱԿԸ |
|--|--|--|
| մ. թ. 50-52 Պողոսի Երկրորդ Միսիոնե-րական ճամփորդությունը | ա. Պողոսը Երկրորդ Միսիոնե-րական ճամփորդության ժամանակ Կորնթոսում տասնութ ամիս մնաց (Գործք 18:1-11) | |
| մ. թ. 52 Գաղիոնը բղեշխ էր մ. թ. 52-ից (Գործք 18:12-17) | | ա. 1 Կորնթ. 5:9-11 կարծես վերաբերում է եկեղեցում մի անբարո իրավիճակի վերաբերյալ նամակի: |
| մ. թ. 56 (գարուն) | բ. Պողոսը մինչ Եփեսոսում էր լուծում է եկեղեցում առկա խնդիրների մասին երկու աղբյուրներից՝ (1) Զլոեսի ընտանիքից, 1 Կորնթ. 1:11 և (2) Ստեփանոսից, Փորտունատոսից և Աքա-յիկոսից, 1 Կորնթ. 16:17: Ըստ երևույթին նրանք նամակը բերել են Կորնթոսի տնային եկեղեցիներից, որը հարցեր էր պարունակում: | Նամակն անհայտ է, թեև (1) ոմանք ենթադրում են, որ 2 Կորնթ. 6:14-7:1 դրա մի մասն է կամ (2) որ 2 Կորնթ. 2:3,4,9 նամակագրական անցյալ աորիստ են և վերաբերում են 2 Կորնթացիներին: |
| մ. թ. 56 (ձմեռ) կամ մ. թ. 57 (ձմեռ) | | բ. Պողոսը պատասխանում է այս հարցերին (1 Կորնթ. 7:1,25; 8:1; 12:1; 16:1,2) գրելով 1 Կորնթացիների նամակը: Տիմոթեոսը (1 |

| | | |
|---------------------------|--|---|
| <p>մ. թ. 57-58 (ձմեռ)</p> | <p>գ. Պողոսը հրատապ, ցավալի այց կատարեց Կորնթոս (Գործքում գրված չէ, տես՝ 2 Կորնթ. 2:1): Այն հաջողություն չունեցավ, սակայն երդվեց, որ կվերադառնա:</p> <p>դ. Պողոսը ծրագրեց հանդիպել Տիտոսին Տրովադայում, սակայն Տիտոսը չեկավ, ուստի Պողոսը մեկնեց Մակեդոնիա (2 Կորնթ. 2:13; 7:5, 13), հավանաբար Փիլիպե (տես՝ MSS B^c, K, L, P):</p> <p>ե. Պողոսի արձանագրված վերջին այցը Կորնթոս կարծես թե վերաբերում է Գործք 20:2-3-ին: Չնայած որ անվանապես չի նշվում Կորնթոս քաղաքը, ենթադրվում է, որ դա հենց Կորնթոսն է եղել: Չմոռան ամիսներին նա մնաց այնտեղ:</p> | <p>Կորնթ. 4:17) պատասխան նամակը Եփեսոսից (1 Կորնթ. 16:8) տանում է Կորնթոս: Տիմոթեոսին չէր հաջողվել լուծել եկեղեցում առկա խնդիրները:</p> <p>գ. Պողոսը խիստ նամակ գրեց (տես՝ 2 Կորնթ. 2:3-4:9; 7:8-12) կորնթացիների տնային եկեղեցիներին, որը Տիտոսը հասցրեց տեղ (2 Կորնթ. 2:13; 7:13-15):</p> <p>դ. Նա գտավ Տիտոսին և իմացավ, որ եկեղեցին արձագանքել է նրա առաջնորդությանը, իսկ դրանից հետո գրեց 2 Կորնթացիների թուղթը մեծ երախտագիտությամբ (7:11-16): Այն ուղարկեց Տիտոսի ձեռքով:</p> <p>ե. 1-9 և 10-13 գլուխների միջև եղած տրամադրության նկատելի փոփոխությունը գիտնականները բացատրում են որպես Կորնթոսի տնային եկեղեցիներից ստացած վատ լուրերի (հնարավոր է վերսկսվեց նախորդ հակառակությունը և ավելացան նորերը) հետևանք, այն բանից հետո, երբ գրվեցին 1-9 գլուխները (Ֆ. Ֆ. Բոյուս):</p> |
|---------------------------|--|---|

VIII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ա. 1 Կորնթացիների թղթում Պողոսին տեսնում ենք որպես մի խնդրահարույց եկեղեցու հետ աշխատող հովվի: Այս նամակում և Գաղատացիներում մենք տեսնում ենք, թե ինչպես է նա համամարդկային ավետարանը ներկայացնում տարբեր տեսանկյուններից՝ տվյալ եկեղեցու կարիքների համապատասխան. Գաղատացիների եկեղեցիների համար – ազատություն, իսկ Կորնթոսի եկեղեցիների համար՝ սահմանափակումներ:

Բ. Այս գիրքը կամ հանդիսանում է «մշակութային դիմոգավրերի» շարք, կամ էլ սկզբունքային ճշմարտության գանձ, որը կիրառվել է տվյալ պատմա-մշակութային միջավայրում: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չշփոթենք ճշմարտությունը և այդ ճշմարտության գործնական կիրառությունները տվյալ մշակույթի մեջ:

Գ. Այս գիրքը ձեզ կհասցնի մինչև Աստվածաշունչը մեկնաբանելու ձեր հոգևոր հնարավորության սահմանը: Ես կստիպեմ ձեզ վերանայելու ձեր աստվածաբանության կետերը: Այն մի

նոր պատուհան կբացի մեր օրերում Աստծո կամքի համար, ինչպես անում են աստվածաշնչյան ևս մի քանի գրքեր:

IX. 1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ներածություն, 1:1-9

1. Ողջույնի խոսք, 1:1-3
2. Գոհություն, 1:4-9

Բ. Կորնթոսում առկա խնդիրները, 1:10-6:20

1. Եկեղեցում առկա պառակտումները, որոնք տեղի են ունեցել Քրիստոնյա առաջնորդների (այսինքն՝ Պողոսի, Ապողոսի, Պետրոսի) դրդապատճառների և պատգամների թյուրըմբռնման պատճառով, 1:10-4:12
2. Ապշեցնող անբարոյականությունը, 5:1-13
3. Քրիստոնեական դատավարություններ, 6:1-11
4. Քրիստոնեական ազատությունը սահմանափակված պատասխանատվության միջոցով, 6:12-20

Գ. Կորնթոսից ստացած նամակը տարատեսակ հարցերով, 7:1-16:4

1. Մարդու սեռական կյանքը, 7:1-40
2. Կռապաշտ մշակույթի հետ կապն ու Քրիստոնեական ազատությունը, 8:1-11:1
3. Քրիստոնեական երկրպագությունը և հոգևոր կյանքը, 11:2-14:40
4. Էսկատոլոգիական մտքեր՝ հատկապես կապված հարության հետ, 15:1-58
5. Երուսաղեմի մայր եկեղեցու համար նվիրատվությունը, 16:1-4

Դ. Ամփոփիչ կետեր .

1. Պողոսի (և նրա ծառայակիցների) ճամփորդական ծրագրերը, 16:5-12
2. Վերջին հորդորներ և ողջուններ, 16:13-24

X. ՊՈՂՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. *Սթ. Պողոսի մտածելակերպը*, Ուիլյամ Բարկլի, հրատարակված է Հարփեր և Ռոուի կողմից /*The Mind of St. Paul*, William Barclay, published by Harper and Row/

Բ. *Պողոսը՝ ազատագրված սրտով Առաքյալը*, Ֆ. Ֆ. Բրյուս, հրատարակված է Էերդմանգի կողմից /*Paul, Apostle of the Heart Set Free*, F. F. Bruce, published by Eerdmans/

Գ. *Պողոսի Կրոնի Սկզբնաղբյուրները*, Ջ. Գրիշմ Մաչեն, հրատարակված է Էերդմանգի կողմից /*The Origins of Paul's Religion*, J. Gresham Machen, published by Eerdmans/

Դ. *Պողոսը. Նրա Աստվածաբանության Ուրվագիծը*, Հերման Ռիդերբոս (թարգմանված Ջոն Դե Ուիթի կողմից), հրատարակված է Էերդմանգի կողմից /*Paul, An Outline of His Theology*, Herman Ridderbos (translated by John De Witt), published by Eerdmans/

Ե. *Պողոսի Կյանքում առկա Ժամանակաշրջանները*, Ա. Տ. Ռոբերթսոն, հրատարակված է Բեյքերի կողմից /*Epochs in the Life of Paul*, A. T. Robertson, published by Baker/

Զ. *Քրիստոսի մեջ Մարդը*, Ջեյմս Ս. Ստյուարտ, հրատարակված է Հարփեր և Ռոուի կողմից /*A Man in Christ*, James S. Stewart, published by Harper and Row/

Է. *Պողոսի և Նրա Նամակների վերաբերյալ Բառարան*, հրատարակված է IVP-ի կողմից /*Dictioanry of Paul and His Letters*, published by IVP/

Ը. *Պողոսը Հռոմեական Աշխարհում, Կորնթոսում Առկա Կոնֆլիկտը*, Ռոբերտ Մ. Գրանտ, հրատարակված է Ուեսթմինսթերի, Ջոն Նոքս Պրեսսի կողմից /*Paul in the Roman World, The Conflict at Corinth*, Robert M. Grant, published by Westminster, John Knox Press/

Թ. *Ֆիլոն և Պողոսը Իմաստունների մեջ*, Բրյուս Վ. Ուինթեր, հրատարակված է Թերդմանգի կողմից /*Philo and Paul Among the Sophists*, Bruce W. Winter, published by Eerdmans/

Ժ. *Պողոսի Կորնթոսից հեռանալուց հետո*, Բրյուս Վ. Ուինթեր /*After Paul Left Corinth*, Bruce W. Winter/

XI. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. սրբված, 1:2
2. դարեր, 2:7,8

3. «Աստծո խորունկ բաները», 2:10
4. «Աստծո շինությունը», 3:9
5. «դուք Աստծո տաճարն եք», 3:16,17
6. «Աստծո խորհուրդները», 4:1
7. «այդպիսիներին Սատանային մատնեք», 5:5
8. «մենք հրեշտակներին պիտի դատենք», 6:3
9. «ձեզնից ոմանք այդպիսին էին», 6:11
10. «ինչ վերաբերում է կույսերին», 7:25
11. «ինքս անարժան չգտնվեմ», 9:27
12. «գոհաբերություն դևերին», 10:20
13. «խմել Տիրոջ գավաթը», 10:21
14. «հրեշտակների պատճառով», 11:10
15. «զում եմ, որ բաժանումներ կան ձեր մեջ», 11:18
16. «Հիսուսը նգովյալ ասի», 12:3
17. «հոգիների զանազանություն», 12:10
18. «դողանջող ծնծղա», 13:1
19. «երբ կատարյալը գա», 13:10
20. «աղոս ենք տեսնում, ինչպես հայելու մեջ», 13:12
21. մարգարեանալ, 14:39
22. կործանած, 15:24
23. «սուրբերի համար հանգանակություն», 16:1

XII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Սոթենես, 1:1
2. Քրեսի ընտանիքը, 1:11
3. Ապոդոս, 1:12
4. Կեփաս, 1:12
5. Կրիսպոս և Գայիոս, 1:14
6. «այս աշխարհի իշխանները», 2:6,8
7. բնական մարդ, 2:14
8. հոգևոր մարդ, 3:1
9. Քրիստոսի մեջ մանուկներ, 3:1
10. Կեփաս, 15:5
11. տասներկուսը, 15:5
12. Հակոբոս, 15:7

XIII. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Կորնթոս, 1:2
2. Գաղատիայի եկեղեցիները, 16:1
3. Երուսաղեմ, 16:3
4. Սակեդոնիա, 16:5
5. Եփեսոս, 16:8
6. Աքայիա, 16:15
7. Ասիա, 16:19

XIV. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ հրեաները Հիսուսին որպես Մեսիա մերժեցին:
2. Ինչո՞ւ էին հույները մերժում Հիսուսին:
3. Ինչո՞ւ է Պողոսը 1:18-25 և 2:1-5 խոսքերում այդպիսի բացասական հայտարարություններ կատարում փիլիսոփայության վերաբերյալ:
4. Բացատրե՛ք 1:26-31 խոսքերի նշանակությունը:
5. Ո՞ւմ է վերաբերում 3:10-15 համարները:
6. Ինչո՞ւ է Պողոսը 5:1-8 խոսքերում դատապարտում եկեղեցուն:
7. Արդյո՞ք 6:1-11 համարները այսօր Քրիստոնյաներին արգելում են դատապարտություններ կատարել:

8. Արդյո՞ք Պողոսը գլուխ 7-ում նկատի ունի, որ ամուրի լինելը Աստծո կամքն է:
9. Արդյո՞ք 7:12-13 խոսքերը նկատի ունեն, որ հավատացյալները կարող են ամուսնանալ անհավատների հետ:
10. Ինչո՞վ է գլուխ 8-ը նման Հռոմեացիների 14 գլխին:
11. Ինչո՞ւ Պողոսը չէր ուզում Կորնթոսի եկեղեցուց փող վերցնել (9:3-18):
12. Բացատրե՛ք 9:19-23 խոսքերի նշանակությունը:
13. Բացատրե՛ք 10:1-13 ձեր իսկ խոսքերով:
14. Ինչո՞վ է 10:13 խոսքը հավատացյալների համար հրաշալի:
15. Սահմանե՛ք 10:23 համարի հոգևոր սկզբունքը ձեր իսկ խոսքերով:
16. Ինչպե՞ս է 11:5 համարը հակասում 14:34-ին:
17. Արդյո՞ք 11:30 նշանակում է, որ որոշ հավատացյալներ են մահացել Տիրոջ Ընթրիքը ընդունելուց հետո:
18. Բացատրե՛ք 11:34-ում Պողոսի կատարած հայտարարության հանգամանքները:
19. Ո՞րն է 11:7-ում հոգևոր սկզբունքի կիրառությունը:
20. Ինչպե՞ս են հոգևոր պարզևները կապված բնական տաղանդների հետ: Ե՞րբ են հավատացյալները ստանում իրենց պարզև(ներ)ը:
21. Ինչպե՞ս է 12:29-30 պատասխանում այս հարցին. «Պե՞տք է, որ բոլոր հավատացյալները խոսեն լեզուներով» (14:5):
22. Ըստ 13:8-ի ի՞նչն է անցնելու և ի՞նչն է մնալու:
23. Ինչպե՞ս է գլուխ 14-ը նկարագրում ընդհանուր հավաքների ժամանակ լեզուների կիրառությունը:
24. Ի՞նչ երեք խմբերի համար է Պողոսը ընդհանուր ժողովների ժամանակ սահմանափակումներ դնում գլուխ 14-ում:
25. ԹՎարկե՛ք ավետարանի կետերը ըստ 15:1-4:
26. Հիսուսի կյանքում ե՞րբ իրականացավ 15:6 խոսքը:
27. Ինչպե՞ս է 15:22 նման Հռոմեացիների 5:12-21-ին:

2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Այս գիրքը, Պողոս Առաքյալի բոլոր մյուս գրքերից առավել, մեզ է ներկայացնում Առաքյալի հեթանոսների հանդեպ ունեցած իր սիրտն ու միտքը: Իր հոգևոր, հովվական կենսագրության ամենամատչելի գիրքը սա է:

Բ. Պողոսի ամենահռետորիկ աշխատությունը հնարավոր է հենց այս գիրքն է: Ռեյմունդ Ի. Բրաունը *Նոր Կտակարանի Ներածություն* գրքի /Raymond E. Brown, *An Introduction to the New Testament*/ 541 էջում ասում է, «հնարավոր է սա Պողոսի հռետորական գրվածքներից ամենահամոզիչն է»: Ինչևէ, սա արվում է հերքելու Սոֆիստներին՝ Իմաստասերներին, որոնք Կորնթոս էին եկել և հարձակվել Պողոսի հանրային հռետորաբանության մեթոդների, ինչպես նաև դրանց բովանդակության վրա (այսինքն՝ 1 Կորնթ. 1-4-ում իմաստության վրա իր հարձակումը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՖԻՍՏՆԵՐ

SPECIAL TOPIC: SOPHISTS

Հունարեն *sophia* բառը նշանակում է իմաստություն: Դրա հետ կապված *sophistēs* տերմինը ծագել է բնութագրելու մի անձի, որը «հմուտ» է կամ «կիրթ հռետորության» ասպարեզում: Սովորաբար այս տերմինը բնութագրում է հանրային, հաճախ շրջիկ հռետորի, որը զայիս է մի քաղաք և փորձում դպրոց բացել, որպեսզի կրթի տվյալ քաղաքի վերնախավի երեխաներին: Այս հանրային հռետորիկան առիթ էր հանդիսանում ծնողների համար, որպեսզի փնտրեն այսպիսի մարդկանց իրենց երեխաներին մասնավոր դասերով կամ դպրոցով ապահովելու համար:

Այս «իմաստունների» միջև ահավոր մեծ մրցակցություն կար, իմ դեմս իրենց հեղինակության և ուսանողներին զարվելու ունակության: Նույնիսկ գոյություն ունեւ առաջին անգամ խոսելու հնարավորությունների հատուկ կանոնների շարք: Այս ընթացակարգերի շարքից մեկն այն էր, որ փիլիսոփան պետք է որոշակի ժամանակահատվածում կարողանար թվարկել իր հատկանիշներն ու առավելությունները:

Կորնթոսում Պողոսի պրոբլեմը կարծես թե կապված էր՝

1. Եկեղեցում առկա բաժանումների հետ, որոնցից յուրաքանչյուրը պնդում էր, որ հետևում է մի ուսուցչի (1 Կորնթ. 1-4)
2. Երուսաղեմից հեյլենիզմի ուսմունքով կրթված հրեա սուտ վարդապետների հետ (2 Կորնթ. 10-13)

1 Կորնթ. 1-4-ում Պողոսի կողմից «իմաստության» հերքումը իր համար հարձակման տակ գտնվելու հարթակ է պատրաստում այն մարդկանցից, ովքեր փառք էին փնտրում իրենց փիլիսոփայական, հռետորական ուսմունքներով և բոլորին դատում էին այս տեսանկյունից: Չարմանալի է, որ հրեա վարդապետները նույնպես փառավոր էին իրենց փիլիսոփայական կատեգորիաներով, սակայն Հուդայականության մեջ նախադեպը հանդիսացավ Ալեքսանդրիացի Ֆիլոն և հավանաբար ուսուցման հիմքը դրեց Ալեքսանդրիացի Ապոլոսը:

Պողոսը փայլուն հանրային ճառասաց չէր: Նա հենց դրա համար էլ հարձակման էր ենթարկվում: Դրան ի պատասխան 2 Կորնթ. 10-13-ում նա գրում է փայլուն, հավասարակշիռ, զեղեցիկ շարադրված, հռետորական խոսք: Նա գործածում է նրանց տերմինները, նրանց կերպերը և մերկացնում նրանց անպատշաճ վարքն ու ամբարտավանությունը: Տե՛ս Բոյուս Վ. Ուինթեր *Ֆիլոն և Պողոսը Սոֆիստների մեջ* /Bruce W. Winter *Philo and Paul Among the Sophists*:/

Գ. Այս գիրքը Պողոս Առաքյալի պես անսովոր համադրություն է՝ հոգևոր վերելքների և վայրէջքների, բարկությունից մինչև մեծ ցնծություն ազատ բախվող զգացումների այլեկոծություն:

Դ. Այս գիրքը իրոք մի նամակ է, և որպես նամակ երկխոսության միայն մեկ կողմն է: Պողոսի պատասխանների ետևում կանգնած տրամաբանական հետևանքների և հանգամանքների մեծ մասը կորել է: Սա մի լավ օրինակ է այն փաստի, որ Նոր Կտակարանյան թղթերը սկզբնապես գրված են եղել որպես եկեղեցում առկա կարիքների պատասխաններ և ոչ թե անկախ աստվածաբանական դիսերտացիաներ:

Ե. Այս գիրքը արհամարհված է եղել գիտնականների և քարոզչության կողմից: Դա ցավալի փաստ է, քանի որ այս գիրքը հանդիսանում է Քրիստոնեական կյանքում չարչարանքներ կրելու վերաբերյալ Պողոսի ամենահստակ քննարկման աղբյուրը:

Զ. Հովիվներին այս գիրքն ապահովում է թեմատիկ ուղեցույցներ տեղական եկեղեցիներում առկա խնդիրները լուծելու համար: Անձնական հարձակումների և թյուրիմացությունների մեջ լինելիս Պողոսը մեզ գեղեցիկ օրինակ է թողել հետևելու:

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Աստվածաշնչյան գրքերի ցանկում ավանդական հեղինակության նույնիսկ բոլոր ժամանակակից հերքումների մթնոլորտում, այս գիրքը երբեք էլ չի հերքվել, որ Պողոսի գրչին է պատկանում:

Բ. Գիրքն այնքան կենսագրական է և դրանում առկա որոշ արտահայտություններ այնքան դժվար է հասկանալ, որ ինչ-որ մեկի կողմից այսպիսի գիրք գրելով Պողոսին նմանակել փորձելը պարզապես խիստ անհավանական է: Նամակի բարդությունն ու յուրահատկությունն ինքնին խոսում է իր ստուգության մասին: Ճիշտ է, որ ՆԿ-յան շատ գիտնականներ կարծում են, որ 2 Կորնթացիներինը Պողոսի մի քանի առանձին նամակների համախմբման արդյունքում ստեղծված մի նամակ է, սակայն ես հակված եմ պաշտպանելու գրքի միաբանությունը՝ եզակի լինելը, քանի որ .

1. Հնագույն հունարեն ձեռագրերում դրա առանձին նամակների վերաբերյալ ակնարկ չկա:
 - ա. Գրական բաժինների ոչ մի տարբերություն
 - բ. Չկա ոչ մի ձեռագիր տարբերակ, որը չպարունակի բոլոր տասներեք գլուխները:
2. Չնայած 2 Կորնթ. 13 ակնհայտ է, որ հայտնի չի եղել Հռոմեացի Կլեմենտին մ. թ. 96-ին, այն մեջբերված է Պոլիկարպի կողմից մ. թ. 105-ին:
3. Գիրքը կարելի է հասկանալ մեկ ամբողջական բաժնի տեսքով: Կարծես թե գրքում կան որոշակի թեմաներ, որոնք ցույց են տալիս դրա միաբանությունը, ինչպես օրինակ «չարչարանքը»:
4. Այս ներքին վկայությունը շատ քիչ է, որպեսզի պաշտպանի 2 Կորնթացիների արմատական տարանջատում:

Գ. 1:1 և 10:1 համարներում ասվում է, որ Պողոսն է հեղինակը:

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. 2 Կորնթացիների տարեթիվը անքակտելիորեն կապված է 1 Կորնթացիների և Գործք Առաքելոցի տարեթվերի հետ:

Բ. Գործք 18:1-18 և 20:2-3 խոսքերը առնչվում են Պողոսի Կորնթոսում լինելու հետ, սակայն նաև կարծես թե կա ևս մեկ չարձանագրված ճամփորդություն (2 Կորնթ. 2:1; երրորդ այցի մասին նշված է 12:14; 13:1-2-ում):

Գ. Կարևորագույն հարցը Պողոսի այցելությունների և Կորնթոսին ուղղված իր նամակների միջև ընկած ժամանակային ինտերվալն է:

Դ. Կորնթոսի հետ կապված դեպքերը թվագրելու իրական խնդիրը կայանում է նրանում, որ մենք չունենք որևէ արտաքին ապացույց կամ տեղեկություն Գործք 18:1-18 և Գործք 20:2-3-ի միջև, բացառությամբ հենց Կորնթացիներին ուղղված նամակների ներքին ապացույցները:

Ե. Պողոսի կապը Կորնթոսի Եկեղեցու հետ . առաջարկվող վերադասավորություն:

| ՏԱՐԵԹԻՎԸ | ԱՅՑԸ | ՆԱՄԱԿԸ |
|---|--|--------|
| մ. թ. 50-52 Պողոսի Երկրորդ Միսիոներական ճամփորդությունը | ա. Պողոսը Երկրորդ Միսիոներական ճամփորդության ժամանակ | |

| | | |
|---|---|--|
| <p>մ.թ.52 Գաղիոնը բղեշխ էր մ.թ.52-ից (Գործք 18:12-17)</p> <p>մ.թ.56 (գարուն)</p> <p>մ.թ.56 (ձմեռ) կամ մ.թ.57 (ձմեռ)</p> | <p>Կորնթոսում տասնութ ամիս մնաց (Գործք 18:1-11)</p> <p>բ. Պողոսը մինչ Եփեսոսում էր լսում է եկեղեցում առկա խնդիրների մասին երկու աղբյուրներից՝ (1) Քլոետի ընտանիքից, 1 Կորն. 1:11 և (2) Ստեփանոսից, Փորտունատոսից և Աքայիկոսից, 1 Կորն. 16:17: Ըստ երևույթին նրանք նամակը բերել են Կորնթոսի տնային եկեղեցիներից, որը հարցեր էր պարունակում:</p> <p>գ. Պողոսը հրատապ, ցավալի այց կատարեց Կորնթոս (Գործքում գրված չէ, տես՝ 2 Կորնթ. 2:1): Այն հաջողություն չունեցավ, սակայն երդվեց, որ կվերադառնա:</p> | <p>ա. 1 Կորնթ. 5:9-11 կարծես վերաբերում է եկեղեցում մի անբարո իրավիճակի վերաբերյալ նամակի: Նամակն անհայտ է, թեև (1) ոմանք ենթադրում են, որ 2 Կորնթ. 6:14-7:1 դրա մի մասն է կամ (2) որ 2 Կորնթ. 2:3,4,9 նամակագրական անցյալ աորիստ են և վերաբերում են 2 Կորնթացիներին:</p> <p>բ. Պողոսը պատասխանում է այս հարցերին (1 Կորնթ. 7:1,25; 8:1; 12:1; 16:1,2) գրելով 1 Կորնթացիների նամակը: Տիմոթեոսը (1 Կորնթ. 4:17) պատասխան նամակը Եփեսոսից (1 Կորնթ. 16:8) տանում է Կորնթոս: Տիմոթեոսին չէր հաջողվել լուծել եկեղեցում առկա խնդիրները:</p> <p>գ. Պողոսը խիստ նամակ գրեց (տես՝ 2 Կորնթ. 2:3-4:9; 7:8-12) կորնթացիների</p> |
|---|---|--|

| | | |
|---------------------------|---|--|
| <p>մ. թ. 57-58 (ձմեռ)</p> | <p>դ. Պողոսը ծրագրեց հանդիպել Տիտոսին Տրովադայում, սակայն Տիտոսը չեկավ, ուստի Պողոսը մեկնեց Մակեդոնիա (2 Կորնթ. 2:13; 7:5, 13), հավանաբար Փիլիպե (տես՝ MSS B^c, K, L, P):</p> <p>ե. Պողոսի արձանագրված վերջին այցը Կորնթոս կարծես թե վերաբերում է Գործք 20:2-3-ին: Չնայած որ անվանապես չի նշվում Կորնթոս քաղաքը, ենթադրվում է, որ դա հենց Կորնթոսն է եղել: Չմոռան ամիսներին նա մնաց այնտեղ:</p> | <p>տնային եկեղեցիներին, որը Տիտոսը հասցրեց տեղ (2 Կորնթ. 2:13; 7:13-15):</p> <p>դ. Նա գտավ Տիտոսին և իմացավ, որ եկեղեցին արձագանքել է նրա առաջնորդությանը, իսկ դրանից հետո գրեց 2 Կորնթացիների թուղթը մեծ երախտագիտությամբ (7:11-16): Այն ուղարկեց Տիտոսի ձեռքով:</p> <p>ե. 1-9 և 10-13 գլուխների միջև եղած տրամադրության նկատելի փոփոխությունը գիտնականները բացատրում են որպես Կորնթոսի տնային եկեղեցիներից ստացած վատ լուրերի (հնարավոր է վերսկսվեց նախորդ հակառակությունը և ավելացան նորերը) հետևանք, այն բանից հետո, երբ գրվեցին 1-9 գլուխները (Ֆ. Ֆ. Բրյուս) կամ (2) 1-9 գլուխները Պողոսի պատգամն է Կորնթոսի հավատարիմ հավատացյալներին, մինչ 10-13 գլուխները Պողոսի պատգամն է Կորնթոսում գտնվող ապատամբ հավատացյալներին (ըստ Չ. Վ. Մակգորմանի):</p> |
|---------------------------|---|--|

IV. ՔԱՆԻ ՆԱՄԱԿ Է ԳՐԵԼ ՊՈՂՈՍԸ ԿՈՐՆԹՈՍԻՆ

Ա. Միայն երկուսը՝ 1 և 2 Կորնթացիների նամակները

Բ. Երեքը, որից մեկը կորել է

Գ. Չորսը, որից երկուսը կորել են

Դ. Մի քանի ժամանակակից գիտնականներ այդ կորած նամակները տեսնում են 2 Կորնթացիների թղթում՝

1. նախորդ նամակը (1 Կորնթ. 5:9) 2 Կորնթ. 6:14-7:1-ում
2. խիստ նամակը (2 Կորնթ. 2:3-4,9; 7:8-12) 2 Կորնթ. 10-13-ում:

Ե. Հինգը, և որպես հինգերորդ նամակ 2 Կորնթ. 10-13 գլուխները, որը ուղարկվել է Տիտոսի կողմից մյուս վատ լուրերը ստանալուց հետո:

2. Ես հակված եմ Գ. տարբերակին (տե՛ս նաև Հ. Ս. Թիսենի *Նոր Կտակարանի Ներածություն*, էջ՝ 209 /H. C. Thiessen, *Introduction to the New Testament*/)

1. նախորդ նամակը – կորած (1 Կորնթ. 5:9)
2. 1 Կորնթացիների
3. խիստ նամակը – կորած (2 Կորնթ. 2:1-11, 7:8-12)
4. 2 Կորնթացիների

V. ԿՈՐՆԹՈՍՈՒՄ ՊՈՂՈՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ա. 2 Կորնթացիներում խնդիրը կարծես թե մի քանի ֆրակցիաների հետ էր, որոնք գերիշխում էին տարբեր տնային եկեղեցիներում (պարտադիր չէ հենց 1 Կորնթացիներում առկա միևնույն երկպառակված խմբերը, սակայն հավանական է):

1. մի խումբ հավատացյալներ սատարում էին ավանդական հռոմեական մշակույթն ու սովորույթները
2. մի խումբ հավատացյալներ սատարում էին ավանդական հունական հռետորական ուսմունքները
3. մի խումբ հավատացյալներ սատարում էին ավանդական հրեական մշակույթն ու սովորույթները
4. մի խումբ հավատացյալներ էլ անգոր էին և հասարակությունից անջատված

Բ. Պաղեստինից հրեա խռովարարների ժամանումը պատճառ հանդիսացավ հավելյալ հակառակության (տես՝ 2 Կորնթ. 10-13): Նրանք տարբերվում էին Գաղատացիների հուդաիստներից և կողոսացիների հրեա-հույն օրինապահներից: Հավանաբար նրանք հռետորության մեջ կրթված, խարիզմատիկ ուսուցիչներ էին, ինչպես Ապոլոսը:

Գ. Ահա մի քանի մեղադրանքներ, որոնք ներկայացվել են Պողոսի դեմ, որոնց նա պատասխանում է.

1. Պողոսը փոփոխական էր (այսինքն՝ նրա ճամփորդական ծրագրերը փոխվեցին, տես՝ 1:15)
2. Պողոսը հզոր գրագիր էր, սակայն տկար էր խոսքի մեջ (տես՝ 10:10)
3. Պողոսը փայլուն հռետոր չէր (տես՝ 10:10; 11:6)
4. Պողոսը գումար չէր ընդունում (տես՝ 11:7; 12:13)
5. Պողոսը իրական Առաքյալ չէր (տես՝ 11:5, 13; 12:4)
6. Պողոսը ուղղափառ չրեա չէր (տես՝ 11:21)
7. Պողոսը չուներ ճիշտ հայտնություն և հոգևոր տեսիլքներ, ինչպես իրենք (տես՝ 12:1)

VI. 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԸ ԳՐԻ ԱՌՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Գոհանալու Պողոսին որպես առաջնորդ ընդունելու հարցում եկեղեցու կողմից դրական արձագանքի համար (տես՝ 2:12,13; 7:11-16)

Բ. Պատրաստվելու Պողոսի երրորդ այցի համար (տես՝ 10:1-11): Նրա երկրորդ այցը ըստ երևույթին ցավոտ և անհաջող էր ստացվել: 10-13 գլուխներում ակնհայտ փոխվում է նրա զգացմունքների տոնայնությունը: Ոմանք պնդում են, որ Պողոսի կողմից Կորնթոսի եկեղեցուն ուղղված մի քանի նամակների միահյուսման արդյունքում է ստացվել 2 Կորնթացիներին ուղղված թուղթը: Նաև հնարավոր է, որ Պողոսն այս նամակը գրել է այն բանից հետո, երբ լսել է կորնթացիների փոխհարաբերություններում մի նոր հակառակության ալիք բարձրանալու մասին: Այն ամբողջովին զգայական հավելված է:

Գ. Հերքելու հրեա շրջիկ սուտ վարդապետներին (տես՝ 10-12), որոնք մերժում էին Պողոսի՝

1. անձը
2. շարժառիթները

3. իշխանությունը
4. մատուցման ոճը
5. ավետարանի պատգամը

VII. ՀՆԱՐԱՎՈՐ ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Ա. Այս գրքի ընդհանուր նկարագրությունը ներկայացնելը չափազանց բարդ է՝

1. տրամադրության խիստ փոփոխության,
2. տարատեսակ թեմաների,
3. միտքն ընդլայնող փակագծերի առկայության (2:14-7:1 կամ 7:4),
4. տվյալ պահի իրավիճակի վերաբերյալ մեր սահմանափակ տեղեկատվության պատճառով:

Բ. Այնուհանդերձ, գոյություն ունեն առնվազն երեք հիմնական թեմատիկ բաժիններ՝

1. Պողոսը Տիտոսի պատգամին պատասխանում է և կազմակերպում իր ճամփորդական ծրագրերը՝ գլուխ 1-7 (ընդարձակ հավելում փակագծերի տեսքով տրված է Պողոսի առաքելական ծառայության վերաբերյալ, 2:14-7:1 կամ 7:4)
2. Պողոսի կողմից քաջալերական խոսք, որպեսզի իրականացնեն Երուսաղեմի եկեղեցու համար սիրո ընձանների հանգանակությունը, գլուխ 8-9
3. Պողոսի առաջնորդության պաշտպանությունը, գլուխ 10-13

Գ. Ես հաստատում եմ 2 Կորնթացիներին ուղղված նամակի միաբանությունը, քանի որ՝

1. քանի որ ոչ մի հունարեն ձեռագրում չկա որևէ ակնարկ այս նամակի անհամաձայնության վերաբերյալ
ա. չկան գրական բաժինների տարբերություններ
բ. չկա որևէ ձեռագիր, որը չի պարունակում բոլոր տասներեք գլուխները
2. Չնայած որ 2 Կորնթ. 13 ըստ երևույթին անհայտ է եղել Հռոմեացի Կլեմենտին մ. թ. 96 թ-ին, այն մեջբերվել է Պոլիկարպի կողմից մ. թ. 105թ-ին:
3. Գիրքը հասկանալի է որպես ամբողջական բաժին: Կարծես թե որոշակի թեմաներ կան, որոնք ցույց են տալիս գրքի միաբանությունը, ինչպես օրինակ «չարչարանքը»:
4. Ներքին վկայությունը չափազանց սահմանափակ է պաշտպանելու 2 Կորնթացիների գրքի արմատական տարանջատումը:

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ծնորի և խաղաղություն, 1:2
2. «մեր Տեր Հիսուսի օրը», 1:14
3. կնքված, 1:22
4. «հաղթության է առաջնորդում», 2:14
5. «բույրը», 2:14
6. «Աստծո Խոսքը խարդախել», 2:17
7. «հանձնարարական թղթեր», 3:1
8. «ինչպես Տիրոջ Հոգուց», 3:18
9. արտաքին մարդը, 4:16
10. ներքին մարդը, 4:16
11. երկրավոր վրան, 5:1
12. «Հոգու գրավականը», 5:5
13. նոր արարած, 5:17
14. հաշտված, 5:18
15. «մեր պատերազմի զենքերը մարմնավոր չեն», 10:4
16. լույսի հրեշտակ, 11:14
17. երրորդ երկինքը, 12:2
18. դրախտ, 12:4
19. սուրբ համբույր, 13:12

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. «այս աշխարհի աստվածը», 4:4
2. Բեյիար, 6:15
3. Տիտոս, 7:6

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԶԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Աքայիա, 1:1
2. Ասիա, 1:8
3. Մակեդոնիա, 1:16
4. Հուդա, 1:16
5. Կորնթոս, 1:23
6. Տրովադա, 2:12
7. Դամասկոս, 11:32

XI. ԶՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են 1:20-ի աստվածաբանական նկատառումները:
2. Ձեր իսկ խոսքերով բացատրե՛ք 3:6:
3. Գլուխ 3-ում ի՞նչ երկու նշանակությամբ է կիրառված «քող» տերմինը:
4. Թվարկե՛ք Պողոսի չարչարանքները ըստ 4:7-11; 6:4-10; 11:23-28 խոսքերի:
5. Քրիստոսի դատաստանի գահի առջև հավատացյալները հայտնվելո՞ւ են: Եթե այո, ապա ինչի՞ համար:
6. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք 5:14-15-ի հոգևոր սկզբունքը:
7. Ի՞նչ վարդապետություն է սահմանում 5:21-ը:
8. Թվարկե՛ք 8-9 գլուխներում առկա նվիրաբերելու՝ տալու սկզբունքները:
9. Ինչպե՞ս են Պողոսի թշնամիները բնութագրում իրեն 10:10 խոսքում:
10. Ո՞ւմ նկատի ունեն Պողոսը 11:4-ում:
11. Թվարկե՛ք այն կերպերը, որով Պողոսն իրեն համեմատում է ուրիշների հետ 11:21-30 խոսքերում:
12. Ո՞րն էր Պողոսի մարմնի խայթոցը (12:7):

ԳԱՂԱՏԱԳԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Գաղատացիների գիրքը միայն շնորհքով, միայն հավատքի միջոցով արմատապես նոր և ճիշտ փրկության ճշմարտության ամենապարզ արտահայտումներից մեկն է: Հաճախ այն կոչվում է «Քրիստոնեական Ազատության Մագնա Կարտա /Մեծ Խարտիա/» / “The Magna Carta of Christian Liberty”/:

Բ. Այս նամակը թեժացրեց Բողոքական Բարեփոխման կրակը:

1. Մարթին Լյութերն ասում էր, «Գաղատացիների փոքրիկ գիրքը իմ նամակն է. ես նշանված եմ այս գրքի հետ. այն իմ կինն է»:
2. Ջոն Ուեսլին իր հարատև խաղաղությունն էր գտել Գաղատացիներից մի քարոզի միջոցով:
3. Քրիստոսի Վոգանն իր *Մերտողության Ուղեցույց Մեկնաբանություն* /Curtis Vaughan *Study Guide Commentary*/ գրքի 11 էջում գրել է, «Քիչ գրքեր են խորը ազդեցություն թողել մարդկանց մտածելակերպի վրա, նմանօրինակ նշանակալիությամբ ձևավորել մարդկային պատմության ընթացքը կամ շարունակել այսքան տեղին պատասխանել մերօրյա կյանքի ամենակարևոր կարիքներին»:

Գ. Այս վարդապետական ուղղվածության նամակը, հավանաբար առաջին հերթին Պողոսի կողմից, հանդիսանում էր Հռոմեացիների մեջ առկա հավատքով արդարանալու վարդապետության զարգացման նախաբանը, ի դեմս Հուդայականության մեջ շեշտադրվող Օրենքը պահելուն:

1. Փրկությունը չի կարող լինել թե՛ Օրենքի և թե՛ շնորհքի մեջ:
2. Փրկությունը պետք է գտնել կա՛մ Օրենքի, կա՛մ էլ շնորհքի միջոցով:
3. Ծշմարիտ դարձին հետևում է Քրիստոսանմանությունը:
4. Զգուշացեք Քրիստոնեական լեզվախմբից:

Դ. Այս բացարձակ ճիշտ փրկությունը՝ միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով, մեր օրերի համար ծայրաստիճան անհրաժեշտություն են՝ եսի ու գործերի վրա կենտրոնացած կրոնական խղճմտանքի ներկայումս աննկատ վայրէջքի պատճառով: Ամեն դարաշրջանում Աստծո նախաձեռնող, անձնագոհ, անպայմանական սիրո պարզ ճշմարտությունը միջնորդվել է մարդկանց ապաշխարության միջոցով և խոնարհ հավատքը փորձվել է: Սա ասել չէ, թե սուտ վարդապետները փրկության հարցում չէին ընդունում Քրիստոսի կենտրոնական դերը, սակայն դրան ավելացնում էին որոշ բաներ: Խնդիրը նրանում չէ, թե ինչ ենք ավելացնում, այլ որ ավելացնում ենք ինչ-որ բան:

II. ՀԵՂԻՆԱԿ

Պողոսը որպես այս նամակի հեղինակ երբեք էլ լրջորեն կասկածի տակ չի առնվել, քանի որ այն Պողոսի ժողովածուի մեջ կարևոր պլուս է համարվում: Գաղատացիներին ուղղված նամակը շատ ինքնակենսագրական և անձնական է: Այն շատ զգայական և միևնույն ժամանակ բավականին տրամաբանական է:

III. ՏԱՐԵԹԻՎԸ ԵՎ ՍՏԱՅՈՂՆԵՐԸ

Ա. Հիմնական բովանդակության այս երկու կողմերը պետք է միասին դիտարկել, քանի որ նամակը ստացողների ինքնության վերաբերյալ երկու իրար հակասող տեսությունները ազդում են նամակի տարեթվի վրա: Երկու տեսություններն էլ ունեն տարամաբանական կշիռ և աստվածաշնչյան սահմանափակ ապացույցներ:

Բ. Այդ երկու տեսություններն են՝

1. Ավանդական տեսությունը, որը մինչև տասնութերորդ դարն անանում էր:
ա. Այն կոչվում էր «Հուսիսային Գաղատացիների Տեսություն»:

- բ. Այս տեսությունը ենթադրում է, որ «Գաղատիա» տեղանքը վերաբերում է Թուրքիայի հյուսիս-կենտրոնական հարթավայրում ապրող էթնիկ գաղատացիներին (տես՝ 1 Պետ. 1:1): Այս էթնիկ գաղատացիները Կելտերն էին (հունարեն՝ *Keltoi* կամ լատիներեն՝ *Gall*), որոնք ներխուժեցին այս տարածքները Ք.Ա. երրորդ դարում: Նրանք կոչվում էին «Գալա-հույներ», որպեսզի տարբերվեն իրենց արևմտաեվրոպական եղբայրներից: Նրանք պարտություն կրեցին Ք.Ա. 230թ-ին Պերգամոնի Թագավոր Ատալուս I-ի կողմից: Նրանց աշխարհագրական ազդեցությունը սահմանափակված էր հյուսիս-կենտրոնական Փոքր Ասիայով կամ ժամանակակից Թուրքիայի տարածքով:
- գ. Եթե համարենք, որ նամակը ուղղված է այս էթնիկ խմբին, ապա տարեթիվը պետք է որ լինի 50-ականների կեսերին՝ Պողոսի երկրորդ կամ երրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ: Պողոսի ճամփորդության ընկերներն էին Շիդան և Տիմոթեոսը:
- դ. Գաղ. 4:13-ում ոմանք Պողոսի հիվանդությունը կապում են մալարիայի հետ: Նրանք պնդում են, որ Պողոսը զնացել է հյուսիսային բարձրավանդակները, որպեսզի զերծ մնա ճահճոտ, մալարիայով վիստացող, ծովեզրյա ցածրավանդակներից:
2. Երկրորդ տեսությունը առաջ է քաշվել Սր. Ու. Մ. Ռամզեյի կողմից, *Սր. Պողոսը ճանապարհորդը և հռոմեացի քաղաքացին*, /Sir Wm. M. Ramsay, *St. Paul the Traveller and Roman Citizen*, New York: G. P. Putnam's Sons, 1896/:
- ա. Ինչպես որ ավանդական տեսությունը «Գաղատիան» սահմանում է որպես էթնիկ, այս տեսությունը սահմանում է այն ադմինիստրատիվ: Կարծես թե Պողոսը հաճախ էր կիրառում հռոմեական նահանգային անուններ (տես՝ 1 Կորնթ. 16:19; 2 Կորնթ. 1:1; 8:1, և այլն): «Գաղատիա» հռոմեական նահանգը զբաղեցնում էր ավելի ընդարձակ տարածք, քան էթնիկ «Գաղատիան»: Այս էթնիկ Կելտերը ավելի վաղ ժամանակներում սատարել էին Հռոմին և պարզևատրվել տեղական ինքնավարության և ընդլայնված տարածքային ավելի մեծ արտոնությամբ: Եթե այս ընդարձակ տարածաշրջանը հայտնի էր որպես «Գաղատիա», ապա հավանական է, որ Գործք 13-14-ում արձանագրված Պողոսի առաջին միսիոներական ճամփորդությունը Պիսիդիայի Անտիոքի, Լյուստրայի, Դերբեի և Իկոնիումի հարավային քաղաքները հանդիսանում են այս եկեղեցիների տեղանքը:
- բ. Եթե համարենք այս «Հարավային տեսությունն» է ճիշտ, ապա տարեթիվը շատ ավելի վաղ շրջանում կլինի՝ Գործք 15-ում արձանագրված «Երուսաղեմի Խորհրդին» ավելի մոտ ժամանակ, բայց ոչ նախքան դա, որտեղ քննարկվեց հենց այն նույն թեման, որ քննարկվում է Գաղատացիներում: Երուսաղեմի Խորհուրդը տեղի է ունեցել մ. թ. 48-49թթ և նամակը հավանաբար գրվել է այդ նույն ժամանակահատվածում: Եթե սա ճիշտ է, ապա Գաղատացիներին ուղղված նամակը մեր Նոր Կտակարանում Պողոսի գրած առաջին նամակն է:
- գ. Հարավային Գաղատացիների տեսության մի քանի ապացույցներ՝
- (1) Անվանապես նշված չեն Պողոսի ճամփորդական ընկերներից և ոչ մեկը, այլ միայն Բառնաբասը՝ երեք անգամ (տես՝ 2:1,9,13): Սա համընկնում է Պողոսի առաջին միսիոներական ճամփորդության հետ:
 - (2) Նշվում է, որ Տիտոսը թվատված չէր (տես՝ 2:1-5): Սա համընկնում է Գործք 15 գլխի Երուսաղեմի Խորհրդից առաջ տարեթվի հետ:
 - (3) Այն, որ նշվում է Պետրոսը (տես՝ 2:11-14) և հեթանոսների հետ կապված փոխհարաբերությունների խնդիրը, սա համընկնում է Երուսաղեմի Խորհրդից առաջ տարեթվի հետ:
 - (4) Երբ հանգանակությունը տարվում է Երուսաղեմ, տարբեր շրջաններից Պողոսի մի քանի գործընկերներ են թվարկվում (տես՝ Գործք 20:4): Սակայն հյուսիսային Գաղատիայի քաղաքներից ոչ ոք չի նշվում, չնայած, մենք գիտենք, որ այս էթնիկ Գաղատացի եկեղեցիները մասնակցել են այդ հանգանակությանը (տես՝ 1 Կորնթ. 16:1):
3. Այս տեսությունների վերաբերյալ տարբեր փաստարկների շուրջ մանրակրկիտ ներկայացման համար առաջարկում են կարդալ տեխնիկական մեկնաբանության գրքեր: Դրանք բոլորն էլ ունեն հավաստի փաստարկներ, սակայն այս պահի դրությամբ դեռևս երկկողմ համաձայնության չեն եկել, իսկ «Հարավային Տեսությունը» կարծես թե լավագույնս է համապատասխանում բոլոր փաստերին:

Գ. Գաղատացիների նամակի կապը Գործք Առաքելոցի հետ՝

1. Պողոսը հինգ անգամ այցելեց Երուսաղեմ, ըստ Ղուկասի Գործք Առաքելոց գրքի արձանագրության՝
 - ա. 9:26-30, իր դարձից հետո
 - բ. 11:30; 12:25; հեթանոս եկեղեցիների կողմից Երուսաղեմում սովի ժամանակ օգնություն հասցնելուց
 - գ. 15:1-30, Երուսաղեմի Խորհուրդը
 - դ. 18:22, կարճ այցելություն
 - ե. 21:15բ, հեթանոսների մեջ իր գործի մեկ այլ բացատրություն
2. Գաղատացիների նամակում Երուսաղեմ կատարած երկու այց կա նշված.
 - ա. 1:18, երեք տարի անց
 - բ. 2:1, տասնչորս տարի անց
3. Ամենայն հավանականության Գործք 9:26-ը կապ ունի Գաղ. 1:18-ի հետ: Գործք 1:18 և 15:1բ չարձանագրված հանդիպումների այն տեսարաններն են, որոնք նշվում են Գաղ. 2:1-ում:
4. Մի քանի տարբերություններ կան Գործք 15 ր Գաղ. 2-ի դեպքերի միջև, սակայն դրա պատճառը՝
 - ա. տարբեր տեսանկյուններն են
 - բ. Ղուկասի և Պողոսի ունեցած տարբեր նպատակները
 - գ. այն փաստը, որ Գաղ. 2 տեղի է ունեցել Գործք 15-ում նկարագրված հանդիպումից որոշ ժամանակ առաջ, սակայն այդ առիթով:

Դ. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ. Բրյուսի և Մյուրի Հարրիսի, որոշակի ուղղումներով՝

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|-------------------------|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |
| 3. 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. 2 Կորնթացիներին | 56 | Մակեդոնիա | 20:2 |
| 6. Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. Բանտից նամակները՝ | | | |
| Կողոսացիներին | 60-ի սկիզբ | | |
| Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| Փիլիպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. Չորրորդ միսիոն . | | | |
| նամփոթությունը | | | |
| 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Մակեդոնիա | |
| Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) | |
| 2 Տիմոթեոսին | 64 մ.թ. 68) | Հռոմ | |

IV. ՆԱՄԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Մուտ վարդապետների տարածած խոսքի վերաբերյալ Պողոսը դիտարկում է անհանգստության երեք տարբեր կետեր: Այս հերետիկոսներին անվանում էին Հուդայիստներ, քանի որ նրանք հավատում էին, որ եթե ինչ-որ մեկը ցանկանում է դառնալ Զրիստոնյա, առաջին հերթին պետք է հրեա դառնա (տես՝ 6:12): Նրա անհանգստությունը պատվում էր Հուդայիստների մեղադրանքների շուրջ՝

1. Պողոսը մյուս Տասներկուսի պես իրական Առաքյալ չէր (տես՝ Գործք 1:21-22), ուստի և նա կախված էր նրանց կամ առնվազն Երուսաղեմի Մայր Եկեղեցու իշխանությունից:
2. Պողոսի պատգամը տարբերվում էր նրանց պատգամից, ուրեմն կեղծ որ: Սա կարծես թե անմիջապես կապված էր «առանց Օրենքի՝ հավատքի միջոցով արդարացման» գաղափարին: Երուսաղեմի Առաքյալները իրենց անձնական կյանքերում դեռևս շատ հրեական մտածելակերպով էին:

3. Ինչ-որ առումով այս եկեղեցիների հետ կապված առկա էր ազատականության տարր (տես՝ 5:18-6:8): Թե ինչպես է սա կոնկրետ բացատրվում, վիճելի է: Ոմանք Պողոսի նամակում նույնիսկ դիտարկում են թիրախավորված երկու խմբի՝ հուդախստներն ու գնոստիկները (տես՝ 4:8-11): Սակայն ավելի ճիշտ կլինի այս համարները վերագրել հեթանոսական ծեսերին: Հրեաները մտահոգված էին հեթանոսների ապրելակերպի շուրջ: Ինչպե՞ս էր Պողոսի ներկայացրած բացարձակ ձրի շնորհքը կապված հեթանոսական կռապաշտության և անկարգության հետ:

Բ. Վարդապետորեն այս նամակը շատ նման է Պողոսի Հռոմեացիներին ուղղված նամակին: Այս երկու գրքերը բովանդակում են տարբեր միջավայրերում ձևավորված և կրկնվող Պողոսի հիմնական վարդապետությունները:

V. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Նախաբան, 1:1-10

1. գրքի ընդհանուր ներածությունը
2. գիրքը գրի առնելու հանգամանքը

Բ. Պողոսը պաշտպանում է իր Առաքյալի հեղինակությունը, 1:11-2:14

Գ. Պողոսը պաշտպանում է իր ավետարանի վարդապետական ճշմարտությունները, 2:15-4:20

Դ. Պողոսը պաշտպանում է իր ավետարանի գործնական նպատակները, 5:1-6:10

Ե. Անձնական ափոփում և փակման խոսք, 6:11-18:

VI. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «այս ներկայիս չար դարը», 1:4
2. «տարբեր ավետարան», 1:6
3. Հուդայականություն, 1:13
4. հայրերի ավանդույթները, 1:14
5. «քավ լիցի», 2:17
6. «դուք անմիտ Գաղատացիներ», 3:1,3
7. հրապուրեց, 3:1
8. «երթե անգամ իզուր էր», 3:4; 4:11
9. «անեծքի տակ», 3:10
10. «նրա սերմը», 3:16
11. «հաստատվեց հրեշտակների կողմից՝ միջնորդի ձեռքով», 3:19
12. «մենք Օրենքի տակ էինք պահված», 3:23
13. «տարրական բաներ», 4:3,9
14. Աքքա, 4:6
15. «մարմնի տկարություն», 4:13
16. «աղախնից . . . ազատ կնոջից», 4:23
17. այլաբանորեն, 4:24
18. «Հոգով քայլեցե՛ք», 5:16
19. «Հոգու պտուղը», 5:22
20. «ինչպիսի մեծ գրերե՛վ», 6:11
21. «Տեր Հիսուսի նշանները», 6:17

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. «երկնքից մի հրեշտակ», 1:8
2. Կեփաս, 1:18
3. Բառնաբաս, 2:1
4. Տիտոս, 2:2
5. «նրանց մեջ հարգանք վայելողները», 2:2,6

6. «սուտ եղբայրներ», 2:4
7. «որոնք այուներ էին համարվում», 2:9
8. «թլփատվածներ», 2:12
9. «խնամակալներ և ուսուցիչներ», 4:2
10. Հագար, 4:25

VIII. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Գաղատիայի եկեղեցիները, 1:2
2. Արարիա, 1:17
3. Դամասկոս, 1:17
4. Սիրիա, 1:21
5. Կիլիկիա, 1:21
6. Անտիոք, 2:11

IX. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ձեր իսկ խոսքերով բացատրե՛ք 1:11-12:
2. Ե՞րբ էր Պողոսը հալածում Աստծո եկեղեցուն (1:13):
3. Ինչո՞ւ էին ոմանք ուզում, որ Տիտոսը թլփատվեր (1:13):
4. Բացատրե՛ք 2:6-ը ձեր բառերով:
5. Գաղատացիների 2:16 կարող է հանդիսանալ ամբողջ գրքի գլխավոր թեման: Ինչո՞ւ:
6. Բացատրե՛ք 2:20 ձեր բառերով:
7. Ինչպե՞ս կպատասխանեք 3:3-ի Պողոսի հարցը:
8. Բացատրե՛ք Պողոսի կողմից Գաղ. 3:6-8-ում Ծննդ. 15:6-8 խոսքի մեջբերման իմաստը:
9. Ինչպե՞ս էր Հիսուսը անիծվել (3:13):
10. Համաձայն 3:19-ի ո՞րն է ՀԿ-ի նպատակը:
11. Ինչո՞վ է 3:22-ը ամփոփիչ լավ խոսք:
12. Ինչո՞ւ է 3:28-ը այդքան կարևոր ճշմարտություն:
13. Ի՞նչ էր 4:13-ում նշված Պողոսի հիվանդությունը:
14. Ո՞րն է Զրիստոնեության նպատակը (4:19):
15. Ի՞նչն է 5:3-ում Պողոսի ներկայացրած աստվածաբանական նպատակը:
16. Բացատրե՛ք 5:9-ի առակը:
17. Ի՞նչ է նշանակում 5:4-ը՝ «դուք շնորհքից ընկել եք»:
18. Ի՞նչ կապ ունի 5:13-ը Հռոմ. 14:1-15:13-ի հետ:
19. Ձեր բառերով բացատրե՛ք 5:23:
20. Ինչպե՞ս պետք է հավատացյալները վերաբերվեն մեղանչող հավատացյալներին (6:1-5):
21. Ի՞նչ հոգևոր սկզբունքն է սահմանված 6:7-ում:
22. Ի՞նչ առնչություն ունի 6:10-ը հավատացյալ համայնքից դուրս գտնվող մարդկանց հետ:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

- Ա. Այս գրքի ճշմարտությունները մեծ ազդեցություն են ունեցել շատ սուրբերի կյանքերի վրա՝
1. Սամուել Զորիջը այն կոչում է «մարդու աստվածային ստեղծագործությունը»
 2. Ջոն Կալվինն այս գիրքը Աստվածաշնչի իր ամենասիրելի գիրքն էր կոչում
 3. Ջոն Նոքսը խնդրեց, որ իր մահվան անկողնու մոտ ընթերցվի Եփեսացիների թղթից Կալվինի քարոզները
- Բ. Այս գիրքը Պողոսի աստվածաբանության «թագազարդ» կամ «գլխավոր քար»։ Պողոսի բոլոր մեծ թեմաները արտահայտված են հրաշալի ամփոփիչ տեսքով։
- Գ. Ինչպես որ Աստված օգտագործեց Հռոմեացիների գիրքը Բարեփոխում գրգռելու համար, այնպես էլ Նա օգտագործելու էր Եփեսացիների գիրքը վերամիավորելու շեղված Զրիստոսաբանությունը։ Զրիստոսի մեջ հավատացյալների ունեցած միաբանությունը և ընդհանրությունները մեծ հաշվով ստվերում է նրանց տարբերությունները։

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Պողոս

1. Ցայտուն կերպով գրված է 1:1, 3:1 համարներում
2. Բանտարկության մասին խոսքերը (հավանաբար Հռոմում) 3:1; 4:1; 6:20
3. Գրեթե միաձայն եկեղեցական ավանդույթը՝
 - ա. Հռոմեացի Կլեմենտը (մ. թ. 95 նամակ է գրել Կորնթոսին, որտեղ մեջբերվում է 4:4-6
 - բ. Իգնատիոսը (մ. թ. 30-107թթ) մեջբերում է 1:9; 2:19; 3:4-9 խոսքերը
 - գ. Պոլիկարպը (մ. թ. 65-155թթ)՝ Հովհաննես Առաքյալի աշակերտը, Չմյուռնիայի երեցը, հաստատում է Պողոսի հեղինակությունը
 - դ. Իրենեոսը (մ. թ. 130-200թթ) հաստատում է Պողոսի հեղինակությունը
 - ե. Ալեքսանդրիացի Կլեմենտը (մ. թ. 150-210թթ) հաստատում է Պողոսի հեղինակությունը։
4. Այն առկա է՝
 - ա. Մարկիոնի (որը Հռոմ եկավ մ. թ. 140-ականներին) կողմից ընդունված գրքերի ցանկում
 - բ. Մուրատորիան Ձեռագրում (մ. թ. 180-200թթ)՝ Հռոմից կանոնավոր գրքերի մի ցանկ և այս գիրքը տեղադրել է Պողոսի գրքերի շարքում։
5. Կողոսացիների և Եփեսացիների նամակների վերջաբանները ունեն 29 բառ, որոնք գրեթե լիովին նույնն են հունարենում (Կողոսացիներում երկու ավել բառ կա)։

Բ. Այլ հեղինակ

1. Երասմուսը առաջինն էր, որ կասկածի տակ առավ այս գրքի Պողոսյան հեղինակությանը, որը հիմնավորում է՝
 - ա. Գրքի ոճով. երկար նախադասությունները, որոնք բնորոշ չեն Պողոսի մյուս նամակներին
 - բ. Անձնական ողջույնի խոսքեր չկան
 - գ. Յուրահատուկ բառապաշարը
2. 18-րդ դարի քննադատ աստվածաբանները սկսեցին հերքել Պողոսի հեղինակությունը՝
 - ա. Մի քանի համարներ կարծես թե երկրորդ սերնդի հավատացյալների կողմից էին, 2:20; 3:5
 - բ. Աստվածաբանական բառերը կիրառված են տարբեր սահմանումներով (օրինակ՝ «առեղծված»)
 - գ. Ցիկլիկ կամ շրջանաձև նամակի ժանրի յուրահատկությունը

Գ. Երասմուսի ներկայացրած կետերի պատասխանները

1. Գրական ոճը տարբերվում է, քանի որ Պողոսը լինելով բանտում, ժամանակ ուներ մտածելու Եփեսացիներին գրելիս:
2. Անձնական ողջույնի խոսքի բացակայությունը բացատրվում է այն փաստով, որ Եփեսացիների նամակը ցիկլիկ էր, այսինքն այն պետք է ուղարկվեր այդ տարածաշրջանում գտնվող շատ եկեղեցիների: Հռոմեական փոստային երթուղին, որի մեջ մտնում էին Եփեսոսը և Լիկոս Գետի Հարթավայրը, կարելի է տեսնել Հայտնություն 2-3-ում: Պողոսը գրել է գույգ նամակ՝ Կողոսացիներին, երեք եկեղեցիներից կազմված հատուկ մի խմբի, որը պարունակում է մի քանի անձնական ողջույնի խոսքեր:
3. Եփեսացիների նամակում բացառիկ բառերի (*hapax legomena*) քանակը ճիշտ նույնն է ինչ Հռոմեացիներին ուղղված նամակում: Նպատակը, թեմայի նյութը, ստացողները և հանգամանքը բացատրում են նոր բառերի կիրառությունը:
4. Պողոսը 1 Կորնթ. 12:28-ում խոսում է «առաքյալների և մարգարեների» մասին, որը նման է 2:20 և 3:5-ին: Ոչ ոք չի հերքում 1 Կորնթացիների նամակի Պողոսյան հեղինակությունը:

III. ԿՈՂՈՍԱԾՑԻՆԵՐԻ ԵՎ ԵՓԵՍԱԾՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԸ

Ա. Կողոսացիների և Եփեսացիների միջև պատմական կապը՝

1. Եպափրասը (Կող. 1:7; 4:12; Փիլիմոն 23) դարձի էր եկել Պողոսի Եփեսոս այցելության ժամանակ (Գործք 19)
 - ա. Նա իր նոր գտած հավատքը իր հետ տանում է հայրենի հող՝ Լիկոս Գետի Հարթավայրը:
 - բ. Նա երեք եկեղեցի է սկսում՝ Հերասպոլիսում, Լավոդիկեում և Կողոսիայիում:
 - գ. Եպափրասը փնտրում է Պողոսին խորհուրդ հարցնելու համար, թե ինչպես կարող է պայքարել հերետիկոսների կողմից հեղեղված աշխարհայացքների դեմ: Պողոսը այդ ժամանակ բանտարկված էր Հռոմում (վաղ 60-ականներին):
2. Կեղծ վարդապետները գալիս են և սկսում ավետարանը ընկղմել հունական օնտոլոգիայով՝
 - ա. հոգին և մատերիան համահավիտենական էին
 - բ. հոգին (Աստված) բարի էր
 - գ. մատերիան (ստեղծագործությունը) չար էր
 - դ. մի շարք էոններ (հրեշտակային աստիճաններ) գոյություն ունեին բարձրյալ բարի Աստծո և ավելի փոքր աստծո միջև, որը ստեղծեց մատերիան:
 - ե. Փրկությունը հիմնված էր գաղտնաբառերի գիտության վրա, որոնք օգնում էին մարդկանց անցնելու էոնների (հրեշտակային աստիճաններ) միջով:

Բ. Պողոսի երկու նամակների միջև գրական կապը՝

1. Պողոսը այս եկեղեցիներում տիրող հերձվածողության մասին, որտեղ նա երբեք անձամբ չէր այցելել, անձամբ լսեց Եպափրասից:
2. Պողոսը գրեց մի հակիրճ անգիջում նամակ, զգայական նախադասություններով, որոնք ուղղված էին կեղծ վարդապետներին: Կենտրոնական թեման Հիսուսի տիեզերական տիրակալությունն էր: Սա հայտնի է որպես Կողոսացիներին ուղղված Պողոսի նամակ:
3. Ըստ երևույթին, անմիջապես Կողոսացիներին ուղղված նամակը գրելուց հետո, բանտարկության ժամանակը ծախու առնելով, նա ծավալել է այս նույն թեմաները: Եփեսացիներին ուղղված նամակին հատկանշական են երկար նախադասությունները և աստվածաբանորեն արժարժվող գաղափարները (1:3-14, 15-23; 2:1-10, 14-18, 19-22; 3:1-12, 14-19; 4:11-16; 6:13-20): Այս գիրքը Կողոսացիներին ուղղված նամակը ընդունում է որպես մեկնարկային կետ և այնտեղից դուրս բերում աստվածաբանական կիրարկումներ: Կենտրոնական թեման Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանությունն է, որը հակասում էր գնոստիկ հերձվածողության գաղափարներին:

Գ. Գրական և աստվածաբանական կառուցվածքի կապը

1. Հիմնական կառուցվածքի նմանությունը՝
 - ա. երկուսն էլ ունեն նմանատիպ նախաբան
 - բ. ունեն վարդապետական բաժիններ, որոնք գործ ունեն հիմնականում Քրիստոսի հետ

գ. ունեն գործնական բաժիններ, որոնք քաջալերում են Քրիստոնեական ապրելակերպը՝ կիրառելով միևնույն կատեգորիաները, տերմինները և արտահայտությունները:
 դ. երկուսն էլ փակման խոսքում հունարենում ունեն ճիշտ նմանօրինակ իրար հաջորդող 29 բառեր, և միայն երկու տարբեր բառեր, որոնք ավելացված են Կողոսացիների նամակում:

2. Բառերի կամ կարճ արտահայտությունների նմանությունները՝

| | |
|----------------------------|--|
| Եփ. 1:1գ և Կող. 1:2ա | «հավատարիմ» |
| Եփ. 1:4 և Կող. 1:22 | «սուրբ և անարատ» |
| Եփ. 1:7 և Կող. 1:14 | «փրկություն . . . ներում» |
| Եփ. 1:10 և Կող. 1:20 | «ամեն բան . . . երկինք . . . երկիր» |
| Եփ. 1:15 և Կող. 1:3-4 | «լավեց . . . սեր բոլոր սուրբերի հանդեպ» |
| Եփ. 1:18 և Կող. 1:27 | «փառքի ճոխությունը» |
| Եփ. 2:1 և Կող. 1:13 | «դուք մեռած էիք» |
| Եփ. 2:16 և Կող. 1:20 | «հաշտվել . . . խաչ» |
| Եփ. 3:2 և Կող. 1:25 | «տնտեսություն» |
| Եփ. 3:3 և Կող. 1:26,27 | «խորհուրդ» |
| Եփ. 4:3 և Կող. 3:14 | «միաբանություն» |
| Եփ. 4:15 և Կող. 2:19 | «գլուխ» և «անել» |
| Եփ. 4:24 և Կող. 3:10,12,14 | «հագեք . . . » |
| Եփ. 4:31 և Կող. 3:8 | «բարկություն», «զայրույթ», «ոխ», «բամբասանք» |
| Եփ. 5:3 և Կող. 3:5 | «կռակաշտություն» |
| Եփ. 5:6 և Կող. 3:6 | «Աստծո զայրույթը» |
| Եփ. 5:16 և Կող. 4:5 | «ժամանակը ծախու առեր» |

3. Ճիշտ միևնույն բառերն ու արտահայտությունները

| | |
|--|--|
| Եփ. 1:1ա և Կող. 1:1ա | |
| Եփ. 1:1բ և Կող. 1:2ա | |
| Եփ. 1:2ա և Կող. 1:2բ | |
| Եփ. 1:13 և Կող. 1:5 | |
| Եփ. 2:1 և Կող. 2:13 | |
| Եփ. 2:5բ և Կող. 2:13գ | |
| Եփ. 4:1բ և Կող. 1:10ա | |
| Եփ. 6:21-22 և Կող. 4:7-8 (29 հաջորդական իրար նման բառեր, բացառությամբ “ <i>kai syndoulos</i> ” Կողոսացիներում) | |

4. Նմանատիպ արտահայտություններ կամ նախադասություններ՝

| | |
|----------------------------|--|
| Եփ. 1:21 և Կող. 1:16 | |
| Եփ. 2:1 և Կող. 1:13 | |
| Եփ. 2:16 և Կող. 1:20 | |
| Եփ. 3:7ա և Կող. 1:23դ, 25ա | |
| Եփ. 3:8 և Կող. 1:27 | |
| Եփ. 4:2 և Կող. 3:12 | |
| Եփ. 4:29 և Կող. 3:8; 4:6 | |
| Եփ. 4:32բ և Կող. 3:13բ | |
| Եփ. 5:15 և Կող. 4:5 | |
| Եփ. 5:19-20 և Կող. 3:16 | |

5. Աստվածաբանորեն հոմանիշ գաղափարներ՝

| | |
|------------------------|-------------------------|
| Եփ. 1:3 և Կող. 1:3 | գոհության աղոթք |
| Եփ. 2:1,12 և Կող. 1:21 | Աստծուց օտարվածություն |
| Եփ. 2:15 և Կող. 2:14 | Օրենքի դեմ թշնամություն |
| Եփ. 4:1 և Կող. 1:10 | արժանի քայլեր |

Եփ. 4:15 և Կող. 2:19

Եփ. 4:19 և Կող. 3:5

Եփ. 4:22,31 և Կող. 3:8

Եփ. 4:32 և Կող. 3:12-13

Եփ. 5:4 և Կող. 3:8

Եփ. 5:18 և Կող. 3:16

Եփ. 5:20 և Կող. 3:17

Եփ. 5:22 և Կող. 3:18

Եփ. 5:25 և Կող. 3:19

Եփ. 6:1 և Կող. 3:20

Եփ. 6:4 և Կող. 3:21

Եփ. 6:5 և Կող. 3:22

Եփ. 6:9 և Կող. 4:1

Եփ. 6:18 և Կող. 4:2-4

Քրիստոսի մարմինը հասունությամբ
անում է Գլխից

սեռական անմաքրություն

«դեն նետեր» մեղքերը

Քրիստոնյաներ բարեհամբույր լինելը

Քրիստոնեական խոսքը

Հոգով լցվելը = Քրիստոսի խոսքը

գոհանալ Աստուծոց ամեն բանի համար

կանայք ենթարկվե՞ք ձեր ամուսիններին

ամուսիններ սիրե՞ք ձեր կանանց

զավակներ հնազանդվե՞ք ձեր ծնողներին

հայրեր մի՛ վիատեցրեք ձեր զավակներին

ծառաներ հնազանդվե՞ք ձեր տերերին

տերեր և ծառաներ

Պողոսի աղոթքի խնդրանքը

6. Կողոսացիներում և Եփեսացիներում գործածվող տերմիններ, որոնք առկա չեն Պողոսի կողմից գրված մյուս գործերում՝

ա. «լեցունություն»

Եփ. 1:23

«Նրա լեցունությունը, Ով լցնում է ամենն
ամենի մեջ»

Եփ. 3:19

«որ լցվեք Աստծո ամեն լիությամբ»

Եփ. 4:13

«Քրիստոսի լիությանը /կատարյալ հասա-
կին/»

Կող. 1:19

«Աստվածության ամբողջ լիությունը»

Կող. 2:9

«Նրա մեջ է բնակվում Աստվածության
ամբողջ լիությունը»

բ. Քրիստոսը որպես եկեղեցու «գլուխ»

Եփ. 4:15, 5:23 և Կող. 1:18; 2:19

գ. «օտարացած»

Եփ. 2:12; 4:18 և Կող. 1:21

դ. «ժամանակը ծախու առնել»

Եփ. 5:16 և Կող. 4:5

ե. «արմատացած»

Եփ. 3:17 և Կող. 2:7

զ. «ճշմարտության խոսքը՝ Ավետարանը»

Եփ. 1:13 և Կող. 1:5

է. «հանդուրժելով»

Եփ. 4:2 և Կող. 3:13

զ. անսովոր արտահայտություններ և տերմիններ («միահյուսված», «ապահովել»)

Եփ. 4:16 և Կող. 2:19

Դ. Եզրակացություն

1. Կողոսացիների մեկ երրորդից ավելի բառերը առկա են նաև Եփեսացիներում: Գնահատվել է, ոչ Եփեսացիների 155 համարներից 75-ը Կողոսացիներում ունեն իրենց համագոր խոսքերը: Երկուսն էլ հաստատում են, որ այս թղթերը գրվել են Պողոսի կողմից, երբ նա գտնվում էր բանտում:
2. Երկուսն էլ ուղարկվել են Պողոսի ընկեր Տիմոթեոսի ձեռքով:
3. Երկուսն էլ ուղարկվել են միևնույն տարածաշրջան (Փոքր Ասիա)
4. Երկուսն էլ շոշափում են միևնույն Քրիստոլոգիական թեման
5. Երկուսն էլ շեշտադրում են Քրիստոսի եկեղեցու գլուխ լինելը
6. Երկուսն էլ քաջալերում են պատշաճ Քրիստոնեական ապրելակերպը

Ե. Տարբերություններ պարունակող հիմնական կետերը

1. Եկեղեցին մշտապես տեղական էր Կողոսիայում, իսկ Եփեսոսում այն տիեզերական էր: Հավանաբար պատճառը Եփեսոս ուղարկված նամակի ցիկլիկ բնույթն է:
2. Հերետիկոսությունը, որն աչքի էր ընկնում Կողոսիայում, ուղղակիորեն չի նշվում Եփեսացիների նամակում: Ինչևէ, երկու նամակներն էլ գործածում են գնոստիկների բնորոշ տերմիններ («ինաստություն», «գիտություն», «լեցունություն», «խորհուրդ», «իշխանություններ և գորություններ» և «տնտեսություն»):
3. Կողոսացիներում երկրորդ գալստյան թեման անմիջական է, իսկ Եփեսացիներում՝ ուշացված: Եկեղեցին կանչված էր/է ծառայելու մեղավոր աշխարհում: (2:7; 3:21; 4:13)
4. Պողոսին բնորոշ մի քանի տերմիններ գործածված են տարբեր կերպերով: Օրինակներից մեկը «խորհուրդ» տերմինն է: Կողոսացիներում խորհուրդը Քրիստոսն է (Կող. 1:26-27; 2:2; 4:3), իսկ Եփեսացիներում (1:9; 5:32) Աստծո կողմից նախկինում գաղտնի պահված, իսկ այժմ հայտնված ծրագիրն է հեթանոսների և հրեաների միաբանությունն համար:
5. Եփեսացիների նամակը բովանդակում է մի քանի Հին Կտակարանյան ակնարկներ (1:22 – Սաղմ. 8; 2:17 – Ես. 57:19) (2:20 – Սաղմ. 118:22) (4:8 – Սաղմ. 68:18) (4:26 – Սաղմ. 4:4) (5:15 – Ես. 26:19, 51:17, 52:1, 60:1) (5:3 – Ծննդ. 3:24) (6:2-3 – Ել. 20:12) (6:14 – Ես. 11:5, 59:17) (6:15 – Ես. 52:7), սակայն Կողոսացիներում կան միայն մեկ կամ երկուսը (2:3 – Ես. 11:2) կամ (2:22- Ես. 29:13):

Զ. Չնայած որ այս երկու նամակները իրար շատ նման են բառերով, արտահայտություններով և հաճախ ընդհանուր նկարագրությամբ, դրանք նաև բովանդակում են յուրահատուկ ճշմարտություններ:

1. Ծնորիքի Երրորդության Օրինությունը – Եփես. 1:3-14
2. Ծնորիքի պատգամը – Եփես. 2:1-10
3. Հրեաների և հեթանոսների միավորումը մեկ նոր մարմնի մեջ – Եփես. 2:11-3:13
4. Քրիստոսի մարմնի միաբանությունն ու պարզների առատությունը – Եփես. 4:1-16
5. «Քրիստոսն ու եկեղեցին» «ամուսնու և կնոջ» օրինակն են, Եփ. 4:1-16
6. Հոգևոր պատերազմի պատգամը – Եփ. 6:10-18
7. Քրիստոլոգիական պատգամը – Կող. 1:13-18
8. Մարդկային կրոնի ծեսերն ու կանոնները – Կող. 2:16-23
9. Կողոսացիներում Քրիստոսի տիեզերական կարևորության թեման ի դեմս Եփեսացիներում Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանության թեմայի:

Է. Որպես ամփոփում, առաջարկում են կարդաք Ա.Տ.Ռոբերթսոնի և Ֆ.Ֆ.Բրյուսի կողմից բերված ապացույցներն այն մասին, որ Պողոսն այս երկու նամակները գրել է բովանդակությամբ իրար շատ նմանությամբ՝ Կողոսացիներում առկա մտքերը ճշմարտությունը ներկայացնելու մեջ որպես հիմնաքար դնելով:

IV. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Այս նամակի գրառման տարեթիվը կապված է Եփեսոսում, Փիլիպեոսում, Կեսարիայում կամ Հռոմում Պողոսի բանտարկություններից մեկի հետ: Հռոմում նրա բանտարկությունը լավագույնս համապատասխանում է Գործք Առաքելոցի դեպքերին:

Բ. Քանի որ Հռոմն է ենթադրվում նրա բանտարկության վայրը, ապա հարց է առաջանում, ե՞րբ: Պողոսը բանտում էր 60-ականների սկզբին, որն արձանագրված է Գործք Առաքելոցում, սակայն նա ազատ է արձակվում և գրում Հովվական Թղթերը (1 և 2 Տիմոթեոս և Տիտոս) և ապա նորից բանտարկվում և սպանվում նախքան մ.թ. 68թ-ի հունիսի 9, որը Ներոնի ինքնասպանության օրն էր:

Գ. Եփեսացիների նամակի գրառման տարեթվի ամենաճշգրիտ գիտական ենթադրությունը համարվում է Պողոսի առաջին բանտարկության ժամանակը Հռոմում՝ 60-ականների սկիզբը:

Դ. Տիվրիկոսը Ուեստմոսի հետ միասին հավանաբար նամակները տանում են կողոսացիներին, Եփեսացիներին և Փիլիմոնին, որոնք Փոքր Ասիայում էին:

Ե. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ. Ֆ. Բրյուսի և Մյուրի Հարրիսի, որոշակի ուղղումներով՝

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|-------------------------|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |
| 3. 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. 2 Կորնթացիներին | 56 | Մակեդոնիա | 20:2 |
| 6. Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. Բանտից նամակները՝ | | | |
| Կողոսացիներին | 60-ի սկիզբ | | |
| Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| Փիլիպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. Չորրորդ միսիոն . | | | |
| նամփոթությունը | | | |
| 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Մակեդոնիա | |
| Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) | |
| 2 Տիմոթեոսին | 64 մ.թ. 68) | Հռոմ | |

V. ՆԱՄԱԿԸ ՍՏԱՅՈՂՆԵՐԸ

Ա. Շատ ձեռագրեր (Chester Beatty Papyri, P⁴⁶, Sinaiticus, Ե; Vaticanus, B; Որոզինեսի հունարեն տեքստը և Տերտուղիանոսի հունարեն տեքստը) բաց են թողնում 1:1-ում առկա «Եփեսոսում»: RSV և Ուիլյամսի թարգմանությունները բաց են թողնում ամբողջ արտահայտությունը:

Բ. Առաջին համարի հունարեն քերականությունը կարող է հարմար լինել տեղանունի համար: Հավանաբար, որպես փոխանցվող՝ ցիկլիկ նամակ, եկեղեցու անունը բաց է թողնվել, որպեսզի այն տեղադրվի այն ժամանակ երբ եկեղեցիներում բարձրաձայն կընթերցվի: Հնարավոր է հենց սա կարող է բացատրել Կողոսացիների 4:15-16-ի արտահայտությունը՝ «Լավողիկեցիներից նամակ», որը հավանաբար Եփեսացիների Գիրքն էր (Մարկիոնը Եփեսացիների նամակն անվանում է «Լավողիկեցիներին ուղղված նամակ» վերնագրով):

Գ. Եփեսացիներին ուղղված նամակը հիմնականում գրվել է հեթանոսներին՝ 2:1; 4:17, որոնց Պողոսն անձամբ չէր հանդիպել՝ 1:15; 3:2: Լիկուս Գետի հարթավայրի եկեղեցիները (Լավողիկիայի, Հիերապոլիսի և Կողոսիայի) սկիզբ են առել ոչ թե Պողոսի, այլ Եպափրասի կողմից (Կող. 1:7; 4:12 և Փիլիմոն 23):

VI. ՆՊԱՏԱԿԸ

Ա. Գրքի թեման գտնվում է 1:10 և 4:1-10-ում, որը շեշտադրում է Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանությունը: Քրիստոսը վերականգնում է աշխարհի (*kosmos*) մարդկության մեջ Աստծո պատկերը:

Բ. Եփեսացիների նամակը Պողոսի բանտում գրված չորս նամակներից մեկն է: Եփեսացիների և Կողոսացիների նամակների ընդհանուր նկարագրությունները շատ նման են: Կողոսացիներին ուղղված նամակը գրվել է Փոքր Ասիայի Լիկուս Գետի Հարթավայրի եկեղեցիներում նոր գլուխ բարձրացնող Գնոստիցիզմի հերետիկոսության դեմ պայքարելու համար: Եփեսացիների նամակը գրվել է այդ նույն տարածաշրջանի համար որպես փոխանցվող նամակ, որպեսզի պատրաստի մյուս եկեղեցիներին այդ հերետիկոսության դեմ: Կողոսացիների նամակը համառոտ, դժվար հասկանալի է, մինչ Եփեսացիներինը միևնույն ճշմարտությունները ավելի ընդլայնված, տրամաբանական ներկայացումն է շատ երկար նախադասությունների կիրառությամբ (1:3-14, 15-23; 2:1-9; 3:1-7, և այլն):

VII. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Գիրքը բնականորեն բաժանվում է երկու մասին (ինչպես Պողոսի բոլոր գրքերը)՝

1. Քրիստոսում միաբանությունը, գլուխ 1-3 (աստվածաբանություն)
2. Եկեղեցում միաբանությունը, գլուխ 4-6 (կիրառություն)

Բ. Առաջարկվող թեմատիկ ուրվագիծ՝

1. Պողոսյան ավանդական բացման խոսքը, 1:1-2
2. Հոր ծրագիրը Քրիստոսի մեջ ամեն բանի միաբանության համար, 1:3-3:21
 - ա. Պողոսը փառաբանում է Հորը, 1:3-14
 - (1) ժամանակներից առաջ Հոր սիրո համար
 - (2) Հոր սիրո համար ճիշտ ժամանակին Իր Որդու միջոցով
 - (3) Հոր հարատև սիրո համար՝ Հոգու միջոցով ժամանակի ամբողջ ընթացքում
 - բ. Պողոսի աղոթքը եկեղեցիների համար, որ ուղղված է Հորը, 1:15-23
 - (1) որպեսզի Հոր հայտնությունը Քրիստոսի մեջ հասկացվի
 - (2) որպեսզի Հոր գորությունը գորավոր կերպով գործի հավատացյալների կյանքում
 - (3) բոլոր բաներից վեր Հոր կողմից Քրիստոսի մեծարումը՝ բարձրացումը
 - գ. Ամբողջ մարդկության համար Հոր ծրագրի Պողոսի հասկացողությունը, 2:1-3:13
 - (1) մեղավոր մարդկության կարիքը
 - (2) Հոր գթառատ հոգատարությունը
 - (3) մարդկությանը անհրաժեշտ ուխտի արձագանքը
 - (4) Հոր կամքը կատարելապես հայտնված
 - դ. Պողոսի աղոթքը Հորը՝ հավատացյալների համար, 3:14-21
 - (1) ներքին գորություն ստանալու համար (Հոգու միջոցով)
 - (2) ավետարանը փարձառաբար և սիրով լիարժեք կերպով հասկանալու համար (ոչ միայն մասնակի ճշմարտություններ)
 - (3) Աստծո լիությանը լցվելու համար (որ Քրիստոսն է)
 - (4) այս բոլորը Աստծուց է, որ ի գորու է կատարել
3. Աստծո ցանկությունն է, որ Իր նոր ժողովուրդը միաբան լինի, 4:1-6:20
 - ա. Երրորդության Աստծո միաբանությունը արտացոլվում է Իր զավակների միաբանությամբ, 4:1-16
 - (1) միաբանությունը միանմանությունն չէ, այլ սիրո ապրելակերպ
 - (2) Աստված երեքը մեկում միաբանությունն է
 - (3) հոգևոր պարզևները մարմնի շինության համար է և ոչ թե անհատական պատվի
 - (4) միաբանությունը ծառայություն է պահանջում
 - (5) միաբանությունը հրեշտակային հարձակման տակ է
 - (6) միաբանությունը Քրիստոսում է
 - բ. Քրիստոնեական միաբանությունը հակադրվում է հեթանոսական եսակենտրոնությամբ, 4:17-5:14
 - (1) դեն նետեք հին կյանքի գործերը
 - (2) հագեք Քրիստոսակերպությունը
 - գ. Միաբանության հասնելու և պահպանելու միջոցները, 5:15-6:9
 - (1) միշտ լցվեք Սուրբ Հոգով
 - (2) Հոգով լեցուն կյանքի բնութագրությունը՝
 - (ա) հինգ գործողություն, հհ . 19-21
 - (բ) երեք ընտանեկան օրինակ՝
 - i. ամուսիններ – կանայք
 - ii. ծնողներ – երեխաներ
 - iii. տերեր – ծառաներ
 - դ. Քրիստոսանման միաբանության պայքարը, 6:10-20
 - (1) հոգևոր պատերազմ
 - (2) Աստծո սպառազինություն
 - (3) աղոթքի գորություն
4. Փակման խոսքեր, 6:21-24

VIII. ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ԳՆՈՍՏԻՑԻՉՄ)

Ա. Առաջին և երկրորդ դարերի գնոստիկ հավատալիքները՝

1. Օնտոլոգիական (հավիտենական) երկակիություն հոգու (Աստծո) և մատերիայի (Ֆիզիկական) միջև:
2. Հոգին բարի էր, մինչ մատերիան՝ չար:
3. Սուրբ բարձրյալ Աստծո և չար մատերիան ստեղծող ավելի ցած գտնվող աստծո միջև մի շարք հրեշտակային մակարդակները (Էոններ/ *eons*):
4. Փրկության ճանապարհը՝
 - ա. Գաղնագրերի իմացությունը, որոնք թույլ են տալիս երկրից դեպի երկինք տանող հրեշտակային մթնոլորտի միջով շարժվել
 - բ. բոլոր մարդկանց մեջ առկա աստվածային լույսը, չնայած որ բոլոր չէին կարող հասկանալ կամ ընդունել փրկարար գիտությունը,
 - գ. գիտությունը եկել է միայն մի վերնախավ հանդիսացող խմբի և այն էլ հատուկ հայտնությամբ
5. Բարոյագիտություն
ա. ընդհանրապես հոգևոր կյանքի հետ կապ չունեցող (ազատականներ, հակամենաշնորհներ)
բ. փրկության համար կենսականորեն կարևոր (օրինապաշտներ):

Բ. Պատմական, աստվածաշնչյան Զրիստոնեության հետ հակասություններ

1. Զրիստոսի մարդեղությունն ու աստվածությունը բաժանելը (Գնոստիկներն ասում էին, որ Նա չոր կարող լինել թե՛ կատարյալ Աստված և թե՛ կատարյալ մարդ)
2. Նրա փոխանորդական մահը որպես փրկության միակ ճանապարհ հաշվի չառնելը
3. մարդկային գիտությունը փոխարինելը ձրի աստվածային շնորհքով:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. սուրբեր, 1:1
2. Տեր, 1:2
3. երկնավոր տեղեր, 1:3
4. «աշխարհի հիմնադրումից առաջ», 1:4
5. անարատ, 1:4
6. նախասահմանված, 1:5
7. «փրկություն», 1:7
8. խորհուրդ, 1:9
9. «ժամանակի լրում», 1:10
10. կնքված, 1:13
11. գրավական, 1:14
12. փառք, 1:17
13. «նստեցրեց Նրան աջ կողմը», 1:20
14. «Նրա լրումը, որ լցնում է ամենն ամենի մեջ», 1:23
15. «այս աշխարհի ընթացքը», 2:2
16. «Աստծո պարզևր», 2:8
17. «համաքաղաքացիներ», 2:19
18. «անկյունաքար», 2:20
19. «համարձակություն և վստահություն մուտք գործելու Աստծո մոտ», 3:12
20. «մարդկանց խաբերայությամբ», 4:14
21. «խորամանկությամբ խաբել ու մոլորեցնել», 4:14
22. «սիրո մեջ քայլեցե՛ք», 5:2
23. «անուշահոտ պատարագ», 5:2
24. «Զրիստոսի և Աստծո Արքայության մեջ», 5:5
25. «իրար հնազանդ եղե՛ք», 5:21
26. «Աստծո սպառազինությունը», 6:11
27. «գոտեպնդվել», 6:14
28. «Հոգու սուրբ», 6:17

X. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Գնտատիկներ
2. «օդի իշխանության իշխանը», 2:2
3. Հեթանոսներ
4. առաքյալներ, 4:11
5. մարգարեներ, 4:11
6. ավետարանիչներ, 4:11
7. գլուխը, 4:15
8. սատանա, 4:27
9. «անհնազանդության որդիները», 5:6
10. «Լույսի զավակներ», 5:8
11. «հոգևոր չար ուժեր», 6:12
12. Տյուքիկոս, 6:21

XI. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵԶԻ ՎՐԱ – ՉԿԱՆ

XII. ԲՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է 1:3-14 խոսքերի հիմնական թեման:
2. Ինչո՞ւ է 1:3-14-ում երեք անգամ գործածվում «ի գովություն Նրա փառքի» արտահայտությունը:
3. Ինչո՞ւ է Պողոսն այս գրքում այսքան հաճախ խոսում «իմաստության և հասկացողության» կամ «գիտության» վերաբերյալ:
4. Ո՞ւմ է վերաբերում 1:9 խոսքը:
5. Բացատրե՛ք երկու դարաշրջանների հրեական գաղափարը (1:21):
6. Ամփոփե՛ք 2:1-3 խոսքերի թեման:
7. Ամփոփե՛ք 2:4-6 խոսքերի թեման:
8. Բացատրե՛ք 2:14-ի պատմական ակնարկը:
9. Ի՞նչ հայտնության մասին է խոսում Պողոսը 3:3-ում:
10. Ինչո՞ւ է Պողոսն իրեն անվանում «սրբերից հետինը» (3:8):
11. Ինչո՞ւ է 4:4-6-ում այդքան հաճախ կիրառվում «մեկ» բառը:
12. Ո՞րն է Քրիստոսի պարզևը 4:7-ում:
13. Պողոսը Հին Կտակարանի ո՞ր հատվածից է մեջբերում 4:8-ը: Ինչո՞ւ է Պողոսի մեջբերումը տարբերվում ձեր ՀՎ-ից:
14. Ինչո՞ւ է 4:12-ն այդքան կարևոր:
15. Արդյո՞ք 5:5 խոսքը սահմանափակում է նրանց, թե ովքեր կարող են փրկվել:
16. Ինչպե՞ս է հարբած լինելը կապված Հոգով լցվելու հետ (5:18):
17. Ինչո՞վ են եկեղեցու հանդեպ Քրիստոսի սերն ու զոհաբերությունը կապված Քրիստոնեական ընտանիքի հետ: (5:25-33)
18. Ինչպե՞ս են «պատվել» և «հնազանդվել» բառերը կապված:
19. Ինչո՞ւ է այսօր այդքան անհրաժեշտ 6:18 խոսքը:

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

Ա. Սա Պողոսի ոչ պաշտոնական նամակներից մեկն է: Այս եկեղեցու հետ կապված նա կարիք չուներ ապացուցելու իր առաքելական հեղինակությունը: Նրանց հանդեպ իր ունեցած անսահման սերն ակնհայտ է: Նա նույնիսկ թույլ տվեց նրանց, որ իրեն գումար ուղարկեն (տես՝ 1:5,7; 4:15), որն անսովոր երևույթ է նրա կողմից:

Բ. Պողոսը բանտում է, այնուամենայնիվ կիրառում է ուրախության տերմիններ (գոյական և բայ) ավելի քան տասնվեց անգամ: Նրա խաղաղությունն ու հույսը կախված չէին հանգամանքներից:

Գ. Եկեղեցում սուտ ուսմունքների տարրի առկայություն կար (տես՝ 3:2; 18-19): Այս հերձվածողները կարծես թե նման էին Գաղատիայի եկեղեցիներում գտնվող հերձվածողներին, որոնք կոչվում էին Հուդաիստներ/հուդայականներ: Նրանք պնդում էին, որ նախքան Քրիստոնյա դառնալը մարդը պետք է առաջին հերթին դառնար հրեա:

Դ. Այս նամակը բովանդակում է վաղ Քրիստոնեական մի օրհներգի, դավանանքի կամ եկեղեցական բանաստեղծության օրհնակ (տես՝ 2:6-11): Այն համարվում է ամբողջ Նոր Կտակարանում որպես լավագույն Քրիստոլոգիական հատված (տես՝ Հովի . 1:1-14; Կող . 1:13-20; Եբր . 1:2-3): Պողոսն այն կիրառում է որպես Քրիստոսի խոնարհության օրհնակ, որին պետք է նմանվի յուրաքանչյուր հավատացյալ (տես՝ 2:1-5), և պարտադիր չէ դա լինի վարդապետական իմաստով:

Ե. 104 համարներից բաղկացած այս գրքում Հիսուսի անվանը կամ տիտղոսներին հանդիպում ենք 51 անգամ: Ակնհայտ է, թե ով է Պողոսի սրտի, մտքի և աստվածաբանության կենտրոնում:

II. ՓԻԼԻՊՊԵՆ ԵՎ ՄԱԿԵԴՈՆԻԱՆ

Ա. Փիլիպպե քաղաքը

1. Ք. Ա. 356թ-ին այս քաղաքը գավթել և ընդարձակել էր Փիլիպ II Մակեդոնը՝ Ալեքսանդր Մեծի հայրը: Սկզբնապես Տրասիական այս գյուղը անվանվեց *Krenides* (աղբյուրներ): Քաղաքն այդ տարածաշրջանի համար շատ կարևոր էր, քանի որ ուներ ոսկու հանքեր:
2. Ք. Ա. 168թ-ին Պիդնայի ճակատամարտում այս շրջանը դարձավ հռոմեական գավառ և հետագայում Մակեդոնիայի մեկ քառորդ մասը:
3. Ք. Ա. 42թ-ին Բրուտուսը և Կասիուսը (Հանրապետականներ) կովեցին Անտոնիոսի և Օկտավիայի (կայսերական) դեմ Փիլիպպեի մոտակայքում, Հռոմում կառավարական բարեփոխության համար: Ճակատամարտից հետո Անտոնիոս իր հաղթական վետերաններից ոմանց վերաբնակեցրեց այստեղ:
4. Ք. Ա. 31թ Ալտիումի պատերազմից հետո, որտեղ Օկտավիանը պարտության մատնեց Անտոնիոսին, Հռոմի նրա աջակիցները վտարվեցին և վերաբնակեցվեցին այստեղ:
5. Ք. Ա. 31թ-ին Փիլիպպեն դարձավ հռոմեական գաղութ (տես՝ Գործք 16:12): Փիլիպպեի քաղաքացիները հռչակվեցին Հռոմի քաղաքացիներ: Այնտեղ խոսում էին լատիներեն և քաղաքը դարձավ ինչպես մի փոքրիկ Հռոմ: Այն տեղակայված էր Իզմաստիան Ճանապարհի վրա, որը համարվում էր արևելքից դեպի արևմուտք տանող գլխավոր հռոմեական մայրուղին: Որպես հռոմեացիներ նրանք ունեին հետևյալ արտոնությունները՝
ա. ազատ էին գլխահարկերից և հողի հարկերից
բ. իրավունք ունեին սեփականություն ձեռք բերելու և վաճառելու
գ. ունեին հռոմեական օրենքի կողմից լիարժեք պաշտպանություն և իրավունքներ
դ. հատուկ տեղական կառավարիչներ (կուուսակալներ և նահանգապետներ)

Բ. Ավետարանը մուտք է գործում Փիլիպպե

1. Պողոսն իր երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ ուզում էր գնալ դեպի հյուսիս մտնելու հյուսիս-կենտրոնական Ասիա (ժամանակակից Թուրքիա, աստվածաշնչյան Բութանիա): Սակայն դրա փոխարեն նա տեսիլքով տեսավ Մակեդոնիայից (հյուսիսային Հունաստան) մի մարդու (հավանաբար Ղուկասին), որը կանչում էր իրենց օգնության հասնելու (Գործք 16:6-10): Այս տեսիլքի միջոցով Սուրբ Հոգին Պողոսին առաջնորդեց դեպի Եվրոպա:
2. Պողոսին ընկերակցում էին իր օգնականները՝

ա. Շիդան (Միղվանոսը)

- (1) Շիդան առաջնորդ և մի մարգարե էր Երուսաղեմի եկեղեցուց, որը փոխարինեց Բառնաբասին որպես Պողոսի միսիոներական ծառայակից (տես՝ Գործք 15:15-22,32; 36-41):
- (2) Շիդան և Պողոսը միասին բանտարկված էին Փիլիպեում (Գործք 16:16-26);
- (3) Պողոսը միշտ նրան Միղվանոս էր անվանում (տես՝ 2 Կորնթ. 1:19; 1 թեսաղ. 1:1; 2 Թեսաղ. 1:1);
- (4) հավանական է, որ հետագայում Շիդան դառնում է Պետրոսի գործընկերը, ինչպես Հովհաննես Մարկոսը (տես՝ 1 Պետ. 5:12):

բ. Տիմոթեոսը

- (1) նա Պողոսի առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ էր դարձի եկել (տես՝ Գործք 16:1-2; 2 Տիմ. 1:5; 3:15);
- (2) նրա մայրը և տատիկը հրեաներ էին, իսկ հայրը՝ հույն (տես՝ Գործք 16:1; 2 Տիմ. 1:5);
- (3) քանի որ նրա մասին եղբայրները լավ էին խոսում (տես՝ Գործք 16:2) և Պողոսը նրա մեջ տեսավ ծառայության պարզներ (տես՝ 1 Տիմ. 4:14; 2 Տիմ. 1:6), նա ընտրեց Տիմոթեոսին Հովհաննես Մարկոսին փոխարինող օգնական (տես՝ Գործք 13:13):
- (4) Պողոսը թվատեց Տիմոթեոսին, որպեսզի հրեաների կողմից ընդունվի (տես՝ Գործք 16:3);
- (5) Տիմոթեոսը դարձավ Պողոսի կողմից վստահելի առաքելական ներկայացուցիչ (տես՝ Փիլ. 2:19-22; 1 Կորնթ. 4:17; 3:2,6; 2 Կորնթ. 1:1,19):

գ. Ղուկասը

- (1) Ղուկաս Ավետարանի և Գործք Առաքելոցի անանուն, սակայն հավանական հեղինակը;
 - (2) ըստ երևույթին նա հեթանոս բժիշկ էր (տես՝ Կող. 4:14): Ոմանք կարծում են, որ «բժիշկ» տերմինն այստեղ նշանակում է «բարձրագույն կրթությամբ»: Վստահ կարելի է ասել, որ նա բացի բժշկությունից նաև քաջատեղյակ էր մի քանի այլ տեխնիկական ոլորտներում, ինչպես օրինակ նավագնացության: Սակայն Հիսուսն այս նույն հունարեն «բժիշկ» տերմինն էր կիրառում (տես՝ Մատթ. 9:12; Մարկ. 2:17; 5:26; Ղուկ. 4:23; 5:31);
 - (3) Պողոսի ճամփորդական ընկերն էր (տես՝ Գործք 16:10-17; 20:5-15; 21:1-18; 27:1-28:16; Կող. 4:14; 2 Տիմ. 4:11; Փիլիմոն 24)
 - (4) հետաքրքիր է, որ Գործքի «մենք» բաժինները սկսվում և ավարտվում են Փիլիպպեում: *Պողոսը՝ ազատագրված սրտով Առաքյալը* /F. F. Bruce Paul, Apostle of the Heart Set Free/, էջ՝ 219, գրքում Ֆ. Ֆ. Բրյուսը ասում է, որ Ղուկասը մնաց Փիլիպպեում, որպեսզի օգնի այնտեղի նորահավատներին և Երուսաղեմի եկեղեցու համար Հեթանոսներից օգնություն հավաքի:
 - (5) Ղուկասն որոշ իմաստով կարող էր լինել Պողոսի բժիշկը: Պողոսն ուներ մի քանի ֆիզիկական խնդիրներ իր դարձի գալու օրից ի վեր (տես՝ 2 Կորնթ. 12:1-10):
3. Պողոսը վերադարձավ Փիլիպպե իր երրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ (տես՝ Գործք 20:1-3,6): Նա ավելի շուտ ուղարկել էր Շիդային և Տիմոթեոսին (տես՝ Գործք 19:19-24; Փիլ. 2:19-24):

Գ. Փիլիպպեն որպես Հռոմեական Գաղութ (տես՝ Գործք 16:12)

1. Պողոսն իր տերմինաբանության մեջ այս քաղաքի կարգավիճակը նշում է որպես հռոմեական գաղութ՝
ա. «պալատ», 1:13

բ. «քաղաքացիություն», 3:20 (Գործք 16:22-34, 35-40)

գ. «Կեսարի տունը», 4:22

2. Քաղաքը բնակեցված էր հռոմեացի թոշակառու և արքայազն զինվորներով: Տարբեր կերպերով այն հիշեցնում էր «փոքրիկ Հռոմ»: Փիլիպպեի փողոցներում կարելի էր տեսնել Հռոմի քմահանությունները (տես՝ Գործք 26:21):
3. Թե՛ Պողոսը (Գործք 22:25; 26:32) և թե՛ Շիղան (Գործք 16:37) հռոմեացի քաղաքացիներ էին, որը նրանց օրինական իրավունքների և սոցիալական դիրքի թույլատվություն էր ընձեռում:

Գ. Մակեդոնիայի նահանգը

1. Կանայք Մակեդոնիայում շատ ավելի սոցիալապես և տնտեսապես ազատ հնարավորություններ ունեին, քան հռոմեական կայսրության որևէ այլ տեղ:
2. Սա լուսաբանված է հետևյալ հատվածներում՝
 - ա. Փիլիպպեից դուրս գետեզերքին մեծաքանակ կանայք հավաքված երկրպագելիս (տես՝ Գործք 16:13);
 - բ. Լիդիայի գործարար կանայք (տես՝ Գործք 16:14)
 - գ. ավետարանի գործում ծառայող կանայք (տես՝ 4:2-3)
 - դ. Թեսաղոնիկեում (ինչպես նաև Մակեդոնիայում, տես՝ Գործք 17:4) նշված մի քանի առաջնորդ կանայք

III. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Այս խիստ անձնական նամակը միշտ վերագրվել է Պողոսին: Առաջին դեմքի «ես» և «իմ» դերանուններին հանդիպում ենք 51 անգամ:

Բ. Այն մեջբերվել կամ ակնարկվել է վաղ շրջանի հեղինակների կողմից (մեջբերումների ամբողջական ցանկի համար կարդացե՛ք Հ. Ս. Մուլի *Փիլիպպեցիների սերտոնություն*, էջ՝ 20-21, հրատարակված Կրեզելի կողմից /H. C. Moule, *Studies in Philippians*/).

1. Հռոմի Կլեմենտը *I Կլեմենտում*, գրված Կորնթացիների եկեղեցուն, մոտ մ. թ. 95թ-ին,
2. Իզնատիուսը, *Իզնատիուսի Նամակները* գրքում, մոտ մ. թ. 110թ-ին,
3. Պոլիկարպը՝ Հովհաննես Առաքյալի գործընկերը, *Փիլիպպեցիներին ուղղված նամակում*, մոտ մ. թ. 110թ-ին,
4. Մարկոնիտ Նախաբանը (հերետիկոս Մարկիոնի մի հետևորդ) Պողոսի Փիլիպպեցիներին ուղղված նամակի շուրջ, մոտ մ. թ. 170թ-ին,
5. Իրենեուսը, մոտ մ. թ. 180թ-ին,
6. Ալեքսանդրիացի Կլեմենտը, մոտ մ. թ. 190թ-ին,
7. Կարթագենացի Տերտուղիանոսը, մոտ մ. թ. 210թ-ին:

Գ. Չնայած որ 1:1 համարում Պողոսի հետ նաև նշված է Տիմոթեոսը, նա նրա համագործակիցն էր և ոչ թե համահեղինակը (չնայած որ հնարավոր է ժամանակ առ ժամանակ նա Պողոսի համար եղել է որպես դպիր՝ գրագիր):

IV. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Տարեթիվը կախված է այն փաստից, թե որտեղ էր բանտարկված Պողոսը (տես՝ 2 Կորնթ. 11:23)՝

1. Փիլիպեում, Գործք 16:23-40
2. Եփեսոսում, 1 Կորնթ. 15:32; 2 Կորնթ. 1:8,
3. Երուսաղեմում, Կեսարիայում՝ Գործք 21:32-33:30
4. Հռոմում, Գործք 28:30 (Փիլիպպեցիներին ուղղված Մարկոնիտ Նախաբանում նշված):

Բ. Շատ գիտնականներ հավատում են, որ Հռոմեական բանտարկությունը լավագույնս համապատասխանում է Գործքում արձանագրված Պողոսի կյանքի պատմությանը: Եթե այդպես է, ապա ամենահավանական տարեթիվը 60-ականների սկիզբն է:

Գ. Այս գիրքը հայտնի է որպես Պողոսի «բանտի նամակներից» մեկը (Կողոսացիներին, Եփեսացիներին, Փիլիմոն և Փիլիպպեցիներին): Ներքին ենթադրությունների համաձայն թվում է, թե Կողոսացիներին, Եփեսացիներին և Փիլիմոնին ուղղված նամակները գրվել են ավելի շուտ՝ Պողոսի հռոմեական բանտարկության ընթացքում և Տիվքիկոսի ձեռքով միասին տարվել են Փոքր Ասիա (Կող. 4:7; Եփես. 6:21): Փիլիպպեցիներին ուղղված նամակն այլ տոնայնություն ունի: Կարծես թե Պողոսը վստահ էր, որ ազատվելու էր բանտից (1:17-26) և այցելելու էր նրանց (2:24):

Դեպքերի այսպիսի հերթականությունը նաև ժամանակ է տրամադրում՝ (1) որպեսզի Պողոսի ազդեցությունը հասնի մինչև Կայսերական զինվորներին (տես՝ 1:13; Գործք 28:16) և ծառաներին (տես՝ 4:22) և (2) Պողոսի կատարած և Փիլիպպեի եկեղեցուց եկած պատգամաբերների միջև մի քանի ճամփորդությունների համար:

V. ՆԱՍԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա. Պողոսի գոհությունն այս սիրելի եկեղեցու հանդեպ փոխանցելու համար, որը մի քանի անգամ նրան օգնեց նյութապես և նույնիսկ օգնական ուղարկեց՝ Եպափրոդիտոսին (տես՝ 1:3-11; 2:19-30; 4:10-20): Հնարավոր է նաև նամակը գրվել է բացատրելու, թե ինչու է Եպափրոդիտոսը շուտ վերադարձել տուն, մինչդեռ Պողոսը բանտում է:

Բ. Փիլիպպեցիներին քաջալերելու իր իրավիճակների հարցում: Ավետարանը իրականում տարածվում էր բանտում: Պողոսը կապված էր, սակայն ավետարանը՝ ոչ:

Գ. Քաջալերելու փիլիպպեցիներին, որոնք գտնվում էին կեղծ ուսմունքների շրջապատում, որոնք շատ նման էին Գաղատիայի Հուդաիստներին: Այս հերետիկոսները նորադարձներից պահանջում էին առաջին հերթին հրեա դառնալ և ապա Քրիստոնյա (տես՝ Գործք 15):

Ինչևէ, քանի որ 3:19-ում արձանագրված մեղքերը համապատասխանում են հույն կեղծ վարդապետներին (գնոստիկներին) ավելի, քան հրեաներին, ապա այս հերետիկոսների ինքնությունն անհայտ է: Հնարավոր է, որ որոշ հավատացյալներ նորից վերադարձել էին իրենց նախկին հեթանոս ապրելակերպին:

Դ. Փիլիպպեցի հավատացյալներին քաջալերելու ուրախանալ նույնիսկ ներքին և արտաքին հալածանքների դեպքում: Պողոսի ուրախությունը կախված չէր հանգամանքներից, այլ Քրիստոսի վրա ունեցած իր հավատքից:

Իսնդիքների մեջ ուրախանալը Ստոիկների հավատությանը չէր, այլ Քրիստոնեական աշխարհայացք և հարատև պայքար: Պողոսը կյանքի տարբեր բնագավառներից փոխաբերության օրինակներ է բերում, որպեսզի փոխանցի Քրիստոնեական կյանքի լարվածությունը՝

1. մարգական (տես՝ 3:12,14; 4:3)
2. ռազմական (տես՝ 1:7,12,15,16,17,22,28,30)
3. առևտրային (տես՝ 3:7,8; 4:15,17,18)

VI. ՀԱՄԱՏԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Դժվար է տալ ընդհանուր նկարագրություն այս գրքին, քանի որ այն շատ անձնական և ոչ պաշտոնական բնույթի է: Պողոսը խոսում էր ընկերներին և Քրիստոսում իր վստահելի ծառայակիցներին: Նախքան իր միտքը կշարադրեր իր մտքերը, նա իր սիրտն էր բացում: Չարմանալի թափանցիկությամբ այս գիրքը մեզ բացահայտում է մեծ Առաքյալի սիրտը հեթանոսների նկատմամբ: Պողոսը Քրիստոսի մեջ «ուրախություն» էր վերապրում ցանկացած և բոլոր իրավիճակներում, և ավետարանի ծառայության մեջ:

Բ. Գրական բաժիններ

1. Պողոսին բնորոշ նախաբան, 1:1-2

ա. ողջույնի խոսք

(1) Պողոսից (և Տիմոթեոսից), 1:1

(2) Փիլիպպեի սուրբերին (ներառյալ երեցներն ու սարկավագները), 1:1

(3) Պողոսի ոճի մեջ աղոթք, 1:2

բ. աղոթք, 1:3-11

- (1) առաջին հերթին ավետարանի մեջ իր գործակիցների համար, 1:5
- (2) Պողոսի ծառայության աջակիցների համար, 1:7
- (3) Պողոսի խնդրանքը՝
 - (ա) առատ սիրո համար, 1:9
 - (բ) առատ գիտության համար, 1:9
 - (գ) առատ զանազանության համար, 1:9
 - (դ) առատ սրբության համար, 1:10
- 2. Պողոսի հոգատարությունը նրանց հանդեպ, ի պատասխան այն հոգատարության, որ նրանք էին ցուցաբերում Պողոսին, մինչ բանտում էր, 1:12-26
 - ա. Աստված օգտագործեց նրա բանտում եղած ժամանակը, որպեսզի ավետարանը տարածվի՝
 - (1) Կայսերական բանտապահը, 1:13
 - (2) Կայսրի տնից այլ մարդիկ, 1:13; 4:22
 - (3) քաջալերեց քարոզիչներին, 1:14-18
 - բ. Պողոսի վստահությունն առ այն, որ ազատվելու էր՝
 - (1) նրանց աղոթքների շնորհիվ, 1:19
 - (2) Սուրբ Հոգու շնորհիվ, 1:19
 - գ. Պողոսի վստահությունը թե՛ ազատության և թե՛ մահվան դեպքում, 1:20-26
- 3. Պողոսի քաջալերանքը, 1:27-2:18՝
 - ա. հալածանքների մեջ Քրիստոսին նմանվելու կոչ, 1:27-30
 - բ. ապրելու Քրիստոսի պես անձնուրացությամբ, 2:1-4
 - գ. Քրիստոսը մեր օրինակը, 2:5-11
 - դ. Քրիստոսի օրինակն ունենալով ապրել խաղաղության և միաբանության մեջ, 2:12-18
- 4. Փիլիպեի հետ կապված Պողոսի ծրագրերը, 2:19-30՝
 - ա. Տիմոթեոսին ուղարկել, 2:19-24
 - բ. Եպափրոդիտոսին վերադարձնել, 2:25-30
- 5. հաստատ կանգնել սուտ վարդապետների դեմ, 1:27; 4:1
 - ա. շները, սուտ թվատողները, Հուդաիստները (Գործք 15, Գաղատացիներին), 3:1-4
 - բ. Պողոսի հրեական ժառանգությունը՝
 - (1) սուտ վարդապետների լույսի ներքո, 3:5-6
 - (2) Քրիստոսի լույսի ներքո, 3:7-16
 - գ. Պողոսը վշտանում է նրանց համար, 3:17-21
- 6. Պողոսը կրկնում է իր հորդորները՝
 - ա. միաբանություն, 4:1-3
 - բ. Քրիստոսանման բնավորության գծեր, 4:4-9
- 7. Պողոսը կրկնում է իր երախտագիտությունը Փիլիպեցիների օգնության համար՝
 - ա. նրանց վերջին նվերի համար, 4:10-14
 - բ. նրանց նախորդ նվերի համար, 4:15-20 (1:5)
- 8. Պողոսին բնորոշ փակման խոսք, 4:21-23:

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1. «իմ կապանքների մեջ», 1:7,13
- 2. «խանդաղատությունը», 1:8
- 3. «Քրիստոսի օրը», 1:10
- 4. «արդարության պտուղը», 1:11
- 5. «պալատական», 1:13
- 6. «Նրա համար չարչարվել», 1:29
- 7. «Իր անձը ունայնացրեց», 2:7
- 8. «մարդկանց նման եղավ», 2:7
- 9. խոստովանել, 2:11
- 10. «իզուր չեմ վազել, ոչ էլ իզուր եմ աշխատել», 2:16
- 11. /բառացի/ «ես թափվում եմ որպես ըմպելիքի պատարագ ու զոհ», 2:17
- 12. «զգուշացե՛ք շներից», 3:2
- 13. «Եբրայեցի եբրայեցիներից», 3:5
- 14. «նրանք Քրիստոսի խաչի թշնամիներն են», 3:18

15. «մեր քաղաքացիությունը երկնքում է», 3:20
16. «որոնց անունները կյանքի գրքում են», 4:3

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. երեցներ, 1:1
2. սարկավագներ, 1:1
3. Տիմոթեոս, 2:19
4. Եպափրոդիտոս, 2:25
5. «թլփատության կողմնակիցներ», 3:2
6. Սյունտիք, 4:2

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Փիլիպպե, 1:1
2. Մակեդոնիա, 4:15
3. Թեսաղոնիկե, 4:16

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ վարդապետություն է շեշտադրում 1:6 խոսքը:
2. Բացատրե՛ք ինչ նկատի ունի Պողոսը 1:16-ում:
3. Ի՞նչ նկատի ունի «Հիսուս Քրիստոսի Հոգին» արտահայտությունը:
4. Բացատրե՛ք 1:21 ձեր իսկ խոսքերով:
5. Ի՞նչ առնչություն ունի 2:6 խոսքը Հիսուսը մարդ լինելուց առաջ գոյության և աստվածության հետ:
6. Ինչո՞ւ Հիսուսը խաչի վրա մահացավ: (2:8)
7. Ո՞ւմ է վերաբերում «երկնավորներում, երկրավորներում, և սանդարամետականներում» խոսքը:
8. Ի՞նչ է նշանակում «ձեր փրկությունը ահով ու դողով գործեցեք» արտահայտությունը: (2:12)
9. Թվարկե՛ք 2:4-6-ում տրված Պողոսի հրեական հատկանիշները:
10. Ի՞նչ կարևորություն ունի 3:9 խոսքը:
11. Փիլիպ . 4:4 ասում է, «Տերը մոտ է»: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ Նա չի վերադարձել:

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Փառք Աստծուն Կողոսիայի հերետիկոսների համար, քանի որ նրանց պատճառով Պողոսը գրեց այս հոգր նամակը: Հիշե՛ք, որ գիրքը հասկանալու համար մենք պետք է դիտարկենք գրքի պատմական միջավայրը: Կողոսի նամակները կոչվում են «դեպքերի փաստագրումներ», քանի որ նա այդ նամակների միջոցով տիեզերական ավետարանի ճշմարտություններով լուծում էր տեղական եկեղեցիների խնդիրները: Կողոսիայում առկա հերձվածողությունը հունական փիլիսոփայության (գնոստիցիզմի) և Հուդայականության մի անսովոր խառնուրդ էր:

Բ. Հիսուսի տիեզերական Տիրակալությունը գրքի կենտրոնական թեման է (տես՝ 1:15-17): Այս գրքի Քրիստոլոգիան անգերազանցելի է: Կողոսացիների թուղթը Եփեսացիների նամակի համար ձևավորում է հիմնական ուրվագիծը: Պողոսը գիտեր, որ հերձվածողությունը տարածվելու էր Փոքր Ասիայի տարածքով: Կողոսացիների նամակը հարձակում է սուտ ուսմունքների վրա, մինչ Եփեսացիներինը զարգացնում է դրա կենտրոնական թեմաները, որպեսզի եկեղեցիներին պատրաստի գալիք հերձվածողության դեմ: Կողոսացիների նամակի շեշտադրումը Քրիստոլոգիական է, մինչ Եփեսացիներինը՝ ամեն բաների միաբանությունը Քրիստոսի մեջ, որը ամեն ինչի Տերն է:

Գ. Պողոսը թե՛ հրեաների և թե՛ հույների օրինապաշտությանը դիմում է շատ խիստ տերմիններով (2:6-23):

II. ՔԱՂԱՔԸ

Ա. Սկզբնապես Կողոսիա քաղաքը Փոյուգիայի մեջ Պերգամոնի թագավորության մի մասն էր կազմում: Ք. ա. 133թ-ին այն տրվում է Հռոմի սենատին:

Բ. Նախքան Պողոսի օրերը Կողոսիան մեծ առևտրային կենտրոն էր (տես՝ Հերոդոտոսի *Պատմություններ* VII:30 և Քսենոֆոնի *Հաղթարշավ* 1:2:6):

1. Հարթավայրը, որտեղ տեղակայված էր Կողոսիա քաղաքը, հինավուրց Միջերկրական աշխարհի առաջատար բրդագործության արտադրող էր, հատկապես սև և ներկած բրդի՝ մանուշակագույն և ալ կարմիր: Հրաբխային հողն ապահովում էր գերազանց արոտավայր և կավճային ջուրը օգնում էր ներկելու գործընթացին (Ստրաբոն, 13:4:14):
2. Հրաբխային ժայթքումների (Ստրաբոն, 12:8:6) պատճառով պատմության ընթացքում քաղաքը մի քանի անգամ ավերվեց. վերջին անգամ այն տեղի ունեցավ մ.թ. 60-ին (Տակիտուս) կամ մ.թ. 64-ին (Եվսեբիոս):

Գ. Կողոսիան տեղակայված էր Լիկուս Գետի՝ Մայանդեր գետի վտակի վրա, որը հոսում էր Եփեսոսի կողքով 100 մղոն դեպի ցած: Այս մի հարթավայրում տեղակայված էին Հիերապոլիսը (6 մղոն հեռավորության վրա) և Լավոդիկեն (10 մղոն հեռավորության վրա) (տես՝ 1:2; 2:1; 4:13, 15-16):

Դ. Հռոմեացիների կողմից արևելքն արևմուտքի հետ կապող իրենց գլխավոր մայրուղին՝ *Via Ignatia*-ն, կառուցելուց հետո, որն շրջանցում էր Կողոսիան, այն գրեթե կորցրեց իր մեծությունը (Ստրաբոն): Սա նման էր Պաղեստինի Տրանսհորդանանյան տարածաշրջանի Պետրա քաղաքի հետ պատահածին:

Ե. Քաղաքը հիմնականում բնակեցված էր հեթանոսներով (Փոյուգացիներ և հույներ), սակայն կային նաև բազմաթիվ հրեաներ: Ջոզեֆուսն ասում է մեզ, որ Անտիոքուս III (Ք. ա. 223-187թթ) 2000 հրեաների Բաբելոնից տեղահանել է դեպի Կողոսիա: Արձանագրությունները վկայում են, որ մ.թ. 76-ին 11000 հրեա տղամարդիկ էին ապրում այն շրջանում, որի մայրաքաղաքն էր Կողոսիան:

III. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գոյություն ունեն նամակի ուղարկող երկու մարդիկ՝ Պողոսը և Տիմոթեոսը (տես՝ Կող. 1:1): Սակայն հիմնական հեղինակը Պողոսն է. Տիմոթեոսը ուղարկում էր իր ողջույնները որպես Պողոսի գործակից և հավանաբար դպիր (*amanuensis*):

Բ. Հնագույն գրականությունը միաձայն ընդունում է, որ Պողոսն էր հեղինակը՝

1. Մարկիոնը (որը Հռոմ եկավ մ.թ. 140-ին), հակահինկտակարանյան հերետիկոսը, այս գիրքը ներառել է իր Պողոսյան հավաքածուի մեջ:
2. Այն թվարկված է Մուրատորիան Կանոնի (մ.թ. մոտ 200թ-ին Հռոմից կանոնավոր գրքերի մի ցանկ) Պողոսին պատկանող նամակների հետ:
3. Վաղ եկեղեցու մի քանի հայրեր մեջբերումներ են կատարում այս գրքից և ճանաչում Պողոսին որպես այս նամակի հեղինակը՝
ա. Իրենեոսը (գրել է մ.թ. 177-190թթ)
բ. Ալեքսանդրիացի Կլեմենտ (ապրել է մ.թ. 160-216թթ):

IV. ԿՈՂՈՍԱԾՑԻՆԵՐԻ ԵՎ ԵՓԵՍՍԾՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԸ

Ա. Կողոսացիների և Եփեսացիների միջև պատմական կապը՝

1. Եպափրասը (Կող. 1:7; 4:12; Փիլիմոն 23) դարձի էր եկել Պողոսի Եփեսոս այցելության ժամանակ (Գործք 19)
ա. Նա իր նոր հավատքը իր հետ տանում է հայրենի հող՝ Լիկուս Գետի Հարթավայրը:
բ. Նա երեք եկեղեցի է սկսում՝ Հիերապոլիսում, Լավոդիկեում և Կողոսիայիում:
գ. Եպափրասը փնտրում է Պողոսին խորհուրդ հարցնելու համար, թե ինչպես կարող է պայքարել հերետիկոսների կողմից հեղեղված աշխարհայացքների դեմ: Պողոսը այդ ժամանակ բանտարկված էր Հռոմում (վաղ 60-ականներին):
2. Կեղծ վարդապետները պաշտպանում էին հունական մետաֆիզիկան՝
ա. հոգին և մատերիան համահավիտենական էին
բ. հոգին (Աստված) բարի էր
գ. մատերիան (ստեղծագործությունը) չար էր
դ. մի շարք էոններ /eons/ (հրեշտակային աստիճաններ) գոյություն ունեին բարձրյալ բարի Աստծո և ավելի փոքր աստծո միջև, որը ստեղծեց մատերիան:
ե. Փրկությունը հիմնված էր գաղտնաբառերի զիտության վրա, որոնք օգնում էին մարդկանց անցնելու էոնների (հրեշտակային աստիճաններ) միջով:

Բ. Պողոսի երկու նամակների միջև գրական կապը՝

1. Պողոսը այս եկեղեցիներում տիրող հերձվածողության մասին, որտեղ նա երբեք անձամբ չէր այցելել, անձամբ լսեց Եպափրասից:
2. Պողոսը գրեց մի հակիրճ անգիշում նամակ, զգայական նախադասություններով, որոնք ուղղված էին կեղծ վարդապետներին: Կենտրոնական թեման Հիսուսի տիեզերական տիրակալությունն էր: Սա հայտնի է որպես Կողոսացիներին ուղղված Պողոսի նամակ:
3. Ըստ երևույթին, անմիջապես Կողոսացիներին ուղղված նամակը գրելուց հետո, բանտարկության ժամանակը ծախու առնելով, նա ծավալել է այս նույն թեմաները: Եփեսացիներին ուղղված նամակին հատկանշական են երկար նախադասությունները և աստվածաբանորեն արժարժվող գաղափարները (1:3-14, 15-23; 2:1-10, 14-18, 19-22; 3:1-12, 14-19; 4:11-16; 6:13-20): Այս գիրքը Կողոսացիներին ուղղված նամակը ընդունում է որպես մեկնարկային կետ և այնտեղից դուրս բերում աստվածաբանական կիրարկումներ: Կենտրոնական թեման Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանությունն է, որը հակասում էր գնոստիկ հերձվածողության գաղափարներին:

Գ. Գրական և աստվածաբանական կառուցվածքի կապը՝

1. Հիմնական կառուցվածքը՝
ա. երկուսն էլ ունեն նմանատիպ նախաբան
բ. ունեն վարդապետական բաժիններ, որոնք նվիրված են հիմնականում Քրիստոսին

գ. ունեն գործնական բաժիններ, որոնք քաջալերում են Քրիստոնեական ապրելակերպը՝ կիրառելով միևնույն կատեգորիաները, տերմինները և արտահայտությունները:
 դ. երկուսն էլ փակման խոսքում հունարենում ունեն ճիշտ նմանօրինակ իրար հաջորդող 29 բառեր, և միայն երկու տարբեր բառեր, որոնք ավելացված են Կողոսացիների նամակում:

2. Ճիշտ նույն բառերը կամ կարճ արտահայտությունները՝

| | |
|----------------------------|--|
| Եփ. 1:1գ և Կող. 1:2ա | «հավատարիմ» |
| Եփ. 1:4 և Կող. 1:22 | «սուրբ և անարատ» |
| Եփ. 1:7 և Կող. 1:14 | «փրկություն . . . ներում» |
| Եփ. 1:10 և Կող. 1:20 | «ամեն բան . . . երկինք . . . երկիր» |
| Եփ. 1:15 և Կող. 1:3-4 | «լավեց . . . սեր բոլոր սուրբերի հանդեպ» |
| Եփ. 1:18 և Կող. 1:27 | «փառքի ճոխությունը» |
| Եփ. 2:1 և Կող. 1:13 | «դուք մեռած էիք» |
| Եփ. 2:16 և Կող. 1:20 | «հաշտվել . . . խաչ» |
| Եփ. 3:2 և Կող. 1:25 | «տնտեսություն» |
| Եփ. 3:3 և Կող. 1:26,27 | «խորհուրդ» |
| Եփ. 4:3 և Կող. 3:14 | «միաբանություն» |
| Եփ. 4:15 և Կող. 2:19 | «գլուխ» և «անել» |
| Եփ. 4:24 և Կող. 3:10,12,14 | «հագեք . . . » |
| Եփ. 4:31 և Կող. 3:8 | «բարկություն», «զայրույթ», «ոխ», «բամբասանք» |
| Եփ. 5:3 և Կող. 3:5 | «կռապաշտություն» |
| Եփ. 5:6 և Կող. 3:6 | «Աստծո զայրույթը» |
| Եփ. 5:16 և Կող. 4:5 | «ժամանակը ծախու առեր» |

3. Ճիշտ նույն արտահայտություններն ու նախադասությունները՝

| | |
|--|--|
| Եփ. 1:1ա և Կող. 1:1ա | |
| Եփ. 1:1բ և Կող. 1:2ա | |
| Եփ. 1:2ա և Կող. 1:2բ | |
| Եփ. 1:13 և Կող. 1:5 | |
| Եփ. 2:1 և Կող. 2:13 | |
| Եփ. 2:5բ և Կող. 2:13գ | |
| Եփ. 4:1բ և Կող. 1:10ա | |
| Եփ. 6:21-22 և Կող. 4:7-8 (29 հաջորդական իրար նման բառեր, բացառությամբ “ <i>kai syndoulos</i> ” Կողոսացիներում) | |

4. Նմանատիպ արտահայտություններ կամ նախադասություններ՝

| | |
|----------------------------|--|
| Եփ. 1:21 և Կող. 1:16 | |
| Եփ. 2:1 և Կող. 1:13 | |
| Եփ. 2:16 և Կող. 1:20 | |
| Եփ. 3:7ա և Կող. 1:23դ, 25ա | |
| Եփ. 3:8 և Կող. 1:27 | |
| Եփ. 4:2 և Կող. 3:12 | |
| Եփ. 4:29 և Կող. 3:8; 4:6 | |
| Եփ. 4:32բ և Կող. 3:13բ | |
| Եփ. 5:15 և Կող. 4:5 | |
| Եփ. 5:19-20 և Կող. 3:16 | |

5. Աստվածաբանորեն համագոր զաղափարներ՝

| | |
|------------------------|-------------------------|
| Եփ. 1:3 և Կող. 1:3 | գոհության աղոթք |
| Եփ. 2:1,12 և Կող. 1:21 | Աստծուց օտարվածություն |
| Եփ. 2:15 և Կող. 2:14 | Օրենքի դեմ թշնամություն |
| Եփ. 4:1 և Կող. 1:10 | արժանի քայլեր |

Եփ. 4:15 և Կող. 2:19

Եփ. 4:19 և Կող. 3:5

Եփ. 4:22,31 և Կող. 3:8

Եփ. 4:32 և Կող. 3:12-13

Եփ. 5:4 և Կող. 3:8

Եփ. 5:18 և Կող. 3:16

Եփ. 5:20 և Կող. 3:17

Եփ. 5:22 և Կող. 3:18

Եփ. 5:25 և Կող. 3:19

Եփ. 6:1 և Կող. 3:20

Եփ. 6:4 և Կող. 3:21

Եփ. 6:5 և Կող. 3:22

Եփ. 6:9 և Կող. 4:1

Եփ. 6:18 և Կող. 4:2-4

Քրիստոսի մարմինը հասունությամբ
անում է Գլխից

սեռական անմաքրություն

«դեն նետեր» մեղքերը

Քրիստոնյաներ բարեհամբույր լինելը

Քրիստոնեական խոսքը

Հոգով լցվելը = Քրիստոսի խոսքը

գոհանալ Աստծուց ամեն բանի համար

կանայք ենթարկվելք ձեր ամուսիններին

ամուսիններ սիրե՛ք ձեր կանանց

զավակներ հնազանդվելք ձեր ծնողներին

հայրեր մի՛ վիատեցրեք ձեր զավակներին

ծառաներ հնազանդվելք ձեր տերերին

տերեր և ծառաներ

Պողոսի աղոթքի խնդրանքը

6. Կողոսացիներում և Եփեսացիներում գործածվող տերմիններ, որոնք առկա չեն Պողոսի կողմից գրված մյուս գործերում՝

ա. «լեցունություն»

Եփ. 1:23

«Նրա լեցունությունը, Ով լցնում է ամենն
ամենի մեջ»

Եփ. 3:19

«որ լցվեք Աստծո ամեն լիությամբ»

Եփ. 4:13

«Քրիստոսի լիությանը /կատարյալ հասա-
կին/»

Կող. 1:19

«Աստվածության ամբողջ լիությունը»

Կող. 2:9

«Նրա մեջ է բնակվում Աստվածության
ամբողջ լիությունը»

բ. Քրիստոսը որպես եկեղեցու «գլուխ»

Եփ. 4:15, 5:23 և Կող. 1:18; 2:19

գ. «օտարացած»

Եփ. 2:12; 4:18 և Կող. 1:21

դ. «ժամանակը ծախու առնել»

Եփ. 5:16 և Կող. 4:5

ե. «արմատացած»

Եփ. 3:17 և Կող. 2:7

զ. «ճշմարտության խոսքը՝ Ավետարանը»

Եփ. 1:13 և Կող. 1:5

է. «հանդուրժելով»

Եփ. 4:2 և Կող. 3:13

զ. անսովոր արտահայտություններ և տերմիններ («միահյուսված», «ապահովել»)

Եփ. 4:16 և Կող. 2:19

Դ. Եզրակացություն

1. Կողոսացիների մեկ երրորդից ավելի բառերը առկա են նաև Եփեսացիներում: Գնահատվել է, որ Եփեսացիների 155 համարներից 75-ը Կողոսացիներում ունեն իրենց համագոր խոսքերը: Երկուսն էլ հաստատում են, որ այս թղթերը գրվել են Պողոսի կողմից, երբ նա գտնվում էր բանտում:
2. Երկուսն էլ ուղարկվել են Պողոսի ընկեր Տիմոթեոսի ձեռքով:
3. Երկուսն էլ ուղարկվել են միևնույն տարածաշրջան (Փոքր Ասիա)
4. Երկուսն էլ շոշափում են միևնույն Քրիստոլոգիական թեման
5. Երկուսն էլ շեշտադրում են Քրիստոսի եկեղեցու գլուխ լինելը
6. Երկուսն էլ քաջալերում են պատշաճ Քրիստոնեական ապրելակերպը

Ե. Տարբերություններ պարունակող հիմնական կետերը՝

1. Եկեղեցին մշտապես տեղական էր Կողոսիայում, իսկ Եփեսոսում այն տիեզերական էր: Հավանաբար պատճառը Եփեսոս ուղարկված նամակի ցիկլիկ բնույթն է:
2. Հերետիկոսությունը, որն աչքի էր ընկնում Կողոսիայում, ուղղակիորեն չի նշվում Եփեսացիների նամակում: Ինչևէ, երկու նամակներն էլ գործածում են գնոստիկների բնորոշ տերմիններ («իմաստություն», «գիտություն», «լեցունություն», «խորհուրդ», «իշխանություններ և զորություններ» և «տնտեսություն»):
3. Կողոսացիներում երկրորդ գալստյան թեման անմիջական է, իսկ Եփեսացիներում՝ ուշացված: Եկեղեցին կանչված էր/է ծառայելու մեղավոր աշխարհում: (2:7; 3:21; 4:13)
4. Պողոսին բնորոշ մի քանի տերմիններ գործածված են տարբեր կերպերով: Օրինակներից մեկը «խորհուրդ» տերմինն է: Կողոսացիներում խորհուրդը Քրիստոսն է (Կող. 1:26-27; 2:2; 4:3), իսկ Եփեսացիներում (1:9; 5:32) Աստծո կողմից նախկինում գաղտնի պահված, իսկ այժմ հայտնված ծրագիրն է հեթանոսների և հրեաների միաբանությունն համար:
5. Եփեսացիների նամակը բովանդակում է մի քանի Հին Կտակարանյան ակնարկներ (1:22 – Սաղմ. 8; 2:17 – Ես. 57:19) (2:20 – Սաղմ. 118:22) (4:8 – Սաղմ. 68:18) (4:26 – Սաղմ. 4:4) (5:15 – Ես. 26:19, 51:17, 52:1, 60:1) (5:3 – Ծննդ. 3:24) (6:2-3 – Ել. 20:12) (6:14 – Ես. 11:5, 59:17) (6:15 – Ես. 52:7), սակայն Կողոսացիներում կան միայն մեկ կամ երկուսը (2:3 – Ես. 11:2) կամ (2:22- Ես. 29:13):

Զ. Չնայած որ այս երկու նամակները իրար շատ նման են բառերով, արտահայտություններով և հաճախ ընդհանուր նկարագրությամբ, դրանք նաև բովանդակում են յուրահատուկ ճշմարտություններ:

1. Ծնորիքի Երրորդության Օրինությունը – Եփես. 1:3-14
2. Ծնորիքի պատգամը – Եփես. 2:1-10
3. Հրեաների և հեթանոսների միավորումը մեկ նոր մարմնի մեջ – Եփես. 2:11-3:13
4. Քրիստոսի մարմնի միաբանությունն ու պարզների առատությունը – Եփես. 4:1-16
5. «Քրիստոսն ու եկեղեցին» «ամուսնու և կնոջ» օրինակն են, Եփ. 4:1-16
6. Հոգևոր պատերազմի պատգամը – Եփ. 6:10-18
7. Քրիստոլոգիական պատգամը – Կող. 1:13-18
8. Մարդկային կրոնի ծեսերն ու կանոնները – Կող. 2:16-23
9. Կողոսացիներում Քրիստոսի տիեզերական կարևորության թեման ի դեմս Եփեսացիներում Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանության թեմայի:

Է. Որպես ամփոփում, առաջարկում եմ կարդաք Ա. Տ. Ռոբերթսոնի և Ֆ. Ֆ. Բրյուսի կողմից բերված ապացույցներն այն մասին, որ Պողոսն այս երկու նամակները գրել է բովանդակությամբ իրար շատ նմանությամբ՝ Կողոսացիներում առկա մտքերը ճշմարտությունը ներկայացնելու մեջ որպես հիմնաքար դնելով:

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Այս նամակի գրառման տարեթիվը կապված է Եփեսոսում, Փիլիպեոսում, Կեսարիայում կամ Հռոմում Պողոսի բանտարկություններից մեկի հետ: Հռոմում նրա բանտարկությունը լավագույնս համապատասխանում է Գործք Առաքելոցի դեպքերին:

Բ. Քանի որ Հռոմն է ենթադրվում նրա բանտարկության վայրը, ապա հարց է առաջանում, ե՞րբ: Պողոսը բանտում էր 60-ականների սկզբին, որն արձանագրված է Գործք Առաքելոցում, սակայն նա ազատ է արձակվում և գրում Հովվական Թղթերը (1 և 2 Տիմոթեոս և Տիտոս) և ապա նորից բանտարկվում և սպանվում նախքան մ. թ. 68թ-ի հունիսի 9, որը Ներոնի ինքնասպանության օրն էր:

Գ. Եփեսացիների գրառման տարեթիվի ամենաճշգրիտ գիտական ենթադրությունը համարվում է Պողոսի առաջին բանտարկության ժամանակը Հռոմում՝ 60-ականների սկիզբը:

Դ. Տիվքիկոսը Ոնեսիմոսի հետ միասին հավանաբար նամակները տանում են կողոսացիներին, եփեսացիներին և Փիլիմոնին, որոնք Փոքր Ասիայում էին:

Ե. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ.Բրյուսի և Մյուրի Հարրիսի, որոշակի ուղղումներով՝

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|-------------------------|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |
| 3. 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. 2 Կորնթացիներին | 56 | Մակեդոնիա | 20:2 |
| 6. Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. Բանտից նամակները՝ | | | |
| Կողոսացիներին | 60-ի սկիզբ | | |
| Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| Փիլիպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. Չորրորդ միսիոն . | | | |
| նամփոթությունը | | | |
| 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Մակեդոնիա | |
| Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) | |
| 2 Տիմոթեոսին | 64 մ.թ. 68) | Հռոմ | |

VI. ՆԱՄԱԿԸ ՍՏԱՑՈՂՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ա. Ըստ երևույթին եկեղեցին սկսել է Եպափրասը (տես՝ 1:7,8; 2:1; 4:12-13), որը հավանաբար դարձի էր եկել Եփեսոսում Պողոսի միջոցով (տես՝ Կող. 1:7-8 և համեմատե՛ք 2:1-ի հետ): Այն հիմնականում բաղկացած էր հեթանոսներից (տես՝ 1:21; 3:7): Եպափրասը գալիս է Պողոսի մոտ բանտ նրան տեղեկացնելու սուտ վարդապետների հետ կապված խնդիրը, որոնք սովորեցնում էին Քրիստոնեության և հունական փիլիսոփայության խառնուրդ, որ կոչվում էր գնոստիցիզմ (2:8) և հրեական օրինապաշտություն (տես՝ Հրեական տարրեր՝ 2:11, 16, 17; 3:11; հրեշտակներին երկրպագություն՝ 1:16; 2:15, 18 և ճգնափորություն՝ 2:20-23): Կողոսիայում գոյություն ուներ մի մեծ հրեական համայնք, որը դարձավ բավականին Հելլենական: Խնդրի էությունը կենտրոնացած էր Քրիստոսի անձի և Նրա գործի վրա: Գնոստիկները հերքում էին, որ Քրիստոսը եղել է կատարյալ մարդ, սակայն հաստատում էին, որ Նա կատարյալ Աստված է, քանի որ նրանք հավատում էին մատերիայի և հոգու միջև առկա հավիտենական թշնամական դուալիզմին: Նրանք հաստատում էին Նրա աստվածությունը, սակայն մերժում մարդեղությունը: Նրանք նաև մերժում էին Նրա միջնորդական գերակայությունը: Նրանց համար գոյություն ունեին բազմաթիվ հրեշտակային աստիճաններ (*eons*) բարձրյալ բարի աստծո և մարդկության միջև. Հիսուսը թեև լինելով ամենաբարձրյալը, միակն էր աստվածներից: Նրանք նաև հակված էին լինելու բացառիկ ինտելեկտուալ (տես՝ 3:11,14,16,17) և շեշտադրել հատուկ էքսկլյուզիվ գաղտնի գիտությունը (տես՝ 2:15, 18,19) որպես Աստծո ճանապարհը, փոխարենը Հիսուսի քավության, հաղթական զոհի և մարդկության կողմից Նրա ներման ձրի առաջարկին գղջացող սրտի հավատքով պատասխան տալու:

Բ. Այս աստվածաբանական և փիլիսոփայական մթնոլորտի պատճառով Կողոսացիների գիրքը շեշտադրում է՝

1. Քրիստոսի անձի բացառիկությունը և Նրա կատարած՝ ավարտին հասցրած փրկության գործը:
2. Հիսուս Նագովրեցու տիեզերական տիրակալությունը, իշխանությունը և նշանակությունը՝ Նրա ծնունդը, Նրա ուսմունքները, Նրա կյանքը, մահը, Նրա հարությունն ու համբարձումը: Նա ամեն ինչի և բոլորի Տերն է:

VII. ՆՊԱՏԱԿԸ

Պողոսի նպատակն էր մերժել Կողոսացիների հերձվածոգությունը: Այս նպատակին հասնելու համար նա մեծարում էր Քրիստոսին որպես հենց Աստծո պատկեր (1:15), Արարիչ

(1:16), ամեն ինչի նախագոյ պահապանը (1:17), եկեղեցու գլուխը (1:18), առաջինը հարություն առածների մեջ (1:18), աստվածության լիությունը մարմին հագած (1:19, 2:9) և հաշտեցնողը (1:20-22): Այսպիսով Քրիստոսը կատարելապես բավարար էր: Հավատացյալներին «տրվել է Քրիստոսի մեջ լիությունը» (2:10): Կողոսիայում տիրող հերձվածողությունը աստվածաբանորեն ամբողջովին անբավարար էր հոգևոր փրկություն պարզևելու համար: Այն մակերեսային և ստահոտ փիլիսոփայություն էր (2:8), և ընդհանրապես ի գորու չէր զսպելու մարդու հին մեղավոր բնավորությանը (2:23):

Կողոսացիներում շրջանառվող թեման Քրիստոսի կատարելապես բավարար լինել է, որը հակադրվում է պարզապես մարդկային փիլիսոփայության ունայնության հետ: Այս բավարարությունը արտահայտվում է Հիսուսի տիեզերական Տիրակալության մեջ: Նա է սեփականատերը, արարիչը և ինքնիշխանը բոլոր բաների վրա՝ թե՛ տեսանելի և թե՛ աներևույթ (1:15-18):

VIII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Պողոսի սովորության համաձայն բացման խոսքը՝

1. Ուղարկողի ինքնությունը, 1:1
2. Ստացողների ինքնությունը, 1:2ա
3. Ողջույնի խոսք, 1:2բ

Բ. Քրիստոսի Գերազանցությունը (1-10 թեմաները վերցված են NKJV Աստվածաշնչի պարագրաֆային ուրվագծից)

1. Քրիստոսի վրա հավատք, 1:3-8
2. Քրիստոսի գերակայությունը, 1:9-18
3. Քրիստոսում ունեցած հաշտություն, 1:19-23
4. Չոհարերության ծառայություն Քրիստոսին, 1:24-29
5. Ոչ թե փիլիսոփայություն, այլ Քրիստոս, 2:1-10
6. Ոչ թե օրինապահություն, այլ Քրիստոս, 2:11-23
7. Ոչ թե մարմնավոր կյանք, այլ Քրիստոս, 3:1-11
8. Հազեք Քրիստոսին, 3:12-17
9. Թույլ տվեք, որ Քրիստոսն ազդի ձեր ընտանիքի վրա, 3:19-4:1
10. Թույլ տվեք, որ Քրիստոսն ազդի ձեր ամենօրյա կյանքի վրա, 4:2-6

Գ. Պողոսի պատգամաբերները, 4:7-9

Դ. Պողոսի ընկերներն ու նրանց ողջույնները, 4:10-14

Ե. Պողոսը ողջույններ է ուղարկում, 4:15-17

Զ. Պողոսը նամակն ավարտում է իր իսկ ձեռքով, 4:18

IX. ԳՆՈՍՏԻՑԻԶՄ

Ա. Այս հերձվածողության վերաբերյալ մեր ունեցած գիտության մեծ մասը գալիս է երկրորդ դարի գնոստիկ գրականությունից: Մակայն դեռևս առաջին դարում առկա էր այս աղանդի նախնական գաղափարները (Մեռյալ Ծովի Գալարները):

Բ. Կողոսիայում տիրող խնդիրը Քրիստոնեության, սկզբնական գնոստիցիզմի և օրինապահ Հուդայականության խառնուրդն էր:

Գ. Վալենտինյան և Կորնթոսյան Գնոստիցիզմի դրվագները ոմանք նկարագրում են երկրորդ դարից՝

1. Մատերիան և հոգին հավասարազոր հավիտենական են (օնտոլոգիական դուալիզմ): Մատերիան չար է, հոգին՝ բարի: Աստված, որը հոգի է, չի կարող անմիջականորեն ներգրավված լինել չար մատերիայի ստեղծման մեջ:
2. Աստծո և մատերիայի միջև գոյություն ունեն էմանացիաներ (*eons* կամ հրեշտակային աստիճաններ): Վերջինը կամ ամենացածրը Հին Կտակարանի ՅԱՀՎԵՆ էր, որն ստեղծեց տիեզերքը (*kosmos*):

3. Հիսուսը ՅԱՀՎԵԻ պես մի էմանացիա էր, սակայն դիրքով ավելի բարձր և ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք նրան դասում են որպես ամենաբարձրյալը, սակայն միևնույն է Աստծուց մի փոքր ցած և հաստատ չեն ընդունում որպես մարմնացած Աստծո (տես՝ Հովհ. 1:14): Քանի որ մատերիան չար է, ապա Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և միևնույն ժամանակ լինել Աստված: Նա պարզապես մարդկային մարմնով երևաց, սակայն իրականում հոգի էր (տես՝ 1 Հովհ. 1:1-3; 4:1-6):
4. Փրկությունը ստանում էին Հիսուսին հավատալով և դրան ավելացրած հատուկ գիտելիքներ, որը միայն կարելի է ստանալ հատուկ մարդկանց միջոցով: Գիտությունը (ծածկագրերը) անրաժեշտ էր, որպեսզի կարողանային անցնել երկնավոր ոլորտների միջով: Աստծուն հասնելու համար նաև պահանջվում էր հրեական օրինապահություն:

Դ. Գնոստիկ սուտ վարդապետները պաշտպանում էին երկու իրար հակառակ բարոյագիտական համակարգ՝

1. Ոմանց համար ապրելակերպը ընդհանրապես կապ չուներ փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հեզևոր վիճակը ամփոփվում էին գաղտնի գիտության (ծածկագրերի) մեջ, հրեշտակային մակարդակների (*eons*) միջոցով:
2. Ուրիշների համար էլ ապրելակերպը կենսականորեն կարևոր էր փրկության համար: Այս գրքում սուտ վարդապետները շեշտադրում էին ճգնափորի ապրելակերպը որպես ճշմարիտ հոգևորության ապացույց (տես՝ 2:16-23):

Ե. Առաջարկվող լավագույն գրքերից է Հենս Ջոնասի *Գնոստիկ Կրոնը*, հրատարակված Բեքո Պրեսսի կողմից /Hans Jonas *The Gnostic Religion*, published by Beacon Press/:

X. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «այն հույսի համար, որ երկնքում պահված է ձեզ համար», 1:5
2. ավետարանը, 1:5
3. «խավարի իշխանությունը», 1:13
4. փրկագնություն, 1:14
5. «աներևույթ Աստվածը», 1:15
6. «Նրա մեջ բնակվի Աստվածության ամբողջ լիությունը», 1:19
7. «խաղաղություն անելով Իր խաչի վրա թափված արյան միջոցով», 1:20
8. «յրացնում եմ իմ մարմնի մեջ Քրիստոսի նեղությունների պակասը», 1:24
9. «մարդկային ավանդույթները», 2:8
10. «աշխարհի սկզբունքները», 2:8,20
11. «մկրտությանը Նրա հետ թաղվելով», 2:12
12. «դուք մեռած էիք ձեր հանցանքների մեջ», 2:13
13. «մեր դեմ գրված պարտամուրհակը ջնջելով», 2:14
14. «ձեր կյանքը պահված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ», 3:3
15. բարբարոս, 3:11
16. «Լավողիկեից եկած թուղթը», 4:16

XI. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Եպափրաս, 1:7; 4:12
2. «բոլոր ստեղծվածների անդրանիկը», 1:15
3. «թե՛ գահերը, թե՛ տերությունները, թե՛ պետությունները և թե՛ իշխանությունները», 1:16
4. անդրանիկը մեռելներից, 1:18
5. Սկյութացի, 3:11
6. Տյուքիկոս, 4:7
7. Օնեսիմոս, 4:9
8. Մարկոս, 4:10
9. Ղուկաս, 4:14
10. Դեմաս, 4:14

XII. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Կողոսիա, 1:2
2. Լավողիկե, 2:1
3. Երապոլիս, 4:13

XIII. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է Պողոսն այսքան շատ խոսում գիտության և իմաստության վերաբերյալ (1:9):
2. Ի՞նչ նկատի ունի 1:23-ի զգուշացումը:
3. Ի՞նչն է Աստծո խորհուրդը, որ ծածկված է եղել դարեր շարունակ (1:27):
4. Պողոսը չէ՞ր ճանաչում այս եկեղեցու մարդկանց (2:1):
5. Ինչպե՞ս կարող էր մեկը փիլիսոփայությամբ նրանց գերի դարձնել (2:8):
6. Ի՞նչ վարդապետություն է շեշտադրում 2:9 խոսքը:
7. Բացատրե՛ք 2:15-ի հռոմեական պատմական հիմքը:
8. Ո՞ւմ է վերաբերում 2:16-17 խոսքերը:
9. Ինչպե՞ս է դիտարկում 2:14-23 խոսքերը օրինապահությունը:
10. Ինչո՞ւ է 3:5-ում թվարկված մեղքերը հավասար կռապաշտության:
11. Ի՞նչ առնչություն ունի Կող. 3:11-ը Գաղ. 3:28-ի հետ:
12. Ի՞նչ կապ ունի 3:16-ը Եփես. 5:18-ի հետ:
13. Ո՞րն է 3:23-ի հոգևոր սկզբունքը:
14. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք 4:6-ի առակը:
15. Ինչո՞ւ էր Պողոսը իր բոլոր նամակների վերջն ինքը գրում (4:18):

ԹԵՍԱԳՂՈՆԻԿԵՑԻՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Հակիրճ նկարագրությունը

1. Թեսաղոնիկեցիներին ուղղված նամակները մեզ հսկայական պատկերացում են փոխանցում Պողոսի մասին որպես միսիոների և հովվի: Մենք տեսնում ենք, թե ինչպես է նաև կարճ ժամանակահատվածում եկեղեցի հիմնում և շարունակում աղոթել և հոգալ դրա աճման, զարգացման և ծառայության համար:
2. Մենք տեսնում ենք, թե ինչպես է Պողոսը հավատարմորեն ավետարանը քարոզում, նորադարձների համար հոգ տանում, նրանց հանդիմանում, գովաբանում, առաջնորդում, հորդորում, սովորեցնում, սիրում, նույնիսկ իր անձը նրանց նվիրում: Նա ոգևորվել էր նրանց առաջխաղացմամբ, սակայն հիասթափվել էր նրանց ունեցած հասունության գնահատականից:
3. Այս թղթերում մենք հանդիպում ենք Քրիստոսի սիրառատ և նախանձավոր մի ծառայի, և մի փոքրիկ, նախանձավոր, սակայն աճող նոր եկեղեցու: Երկուսն էլ հավատարիմ էին, երկուսն էլ Աստծո կողմից գործածվում էին, և երկուսն էլ ծառայում էին միմյանց Քրիստոսի պես, որը հազվադեպ կարելի է գտնել Աստծո ժողովրդի մեջ:

Բ. Թեսաղոնիկե քաղաքը

1. Թեսաղոնիկեի կարճ պատմությունը

ա. Թեսաղոնիկեն տեղակայված էր Թերմանյան Ծոցի վերին հատվածում: Թեսաղոնիկեն Հռոմեական գլխավոր ճանապարհի՝ Վիա Իգնատիայի (ազգերի ճանապարհը) վրա գտնվող ծովափնյա քաղաք էր, որը ձգվում էր Հռոմից դեպի արևելք: Լինելով նավահանգիստ այն նաև շատ մոտ էր բերրի, ջրառատ ծավեզրյա մի դաշտավայրի: Այս երեք առավելությունները Թեսաղոնիկե քաղաքը դարձրել էին Մակեդոնիայում ամենամեծ, ամենակարևոր առևտրային և քաղաքական կենտրոնը:

բ. Թեսաղոնիկեն սկզբում կոչվում էր Թերմա, որը ծագել էր այդ տարածքում գտնվող տաք աղբյուրների պատճառով: Վաղ շրջանի մի պատմաբան՝ Պլինյե Երեցը, Թերմայի և Թեսաղոնիկեի մասին խոսում է որպես երկուսն էլ միաժամանակ գոյություն ունեցող քաղաքներ: Եթե իրականում դա այդպես է եղել, ապա Թեսաղոնիկեն պարզապես շրջապատել է Թերման և եղել է նրան կից քաղաք (Լեոն Մորրիս, *Առաջին և Երկրորդ Թեսաղոնիկեցիների Թղթեր*, /Leon Morris, *The First and Second Epistles to the Thessalonians*, Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1991, p. 11/): Մինչդեռ շատ պատմաբաններ հավատում են, որ Ալեքսանդր Մեծի զենեքավներից մեկը՝ Կասսանդրը, Թերմա քաղաքը Բ.ա. 315 թ-ին վերանվանել է Մակեդոնացի Ֆիլիպի դստեր և Ալեքսանդրի կես-քրոջ և իր կնոջ անունով՝ Թեսաղոնիկե (Ստրաբո VII Մաս 21 /Strabo VII Fragment 21/): Քրիստոնեության տարածման առաջին դարերի ընթացքում այնպես եղավ, որ Թեսաղոնիկեն մականվանվեց «ուղղափառ քաղաք», իր Քրիստոնեական էության պատճառով (Դին Ֆարրար, *Սբ. Պողոսի Կյանքն ու Գործը*, Նյու-Յորք /Dean Farrar, *The Life and Work of St. Paul*, New-York: Cassel and Company, Limited, 1904, p. 364/): Այսօր Թեսաղոնիկեն հայտնի է որպես Սալոնիկե և մինչ օրս էլ Հունաստանում կարևոր քաղաք է համարվում:

գ. Թեսաղոնիկեն Կորնթոսի պես կոսմոպոլիտ գործունեության կենտրոն էր, բնակեցված աշխարհի մեզ հայտնի բոլոր ազգերից:

- (1) Հյուսիսից բարբարոս գերմանական ժողովուրդներ էին ապրում այնտեղ, որոնք իրենց հետ բերել էին իրենց հեթանոսական կրոնն ու մշակույթը:
- (2) Այնտեղ ապրում էին հույներ, որոնք եկել էին հարավի Աքայիայից և Էգեյան Ծովի կղզիներից, իրենց հերթին բերելով իրենց ծեսերն ու փիլիսոփայությունը:
- (3) Արևմուտքից նաև հռոմեացիներ էին բնակվում այնտեղ: Նրանք հիմնականում թոշակառու զինվորներ էին և իրենց հետ բերել էին կամքի ուժ, հարստություն և քաղաքական իշխանություն:

- (4) Վերջապես, մեծաքանակ հրեաներ էին եկել արևելքից և արդյունքում բնակչության մեկ երրորդ մասը հրեական ծագման էր: Նրանք իրենց հետ բերել էին էթնիկ միաստվածության հավատք և իրենց ազգային նախապաշարմունքները:
- դ. Թեսաղոնիկեն շուրջ 200,000 բնակչությամբ, իսկապես կոսմոպոլիտ քաղաք էր: Այն հանգստյան և առողջարանային կենտրոն էր իր տաք աղբյուրների շնորհիվ: Այն առևտրային կենտրոն էր իր նավահանգստի, բերրի դաշտավայրերի և Իզնաույան Ճանապարհի շնորհիվ:
- ե. Որպես մայրաքաղաք և ամենամեծ քաղաք Թեսաղոնիկեն նաև հանդիսանում էր Մակեդոնիայի կենտրոնական քաղաքական գրասենյակը: Լինելով հռոմեական նահանգային մայրաքաղաքը և Հռոմի շատ քաղաքացիների տունը (հիմնականում թաշակառու զինվորականների), այն դարձավ ազատ քաղաք: Թեսաղոնիկեն հարկեր չէր վճարում և ղեկավարվում էր Հռոմի օրենքով, քանի որ Թեսաղոնիկեցիների մեծ մասը Հռոմի քաղաքացիներ էին: Այսպիսով Թեսաղոնիկեցի կառավարիչները կոչվում էին «քաղաքական գործիչներ»: Այս տիտղոսը գրականության մեջ ոչ մի այլ տեղ չի հայտնվում, այլ միայն պահպանված է Տեսաղոնիկեի հաղթական կամարի՝ Վարդարի Դարպասի վրա փորագրված արձանագրության մեջ (Farrar, p. 371n.):
2. Դեպքեր, որոնք Պողոսին առաջնորդեցին Թեսաղոնիկե.
- ա. Շատ դեպքեր Պողոսին առաջնորդեցին դեպի Թեսաղոնիկե, մինչդեռ բոլոր ֆիզիկական հանգամանքների ետևում կանգնած է ուղղակի, հստակ Աստծո կանչը: Պողոսը սկզբում չէր ծրագրել մտնել Եվրոպա մայրցամաքը: Սակայն իր այս երկրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ ցանկություն ուներ նորից այցելել Փոքր Ասիայում առաջին միսիոներական ճամփորդության ընթացքում հիմնված եկեղեցիները և ապա գնալ դեպի արևելք: Մինչդեռ, երբ ժամանակը եկավ, որ պետք է ուղղվեր դեպի հյուսիս-արևելյան կողմերը, Աստված սկսեց փակել բոլոր դռները: Այս դեպքերի կուլմինացիայն եղավ Պողոսի Մակեդոնական տեսիլը (տես՝ Գործք 16:6-10): Արդյունքում երկու դեպք պատահեց. առաջինը, որ Եվրոպա մայրցամաքը ավետարանվեց և երկրորդը, որ Պողոսը Մակեդոնիայում ստեղծված իրավիճակների պատճառով սկսեց գրել իր Թորթերը (Թոմաս Քարթեր *Պողոսի կյանքը և նամակները*, Նեշվիլ /Thomas Carter, *Life and Letters of Paul*, Nashville: Cokesbury Press, 1921, p. 112/):
- բ. Վերը նշված հոգևոր առաջնորդությունից բացի Պողոսին Թեսաղոնիկե առաջնորդող ֆիզիկական հանգամանքները հետևյալն էին՝
- (1) Պողոսը գնաց Փիլիպպե, առանց ժողովարանի մի փոքրիկ քաղաք: Նրա գործն այնտեղ խափանվեց մի դիվահար մարգարե աղախնու տերերի և քաղաքի ատյանի կողմից: Պողոսին ձեռնեցին և նվաստացրեցին, այնուհանդերձ նույնիսկ բոլոր այս հավաճանքների մեջ այնտեղ մի եկեղեցի հաստատվեց: Հակառակության և ֆիզիկական պատժի պատճառով Պողոսը ստիպված էր հեռանալ շատ հավանական է ավելի շուտ, քան նա էր ցանկանում:
 - (2) Ո՛ր պետք է նա գնար այնտեղից: Նա անցավ Ամփիպոլիսի և Ապոլոնիայի միջով, որոնք նույնպես ժողովարան չունեին,
 - (3) Նա եկավ այդ տարածաշրջանի ամենամեծ քաղաքը՝ Թեսաղոնիկե, որը ժողովարան ուներ: Պողոսը սովորույթ ուներ առաջին հերթին այցելել տեղի հրեաներին: Նա այդպես էր անում, քանի որ՝
 - (ա) նրանք գիտեին Հին Կտակարանը;
 - (բ) ժողովարանը հնարավորություն էր ընձեռում իրեն սովորեցնելու և քարոզելու համար;
 - (գ) նրանք որպես ընտրյալ ազգ՝ Աստծո ուխտի ժողովուրդ, դիրք ունեին (տես՝ Սատթ. 10:6; 15:24; Հռոմ. 1:16-17; 9-11);
 - (դ) Հիսուսն առաջին հերթին Իր անձը տվել էր նրանց համար, ապա ամբողջ աշխարհի, ուստի Պողոսը նույնպես հետևում էր Քրիստոսի օրինակին:
3. Պողոսին ընկերակցողները.
- ա. Պողոսին Թեսաղոնիկեում ընկերակցում էին Շիդան և Տիմոթեոսը: Դուկասի Պողոսի հետ էր Փիլիպպեում և նա այնտեղ էլ մնաց: Այս մասին իմանում ենք Գործք 16 և 17 գլուխների «մենք» և «նրանք» հատվածներից: Դուկասը Փիլիպպեում խոսում է «մենք» դերանվամբ, սակայն երբ ճամփորդում էն Թեսաղոնիկե՝ «նրանք» դերանվամբ:

- բ. Այն բանից հետո, երբ Բառնաբասն ու Հովհաննես Մարկոսը վերադառնում են Կիպրոս, Պողոսը ընտրում է Շիդային կամ Սիվղանուսին, որպեսզի ընկերակցի իրեն իր երկրորդ միսիոներական ճամփորդության ընթացքում:
- (1) Աստվածաշնչում նրա մասին առաջին անգամ նշվում է Գործք 15:22-ում, որտեղ նա կոչվում է Երուսաղեմի Եկեղեցու եղբայրների մեջ գլխավոր անձ:
 - (2) Նա նաև մարգարե էր (տես՝ Գործք 15:32)
 - (3) Նա էլ Պողոսի պես Հռոմի քաղաքացի էր (տես՝ Գործք 16:37):
 - (4) Նա և Հուդա Բարսաբան ուղարկվեցին Անտիոք Երուսաղեմի Եկեղեցու կողմից, որպեսզի տիրապետեն իրավիճակին (տես՝ Գործք 15:22,30-35):
 - (5) Պողոսը նրան գովաբանում է 2 Կորնթ. 1:19-ում և մի քանի նամակներում նրա մասին նշում:
 - (6) Հետագայում Պետրոսի առաջին նամակը ենթադրում են, որ գրել է նա (տես՝ 1 Պետ. 5:12):
 - (7) Թե՛ Պողոսը և թե՛ Պետրոսը նրան Սիվղանոս են անվանում, մինչև Ղուկասը՝ Շիդա:

գ. Տիմոթեոսը նույնպես Պողոսի ընկերն ու գործակիցն էր՝

- (1) Պողոսը նրան հանդիպես Լյուստրայում, որտեղ նա դարձի եկավ իր առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ:
- (2) Տիմոթեոսը կես հույն (հայրը) և կես հրեա (մայրը) էր: Պողոսն ուզում էր, որ նա գործակցեր իրեն հեթանոսներին ավետարանելու մեջ:
- (3) Պողոսը նրան թվատեց, որպեսզի կարողանա ծառայել նաև հրեաների մեջ:
- (4) Տիմոթեոսը նշվում է 2 Կորնթացիների, Կողոսացիների, 1 և 2 Թեսաղոնիկեցիների և Փիլիմոնի նամակների ողջույնի խոսքերում:
- (5) Պողոսը նրա մասին խոսում է որպես «ծառայության մեջ իմ որդին» (տես՝ 1 Տիմ. 1:2; 2 Տիմ. 1:2; Տիտ. 1:4): Իր բոլոր նամակներում Պողոսը Տիմոթեոսի վերաբերյալ խոսում է որպես երիտասարդ և ամաչկոտ մեկի:
- (6) Պողոսը մեծապես վստահում էր նրան (տես՝ Գործք 19:27; 1 Կորնթ. 4:17; Փիլ. 2:19):

դ. Միայն Պողոսին ընկերակցողների բաժնում կարելի է համապատասխանեցնել այն մարդկանց, որոնց մասին նշվում է, որ եկան Թեսաղոնիկե և գործակցեցին նրան իր հետագա առաքելություններում: Այդ մարդիկ էին Արիստարքոսը (Գործք 19:29; 20:4; 27:2) և Սեկունդոսը (Գործք 20:4): Նաև հնարավոր է, որ Դեմասն էլ լիներ Թեսաղոնիկեից (Փիլիմոն 24; 2 Տիմ. 4:10):

4. Պողոսի ծառայությունն այդ քաղաքում՝

ա. Պողոսը Թեսաղոնիկեում հետևեց իր սովորական ծառայության ձևաչափին առաջին հերթին գնալով հրեաների մոտ և ապա դառնալով դեպի հեթանոսները: Պողոսը երեք Շաբաթ օր քարոզեց ժողովարանում: Նրա պատգամն էր «Հիսուսն է Մեսիան»: Նա գործածում էր Հին Կտակարանյան խոսքերը ցույց տալու, որ Մեսիան պետք է լիներ Չարչարվող Մեսիա (տես՝ Ծանոթ. 3:15; Ես. 53), և ոչ թե քաղաքական ժամանակավոր Մեսիա: Պողոսը նաև շեշտադրում էր հարությունը և բոլոր առաջարկվող փրկությունը: Հիսուսը հստակ ներկայացվում էր որպես հնում խոստացված Մեսիան, որը կարող էր փրկել բոլոր մարդկանց:

բ. Այս պատգամին ի պատասխան որոշ հրեաներ, շատ նվիրված հեթանոսներ և շատ կարևոր կանայք ընդունեցին Հիսուսին որպես Տեր և Փրկիչ: Նորադարձների այս խմբերի վերլուծությունը շատ կարևոր է Պողոսի կողմից հետագայում այս եկեղեցուն գրված նամակները հասկանալու համար:

գ. Այն որ եկեղեցու անդամների մեծամասնությունը հեթանոսներ էին երևում է երկու նամակներում էլ Հին Կտակարանից մեջբերումների բացակայության փաստից: Հեթանոսները պարաստակամորեն ընդունել էին Հիսուսին որպես Տեր և Փրկիչ մի քանի պատճառներով՝

- (1) Նրանց ավանդական կրոնները գորություն չունեցող սնապաշտություններ էին: Թեսաղոնիկեն սփռված էր Օլիմպուս լեռան ստորոտին և բոլորն էլ գիտեին, որ դրա բարձրությունն ունայն էր:
- (2) Ավետարանը ձրի էր բոլորի համար:
- (3) Քրիստոնեությունը չէր բովանդակում հրեական բացարձակ ազգայնականություն: Հրեաների կրոնը շատերին գրավել էր իր միաստվածությամբ և իր բարձր բարոյական արժեքներով, սակայն նաև շատերին վանել էր իր անտանելի

ծեսերի պատճառով (ինչպես օրինակ թվատարությունը), և իրեն բնորոշ ցեղային և ազգային խտրականությամբ:

դ. Շատ «կարևոր կանայք» ընդունեցին Քրիստոնեությունը, քանի որ նրանք հնարավորություն ունեին ազատ ընտրություն կատարել իրենց կրոնի հարցում: Մակեդոնիայի և Փոքր Ասիայի կանայք շատ ավելի ազատ էին, քան հունա-հռոմեական աշխարհի մյուս բոլոր երկրներում (Sir Wm. M. Ramsay, *St. Paul the Traveller and Roman Citizen*, New York: G. P. Putnam's Sons, 1896, p. 227): Մինչդեռ կանանց ավելի աղքատ դասակարգը չնայած այն բանին, որ ազատ էին, գտնվում էին բազմաատվածության և սնապաշտության ազդեցության ներքո (Ռամսեյ, էջ՝ 229):

ե. Շատերը խնդիր էին տեսնում այն երկար ժամանակի մեջ, որ Պողոսը մնաց Թեսաղոնիկեում՝

- (1) Գործք 17:2 խոսում է Թեսաղոնիկեում երեք Շաբաթ ժողովարանում Պողոսի քարոզելու և խոսքի շուրջ խորհրդածելու մասին:
- (2) 1 Թեսաղ. 2:7-11 խոսում է Պողոսի իր առևտրով զբաղվելու մասին: Դա վրանագործությունն էր կամ ինչպես ոմանք են ասում՝ կաշեգործությունը:
- (3) Փիլ. 4:16 պաշտպանում է այն փաստը, որ Պողոսն ավելի երկար է բնակվել Թեսաղոնիկեում, քանի որ նշվում է Փիլիպեի եկեղեցուց երկու անգամ դրամական ընծաներ ստանալու մասին: Ոմանք ասում են, որ Պողոսը մնաց մոտ երկու կամ երեք ամիս և որ այդ երեք Շաբաթը վերաբերում է միայն հրեաներին ծառայելուն (Shepard, p. 165):
- (4) Գործք 17:4-ում և 1 Թեսաղ. 1:9 և 2:4-ում տարբեր դեպքերի ամկայությունը փաստում է այս տեսակետը, և դեպքերում ամկա հիմնական տարբերությունը հեթանոսների կողմից կուռքերի մերժումն է: Գործքում հեթանոսները հրեա նորահավատներ էին և արդեն իսկ կուռքերից ետ էին դարձել: Համատեքստն ակնարկում է, որ հնարավոր է Պողոսն ավելի մեծ ծառայություն է ունեցել հեթանոսների մեջ, քան հրեաների:
- (5) Թե երբ էր ավելի մեծ ծառայություն տեղի ունեցել, անհայտ է, քանի որ Պողոսը միշտ առաջին հերթին գնում էր հրեաներին: Նրա պատգամը մերժելուց հետո, նա դառնում է դեպի հեթանոսները: Երբ բազմաթիվ հեթանոսներ դրական են արձագանքում ավետարանին, հրեաները սկսում են նախանձել (որը հանդիսանում էր Պողոսի միսիոներական մոտեցումներից մեկը, տես՝ Հռոմ. 9-11) և խոռվություն են բարձրացնում քաղաքի բազմության մեջ:

զ. Այս խոռվության պատճառով Պողոսը հեռանում է Յասոնի տնից և Տիմոթեոսի և Շիդայի հետ թաքնվում կամ էլ առնվազն նրանք ներկա չէին, երբ ամբոխը նրանց փնտրելու համար ներխուժում է Յասոնի տուն: Քաղաքի կառավարիչները ստիպելով երաշխիք են ստանում Յասոնից խոռվությունը խաղաղեցնելու համար: Այդ իսկ պատճառով Պողոսը գիշերով հեռանում է քաղաքից և գնում Բերիա: Այնուհանդերձ, եկեղեցին շատ հակառակությունների մեջ շարունակում է վկայել Քրիստոսի մասին:

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. 1 Թեսաղոնիկեցիներին: Միայն մերօրյա որոշ քննադատներն են լրջորեն կասկածել 1 Թեսաղոնիկեցիների նամակի Պողոսի հեղինակությանը և դրա վավերականությանը, սակայն նրանց հետևությունները շատ գիտնականների չեն համոզել: 1 Թեսաղ. նամակը ընդգրկված է Մարկիոնի կանոնում (մ. թ. 140 թ) և Մուրատորիան Պատառիկում (մ. թ. 200 թ): ՆԿ-ի երկու ցանկերն էլ շրջանառվում էին Հռոմում: Իրենեոսը մեջբերում է կատարել 1 Թեսաղ. անվանապես՝ նա գրել է մոտ մ. թ. 180թ-ին:

Բ. 2 Թեսաղոնիկեցիներին

1. Այս նամակը միշտ չէ, որ ընդունվել է որպես Պողոսի կողմից գրված և մի քանի պատճառներով եղել է հարձակման տակ՝
 - ա. Բառապաշարի տարբերությունը խնդիրներից մեկն է: Նամակը պարունակում է այնպիսի բառեր, որոնք չենք գտնում Պողոսի մյուս նամակներում:
 - բ. «Ոճը կարծրատիպային է և երբեմն էլ զարմանալիորեն պաշտոնական» (Heard, p. 186):
 - գ. Երկու նամակների էսկատոլոգիան՝ ապագայի մասին խոսքերը ենթադրվում է, որ անհամապատասխան են;

- դ. 2 Թեսաղ. նամակը պարունակում է հակաքրիստոսի վերաբերյալ այնպիսի տեսակետ, որը բնորոշ է ՆԿ-ին, հետևաբար ոմանք հետևություն են անում, որ Պողոսը չէր կարող լինել հեղինակը:
2. Երկրորդ Թեսաղոնիկեցիների նամակի վավերականությունը հիմնված է մի քանի նախադրյալների վրա՝
- ա. Պոլիկարպը, Իգնատիոսը և Ջասթինը ճանաչում են այն;
 - բ. Մարկիոնիտ կանոնը ներառել է այս նամակը;
 - գ. Մուրատորիան Պատառիկը ներառել է;
 - դ. Իրենեոսը մեջբերում է այն անվանապես;
 - ե. Բառապաշարը, ոճը և աստվածաբանությունը Պողոսին են ինչպես 1 Թեսաղոնիկեցիների նամակում:

Գ. Երկու նամակների համեմատությունը՝

1. Երկու նամակներն էլ իրար շատ նման են, ոչ միայն գաղափարապես, այլ նաև գործնական արտահայտություններով: Եթե բացման և փակման ձևաչափերի լեզուն բացառենք, միևնույն է բովանդակության մոտ մեկ երրորդ մասը արտացոլանքի պես է արտահայտվում:
2. Երկրորդ Թեսաղոնիկեցիների ընդհանուր տոնայնությունը տարբերվում է առաջին նամակից իր սառնությամբ և ավելի պաշտոնական բնույթով: Մինչդեռ այն կարելի է հեշտությամբ հասկանալ, երբ մեկը նկատենք առաջին նամակը գրելու զգացական հանգամանքները և երկրորդ նամակի ժամանակ զարգացած խնդիրները:

Դ. Նամակների հերթականությունը՝

1. Ֆ. Ու. Մենտնի կողմից ներկայացված և ս մի հետաքրքիր վարկած կա, որը օգտվել է Ջոհաննես Ուիսսի գրառումներից: Նրանք պնդում են, որ նամակների հերթականությունը հակառակն է եղել: Պատճառները հետևյալն են՝
 - ա. փորձություններն ու նեղությունները իրենց գազաթնակետին են 2 Թեսաղոնիկեցիների նամակում, իսկ 1 Թեսաղ. -ում դրանք արդեն անցել էին:
 - բ. 2 Թեսաղոնիկեցիների նամակում ներքին դժվարությունների մասին խոսվում է որպես մի նոր զարգացման մասին, որի վերաբերյալ նամակի հեղինակը նոր էր իմացել, մինչդեռ 1 Թեսաղոնիկեցիներում հանգամանքները նրան քաջ հայտնի էին:
 - գ. այն սահմանումը, որ Թեսաղոնիկեցիներին անհրաժեշտություն չկար ճամերի ու ժամանակների մասին որևէ բան գրել (1 Թեսաղ. 5:1) կարող էր գեղեցիկ կերպով համապատասխանել, եթե նրանց ծանոթ լիներ 2 Թեսաղ. 2 գլուխը:
 - դ. «Իսկ այժմ . . . մասին» սահմանումը 1 Թեսաղ. 4:9, 13; 5:1-ում նման է 1 Կորնթ. 7:1,25; 8:1; 12:1; 16:1,12 ծոպերին, որտեղ հեղինակը պատասխանում է այն բարձրաձայնված հարցերին, որոնք կետերով նշված էին իրեն ուղարկած նամակում:
2. Մի քանի նախադրյալներ կարող են հակասել այս փաստերը՝
 - ա. Պողոսի ուշադրությունը գրավող խնդիրները ավելի են ուժեղանում և խորանում 1 Թեսաղոնիկեցիների նամակից մինչև Երկրորդը:
 - բ. 2 Թեսաղ. -ում առկա պատգամները վերաբերում են Պողոսի կողմից ուղարկված մի նամակի (2:2,15; 3:17) և եթե մենք ենթադրենք, որ այս նամակը 1 Թեսաղոնիկեցիների նամակը չէ, ապա մենք ունենք կորած մեկ այլ նամակի խնդիր,
 - գ. Առաջին նամակում մեծ մաս կազմող անձնական հուշերը, որոնք բացակայում են երկրորդում, բնական են թվում, եթե երկրորդ նամակը առաջինի շարունակությունն է,
 - դ. հերթականության հակառակը լինելու դեպքում նամակների տոնայնությունը ընդհանրապես անբնական է թվում:

III. ՆԱՍԱԿՆԵՐԻ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Ա. Թեսաղոնիկեցիների նամակների գրառման տարեթվերը համարվում են Պողոսի նամակների մեջ ամենահստակ տարեթվերը: Արձանագրված է, որ մինչ Պողոսը «Կորնթոսում էր,

ձերբակալվեց և բերվեց Գաղիոնի՝ Աքայիայի փոխադրամարտի առջև»։ Դեյֆիում մի փորագրություն է հայտնաբերվել, որը պատասխանում է այս նույն Գաղիոնի կողմից Կայսր Կլավդիոսին ուղղված մի հարցի։ Այն տարեգրվում է Կայսրի դատաիրավական իշխանության տասներկուերորդ տարվա մեջ, իսկ որպես Կայսր հռչակվելուց քսանվեց տարի անց։ Այս տասներկուերորդ տարին հաշվում են մ.թ. 52թ-ի հունվարի 25-ից մինչև մ.թ. 53թ-ի հունվարի 24-ը։ Մինչ քսանվեցերորդ տարվա հռչակագրի տարեթիվը ճշգրտորեն հայտնի չէ, քսանյոթերորդը եղել է նախքան մ.թ. 52թ-ի օգոստոսի 1-ը։ Կլավդիոսի որոշումը պետք է տրված լիներ Գաղիոնին 52թ-ի առաջին կեսին։ Ընդհանրապես նահանգապետները պաշտոնադրվում էին ամառվա սկզբին և իրենց պոշտոնը կատարում ուղիղ մեկ տարի։ Այդ դեպքում ենթադրվում է, որ Գաղիոնը իր ժամկետային պաշտոնավարմանն էր անցել 51թ-ի ամռան սկզբին (Մորրիս, էջ՝ 15 /Morris/):

Բ. Նահանգապետի գրասենյակի պաշտոնավարման այս ժամկետը լիովին չի լուծում Թեսաղոնիկեցիներին ուղղված Նամակների գրառման տարեթվերի բոլոր խնդիրները։ Պողոսը Կորնթոսում մնաց 18 ամիս (Գործք 18:11), սակայն երբ կանգնեց Գաղիոնի առջև՝ հայտնի չէ։ Շատ մեկնաբաններ 1 և 2 Թեսաղոնիկեցիների նամակները թվագրում են մ.թ. 50-51թթ։

Գ. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ.Բոյուսի և Մյուրի Հարրիսի, որոշակի ուղղումներով՝

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|-------------------------|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |
| 3. 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. 2 Կորնթացիներին | 56 | Սակեդոնիա | 20:2 |
| 6. Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. Բանտից նամակները՝ | | | |
| Կորնթացիներին | 60-ի սկիզբ | | |
| Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| Փիլիպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. Չորրորդ միսիոն . | | | |
| նամփոթությունը | | | |
| 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Սակեդոնիա | |
| Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) | |
| 2 Տիմոթեոսին | 64 մ.թ. 68) | Հռոմ | |

IV. ԹԵՍԱԳՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՁ ԸՆԹԱՑՈՂ ԴԵՊՔԵՐԸ

Ա. Դեպքերը, որոնք Պողոսին առաջնորդեցին գրել Թեսաղոնիկեցիների նամակները, բարդ են և փոխկապակցված։ Պետք է հաշվի առնենք որոշ տարբերություններ, հատկապես ֆիզիկական և զգայական միջավայրերի շուրջ։ Պողոսը ստիպված էր թողնել նորահավատ Թեսաղոնիկեցիներին, քանի որ Հրեաները քաղաքում Յասոնի տանը Պողոսին և նրա ծառայակիցներին փնտրելիս սնապաշտ և բազմաստավծության հետևող մարդկանց մեջ խռովություն էին բարձրացրել։ Քաղաքապետների առջև Յասոնին և մյուս Քրիստոնյա առաջնորդներին լսելուց հետո, նրանք ստիպված եղան խաղաղության համար երաշխիք տալու։ Երբ Պողոսն իմացավ այս մասին, ստիպված եղավ շարժվել առաջ և թողնել այս երիտասարդ, անհաս եկեղեցին։ Ուստի Տիմոթեոսի և Շիդայի հետ միասին մեկնեց Բերիա։ Ըստ երևույթին սկզբում Տիմոթեոսը մնաց (տես՝ Գործք 17:10), ապա հետագայում միացավ Շիդային Աթենք գնալիս (տես՝ Գործք 17:15)։ Սկզբում Բերիայում գտնվող ազնիվ հրեաների ընդունելությունը օրինություն էր Պողոսի համար, նախկինում իր ունեցած լարված հակառակությունից հետո։ Սակայն սա երկար չտևեց։ Թեսաղոնիկեի հրեաները իջան Բերիա և սկսեցին նեղություն պատճառել։ Ուստի Պողոսը ստիպված էր նորից հեռանալ։

Բ. Այս անգամ Պողոսը գնաց Աթենք, որտեղ նրան ցուցաբերեցին սառը և անհյուրընկալ ընդունելություն: Ակադեմիական փիլիսոփաների համար նա դարձավ մի նորույթ: Մակեդոնիայում ունեցած իր փորձառությունն անցավ հալածանքների և հակառակության մեջ: Նա ծեծվեց, մտրակվեց և գիշերով քաղաքում հետապնդվեց: Մտավորականները ծաղրեցին նրան, իսկ հեթանոսներն ու իր հայրենակիցները ստեցին նրան (տես՝ 2 Կորնթ. 4:7-11; 6:4-10; 11:23-29):

Գ. Պողոսը ստիպված էր թողնել Թեսաղոնիկեի այս խոստումնալից եկեղեցին ճակատագրական ժամանակ: Նրանք հասուն չէին հավատքի մեջ և առնակատվում էին նեղության և հալածանքների հետ: Պողոսն այլևս չէր կարողանում դիմանալ մտավոր տառապանքին: Մտահոգվելով երիտասարդ նորահավատների մասին, ինչ-որ մի տեղ Բերիայի և Աթենքի միջև, Պողոսը հետ ուղարկեց Տիմոթեոսին և Շիդային Մակեդոնիայի նոր եկեղեցիները: Տիմոթեոսը գնաց Թեսաղոնիկե: Շատերը կարծում են, որ նա այնտեղ մնաց վեց ամսից մինչև մեկ տարի: Եկեղեցին մեծապես կարիք ուներ, որ ինչ-որ մեկն իրենց մոտ մնալով սովորեցներ, մխիթարեր և քաջալերեր: Տիմոթեոսն ինքնին դեռ նորահավատ էր: Նա դարձի էր եկել Պողոսի առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ, սակայն Պողոսի երկրորդ միսիոներական ճամփորդության ընթացքում Լյուստրա այցելելուց ի վեր նրա հետ էր: Ուստի ծառայության մեջ նա նոր էր, սակայն Պողոսը մեծ վստահություն ուներ նրա հանդեպ: Սա Տիմոթեոսի առաջին առաջադրանքն էր որպես Պողոսի պաշտանական ներկայացուցիչ:

Դ. Պողոսը Աթենքում մենակ էր ծառայում և Մակեդոնիայում ավետարանին հանդեպ քիչ արձագանք ստանալու և իր կողմից այնտեղ գտնվող նոր Քրիստոնյաների համար անդադրում մտոհոգության պատճառով շատ հուսահատվեց: Հատկապես նա շատ էր անհանգստանում Թեսաղոնիկեի եկեղեցու համար: Կարո՞ղ էր արդյոք այսքան կարճ ժամանակահատվածում հիմնվել եկեղեցի և այն էլ այդպիսի դժվար պայմաններում և դեռևս հարատևել (Canter, էջ՝ 115): Բացի այդ նա ոչ մի լուր չէր ստացել Տիմոթեոսից և Շիդայից մի որոշ ժամանակ (վեց ամսից մինչև մեկ տարի, չնայած ոմանք ասում են մեկ կամ երկու ամիս) (Farrar, էջ՝ 369): Սա Պողոսի այն զգացական վիճակն էր, որով նրան տեսնում ենք Կորնթոս ժամանելիս:

Ե. Կորնթոսում երկու բան տեղի ունեցավ, որոնք Պողոսին քաջալերեցին՝

1. Այն տեսիլքը, որ Աստված Կորնթոսում շատ մարդիկ ունի, որոնք արձագանքելու են Ավետարանին (Գործք 18:9-10):
2. Տիմոթեոսն ու Շիդան ժամանեցին և բարի լուրեր բերեցին (Գործք 18:5): Տիմոթեոսից ստացած Թեսաղոնիկեի մասին այդ լուրերն էին, որ Պողոսին առաջնորդելու էին գրելու նրանց Կորնթոս քաղաքից: Պողոսը եկեղեցուց ուղղված վարդապետական և գործնական հարցերին էր պատասխանում:

Զ. Երկրորդ Թեսաղոնիկեցիների նամակը այդքան էլ երկար չէր առաջինից հետո, քանի որ այն չարդարացրեց Պողոսի բոլոր հույսերը: Նաև նա տեղեկացավ այլ խնդիրների մասին էլ: Շատ գիտնականներ հավատում են, որ 2 Թեսաղ. նամակը գրվել է 1 Թեսաղ. նամակից վեց ամիս հետո:

V. ՆԱՄԱԿՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Թեսաղոնիկեցիների նամակները ունեն երեք նպատակ՝

1. որպեսզի հասցնի նրանց Պողոսի ուրախությունն ու գոհունակությունն Աստծուն Թեսաղոնիկեցիների հավատարմության և Քրիստոսանմանության համար, չնայած որ անցնում էին այդքան հալածանքների միջով:
2. պատասխանելու իր շարժառիթների և բնավորության դեմ բարձրաձայնված քննադատություններին
3. քննարկելու Տիրոջ երկրորդ գալուստը: Պողոսի քարոզչության այս էսկատոլոգիական տարրը Թեսաղոնիկեցի Քրիստոնյաների մոտ երկու հարց առաջացրեց՝
ա. Ի՞նչ է պատահելու այն հավատացյալների հետ, որոնք մահացել նախքան Տիրոջ վերադարձը:
բ. Ի՞նչ է պատահելու համայնքի այն հավատացյալներին, որոնք այլևս չեն աշխատում և նստած սպասում են, թե երբ է Տերը վերադառնալու (Barclay, էջ՝ 21-22):

Բ. Վերը նշվածներից մեծ մասը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ այս եկեղեցին երիտասարդ և շատ նախանձավոր էր: Մինչդեռ հանգամանքների բերումով նրանք լիարժեք ուսուցանված և դաստիարակված չէին: Այս խնդիրները ներկայացնում են, թե ինչ կարող է տեղի ունենալ այս բնույթի եկեղեցու հետ՝ նորահավատների, տկարների, թուլասիրտների, անբանների, երազկոտների և շփոթված՝ մոլորվածների:

Գ. Երկրորդ Թեսաղոնիկեցիների նամակը գրվելու պատճառն այս էր՝ «Այն պարզապես միևնույն իրադրության համար գրված երկրորդ դեղատոմս էր, որը գրվել էր այն բանից հետո, երբ տեղեկացվել էր, որ մի քանի համառ սիմպոտոմներ չէին ենթարկվել առաջինին» (Ուոքեր, էջ՝ 2968 /Walker/):

VI. ՄԵԶԲԵՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՐԶԵՐԸ

Barclay, Williams, *The Letters and the Revelation. The New Testament*, 2 vol. New York: Collins, 1969 /Բարբլի Ուիլյամս *Թղթերը և Հայտնությունը: Նոր Կտակարանը*/:

Carter Thomas, *Life and Letters of Paul*. Nashville: Cokesbury Press, 1921 /Քարթեր Թոմաս *Պողոսի կյանքն ու նամակները*/:

Farrar, Dean. *The Life and Work of St. Paul*. New York: Cassell and Company, Limited, 1904 /Ֆարրար, Դին Սթ. *Պողոսի կյանքն ու Գործը*/:

Heard, Richard *An Introduction to the New Testament*. New York: Harper and Row Publishers, 1950 /Հրդ Ռիչարդ *Նոր Կտակարանի Ներածություն*/:

Metzger, Bruce Manning *The New Testament: Its Background, Growth and Content*. Nashville: Abingdon Press, 1965 /Մեցգեր, Բրյուս Մենինգ *Նոր Կտակարանը՝ հիմքը, աճն ու բովանդակությունը*/:

Manson, T. W. *Studies in the Gospels and Epistles*. Philadelphia: Westminster, 1962 /Մենսոն Տ. Ու. *Ավետարանների և Թղթերի Սերտողություններ*/:

Morris, Leon. *The First and Second Epistles to the Thessalonians*. Grand Rapids: Eerdmans, 1991 /Մորրիս Լեոն, *Առաջին և Երկրորդ Թեսաղոնիկեցիների նամակները*/:

Ramsay, W. M. *St Paul the Traveller and Roman Citizen*. New York: G. P. Putnam's Sons, 1896 /Ռամսեյ Ու. Մ. Սթ. *Պողոս Ճանապարհորդը և Հռոմի քաղաքացին*/:

Shepard, J. W. *The Life and Letters of Paul*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1950 /Շեփրդ Ջ. Ու. *Պողոսի կյանքն ու նամակները*/:

Walker, R. H. *The International Standard Bible Encyclopedia*. Vol. V. N. D. /Ուոքեր Ռ. Հ. *Աստվածաշնչյան Միջազգային Ստանդարտ Հանրագիտարան*/:

VII. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ա. Ողջույնի խոսք, 1:1

Բ. Գոհության աղոթք, 1:2-4

Գ. Հուշեր, 1:5-2:16

1. Թեսաղոնիկեցիների արձագանքը առաջին քարոզին, 1:5-10
2. Ավետարանի քարոզչությունը Թեսաղոնիկե քաղաքում, 2:1-16
 - ա. Թիմի շարժառիթների մաքրությունը, 2:1-6ա
 - բ. Թիմի կողմից օգնություն ընդունելու մերժումը, 2:6բ-9
 - գ. Թիմի վարքը եղել է անբասիր, 2:10-12
 - դ. Թիմի Աստծո Խոսքից պատգամը, 2:13

Ե. Հալածանք, 2:14-16

Գ. Պողոսի փոխհարաբերությունը Թեսաղոնիկեցիների հետ, 2:17-3:13

1. Վերադառնալու նրա ցանկությունը, 2:17,18
2. Պողոսի ուրախությունը Թեսաղոնիկեցիներով, 2:19,20
3. Տիմոթեոսի առաքելությունը, 3:1-5
4. Տիմոթեոսի հաշվետվությունը, 3:6-8
5. Պողոսի գոհունակությունը, 3:9,10
6. Պողոսի աղոթքը, 3:11-13

Ե. Քրիստոնեական ապրելակերպի հորդոր, 4:1-12

1. Ընդհանուր, 4:1,2
2. Սեռական կյանքի մաքրություն, 4:3-8
3. Եղբայրական սեր, 4:9, 10
4. Ապրուստ վաստակելը, 4:11,12

Զ. Երկրորդ Գալստյան հետ կապված խնդիրներ, 4:13-5:11

1. Պարուսիայից առաջ մահացած հավատացյալները, 4:13-18
2. Պարուսիայի ժամանակը, 5:1-3
3. Այդ օրերի գավակները, 5:4-11

Է. Ընդհանուր հորդորներ, 5:12-22

Ը. Ամփոփում, 5:23-28

*ԱՅՍ ԳԻՐՔԸ ԱՅՆՔԱՆ ԷԼ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՉԻ ՈՒՐՎԱԳԾՈՒՄ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ, ՈՐՔԱՆ ՊՈՂՈՍԻ ՄՅՈՒՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ: ԵԹԵ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԵՎԱԶՉՓԸ ՀԵՏԵՎՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՈՂՈՍԻ ԶՆՆԱՐԿՄԱՆԸ 4:17-18-ՈՒՄ, ԱՊԱ ԱՅՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆ Է ԵՎ ՈՉ ԹԵ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ: ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՄՏԸ ՊԱՐԶԱՊԵՍ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՉԷ, ՈՐ ՊԵՏՔ Է ՀԱՍՏԱՏՎԻ, ԱՅԼ ԱՅՆՊԻՍԻ ՍՊԱՍՈՒՄՈՎ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ, ՈՐ ՆԱ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՄԵՆ ՎԱՅՐԿՅԱՆ ԷԼ ՎԵՐԱԴԱՌՆԱ:

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Դուք էլ մեր նման եղաք», 1:6
2. «Կենդանի և Ճշմարիտ Աստծուն», 1:9
3. «գալիք բարկություն», 1:10
4. «ինչպես մի դայակ», 2:7
5. «հակառակ են բոլոր մարդկանց», 2:15
6. «Սատանան արգելք եղավ», 2:18
7. «լրացնելու այն, ինչ դեռ պակասում է ձեր հավատի մեջ», 3:10
8. սուրբ լինելը, 4:3
9. ննջել / ննջեցյալ, 4:13
10. «ննջեցյալներից առաջ չեն անցնելու», 4:15
11. «Աստծո փողով», 4:16
12. «ամպերով», 4:17
13. «և այդպես հավիտյան Տիրոջ հետ պիտի լինենք», 4:17
14. քնել, 5:6,7
15. արթուն, 5:8
16. «հավատի ու սիրո զրահը», 5:8
17. «փրկության հույսի սաղավարտը», 5:8
18. սուրբ համբույր, 5:26
19. համբերություն, 2 Թեսաղ . 1:4
20. հավիտենական կորուստ, 2 Թեսաղ . 1:9
21. խաբի, մոլորեցնի, 2 Թեսաղ . 2:3
22. «Տերը պիտի սպառի Իր բերնի շնչով», 2 Թեսաղ . 2:8

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Միդվանոս, 2 Թեսաղ. 1:1
2. հրեշտակապետ, 1 Թեսաղ. 4:16
3. «երբ ասեն . . .», 1 Թեսաղ. 5:3
4. «անօրենության մարդը», 2 Թեսաղ. 2:3
5. «բայց Նա, որ այժմ արգելակում է», 2 Թեսաղ. 2:7
6. «որ անկարգությամբ է ապրում», 2 Թեսաղ. 3:6

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Թեսաղոնիկե, 1:1
2. Մակեդոնիա, 1:8
3. Աքայիա, 1:8
4. Փիլիպպե, 2:2
5. Հուդա, 2:14
6. Աթենք, 3:1

XI. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Պողոսը 2:3 և 5-ում իր քարոզչությունը նկարագրում է հինգ կերպ: Թվարկե՞ք դրանք:
2. Ինչո՞ւ Պողոսը դրամական օգնություն չէր ընդունում այն եկեղեցիներից, որոնց քարոզել էր (2:9):
3. Ի՞նչ կապ ունի 4:11-ը այն պատմական իրավիճակի հետ, որը Պողոսի համար պատճառ հանդիսացավ այս նամակը գրելու (նաև 2 Թեսաղ. 3:6-12):
4. Ինչպե՞ս է 4:17 կապված հափշտակության հետ:
5. Ի՞նչ նկատի ունի 5:1-ը:
6. Ինչո՞ւ է Պողոսը հավատացյալին նկարագրում որպես զինվոր (5:8):
7. Ի՞նչ կապ ունի 5:12-13 այսօրվա ծառայողների հետ:
8. Թվարկե՞ք 5:14-22-ում արձանագրված այն գործերը, որոնց հավատացյալը կանչված է անելու:
9. Ըստ 5:23-ի արդյո՞ք մարդկությունը բաժանված է երեք կատեգորիայի:
10. Ո՞րն է 2 Թեսաղ. 1-ի գլխավոր թեման: Ինչո՞վ է այն տարբերվում 1 Թեսաղ. 1:1-ից:
11. Արդյո՞ք 2 Թեսաղ. 2:4-ը պահանջում է վերակառուցել հրեաների Տաճարը:
12. Ինչպե՞ս է 2 Թեսաղ. 2:11 կապված մարդու ազատ կամքի և պատասխանատվության հետ:
13. Ինչպե՞ս է 2 Թեսաղ. 2:13-15 հավասարակշռում նախասահմանությունն ու մարդու ազատ կամքը:

ՀՈՎՎԱԿԱՆ ԹՂԹԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ 1 և 2 ՏԻՄՈԹԵՈՍ և ՏԻՏՈՍ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. 1 Տիմոթեոսում, Տիտոսում և 2 Տիմոթեոսում նշված աշխարհագրական տեղանքը չի համապատասխանում ո՛չ Գործքի և ո՛չ էլ Պողոսի մյուս նամակների ժամանակագրության հետ:

1. այցելություն Եփեսոս (տես՝ 1 Տիմ. 1:3)
2. այցելություն Տրովադա (տես՝ 2 Տիմ. 4:13)
3. այցելություն Մելիտոս (տես՝ 2 Տիմ. 4:20)
4. առաքելություն դեպի Կրետե (տես՝ Տիտոս 1:5)
5. առաքելություն դեպի Իսպանիա (Հռոմեացի Կլեմենտից՝ մ.թ.95թ. և Մուրատորիան Կանոնի Ներածությունից՝ մ.թ. 180-200թթ):

Հետևաբար կարծում եմ, որ Պողոսը բանտից ազատվելով (60-ականների սկզբից մինչև կեսերը, որոնք փաստագրված են 1 Կլեմենտի 5-ում, գրված մոտ մ.թ. 95-ին) կատարեց իր չորրորդ միսիոներական ճամփորդությունը, ապա նորից ձերբակալվեց և սպանվեց նախքան մ.թ. 68թ-ը (Ներոնի ինքնասպանությունը):

Բ. Այս նամակները ընդհանուր առմամբ ենթադրվում է, որ եղել են կազմակերպչական՝ ադմինիստրատիվ նպատակով (եկեղեցաշինության): Սակայն *Նոր Միջազգային Աստվածաշնչյան Մեկնաբանության /New International Biblical Commentary/* հատոր 13-ում, 1 և 2 Տիմոթեոս և Տիտոս նամակներում, Գորդոն Ֆիին /Gordon Fee/ ինձ համոզում է, որ այս նամակները գրվելու առիթը հանդիսացել են սուտ ուսմունքները, որոնք սողոսկել էին Եփեսոսի տնային եկեղեցիները (1 Տիմոթեոս) և Կրետե կղզին (Տիտոս):

Գ. Ինչ-որ տեղ Հովվական Թղթերը հաստատում են ադմինիստրատիվ ձևաչափ, որը շատ նման է Էսսենների *Խրատակյան Չեռնարկ*-ին /*Manual Od Discipline*/: Այս կանոնները աստիճանաբար ավելի ու ավելի անհրաժեշտություն էին դառնում վաղ շրջանում առաքյալների ուսմունքից և ձևից բաժանվելու անջատողական երևույթների լույսի ներքո:

Դ. Հովվական Թղթերի և Ղուկասում ու Գործում Ղուկասի բառապաշարի միջև եղած նմանությունները հնարավոր է այն պատճառով են, որ Ղուկասը Պողոսի դպիրն էր (տես՝ Ս. Ֆ. Ս. Մուլ, *Հովվական Թղթերի Ինդիքը .վերագնահատումը /C. F. C. Moule, The Problem of the Pastoral Epistles: A Reappraisal/*): Ս.Չ. Ուիլսոնը նույնիսկ *Ղուկասը և Հովվական Թղթերը /S. G. Wilson Luke and the Pastoral Epistles/* իր գրքում հիմնավորում է, որ այս երեք գրքերը հնարավոր է Ղուկասի կողմից փորձ է եղել գրելու երրորդ հատորը, որպեսզի նկարագրի Հռոմից դուրս ավետարանի տարածումը:

Ե. Ինչո՞ւ են այս երեք գրքերն իրար միահյուսված: Հնրավո՞ր է արդյոք, որ դրանք վերաբերում էին տարբեր ժամանակների, վայրերի, խնդիրների: Միայն 1 Տիմոթեոսն ու Տիտոսն են առնչվում եկեղեցու կազմակերպչական հարցերի հետ: Իրականում նմանությունը (1) բառապաշարի մեջ է, (2) կեղծ վարդապետներն են, որոնք կարծես թե միավորում են այս գրքերը, և (3) այն փաստը, որ դրանք այնքան էլ չեն համապատասխանում Գործքի ժամանակագրության հետ (եթե դիտարկենք միասին):

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հենց նամակները հաստատում են, որ գրված են Պողոսի Առաքյալի կողմից (տես՝ 1 Տիմ. 1:1; 2 Տիմ. 1:1 և Տիտոս 1:1) իր երկու առաքելական ներկայացուցիչներին՝ Տիմոթեոսին և Տիտոսին:

- Բ. Հովվական Թղթերի հեղինակի հարցը սկսվեց վիճահարույց դառնալ 19-րդ և 20-րդ դարերում: Պողոսը որպես հեղինակ հերքվում է սովորաբար հիմնվելով՝
1. ձևավորված եկեղեցու կազմավորման վրա (առաջնորդների հատկանիշները)
 2. ձևավորված գնոստիցիզմի վրա (արձանագրված երկրորդ դարում)
 3. ձևավորված աստվածաբանության վրա (դավանաբանական սահմանումները)
 4. բառապաշարի տարբերության և ոճի վրա (բառերի մեկ երրորդ մասը չեն կիրառվում Պողոսի մյուս գրքերում):
- Գ. Այս տարբերությունները կարելի է բացատրել՝
1. սրանք Պողոսի վերջին գրվածքներն են, հավանաբար որպես դպիր գրված Ղուկասի ձեռքով
 2. բառապաշարն ու ոճը կախված են հանգամանքներից
 3. գնոստիկ գաղափարները առաջին դարի հրեական մտածելակերպի զարգացման հետևանքն են (տես՝ Մեռյալ Ծովի Մագաղաթները)
 4. Պողոսը փայլուն աստվածաբան էր և ստեղծագործ գրող՝ հարուստ բառապաշարով:
- Դ. Գոյություն ունի պատմական նախադրյալի աճող հասկացություն՝
1. Պողոսի կողմից Քրիստոնյա հմուտ դպրից օգտվելը (այս դեպքում հավանական է Ղուկասը)
 2. Պողոսի կողմից համահեղինակներից օգտվելը (այսինքն՝ իր միսիայի թիմից մի մաս, տես՝ 2 Տիմ. 4:11)
 3. Պողոսի կողմից պատարագային կամ օրհներգային մեջբերումներից օգտվելը (գեղեցիկ ամփոփում կարող էր գտնել *Պողոսի Բառարանը և Նրա Նամակները*, գրքից, որ խմբագրված է Հոութորն և Մարթինի կողմից /*Dictionary of Paul and His Letters*, edited by Hawthorne and Martin, published by IVP, p. 664/):

Այն ենթադրությունները, որ Հովվական Թղթերի որոշ մասեր այլ աղբյուրներից վերցված մեջբերումներ են, օգնում են մեզ բացատրելու *hapax legomena* (ՆԿ-ում միայն մեկ անգամ օգտագործված բառերը) մեծ թիվը, ոչ Պողոսյան դարձվածքները և Պողոսին բնորոշ տերմինների կիրառությունը:

 - ա. դոկտորոգիաները (տես՝ 1 Տիմ. 1:17; 6:15-17)
 - բ. հակասությունների ցանկը (տես՝ 1 Տիմ. 1:9-10)
 - գ. կանանց վերաբերող պատշաճ վարքագիծը (տես՝ 1 Տիմ. 2:9-3:1ա)
 - դ. ծառայողների հատկանիշները (տես՝ 1 Տիմ. 3:1բ-13)
 - ե. օրհներգության դավանություններ (1 Տիմ. 2:5-6; 3:16; 2 Տիմ. 1:9-10; Տիտոս 3:3-7)
 4. օրհներգեր (տես՝ 1 Տիմ. 6:11-12, 15-16; 2 Տիմ. 2:11-13; Տիտոս 2:11-14)
 - ա. ՀԿ *midrash* (տես՝ 1 Տիմ. 1:9-10; 2:9-3:1ա; 5:17-18; 2 Տիմ. 2:19-21; Տիտոս 3:3-7)
 - բ. բանաձև՝
 - (1) «հավատարիմ է խոսքը» (տես՝ 1 Տիմ. 1:15; 2:9-3:1ա; 2 Տիմ. 2:11-13; Տիտ. 3:3-8)
 - (2) «իմանալով սա, որ» (տես՝ 1 Տիմ. 1:9-10; 2 Տիմ. 3:1-5)
 - (3) «այս բաները» (տես՝ 1 Տիմ. 4:6,11; 2 Տիմ. 2:14; Տիտոս 1:15-16; 2:1)
 5. մեջբերում մի հույն բանաստեղծից (Տիտ. 1:12 [Էպիմենիդես և/կամ Եվրիպիդես])
- Ե. Չարմանալի է, որ ենթադրյալ երկրորդ դարի «Պողոսյան» մեկը կարող էր նշել նմանատիպ հատուկ մանրամասներ, ինչպես օրինակ մարդկանց անուններն են (այսինքն՝ Հիմենոս՝ 1 Տիմ. 1:20; 2 Տիմ. 2:17; Ալեքսանդր՝ 1 Տիմ. 1:20; Չենոն՝ Տիտոս 3:13) և դեպքերը («Տրոմիփոսին հիվանդ վիճակում թողեցի Մելիտոսում»՝ 2 Տիմ. 4:20; կամ որբևայրու դերը՝ 1 Տիմ. 5:9), որոնք նշված չեն Պողոսի գրքերից և ոչ մեկում: Այս բաները չեն համապատասխանում պալեոգրաֆիայի ենթադրության հետ:
- ՆԿ-յան թղթերի հետ կապված կեղծանունության վերաբերյալ հետաքրքիր հոդված կարող էր կարդալ *Նոր Կտակարանի Ներածություն* Կարսոն, Մու և Մորիս, էջ՝ 367-371 գրքից /*An Introduction to the New Testament by Carson, Moo and Morris*/:

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եթե ճիշտ է, որ Պողոսը բանտից ազատվել է (Գործք Առաքելոց գրքի ավարտից հետո, հավանաբար մ. թ. 59-61թթ), ապա կա՞ն արդյոք հետբանտարկության շրջանի իր գործունեությունից վաղ շրջանի ավանդույթներ (այսինքն՝ քարոզչություն Իսպանիայում, տես՝ Հռոմ. 15:24,28) .

1. Հովվական Թղթերը (տես՝ 2 Տիմ. 4:10)
2. 1 Կլեմենտի 5
 - ա. Պողոսը քարոզում էր արևելքում և արևմուտքում (այսինքն՝ Իսպանիա)
 - բ. Պողոսը սպանվել է «թաղապետների» իշխանության ներքո (այսինքն՝ Տիգելինուսի և Սաբինուսի, որոնք գործում էին Ներոնի իշխանության վերջին տարում)
3. Մուրատորիան Պատառիկի ներածությունը (մոտ մ. թ. 180-200թթ. Հռոմից կանոնավոր գրքերի մի ցանկ)
4. Եվսեբիոսի *Պատմական Եկեղեցական Պատմություն* 2:22:1-8 /Eusebius' *Historical Ecclesiastical History* 2:22:1-8/ ասում է, որ Պողոսը ազատվեց հռոմեական բանտարկությունից:

Բ. Կարծես թե 1 Տիմոթեոսն ու Տիտոսը գրվել են գրեթե միևնույն ժամանակ՝ նախքան Պողոսի կրկին բանտարկվելը: 2 Տիմոթեոսը Պողոս Առաքյալի կողմից գրված վերջին նամակն է և բանտից ուղղված հրաժեշտի խոսք:

Գ. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ.Բրյուսի և Մյուրի Հարրիսի, որոշակի ուղղումներով՝

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|-------------------------|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |
| 3. 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. 2 Կորնթացիներին | 56 | Մակեդոնիա | 20:2 |
| 6. Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. Բանտից նամակները՝ | | | |
| Կողոսացիներին | 60-ի սկիզբ | | |
| Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| Փիլիպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. Չորրորդ միսիոն . | | | |
| նամփոթությունը | | | |
| 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Մակեդոնիա | |
| Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) | |
| 2 Տիմոթեոսին | 64 մ. թ. 68) | Հռոմ | |

IV. ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա. Հովվական Թղթեր անունը սկիզբ է առել մ. թ. 1703թ-ի Դ. Ն. Բերդոթի մեկնաբանությունից: Այն արտահայտում է դրանց յուրահատուկ բնույթն ու բովանդակությունը: Սակայն Տիմոթեոսն ու Տիտոսը հովիվներ չեն եղել, այլ առաքյալի կողմից լիազորված մարդիկ:

Բ. Այս նամակները ուղղված են եկեղեցիներին, սակայն նամակի գրական ձևաչափի մեջ դրանք ուղղված էին Պողոսի գործակիցներին՝ Տիմոթեոսին և Տիտոսին: Պողոսը դիմում է եկեղեցու համայնքին, ինչպես նաև իր առաջնորդական թիմին: Պողոսի կողմից ակնարկվող ավելի լայն լասարանը հետևյալն է՝

1. պաշտոնական ներածականները, որտեղ նշվում է նրա առաքյալի կարգավիճակը

2. բոլոր երեք նամակների վերջաբանում հոգնակի թվով նշված «դուք» դերանունը
3. Պողոսն իր կոչման պաշտպանության խոսքով (տես՝ 1 Տիմ. 2:7)
4. Պողոսի կողմից Տիմոթեոսին այնպիսի բաների մասին գրելը, որոնք արդեն իսկ նրա հետ հանդիպման ժամանակից ի վեր գիտեր (տես՝ 1 Տիմ. 3:15):

V. ՀԱՆԳԱՄԱՆՔԸ, ՆՊԱՏԱԿԸ

Ա. Գլխավոր նպատակը եղել է վերահաս հերձվածողությունից պաշտպանելը (տես՝ 1 Տիմ. 1:3-7): Հիմնական հերձվածողությունը հնարավոր է եղել է Հրեական և գնոստիկ հակումների համադրությունը (Եփեսացիների և Կողոսացիների մեջ առկա սուտ վարդապետներին շատ նման): Հավանաբար կային երկու տարբեր խմբեր:

Բ. ՀԿ-ը ներկայացնում է հավատքի համայնքներ կազմավորելու երկու հատուկ կանոն: ՆԿ չունի հատուկ կարգադրությունները եկեղեցու քաղաքականության կազմակերպման վերաբերյալ: Հովվական Թղթերը (1 Տիմոթեոս, 2 Տիմոթեոս և Տիտոս) շատ մոտ են ՆԿ-յան հավատքի համայնքի կազմակերպման ուղեցույցներին:

Գ. 1 Տիմոթեոսը գրվել է՝

1. Տիմոթեոսին խնդրելու, որ մնա Եփեսոսում (տես՝ 1 Տիմ. 1:3)
2. սուտ վարդապետների խնդիրը լուծելու (տես՝ 1 Տիմ. 1:19-20; 4:1-5; 6:4-5,20-21)
3. առաջնորդներ բարձրացնելու հարցում օգնելու համար (տես՝ 1 Տիմ. 3)

Դ. Տիտոսն ուներ միևնույն հանձնարարությունը, որպեսզի լուծեր Կրետեում առկա հերձվածողության և կազմակերպման հարցը (տես՝ 1:5):

Ե. 2 Տիմոթեոսը գտնում է Պողոսին բանտում՝ ազատվելու փոքր հույսով (տես՝ 4:6-8; 16-18)

Զ. Առկա է «ողջամիտ ուսմունքի» (այսինքն՝ ճիշտ վարդապետության) ուժեղ զգացողություն, որը հնչում է այս նամակների ամբողջ բովանդակությամբ (տես՝ 1 Տիմ. 1:10; 4:6; 6:3; 2 Տիմ. 1:13; 4:3; Տիտոս 1:9; 2:1) կամ «արթուն հավատքի մեջ» (տես՝ Տիտոս 1:3; 2:2): Աստված այս «ողջամիտ ուսմունքը» վստահել էր Պողոսին (տես՝ 1 Տիմ. 1:11). Պողոսն այն վստահել էր Տիմոթեոսին (տես՝ 1 Տիմ. 6:20) և Տիմոթեոսը պետք է վստահեր այն հավատարիմ մարդկանց (տես՝ 2 Տիմ. 2:2):

VI. ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ

Ա. Առաջին դարից հատուկ տեղեկատվության պակասի պատճառով դժվար է քննարկել սուտ վարդապետներին: Պողոսը գրում է այն մարդկանց, որոնք անձամբ ճանաչում էին այս սուտ վարդապետներին: Հետևաբար նա ամբողջովին չի քննարկում նրանց աստվածաբանությունը, այլ սովորաբար դատապարտում է նրանց ապրելակերպն ու շարժառիթները (նույնն անում է Հուդան):

Բ. Մեկնաբանական հիմնական խնդիրը կապված է նրա հետ, թե արդյոք նրանք՝

1. Հրեա էին
2. Հույն էին
3. թե երկուսն էլ

Գ. Սուտ վարդապետները կարծես թե հրեական և գնոստիկ տարրերի խառնուրդը լինեին: Բայց ինչպե՞ս էին այս լիովին իրարից տարբեր կրոնական շարժումները միաձուլվել իրար:

1. Հուդայականությունը միշտ ընդգրկում էր որոշ դուալիստական տարրեր (տես՝ Մեռյալ Ծովի Մագաղաթները)
2. Երկրորդ դարի գնոստիցիզմը կատարելագործել էր այս մերձավոր արևելյան տարածված փիլիսոփայական, աստվածաբանական թեմաները

3. Սփյուռքի Հուդայականությունն ավելի ընտրության հնարավորություն ուներ, քան նախկինում կարող էին պատկերացնել մերօրյա գիտնականները:
4. Կողոսացիների գրքում առկա է առաջին դարի հրեա-գնոստիկական հերձվածողության նախատիպ

Դ. Սուտ վարդապետներին վերաբերող մի քանի տարրեր՝

1. Հրեական կողմերը՝
 - ա. սուտ վարդապետները
 - (1) Օրենքի վարդապետներ (տես՝ 1 Տիմ. 1:7)
 - (2) թվատվածների կողմնակիցները (տես՝ Տիտոս 1:10)
 - բ. զգուշացումներ սուտ վարդապետների Հրեական առասպելների վերաբերյալ (տես՝ 1 Տիմ. 3:9)
 - գ. սուտ վարդապետները մտահոգված կերակուրին վերաբերող օրենքներով (տես՝ 1 Տիմ. 4:1-5)
 - դ. սուտ վարդապետները մտահոգված սերնդաբանությունների վերաբերյալ (տես՝ 1 Տիմ. 1:4; 4:7; 2 Տիմ. 4:4; Տիտոս 1:14-15; 3:9):
2. Գնոստիկ կողմերը (տես՝ Հատուկ Թեմա Տիտոս 1-ում)
 - ա. ճգնափորություն, որն արգելում է և բացառում՝
 - (1) արգելում է ամուսնությունը (տես՝ 1 Տիմ. 2:15; 4:3)
 - (2) բացառում է որոշակի կերակուրներ (տես՝ 1 Տիմ. 4:4)
 - բ. սեռական շահագործումը (տես՝ 1 Տիմ. 4:3; 2 Տիմ. 3:6-7; Տիտոս 1:11,15)
 - գ. գիտության կարևորումը (տես՝ 1 Տիմ. 4:1-3; 6:20)

VII. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ

Ա. Պողոսի նամակները հավաքագրվել են մի հատորի մեջ, որը կոչվում է «Առաքյալը» և ապա շրջանառվել բոլոր եկեղեցիներում: 1 և 2 Տիմոթեոսների և Տիտոսի (նաև 2 Թեսաղոնիկեցիների և Փիլիմոն) Պողոսի նամակներից միակ ձեռագիրը, որ բացակայում է, դա 200-ականներից մնացած պապիրուսե ձեռագիրն է, որը կոչվում է P⁴⁶ (Chester Beatty papyri): Նույնիսկ սա վարկած է, քանի որ ձեռագրում բացակայում են վերջին մի քանի պապիրուսե ամփոփիչ էջերը: Բոլոր մյուս հունարեն ձեռագրերը պարունակում են այն բոլոր գրքերը, որոնք հետագայում կոչվեցին «Հովվական Թղթեր»:

Բ. Հնագույն աղբյուրներ, որոնք վկայակոչում, մեջբերում կամ նշումներ են կատարում Հովվական Թղթերից՝

1. վաղ եկեղեցու առաջնորդները
 - ա. Պսեղո-Բառնաբասը (մ. թ. 70-130թթ) մեջբերում է 2 Տիմոթեոսից և Տիտոսից
 - բ. Հռոմի Կլեմենտը (մ. թ. 95-97թթ) վկայակոչում է 1 Տիմոթեոսից և 2 Տիմոթեոսից և մեջբերում կատարում Տիտոս 3:1-ը
 - գ. Պոլիկարպը (110-150թթ) վկայակոչում է 1 Տիմոթեոսից, 2 Տիմոթեոսից և Տիտոսից
 - դ. Հերմասը (մ. թ. 115-140թթ) մեջբերում է 1 և 2 Տիմոթեոսից
 - ե. Իրենեոսը (մ. թ. 130-202թթ) մեջբերում է 1 և 2 Տիմոթեոսից և Տիտոսից
 - զ. Դիոգենեսոսը (մ. թ. 150թ) մեջբերում է Տիտոսից
 - է. Տերտուլիանոսը (մ. թ. 150-220թթ) մեջբերում է 1 և 2 Տիմոթեոսից և Տիտոսից
 - ը. Որոգինեսը (մ. թ. 185-254թթ) մեջբերում է 1 և 2 Տիմոթեոսից և Տիտոսից
2. Հովվական Թղթերը պարունակող կանոնավոր գրքերի ցանկը
 - ա. Մուրատորիան Պատառիկը (մոտ մ. թ. 200թ Հռոմից)
 - բ. Բարոկոցիոն (մ. թ. 206թ)
 - գ. Առաքելական Ցանկը (մ. թ. 300թ)
 - դ. Չելթենհեմի Ցանկը (մ. թ. 360թ)

- ե. Աթանասիուսի Նամակը (մ. թ. 367թ)
- 3. վաղ շրջանի օրինակներ, որոնք պարունակում են Հովվական Թղթերը
 - ա. հին Լատիներենը (մ. թ. 150-170թթ)
 - բ. հին Սիրիակը (մ. թ. 200)
 - գ. վաղ եկեղեցական խորհուրդները, որոնք հաստատում են Հովվական Նամակների ներշնչված կարգավիճակը
 - դ. Նիկիան (մ. թ. 325-340թթ)
 - ե. Հիպպոն (մ. թ. 393թ)
 - զ. Կարթագենը (մ. թ. 397 և 419թթ)

- Գ. Հռոմի Կայսրության վաղ Զրիստոնեական համայնքների միջև համաձայնության գործընթացը ձևավորեց կանոնը: Այս համաձայնությունը անկասկած ազդեցության ենթարկվեց ներքին և արտաքին սոցիալական ճնշումների կողմից: Կանոնի մեջ ներառվելու հիմնական պայմանները կարծես թե հետևյալն էին՝
1. որևէ Առաքյալի հետ կապը
 2. այլ Առաքելական գրքերի հետ պատգամի համապատասխանությունը
 3. այս գրքերը՝ թղթերը ընթերցող մարդկանց փոխված կյանքերը
 4. վաղ շրջանի եկեղեցիների մեջ ընդունված գրքերի ցանկերում աճող համաձայնությունը

Դ. Կանոնի անհրաժեշտությունն առաջացավ՝

1. Երկրորդ Գալստյան ուշացման պատճառով,
2. եկեղեցիների և Առաքյալների միջև աշխարհագրական հեռավորության պատճառով,
3. Առաքյալների մահվան պատճառով,
4. սուտ վարդապետների շատանալու պատճառով՝

ա. Հուդայականության

բ. հունական փիլիսոփայության

գ. Հրեական և Գնոստիկ տարրերի խառնուրդի (Կողոսացիների թուղթը)

դ. այլ հունա-հռոմեական առեղծվածային կրոնների (օր.՝ Միթրա)

Սա տեղի էր ունենում ավետարանի տարբեր մշակույթներում տարածվելու ընթացքում:

Ե. Կանոնակարգման հարցը պատմականորեն կապված է գրքի հեղինակի հետ: Վաղ եկեղեցին Հովվական Թղթերը ընդունել էր որպես Պողոս Առաքյալի գրվածքները: Կանոնակարգման վերաբերյալ իմ անձնական ենթադրությունները ներառում են Հոգու ներգրավվածությունը ոչ միայն Սուրբ Գրքերի գրի առնվելու ժամանակ, այլ նաև դրանց հավաքագրման և պահպանման գործընթացում: Պողոսի հեղինակության հարցը (ինչպես ես եմ ենթադրում) չի ազդում գրքերի ներշնչանքի և կանոնակարգման վրա:

VIII. 1 ՏԻՄՈԹԵՈՍ – ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «հավատքով իմ ճշմարիտ որդուն», 1:2
2. հայհոյիչ, 1:13
3. Ամեն, 1:17
4. միջնորդ, 2:5
5. փրկագին, 2:6
6. «սուրբ ձեռքեր բարձրացնեն», 2:8
7. «անարատ», 3:2
8. «զինեմոլ», 3:8
9. «հավատքի խորհուրդը», 3:9
10. «ղևերի վարդապետություններ», 4:1
11. «խղճմտանքը խանձված», 4:2
12. «պառավական առասպելներ», 4:7
13. «ձեռնադրություն», 4:14; 5:22

14. երիցություն, 4:14
15. «որբևայրիներին պատվիր՝ որ ճշմարիտ որբևայրի են», 5:3
16. «առաջին հավատքը դեն գցեցին», 5:12
17. «կրկնակի պատիվ», 5:17
18. գոհություն, 6:6
19. անմերձենալի լույս, 6:16

IX. 1 ՏԻՄՈԹԵՈՍ – ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Հայրը, 1:2
2. «Օրենքի վարդապետներ», 1:7
3. «հավիտենական Թագավոր», 1:17
4. Հիմենոսն ու Ադեքսանդրոսը, 1:20
5. եպիսկոպոս, 3:2
6. սարկավագներ, 3:8
7. կանայք, 3:11
8. երեցներ, 5:17
9. Պոնտացի Պիղատոս, 6:13

X. 1 ՏԻՄՈԹԵՈՍ – ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Մակեդոնիա, 1:3
2. Եփեսոս, 1:3

XI. 1 ՏԻՄՈԹԵՈՍ – ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ձեր իսկ բառերով նկարագրե՛ք 1:3-4-ում նշված սուտ վարդապետներին:
2. Արդյո՞ք 1:9-11 ներկայացնում է Տառ Պատվիրանները: Եթե այդպես է, ապա որոնք են տարբերությունները:
3. Ինչո՞ւ է Պողոսն իրեն համարում մեղավորներից ամենավերջինը (1:15):
4. Տիմոթեոսի կյանքից ո՞ր միջադեպին է վերաբերում 1:18 համարը:
5. Ի՞նչ է նշանակում այն խոսքը, որ Պողոսն ինչ-որ մեկին Սատանային հանձնեց (1:20):
6. Ինչո՞ւ է 2:4 խոսքն այդքան կարևոր համար:
7. Բացատրե՛ք 2:9-ը առաջին դարի մշակույթի լույսի ներքո:
8. Ի՞նչ առնչություն ունի 2:12 խոսքը մեր օրերի համար:
9. Ձեր իսկ խոսքերով բացատրե՛ք 2:15 համարը:
10. Թվարկե՛ք եպիսկոպոսի հատկանիշները (3:1-7):
11. Ինչո՞ւ է 3:16 համարվում, որ մեջբերված է ինչ-որ հին օրհներգից:
12. Ինչո՞ւ էին սուտ վարդապետները արգելում ամուսնությունը (4:3):
13. Ի՞նչ կապ ունի 4:4-ը Հռոմեացիների 14-ի հետ:
14. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք 4:10 համարը:
15. Ի՞նչ դեպք է նկարագրում 4:14-ը:
16. Ինչպե՞ս է 5:19 արտացոլում ՀԿ-ը:
17. Ի՞նչ մշակութային խնդրի է վերաբերում 5:23-ը:
18. Բացատրե՛ք 6:10 համարը ձեր իսկ բառերով:
19. 6:15 համարում նշված Հիսուսի անունները որտեղի՞ց են վերցված:

XII. 2 ՏԻՄՈԹԵՈՍ – ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «արծարծես Աստծո պարզևը», 1:6
2. «զանձը, որ քեզ է վստահվել», 1:14
3. փտաղտ, 2:17
4. «այս կնիքն ունի», 2:19
5. անոթներ, 2:20

6. Տիրոջը, 2:21
7. «ժամանակին և ժամանակից դուրս», 4:2
8. առասպելներ, 4:4
9. «գրքերը . . . մագաղաթները», 4:13
10. «առյուծի բերանը», 4:17

XIII. 2 ՏԻՄՈԹԵՈՍ – ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. իմ նախահայրերը, 1:3
2. Լավողիա, 1:5
3. Եվնիկե, 1:5
4. Ոնեսիփորոս, 1:16
5. Հիմնոս, 2:17
6. Փիլետոսը, 2:17
7. Հանեսը և Համրեսը, 3:8,9
8. ավետարանիչ, 4:5
9. Դեմասը, 4:10
10. Ղուկասը, 4:11
11. Մարկոսը, 4:11
12. Տիվրիկոս, 4:12
13. Աղեքսանդրոս, 4:14

XIV. 2 ՏԻՄՈԹԵՈՍ – ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Ասիա, 1:15
2. Հռոմ, 1:17
3. Եփեսոս, 1:18; 4:12
4. Անտիոք, 3:11
5. Իկոնիում, 3:11
6. Լյուստրա, 3:11
7. Թեսաղոնիկե, 4:10
8. Գաղատիա, 4:10
9. Դադմատիա, 4:10
10. Տրովադա, 4:13
11. Կորնթոս, 4:20
12. Մելիտոս, 4:20

XV. 2 ՏԻՄՈԹԵՈՍ – ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որտե՞ղ էր Պողոսը բանտարկված:
2. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք 1:12 համարը:
3. Ինչպե՞ս է 1:9 նման Տիտոս 3:5ա-ին:
4. Ի՞նչ էր արել Ոնեսիփորոսը Պողոսի համար բանտում (1:16-18):
5. 2 Տիմոթեոս 2:2 շատ կարևոր համար է: Ինչո՞ւ:
6. Ինչո՞ւ է ենթադրվում, որ 2:11-ը մեջբերում է մի հին օրհներգից:
7. Ինչի՞ն է վերաբերում 2:15-ը:
8. Արդյո՞ք 2:25 նշանակում է, որ Աստված է տալիս ապաշխարություն: Եթե այդպես է, ուրեմն ինչ է ակնկալվում:
9. Թվարկե՛ք, թե ինչեր պետք է անեն հավատացյալները, որպեսզի օգնեն «գաթակղվածներին» (2:24-25):
10. Ո՞ւմ և ինչին է վերաբերում 3:6-7 համարները:
11. Ինչո՞ւ է 3:16 համարն այդքան կարևոր:
12. Ինչո՞ւ Պողոսը չկարողացավ բժշկել Տրովիմուսին:

ՏԻՏՈՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ՀԱՄԱՌՈՏ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

- Ա. Տիտոսը Պողոս Առաքյալի «Հովվական Թղթեր» անունով հայտնի նամակների մի մասն է կազմում, քանի որ 1 Տիմոթեոս, Տիտոս և 2 Տիմոթեոս նամակները Պողոսի հորդորներն են իր ծառայակիցներին, թե ինչպես (1) վարվեն սուտ վարդապետների հետ, (2) տեղական եկեղեցիներում առաջնորդներ բարձրացնեն, և (3) քաջալերեն աստվածապաշտությունը: Այս գրքերի հավանական ժամանակագրական հերթականությունն այսպիսին է՝ 1 Տիմոթեոս, և/կամ Տիտոս, ապա հետագայում 2 Տիմոթեոսը: Տիտոսը բովանդակում է միևնույն թեմաները ինչ 1 Տիմոթեոսը: Հնարավոր է Տիտոսը առաջինն է գրվել, քանի որ այն ունի ընդարձակ և աստվածաբանորեն հարուստ ներածություն, ինչպես Հռոմեացիներին ուղղված թուղթը:
- Բ. Պողոսի և նրա այս ծառայակիցների աշխարհագրական շարժը չի համընկնում Գործքում արձանագրված աշխարհագրական շարժի հետ: Հետևաբար շատերը ենթադրում են, որ սա ապացույց է այն մասին, որ Պողոսը ազատվել է բանտից և մեկնել չորրորդ միսիոներական ճամփորդության:
- Գ. Այս չորրորդ միսիոներական ճամփորդության տարեթիվը պետք է որ լիներ վաղ մ.թ. 60թ-ի և մ.թ. 68թ-ի միջև, քանի որ Պողոսը գլխատվել է Ներոնի իշխանության օրոք, իսկ Ներոնը ինքնասպան է եղել մ.թ. 68թ-ին (շատերը ենթադրում են մ.թ. 65թ-ի հալածանքների ժամանակ):

II. ՏԻՏՈՍ ՄԱՐԴԸ

- Ա. Տիտոսը Պողոսի ամենավստահելի գործակիցներից մեկն էր: Այս մասին է վկայում այն փաստը, որ Պողոսը հենց Տիտոսին ուղարկեց Կորնթոսի և Կրետեի խնդրահարույց շրջանները:
- Բ. Նա լիարժեք հեթանոս էր (Տիմոթեոսը միայն կիսով չափ հույն էր), դարձի եկած Պողոսի քարոզչության միջոցով: Պողոսը մերժել էր նրան թվիատել (տես՝ Գաղ. 2:3):
- Գ. Նա հաճախ է նշվում Պողոսի նամակներում (տես՝ 2 Կորնթ. 2:13; 7:6-15; 8:6-24; 12:18; Գաղ .2:1-3; 2 Տիմ. 4:10) և շատ զարմանալի է, որ Ղուկասը նրա մասին չի նշում Գործք Առաքելոցում: Որոշ մեկնաբաններ ներկայացնում են հետևյալ տեսությունը, որ՝
1. հնարավոր է նա եղել է Ղուկասի բարեկամը (հավանաբար եղբայրը) և նրա անունն այնտեղ ներառելը կոդիտարկվեր որպես մշակութային խտրականության քայլ Ղուկասին կողմից
 2. Տիտոսը Ղուկասի համար տեղեկատվության հիմնական աղբյուր էր Պողոսի կյանքի և ծառայության վերաբերյալ, ուստի և Ղուկասի պես պետք չէր որ անվանապես նշվեր:
- Դ. Նա ուղեկցեց Պողոսին և Բառնաբասին Երուսաղեմի Խորհրդի ամբողջ կարևոր ժամանակահատվածում, որը արձանագրված է Գործք 15-ում, որտեղ քննարկվեց և լուծվեց Մովսիսական Օրենքի հետ նորահավատ հեթանոս հավատացյալների ունեցած կապի խնդիրը:
- Ե. Այս գիրքը կենտրոնանում է Կրետեյում Տիտոսի ծառայության շուրջ Պողոսի տված խորհրդի վրա: Տիտոսը գործում էր որպես Պողոսի կողմից պաշտոնապես լիազորված անձ:
- Զ. ՆԿ-ում Տիտոսի մասին վերջին տեղեկությունն այն է, որ նա ուղարկվում է Դաղմատիա ծառայելու (տես՝ 2 Տիմ. 4:10):

III. ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ

Ա. Ըստ երևույթին Կրետեում կային մի խումբ սուտ վարդապետներ, որոնք հակառակվում էին Պողոսի ավետարանին:

1. Նրանց աստվածաբանական ուսմունքները բոլոր հավատացյալներից ակնկալվող աստվածահաճո ապրելակերպի հետ կապված ընդհարումներ առաջ բերեցին:
2. աստվածահաճո ապրելակերպի վերաբերյալ համարներ՝ 1:1,16; 2:7,14; 3:1,8,14
3. բնավորության գծերի ամփոփիչ խոսքեր՝ 2:11-14; 3:4-7

Բ. Ակնհայտ հրեական տարր կա այս սուտ ուսմունքների մեջ (տես՝ 1:10,14; 3:8-9): Այս հերետիկոսները հրեական օրինապաշտության և հունական շահարկող մտածելակերպի (գնոստիցիզմ, տես՝ Հատուկ Թեմա 1:1-ում) մի խառնուրդ է: Նրանք նման են 1 Տիմոթեոսում, Կողոսացիներում և Եփեսացիներում հասցեագրված սուտ մարգարեներին: Հովվական Թղթերը ավելի շուտ կենտրոնանում են հերձվածողության վրա, քան բացառապես եկեղեցու կազմակերպման:

IV. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. աստվածապաշտություն, 1:1
2. «հավիտենական կյանքի հույսով», 1:2
3. «Աստված, որ չի կարող խաբել», 1:2
4. հյուրասեր, 1:8
5. հրեական առասպելներ, 1:14
6. ողջամիտ վարդապետություն, 2:1
7. համբերություն, 2:2
8. «ներկա դարում», 2:12
9. «երանելի հույս», 2:13
10. փրկել, 2:14
11. «մյուս անգամ ծնվելու ավագանով», 3:5

V. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. երեցներ, 1:5
2. վերակացուներ, 1:7
3. «թլփատվածներից», 1:10
4. «իրենց սեփական մարգարեն», 1:12
5. «իշխանություններին, պետություններին», 3:1
6. Տիվրիկոս, 3:12
7. Ապողոս, 3:13

VI. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԹԱՐՏԵՉԻ ՎՐԱ

1. Կրետե, 1:5
2. Նիկոպոլիս, 3:12

VII. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ Տիտոսում Հայր Աստվածը և Հիսուս Որդին կոչվեն «Փրկիչ» (3 անգամ յուրաքանչյուրը):
2. Ի՞նչ առնչություն ունի 1:16-ը սուտ վարդապետների հետ:
3. Արդյո՞ք 2:1-5 վերաբերում է եկեղեցու առաջնորդներին, թե եկեղեցու անդամներին:
4. Ինչո՞ւ է 2:11 այդքան կարևոր համար:
5. Արդյո՞ք 2:13 Հիսուսին կոչում է Աստված:
6. Ինչո՞ւ է 3:5ա Պողոսի հիմնական թեմաներից մեկը:
7. Արդյո՞ք 3:5բ սովորեցնում է մկրտության վերածնունդ:

ՓԻԼԻՄՈՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Այս գիրքը անձնական նամակի մի օրինակ է, որը մեծ տարածում ուներ առաջին դարի հունահռոմեական աշխարհում: Այն հավանաբար տեղավորվում էր մեկ պապիրուսե թերթիկի վրա (տես՝ 3 Հովհաննես): Հայտնի չէ, թե առաջինը ում է այն հասցեագրված եղել՝ (1) Փիլիմոնին, (2) Ապփիային և Արքիպոսին (տես՝ Կող. 4:17), թե (3) ինչ-որ իմաստով մի ամբողջ տնային եկեղեցու:

Բ. Այս նամակը պատուհան է բացում դեպի՝

1. Պողոս Առաքյալի հովվական մեթոդները
2. առաջին դարի տնային եկեղեցիները (տես՝ Հռոմ. 16:5; 1 Կորնթ. 10:19; Կող. 4:15):

Գ. Քրիստոնեությունն արդեն իսկ հիմնովին փոխում էր Միջերկրական աշխարհի սոցիալական միջավայրը: Ավետարանի սոցիալական խոչընդոտներն անհետանում էին (տես՝ 1 Կորնթ. 12:13; Գաղ. 3:28; Կող. 3:11):

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Նամակի անձնական բնույթը շատ ընթերցողների (միայն մեկ բացառությամբ՝ Ֆ.Ս. Բոր) համոզում է, որ հեղինակը Պողոս Առաքյալն է եղել:

Բ. Փիլիմոնին և Կողոսացիներին ուղղված նամակները սերտորեն կապված են՝

1. Նույն աղբյուրը
2. Ողջույններ ուղարկող միևնույն մարդիկ
3. Միևնույն վերջաբանի խոսքը
4. Կողոսացիների նամակը տեղ է հասցրել Տիվքիկոսը և ճամփորդել Օնեսիմոսի հետ (տես՝ Կող. 4:7,9): Եթե Փիլիմոնը Պողոսի ձեռքի գիրն է, ուրեմն նաև Կողոսացիների թուղթը (որի շուրջ կասկածներ են ունեցել մի քանի ժամանակակից գիտնականներ):

Գ. Այն թվարկվում է Պողոսի ձեռագրին պատկանող գրքերի ցանկում թե՛ վաղ շրջանի հերետիկոս Մարկիոնի կողմից (որը Հռոմ եկավ մ.թ. 140-ականներին), և թե՛ կանոնավոր գրքերի՝ Մուրատորիան Պատարիկի ցանկում (գրված Հռոմում մ.թ. 180-200թթ):

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Այս նամակի տարեթիվը կապված է Պողոսի բանտարկություններից մեկի հետ (Եփեսոս, Փիլիպպե, Կեսարիա կամ Հռոմ): Հռոմեական բանտարկությունը լավագույնս համապատասխանում է Գործքի փաստերին:

Բ. Եթե համարենք, որ Հռոմն է եղել բանտարկության վայրը, ապա հարց է ծագում՝ ե՞րբ: Պողոսը բանտում էր 60-ականների սկզբին և սա արձանագրված է Գործքում: Սակայն, նա ազատվեց և գրեց Հովվական Թղթերը (1 և 2 Տիմոթեոս և Տիտոս) և ապա նորից բանտարկվեց և սպանվեց մ.թ. 68թ-ի Հունիս 9-ից առաջ (Ներոնի ինքնասպանությունը): Կողոսացիների, Եփեսացիների և Փիլիմոնի գրի առնվելու լավագույն խելամիտ ենթադրությունը դա Պողոսի առաջին բանտարկության ժամանակն է՝ 60-ականների սկիզբը: Փիլիպպեցիների թուղթը հավանաբար գրվել է 60-ականների կեսերին մոտ:

Գ. Հավանաբար Տիվքիկոսը Ոնեսիմոսի հետ միասին տարել են Կողոսացիների, Եփեսացիների և Փիլիմոնի նամակները Փոքր Ասիա: Հետագայում (գրեթե մի քանի տարի հետո)

Եպափրդիտոսը առողջանալով իր ֆիզիկական հիվանդությունից, Փիլիպպեցիների նամակը ետ է բերում իր տնային եկեղեցին:

Դ. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ.Բրյուսի և Մյուրի Հարրիսի, որոշակի ուղղումներով՝

| <u>Գիրք</u> | <u>Տարեթիվ</u> | <u>Գրելու վայրը</u> | <u>Գործքի հետ կապը</u> |
|-------------------------|----------------|---------------------|------------------------|
| 1. Գաղատացիներին | 48 | Սիրիայի Անտիոք | 14:28; 15:2 |
| 2. 1 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | 18:5 |
| 3. 2 Թեսաղոնիկեցիներին | 50 | Կորնթոս | |
| 4. 1 Կորնթացիներին | 55 | Եփեսոս | 19:20 |
| 5. 2 Կորնթացիներին | 56 | Սակեդոնիա | 20:2 |
| 6. Հռոմեացիներին | 57 | Կորնթոս | 20:3 |
| 7-10. Բանտից նամակները՝ | | | |
| Կողոսացիներին | 60-ի սկիզբ | | |
| Եփեսացիներին | 60-ի սկիզբ | Հռոմ | |
| Փիլիմոնին | 60-ի սկիզբ | | |
| Փիլիպպեցիներին | 62-63 վերջ | | 28:30-31 |
| 11-13. Չորրորդ միսիոն . | | | |
| նամփոթությունը | | | |
| 1 Տիմոթեոսին | 63 (կամ ուշ, | Սակեդոնիա | |
| Տիտոսին | 63 բայց նախքան | Եփեսոս (?) | |
| 2 Տիմոթեոսին | 64 մ. թ. 68) | Հռոմ | |

IV. ՆԱՄԱԿԸ ԳՐՎԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ (Փիլիմոնի թղթում նշված մարդիկ)

Ա. Փիլիմոնը նախկինում ծառա էր եղել Կողոսիա քաղաքում: Նա դարձի էր եկել Պողոսի միջոցով, հավանաբար երբ Պողոսը ծառայում էր Եփեսոսում:

Բ. Ոնեսիմոսը փախուստի դիմած ծառա էր: Նա նույնպես Պողոսի միջոցով էր դարձի եկել, երբ վերջինս գտնվում էր Հռոմի բանտում (մ. թ. 61-63թթ): Հայտնի չէ, թե ինչպես են նրանք հանդիպել: Գուցե (1) երկուսն էլ բանտում էին, (2) Ոնեսիմոսը հանձնարարությամբ ուղարկվեց Պողոսի մոտ կամ (3) Ոնեսիմոսը Պողոսին էր փնտրում խորհուրդ հարցնելու՝ իր փախուստի համար մտափոխվելուց հետո:

Գ. Եպափրասը Փոքր Ասիայից հավաստեցյալ էր և Լիկիոս Գետի Ձորում գտնվող Եկեղեցիներ հիմնադրողը (Կողոսիա, Լավոդիկե և Երասպոլիս): Նա է բանտում գտնվող Պողոսին խոսք հասցնում Կողոսիայում առկա հերձվածոդության և Փիլիմոնի հավատարմության վերաբերյալ:

Դ. Տիվքիկոսը այս երեք նամակների՝ Կողոսացիների, Եփեսացիների և Փիլիմոնին, այս տարածաշրջան հասցնողն էր (տես՝ Կող. 4:7-9; Եփես. 6:21-22): Ոնեսիմոսը նույնպես նրա հետ վերադարձավ, որպեսզի տեսնի իր տիրոջը (տես՝ հ. 11): Փիլիմոնի նամակը Նոր Կտակարանում առկա երկու անձնական նամակներից մեկն է (տես՝ 3 Հովհաննես):

Մոտ հիսուն տարի անց (մ. թ. 110թ) Իզնատիոսը Հռոմի ճանապարհին, որտեղ էլ նահատակվելու էր, մի նամակ է գրում («Եփեսացիներին» 1:3) Եփեսոսի եպիսկոպոսին, որի անունը Ոնեսիմոս էր: Հնարավոր է, որ այդ մարդը եղել է այս դարձի եկած ծառան:

V. ՆԱՄԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Այն ցույց է տալիս, թե ինչպես է Պողոսը գործածել իր առաքելական իշխանությունը և հովվական քաջալերանքը:

Բ. Այն ցույց է տալիս, թե ինչպես է Քրիստոնեությունը ստրուկներին և ստրկատերերին, հարուստներին և աղքատներին եղբայրներ և քույրեր դարձնում:

Գ. Այն արտահայտում է Պողոսի հավատքն առ այն, որ ինքը ազատվելու է հռոմեական բանտարկությունից և վերադառնալու է Փոքր Ասիա:

VI. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «քո տան եկեղեցուն», հ. 2
2. իմ որդու համար, այսինքն Ոնեսիմոսի, հ. 10
3. անպիտան . . . պիտանի, հ. 11
4. «դու քո անձն էլ ինձ պարտական ես», հ. 19

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Ապփիա, հ. 2
2. Ոնեսիմոս, հ. 10
3. Եպափրաս, հ. 23
4. Մարկոս, հ. 24

VIII. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ – ՉԿԱՆ

IX. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է Պողոսը 1:8 համարում հաստատում իր առաքելական իշխանությունը:
2. Ինչպե՞ս է այս փոքրիկ գիրքն ազդում գերիների հետ կապված խնդրին:
3. Արդյո՞ք հ. 18 ակնարկնում է, որ Ոնեսիմոսն իր տիրոջից ինչ-որ բան էր գողացել:
4. Արդյո՞ք հ. 19 ակնարկում է, որ Պողոսն ընդհանրապես դպիր ուներ:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԹՂԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԽՈՍՔ

Երբ ուսումնասիրում էի այս գիրքը ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ իմ աստվածաբանությունը ձուլվել էր Պողոսի աստվածաբանության հետ: Ինձ համար շատ դժվար է թույլ տալ, որ ՆԿ-յան մյուս տարբեր հեղինակները ներկայացնեն իրենց ներշնչված մտքերը, քանի որ ես հակված եմ դրանք բոլորն էլ դնելու Պողոսյան կատեգորիաների մեջ: Սա հատկապես ակնհայտ է Եբրայեցիներում հավատքի մեջ հարատևելու թեմայի շուրջ դրված շեշտադրությամբ: Եբրայեցիների գրքում հավատքը դատաիրավական կարգավիճակ չէ (հավատքով արդարացում), այլ մինչև վերջ հավատարմության կյանք (Եբր. 11-12):

Վախենում եմ, որ Եբրայեցիների գրքից ինձ տանջող հարցերը, երբևէ իր իսկ հեղինակի կողմից չէր էլ հարցադրվում (ոչ էլ Պետրոսի կամ Հակոբոսի կողմից): Եբրայեցիների գիրքը բոլոր մյուս ՆԿ-յան գրքերի պես հազվադեպ փաստաթուղթ է: Ես պետք է թույլ տամ, որ հեղինակն ինքը խոսի, անգամ երբ նա ին անհարմար դրության մեջ է դնում, անգամ երբ նա չի օգտագործում իմ ամենասիրելի կատեգորիաները կամ նույնիսկ արմատապես վնասում է այս կատեգորիաներին: Ես չեմ համարձակվում ներշնչված ՆԿ-յան հեղինակի պատգամը փոխարինել իմ սխտեմատիկ աստվածաբանությամբ:

Ես նախընտրում եմ ապաշխարել իմ աստվածաբանական դոգմատիզմից և ապրել ՆԿ-յան լարվածության մեջ, եթե անգամ այն լիարժեք կերպով չեմ հասկանում կամ սիրում: Ես վախենում եմ, որ հանկարծ ՆԿ-ը չդիտարկեմ ժամանակակից ավետարանական, փոխակերպիչ ցանցի միջով: Ես ցանկանում եմ հաստատել աստվածաշնչյան խոստումները՝ Աստծո սիրո, հոգատարության և պահապան գործողության խոստումները, և միաժամանակ ՆԿ-յան հեղինակների հզոր հորդորներով և լիազորությամբ էլ դատապարտված եմ: Ես չափազանց շատ կարիք ունեմ լսելու Եբրայեցիներին ուղղված նամակը, սակայն այն շատ ցավոտ է: Ես ուզում եմ ետ մղել լարվածությունը: Ենթադրում եմ, որ իրականում, ես կամենում եմ հաստատել ձրի փրկությունը և Քրիստոնեական կյանքի բարձր արժեքը: Սակայն որտե՞ղ գտեմ այդ սահմանը, երբ իդեալականը հնարավոր չէ տեսնել: Արդյո՞ք Աստծո հետ հավիտենական փոխհարաբերությունը սկզբնական հավատքի արձագանքն է, թե հարատևող հավատքի արձագանքը: Եբրայեցիների նամակը հստակ սահմանում է հարատևող հավատքի պատասխանի լիազորությունը: Քրիստոնեական կյանքը դիտարկվում է վերջից և ոչ թե սկզբից:

Այս ասելով այն նկատի չունի գործերի վրա հիմնված փրկություն, այլ գործերի վրա հիմնված հաստատում՝ ապացույց: Հավատքը վկայությունն է և ոչ թե մեխանիզմը՝ միջոցը (որը շնորհքն է): Հավատացյալները գործերով չեն փրկվում, այլ գործերի համար: Գործերը փրկության միջոց չեն, այլ փրկության արդյունք: Աստվածավախ, հավատարիմ, ամենօրյա Քրիստոսակերպության կյանքը ինչ-որ գործ չէ, որ անում ենք, այլ այն է, թո ով ենք մենք Նրա մեջ: Եթե չկա փոխված և փոխող հավատքի կյանքի, ապա չկա մեր փրկության վկայությունը, չկա հավատացյալի համար փրկության երաշխիք: Միայն Աստված գիտի մարդու սիրտը և իրավիճակները: Վստահությունը տրված է հավատքի կյանքի մեջ որպես գործընկեր, և ոչ թե սկզբնական աստվածաբանական հաստատում, որը գուրկ է ապրելակերպի վկայությունից:

Իմ աղոթքն է, որ թույլ տանք ՆԿ-յան այս ներշնչված հեղինակին մեզ հետ պարզ խոսելու և ոչ թե Եբրայեցիների գիրքը աստվածաբանական ծանոթագրության համակարգված աստվածաբանության շարքում դնելու, լինի դա Կալվինիստական, թե՛ Հայկական:

II. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Գիրքը, իր պատգամը փոխանցելու համար կիրառում է ՀԿ տեքստեր՝ մեկնաբանված ռաբբիական հերմենևտիկայի միջոցով: Որպեսզի հասկանանք բնագրի հեղինակի մտադրությունը, այս գիրքը պետք է մեկնաբանվի առաջին դարի ռաբբիական Հուդայականության և ոչ թե արևմտյան մտածելակերպի լույսի ներքո:

Բ. Այս գիրքը սկսում է որպես քարոզ (որը չունի ոչ մի ողջույնի խոսք կամ հատուկ բարևներ) և ավարտվում է նամակի պես (Պողոսին յուրահատուկ փակման խոսքով՝ գլուխ 13): Հնարավոր է, որ ժողովարանի ինչ-որ քարոզիչ այն վերածել է նամակի: Հեղինակն իր գիրքն անվանում է «հորդորանքի խոսք» Եբր. 13:22-ում: Այս նույն արտահայտությունը կիրառվում է նաև Գործք 13:15-ում մի քարոզի համար:

Գ. Սա Նոր Կտակարանյան գաղափարական մեկնաբանություն է Մովսիսկան ուխտի շուրջ.

1. ՀԿ-ի բավականին հեղինակավոր դիտարկմամբ
2. Հին և Նոր Կտակարանների համեմատություն
3. Միակ ՆԿ-յան գիրքը, որը Հիսուսին անվանում է Քահանայապետ

Դ. Այս գիրքը լի է ետ նահանջելու («ետ քաշվել» տես՝ Եբր.10:38) կամ նորից Հուդայականության վերադառնալու դեմ զգուշացումներով (այսինքն՝ գլուխներ 2, 4, 5, 6, 10, 12; տես՝ *Ոչ Դյուրին Փրկություն* Ռ. Ս. Գլեյզ, /*No Easy Salvation by R. C. Glaze, Jr.*/ հրատարակված Insight Press կողմից):

Ե. Չնայած որ այն չափազանց ընդհանրացված է, այն օգնում է տեսնել Պողոսին փրկությունը որպես ամենակալ Աստծո ավարտուն գործ շեշտադրելիս (այսինքն՝ հավատքով արդարացումը), որը հաստատում է փրկության վստահությունը որպես սկզբնական ճշմարտություն (այսինքն՝ Հռոմեացիների 4): Պետրոսը, Հակոբոսը և 1 և 2 Հովհաննեսի նամակները շեշտադրում են Նոր Ուխտի շարունակական պատասխանատվությունները և անդում են, որ փրկության վստահությունը ամենօրյա է, որը հաստատվում է փոխված կամ փոխող կյանքի միջոցով: Եբրայեցիների հեղինակը, շեշտադրելով հավատարմության կյանքը (տես՝ գլուխ 11) հիմնավորում է փրկության վստահությունը «մինչև կյանքի վերջ» տեսանկյունից: Մերօրյա արևմտամետ ռացիոնալ մտածելակերպը հակված է բնեռացնելու այս տեսանկյունները, մինչ ՆԿ-յան հեղինակները՝ մեկ աստվածային Հեղինակի միջոցով (այսինքն՝ Սուրբ Հոգու) կամենում են դրանք պահել լարվածության մեջ և հիմնավորել բոլոր երեքն էլ: Վստահությունը երբեք էլ նպատակ չի եղել, այլ Աստծո խոստումների վրա գործող հավատքի արդյունք:

III. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Չնայած, որ Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակի հարցը վիճահարույց է, մի քանի գնոստիկ աշխատություններ (այսինքն՝ *Ճշմարտության Ավետարանը*, *Փիլիպպոսի Ավետարանը* և *Հովհաննեսի Ապոկրիֆան* /*Gospel of Truth, Gospel of Philip and The Apocrypha of John*/) այն մի քանի անգամ մեջբերում են, որը ցույց է տալիս, որ այն համարվում էր երկրորդ դարի հեղինակավոր Քրիստոնեական աշխատությունների մի մասը (տես՝ Անդրեա Հեմբոլդի *Նեգ Համմադի Գնոստիկ տեքստերը և Աստվածաշունչը*, էջ՝ 91 /*Andrea Helmbold's The Nag Hammadi Gnostic Texts and the Bible*/):

Բ. Արևելյան Եկեղեցին (Ալեքսանդրիա, Եգիպտոս) ընդունեց Պողոսի հեղինակ լինելը, որը երևում է վաղ շրջանի P⁴⁶ պապիրուսե ձեռագրում Պողոսի գրքերի ցանկում այն նշելուց: Այս ձեռագիրը կոչվում է Չեսթեր Բիթի Պապիրուս և կրկնօրինակվել է երկրորդ դարի վերջում: Այն Եբրայեցիների գիրքը թվարկում է Հռոմեացիներից հետո: Որոշ ալեքսանդրիացի առաջնորդներ ճանաչել են Պողոսի հեղինակ լինելու հետ կապված գրական խնդիրները:

1. Ալեքսանդրիացի Կլեմենտը (մ. թ. 150-215, Եվսեբիոսի կողմից մեջբերված) ասում է, որ Պողոսը գրեց այն Եբրայերենով, իսկ Ղուկասը թարգմանեց հունարենի:
2. Որոգիները (մ. թ. 185-253) անդում է, որ մտքերը Պողոսին են, սակայն գրվել է հետագա մի հետևորդի կողմից, ինչպես օրինակ Ղուկասը կամ Հռոմեացի Կլեմենտը:

Գ. Մուրատորիան Պատառիկ կոչվող Արևմտյան Եկեղեցու կողմից որդեգրված Պողոսի նամակների ցանկում այս գիրքը բացակայում է (ՆԿ-յան կանոնավոր գրքերի մի ցանկ Հռոմից, մոտ մ. թ. 180-200 թթ.):

Դ. Ինչ գիտենք հեղինակի մասին

1. Ըստ երևույթին նա եղել է երկրորդ սերնդի հրեա Քրիստոնյա (Եբր.2:3):
2. Նա մեջբերում է ՀԿ-ի հունարեն թարգմանությունից, որը կոչվում է Սեպտուագինտա:
3. Նա կիրառում է հին խորանի ընթացակարգերը, և ոչ թե տանարի ծիսակարգերը:
4. Նա գրում է, օգտագործելով դասական Հունարենի քերականություն և շարահյուսություն (այս գիրքը պլատոնական չէ: Այն կենտրոնանում է ՀԿ-ի վրա և ոչ թե Ֆիլեո սիրո):

Ե. Այս գրքի հեղինակը հայտնի չէ, սակայն նամակը ստացողները լավ ճանաչում էին նրան (տես՝ Եբր.6:9-10; 10:34; 13:7,9):

2. Որտեղից են այս կասկածները Պողոսի Եբրայեցիների թղթի հեղինակը լինելու շուրջ

1. Գրելատճը շատ է տարբերվում (բացի գլուխ 13-ից) Պողոսի մյուս գրքերից:
2. Բառապաշարը տարբեր է:
3. Աննկատ տարբերություններ կան բառային և արտահայտման կիրառության և շեշտադրության մեջ:
4. Երբ Պողոսը իր ընկերներին կամ գործընկերներին «եղբայր» է անվանում, առաջին նշում է այդ անձի անունը (տես՝ Հռոմ.16:23; 1 Կորնթ.1:1; 2 Կորնթ.1:1; 2:13; Փիլ.2:25) սակայն Եբր.13:23 գրված է «մեր եղբայր Տիմոթեոսը»:

Է. Հեղինակը հանդիսանալու տեսությունները

1. Ալեքսանդրիացի Կլեմենտը իր *Հիպոթիպոզներ* (Clement of Alexandria *Hypotyposes*) գրքում (մեջբերված է Եվսեբիոսի կողմից) հավատում է, որ Ղուկասն է թարգմանել Պողոսի բնագիր նամակը Եբրայերենից հունարեն (նա գերազանց տիրապետում էր Կոյնե Հունարենին):
2. Որոգինեսն ասում էր, որ կամ Ղուկասը, կամ էլ Հռոմի Կլեմենտն են գրել այն, սակայն հետևել են Պողոսի ուսմունքին:
3. Ջերոմը և Ավգուստինոսը ընդունում էին, որ հեղինակը Պողոսն էր, միայն թե գիրքը համապատասխաներ Արևմտյան Եկեղեցու կողմից Կանոնի մեջ ընդունվելու համար:
4. Տերտուլիանոսը (*De Pudic.* 20) հավատում էր, որ Բառնաբասն էր (Պողոսին ընկերակցող մի Ղևտացի) գրել այն:
5. Մարթին Լյութերն ասում էր, որ Պողոսին ընկերակցող Ապոդոս անունով Ալեքսանդրիացի մի կիրթ մտավորական է գրել այն (տես՝ Գործք 18:24):
6. Կալվինն ասում էր Հռոմեացի Կլեմենտը (առաջին անգամ մեջբերված է մ.թ. 96-ին) կամ Ղուկասն էր հեղինակը:
7. Ադոլֆ վոն Հարները ասում էր, որ այն գրել են Ակյուդասն ու Պրիսկիլան են (նրանք սովորեցնում էին Ապոդոսին ավետարանը և Պողոսի ու Տիմոթեոսի գործընկերներն էին, տես՝ Գործք 18:26):
8. Պր. Ուիլյամ Ռամսեյը ասում էր, որ Փիլիպոսն էր (ավետարանիչ) այն գրել Պողոսի համար, մինչ Պողոսը Կեսարիայի բանտում էր:
9. Ուրիշներն էլ պնդում էին, որ Փիլիպոսը կամ Շիդան էին (Միվղանոսը):

IV. ՄՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա. Վերնագիրը՝ «Եբրայեցիներին» հասցեագրված է Եբրայեցի ազգին, հետևաբար գիրքը գրված է բոլոր հրեաների համար (տես՝ Ալեքսանդրիացի Կլեմենտ, մեջբերված Եվսեբիոսի կողմից՝ *Eccl. Hist.* VI, 14 /Եկեղեցու Պատմություն/):

Բ. Ներքին վկայությունը համաձայն Ռ. Ս. Գլեյզ Կրոսերի՝ *Ոչ Հեշտ Փրկություն* (R. C. Glaze, Jr.'s *No Easy Salvation*) գրքի պնդում է, որ այս գիրքը հասցեագրված է հավատացյալ հրեաների հատուկ մի խմբի կամ ինչ-որ մի ժողովարանի (տես՝ Եբր.6:10; 10:32-34; 12:4; 13:7,19,23):

1. Ըստ գրքում տրված բազմաթիվ ՀԿ-յան մեջբերումների և թեմաների կարծես թե այս մարդիկ հրեա հավատացյալներ էին (տես՝ Եբր.3:1; 4:14-16; 6:9; 10:34; 13:1-25):
2. Նրանք որոշ հալածանքներով էին անցել (տես՝ Եբր.10:32; 12:4): Հռոմեական կառավարության կողմից Հուդայականությունը ճանաչված էր որպես օրինական կրոն, մինչ հետագայում՝ առաջին դարում, Քրիստոնեությունը համարվում էր ապօրինի, երբ այն առանձնացավ սինագոգի պաշտամունքից:
3. Նրանք երկար ժամանակ էր, որ հավատացյալներ էին, սակայն ոչ հասուն (տես՝ Եբր.5:11-14): Նրանք վախենում էին Հուդայականությունից լիովին կտրվելուց (տես՝ 6:1-2):

Գ. Եբր.13:24-ի երկիմաստ տեքստը ակնարկում է, որ այն գրվել է (1) Իտալիայից կամ էլ (2) Իտալիա՝ հավանաբար Հռոմ ուղարկվելու համար:

Դ. Նամակը ստացողների գտնվելու վայրը կապված է հեղինակի վերաբերյալ տարբեր տեսությունների հետ:

1. Ալեքսանդրիա՝ Ապոդոս
2. Անտիոք՝ Բառնաբաս
3. Կեսարիա՝ Ղուկաս կամ Փիլիպոս
4. Հռոմ՝ Հռոմեացի Կլեմենտ և ըստ Եբր.13:24-ում Իտալիայի մասին ակնարկի
5. Իսպանիա՝ սա Լիրացի Նիկողոսի տեսությունն է (մ.թ. 1270-1340):

V. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Հռոմեացի Գեներալ (հետագայում Կայսր) Տիտոսի կողմից նախքան Երուսաղեմի կործանումը՝ մ.թ. 70-ին.

1. հեղինակը անվանացի նշում է Պողոսի գործընկեր Տիմոթեոսին (տես՝ Եբր.13:23)
2. հեղինակն անդրադառնում է Տանարում շարունակվող զոհաբերություններին (տես՝ Եբր.8:13; 10:1-2)
3. հեղինակը նշում է հալածանքի մասին, որն ըստ էության համընկնում է Ներոնի օրերի հետ (մ.թ.54-68)
4. հեղինակը քաջալերում է ընթերցողներին չվերադառնալ հուդայականությանն ու դրա ծիսակարգերին

Բ. Մ.թ. 70 թ-ից հետո

1. հեղինակը օգտագործում է խորանի և ոչ թե Հերովդեսի տանարի ծեսերը
2. հեղինակը նշում է հալածանքի մասին՝
 - ա. հավանաբար Ներոնի օրոք (տես՝ Եբր.10:32-34)
 - բ. ավելի ուշ՝ հավանաբար Դոմիթիանի օրոք (տես՝ Եբր.12:4-13)
3. հնարավոր է գիրքը վերաբերում է ավելի ուշ առաջին դարում ռաբբիական հուդայականության արթնությանը (Ջամնիայից գրքերը)

Գ. Մ. թ. 95-ից առաջ, քանի որ Հռոմի Կլեմենտը մեջբերում է այս գիրքը

VI. ՆՊԱՏԱԿԸ

Ա. Հրեա Քրիստոնյաները քաջալերվում են թողնել ժողովարանը և հրապարակայնորեն (լիարժեք կերպով) միանալ եկեղեցուն (տես՝ Եբր.13:13):

Բ. Հրեա Քրիստոնյաները քաջալերվում են վերցնելու ավետարանի միսիոներական լիազորությունը (տես՝ Մատթ.28:19-20; Դուկ.24:47; Գործք 1:8):

Գ. Հրեա անհավատները, որոնք կապի մեջ էին այս Քրիստոնյա հրեաների հետ, 6 և 10 գլուխների գլխավոր թեմաներն են: Նկատել էրեք խմբերի առկայությունը՝ «մենք», «դուք» և «նրանք»: Նրանց զգուշացվում է, որ անձամբ արձագանքեն իրենց Քրիստոնյա ընկերների և հավատակիցների կյանքում տեղի ունեցած բազմաթիվ և ակնառու վկայություններին:

Դ. Այս ենթադրյալ պատմական կառուցվածքը վերցված է Ռ. Ս. Գլեյզ Կրոստերի *Ոչ Հեշտ Փրկություն* գրքից.

«Խնդիրը Քրիստոնյա մեծամասնության և ոչ-Քրիստոնյա փոքրամասնության միջև եղած լարվածությունը չէր: Ծիշտ էր հենց հակառակը: Այս համայնքի Հրեա Քրիստոնյաները այն շատ փոխզիջումների էին գնացել իրենց հավատքի և ծառայության զգացողության մեջ, որ այս երկու խմբերը կարող էին միասին երկրպագություն կատարել որպես մեկ համայնք: Խմբերից և ոչ մեկը չէր անհանգստանում մյուս խմբի խղճմտանքի մասին: Այլևս Քրիստոնյա խմբի քարոզչության միջոցով սինագոգում գտնվող չփրկված անդամները հավատքի համոզման կամ որոշման չէին գալիս: Քրիստոնյաները լնացած վիճակում էին, քանի որ չէին կամենում ընդունել համարձակ Քրիստոնեական ապրելակերպի լիարժեք պահանջները: Անհավատները կարծրանում էին մշտապես մերժված լինելու, մինչև իսկ կատարյալ անտարբերության մատնվելու պատճառով: Այս խմբերն այժմ դարձել էին հարմար անկողնակիցներ: Քրիստոնյա խմբի դժկամությունը «կատարյալին գալու» (6:1) հարցում, երկու երևույթների արդյունքն էին հանդիսանում՝ Հուդայականության ավանդույթները բարձր դասելու և Քրիստոնեության պատշաճ ապրելակերպի համար լիարժեք գին վճարելու դժկամությունը, որը հետզհետե դառնում էր հեթանոսական շարժում» (էջ 23):

VII. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ

| | |
|-------------------------|--|
| Եբր.1:1-3 | Որդու գերազանցությունը մարգարեներից |
| Եբր.1:4-2:18 | Որդու գերազանցությունը հրեշտակներից |
| Եբր.3:1-4;13; 4:14-5:10 | Որդու գերազանցությունը Մովսիսական Ուխտից |
| Եբր.6:13-7:28 | Որդու գերազանցությունը Ահարոնի Քահանայությունից |
| Եբր.5:11-6:12 | Հավատացյալ հրեաների գերազանցությունը անհավատներից |
| Եբր.8:1-10:18 | Որդու գերազանցությունը Մովսիսական Ուխտի օրենքներից |

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «այս վերջին օրերում», 1:2
2. «Նրա փառքի լույսը», 1:3
3. «Նրա էության նկարագիրը», 1:3
4. Մեծություն, 1:3
5. «որ միգուցե պակասվինք», 2:1
6. «հրեշտակների ձեռով խոսած բանը», 2:2
7. «ամենի համար մահը ճաշակե», 2:9
8. «նրանց փրկության կատարյալ առաջնորդը/հեղինակը», 2:10
9. «քահանայապետ», 2:17; 4:15
10. քավություն, 2:17
11. Առաքյալը, 3:1
12. Քահանայապետը, 3:1
13. դավանություն, 3:1; 4:14
14. այսօր, 3:13
15. «յոթներորդ օրը», 4:4
16. «Շաբաթի հանգիստը», 4:9
17. «երկինքներով անցավ», 4:14
18. «սակայն առանց մեղքի», 4:15
19. «եկեք մոտենանք», 4:16
20. «տարրական սկզբունքները», 5:12
21. լվացումներ, 6:2
22. «խոստումը», 6:15
23. «քողը», 6:19
24. «ավելի ազնիվ ուխտի երաշխավոր եղավ Հիսուսը», 7:22
25. բարեխոսություն, 7:25
26. խորան, 8:2
27. «երկնավոր բաների օրինակով և շուքով», 8:5
28. «մի նոր ուխտ», 8:8,13
29. «Սրբության Սրբարան», 9:3
30. Ահարոնի գավազանը, 9:4
31. քավության տապանակ, 9:5
32. «վկաների այսքան բազմություն /անգլ.՝ մեծ ամպ/», 12:1
33. «դառնության արմատ», 12:15
34. «երկնային Երուսաղեմ», 12:22

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. «առաջնեկը», 1:6
2. «նրան, ով ունի իշխանության մահվան վրա», 2:14
3. «բարկացրին Նրան», 3:16
4. Մեքիսեդեկ, 5:6
5. 5:11-6:8-ում առկա են նշված երեք խմբերը՝ «դուք», «նրանք» և «մենք»: Դրանցից յուրաքանչյուրն ո՞ւմ է վերաբերում:
6. քերովբե, 9:5
7. Ենովբ, 11:5
8. Ռախար, 11:31
9. «Մեծ Հովիվը», 13:20
10. Տիմոթեոսը, 13:23

X. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Սաղեմ, 7:1
2. Երիքով, 11:30
3. Սիոն սար, 12:22
4. Իտալիա, 13:24

XI. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Թվարկե՛ք 1:2-4 համարներում նշված «որդու» հատկանիշները:
2. Ինչո՞ւ են Երրայեցիների առջին գլուխներում այդքան շատ նշվում հրեշտակների վերաբերյալ:
3. Ի՞նչ կապ ունեն հրեշտակները հավատացյալների հետ:
4. Ինչպե՞ս էր Հիսուսը հրեշտակներից ավելի ցած ստեղծվել:
5. Ո՞րն է 2:18; 4:15 խոսքերի մեծագույն ճշմարտությունը:
6. Ինչպե՞ս են Մովսեսն ու Հիսուսը համեմատվում 3:1-6-ում:
7. Ի՞նչ նկատի ունի 3:7 համարը Հոգու մասին:
8. Ինչի՞ մասին է խոսում 3:12 համարը:
9. Ի՞նչ է նշանակում 3:11 խոսքը՝ «Նրանք չեն մտնի իմ հանգիստ»:
10. Ի՞նչ է ասում 3:14 համարը Քրիստոնեական վստահության վերբերյալ:
11. Ձեր իսկ խոսքերով բացատրե՛ք 4:12 խոսքը:
12. Ինչո՞ւ է մեր մ-եր հեղինակը ծնունդ տալիս հնագույն Քանանացի քահանայի (5:6-10):
13. Բացատրե՛ք 5:8-9 խոսքերի կարևորությունը:
14. Թվարկե՛ք 6:1-2-ում առկա վարդապետությունները: Արդյո՞ք դրանք հրեական են, թե Քրիստոնեական:
15. Ինչո՞ւ է 6:6-ում «անհնար» տերմինը հերքում այն մարդկանց, որոնք հավատում են , որ կարելի է փրկվել, աշխարհ գնալ և նորից փրկվել:
16. Ինչո՞ւ է ասվում, որ Մելքիսեդեկը առանց հոր և մոր էր (7:3):
17. Ինչո՞ւ է Աբրահամի կողմից Մելքիսեդեկին տասանորդ վճարելը այդքան կարևոր (7:4-10):
18. Ի՞նչ է ակնարկում 8:13 և 10:4 համարները ՀԿ-ի մասին:
19. Ինչպե՞ս է 9:22 խոսքը հերքում Հինդուիզմը:
20. Ինչպե՞ս է 10:25 և 39 առնչվում պատմական միջավայրին:
21. Ի՞նչ կապ ունի գլուխ 6-ը 10-ի հետ:
22. Ամփոփե՛ք գլուխ 11-ը ձեր իսկ բառերով:
23. Ինչի՞ն է վերաբերում 12:2 համարը:
24. Ինչո՞վ է կարևորվում 13:8 խոսքը:

ՀԱԿՈՐՈՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Այս գիրքը Սորեն Քրքգարդի ամենասիրելի գիրքն էր Նոր Կտակարանում, քանի որ այն շեշտադրում է ամենօրյա Քրիստոնեական գործնական ապրելակերպը:

Բ. Այս գիրքը Մարթին Լյութերի համար Նոր Կտակարանում ամենաքիչ սիրված գիրքն էր, քանի որ այն կարծես թե հակասում էր Պողոսի Հռոմեացիներին և Գաղատացիներին ուղղված թղթում «հավատքով արդարացման» շեշտադրմանը:

Գ. Այս գիրքը ՆԿ-յան մյուս գրքերից շատ է տարբերվում իր ժանրով:

1. նմանեցվում է նոր ուխտի Առակաց գրքի (այսինքն՝ իմաստասիրական գրականության), որը խոսվում է մի կրակոտ մարգարեի բերանով
2. գրվել է անմիջապես Հիսուսի մահից հետո և դեռևս շատ հրեական ու կիրառելի է

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Ըստ ավանդույթի հեղինակը Հակոբոսն է (եբրայերեն՝ «Յակուբ»), Հիսուսի կես-եղբայրը (չորսից մեկը, տես՝ Մատթ. 13:55; Մարկ. 6:3; Գործք 1:14; 12:17; Գաղ. 1:19): Նա Երուսաղեմի Եկեղեցու առաջնորդն էր (մ. թ. 48-62թթ, տես՝ Գործք 15:13-21; Գաղ. 2:9):

1. Նրան անվանում էին «Հակոբոս արդարը» և հետագայում մականվանվեց «ուխտի ծնկներ», քանի որ նա մշտապես ծնկած էր աղոթում (մեջբերված Եվսեբիոսի կողմից՝ Էգերպպուսից /Hegesippus/):
2. Նախքան Հիսուսի հարությունը Հակոբոսը հավատացյալ չէր (տես՝ Մարկ. 3:21; Հովհ. 7:5): Հարությունից հետո Հիսուսն անձամբ է նրան հայտնվել (տես՝ 1 Կորնթ. 15:7):
3. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՄԻՆ նա էլ է ներկա եղել Վերնատանը (տես՝ Գործք 1:14) և հավանաբար նաև այն ժամանակ, երբ Հոգին Պենտեկոստեին իջավ:
4. Նա ամուսնացած էր (տես՝ 1 Կորնթ. 9:5):
5. Պողոսը նրան անվանում է սյուն (հավանաբար որպես առաքյալ; տես՝ Գաղ. 1:19), սակայն Տասներկուսից մեկը չէր (տես՝ Գաղ. 2:9; Գործք 12:17; 15:13):
6. *Հրեաների Հնությունները /Antiquities of the Jews, 20:9:1, Josephus/* գրքում Ջոզեֆուսն ասում է, որ նրան քարկոծել են մ. թ. 62թ-ին, Սանեդրինի Սադուկեցիների կարգադրությամբ, մինչ մեկ այլ ավանդույթ (երկրորդ դարի գրողներ Ալեքսանդրիացի Կլեմենտը կամ Էգերպպուսը) ասում է, որ նրան Տաճարի պարսպից ցած են նետել:
7. Հիսուսի մահից հետո շատ սերունդներ շարունակ Հիսուսի բարեկամներից ինչ-որ մեկն է նշանակվել Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը:

Բ. *Հակոբոսի Թղթի Ուսումնասիրությունները* գրքում, Ա. Թ. Ռոբերթսոնը /*Studies in the Epistles of James, A. T. Robertson/* հիմնավորում է այն փաստը, որ Հակոբոս է հեղինակը.

«Բազմաթիվ ապացույցներ կան, որ այս թուղթը գրվել է Գործք 15:13-21-ում առկա խոսակցության հեղինակի կողմից՝ մտքի և ոճի նրբանկատ նմանությունները չափազանց աննկատ են պարզապես նմանակելու կամ կրկնօրինակելու համար: Նույն նմանությունը ի հայտ է գալիս Հակոբոսի Թղթի և Անտիոքին ուղղված նամակի միջև՝ հավանաբար նույնպես գրված Հակոբոսի ձեռքով (Գործք 15:23-29): Բացի այդ գոյություն ունեն Լեռան Քարոզից ակնհայտ հիշատակումներ, որը Հակոբոսը անձամբ էր լսել կամ գոնե լսել էր դրա նման քարոզներ: Նամակում նաև առկա է նկարագրության միևնույն գույները, որը Հիսուսի ուսմունքի մեջ գերակշռող հատկանիշ է» (Էջ՝ 2): Ա. Թ. Ռոբերթսոնն այստեղ հետևում է Ջ. Բ. Մեյորի *Սբ. Հակոբոսի Թուղթը*, էջ՝ iii-iv գրքին/ J. B. Mayor, *The Epistle of St. James/*:

Գ. ՆԿ-յան առաքելական թիմում կային Հակոբոս անունով ևս երկու մարդ: Սակայն Հովհաննեսի եղբայր Հակոբոսը սպանվել էր մ.թ.44թ-ի սկզբին Հերովդես Ագրիպասի հրամանով (տես՝ Գործք 12:1-2): Մյուս Հակոբոսը՝ «ավելի երիտասարդը» (տես՝ Մարկ. 15:40) երբեք առաքյալների ցանկերից դուրս չի նշվում: Նամակի հեղինակ Հակոբոսը ակնհայտ ճանաչված անձ էր:

Դ. Հիսուսի հետ Հակոբոսի ունեցած կապի վերաբերյալ գոյություն են ունեցել երեք տեսություններ.

1. Չերոմն ասում էր, որ նա եղել է Հիսուսի զարմիկը (Ալփետոսից և Կողովպասի Մարիամից): Նա այս մասին հետևություն է արել համեմատելով Մատթ. 27:56-ը Հովհ. 19:25-ի հետ:
2. Հռոմի Կաթոլիկ ավանդույթը պնդում է, որ նա եղել է Հովսեփի նախկին ամուսնությունից նրա կես եղբայրը (տես՝ Որոգինեսի մեկնությունները Մատթ. 13:55 շուրջ և Էպիֆանեսի *Հերետիկոսություններ*, 78):
3. Տերտուլիանոսը (մ.թ. 160-220թթ), Հելվիդիուսը (մ.թ. 366-384թթ) և Բողոքականների մեծամասնությունը պնդում են, որ նա իրականում եղել է Հիսուսի կես-եղբայրը հենց Հովսեփից և Մարիամից (տես՝ Մարկ. 6:3; 1 Կորնթ. 9:5):
4. Տարբերակներ #1 և #2 զարգացել են պաշտպանելու Մարիամի ցմահ կուսության վերաբերյալ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու վարդապետությունը:

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Եթե ընդունենք վերը նշված վարկածները հեղինակի շուրջ, ապա գոյություն ունեն հավանական երկու տարեթվեր՝

1. Ավելի վաղ շրջանում՝ նախքան Երուսաղեմի Խորհուրդը (Գործք 15), մ.թ. 49 (եթե այս տարեթիվը ճիշտ է, ապա Հակոբոսի գիրքը շրջանառվող ամենավաղ գրությունն է ՆԿ):
2. Ավելի ուշ, հենց անմիջապես Հակոբոսի մահից առաջ՝ մ.թ. 62թ-ին:

Բ. Վաղ տարեթիվն իր օգտին ունի հետևյալ ապացույցները՝

1. «Ժողովարան» բառի կիրառությունը 2:2-ում,
2. եկեղեցու կազմակերպվածության բացակայությունը,
3. «երեց» բառի հրեական իմաստով կիրառությունը 5:14-ում
4. հեթանոսների մեջ առաքելությանը հակառակ ոչ մի ակնարկ (տես՝ Գործք 15),
5. կարծես թե Հակոբոսը գրում էր Երուսաղեմից և նույնիսկ Պաղեստինից դուրս առաջին հրեա հավատացյալ համայնքներին:

Գ. Ուշ տարեթիվն իր օգտին ունի հետևյալ ապացույցները՝

1. Պողոսի Հռոմեացիներին ուղղված նամակին (տես՝ 4:1) Հակոբոսի կողմից հավանական արձագանքը (տես՝ 2:14-20), որտեղ հակառակ մոտեցում է ցուցաբերում հերետիկոսների կողմից դրա անտեղին կիրառությունն ուղղելու համար (տես՝ 2 Պետ. 3:15-16): Եթե սա ճիշտ է, ապա Հակոբոսի նամակի համար «միջնաժամկետ ուղղումը» կարող էր լավ վերնագիր լինել:
2. Գիրքն ըստ երևույթին հիմնական Քրիստոնեական վարդապետություններն է նկատի առնում, քանի որ դրանք ընդհանրապես բացակայում են գրքից:

IV. ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա. «Ամենուրեք ցրված տասներկու ցեղերիդ» արտահայտությունը (1:1) մեր գլխավոր ակնարկն է: Նաև այն փաստը, որ այս նամակը ներառվել է «կաթոլիկ թղթերի» (այսինքրն՝ նամակներ, որոնք հասցեագրված են մի քանի եկեղեցիների) շարքում, արտացոլում է դրա շրջանառվող բնույթը: Ըստ երևույթին մի եկեղեցին չէր գերակշռում այնքան, որքան հատուկ, չնայած անհատներից կազմված ցրված խումբը, որոնք կարծես թե Պաղեստինից դուրս ապրող հրեա Քրիստոնյաներ էին:

Բ. 1:1-ի արտահայտության համար գոյություն ունեն երեք հավանական մեկնություններ՝

1. Հրեաներ. սա անհավանական է թվում «եղբայրներ» բառի կիրառության դեպքում, Հիսուսի մասին ավետարանի հիմնական ճշմարտությունների բացակայությունը, ինչպես նաև 2:1-ում Քրիստոսի վրա ունեցած հավատքի վերաբերյալ հատուկ կերպով նշելը: Նաև Բաբելոնյան Գերությունից հետո բուն տասներկու ցեղերից շատերը երբեք էլ չվերադարձան: Այս նույն փոխաբերությունը խորհրդապատկերորեն կիրառվում է Հայտն. 7:4-8-ում:
2. Քրիստոնյա հրեաները. սա կարծես ավելի հավանական է, քանի որ գիրքն ունի հրեական համ ու հոտ և Հակոբոսը հանդիսանում էր Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը:
3. Եկեղեցին որպես հոգևոր Իսրայելը. սա հնարավոր էր, քանի որ 1 Պետ. 1:1-ում կիրառվում է «սփյուռք» բառը և Պողոսը եկեղեցուն (հավատացյալ հրեաներ և հեթանոսներ) դիմում է որպես հոգևոր Իսրայել (Հռոմ. 2:28-29; 4:16բ; Գաղ. 3:29; 6:16; 1 Պետ. 2:5,9):

V. ՀԱՆԳԱՄԱՆՔԸ – գոյություն ունեն երկու հիմնական տեսություններ.

Ա. Նոր Ուխտի գործադրման փորձ հատկապես առաջին դարի հրեա Քրիստոնյաների հանդեպ, որոնք ապրում էին հեթանոս միջավայրում:

Բ. Ոմանք հավատում են, որ հարուստ հրեաները հալածում էին Քրիստոնյա հրեաներին: Նաև հնարավոր է, որ առաջին Քրիստոնյաները ենթարկվում էին հակասեմական հեթանոսական ճնշումների: Անշուշտ դա եղել է ֆիզիկական կարոտության և հալածանքների ժամանակաշրջան (տես՝ 1:2-4, 12; 2:6-7; 5:4-11, 13-14):

VI. ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԸ

Ա. Այս նամակը՝ քարոզը, արտացոլում է թե՛ կանոնավոր (Հոր – Երգ Երգոց) և թե՛ միջաստվածաշնչյան (Ք. Ա. 180թ.- Ժողովող) իմաստասիրական գրականության իմացություն: Այն շեշտադրում է ամենօրյա գործնական կյանքը՝ հավատքը գործողության մեջ (տես՝ 1:3-4):

Բ. Ինչ-որ առումով ոճը շատ նման է թե՛ հրեական իմաստասիրության ուսուցիչների և թե՛ հունական ու հռոմեական բարոյագիտության շրջիկ ուսուցիչների (Ստոիկների պես) ոճին: Ահա մի քանի օրինակներ՝

1. թեթև կառուցվածքը (մի թեմայից ցատկելով մյուսին)
2. հրամայականների շատությունը (54 անգամ)
3. առարկումներ (ենթադրյալ մի առարկող, որը հարցեր է տալիս, տես՝ 2:18; 4:13): Սա նաև կարելի է տեսնել Մաղաքիայում, Հռոմեացիներում և 1 Հովհաննեսում:

Գ. Չնայած որ ՀԿ-ից միայն մի քանի ուղղակի մեջբերումներ կան (տես՝ 1:11; 2:8,11,23; 4:6), ինչպես Հայտնության գիրքը, առկա են նաև ՀԿ-ից բազմաթիվ ակնարկներ:

Դ. Հակոբոսի ուրվագիծը կարելի է ասել գրքի բովանդակությունից ավելի երկար է: Սա արտացոլում է ռաբբիական այն տեխնիկան, որը նա օգտագործել է՝ մի թեմայից անմիջապես մյուսին անցնելու, որպեսզի համակ ուշադրության մեջ պահի իր լսարանին: Ռաբբիները դա անվանում էին «մարգարիտներ շարանի վրա»:

Ե. Հակոբոսը կարծես թե լինի ՀԿ-յան բոլոր ժանրերի մի համադրություն. (1) իմաստունները (իմաստասիրության ուսուցիչները) և (2) մարգարեները (Ամովսին կամ Երեմիային շատ նման): Նա գործածում էր ՀԿ-յան ճշմարտությունները, սակայն դրանք ողողելով Հիսուսի Լեռան Քարոզի ուսմունքներով: (Տե՛ս հաջորդիվ Բովանդակություն բաժնի Բ. մասում):

VII. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Հակոբոսը գործածում է Համանման Ավետարաններում Հիսուսի խոսքերից ակնարկներ ավելի շատ, քանի ՆԿ-յան որևէ այլ գրքում (այսինքն՝ 1:5,6,22; 2:5,8,13; 3:12,18; 4:10,12; 5:12): Անգամ հնարավոր է, որ Հակոբոսի թղթում կան հենց Հիսուսի կողմից մեջբերված խոսքեր (տես՝ 1:27; 2:13; 3:18; 4:11-12,17):

Բ. Հակոբոսը Լեռան Քարոզի հիշատակում է՝

| ՀԱԿՈՒԹՍ | ԼԵՌԱՆ ՔԱՐՈՉ |
|---------|-------------------------------|
| 1:2 | Մատթ. 5:1-2 |
| 1:4 | Մատթ. 5:48 |
| 1:5 | Մատթ. 7:7 (21:26) |
| 1:12 | Մատթ. 5:3-11 |
| 1:20 | Մատթ. 5:22 |
| 1:22-25 | Մատթ. 7:24-27 |
| 2:5 | Մատթ. 5:3 (25:34) |
| 2:8 | Մատթ. 5:43; 7:12 |
| 2:13 | Մատթ. 5:7 (6:14-15; 18:32-35) |
| 3:6 | Մատթ. 5:22,29,30 |
| 3:12 | Մատթ. 7:16 |
| 3:18 | Մատթ. 5:9; 7:16-17 |
| 4:4 | Մատթ. 6:24 |
| 4:11-12 | Մատթ. 7:1 |
| 4:13 | Մատթ. 6:34 |
| 5:2 | Մատթ. 6:19-20 |
| 5:10-11 | Մատթ. 5:12 |
| 5:12 | Մատթ. 5:34-37 |

Գ. Այն կիրառելի՝ գործնական աստվածաբանություն է (հավատքն առանց գործերի մեռած է): Այս գրքի 108 համարներից 54-ը հրամայականներ են:

VIII. ԿԱՆՈՆԸ

Ա. Հակոբոսի Կանոնի մեջ ներառումը եղավ դժվար և ուշ:

1. Այն չկար մ.թ. մոտ 200թ-ի Հռոմից «Մուրատորիան Պատատիկ» կոչվող կանոնական ցանկում:
2. Այն չկար մ.թ. 360թ-ի Հյուսիսային Աֆրիկայի «Չելթենհամի Ցանկ» կոչվող կանոնական ցանկում (նաև կոչվում էր Կառլ Մոմսենի կատալոգ):
3. Այն չէր ներառվել ՆԿ-ի Հին Լատիներեն տարբերակում:
4. Եվսեբիոսը այն թվարկում է վիճելի գրքերի ցանկում (Եբրայեցիներ, Հակոբոս, 2 Պետրոս, 1 և 3 Հովհաննես, Հուդա և Հայտնություն), *Եկեղեցու Պատմություն*, II:23:24-24; III:25:3 /*Hist. Eccl.*/:
5. Այն չէր ընդունվել Արևմտյան Եկեղեցու կողմից մինչև 4-րդ դար և չէր արձանագրվել Արևելյան Եկեղեցում մինչև 5-րդ դարի Փեշիթա կոչվող Սիրիակ թարգմանության վերանայումը:
6. Այն մերժվեց Թեոդոր Մոփսուեսթացու /Theodore of Mopsuestia/ կողմից (մ.թ. 392-428թթ), որը Անտիոքի աստվածաշնչյան մեկնաբանության դպրոցի ղեկավարն էր (նա հերքում էր կաթոլիկների բոլոր թղթերը):

7. Երասմուսը կասկածներ ուներ այս թղթի հետ կապված, ինչպես և Մարթին Լյութերը, որն այն կոչում էր «ծղոտե թուղթ», քանի որ նրա կարծիքով այն հակասում էր Հռոմեացիների և Գաղատացիների թղթերին, որոնք շեշտադրում են «հավատքով արդարացումը»:

Բ. Ապացույցներ Հակոբոսի թղթի վավերականության շուրջ՝

1. Այն ակնարկվում է Հռոմի Կլեմենտի գրություններում (մ.թ.95թ) և հետագայում երկրորդ դարում Իգնատիոսի, Պոլիկարպի, Ջասթին Մարթիրի և Իրենեոսի կողմից:
2. Այն ակնարկվում է անկանոն, սակայն հանրաճանաչ *Հերմասի Հովիվը /Shepherd of Hermas/* կոչվող Քրիստոնեական գրքում, որը գրվել է մոտ մ.թ. 130թ-ին:
3. Այն անմիջականորեն մեջբերվում է Ռոդգինեսի կողմից (մ.թ.185-245թթ) Հովհաննես Ավետարանի մեկնության մեջ, XIX:23:
4. Եվսեբիոսն իր *Եկեղեցու Պատմություն* գրքում այն թվարկում է «վիճելի գրքերի» ցանկում, սակայն ավելացնում է, որ այն ընդունվել էր շատ եկեղեցիների կոմից:
5. Այն ներառվել էր մ.թ.412թ-ի Սիրիակ թարգմանության վերանայման մեջ (Փեշիթթա կոչվող):
6. Արևելքում Ռոդգինեսը և Դամասկոսի Հովհաննեսը, իսկ արևմուտքում Ջերոմն ու Օգոստինոսը պաշտպանեցին այս գրքի ներառումը կանոնի մեջ: Այն պաշտոնապես ստացավ կանոնավոր գրքի կարգավիճակը Հիպպոլի Խորհրդում՝ մ.թ.393թ-ին, Կարթագենում՝ մ.թ. 397թ-ին, և կրկին մ.թ. 419թ-ին:
7. Այն ընդունվեց Ոսկեբերանի կողմից (մ.թ. 345-407թթ-ին) և Թեոդորեթի կողմից (մ.թ. 393-457թթ), որոնք երկուսն էլ հանդիսանում էին Անտիոքի աստվածաշնչյան մեկնաբանության դպրոցի ղեկավարները:

IX. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «տասներկու ցեղերը», 1:1
2. ցրված՝ սփռված, 1:1
3. «համարեք», 1:2
4. «ընտիր համարվել», 1:12
5. կյանքի պսակը, 1:12
6. «փոփոխության կամ ետ դառնալու ստվեր չկա», 1:17
7. «խոսքը կատարողներ», 1:22
8. կատարյալ օրենքը, 1:25
9. «դևերն էլ են հավատում», 2:19
10. «ավելի խիստ դատապարտություն», 3:1
11. գեհեն, 3:6
12. «երկնքով կամ երկրով երդվել», 5:12
13. օծություն, 5:14
14. «խոստովանեցե՛ք ձեր հանցանքները միմյանց», 5:16

X. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. «երկմիտ մարդը», 1:8
2. «լույսի Հայրը», 1:17
3. Ռախար, 2:25
4. «Չորաց Տերը», 5:4
5. Հոր, 5:11
6. երեցները, 5:14
7. Եղիան, 5:17

XI. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ –ՉԿԱՆ

XII. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս կարող է 1:2-ը ճիշտ լինել:
2. Ինչպե՞ս է սահմանափակվում աղոթքը: (1:5-8; 4:1-5)
3. Ինչպե՞ս է 1:9-11 հակադարձում մշակութային դերի ակնակալիքները:
4. Ի՞նչ նմանություն կա 1:13 և Մատթ. 6:13-ի միջև:
5. Ինչպե՞ս է 1:22-ը համարվում գրքի թեման:
6. Արդյո՞ք 2:1-7-ը խոսում է պաշտամունքի միջավայրի, թե եկեղեցական շենքի միջավայրի վերաբերյալ: Ինչո՞ւ:
7. Քրիստոնեական կայնքի ո՞ր դեպքերին է վերաբերում 2:7-ը:
8. Ինչո՞ւ է 2:10-ը կարևոր ճշմարտություն:
9. Ինչո՞ւ է 2:17 եկեղեցում շատ ընդհարումների պատճառ հանդիսացել (տես՝ 2:20):
10. Ինչպե՞ս են Պողոսն ու Հակոբոսը որպես օրինակ կիրառում Աբրահամին, սակայն տարբեր կերպերով (2:18-26):
11. Ձեր բառերով բացատրեք 3:1-5-ի նշանակությունը:
12. Նկարագրե՛ք աշխարհիկ իմաստության և աստվածային իմաստության միջև եղած տարբերությունը (3:15-17):
13. Ինչո՞ւ է 4:5 այդքան դժվար մեկնաբանելու համար:
14. Ինչո՞ւ պետք է 5:1-6 խոսքերը զարմացնեին հրեա հավատացյալներին:

1 ՊԵՏՐՈՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Պետրոս Առաքյալի հեղինակը լինելու ներքին վկայությունը՝

1. հատկապես սահմանված է 1:1-ում
2. Հիսուսի և Տասներկուսի կյանքի փորձառության և խոսքերի ակնարկներ՝
ա. օրինակներ, որոնք վերցված են Ի. Գ. Սելուինի *Սբ. Պետրոսի Առաջին Թուղթը* /E. G. Selwyn's *The First Epistle of St. Peter*, 1946/ գրքից.

- (1) 1:3 - Հովհ. 21:27
- (2) 1:7-9 - Ղուկ. 22:31; Մարկ. 8:29
- (3) 1:10-12 - Ղուկ. 24:25բ; Գործք 15:14բ
- (4) 3:15 - Մարկ. 14:29,71
- (5) 5:2 - Հովհ. 21:15բ

բ. օրինակներ, որոնք վերցված են Ալեն Սթիբբի *Գեներալ Պետրոսի Առաջին Թուղթը*, 1971, գրքից /Alan Stibbs' *The First Epistle of General Peter*/.

- (1) 1:16 - Մատթ. 5:48
- (2) 1:17 - Մատթ. 22:16
- (3) 1:18 - Մարկ. 10:45
- (4) 1:22 - Հովհ. 15:12
- (5) 2:4 - Մատթ. 21:42բ
- (6) 2:19 - Ղուկ. 6:32; Մատթ. 5:39
- (7) 3:9 - Մատթ. 5:39
- (8) 3:14 - Մատթ. 5:10
- (9) 3:16 - Մատթ. 5:44; Ղուկ. 6:28
- (10) 3:20 - Մատթ. 24:37-38
- (11) 4:11 - Մատթ. 5:16
- (12) 4:13 - Մատթ. 5:10բ
- (13) 4:18 - Մատթ. 24:22
- (14) 5:3 - Մատթ. 20:25
- (15) 5:7 - Մատթ. 6:25բ

3. Գործքում Պետրոսի քարոզների նման բառեր և արտահայտություններ՝

- ա. 1:20 - Գործք 2:23
- բ. 2:7-8 - Գործք 4:10-11
- գ. 2:24 - Գործք 5:30; 10:39 (հուկա.՝ հունարեն խաչ բառի համար *xylon* տերմինի կիրառությունը)
- դ. 4:4 - Գործք 10:45

4. առաջին դարում առկա միսիոներների համամեատությամբ՝

- ա. Սիվղանոս (Շիղա) – 5:12
- բ. Մարկոս (Հովհաննես Մարկոս) - 5:13

Բ. Պետրոս Առաքյալի հեղինակը լինելու արտաքին ապացույցներ՝

1. Վաղ եկեղեցին շուտով և համատարած ընդունել էին.
ա. նմանօրինակ արտահայտություններ, հավանաբար մեջբերումներ, Հռոմի Կլեմենտի կողմից իր *Կորնթացիներին ուղղված նամակ*-ում (մ.թ. 95թ)
- բ. նմանօրինակ արտահայտություններ, հավանաբար մեջբերումներ, *Բառնաբասի Թղթում* (մ.թ. 130թ)
- գ. Երապոլիսի Եպիսկոպոս Պապիասի կողմից ակնարկված (մ.թ. 140թ) մի մեջբերում Եվսեբիոսի *Եկեղեցու Պատմություն*-ից:

- դ. Պոլիկարպի կողմից իր *Փիլիսապեցիներին ուղղված Թուղթը* 8:1-ում մեջբերված, սակայն նա չի նշում 1 Պետրոսն անվանապես (Պոլիկարպը մահացել է մ. թ. 155)
- ե. Իրենեոսի կողմից մեջբերված (մ. թ. 140-203թթ)
- զ. Որոզինեսի կողմից մեջբերված (մ. թ. 185-253թթ): Որոզինեսը հավատում էր, որ 1 Պետրոս 5:13, որտեղ Պետրոսը Մարկոսին կոչում է «իմ որդին» նշանակում է, որ նա է գրել Պետրոսի Ավետարանը:
- է. Մեջբերված Տերտուղիանոսի կողմից (մ. թ. 150-222թթ)

Գ. Պետրոս Առաքյալի հեղինակության վիճարկման պատճառները՝

1. այն ընդգրկված չէ Մուրատորիան Պատառիկում՝ կանոնավոր գրքերի մի ցանկ, որոնք հավաքագրվել են Հռոմում մ. թ. 180 և 200 թթ-ի միջև:
2. գրված է լավ հունարենով՝ փայլուն Կոյնե Հունարենով, որը զարմանալի է «անգրագետ» (*a grammatos*, տես՝ Գործք 4:13) Գալիլեացի ձկնորսի համար
3. այն հնչում է Պողոսի Հռոմեացիներին և Եփեսացիներին ուղղված նամակներին շատ նման
4. 1 Պետրոսում նկարագրված հալածանքների նկարագրությունները համապատասխանում են ավելի ուշ ժամանակներին՝
 - ա. Դոմիթիան (մ. թ. 81-96)
 - բ. Տրագան (մ. թ. 98-117)

Դ. Ժամանակակից գիտության մտահոգություններին հավանական պատասխաններ՝

1. Մուրատորիան Պատառիկը վնասված է և առնվազն մեկ տող բացակայում է տեքստից (տես՝ Բ. Ֆ. Ուեսթքոթի *Նոր Կտակարանի Կանոնի Պատմության Ընդհանուր Ուսումնասիրություն*, 6-րդ խմբագրություն, էջ՝ 289 /B. F. Westcott's *A General Survey of the History of the Canon of the New Testament*):
2. Պետրոսը անգրագետ չէր (տես՝ Գործք 4:13), այլ միայն չէր սովորել ընդունված ռաբբիական դպրոցում: Ըստ երևույթին Գալիլիայում ապրող շատ հրեաներ մանկուց խոսում էին երկու լեզվով: Այս քննարկման մեջ մյուս հիմնական խնդիրը դա Պետրոսի կողմից դպիրի ծառայությունից օգտվելն է: 1 Պետրոս 5:13-ի խոսքի համաձայն հնարավոր է նա որպես դպիր ունեցել է Սիվղանոսին (Շիղային):
3. Թե՛ Պետրոսը, թե՛ Պողոսը հաճախ էին մեջբերում պատարագային կամ ուսուցողական նյութերից (վարդապետական փաստաթղթեր), որոնք շատ տարածված էին վաղ եկեղեցու շրջանում: Տարիների ընթացքում նրանք նաև իրար հետ որոշ կապ էին ստեղծել (այսինքն՝ Գործք, Գաղ. և 2 Պետ. 3:15-16):

Ինձ համար Պետրոսի և Պողոսի գրվածքներում առկա նմանության ամենահավանական պատճառն այն է, որ Պետրոսը օգտվել է Պողոսի միսիոներական գործակցի՝ Սիվղանոսի (Շիղայի) դպրական ծառայությունից:
4. Այնպես չէ, որ 1 Պետրոսի գիրքն արտացոլում է Կայսրության ամբողջ տարածքով տեղի ունեցած հալածանքները: Այն փաստը, որ Պետրոսը պնդում է, որ հավատացյալները պետք է ենթարկվեն կառավարությանը (տես՝ 2:13-17), տարօրինակ կհնչեր ամբողջ Կայսրության տարածքով պաշտոնապես հայտարարված հալածանքների դեպքում:

Ներոնի (մ. թ. 54-68թթ) մոտ զարգացող մտավոր հիվանդությունը (օր.՝ մեծամեծ հայտարարությունները) ոգևորում էր տեղական տիրող աղանդներին, մասնավորապես Փոքր Ասիայում, որպեսզի հրահրվեր տեղական հալածանքներ: 1 Պետրոսի գիրքը ավելի համապատասխանում է Ներոնի օրերին, քան Դոմիթիանի (մ. թ. 81-96թթ) կամ Տրագանի օրերին (մ. թ. 98-117թթ): Նույնիսկ հնարավոր է, որ այդ հալածանքներից մի քանիսը սկսել էին հրեական խմբերի և տեղական կառավարման պաշտոնյաների կամ տիրող աղանդների կողմից:

Ե. Հենց 1 Պետրոսի գրքում չկա մի այնպիսի տեղեկություն, որը մատնացույց է անում ավելի ուշ ժամանակաշրջան կամ հեղինակ:

II. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Տարեթիվը ակնհայտ կերպով կապված է հեղինակի հետ:

Բ. Ավանդույթն ասում է, որ Պետրոսի և Պողոսի մահը տեղի է ունեցել Ներոնի օրոք՝ հավանաբար մ. թ. 65թ-ին: Եթե դա ճիշտ է, ապա 1 Պետրոս գիրքը պետք է որ գրված լինի մոտ մ. թ. 63-64թթ-ին:

Գ. Եթե 1 Պետրոս գրքից բերված մեջբերումներին նայենք ըստ Հռոմի Կլեմենտի (մ. թ. 95թ), ապա հավանական է, որ այն գրի է առնվել առաջին դարի կեսերին:

Դ. Ա. Տ. Ռոբերթսոնը հավատում է, որ պետրոսը մահացել է մ. թ. 67-68թթ-ին և 1 Պետրոս գիրքը գրել է մ. թ. 65-66թթ-ին: Ես կարծում եմ, որ նա մահացել է մ. թ. 64-65թթ-ին և գիրքը գրել է անմիջապես սրանից առաջ:

III. ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա. Առաջին դարի նամակներին բնորոշ կերպով, ստացողները նշված են 1:1-ում որպես «պանդուխտներիդ, որ ցրված եք Պոնտոսում, Գաղատիայում, Կապադովկիայում, Ասիայում և Բյութանիայում»: Այս հռոմեական նահանգները (ենթադրելով, որ Գաղատիան հյուսիսային էթնիկ Գաղատիան է) գտնվում են ներկայիս հյուսիսային Թուրքիայի տարածքում: Ըստ երևույթին սրանք այն տարածքներն են, որտեղ Պողոսը չէր ավետարանել (տես՝ Գործք 16:6) և ոչ էլ Պետրոսը (տես՝ 1:12): Հավանաբար այս եկեղեցիները ծնվել էին հրեա նորադարձների միջոցով, որոնք վերադարձել էին իրենց հայրենի տները Պենտեկոստեից հետո (տես՝ Գործք 2:9-11):

Բ. Չնայած որ այս եկեղեցիները սկզբում սկսվել էին հրեա հավատացյալներով, այն ժամանակ, երբ Պետրոսը գրում էր այս նամակը, դրանք մեծամասամբ կազմված էին հեթանոսներից՝

1. նախկինում Աստծուց անտեղյակ (1:14)
2. իրենց հայրերից ժառանգած ունայն ճամփաներով ապրող (1:18)
3. այժմ Աստծո ժողովուրդ (2:9-10, Ովսեա 1:9-10; 2:23-ից մի բառախառ)
4. հեթանոսների մեջ (2:12)
5. հեթանոսական վատ սովորությունների ցանկը (4:3-4)

Գ. Գիրքը պարունակում է հրեական տարրեր՝

1. «Պանդուխտներ» և «սփյուռք» տերմինների կիրառությունը արտացոլում են հրեական միջավայր (տես՝ Հովհ. 7:35; Գործք 7:6)
2. ՀԿ-յան խոսքերի կիրառությունը՝
ա. Ելից 19 (տես՝ 2:5,9)
բ. Եսայի 53 (տես՝ 1:19; 2:22,24,25)
Սակայն այս օրինակները պարտադիր չէ, որ արտացոլեն հրեական եկեղեցի, այլ՝
3. ՀԿ-յան անվանումների փոխակերպում Իսրայելից եկեղեցուն (այսինքն՝ «քահանայական թագավորություն»)՝
ա. 2:5
բ. 2:9
4. եկեղեցուն սովորեցնելու փաստաթուղթ (այսինքն վարդապետական նյութեր նոր հավատացյալների համար), որոնք ներառում են ՀԿ-յան մեսիական տեքստեր՝
ա. 1:19 – Եսայի 52:7 (այսինքն՝ Գառը)
բ. 2:22 – Եսայի 53:5
գ. 2:24 – Եսայի 53:4,5,11,12
դ. 2:25 – Եսայի 53:6

Դ. Չնայած որ Պետրոսը հատուկ կանչված էր հրեաներին ծառայելու (տես՝ Գաղ.2:8), նա էլ Պողոսի պես աշխատեց թե՛ հրեաների և թե՛ հեթանոսների հետ (տես՝ Գործք 10): Կոռնելիոսի դարձը Պետրոսին ցույց տվեց Ավետարանի մեծամասշտաբ ընդգրկունակությունը: 1 Պետրոսի գիրքը արտացոլում է այս նոր գիտակցումը:

IV. ՆՊԱՏԱԿԸ

Ա. 1 Պետրոս գիրքը թե՛ վարդապետական է և թե՛ գործնական: Սակայն, մինչ Պողոսն իր նամակները բաժանել է մեկնարկային վարդապետական բաժնի և եզրափակիչ կիրառական բաժնի, Պետրոսը դրանք երկուսն էլ համադրել է: Նրա գիրքն առավել դժվար է ուրվագծելը: Շատ առումներով այս գիրքն ավելի շուտ քարոզ է, քան նամակ:

Բ. Քննարկվող գլխավոր թեման չարչարանքն ու հալածանքն է: Սա երկու ձևով է ներկայացվում՝

1. Հիսուսը ներկայացվում է որպես չարչարանք և անարգանք կրած մեծագույն օրինակ (տես՝ 1:11; 2:21,23; 3:18; 4:1,13; 5:1):
2. Հիսուսի հետևորդները կանչված են հետևելու Նրա օրինակին և վարքին (տես՝ 1:6-7; 2:19; 3:13-17; 4:1, 12-19; 5:9-10):

Գ. Քրիստոնեության վաղ տարիներին այնքան տարածված չարչարանքների և հալածանքների լույսի ներքո, զարմանալի չէ, թե որքան հաճախ է նշվում Երկրորդ Գալատյան վերաբերյալ: ՆԿ-յան գրքերից մեծ մասի պես այս գիրքն էլ բավականաչափ էսկատոլոգիական է:

V. ԺԱՆՐԸ

Ա. Այս գիրքն ունի առաջին դարին հատկանշական հունա-հռոմեական բացման և փակման խոսք՝

1. 1:1-2
 - ա. հեղինակ
 - բ. ստացողներ
 - գ. աղոթք
2. 5:12-14
 - ա. հրաժեշտի փակման խոսք
 - (1) ումից
 - (2) ում
 - բ. աղոթք

Բ. Նամակի հիմնական կառուցվածքն իրենից ավելի շուտ քարոզ է ներկայացնում, քան նամակ: Ոմանք ենթադրում են, որ դա՝

1. սկզբում քարոզ է եղել
2. սկզբում մկրտության արարողություն է եղել
3. սկզբում այս գիրքը եղել է վաղ եկեղեցու հավաքական վարդապետական նյութերը

Գ. Նամակը կարծես թե ավարտվում է 4:1-ում օրհնության խոսքով, սակայն ոչ մի հունարեն ձեռագիր այս մասում չի վերջանում: Հնարավոր է, որ 4:12-5:11 բաժինը ամբողջ նամակի նպատակային ամփոփումն է:

Դ. Անձամբ ես հավատում եմ, որ 1 Պետրոսը եղել է որպես շրջանառվող նամակ բոլոր այն եկեղեցիների համար, որոնք Պետրոսն ինքը չի սկսել, Պողոսի Կողոսացիներին ուղղված նամակին շատ նման (ուղարկված Կողոսիա, Լավողիկե և Երապոլիս, տես՝ Կող.4:13), սակայն նաև ընդհանուր քաջալերանքի նամակ է հավատացյալների համար, որպեսզի զգուշանան գալիք խնդիրներից՝ Պողոսի Գաղատացիներին և Եփեսացիներին ուղղված նամակներին շատ նման:

Այս շրջանառվող ժանրը բացատրվում է նամակի անձնական բացման և փակման խոսքի բացակայությամբ: Այն նաև բացատրվում է հալածանքի մասնավոր օրինակների բացակայությամբ:

VI. ԿԱՆՈՆԸ

Ա. Ես ներառում եմ նաև 1 Պետրոսի կանոնի կատեգորիան, քանի որ այն շատ հակասական է 2 Պետրոսի կանոնի հետ:

Բ. 1 Պետրոսը գտնվում է Եվսեբիոսի *Եկեղեցու Պատմություն* 3:3:25 /Eusebius' *Eccl. His* 3:3:25/ գրքում որպես «անվիճելի գրքերի» ցանկում: Հինավուրց եկեղեցում այն երբեք կասկածի տեղիք չի տվել, որ եղել է Պետրոս Առաքյալի կողմից գրված իրական նամակ:

Գ. Կանոնականացման խնդիրը սրված էր մի շարք կեղծված գրությունների պատճառով, որոնք վերագրված էին Պետրոսին: Վաղ եկեղեցին երբեք էլ չէր ընդունել դրանցից ոչ մեկը և ճանաչել էր միայն 1 Պետրոսի նամակը և վիճելի էր 2 Պետրոսի նամակը, թե արդյոք այն իրոք գրվել էր Առաքյալի կողմից .

1. Պետրոսի գործերը
2. Պետրոսի և Անդրեասի գործերը
3. Պետրոսի և Պողոսի գործերը
4. Պետրոսի և Պողոսի տեսիլքը
5. Պետրոսի և Տասներկուսի գործերը
6. Պետրոսի վախճանը
7. Պետրոսի Ավետարանը
8. Պետրոսի Տեսիլքը
9. Պետրոսի քարոզչությունը
10. Պետրոսի սլավոնական գործերը

(Այս անանուն գրություններից յուրաքանչյուրի քննարկման համար տե՛ս *Չոնդերվանի Ատվածաշնչյան Նկարագրող Հանրագիտարան* /Zondervan *Pictorial Encyclopedia of the Bible* Vol. 7; pp. 721-723, 732-733, 740/): Ըստ ենթադրության Պետրոսին վերագրված այս գրքերից և ոչ մեկը լրջորեն չեն դիտարկվել ՆԿ-ի կանոնի մաս կազմելու համար: Սա ինքնին շատ բան է խոսում 1 և 2 Պետրոսի թղթերի կանոնի մեջ ընդգրկվելու վերաբերյալ:

ՊԵՏՐՈՍ ՄԱՐԴԸ

I. ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ

Ա. Պետրոսի ընտանիքն ապրում էր հեթանոսների Գալիլիայում՝ Բեթսայիդա քաղաքում, որը գտնվում էր Գալիլիա Ծովի հյուսիսային ծովեզրին (կամ Տիբերիաս Ծովը, տես՝ Հովհ. 1:44), սակայն ըստ երևույթին ինչ-որ ժամանակ նրանք տեղափոխվեցին Կափառնայում (տես՝ Մարկ. 1:21,29):

Բ. Պետրոսի հոր անունը Հովնան էր (տես՝ Մատթ. 16:17) կամ Հովհաննես (տես՝ Հովհ. 1:42; 21:15-17):

Գ. Նրան ի ծնե անվանում էին Սիմոն (տես՝ Մարկ. 1:16,29,30,36), որը տարածված անուն էր առաջին դարի Պաղեստինում: Այն Սիմեոն անվան հրեական տարբերակն էր (տես՝ Գործք 15:14; 2 Պետ. 1:1), որը Իսրայելի տասներկու ցեղերից մեկի անունն էր (տես՝ Ծննդ. 29:33; Ելից 1:1):

Հիսուսը նրան վերանվանեց Պետրոս (*Petros*, որը նշանակում է «ժայռ», նկարագրելու համար նրա վերջնական զորությունն ու հաստատակամությունը) Մատթ. 16:18; Մարկ. 3:16; Ղուկ. 6:14 և Հովհ. 1:42: Արամերեն տարբերակը *Cephas /Կեփաս/* է (տես՝ Հովհ. 1:42; 1 Կորնթ. 1:12; 3:22; 9:5; 15:5; Գաղ. 1:18; 2:9,11,14): Հաճախ ՆԿ-ում այս երկու անունները միասին են տրված (տես՝ Մատթ. 16:16; Ղուկ. 5:8; Հովհ. 1:40; 6:8,68; 13:6,9,24,36; 18:10,15, 25; 20:2,6; 21:2-3,7,11,15):

Դ. Պետրոսի եղբոր անունը Անդրեաս էր (տես՝ Մարկ. 1:16): Նա Հովհաննես Մկրտչի աշակերտն էր (տես՝ Հովհ. 1:35,40) և հետագայում Հիսուսին հավատացող անձ է Նրա հետևորդը (տես՝ Հովհ. 1:36-37): Նա Սիմոնին բերեց Հիսուսի մոտ (տես՝ Հովհ. 1:41): Մի քանի ամիս անց Հիսուսը հանդիպեց նրանց Գալիլիայի Ծովի մոտ և կանչեց նրանց դառնալու Իր լիարժեք աշակերտները (տես՝ Մատթ. 4:18-20; Մարկ. 1:16-18 և Ղուկ. 5:1-11):

Ե. Նա ամուսնացած էր (տես՝ Մարկ. 1:30; 1 Կորնթ. 9:5), սակայն երեխաների մասին չի նշվում:

II. ՆՐԱ ՉԲԱՂՄՈՒՄԸ

Ա. Պետրոսի ընտանիքն ուներ մի քանի ձկնորսական նավակներ և նույնիսկ ծառաներ էին վարձում:

Բ. Հնարավոր է, որ Պետրոսի ընտանիքը համագործակցում էր Հակոբոսի, Հովհաննեսի և նրանց հոր՝ Չեբեդեոսի հետ (տես՝ Ղուկ. 5:10):

Գ. Հիսուսի մահից հետո Պետրոսը մի կարճ ժամանակով վերադառնում է ձկնորսության (տես՝ Հովհ. 21):

III. ՆՐԱ ԲՆԱՎՈՐԹՅՈՒՆԸ

Ա. Պետրոսի առավելությունները՝ ուժեղ կողմերը.

1. Նա նվիրված հետևորդ էր, սակայն բավականին տաքադյուն (տես՝ Մարկ. 9:5; Հովհ. 13:4-11):
2. Նա հավատքի քայլեր էր փորձում անել, բայց հաճախ ձախողում էր (օր.՝ ջրի վրայով քայլելը, տես՝ Մատթ. 14:28-31):

3. Նա քաջ էր և համաձայն էր մինչ ի մահ գնալու (տես՝ Մատթ. 26:51-52; Մարկ. 14:47; Ղուկ. 22:49-51; Հովհ. 18:10-11):
4. Հովհ. 21-ում Հիսուսն էր հարությունից հետո նրան անձամբ դիմեց որպես Տասներկուսի առաջնորդ և հնարավորություն ընձեռեց, որպեսզի ապաշխարի և վերականգնվի իր առաջնորդության մեջ:

Բ. Պետրոսի թուլությունները՝

1. Նա սկզբնապես հակված էր դեպի հրեական օրինապաշտությունը՝ ա. հեթանոսների հետ ուտելը (Գաղ. 2:11-21)
բ. սննդի հետ կապված օրենքները (Գործք 10:9-16)
2. Նա էլ բոլոր Առաքյալների պես չէր կարողանում լիովին հասկանալ Հիսուսի արմատապես նոր ուսմունքները և դրանց կիրառությունները:
ա. Մարկ. 9:5-6
բ. Հովհ. 13:6-11; 18:10-11
3. Նա անձամբ և խստորեն պատժվեց Հիսուսի կողմից (Մարկ. 8:33; Մատթ. 16:23)
4. Գեթսեմանի պարտեզում Հիսուսի համար ամենադժվարին ժամին նա աղոթելու փոխարեն քնեց (Մարկ. 14:32-42; Մատթ. 26:36-46; Ղուկ. 22:40-60):
5. Նա մի քանի անգամ շարունակ ուրացավ, որ ճանաչում է Հիսուսին (Մարկ. 14:66-72; Մատթ. 26:69-75; Ղուկ. 22:56-62; Հովհ. 18:16-18,25-27):

IV. ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Ա. Գոյություն ունեն Առաքյալների չորս ցանկ (տես՝ Մատթ. 10:2-4; Մարկ. 3:16-19; Ղուկ. 6:14-16; Գործք 1:13): Պետրոսը այս չորս ցանկերում էլ միշտ առաջինն է: Տասներկուսը բաժանված էին չորս հոգանոց երեք խմբի: Ես կարծում եմ, որ սա թույլ էր տալիս նրանց հերթով իրենց ընտանիքներին այցելելու համար տուն վերադառնալ:

Բ. Պետրոսը հաճախ էր Առաքելական խմբի համար հանդես գալիս որպես խոսնակ (տես՝ Մատթ. 16:13-20; Մարկ. 8:27-30; Ղուկ. 9:18-21): Այս հատվածները նաև գործածվում էին հաստատելու խմբում նրա ունեցած հեղինակությունը (տես՝ Մատթ. 16:18): Սակայն, հենց այս նույն համատեքստում Հիսուսը նրան հանդիմանում է որպես Սատանայի կողմից օգտագործված գործիքի (տես՝ Մատթ. 16:23; Մարկ. 8:33):

Նաև, երբ աշակերտները վիճում էին, թե ով էր նրանցից ամենամեծը, Պետրոսը չհամարվեց այդ դիրքի հավակնորդ (տես՝ Մատթ. 20:20-28; հատկապես հ. 24; Մարկ. 9:33-37; 10:35-45):

Գ. Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը Պետրոսը չէր: Սա բաժին ընկավ Հակոբոսին՝ Հիսուսի կես եղբորը (տես՝ Գործք 12:17; 15:13; 21:18; 1 Կորնթ. 15:7; Գաղ. 1:19; 2:9,12):

V. ՀԻՍՈՒՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՆՐԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Պետրոսի առաջնորդական դերը հստակ երևում է Գործքի առաջին գլուխներում՝

1. Նա առաջնորդեց Հուդային փոխանորդ գտնելու համար ընտրությունը (տես՝ Գործք 1:15-26):
2. Առաջին անգամ նա քարոզեց Պենտեկոստի օրը (տես՝ Գործք 2):
3. Նա բժշկեց կաղ մարդուն և քարոզեց երկրորդ արձանագրված քարոզը (տես՝ Գործք 3:1-10; 3:11-26):
4. Գործք 4-ում նա համարձակորեն խոսեց Սանեդրինում:
5. Նա դեկավարեց եկեղեցու մեջ տիրող կարգուկանոնը Գործք 5-ում Անանիայի և Սափիրայի պատմության ժամանակ:
6. Գործք 15:7-11-ում նա խոսեց Երուսաղեմի Խորհրդում:

7. Գործքում առկա մի քանի այլ դեպքեր և հրաշքեր վերագրված են նրան:

Բ. Սակայն միշտ չէ, որ Պետրոսը մարմնավորում է ավետարանի գաղափարները.

1. նա պահպանում էր ՀԿ-յան մտածելակերպը (տես՝ տես՝ Գաղ. 2:11-14):
2. նրան պետք եղավ հատուկ հայտնություն ստանալ, որպեսզի Կոռնելիոսին (տես՝ Գործք 10) և այլ հեթանոսների էլ ընդգրկի

VI. ԼՈՒՌՆԱԿԱՆՆԵՐԸ

Ա. Պետրոսի մասին քիչ կամ էլ ընդհանրապես ոչ մի տեղեկություն չկա Գործք 15-ի Երուսաղեմի Խորհրդից հետո՝

1. Գաղատացիների 1:18
2. Գաղատացիների 2:7-21
3. 1 Կորնթացիների 1:12; 3:22; 9:5; 15:5

Բ. Վաղ եկեղեցու ավանդույթը՝

1. Պետրոսի Հռոմում նահատակվելու վերաբերյալ նշված է Հռոմի Կլեմենտի Կորնթոսի եկեղեցուն ուղղված նամակում՝ մ. թ. 95թ
2. Տերտուլիանոսը (մ. թ. 150-222թթ) նույնպես նշում է Հռոմում Ներոնի իշխանության օրոք (մ. թ. 54-68թթ) Պետրոսի մարտիրոսության վերաբերյալ
3. Ալեքսանդրիացի Կլեմենտը (մ. թ. 200թ) ասում է, որ Պետրոսը սպանվեց Հռոմում
4. Որոգիները (մ. թ. 252թ) ասում է, որ Պետրոսը մարտիրոսվեց Հռոմում գլխիվար խաչելությամբ:

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. կանխագիտություն, 1:2
2. «Նրա արյան սրսկմամբ», 1:2
3. «վերստին ծնեց», 1:3
4. զանազան փորձություններ, 1:6
5. «ձեր հավատի փորձությունը», 1:7
6. «Հիսուս Զրիստոսի հայտնությունը», 1:7,13
7. հոգիներ, 1:9
8. «անբիծ ու անարատ գառան», 1:19
9. «Որն իրապես սահմանված էր աշխարհի հիմնադրումից առաջ», 1:20
10. «կենդանի և հավիտենական Աստծո Խոսքից», 1:23
11. «խոսքի անխարդախ կաթը», 2:2
12. «կենդանի քար», 2:4
13. «սուրբ քահանայություն», 2:5
14. անկյունաքար, 2:6
15. «գայթակղության քար», 2:8
16. ենթարկվել, 2:13
17. «ազատվենք /մեռնենք/ մեղքերից և ապրենք արդարության համար», 2:24
18. «Նրա վերքերով դուք բժշկվեցիք», 2:24
19. քաղցրաբարո, 3:8
20. պահպանեք, 3:15
21. «հիմա էլ մկրտությունն է փրկում ձեզ», 3:21
22. փորձվելը, 4:12
23. «հակառակվեք նրան», 5:9

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. «այն Սուրբը», 1:15

2. «ձեր հոգիների Հովիվն ու Տեսուչը», 2:25
3. երեցներ, 5:1
4. Հովվապետ, 5:4
5. Սիդվանոս, 5:12
6. Մարկոս, 5:13

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Պոնտոս, 1:1
2. Գաղատիա, 1:1
3. Կապադովկիա, 1:1
4. Ասիա, 1:1
5. Բութանիա, 1:1
6. Սիոն, 2:6
7. Բաբելոն, 5:13

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Նկարագրե՛ք հավատացյալի ժառանգությունը (1:4-5):
2. Ձեր բառերով բացատրե՛ք 1:1 համարը:
3. Այդ ի՞նչ են ուզում իմանալ հրեշտակները (1:12):
4. Ինչպե՞ս պետք է Քրիստոնյաները հնազանդվեն 1:16-ին:
5. Ինչպե՞ս կարող է մարդը փրկության մեջ աճել (2:2):
6. Ինչո՞ւ է 2:5 և 9 այդքան կարևոր:
7. Ի՞նչ կապ ունի 2:16-ը Հռոմեացիների 14-ի հետ:
8. Ի՞նչ առնչություն ունի մեր օրերի հետ 3:3 համարը:
9. Կարո՞ղ է արդյոք մեր կողակցի հետ ունեցած փոխհարաբերությունը ազդել մեր աղոթքների վրա (3:7):
10. Որտե՞ղ գնաց Հիսուսը, որպեսզի քարոզի բանտարկյալ հոգիներին (3:19):
11. Բացատրե՛ք 3:22 ըստ գնոստիկ աստվածաբանության:
12. Ո՞րն է 1 Պետրոսի հիմնական թեման:

2 ՊԵՏՐՈՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Այս ներածական բաժնի նպատակը չէ քննարկել 2 Պետրոսի հեղինակության հետ կապված խնդիրները: Անձամբ ես եկել եմ այն եզրակացության, որ Պետրոսի հեղինակությունը հերքող համոզիչ պատճառ չկա: Այս թեմայի շուրջ խորհելու երեք օգտակար աղբյուրներ կան՝

1. Բրյուս Մ. Մեզգերի «Գրական կեղծ փաստաթղթեր և կանոնական կեղծանուններ» հոդվածը *Աստվածաշնչյան Գրականության Ընկերության Ամսագրում*, 1972, էջ՝ 3-24 /M. Metzger “Literary Forgeries and Canonical Pseudepigrapha” in *The Journal of the Society of Biblical Literature*/:
2. Մայքլ Ջ. Կրուգերի «2 Պետրոսի հավաստիությունը» հոդվածը *Ավետարանական Աստվածաբանական Ընկերության Ամսագրում*, հատոր 42, համար 4, էջ՝ 645-671 /Michael J. Kruger “The Authenticity of 2 Peter” in *The Journal of the Evangelical Theological Society*/:
3. Ի. Մ. Բ. Գրինի *2 Պետրոսը Վերանայարկված*, գիրքը, Թինդեյլ Հրատարակչություն, 1961 /E. M. B. Green *2 Peter Reconsidered*, Tyndale Press, 1961/:

Բ. Երբ մտածում եմ, որ հնարավոր է 2 Պետրոսը չի գրել հենց Պետրոսը, ապա մտքովս շատ հարցեր են անցնում՝

1. Այն, թե ով է գրել 2 Պետրոսի նամակը, չի փոխում իմ տեսակետը, որ այն ներշնչված է և վստահելի: Հեղինակությունն ազդում է հերմենևտիկայի և ոչ թե ներշնչանքի վրա, որը հավատքի ենթադրություն է և արձանագրելի պատմական գործընթաց:
2. Ինչո՞ւ եմ ես մտահոգվում կեղծանվան համար: Ըստ երևույթին առաջին դարի հունահռոմեական աշխարհը սովոր էր այս երևույթին (Մեսոգգերի հոդվածը):
3. Արդյո՞ք ես չեմ կամենում դա թույլ տալ իմ նախընտրությունների պատճառով, թե ես կարող եմ ազնվորեն գնահատել պատմական և տեքստային ապացույցները: Արդյո՞ք ավանդույթն է ինձ հարկադրում որոշակի եզրահանգումների գալ:
4. Հնագույն եկեղեցին հարցականի տակ էր դրել Պետրոսի հեղինակությունը, բայց ոչ թե գրքի պատգամը՝ բովանդակությունը (բացառությամբ Սիրիական եկեղեցու): Այն ուղղափառ մի քարոզ է ՆԿ-յան մյուս գրքերի հետ աստվածաբանական միաբանության մեջ՝ Գործքում առկա Պետրոսի քարոզների հետ բազմաթիվ կապերով:

Գ. Եվսեբիոսը կիրառում էր Քրիստոնեական գրքերը նկարագրելու համար երեք կատեգորիա՝

1. ընդունված,
2. վիճելի,
3. կեղծ

2 Պետրոսի գիրքը Հակոբոսի, Հուդայի, 2 Հովհաննեսի և 3 Հովհաննեսի հետ միասին նա դասել էր երկրորդ կատեգորիայի շարքին (այսինքն՝ վիճելի): Եվսեբիոսը ընդունեց 1 Պետրոսը, կասկածներ ուներ 2 Պետրոսի շուրջ, և հերքեց Պետրոսի ենթադրյալ մյուս բոլոր կեղծ գրքերը՝ (1) Պետրոսի Գործերը, (2) Պետրոսի Ավետարանը, (3) Պետրոսի Քարոզչությունը, և (4) Պետրոսի Վախճանը:

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Այս գիրքը ՆԿ-ի ամենավիճելի գիրքն է, երբ հարցը վերաբերում է դրա ավանդական հեղինակին:

Բ. Այս կասկածների պատճառները թե՛ ներքին (ոճը և բովանդակությունը) և թե՛ արտաքին են (ուշ ընդունելությունը):

1. Արտաքին
ա. Մարկիոնի (մ.թ. 145թ) կամ Մուրատորիան Պատարիկի (մ.թ. 170թ) կողմից չի նշվում

- բ. գտնվել է երրորդ դարի սկզբին Բողամերի Պապիրուս P⁷²-ում:
 - գ. ուղղակիորեն չի մեջբերվում Վաղ Եկեղեցու հեղինակների կողմից մինչև երրորդ դար (Ռոզգինես և Մեթոդիոս):
 - դ. մինչև Կարթագենի Խորհուրդը՝ մ. թ. 397թ, պաշտոնապես չի ընդունվել Կանոնի մեջ, ըստ երևույթին հետևելով Աթանասիոսի մ. թ. 367թ-ի նամակին: Այն մերժված էր Արևելյան Եկեղեցում մինչև վեցերորդ դար:
 - ե. առկա չէ հինգերորդ դարի Սիրիակ (Փեշիթթա) թարգմանության մեջ
 - զ. Եվսեբիոսը, մ. թ. 325թ-ի իր գրության մեջ (*Եկեղեցու Պատմություն* 3:25:3) այն դասում է վիճելի գրքերի շարքին (2 Պետրոս, Հուդա, Հակոբոս, 2 Հովհաննես և 3 Հովհաննես):
2. Ներքին
- ա. ոճը շատ տարբեր է 1 Պետրոսի ոճից (1 Պետրոս գիրքը սինթետիկ հունարենով է, մինչ 2 Պետրոսը՝ ոչ. Ջերոմն այս տարբերությունը վերագրում է տարբեր դպիրներին):
 - բ. 2 Պետրոսը կարծես թե հետևում է մի գրական ժանրի, որը հայտնի է որպես «Ասիականիզմ», որը բնորոշ էր որոշ Փոքր Ասիական գրականության:
 - գ. կանոնից դուրս հավելյալ աղբյուրներից ակնարկները մեծ խնդիրներ են ստեղծել սակայն 1 Պետրոսը նույնպես կարծես թե ունի 1 Ենովքից մեջբերում:
 - դ. 2 Պետրոս և Հուդա գրքերը ունեն որոշակի գրական կապ (2 Պետ. 2:1-8 և Հուդա 4-13; 2 Պետ. 3:1-3 և Հուդա 17-18). ո՞վ է ում կրկնօրինակել, հայտնի չէ:
 - ե. գիրքն ինքնին հիմնավորում է, որ գրված է Պետրոս Առաքյալի կողմից՝ 1:1,14,16-18; 3:1,15

Գ. Ժանրը

1. Արդյո՞ք սա առաջին դարին բնորոշ նամակ է.
 - ա. այն ունի տիպիկ առաջին դարի նամակի նախաբան և վերջաբան
 - բ. սակայն, այն կարծես թե շրջանառվող նամակ է, որ գրվել է մի քանի եկեղեցիների համար՝ ինչպես Գաղատացիների, Եփեսացիների, Հակոբոսի և 1 Հովհաննեսի նամակները:
 - գ. Հնարավոր է, որ այն լինի մասնագիտացված հրեական ժանր, որը կոչվում է «կտակարան», որին բնորոշ է՝
 - (1) հրաժեշտի խոսքը
 - (ա) 2 Օրինաց 31-33
 - (բ) Հեսու 24
 - (գ) Տասներկու Նահապետների Կտակարանը
 - (դ) Հովհաննես 13-17
 - (ե) Գործք 20:17-28
 - (2) մատալուտ մահվան կանխասում (տես՝ 2 Տիմոթեոս)
 - (3) իր ունկնդիրներին հորդորել, որ շարունակեն իր ավանդույթը
2. 2 Պետրոսի և Հուդայի միջև կապը՝
 - ա. Անկասկած եղել են որոշակի գրական փոխառումներ
 - բ. Անկանոն աղբյուրներից ակնարկները պատճառ են հանդիսացել, որ շատերը չընդունեն Հուդայի և 2 Պետրոսի գրքերը, չնայած որ նույնիսկ 1 Պետրոսը ակնարկ է կատարում 1 Ենովքի գրքից և Պողոսը նույնիսկ մեջբերում է հույն գրողներից:
3. Գիրքն ինքնին պնդում է, որ գրվել է Պետրոս Առաքյալի կողմից՝
 - ա. Անվանապես նշվում է 1:1-ում: Նրան անվանում էին Սիմեոն Պետրոս: Պետրոսը Հիսուսի կողմից նրան տրված անունն է (տես՝ Մատթ. 16): Սիմեոնը (ոչ թե Սիմոնը) հազվադեպ և անսովոր անուն էր: Եթե ինչ-որ մեկը փորձում էր Պետրոսի անվան մեջ գրել այս սեմական հեզման տարբերակը, ապա դա շատ զարմանալի կլիներ և հավասարագոր կեղծանվան:
 - բ. Նա պնդում է, որ եղել է այլակերպության ակնատեսը (տես՝ Մատթ. 17:1-8; Մարկ. 9:2-8; Ղուկ. 9:28-36) 1:16-18 համարներում:

- գ. Նա պնդում է, որ գրել է առաջին մի նամակ ևս (տես՝ 3:1), որը վերաբերում է 1 Պետրոսին:
4. Ուղղափառությունը՝
 ա. Այս նամակում ոչ մի այնպիսի բան չկա, որը հակասում է ՆԿ-յան Առաքելական ուսմունքին:
 բ. Կան մի քանի յուրահատուկ խոսքեր (այսինքն՝ կրակով բնաջնջվող աշխարհը և Պողոսի գրքերը դիտարկված որպես Սուրբ Գրքեր), սակայն ոչ մի գնոստիկ կամ որդեգրված կամ ակնհայտ աղանդավոր ինչ-որ բան:

ԱՐՏԱՔԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Եվսեբիոսը առաջին և երկրորդ դարերի Քրիստոնեական գրքերը երեք կարգի է դասում՝
 ա. ընդունված
 բ. վիճելի
 գ. կեղծ
 2 Պետրոսը Եբրայեցիների, Հակոբոսի, 2 և 3 Հովհաննեսի հետ միասին դասված են վիճելի գրքերի կարգում:
2. 2 Պետրոսի գիրքը բացակայում է Մարկիոն կանոնում (մ. թ. 154թ), սակայն Մարկիոնը հերքում էր նաև ՆԿ-յան շատ այլ գրքեր:
3. 2 Պետրոսի գիրքը առկա չէ Մուրատորիան Պատառիկում (մ. թ. 180-200թթ), սակայն այդ ցանկը կարծես թե վնասված է և այնտեղ բացակայում է նաև Եբրայեցիների, Հակոբոսի և 1 Պետրոսի գրքերը:
4. Այն ընդունված չէր Արևելյան (Սիրիակ) Եկեղեցու կողմից:
 ա. առկա չէ Փեշիթայում (հինգերորդ դարի առաջին կես)
 բ. ընդգրկվել է Ֆիոքսենիանում (մ. թ. 507թ) Իրաքից, և Հարքլինյան տարբերակում (մ. թ. 616թ)՝ հյուսիսային Աֆրիկայից:
 գ. Ոսկերեանը և Մովսուեսթացի Թեոդորը (այսինքն՝ Անտիոքի աստվածաշնչյան մեկնաբանության դպրոցի առաջնորդները) հերքում էին կաթոլիկ բոլոր թղթերը:
5. 2 Պետրոսը կարծես թե մեջբերվում էր «Ճշմարտության ավետարանում» և «Հովհաննեսի ապոկրիֆոնում», որոնք գտնվել են Նեգ Համմաթիի գնոստիկ տեքստերում (տես՝ *Nag Hammadi Gnostic Texts and the Bible* by Andrew K. Helmbold, էջ՝ 91): Կոպտիկ լեզվով այս գրությունները վաղ հունարեն տեքստերի թարգմանություններ են: Եթե 2 Պետրոսը ակնարկվում է այս գրություններում, ապա անհնար է, որ այն գրված լինի երկրորդ դարում:
6. Այն ընդգրկվել է P⁷² –ում, որը թվագրված է UBS⁴-ի կողմից (էջ՝ 8) որպես երրորդ կամ չորրորդ դարի գիրք:
7. Հռոմի Կլեմենտը ակնարկում կամ մեջբերում է այն (մ. թ. 95թ):
 ա. 1 Կլեմենտ (9:2 – 2 Պետրոս 1:17)
 բ. 1 Կլեմենտ (23:3 – 2 Պետրոս 3:4)
 գ. 1 Կլեմենտ (35:5 – 2 Պետրոս 2:2)
8. Հնարավոր է, որ այն ակնարկվում է Ջասթին Մարթիրի (մ. թ. 115-165թթ) *Երկխոսություն Տրիֆոսի հետ* 82:1 – 2 Պետրոս 2:1 /Justin Martyr *Dialogue with Trypho* 82:1- 2 Peter 2:1/: Սրանք այն եզակի երկու տեղերն են, որտեղ կիրառվել է հունարենի *pseudopphetai* տերմինը:
9. Իրենեոսը (մ. թ. 130-200թթ) հավանաբար ակնարկում է 2 Պետրոսը (մեջբերված է Եվսեբիոսի կողմից *Եկեղեցու Պատմություն* 5:32:2 – 2 Պետ. 3:8 և 3:1:1 – 2 Պետ. 1:15):
10. Ալեքսանդրիացի Կլեմենտը (մ. թ. 150-215թթ) գրել է իր առաջին մեկնաբանության գիրքը (չնայած հիմա այն կորած է) 2 Պետրոսի թղթի վերաբերյալ:
11. Այն գտնվում է Աթանասիոսի Արևելյան նամակում (մ. թ. 367թ), որը այդ ժամանակի կանոնավոր գրքերի ցանկն էր:
12. Այն ընդունվում է որպես կանոնավոր գիրք Լավոդիկեի (մ. թ. 372) և Կարթագենի (մ. թ. 397թ) վաղ եկեղեցու խորհուրդների կողմից:

13. Հետաքրքիր է, որ Պետրոսի մյուս կարծեցյալ գրությունները (այսինքն՝ Պետրոսի Գործերը, Անդրեասի և Պետրոսի Գործերը, Պետրոսի և Պողոսի Գործերը, Պետրոսի և Պողոսի Նպատակը, Պետրոսի և Տասներկու Առաքյալների Գործերը, Պետրոսի Վախճանը, Պետրոսի Քարոզչությունը) բոլորն էլ հերքվել են վաղ եկեղեցիների կողմից, և դասվել որպես կեղծ (այսինքն՝ անկանոն):

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Սա կապված է հեղինակի հետ:

Բ. Եթե համոզված ասենք, որ գիրքը պատկանում է Պետրոսի գրչին, ապա այն գրվել է իր մահից անմիջապես առաջ (տես՝ 1:14):

Գ. Եկեղեցու ավանդույթը պնդում է, որ Պետրոս Առաքյալը մահացել է Հռոմում, մինչ կայսրը Ներոնն էր: Ներոնը մ. թ. 64թ-ին հրամայել էր հալածել Քրիստոնյաներին: Նա ինքնասպան է եղել մ. թ. 68-ին:

Դ. Եթե Պետրոսի հետևորդներից ինչ-որ մեկն է գրել նրա անունով, ապա հավանական տարեթիվը կլինի ավելի ուշ՝ մ. թ. 130-150թթ, քանի որ 2 Պետրոսը մեջբերվում է *Պետրոսի Վախճանը* գրքում, ինչպես նաև *Ճշմարտության Ավետարան* և *Հովհաննեսի Ապոկրիֆոնը* գրքերում:

Ե. Հայտնի ամերիկացի հնագետ Վ. Ֆ. Օլբրայթը պնդում է, որ այն գրվել է մ. թ. 80թ-ին, քանի որ նմանություններ ունի Մեռյալ Ծովի Մագաղաթների հետ:

IV. ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա. Եթե 2 Պետրոս 3:1-ում գրվածը վերաբերում է 1 Պետրոսին, ապա ստացողները նույն մարդիկ էին (այսինքն՝ հյուսիսային Թուրքիան):

Բ. 2 Պետրոսը հնարավոր է վկայության համար է, որպեսզի քաջալերի հավատացյալներին դիմակայելու փորձությունների մեջ, հակառակվելու կեղծ վարդապետներին, և հավատարմորեն ապրելու ըստ ավետարանի ավանդույթի՝ սպասելով Երկրորդ Գալուստին:

V. ՇԵՇՏԱԴՐՈՒՄԸ

Ա. Պատերազմելու հերձվածողության՝ հավանաբար նախնական հակատոմիական գնոստիցիզմի դեմ (2:1-22; 3:15-18):

Բ. Քննարկելու Քրիստոսի ուշացած Երկրորդ Գալուստը (3:3-4): Այդ ժամանակ Մուտ վարդապետներն ու մյուս մեղավորները կղատվեն և Աստծո որդիները կփառավորվեն:

VI. ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Ա. Ինչպես որ 1 Պետրոսը քննարկում է հալածանքն ու չարչարանքը, այնպես էլ 2 Պետրոսը՝ սուտ վարդապետներին:

Բ. Մուտ ուսմունքների ճշգրիտ բնույթը հայտնի չէ, սակայն հնարավոր է, որ այն կապ ունի հակատոմիական գնոստիցիզմի հետ (տես՝ 2:1-22; 3:15-18): Այս գիրքը գործածում է տեխնիկական բառապաշար, որը օգտագործվում է թե՛ սկզբնական գնոստիցիզմի և թե՛ առեղծվածային կրոնների մեջ: Հնարավոր է, որ սա եղել է նրանց աստվածաբանության վրա հարձակվելու համար դիտավորյալ կիրառված ապոլոգետիկ տեխնիկա:

Գ. Այս գիրքը, ինչպես 2 Թեսաղոնիկեցիներինը, արծարծում է ուշացած, բայց հաստատ, Երկրորդ Գալուստը, որի ժամանակ Աստծո որդիները փառավորվելու են և անհավատները՝ դատվելու (տես՝ 3:3-4): Հետաքրքիր է, որ 1 Պետրոսը Հիսուսի վերադարձը նկարագրելու համար իրեն հատուկ ձևով կիրառում է *apocalypsis* տերմինը, մինչ 2 Պետրոսը կիրառում է *parousia* տերմինը: Հնարավոր է սա արտացոլում է այն փաստը, որ այս գրքերը գրվել են տարբեր դայիրների ձեռքով (այսինքն՝ Ջերոմ):

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ծառա, 1:1
2. աստվածային գորություն, 1:3
3. աստվածապաշտություն, 1:3
4. «հաղորդակից դառնաք աստվածային բնույթին», 1:4
5. «հավիտենական թագավորություն», 1:11
6. «շուտով մերկանալու եմ իմ այս երկրավոր վրանից», 1:14
7. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը», 1:16
8. «Նրա մեծափառության ականատեսը լինելով», 1:16
9. «Իմ Սիրելի Որդին», 1:17
10. «առավոտյան աստղը ծագի», 1:19
11. սուտ մարգարեներ, 2:1
12. սուտ վարդապետներ, 2:1
13. «մեղանչած հրեշտակներ», 2:4
14. դժոխք (այսինքն՝ Տարտարոսը), 2:4
15. «հեղինակությունն արհամարհում», 2:10
16. «մեծափառներին հայեցել», 2:10
17. «սուրբ պատվիրան», 2:21
18. «փութալով Տիրոջ օրվա գալուն», 3:12
19. «նոր երկինք և նոր երկիր», 3:13
20. «անբիծ ու անարատ», 3:14

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Նոյ, 2:5
2. Դովտ, 2:7
3. Բաղասամ, 2:15

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԶԱՐՏԵԶԻ ՎՐԱ – ՉԿԱՆ

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Արդյո՞ք 1:1-ը Հիսուսին Աստված է կոչում:
2. Ի՞նչ կապ ունի 1:10-ը Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի հետ:
3. Ե՞րբ Հիսուսը Իր մահվան մասին ասաց Պետրոսին (1:14):
4. Թ՛վարկե՞ք այն կերպերը, որ 1ին գլուխը ներկայացնում է Հիսուսի հետ Պետրոսի օրերը:
5. Ի՞նչ կարևոր ճշմարտություն է հաստատում 1:20-21-ը:
6. Թ՛վարկե՞ք կեղծ առաջնորդների հատկանիշները ըստ գլուխ 2-ի:
7. Ինչո՞ւ է «ուրանալով Տիրոջը, որ իրենց գնեց» խոսքը այդքան մտահոգիչ:
8. Ինչո՞ւ է 2:8 խոսքը զարմանալի (2:20):
9. Բացատրե՞ք 2:20 խոսքը ձեր իսկ բառերով:
10. Կոնկրետ ի՞նչ էին պնդում սուտ վարդապետները 3:4-ում:
11. Ինչո՞ւ է ասվում, որ երկիրը ջրից է հաստատվել (3:5):
12. Ո՞րն է 3:8-ի կիրառությունը:
13. Ի՞նչ կապ ունի 3:9ը խոսքը 1 Տիմ. 2:4-ի հետ:
14. Աստվածաշնչում 3:10-ի ճշմարտությունը ուրիշ որտե՞ղ է նշվում:
15. Ինչո՞ւ է այդքան կարևոր Պետրոսի կողմից Պողոսի մասին նշելը:
16. Ո՞րն է 2 Պետրոս թղթի կենտրոնական թեման:

1 ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԳՐՔԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա. 1 Հովհաննեսի գիրքը անձնական նամակ չէ և ոչ էլ մի եկեղեցու համար գրված նամակ, քանի որ այն «Շտաբից գրված գրասենյակային Սիրառատ Հիշողություն է» (համընդհանուր նամակ):

1. այն չունի որևէ ավանդական նախաբան (ուսից, ում)
2. այն չունի անձնական ողջույնի և հարժեշտի խոսք:

Բ. Անձնանունների հիշատակում չկա: Սա խիստ անսովոր է, բացառությամբ այն գրքերի, որոնք գրվել են շատ եկեղեցիների համար, ինչպես օրինակ Եփեսացիների և Հակոբոսի նամակները: ՆԿ-յան միակ նամակը, որը չի պարունակում իր հեղինակի անունը, դա Եբրայեցիների նամակն է: Սակայն ակնհայտ է, որ նամակը գրվել է հավատացյալներին, որոնք ներկա պահին սուտ վարդապետների հետ կապված խնդրին էին առերեսվում:

Գ. Այս նամակը հզոր աստվածաբանական տրակտատ է՝

1. Հիսուսի կարևորությունը՝
 - ա. կատարյալ Աստված և կատարյալ մարդ
 - բ. փրկությունը Հիսուս Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով է, և ոչ թե միստիկ երևույթների կամ գաղտնի գիտության շնորհիվ (սուտ վարդապետները)
2. Քրիստոնեական ապրելակերպի պահանջը (իրական Քրիստոնեության երեք ստուգարքները)
 - ա. եղբայրական սերը
 - բ. հնազանդությունը
 - գ. ընկած /մեղավոր/ աշխարհը մերժելը՝ չընդունելը
3. Հավիտենական փրկության վատահոլությունը Հիսուս Նազովրեցու վրա ունեցած հավատքի միջոցով («Իմացեք» բառը կիրառված 27 անգամ)
4. Ինչպես ճանաչել սուտ վարդապետներին

Դ. Հովհաննեսի գրքերը (հատկապես 1 Հովհաննեսը) ամենաքիչ բարդությամբ Կոյնե Հունարենն է ՆԿ-ի բոլոր հեղինակների մեջ, մինչդեռ նրա գրքերը, ինչպես ոչ այլ ոք, գցում են Հիսուս Քրիստոսի մեջ Աստծո հաստատուն և հավիտենական ճշմարտությունների խորությունները (այսինքն՝ Աստված Լույս է, 1:5; Աստված Սեր է, 4:8,16; Աստված հոգի է, Հովհ. 4:24):

Ե. Հնարավոր է, որ 1 Հովհաննեսը նախատեսված է եղել Հովհաննես Ավետարանի համար որպես բացման նամակ: Առաջին դարի գնոստիկ հերձվածողությունը հիմք է դնում երկու գրքերի համար էլ: Ավետարանն ունի ավետարանչական ուղղվածություն, մինչ 1 Հովհաննեսը գրվել է հավատացյալների համար:

Հայտնի մեկնաբան Ուեսքոթը պնդում է, որ Ավետարանը հաստատում է Հիսուսի աստվածությունը, մինչ 1 Հովհաննեսի թուղթը՝ Նրա մարդեղությունը: Այս երկու գրքերը միաբան են:

Չ. Հովհաննեսը գրում է սև ու սպիտակ (երկրայության) տերմիններով: Սա հատկանշական է Մեռյալ Ծովի Մագաղաթներին և գնոստիկ սուտ վարդապետներին: 1 Հովհաննեսի ձևավորված գրական դուալիզմը թե՛ բառացի է (լույսն ի հակադրություն խավարի) և թե՛ ոճային (դրական սահմանմանը հետևում է բացասականը): Սա տարբերվում է Հովհաննեսի Ավետարանից, որը պարունակում է ուղղահայաց դուալիզմ (վերինը ի հակադրություն վարի):

Է. 1 Հովհաննեսը ուրվագծելը շատ բարդ է Հովհաննեսի կողմից պարբերաբար միևնույն թեմաների գործածության պատճառով: Գիրքը նման է կրկնվող ձևաչափի մեջ իրար միահյուսված ճշմարտությունների գորբելենի (տես՝ Բիլլ Հենդրիկսի, *Ճշմարտության Գորբելեններ, Հովհաննեսի Նամակները /Bill Hendricks Tapestries of Truth, The Letters of John/*):

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. 1 Հովհաննեսի հեղինակության հարցը Հովհաննեսյան Ժողովածուի՝ Ավետարանի, 1 Հովհաննեսի, 2 Հովհաննեսի, 3 Հովհաննեսի և Հայտնության, հեղինակության շուրջ բանավեճերի մի մասն է կազմում:

Բ. Գոյություն ունեն երկու հիմնական դիրքորոշումներ՝

1. Ավանդական

ա. Ավանդույթը վաղ Եկեղեցու հայրերի շրջանակում միաձայն ընդունում էր, որ Հովհաննեսը՝ սիրելի Առաքյալը, 1 Հովհաննես թղթի հեղինակն է:

բ. Վաղ եկեղեցու վկայությունների ամփոփում՝

- (1) Հռոմի Կլեմենտը (մ.թ. 90թ) մի քանի անգամ անդրադարձ է կատարում 1 Հովհաննեսին
- (2) Չմյուռնիայի Պոլիկարպը, *Փիլիպպեցիների 7* (մ.թ. 110-140թ) մեջբերում է 1 Հովհաննեսից
- (3) Չասթին Մարթիրի *Երկխոսություն* 123:9 /Justin Martyr's *Dialogue* 123:9/ (մ.թ. 150-160թթ) մեջբերում է 1 Հովհաննեսից
- (4) 1 Հովհաննեսին անդրադարձել են հետևյալ գրություններում՝
 - (ա) Անտիոքցի Իգնատիոսը (նրա գրքերի տարեթվերն անհայտ են, սակայն մ.թ. 100-կանների սկզբին)
 - (բ) Երապոլիսի Պապիասը (ծնված մ.թ. 50-60 միջև և նահատակված մոտ մ.թ. 155թ)
- (5) Լիոնսի Իրենեոսը (մ.թ. 130-202թթ) վերագրում է 1 Հովհաննեսը Հովհաննես Առաքյալին: Տերտուլիանոսը, որը վաղ շրջանի ապոկրֆես էր /հավատքի պաշտպան/ և աղանդների դեմ գրել է 50 գիրք, հաճախ է մեջբերում 1 Հովհ. թղթից
- (6) 1 Հովհաննեսի հեղինակությունը Հովհաննես Առաքյալին վերագրող վաղ շրջանի այլ գրքերի հեղինակներից են բոլոր երեք Ալեքսանդրիացի Կլեմենտը, Որոզինեսը և Դիոնիսիոսը, և Մուրատորիան Պատառիկն (մ.թ. 180-200թթ) ու Եվսեբիոսը (երրորդ դար):
- (7) Ջերոմը (չորրորդ դարի երկրորդ կես) հաստատում է Հովհաննեսի հեղինակությունը, սակայն ընդունում, որ այն հերքվում էր իր օրերի որոշ մարդկանց կողմից:
- (8) Մոփսուեսթացի Թեոսդորը՝ Անտիոքի եպիսկոպոսը մ.թ. 392-428թթ, հերքում էր Հովհաննեսի հեղինակությունը:

գ. Եթե Հովհաննեսն է, ապա ի՞նչ գիտենք Հովհաննես Առաքյալի մասին .

- (1) Նա Չեբեդեոսի և Սողոմեի որդին էր
- (2) Նա իր եղբայր Հակոբոսի հետ միասին Գալիլիայի ծովի վրա ձկնորս էր (հավանաբար ունեին մի քանի նավակներ)
- (3) Ոմանք կարծում են, որ նրա մայրը Մարիամի՝ Հիսուսի մոր քույրն էր (տես՝ Հովհ. 19:25; Մարկ . 15:20)
- (4) Ըստ երևույթին նա հարուստ էր, քանի որ ուներ՝
 - (ա) վարձկան ծառաներ (տես՝ Մարկ . 1:20)
 - (բ) մի քանի նավակ
 - (գ) Երուսաղեմում տուն (տես՝ Մատթ . 20:20)
- (5) Հովհաննեսը Երուսաղեմում Քահանայապետի տուն մտնելու իրավունք ուներ, որը ցույց է տալիս, որ անվանի էր (տես՝ Հովհ. 18:15-16)
- (6) Դա հենց այն Հովհաննեսն էր, որի հոգածությանը հանձնեց Հիսուսը Իր մորը՝ Մարիամին

դ. Վաղ Եկեղեցու Ավանդույթը միաձայն վկայում է, որ Հովհաննեսը բոլոր մյուս Առաքյալներից ավելի երկար ապրեց, և Մարիամի մահից հետո տեղափոխվեց Փոքր Ասիա և հանգրվանեց Եփեսոսում՝ այդ տարածաշրջանի ամենամեծ քաղաքում: Այս քաղաքից էլ նա աքսորվեց Պատմոս կղզի (ծովափից ոչ շատ հեռու) և հետագայում ազատ արձակվեց և վերադարձավ Եփեսոս (Եվսեբիոսը մեջբերում է Պոլիկարպին, Պապիասին և Իրենեոսին):

2. Ժամանակակից գիտությունը

- ա. Արդի գիտնականների մեծամասնությունը ընդունում է Հովհաննեսի գրչին պատկանող բոլոր գրքերի միջև եղած նմանությունը, հատկապես արտահայտություններում, բառապաշարի մեջ և քերականական ձևերում: Սրա վառ ապացույցն է այն այս գրքերում առկա իրենց հատկանշական խիստ հակադրությունները. կյանքը ի հակադրություն մահվան, ճշմարտությունը՝ կեղծիքի: Այս նույն երկոտոմիան կարելի է տեսնել այդ օրերի այլ գրություններում՝ Մեռյալ Ծովի Մագաղաթներում և սկզբնական գնոստիկ գրքերում:
 - բ. Գոյություն ունեն ավանդապես Հովհաննեսին վերագրված այս հինգ գրքերի միջև փոխկապակցվածության վերաբերյալ մի քանի տեսություններ: Որոշ խմբեր պնդում են, որ հեղինակը մի հոգի է, երկու հոգի, երեք հոգի և այդպես շարունակ: Եվ կարծես թե ամենաընդունելի տարբերակն այն է, որ Հովհաննեսյան բոլոր գրքերը մի մարդու մտքի արգասիք են, եթե անգամ դրանք ըստ հավանականության գրված լինեն նրա մի քանի աշակերտների ձեռքով:
 - գ. Անձամբ ես հավատում եմ, որ բոլոր հինգ գրքերն էլ գրել է Հովհաննեսը՝ տարեց Առաքյալը, Եփեսոսում իր ծառայության վերջին տարիներին:
3. Հեղինակի հարցը հերմենևտիկայի խնդիրն է և ոչ թե ներշնչանքի: Վերջին հաշվով Սուրբ Գրքի հեղինակը Աստված է:

III. ՏԱՐԵԹԻՎԸ – անկասկած սա կապված է հեղինակի հետ

Ա. Եթե այս նամակները գրել է Հովհաննես Առաքյալը, և հատկապես Հովհաննեսը, մենք խոսում ենք առաջին դարի վերջերին մոտ ժամանակի մասին: Սա պետք է որ ժամանակ տրամադրեր գնոստիկ կեղծ աստվածաբանական, փիլիսոփայական համակարգերի զարգացման համար, ինչպես նաև կհամապատասխաներ Հովհաննեսի տերմինաբանությանը («փոքր երեխաներ»), որը կարծես թե ակնարկում է մի տարեց մարդու, որը խոսում է ավելի երիտասարդ հավատացյալների խմբի հետ: Ջերոմն ասում է, որ Հովհաննեսը Հիսուսի խաչելությունից հետո ապրել է 68 տարի: Սա կարծես թե համընկնում է այս ավանդույթի հետ:

Բ. Ա.Թ. Ռոբերթսոնը կարծում է, որ 1 Հովհաննեսը գրվել է մ.թ. 85-95թթ-ի միջև, մինչ Ավետարանը գրվել է մ.թ. 95թ-ին:

Գ.Ի. Հուվարդ Մարշալը իր *1 Հովհաննեսի Նոր Միջագային Մեկնաբանական Ծարքերը* /I. Howard Marshall *The New International Commentary Series on 1 John*/ գրքում պնդում է, որ Հովհաննեսյան գրքերի գրառման տարեթվերը գնահատելիս մերօրյա գիտությունը հանգում է ամենամոտը մ.թ. 60-100թթ-ին:

IV. ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

Ա. Ավանդույթն ասում է, որ այս գիրքը գրվել է Փոքր Ասիայի Հռոմեական Նահանգին (արևմրտյան Թուրքիան), որի գլխավոր մայրաքաղաքը համարվում էր Եփեսոսը:

Բ. Նամակը կարծես թե ուղարկվել էր Փոքր Ասիայում գտնվող մի շարք եկեղեցիների, որոնք առերսվում էին սուտ վարդապետների հետ ունեցած խնդրի հետ (ինչպես Կողոսացիների և Եփեսացիների նամակները), և հատկապես (1) դավանական գնոստիկները, որոնք ուրանում էին Հիսուսի մարդեղությունը, սակայն հաստատում Նրա աստվածությունը, և (2) հակատոմիական գնոստիկները, որոնք առանձնացնում էին աստվածաբանությունը բարոյագիտությունից:

Գ. Օգոստինոսն (մ.թ. չորրորդ դար) ասում է, որ այն գրվել է Պարթևներին (Բաբելոն): Նրան հաջորդում է Կասիոդորոսը (մ.թ. վեցերորդ դարի սկիզբ): Հնարավոր է սրա պատճառը «ընտրյալ տիկին» արտահայտության շփոթմունքն է, և «նա, որ Բաբելոնում է» արտահայտությունը, որոնք կիրառված են 1 Պետրոս 5:13 և 2 Հովհաննես 1-ում:

Դ. Մուրատորիան Պատառիկը՝ մ.թ. 180-200թթ. միջև գրված ՆԿ-յան կանոնավոր գրքերի ցանկը Հռոմում, պնդում է, որ այս նամակը գրվել է «իր ծառայակից աշակերտներին և եպիսկոպոսներին հորդորելուց հետո» (Փոքր Ասիայում):

V. ՀԵՐՉՎԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Նամական ինքնին իրենից ակնհայտ ներկայացնում է կեղծ ուսմունքի դեմ մի տեսակ փոխազդելու միջոց (տես՝ «Եթե ասենք . . . » 1:6բ և «նա, ով ասում է . . . » 2:9; 4:20 [ճառ]):

Բ. 1 Հովհաննեսի ներքին վկայության միջոցով կարող ենք սովորել հերձվածողության մի քանի հիմնական սկզբունքներ՝ օրինաչափություններ .

1. Հիսուս Քրիստոսի մարմնով աշխարհ գալու ուրացումը
2. Փրկության հարցում Հիսուս Քրիստոսի կենտրոնական դերի ուրացումը
3. պատշաճ Քրիստոնեական ապրելակերպի պակասը
4. գիտության կարևորումը (հաճախ ծածուկ)
5. բացառիկության հանդեպ ունեցած հակումը

Գ. Առաջին դարի միջավայրը

Առաջին դարի Հռոմեական աշխարհը գտնվում էր Արևելյան և Արևմտյան կրոնների միջև ընտրությունների առջև: Հունական և հռոմեական պանթեոնների աստվածները արդեն վատ համբավ ունեին: Առեղծվածային կրոնները մեծ հռչակ ունեին, քանի որ կարևորություն էին տալիս աստվածների հետ փոխհարաբերությանն ու գաղտնի գիտությանը: Հունական աշխարհիկ փիլիսոփայությունը մեծ տարածում ուներ և մրցակցության մեջ էր այլ աշխարհայացքների հետ: Այս այլընտրանքային կրոնի աշխարհ է մուտք գործում Քրիստոնեական հավատքի բացառիկությունը (Հիսուսը Աստծո մոտ տանող միակ ճանապարհն է, տես՝ Հովհաննես 14:6): Ինչպիսին էլ, որ լինեք այդ աղանդների հիմքը, դրանց նպատակն էր փորձել Քրիստոնեության թվացյալ սահմանափակությունը դարձնել ճշմարտանման և մտավոր ընդունելի հունա-հռոմեական ավելի լայն լսարանի համար:

Դ. Հավանական տարբերակներ, թե Հովհաննեսը գնոստիկների որ խմբին է դիմում .

1. Նախնական գնոստիցիզմ

ա. Առաջին դարի նախնական գնոստիցիզմի հիմնական ուսմունքները կարծես թե շեշտադրել են հոգու և մատերիայի միջև առկա օնտոլոգիական (հավիտենական) դուալիզմը: Հոգին (Բարձրյալ Աստվածը) համարվում էր բարի, մինչ մատերիան՝ չար: Այս երկոտոմիան արտացոլում է Պլատոնական կատարելությունը ի հակադրություն ֆիզիկականի, երկնայինը՝ երկրավորի, տեսանելին՝ աներևույթի: Նաև մեծ ուշադրություն էին հատկացնում փրկության համար անհրաժեշտություն համարվող գաղտնի գիտության կարևորությանը (ծածկագիրներ կամ գաղնագրեր, որոնք թույլ էին տալիս հոգուն անցնելու հրեշտակային ոլորտների /*aeons*/ միջով մինչև բարձրյալ աստծո մոտ):

բ. Գոյություն ունեն նախնական գնոստիցիզմի երկու տեսակներ, որոնք ըստ երևույթին կարող էին լինել 1 Հովհաննեսի հիմքում՝

- (1) Դոկետիկ գնոստիցիզմը, որը հերքում է, որ Հիսուսն իրականում մարդ է եղել, քանի որ մատերիան՝ նյութականը, չար է
- (2) Մերինտոնյան գնոստիցիզմը, որը Քրիստոսին նմանեցնում է *aeons* –ներից շատերից մեկի կամ բարձրյալ աստծո և չար մատերիայի միջև առկա հրեշտակային մակարդակներից մեկի հետ: Այս «Քրիստոսի Հոգին» եկավ և բնակություն հաստատեց Հիսուս մարդու մարմնի մեջ Նրա մկրտության ժամանակ և Նրանից հեռացավ խաչելությունից առաջ:
- (3) այս երկու խմբերից ոմանք սկսեցին ճգնափորությամբ զբաղվել (եթե մարմինը ցանկանում է, նշանակում է դա չարից է), մյուսներն էլ հակատոմիանիզմով (եթե մարմինը ցանկանում է, ապա տուր նրան): Դա չկար մինչև երկրորդ դարի կեսերը, երբ սկսեցին փաստագրել առկա վկայություններ: Գնոստիցիզմի վերաբերյալ ավելի շատ տեղեկատվության համար կարդացե՛ք՝
 - (ա) Հենց Ջոնասի *Գնոստիկ Կրոնը*, /Hans Jonas, *The Gnostic Religion*/ հրատարակված Բեքոն Պրեսսի կողմից
 - (բ) Էլեյն Պեյգլի *Գնոստիկ Ավետարանները*, /Elaine Pagels, *The Gnostic Gospels*/ հրատարակված Ռենդոմ Հաուսի կողմից
 - (գ) Էնդրյու Հելմբոլդի, *Նեգ Համմադի Գնոստիկ Տեքստերը և Աստվածաշունչը* /Andrew Helmbold *The Nag Hammadi Gnostic Texts and the Bible*/:

2. Իզնատիոսը այս հերձվածողության մեկ այլ հավանական աղբյուր է առաջարկում իր *Չնյուննիացիներին* iv-v, գրքում: Նրանք ուրանում էին Հիսուսի մարմնացումը և ապրում էին հակատոմիական կյանքով:
3. Մեկ այլ ավելի քիչ հավանական աղբյուր է այս հերձվածողության համար Անտիոքցի Մայանդերը, որը հայտնի է Իրենեոսի գրքերից՝ *Հերձվածողությունների Դեմ XXIII*: Նա Սամարացի Սիմոնի հետևորդն էր և գաղտնի գիտության կողմնակից:

Ե. Հերձվածողությունն այսօր

1. Այս հերձվածողության հոգին ներկա է մեզ հետ այսօր էլ, երբ մարդիկ փորձում են համադրել Քրիստոնեական ճշմարտությունը այլ գաղափարական համակարգերի հետ:
2. Այս հերձվածողության հոգին ներկա է մեզ հետ այսօր էլ, երբ մարդիկ շեշտադրում են «ճիշտ» վարդապետությունը, սակայն բացառում անձնական փոխհարաբերությունն ու հավատքի կյանքը:
3. Այս հերձվածողության հոգին ներկա է մեզ հետ այսօր էլ, երբ մարդիկ Քրիստոնեությունը վերածում են բացառիկ մտավոր էլիտայի:
4. Այս հերձվածողության հոգին ներկա է մեզ հետ այսօր էլ, երբ մարդիկ դառնում են ճգնավոր կամ հակատոմիստ:

VI. ՆՊԱՏԱԿԸ

Ա. Հավատացյալների համար այն ունի գործնական ուղղվածություն՝

1. նրանց ուրախություն պարզելու (տես՝ 1:4)
2. աստվածահաճո կյանք ապրելու համար նրանց քաջալերելու (տես՝ 1:7; 2:1)
3. նրանց պատվիրելու (և հիշեցնելու), որ սիրեն միմյանց (տես՝ 4:7-21) և ոչ թե աշխարհը (տես՝ 2:15-17):
4. նրանց տալու Քրիստոսի մեջ փրկության վստահություն (տես՝ 5:13):

Բ. Հավատացյալների համար այն ունի վարդապետական ուղղվածություն՝

1. չընդունելու Հիսուսի աստվածությունն ու մարդեղությունն իրարից առանձնացնելու սխալը
2. չընդունելու հոգևորությունն ու աստվածահաճո ապրելակերպն իրարից առանձնացնելու սխալը
3. չընդունելու այն սխալը, որ մարդը կարող է ուրիշներից մեկուսանալով փրկվել

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. սկզբից, 1:1
2. Կյանքի խոսք, 1:1
3. հավիտենական կյանք, 1:2
4. հաղորդություն (*koinōnia*), 1:3
5. Աստված լույս է, 1:5
6. քայլել, 1:6,7
7. Հիսուսի արյունը, 1:7
8. որդյակներ, 2:1
9. քավություն, 2:2; 4:10
10. իմացեք, 2:3,4,18,20,21, և այլն
11. բնակվում է, 2:6,17,24,25,27 և այլն
12. նոր պատվիրան, 2:7
13. Նրա անվան համար, 2:12
14. աշխարհը, 2:15
15. վերջին ժամանակը, 2:18
16. օծություն, 2:20, 27
17. խոստովանել, 2:23; 4:2,3,15 և այլն
18. փորձեք հոգիները, 4:1
19. դատաստանի օրը, 4:17
20. «Հոգին, ջուրը և արյունը», 5:8
21. մահվան առաջնորդող մեղք, 5:16
22. Աստծուց ծնված, 5:18

23. պահեր ձեր անձերը կուռքերից, 5:21

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Բարեխոս, 2:1
2. ստախոս, 2:4,22
3. հակաքրիստոս, 2:18; 4:3
4. հակաքրիստոսներ, 2:18
5. ձեզ մոլորեցնողները, 2:26
6. սատանա, 3:8,10
7. Կայեն, 3:12
8. Չարը, 5:18

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ – չկան

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է 1 Հովհաննես 1:1-4 կիրառում շատ բայեր, որոնք անդրադարձում են զգայարաններ (այսինքն՝ լսեցիք, տեսաք, նայեցիք, շոշափեցինք, տեսել ենք, լսել ենք):
2. Ինչո՞ւ պետք է ինչ-որ մեկն ասի, որ մեղք չունի (1:8):
3. Ինչո՞ւ է 1:9 խոսքը այդքան կարևոր: Ու՞մ մասին է այն խոսում:
4. Ի՞նչ կապ կա 1:10-ի և 3:6, 9-ի միջև:
5. Ի՞նչ կապ կա 2:2 և Հովհ. 3:16-ի միջև:
6. Ինչո՞ւ է 1 Հովհաննեսում այդքան հաճախ օգտագործվում «իմանալ» բառը: Սահմանե՞ք դրա երբայերեն նշանակությունը:
7. Ի՞նչ է նշանակում պարբերաբար կիրառվող այս արտահայտությունը՝ «Եթե ասենք. . .»:
8. Ովքե՞ր են այն սուտ վարդապետները, որոնց հակառակվում է Հովհաննեսը: Բացատրե՞ք նրանց դավանությունները, որոնք հակասում են աստվածաշնչյան Քրիստոնեությանը:
9. Ի՞նչ վարդապետության հետ կապ ունի 3:2 խոսքը:
10. Ինչո՞ւ է այդքան դժվար 3:6 և 9 խոսքերը մեկնաբանելը:
11. Ի՞նչ կապ ունի 4:8-ը կռավարար Քրիստոնյաների հետ:
12. Երրորդության գաղափարը երևում է 4:13-14-ում: Բացատրե՞ք այն ձեր իսկ բառերով:
13. Բացատրե՞ք 4:19-ը ձեր բառերով:
14. 1 Հովհաննեսում առկա են երեք ստուգաբաններ, որոնց միջոցով կարելի է վստահություն ունենալ մարդու Քրիստոնյա լինելու համարցում: Թ-վարկե՞ք այդ երեք ստուգաբանները:
15. Ի՞նչո՞ւ է 5:13 համարը այդքան կարևոր:
16. Արդյո՞ք 5:14-15 խոսքերը խոստանում են հավատացյալներին, որ իրենց աղոթքները միշտ դրական պատասխան կունենան:
17. Ո՞րն է այն մեղքը, որ մահվան է առաջնորդում (5:16):
18. Արդյո՞ք 5:18 համարը հավատացյալներին խոստանում է, որ նրանք երեբեք չեն փորձվի Սատանայի կողմից: Ինչո՞ւ և ինչո՞ւ ոչ:
19. Ի՞նչ է նշանակում «ամբողջ աշխարհը չարի իշխանության մեջ է» արտահայտությունը:

2 և 3 ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Այս փոքրիկ նամակը միայն վերնագր-ված է 3 Հովհաննես, քանի որ այն մի փոքր ավելի կարճ է, քան 2 Հովհաննեսը: Իրականում ես կարծում եմ, որ թե՛ 2 Հովհաննեսի և թե՛ 3 Հովհաննեսի թղթերը ձևավորում են հավասարակշռված մի նամակ, որն ուղղված է Փոքր Ասիայի Հռոմեական Նահանգում ինչ-որ տեղ գտնվող տեղական մի եկեղեցու, առաջին դարի վերջերում:

Բ. 2 Հովհաննեսը շոշափում է հերետիկոս, շրջիկ քարոզիչների խնդիրը, մինչ 3 Հովհաննեսի նամակը հորդորում է օգնել Քրիստոնյա շրջիկ քարոզիչներին:

Գ. 3 Հովհաննեսի նամակում կան երեք հատուկ նշված մարդիկ՝

1. Գայոսը (նամակը ստացող եկեղեցում գտնվող մի աստվածավախ մարդ)
 - ա. Աստվածաշնչի այլ հատվածներում գտնվող երեք տարբեր Գայոսներ կան՝ Մակեդոնացի Գայոսը, Գործք 19:29; Դերբեի Գայոսը, Գործք 20:4; և Կորնթոսի Գայոսը, Հռոմ . 16:23; 1 Կորնթ. 1:14:
 - բ. «Առաքելական Կանոններ» կոչվող գիրքը 3 Հովհաննեսի մեջ գտնվող Գայոսին թվարկում է որպես Պերգամոնի Եպիսկոպոս՝ նշանակված Հովհաննեսի կողմից:
2. Դիոտրեփեսը (նամակը ստացող եկեղեցում գտնվող մի անաստված և անախորժություններ ստեղծող մարդ)
 - ա. ՆԿ-ում սա միակ տեղն է, որտեղ նշվում է այս մարդու մասին: Նրա անունը բավականին հազվադեպ է և նշանակում է «Ձևսից սնվող»: Ի՛նչ հեզնական է, երբ մի մարդ, որը անվանվել է Ձևսի անունով և հակառակ է ճամփորդներին, այն դեպքում, երբ Ձևսը համարվում էր «ճամփորդների պահապանը»:
 - բ. Նրա վարքը բացահայտված է 9-10 համարներում:
3. Դեմետրիոսը (այս տեղական եկեղեցուն Հովհաննեսի նամակը հասցնողը)
 - ա. Ըստ երևույթին նա ճանապարհորդ միսիոներներից մեկն էր և Եփեսոսից Հովհաննես Առաքյալի այս նամակը եկեղեցուն հասցնողը:
 - բ. «Առաքելական Կանոններ» կոչվող ավանդույթը Դեմետրիոսին նշում է որպես Ֆիլադելֆիայի Եպիսկոպոս՝ նշանակված Հովհաննես Առաքյալի կողմից:

Դ. Վաղ եկեղեցին խնդիր ուներ գնահատելու և հովանավորելու շրջիկ կամ ճամփորդող քարոզիչներին, ուսուցիչներին և ավետարանիչներին: Մի անկանոն Քրիստոնեական գիրք, որը մեզ է հասել երկրորդ դարի սկզբից և կոչվում է *Դիդաքա* կամ *Տասներկու Առաքյալների Ուսմունքը*, ներկայացնում է հետևյալ ուղեցույցները .

ԳԼՈՒԽ XI – ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
«Հետևաբար, ով որ գա ձեզ մոտ և սովորեցնի ձեզ բոլոր այն բաները, որ նախկինում ձեզ ասվել է, ընդունեք նրան: Բայց, եթե վարդապետողն ինքը դառնա և սովորեցնի ձեզ մեկ այլ վարդապետություն, որը խափանում է այս ասվածներ, ապա մի՛ լսեք նրան . սակայն *եթե նա սովորեցնի* այնպես, որ ավելացնի մեր Տիրոջ մասին գիտությունն ու արդարությունը, ապա ընդունեք նրան ինչպես Տիրոջը: Սակայն առաքյալների և մարգարեների համար ըստ Ավետարանի օրենքի այսպես վարվեք . Թող որ յուրաքանչյուր առաքյալ, որ գալիս է ձեզ մոտ, ընդունվի Տիրոջ պես: Սակայն նա չպետք է մեկ օրից ավել մնա, իսկ եթե կարիք կա մնալու, ապա մնա հաջորդ օրն էլ, բայց եթե մնա երեք օր, ապա սուտ մարգարե է: Եվ երբ առաքյալը հեռանում է, թող որ ոչինչ բացի հացից իր հետ չվերցնի ճանապարհի համար, սակայն եթե գումար խնդրի, ապա նա սուտ մարգարե է» (Էջ՝ 380):

ԳԼՈՒԽ XII – ԶՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼԸ

«Բայց ով որ Հոգով ասի, «Ինձ փող կամ այլ բան տվեք», մի՛ լսեք նրան, իսկ եթե նա ձեզ ասի, որ ուրիշ մեկի համար է ուզում, որը կարիքի մեջ է, թող ոչ ոք նրան չդատի:

Բայց ով որ Տիրոջ անունով գա, ընդունեք նրան, իսկ հետո ստուգեք և հասկացեք, թե ով է նա . քանի որ դուք պետք է ճանաչեք աջն ու ձախը /լավն ու վատը/: Եթե այդ մարդը եկել է հեռվից, հոգ տարեք նրա համար ձեր կարողության չափով, բայց նա չպետք է մնա

ձեր մոտ երկու կամ երեք օրից ավելին, եթե անհրաժեշտություն լինի: Սակայն եթե նա ցանկանում է ձեր հետ բնակվել, լինելով արհեստավոր, թույլ տվեք, որ աշխատի և ուտի, բայց եթե նա գործ չունի, ձեր հասկացողության չափով զգույշ եղե՛ք, որ որպես Քրիստոնյա ձեր հետ ծուլության մեջ չբնակի: Սակայն եթե նա այդպես չի ցանկանում անել, ապա նա Քրիստոսին ծախող է: Չգույշ եղեք, որ հեռու մնաք այդպիսիներից» (Էջ՝ 381):

II. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «սկզբից», 1:1
2. «Աստված լույս է», 1:5
3. խոստովանել, 1:9
4. «որդյակներ», 2:1
5. բարեխոս, 2:1
6. քավություն, 2:2
7. իմացեք, 2:3
8. «Նրա մեջ է բնակվում», 2:6
9. «մի՛ սիրեք աշխարհը», 2:15
10. «վերջին ժամանակը», 2:18
11. օծությունը, 2:27
12. «Հոգին, ջուրը և արյունը», 5:8
13. «մահվան առաջնորդող մեղք», 5:16
14. «ձեզ հեռու պահեք կուռքերից», 5:21

III. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. Կյանքի Խոսքը, 1:2
2. հակաքրիստոսը, 2:18 (2 Հովհ . հ . 7)
3. հակաքրիստոսներ, 2:18
4. ընտրյալ տիկինը, 2 Հովհ . հ . 1
5. նրա որդիները, 2 Հովհ . հ . 1
6. «քո ընտրյալ քրոջ որդիները», 2 Հովհ . հ . 13
7. Գայոս, 3 Հովհ . հ . 1
8. Դիոտրեփես, հ . 9
9. Դեմետրիոս, հ . 12

IV. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ – ՉԿԱՆ

V. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ 1:1-5 ունեն այսքան շատ բայեր, որոնք առնչվում են հինգ զգայարանների հետ:
2. Ինչո՞ւ պետք է ինչ-որ մեկն ասի, որ մեղք չունի (1:8):
3. Ի՞նչ կապ ունի 2:2-ը Հովհ . 3:16-ի հետ:
4. Բացատրե՛ք 2:7-8 ձեր բառերով:
5. Արդյո՞ք 2:12-14 վերաբերում է եկեղեցում գտնվող տարբեր տարիքի խմբերի, թե բոլոր Քրիստոնյաներին:
6. Բացատրե՛ք 2:22-23 գնոստիկ աստվածաբանության լույսի ներքո:
7. Ո՞րն է այս պարբերության կենտրոնական ճշմարտությունը, 2:28-3:3:
8. Ինչո՞ւ են 3:6 և 9 համարները այդքան դժվար մեկնաբանվող:
9. Ինչպիսի՞ կապ կա 3:5-ի և Լեռան Քարոզի միջև:
10. Բացատրե՛ք 3:20 ձեր բառերով:
11. Ինչպե՞ս կարող է մարդը փորձել հոգիները (4:1-6):
12. Ի՞նչ կապ կա 4:2-ի և գնոստիկ աստվածաբանության միջև (2 Հովհ .)
13. Ո՞րն է 4:7-24-ի գլխավոր ճշմարտությունը:
14. Ինչպե՞ս է 5:13 խոսքը հանդիսանում որպես ամբողջ գրքի թեմաներից մեկը:
15. Մի՞թե՞ Աստված պատասխանում է բոլոր աղոթքներին (5:14-15):
16. Արդյո՞ք 2 Հովհ . 10 խոսքը վերաբերում է ինչ-որ մեկի ընտանիքին, թե եկեղեցուն: Ինչո՞ւ:
17. Արդյո՞ք 3 Հովհ . հ . 2-ը խոստանում է առողջություն և բարգավաճում:

ՀՈՒՂԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Հուդայի գիրքը պարբերաբար կրկրնվող սխալների, ապստամբության և դատաստանի վերաբերյալ ասհասարսուռ մի գիրք է: Հավատացյալները միշտ պետք է արթուն լինեն: Նրանց պաշտպանությունն է՝

1. Հոր կոչումը, սերը և պահապան գորությունը,
2. Սուրբ Գրքի գիտությունը, աստվածահանո կյանքը և գթառատությունը վիրավորված հավատակիցների հանդեպ:

Բ. Մինչդեռ, նույնիսկ զգուշացումների մեջ, Հուդայի եզրափակումը Աստծո պահապան գորության հասատատության ամենաուժեղ աղոթքներից է:

Գ. Հուդայի և 2 Պետրոսի միջև կապն անհայտ է.

1. հայտնի չէ, թե որն է առաջինը գրվել
2. ինչու են դրանք այդքան նման, այնուհանդերձ այդքան տարբեր
3. ինչպես է մեկը բնութագրում գալիք հերձվածողության մասին, իսկ մյուսը խոսում ներկայում առկա հերձվածողության մասին
4. հայտնի չէ, թե արդյոք կար մի վաղ եկեղեցու ինչ-որ մի փաստաթուղթ, որից երկու հեղինակներն էլ օգտվել են
5. արդյոք ապստամբության դեպքերից որևէ մեկում հավատացյալներ էին ներգրավված

Դ. Այս գիրքը լուսաբանում է աստվածաբանական հավասարակշռություն՝

1. Աստծո պահապան գորության (հհ. 1,24)
2. հավատացյալներն իրենց պահպանելու միջև (հ. 21):

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հուդան (Եբրայերենում՝ *Judah*, կամ հունարենում՝ *Judas*) իրեն երկու անվանում է բնորոշում՝

1. «Հիսուս Քրիստոսի ծառան» - Սա հենց այն նույն անվանումը չէ, ինչ կիրառում է Պողոսը, թեև անգլերենում /և հայերենում/ դրանք գրեթե նույն կերպ են հնչում: Պողոսը միշտ առջևից դնում է «ստրուկ» բառը, որին հետևում է ՄԵՌԱԿԱՆ հոլովի նկարագրող արտահայտություն: Նույնը նաև 2 Պետրոսում է:

Այնուհանդերձ, Հուդայում բառերի հերթականությունը նույն է ինչ Հակոբոսում (ՄԵՌԱԿԱՆ հոլովի նկարագրող արտահայտությունը սկզբում):

2. «Հակոբոսի եղբայր» - ՆԿ-ում շատ անձիք կան Հակոբոս (Հակոբ) անունով, սակայն այս անունն ինքնին՝ առանց որևէ նկարագրության, հիշեցնում է Հակոբոս 1:1-ը: Հակոբոսը՝ Հիսուսի կես-եղբայրը, Պողոսի միսիոներական ճամփորդությունների ժամանակ Երուսաղեմի եկեղեցու առաջնորդն էր (տես՝ Գործք 15): Կասկածում են, որ երկու կես-եղբայրներն էլ որոշել էին համեստությունից ելնելով չհայտարարել, որ իրենք կենսաբանորեն կապ ունեն Հիսուսի հետ:

Բ. Հենց միայն բացման խոսքը արտացոլում է մի մարդու, որը բոլորին քաջ հայտնի էր և ակտիվ (տես՝ 1 Կորնթ. 9:3) վաղ եկեղեցում, սակայն որի մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Եթե հետագայում ինչ-որ մեկը ցանկանար որևէ հայտնի մարդու անունից նամակ գրեր (կեղծանվամբ), ապա Հուդան դրա համար լավ թեկնածու չէր:

Գ. Հնագույն ավանդույթը, որ Հուդան Եբրայեցի Քրիստոնյա էր և Հիսուսի կես-եղբայրը (տես՝ Մատթ. 13:55; Մարկ. 6:3) հանգչում է մի քանի ենթադրությունների վրա՝

1. Հակոբոսի հետ ընտանեկան կապը (տես՝ Հակ. 1:1)
2. ՀԿ-յան ընդարձակ գիտելիքների կիրառությունը

3. Երբայական գրականությանը բնորոշ երեքի կիրառությունը՝
 - ա. ՀԿ-յան երեք ուխտադրության դեպքերը
 - բ. ՀԿ-յան երեք հերոսներ
 - գ. բացման ողջույնի խոսքը՝
 - (1) երեք բայեր՝ «կանչված», «սիրված», «պահպանված»
 - (2) երեք աղոթքի խնդրանք՝ «ողորմություն», «խաղաղություն», «սեր»:

Գ. Հուդայի հունարեն ձևն ու ոճը անթերի գրված Կոյնե հունարեն է: Հուդան պետք է որ ունենար մայրաքաղաքային ազդեցություն (տես՝ 1 Կորնթ. 9:5):

Ինչ վերաբերում է նրա անձին, նա շատ նման է Հակոբոսին. նա ցուցաբերում է ոչ անիմաստ, ուղիղ մոտեցում այս մեղքի և հակառակության աշխարհում աստվածահաճո կյանքով ապրելու լիազորությանը:

III. ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Հստակ տարեթիվ չկա, այլ միայն ենթադրություններ:

Բ. Եկեք թվարկենք մի քանի պարամետրեր՝

1. Հուդայի կյանքի ընթացքում, եթե նա Հակոբոսի կրտսեր եղբայրն էր և Հիսուսի կես-եղբայրը
2. 2 Պետրոսի հետ Հուդայի գրքի գրական կապը: Հուդայում առկա քսանհինգ համարներից տասնվեցն (հհ. 3-18) ունեն որոշակի կապ 2 Պետրոս 2:1-18-ի հետ: Եթե Պետրոսը 2 Պետրոս նամակի հեղինակն է, ապա տարեթիվը մոտ է իր կյանքի տարիներին (մահացել է մ.թ. 64-ին): Ամեն դեպքում անհայտ է, թե ով ում է մեջբերում՝
 - ա. 2 Պետրոսը մեջբերում է Հուդային
 - բ. Հուդան մեջբերում է 2 Պետրոսին
 - գ. երկուսն էլ օգտագործում են սկզբնական պատարագային փաստաթղթեր կամ եկեղեցու ավանդույթ

Գ. Գրքի բովանդակությունները մատնանշում են առաջին դարի կեսերին վերաբերող տարեթիվ: Արդեն բավականաչափ ժամանակ էր անցել, որպեսզի աղանդներ ձևավորվեին: Առաքյալների ֆիզիկական ներկայության ժամանակը նոր էր անցել (հհ. 18-19): Այնուհանդերձ միասնական վարդապետություն դեռևս չէր ձևավորվել: Հուդան նշում է սուտ վարդապետների բարոյական խնդիրները, սակայն չի քննարկում վարդապետական սխալները: Նա կիրառում ՀԿ-յան օրինակներ և ոչ թե Հիսուսի ուսմունքները (մեջբերումներ կամ պատմություններ):

Դ. Եվսեբիոսն իր *Պատմական Եկեղեցի* III:19:1-20:6-ում նշում է մի ավանդույթ.

1. որ Հուդայի թոռները տարվել են Հռոմ տեսնելու Դոմիթիանին՝ դավաճանության մեղադրանքներով
 2. որ նրանք հրեա իշխանական ժառանգորդներ էին
 3. որ նրանք Հիսուս Նագովրեցու բարեկամներն էին
- Դոմիթիանը իշխեց մ.թ. 81-96թթ.:

Ե. Հավանական է 60-ականներից մինչև 80-ական թվականները:

IV. ՍՏԱՑՈՂՆԵՐԸ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Ա. Վաղ եկեղեցին աստվածաբանորեն միաձուլված չէր. նույնիսկ Առաքյալները շեշտադրում էին ավետարանի տարբեր մասերը: Երբ Առաքյալները սկսեցին մահանալ (կամ առնվազն շատ քչերն էին մնացել կամ էլ շատ հեռվում էին) և Երկրորդ Գալուստը ուշանում էր, վաղ

եկեղեցին կանգնեց ավետարանի ուսմունքների ընդունելի պարամետրերը «ստանդարտացնելու» խնդրի առջև: ՀԿ-ը, Հիսուսի խոսքերն ու պատմությունները, և Առաքյալների քարոզները դարձան չափանիշներ:

Բ. Հուդան գրվել է մաքուր իշխանության մակընթացության և պառակտման օրերում: Հավատացյալները (հայտնի չէ արդյոք տեղական եկեղեցու, թե՛ աշխարհագրական շրջանի) դիմակայում էին սիսականի գանգվածային հարձակումներ կասկածելի աստվածաբանության, փիլիսոփայության միջոցով: Ինչ է հայտնի հերետիկոսների վերաբերյալ՝

1. հերետիկոսները եկեղեցու հավաքույթների մի մասն էին կազմում («սիրո խնջույքներ» տես՝ հ. 12)
2. հերետիկոսները անբարո, շահագործող ուսուցիչներ էին, որոնք Աստծո ժողովրդի մեջ բաժանումներ էին բերում (տես՝ հ. 19)
3. հերետիկոսներն իրենց աստվածաբանության մեջ կարծես թե կիրառում էին կամ քննարկում «հրեշտակների»
4. հերետիկոսները կարծես թե ուներին հատուկ «գիտություն» (*gnosis*)

Եթե ծանոթ եք առաջին և երկրորդ դարերի հունա-հռոմեական աշխարհին, ապա այս հատկանիշները վերաբերում են «Գնոստիցիզմ» կոչվող փիլիսոփայական, աստվածաբանական շարժմանը: Անշուշտ լիովին ճիշտ է այն փաստը, որ հատուկ երկրորդ դարին հատկանշական հերետիկոսների ծագումնաբանությունը ընդհանուր տարրեր ունի ավելի շատ մերձավոր արևելքի մտածելակերպի հետ: Գնոստիցիզմին այդքան բնորոշ դուալիզմի տարրերը առկա են Մեռյալ Ծովի Գալարներում: ՆԿ-յան շատ գրքեր (Եփես.- Կող, Հովվական Թղթերը, 1 և 2 Հովհաննես) գրվել են պայքարելու նմանատիպ սուտ ուսմունքների / ուսուցիչների դեմ:

V. ՆՊԱՏԱԿԸ

Ա. Հեղինակը ցանկանում էր գրել իրենց ընդհանուր փրկության վերաբերյալ (տես՝ հ. 3):

Բ. Կեղծ վարդապետությունների և վարդապետների ներխուժումը եկեղեցու ներքին խոհանոց (տես՝ հ. 12) առիթ էր հանդիսացել, որ հեղինակը դիմի «եկեղեցուն մեկ անգամ և բոլորի համար տրված հավատքի» ցավոտ խնդրին (տես՝ հհ. 3,20): Նրա նպատակը ուղղափառությունն էր, սակայն նա հարցին մոտենում է աստվածահաճո ապրելակերպի միջոցով (*orthopraxy*), ոչ թե վարդապետության (որը շատ նման է Հակոբոս 2:14-24): Մարդկանց ապրելակերպը թափանցիկ պատուհան էր բացում նրանց աստվածաբանությունը տեսնելու համար:

Գ. Հեղինակը կամենում է հավատացյալներին քաջալերել, որպեսզի՝

1. աճեն հոգևորապես (տես՝ հ. 20)
2. փրկության վստահություն ունենան (տես՝ հհ. 21,24-25)
3. օգնեն հավատքից ընկածներին (տես՝ հհ. 22-23)

VI. ԿԱՆՈՆԱՑՈՒՄԸ

Ա. Այս գիրքը սկզբում ընդունվեց (տես՝ մ. թ. մոտ 94թ-ին Հռոմի Կլեմենտի մեջբերումը), ապա հետագայում վիճելի համարվեց և ի վերջո լիարժեքորեն ընդունվեց (Նիկիայի՝ մ. թ. 325թ. և Կարթագենի՝ մ. թ. 397թ ժողովների ժամանակ):

Բ. Կանոնավոր կոչվելու կարգավիճակը ստանալու հիմնական խնդիրն այն էր, որ գրքում առկա են անկանոն գրքերից (1 Ենովք, և Մովսեսի Ենթադրությունը) մեջբերումներ: Այս գրքերը, հատկապես 1 Ենովքը, լայնորեն շրջանառվում էր առաջին դարի հավատացյալների մեջ և աստվածաբանորեն ազդեցիկ գիրք էր:

1. Ինչո՞ւմն է խնդիր: Կարելի՞ է եզրակացնել, որ անկանոն գրքերը հեղինակավոր են:

- ա. ՀԿ-ը մեջբերում է ներշնչանք չունեցող գրքերից (տես՝ Թվոց 21:14-15,26-30 [Բա-
ղասամի մարգարեությունները Թվոց 22-23-ում]; Հեսու 10:13; 2 Թագ. 1:18բ; 3 Թագ
. 11:41; 14:19,29; 15:7,23,31)
 - բ. Հիսուսը օգտագործեց անկանոն աղբյուրներ, որպես լուսաբանող նյութ (տես՝ Մատթ
. 23:35)
 - գ. Ստեփանոսը օգտագործեց անկանոն աղբյուրներ (տես՝ Գործք 7:4, 14-16)
 - դ. Պողոսը հաճախ էր օգտագործում անկանոն աղբյուրներ՝
 - (1) Ռաբբիական Միդրաշը Զրիստոսի վերաբերյալ որպես ժայռ, որը անապատում
դեգերելու տարիներին հետևում էր Իսրայելի որդիներին (տես՝ 1 Կորնթ. 10:4)
 - (2) Փարավոնի մոզերի անունները Ելից 7:11,22; 8:7-ից (տես՝ 2 Տիմ. 3:8) վերցվել
էին որոշակի միջկտակարանյան հրեական գրքերից:
 - (3) Հույն գրողները՝
 - ա) Արատուս բանաստեղծը (Գործք 17:28)
 - բ) Մանայանդեր բանաստեղծը (1 Կորնթ. 15:33)
 - գ) Էպիմենինդես բանաստեղծը (Տիտոս 1:12)
 - ե. Հակոբոսը գործածեց ռաբբիական ավանդույթից իր Հակ. 5:17-ում
 - զ. Հովհաննեսը գործածեց Հայտն. 12:3-ում մերձավոր արևելքի տիեզերագիտության
առասպելաբանությունից:
2. Ինչո՞ւ էր Հուդան գործածում այս անկանոն աղբյուրները .
- ա. հավանաբար դրանք ազատ կերպով կիրառվում էին սուտ վարդապետների կողմից
 - բ. հավանաբար դրանք հարգված էին և նամակը ստացողները դրանք ընթերցում էին

Գ. Հուդայի նամակի կանոնական լինելուն աջակցում էին՝

1. հետևյալ մարդիկ, որոնք մեջբերել կամ անդրադարձել են գրքին՝
 - ա. Հռոմի Կլեմենտը (մ. թ. 94-97)
 - բ. Պոլիկարպը (մ. թ. 110-150)
 - գ. Իրենեոսը (մ. թ. 130-202)
 - դ. Տերտուղիանոսը (մ. թ. 150-220)
 - ե. Աթենագորասը (մ. թ. 177)
 - զ. Որոզինեսը (մ. թ. 185-254)
 (վերցված են Միջագային Զննադատական Մեկնաբանություն գրքից, էջ՝ 305-308)
2. նշվել են՝
 - ա. Ալեքսանդրիացի Կլեմենտի կողմից (մ. թ. 150-215)
 - բ. Երուսաղեմի Կիրիլի կողմից (մ. թ. 315-386)
 - գ. Ջերոմի կողմից (մ. թ. 340-420)
 - դ. Օգոստինոսի (մ. թ. 400)
3. գտնվում են հետևյալ կանոնավոր ցանկերում՝
 - ա. Մուրատորիան Պատառիկ (մ. թ. 200)
 - բ. Բարոկոցիո (մ. թ. 206)
 - գ. Աթանասիոս (մ. թ. 367)
4. Հաստատվել են հետևյալ Խորհուրդների կողմից՝
 - ա. Նիկիայի (մ. թ. 325)
 - բ. Հիպպոյի (մ. թ. 393)
 - գ. Կարթագենի (մ. թ. 397 և 419)
5. առկա է հետևյալ թարգմանություններում՝
 - ա. Հին Լատիներեն (մ. թ. 150-170)
 - բ. Սիրիակ Վերանայման՝ Փեշիթայի (մ. թ. 5րդ դար)

Դ. Ավելի ուշ եկեղեցին վստահ չէր Հուդայի նամակի կանոնական (ներշնչված) կարգավիճակի
հարցում: Եվսեբիոսը այն դատում է վիճելի գրքերի շարքին (*Եկեղեցու Պատմություն III:25*):

Ոսկերերանն ու Ջերոմը նշում են Հուդայի անկանոն աղբյուրների մեջբերումները, և սա պատճառ է հանդիսանում, որ ոմանք սկսեն այն կանոնավոր համարել: Այն մերժվում էր վաղ շրջանի Սիրիակ եկեղեցու կողմից, ինչպես և 2 Պետրոս, 2 և 3 Հովհաննեսի գրքերը: Հավանաբար պատճառն այն էր, որ Կայսրության այս շրջանը մեծ ազդեցություն էր կրում Գնոստիկների կողմից հրեական հրեշտակաբանության կիրառությունից: Հետևաբար, Հուդան և 1 Պետրոսը յուր էին ավելացնում սուտ վարդապետների վեճերի կրակին:

Ե. Մի փոքր խոսենք 1 Ենովքի մասին: Բնագիրը երբայերեն լեզվով է (սակայն այժմ կորել է, բացառությամբ Մեռյալ Ծովի Գալարներում առկա արամերեն պատառիկներից), թարգմանված հունարենի (պահպանվել են միայն պատառիկները) և մոտ մ.թ.600-ականներին կրկնօրինակվել է Եթովպերեն լեզվով (պահպանվել է մի օրինակ): Գիրքը գրվել է միջկտակարանյան շրջանում, սակայն բազմաթիվ անգամներ խմբագրվել է, ինչպես որ երևում է Եթովպերեն կրկնօրինակից: Վաղ եկեղեցու շրջանում այն շատ ազդեցիկ էր. Տերտուղիանոսն այն մեջբերում է որպես Սուրբ Գիրք: Այն նաև հիշատակվում է Բառնաբասի Թղթում (որպես Սուրբ Գիրք) և Իրենեոսի, Ալեքսանդրացի Կլեմենտի կողմից: Չորրորդ դարի սկզբներին վաղ եկեղեցին կորցնում է դրա հանդեպ ունեցած հետաքրքրությունը:

VII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «մեր ընդհանուր փրկությունը», հ. 3
2. «հավատի համար, որ մեկընդմիջտ ավանդվեց սրբերին», հ. 3
3. սահմանված լինել, հ. 4
4. «իրենց բնակությունից», հ. 6
5. «մշտնջենական շղթաներով խավարի մեջ», հ. 6
6. «օտար մարմին», հ. 7
7. «հավիտենական կրակ», հ. 7
8. սիրո խնջույքներ, հ. 12
9. սրբեր, հ. 14
10. «Սուրբ Հոգով աղոթելով», հ. 20
11. «միակ Աստվածը», հ. 25

VIII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. «մի քանի մարդիկ գաղտագողի սողոսկեցին», հ. 4
2. «հրեշտակները, որ չպահեցին իրենց նախկին դիրքը», հ. 6
3. Միքայել, հ. 9
4. Բաղասամ, հ. 11
5. Կորիս, հ. 11
6. Ենովք, հ. 14
7. «Նրան, որ կարող է», հ. 24

IX. ՏԵՂԱՆՔՆԵՐ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Եգիպտոս, հ. 5
2. Սողոմ և Գոմոր, հ. 7

X. ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ տեսակի սուտ վարդապետների մասին է խոսում Հուդան (տես՝ 8-13):
2. Ինչո՞ւ է Հուդան մեջբերում անկանոն գրքերից (հհ. 9,14-15):
3. Ինչպե՞ս կարող է մարդն իրեն պահի Աստծո սիրո մեջ (հ. 21):
4. Ո՞րն է Հուդայի կենտրոնական թեման:
5. Ի՞նչ կապ ունի Հուդան 2 Պետրոս գրքի հետ:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Բացման խոսք.

1. Հավատացյալ համայնքը համաձայն չէ մարգարեության մեկնաբանության կերպերի հետ: Դարեր շարունակ որպես ուղղափառության գործառույթ բազմաթիվ ճշմարտություններ են հաստատվել, սակայն ոչ այս մեկը:
2. Գոյություն ունեն ՀԿ-յան մարգարեության համար գեղեցիկ գատորոշված փուլեր.

ա. նախամիապետական.

(1) մարգարեներ կոչվող անհատներ.

(ա) Աբրահամ – Ծննդ. 20:7

(բ) Մովսես – Թվոց 12:6-8; 2 Օր. 18:15; 34:10

(գ) Ահարոն – Ելից 7:1 (Մովսեսի խոսնակը)

(դ) Մարիամ – Ելից 15:20

(ե) Մովհադ և Էլիադ – Թվոց 11:24-30

(զ) Դեբորա – Դատ. 4:4

(է) անանուն – Դատ. 6:7-10

(ը) Սամուել – 1 Թագ. 3:20

(2) հատվածներ մարգարեների խմբերի մասին – 2 Օր. 13:1-5; 18:20-22

(3) մարգարեական խումբ կամ միաբանություն – 1 Թագ. 10:5-13; 19:20; 3 Թագ. 20:35,41; 22:6,10-13; 4 Թագ. 2:3,7; 4:1,38; 5:22; 6:1, և այլն:

(4) Մեսիան՝ մարգարե կոչված – 2 Օր. 18:15-18

բ. գրի չառնող միապետականներ (նրանք դիմում էին թագավորին).

(1) Գադ – 1 Թագ. 22:5; 2 Թագ. 24:11; 1 Մնաց. 29:29

(2) Նաթան – 2 Թագ. 7:2; 12:25; 3 Թագ. 1:22

(3) Աքիա – 3 Թագ. 11:29

(4) Հեու – 3 Թագ. 16:1,7,12

(5) անանուն – 3 Թագ. 18:4,13; 20:13,22

(6) Եղիա – 3 Թագ. 18 – 4 Թագ. 2

(7) Միքիա – 3 Թագ. 22

(8) Եղիսե – 4 Թագ. 2:8,13

գ. դասական գրող մարգարեները (նրանք դիմում են ազգին, ինչպես նաև թագավորին՝ Եսայի – Մաղաքիա (բացի Դանիելից))

Բ. Աստվածաշնչյան տերմիններ

1. *Ro'eh* = «տեսանող», 1 Թագ. 9:9: Այս հատվածն ինքնին ցույց է տալիս *Nabi* տերմինի թարգմանությունը: *Ro'eh* «տեսնել» ընդհանուր տերմինից է ծագել: Այս անձնավորությունը հասկանում էր Աստծո ճանապարհներն ու ծրագրերը և իր հետ խորհրդակցում էին որևէ հարցի շուրջ Աստծո կամքի հաստատման համար:
2. *Hoze* = «տեսանող», 2 Թագ. 24:11: Այն հիմնականում *Ro'eh* բառի հոմանիշն է: Այն ծագել է «տեսնել» տերմինի ավելի հազվադեպ տարբերակից: Ածանցավոր ձևը ավելի հաճախ է կիրառվում մարգարեների մասին խոսելիս:
3. *Nabi* = «մարգարե», Աքքադերենի *Nabu* բայի՝ «կանչել», և արաբերենի *Naba'a*՝ «հայտարարել» բայի համանման տերմինը: Մա Հին Կտակարանում մարգարեի համար կիրառվող ամենատարածված տերմինն է: Այն կիրառվել է ավելի քան 300 անգամ: Ճշգրիտ ստուգաբանությունը հայտնի չէ, սակայն «կանչել» բայը ներկայումս լավագույն տարբերակն է: Հավանաբար լավագույն հասկացությունը բխում է Մովսեսի Փարավոնի հետ Ահարոնի միջոցով շփվելու ՅԱՀՎԵԻ նկարագրությունից (տես՝ Ել. 4:10-16; 7:1; 2 Օր. 5:5): Մարգարեն մի մարդ է, որը Աստծո անունից խոսում է Նրա ժողովրդին (Ամովս 3:8; Երեմ. 1:7,17; Եզեկ. 3:4):

4. Բոլոր երեք տերմինները կիրառվում են մարգարեի պաշտոնի համար 1 Մնաց . 29:29-ում, Սամուել՝ *Ro'eh*, Նաթան՝ *Nabi* և Գաղ՝ *Hozeh*:
5. Այս արտահայտությունը *'ish ha – 'elohim*, «Աստծո Մարդ» տալիս է Աստծո համար խոսող մարդու ավելի ընդարձակ նշանակությունը: ՀԿ-ում այն կիրառվել է մոտ 76 անգամ՝ «մարգարեի» իմաստով:
6. «Մարգարե» /*prophet*/ տերմինը բուն հունարեն է: Այն ծագել է՝ (1) *pro* = «նախքան» կամ «համար», և (2) *phemi* = «խոսել»:

II. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

- Ա. «Մարգարեություն» տերմինը Եբրայերենում ունի ավելի ընդարձակ լեզվաբանական հարթակ, քան անգլերենում: Հետուից մինչև Թագավորացներ (բացի Հռութից) պատմական գրքերը հրեաների կողմից պիտակավորվել՝ վերնագրվել են որպես «վաղ կամ նախկին մարգարեներ»: Թե՛ Աբրահամը (Ծննդ . 20:7; Մաղմ . 105:5) և թե՛ Մովսեսը (2 Օրինաց 18:18) կանչված էին որպես մարգարեներ (նաև Մարիամը՝ Ել . 15:20): Հետևաբար, զգուշացեք անգլերենի կասկածելի սահմանումից:
- Բ. «Մարգարեությունը օրենքով հնարավոր է սահմանել որպես պատմության հասկացողություն, որն ընդունում է դրա նշանակությունը միայն աստվածային հոգածության, նպատակի, մասնակցության տերմիններով», *Աստվածաշնչի Մեկնաբանի Բառարան*, հատոր 3, էջ՝ 896 /*Interpreter's Dictionary of the Bible*/:
- Գ. «Մարգարեն ո՛չ փիլիսոփա է, ո՛չ էլ համակարգված աստվածաբան, այլ ուխտի միջնորդ, որը Աստծո Խոսքը հասցնում է Իր ժողովրդին, որպեսզի ներկան բարեկարգելով ձևավորի նրանց ապագան», «Մարգարեներ և Մարգարեություն», *Հուդայիկա Հանրագիտարան*, հատոր 13, էջ՝ 1152 /“Prophets and Preophecy”, *Encyclopedia Judaica*/:

III. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Մարգարեությունը Աստծո համար Իր ժողովրդի հետ խոսելու միջոց է, որով իրենց տվյալ միջավայրում ապահովում է առաջնորդություն և հույս առ այն, որ իրենց կյանքերը և աշխարհի դեպքերը վերահսկվում են Նրա կողմից: Դրանց պատգամը հիմնականում հավաքական իմաստով է: Այն նախատեսված է հանդիմանելու, քաջալերելու, հավատք և ապաշխարություն հաղորդելու, և Աստծո ժողովրդին տեղեկացնելու Իր մասին և Իր ունեցած ծրագրերի: Սրան պետք է ավելացնել, որ հաճախ այն կիրառվում է Աստծո ընտրությունը որևէ խոսնակի հարցում հստակ հայտնելու համար (2 Օր . 13:1-3; 18:20-22): Ի վերջո սա հանգեցնելու էր Մեսիայի ընտրությանը:
- Բ. Հաճախ մարգարեն օգտագործում էր իր օրերի պատմական կամ աստվածաբանական ճգնաժամը և պրոյեկտում էր այն որևէ էսկատոլոգիական միջավայրում: Պատմության վերջին ժամանակների այս տեսակետը բացառիկ է Իսրայելում և աստվածային ընտրության, ուխտի խոստումների հարցում Իսրայելի ունեցած զգայունությունը:
- Գ. Մարգարեի պաշտոնը, որպես Աստծո կամքը իմանալու կերպ, կարծես թե հավասարակշռում է (Երեմ . 18:18) և հափշտակում Քահանայապետի պաշտոնը: Ուրիմն ու Թումիմը փոխակերպվում են Աստծո խոսնակի կողմից բառացի պատգամ հասցնելուն: Մարգարեի պաշտոնն էլ իր հերթին Իսրայելում կարծես թե ննջել է Մադաբիայից հետո: Այն նորից հայտնվում է Հովհաննես Մկրտչի միջոցով Մադաբիայից 400 տարի անց: Անհայտ է, թե ինչպես է Նոր Կտակարանի «մարգարեության» պարզևր կապված Հին Կտակարանի հետ: Նոր Կտակարանի մարգարեները (Գործք 11:27-28; 13:1; 14:29,32,37; 15:32; 1 Կորնթ . 12:10, 28-29; Եփես . 4:11) Սուրբ Գրքի համար նոր հայտնություններ հայտնողներ չեն, այլ ուխտի իրավիճակների համար Աստծո կամքի կանխատողներ:

- Դ. Մարգարեությունն իր բնույթով բացառապես կամ հիմնականում կանխատում չէ: Կանխատումը իր պաշտոնը և իր փոխանցած պատգամը հաստատելու մի միջոց է, սակայն պետք է նշել, որ «ՀԿ-յան մարգարեություններից 2%-ից էլ քիչ են կազմում Մեսիական մարգարեությունները, 5%-ից քիչ մարգարեություններ էլ նկարագրում են Նոր Կտակարանյան Դարաշրջանը: 1%-ից ավելի քիչ մարգարեություններ էլ վերաբերում են գալիք բաներին»: (Ֆիլի և Ստյուարտ, *Ինչպես Կարդալ Աստվածաշունչն Իր ամբողջ Իմաստով*, էջ՝ 166 /Fee & Stuart, *How to Read the Bible For All Its Worth*):
- Ե. Մարգարեները ներկայացնում են Աստծուն ժողովրդին, մինչ քահանաները ներկայացնում են ժողովրդին Աստծուն: Սա ընդհանուր սահմանում է: Գոյություն ունեն բացառություններ ինչպես Ամբակումը, որը հարցեր է ուղղում Աստծուն:
- Զ. Մարգարեները հասկանալու դժվարության պատճառներից մեկն այն է, որ մենք չգիտենք, թե նրանց գրքերն ինչպես են կազմավորվել: Դրանք ժամանակագրական չեն: Այդ գրքերը կարծես թե թեմատիկ են, սակայն ոչ միշտ ըստ մեր ենթադրածի: Ճատ հաճախ բացակայում է տեսանելի պատմական միջավայրը, ժամանակացույցը կամ պատգամների միջև եղած հստակ բաժանումները: Այս գրքերը դժվար են. (1) կարդացվում մեկ անգամ նստելով, (2) ընդգծել ըստ թեմաների, (3) որոժելու կենտրոնական ճշմարտությունը կամ յուրաքանչյուր պատգամի մեջ բնագրի հեղինակի մտադրությունը:

IV. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Հին Կտակարանում կարծես թե առկա է «մարգարե» և «մարգարեություն» հասկացությունների զարգացում: Վաղ Իսրայելում ձևավորվել էր մարգարեների ընկերություն, որն առաջնորդում էր խարիզմատիկ հզոր որևէ առաջնորդ, ինչպես օրինակ Եղիան կամ Եղիսեն: Երբեմն «մարգարեների որդիները» արտահայտությունը գործածվում էր նկատի ունենալով այս խմբին (4 Թագ. 2): Մարգարեները առանձնանում էին էքստազի ձևերով (1 Թագ. 10:10-13; 19:18-24):
- Բ. Այնուամենայնիվ, այս շրջանից արագ անցում եղավ անհատ մարգարեներին: Կային այնպիսի մարգարեներ (թե՛ իրական և թե՛ սուտ), որոնք հավասարեցվում էին Թագավորի հետ, և ապրում էին արքունի պալատում (Գադ, Նաթան): Նաև կային այնպիսիները, որոնք անկախ էին, երբեմն ամբողջովին Իսրայելի հասարակության ստատուս քվոյի հետ ընդհանրապես կապ չունեցող (Ամոս): Մարգարեները թե՛ տղամարդիկ էին, և թե՛ կանայք (4 Թագ. 22:14):
- Գ. Մարգարեն հաճախ ըստ մարդու անմիջական արձագանքի հանդիսանում էր ապագան հայտնող: Հաճախ մարգարեի գործը հանդիսանում էր Աստծո տիեզերական ծրագիրը Իր ժողովրդին հայտնելը, որն ազդեցության չէր ենթարկվում մարդկային արձագանքի կողմից: Հնագույն Մերձավոր Արևելքի մարգարեների միջավայրին ոչնչացող էր տիեզերական էսկատոլոգիական ծրագիրը: Կանխատումը և Ուխտի հավատարմությունը հանդիսանում են մարգարեական պատգամների գույգ կենտրոնները (տես՝ Ֆիլի և Ստյուարտ, էջ՝ 150): Սրանից կարելի է ենթադրել, որ մարգարեները հիմնականում ունեն հավաքական կենտրոնացում: Նրանք սովորաբար, սակայն ոչ միանշանակ, դիմում են ազգին՝ ժողովրդին:
- Դ. Մարգարեական նյութերից շատերը բանավոր տեսքով են ներկայացվում: Միայն հետագայում են դրանք հավաքագրվել Մերձավոր Արևելքի Գրականության տարբեր թեմաների, ժամանակագրության կամ այլ ձևաչափերի միջոցով, որոնք մեր համար կորած են համարվել: Եվ քանի որ դրանք հիմնականում բանավոր տեսքով էին, դրանք գրի առնված արձակի պես ձևավորված չէին: Այդ իսկ պատճառով գրքերը անմիջապես դժվարընթեռնելի էին և դժվար հասկանալի առանց հատուկ պատմական միջավայրի:

- Ե. Մարգարեններն իրենց պատգամները փոխանցելու համար գործածում էին որոշակի ձևեր.
1. Դատարանի տեսարան – Աստված Իր ժողովրդին տանում է դատարան, հաճախ ամուսնալուծության դատական գործով, որտեղ ՅԱՀՎԵՆ մերժում է իր կնոջը (Իսրայելին) նրա անհավատարմության համար (Ուսեա 4; Միքիա 6):
 2. Թաղման սուգ – նմանատիպ պատգամի հատուկ հանգը և դրան հատկանշական դրան հատկանշական «վայ»-երը, առանձնացնում են այն որպես հատուկ տեսակ (Եսայի 5; Ամբակում 2):
 3. Ուխտի Օրհնության Հռչակում – Ուխտի պայմանական բնույթը շեշտադրվում է և հետևանքները՝ թե՛ դրական և թե՛ բացասական, բարձրաձայնվում են ապագայի համար (2 Օր. 27-28):

V. ԾՇՄԱՐԻՏ ՄԱՐԳԱՐԵԻ ՀԱՍԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ա. 2 Օրինաց 13:1-5 (կանխասումներ, նշաններ)

Բ. 2 Օրինաց 18:9-22 (սուտ մարգարեններ, իրական մարգարեններ)

Գ. Թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք կանչված են և նշանակված որպես մարգարեններ կամ մարգարեուհիներ՝

1. Մարիամը – Ելից 15
2. Դեբորան – Դատավորաց 4:4-6
3. Ողղան – 4 Թագ. 22:14-20; 2 Մնաց. 34:22-28

Շրջապատի մշակույթների մեջ մարգարենները հաստատվում էին հմայության միջոցով: Իսրայելում նրանց հաստատում էին՝

1. աստվածաբանական ստուգարքի միջոցով – ՅԱՀՎԵԻ անվան կիրառությամբ
2. պատմական ստուգարքի միջոցով – ճշգրիտ կանխասությամբ

VI. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Ա. Գտեք բուն մարգարեի (խմբագրի) մտադրությունը՝ նպատակը, ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր պատգամի պատմական միջավայրին ու գրական համատեքստին: Մովորաբար այն պարունակում է Իսրայելի կողմից ինչ-որ կերպ Մովսիսական Ուխտի խախտում:

Բ. Կարդացե՛ք և մեկնաբանե՛ք ամբողջ պատգամը և ոչ թե մի մասը. ըստ բովանդակության կոնսպեկտավորեք: Տեսե՛ք, թե ինչ առնչություն ունի այդ պատգամը իրեն հաջորդող և նախորդող պատգամների հետ: Փորձեք կոնսպեկտավորել ամբողջ գիրքը:

Գ. Պատկերացրեք պատգամի տառացի մեկնաբանությունը, մինչև որ տեքստում ինչ-որ բան ձեզ մատնացույց կանի դրա այլաբանական կիրառությանը. ապա տվյալ տեքստի մեջ ներմուծեք փոխաբերական լեզուն:

Դ. Վերլուծե՛ք սիմվոլիկ գործողությունը պատմական միջավայրի և զուգահեռ հատվածների օգնությամբ: Միշտ հիշե՛ք, որ Հնագույն Մերձավոր Արևելյան գրականությունը արևմտյան կամ ժամանակակից գրականություն չէ:

Ե. Կանխասմանը ցուցաբերեք զգուշավորություն.

1. Արդյո՞ք դրանք միանշանակ վերաբերում են հեղինակի օրերին:
2. Արդյո՞ք դրանք հետագայում իրականացան Իսրայելի պատմության մեջ:
3. Արդյո՞ք դրանք դեռևս ապագայի դեպքեր են:
4. Ունե՞ն դրանք մերօրյա իրականացում և բացի այդ ապագայի համար են:
5. Թույլ տվե՛ք, որ Աստվածաշնչի, և ոչ թե ժամանակակից հեղինակները, տան ձեր պատասխանները:

Մտահոգող հարցեր՝

1. Արդյո՞ք կանխատուներ որակավորվում է պայմանական պատասխանի դեպքում:
2. Հայտնի՞ է արդյոք, թե ում (և ինչու) է ուղղված մարգարեությունը:
3. Հավանական է արդյոք, որ տվյալ մարգարեությունը աստվածաշնչորեն և/կամ պատմականորեն մի քանի անգամ կիրականանան:
4. ՆԿ-յան հեղինակները ներշնչանքի ներքո ի գորու էին տեսնել Մեսիային ՀԿ-ի տարբեր մասերում, որը մեզ համար տեսանելի չէ: Նրանք կարծես թե կիրառում էին տիպաբանություն կամ բառախաղ: Քանի որ մենք ներշնչված չենք, ավելի լավ է, որ այս մոտեցումը թողենք նրանց:

VII. ՕԳՏԱԿԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. *Ուղեցույց Աստվածաշնչյան Մարգարեության համար*, Կառլ Ի. Արմերդինգ և Ու. Ուորդ Գասք /*A Guide to Biblical Prophecy by Carl E. Armerding and W. Ward Gasque*/
- Բ. *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտ /*How to Read the Bible for All It's Worth by Gordon Fee and Douglas Stuart*/
- Գ. *Իմ Ծառաներ Մարգարեների* Էդվարդ Ջ. Յանգ /*My Servants the Prophets My Servants the Prophets by Edward J. Young*/
- Դ. *Մաներ և մանգաղներ. Աստվածաշնչյան Մարգարեության և Հայտնության լեզվի վերանայում*, Դ. Բրենթ Սենդի /*Plowshares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic by D. Brent Sandy*/
- Ե. *Հին Կտակարանի Ծածկագրի Կոտրելը*, Դ. Բրենթ Սենդի և Ռոնալդ Լ. Գիզ Կրստեր /*Cracking the Old Testament Code, D. Brent Sandy and Ronald L. Giese, Jr.*/

ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ – ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

(ԻՆՉՈՒ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐԹԻ ԱՅԳՔԱՆ ՇԱՏ ԴՈԳՄԱՏԻԿ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ)

Էսկատոլոգիայի բնագավառում իմ երկար տարիների ուսումնասիրության ընթացքում ես հասկացել եմ, որ շատ Քրիստոնյաներ չունեն կամ չեն ուզում ունենալ ձևավորված, համակարգված, վերջին ժամանակների ժամանակագրությունը: Որոշ Քրիստոնյաներ կենտրոնանում են կամ մասնագիտանում Քրիստոնեության այս բնագավառում աստվածաբանական, հոգեբանական կամ հարանվանական նպատակներով: Այս Քրիստոնյաներին կարծես թե համակում է, այն միտքը, թե ինչպես է ամեն բան ավարտվելու և ինչ-որ մի տեղ կորցնում են ավետարանի հրատապության կարևոր հարցը: Հավատացյալները չեն կարող ազդել Աստծո էսկատոլոգիական (վերջին ժամանակների) գրաֆիկի վրա, սակայն նրանք կարող են մասնակցել ավետարանի լիազորության գործում (տես՝ Մատթ. 28:19-20; Ղուկ .24:47; Գործք 1:8): Շատ հավատացյալներ հաստատում են Քրիստոսի Երկրորդ Գալուստը և Աստծո խոստումների վերջին ժամանակների կուլմինացիան: Այստեղ բարձրանում է մեկնաբանական խնդիրներ, թե ինչպես հասկանալ այս ժամանակավոր կուլմինացիան, որ բխում է աստվածաշնչյան մի քանի պարադոքսներից՝

1. Հին Ուխտի մարգարեական և Նոր Ուխտի առաքելական օրինակների միջև առկա լարվածությունը
2. Աստվածաշնչի միաստվածության (մեկ Աստված բոլորի համար) և Իսրայելի ընտրված լինելու (հատուկ ժողովուրդ) միջև առկա լարվածությունը
3. Աստվածաշնչյան ուխտերի և խոստումների պայմանական կողմերի («եթե ... ապա») և մեղավոր մարդկության փրկության համար Աստծո անպայմանական հավատարմության միջև առկա լարվածությունը
4. Մերձավոր Արևելքի գրական ժանրերի և ժամանակակից արևմտյան գրական ձևերի միջև առկա լարվածությունը
5. Ներկայիս Աստծո Արքայության և մինչդեռ դրա ապագայում լինելու միջև առկա լարվածությունը
6. Առկա լարվածությունը Քրիստոսի մոտալուտ գալստյան հավատքի և այն հավատքի միջև, որ առաջին հերթին պետք է որոշ դեպքեր կատարվեն նախքան այդ գալուստը

Եկեք հերթով քննարկենք այս լարվածությունները:

ԱՌԱՋԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (ՀԿ-յան ցեղային, ազգային և աշխարհագրական կատեգորիաները ի հակադրություն ամբողջ աշխարհի հավատացյալների)

ՀԿ-յան մարգարեները կանխատեսում են հրեական թագավորության վերականգնում՝ Պաղեստինում՝ կենտրոնացած հենց Երուսաղեմում, որտեղ երկրի բոլոր ազգերը հավաքվելու են փառաբանելու և ծառայելու Դավթի ցեղից դուրս եկած իշխանին, սակայն ո՛չ Հիսուսը և ո՛չ էլ ՆԿ-յան Առաքյալները երբեք չկենտրոնացան այս գրաֆիկի վրա: Արդյո՞ք ՀԿ-ը ներշնչված չէ (տես՝ Մատթ. 5:17-19): Արդյո՞ք ՆԿ-յան հեղինակները բաց են թողել վերջին ժամանակների կարևոր դեպքեր:

Աշխարհի վերջի վերաբերյալ գոյություն ունեն տեղեկատվության մի քանի աղբյուրներ՝

1. ՀԿ մարգարեները (Եսայի, Միքիա, Մադաքիա)
2. ՀԿ-յան վերջին ժամանակների մասին գրող հեղինակներ (տես՝ Եզեկ .37-39; Դան .7-12; Չաք .)
3. միջկտակարանյան, անկանոն հրեական ապոկալիպտիկ հեղինակները (ինչպես 1 Ենովքը, որին անդրադարձ է կատարվում Հուդայի գրքում):
4. Հիսուսն Ինքը (տես՝ Մատթ. 24; Մարկ . 13; Ղուկ .21)
5. Պողոսի թղթերը (տես՝ 1 Կորնթ . 15; 2 Կորնթ . 5; 1 Թեսաղ . 4-5; 2 Թեսաղ . 2)
6. Հովհաննեսի թղթերը (1 Հովհաննես և Հայտնություն):

Արդյո՞ք այս բոլոր գրքերը պարզ սովորեցնում են վերջին ժամանակների գրաֆիկը (դեպքերը, ժամանակագրությունը, անձիք): Եթե ոչ, ապա ինչո՞ւ: Արդյո՞ք դրանք բոլորն էլ ներշնչանքով չեն գրվել (բացի հրեական միջկտակարանյան գրքերը):

Մուրբ Հոգին ճշմարտություններ է հայտնել ՀԿ-յան հեղինակներին այնպիսի տերմիններով և կատեգորիաներով, որ նրանց հասկանալի լինե: Այնուհանդերձ, զարգացող հայտնության միջոցով Հոգին ընդլայնել է այս ՀԿ-յան էսկատոլոգիական հասկացությունները մինչև տիեզերական մասշտաբի («Քրիստոսի խորհուրդը», տես՝ Եփես .2:11-3:13: Տե՛ս Հատուկ Թեմա 10:7-ում): Ահա մի քանի հարմար օրինակներ՝

1. ՀԿ-ում Երուսաղեմ քաղաքը կիրառվում է որպես Աստծո ժողովրդի համար փոխաբերություն (Միոնը), սակայն ՆԿ-ում այն պրոյեկտված է որպես մի տերմին, որն արտահայտում է բոլոր ապաշխարող, հավատացող մարդկանց Աստծո կողմից ընդունված

լինելը (Հայտնություն 21-22-ի Նոր Երուսաղեմը): Բառացի, ֆիզիկական քաղաքի աստվածաբանական տարածումը որպես Աստծո ժողովրդի խորհուրդը (հավատացյալ հրեաներն ու հեթանոսները) պահված է մեղավոր մարդկությանը Ծննդ. 3:15-ում փրկելու խոստման մեջ, նախքան նույնիսկ հրեաների կամ հրեական մայրաքաղաքի գոյությունը: Նույնիսկ Աբրահամի կանչը (տես՝ Ծննդ. 12:1-3) իր մեջ բովանդակում է հեթանոսներին (տես՝ Ծննդ. 12:3; Ելից 19:5):

2. ՀԿ-ում Աստծո ժողովրդի թշնամիները Հնագույն Մերձավոր Արևելքի շրջապատող երկրներն էին, սակայն ՆԿ-ում նրանք տարածվում են բոլոր անհավատ, Աստծուն հակառակ, սատանայությամբ ներշնչված մարդկան մեջ: Պայքարը տեղափոխվել է աշխարհագրական, տարածաշրջանային ընդհարումից դեպի համաշխարհային, տիեզերական բախման (տես՝ Կողոսացիներին):
3. ՀԿ-ում երկիր ունենալը, որն այդքան անբաժանելի է խոստումից, (Ծննդոցի Նահապետական խոստումները, տես՝ Ծննդ. 12:7; 13:15; 15:7-15; 17:8) այժմ դարձել է ամբողջ աշխարհը: Նոր Երուսաղեմը իջնում է նոր արարված երկիր, ոչ թե միայն կամ բացառապես Մերձավոր Արևելք (տես՝ Հայտն. 21-22):
4. Ընդարձակվելու ՀԿ-ի մարգարեական հասկացության մի քանի այլ օրինակներից են (1) Աբրահամի սերմը այժմ հոգևորապես թլփատված է (տես՝ Հռոմ. 2:28-29); (2) ուխտի ժողովրդի մեջ այժմ ներգրավված են հեթանոսները (տես՝ Ովս. 1:10; 2:23, մեջբերված է Հռոմ. 9:24-26-ում, նաև Ղևո. 26:12; Ելից 29:45՝ մեջբերված 2 Կորնթ. 6:16-18 և Ելից 19:5; 2 Օրին. 14:2՝ մեջբերված Տիտոս 2:14-ում); (3) տաճարը այժմ Հիսուսն է և Նրա միջոցով տեղական եկեղեցին (տես՝ 1 Կորնթ. 3:16) կամ անհատ հավատացյալը (տես՝ 1 Կորնթ. 6:19); և (4) նույնիսկ Իսրայելը և դրան բնութագրող ՀԿ-յան արտահայտությունները այժմ վերաբերում են Աստծո ամբողջ ժողովրդին (այսինքն՝ «Իսրայել», տես՝ Հռոմ. 9:6; Գաղ. 6:16, այսինքն՝ «քահանայական թագավորություն», տես՝ 1 Պետ. 2:5, 9-10; Հայտն. 1:6):

Մարգարեական դեպքերը իրականացան, ընդլայնվեցին և այժմ ավելի շատ ընդգրկում են: Հիսուսը և Առաքելական հեղինակները չեն ներկայացնում վերջին ժամանակները այնպես ինչպես ՀԿ-յան մարգարեները (տես՝ Մարթին Ուիլսոնի *Արքայության Ապագան Մարգարեություններում և դրանց իրականացումը* /Martin Wyngarden *The Future of the Kingdom in Prophecy and Fulfillment*): Ժամանակակից մեկնաբանները, որոնք փորձում են ՀԿ-ի մոդելը դարձնել տառացի կամ նորմատիվ, փոփոխում են Հայտնությունը դարձնելով այն շատ հրեական գիրք և իմաստներ փնտրում Հիսուսի և Պողոսի պայթյունավտանգ և երկիմաստ խոսքերին: ՆԿ-յան հեղինակները չեն ժխտում ՀԿ-յան մարգարեներին, այլ ցոխց են տալիս դրանց վերջնական տիեզերական նշանակությունը: Գոյություն չունի ձևավորված, տրամաբանական համակարգ Հիսուսի կամ Պողոսի էսկատոլոգիայի համար: Դրանց նպատակը հիմնականում փրկությունն է կամ հովվությունը:

Այնուհանդերձ նույնիսկ ՆԿ-ի ներսում լարվածություն կա: Էսկատոլոգիական դեպքերի հստակ համակարգում գոյություն չունի: Հայտնությունը վերջին ժամանակները նկարագրելու համար զարմանալիորեն Հիսուսի ուսմունքների փոխարեն շատ դեպքերում կիրառում է ՀԿ-յան մեջբերումներ (տես՝ Մատթ. 24; Մարկոս 13): Այն հետևում է Եզեկիելի, Դանիելի և Չաքարիայի գրական ժանրին, սակայն ձևավորված միջկտակարանյան ժամանակաշրջանում (հրեական ապոկալիպտիկ գրականություն): Հնարավոր է սա եղել է Հովհաննեսի կիրառած մեթոդը, որպեսզի կապ ստեղծի Հին և Նոր Կտակարանների միջև: Այն արտահայտում է մարդու ապստամբության հնությունը և Աստծո նվիրումը մարդուն փրկելու համար: Սակայն պետք է նշել, որ չնայած Հայտնությունը կիրառում է ՀԿ-յան լեզուն, մարդկանց և դեպքերը, այն վերամեկնաբանում է դրանք առաջին դարի Հռոմի միջավայրում:

ԵՐԿՐՈՐԳ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (միաստվածությունն ի հակադրություն ընտրյալ ազգի)

Աստվածաշնչյան շեշտադրությունը մեկ անհատ, հոգևոր, արարիչ-փրկիչ Աստծո վրա է (տես՝ Ելից 8:10; Ես. 44:24; 45:5-7,14,18,21-22; 46:9; Երեմ. 10:6-7): ՀԿ-ի յուրահատկությունը իր օրերում եղել է իր միաստվածությունը: Բոլոր շրջապատի մյուս ազգերը բազմաստված էին: ՀԿ-ի հայտնության սիրտը հանդիսանում է Աստծո մեկ լինելը (տես՝ 2 Օրինաց 6:4): Ստեղծագործությունը Աստծո և Իր նմանությամբ ու պատկերով (տես՝ Ծննդ. 1:26-27) ստեղծված մարդկության միջև փոխհարաբերության նպատակի համար բեմահարթակ է: Սակայն մարդը ապստամբեց, մեղանչեց Աստծո սիրո, առաջնորդության և նպատակի դեմ (տես՝ Ծննդ. 3): Աստծո սերը և նպատակը այնքան ուժեղ էր և հաստատ, որ Նա խոստացավ փրկել մեղքի մեջ ընկած մարդկությանը (տես՝ Ծննդ. 3:15):

Լարվածությունը ուժեղանում է, երբ Աստված ընտրում է մի մարդ, մի ընտանիք, մի ազգ, որպեսզի ձեռք մեկնի ամբողջ մարդկության մնացած մասին: Որպես քահանաների թագավորություն

Աբրահամի և հրեաների Աստծո ընտրությունը (տես՝ Ելից 19:4-6) պատճառ հանդիսացավ ծառայության փոխարեն՝ հպարտության և ուրիշներին ներգրավելու փոխարեն՝ բացառելու: Աստծո կողմից Աբրահամի կանչը բովանդակում էր ամբողջ մարդկության համար նախատեսված օրհնություն (տես՝ Ծննդ. 12:3): Պետք է հիշել և շեշտադրել, որ ՀԿ-յան ընտրությունը ծառայության համար էր և ոչ թե փրկության: Ամբողջ Իսրայելը երբեք ուղիղ չէր Աստծո առջև, երբեք հավիտենապես փրկված չէր միայն իր ազգային պատկանելիության՝ իրավունքների հիման վրա (տես՝ Հովհ. 8:31-59; Մատթ. 3:9), այլ միայն անձնական հավատքի և հնազանդության շնորհիվ (տես՝ Ծննդ. 15:6 մեջբերված Հռոմ. 4-ում): Իսրայելը կորցրեց իր առաքելությունը, իր լիազորությունը վերածվեց արտոնության, ծառայությունը՝ հատուկ դիրքի: Աստված ընտրեց մեկին, որպեսզի ընտրի բոլորին:

ԵՐՐՈՐԳ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (պայմանական ուխտերը ի հակադրություն ոչ պայմանական ուխտերի)

Պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև գոյություն ունի աստվածաբանական լարվածություն կամ պարադոքս: Իհարկե ճիշտ է, որ Աստծո փրկության նպատակը՝ ծրագիրը առանց պայմանների է (տես՝ Ծննդ. 15:12-21): Այնուհանդերձ, մարդուն արտոնված արձագանքը միշտ էլ պայմանական է:

«Եթե. . . ապա» ձևաչափին հանդիպում ենք թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում: Աստված հավատարիմ է, մարդը՝ անհավատարիմ: Այս լարվածությունը շատ խառնաշփոթության պատճառ է հանդիսացել: Մեկնաբանները հակված են միշտ կենտրոնանալու «դիլեմայի միայն մի կողմի վրա»: Աստծո հավատարմությունը կամ մարդու ջանքը, Աստծո ամենակալությունը կամ մարդու ազատ կամքը: Երկուսն էլ աստվածաշնչյան են և անհրաժեշտություն:

Սա կապված է Էսկատոլոգիայի /վախճանաբանության/, Իսրայելին տրված Աստծո ՀԿ-յան խոստումների հետ: Եթե Աստված խոստանում է, ապա իրականացնում է, այնպես չէ՞: Աստված կապված է Իր խոստումներին. այստեղ ներգրավված է Նրա հեղինակությունը (տես՝ Եզեկ. 36:22-38): Պայմանական և ոչ պայմանական ուխտերը իրականանում են Քրիստոսի մեջ (տես՝ Եսայի 53), ոչ թե Իսրայելի: Աստված իր հավատարմությունը ցուցաբերում է փրկելով բոլոր այն մարդկանց, ովքեր ապաշխարում են և հավատում, և ոչ թե նրանց ծնողների /ազգային պատկանելիության/ պատճառով: Ոչ թե Իսրայելը, այլ Քրիստոսն է հանդիսանում Աստծո ուխտերի և խոստումների բանալին: Եթե Աստվածաշնչում գոյություն ունեն աստվածաբանական փակագծեր, ապա դա Եկեղեցին չէ, այլ Իսրայելը (տես՝ Գործք 7 և Գաղ. 3):

Ավետարանի քարոզչության համաշխարհային առաքելությունը հանձնվեց Եկեղեցուն (տես՝ Մատթ. 28:19-20; Դուկ. 24:47; Գործք 1:8): Այն դեռևս մնում է որպես պայմանական ուխտ: Դա չի նշանակում, որ Աստված լիովին մերժել է հրեաներին (տես՝ Հռոմ. 9-11): Հնարավոր է կա տեղ ու նպատակ վերջին ժամանակներում հավատացյալ Իսրայելի համար (տես՝ Չաք. 12:10):

ՉՈՐՐՈՐԳ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (Մերձարևելյան գրական ժանրերը ի հակադրություն արևմտյանի)

Ժանրը Աստվածաշնչի ճշգրիտ մեկնաբանության համար չափազանց կարևոր տարր է: Եկեղեցին ձևավորվեց արևմտյան (հունական) մշակույթի միջավայրում: Արևելյան գրականությունը շատ ավելի փոխաբերական, այլաբանական և սիմվոլիկ է, քան արդի, արևմտյան մշակույթի գրական ժանրերը: Այն կենտրոնանում է ավելի շատ մարդկանց, հանդիպումների և դեպքերի վրա, քան հասարակության առաջարկող ճշմարտությունների վրա: Քրիստոնյաները մեղավոր են եղել օգտագործելով իրենց պատմությունն ու գրական տեսակները աստվածաշնչյան մարգարեությունները մեկնաբանելու համար (Հին և Նոր Կտակարանները): Յուրաքանչյուր սերունդ և աշխարհագրական մարմին օգտագործել է իր մշակույթը, պատմությունը և բառացիությունը, որպեսզի մեկնաբանի Հայտնության գիրքը: Նրանք բոլորն էլ սխալ են եղել: Մեծամտություն է մտածել, որ ժամանակակից արևմտյան մշակույթը աստվածաշնչյան մարգարեության կենտրոնն է:

Այն ժանրը, որով բնագրի ներշնչված հեղինակը որոշում է գրել, գրական պայմանագիր է ընթերցողի հետ: Հայտնության գիրքը պատմական իրադարձություն չէ: Այն նամակների հավաքածու է (1-3 գլուխները), մարգարեություն և հիմնականում ապոկալիպտիկ գրականություն: Միայն է նաև ստիպել Աստվածաշնչին ասել ավելին, քան բնագրի հեղինակն է մտադիր եղել, քանի որ դա ավելի քիչ կլինի, քան այն, ինչ նա՝ էր ուզում ասել: Մեկնաբանների հպարտությունն ու դոգմատիզմը նույնիսկ ավելի անպատշաճ են Հայտնության գրքի պես աշխատության մեջ:

Եկեղեցին երբեք չի համաձայնվել Հայտնության պատշաճ մեկնաբանության հետ: Ես փորձում եմ լսել և աշխատել ամբողջ Աստվածաշնչի հետ, այլ ոչ թե որևէ ընտրված մասի (մասերի): Աստվածաշնչի արևելյան մտածելակերպը ներկայացնում է ճշմարտությունը լարվածության մեջ գտնվող գույգերով: Մեր արևմտյան միտումը գաղափարական ճշմարտության հանդեպ անիրական չէ, այլ անհավասարակշիռ: Կարծում եմ Հայտնությունը մեկնաբանելիս, կարելի է հեռացնել գոնե մի քանի

անհնարին բաներ և հավատացյալների հաջորդ սերունդների համար նշել փոփոխության նպատակը: Բանն այն է, որ շատ մեկնաբանների համար ակնհայտ է, որ Հայտնությունը պետք է մեկնաբանվի տվյալ օրվա և ժանրի լույսի ներքո: Պատմական մոտեցումը Հայտնությանը պետք է լինի այն, թե ինչ են առաջին ընթերցողները հասկացել: Շատ դեպքերում ժամանակակից մեկնաբանները կորցրել են գրքի բազմաթիվ խորհրդանիշների իմաստը: Հայտնության սկզբնական հիմնական նպատակն է եղել քաջալերել հայաձվող հավատացյալներին: Այն ներկայացնում էր Աստծո պատմության վրա հսկողությունը (ինչպես արեցին Հին Կտակարանի մարգարեները). այն հաստատում էր, որ պատմությունը շարժվում է դեպի որոշակի վերջնական դատաստանի կամ օրհնության (ինչպես արեցին Հին Կտակարանի մարգարեները): Այն հաստատում էր առաջին դարի հրեական ապոկալիպտիկ տերմինները՝ Աստծո սերը, ներկայությունը, գորությունը և ինքնիշխանությունը:

Հավատացյալների յուրաքանչյուր սերնդի համար այն գործում է նույն այս աստվածաբանական կերպերով, պատկերում է բարու և չարի տիեզերական պայքարը: Առաջին դարի մանրամասները հնարավոր է կորել են մեզ համար, բայց չեն կորել դրա հզոր, մխիթարիչ ճշմարտությունները: Երբ ժամանակակից, արևմտյան թարգմանիչները փորձում են համոզել Հայտնության մանրամասները՝ ներդնելով այն իրենց ժամանակակից պատմության մեջ, շարունակվում է սուտ մեկնաբանությունների ձևաչափը:

Միանգամայն հնարավոր է, որ գրքի մանրամասները գրեթե բառացի դառնան (ինչպես դա եղավ Հին Կտակարանում՝ կապված Քրիստոսի ծննդյան, կյանքի և մահվան հետ) վերջին սերնդի հավատացյալների համար, երբ նրանք առերեսվեն Աստծուն ընդդիմացող առաջնորդի հարձակմանը (տես՝ 2 Թես. 2) և մշակույթին: Ոչ ոք չի կարող իմանալ Հայտնության գրքի այս բառացի իրականացումները, մինչև որ Հիսուսի (տես Մաթ. 24; Մարկ. 13 և Դուկ. 21) և Պողոսի (1 Կոր. 15; 1 Թես. 4-5; և 2 Թես. 2) խոսքերը պատմականորեն նույնպես չդառնան ապացուցելի: Կռահելը, ենթադրությունները և դոգմատիզմը բոլորն էլ անպատեհ են: Ապոկալիպտիկ գրականությունը թույլ է տալիս այս հարմարվողականությունը: Փառք Աստծուն պատկերների և խորհրդանիշների համար, որոնք գերազանցում են պատմական իրադարձությանը: Աստված վերահսկում է. Նա տիրում է. Նա գալու է:

Ժամանակակից մեկնաբանություններից շատերը բաց են թողնում ժանրի կարևորությունը: Ժամանակակից արևմտյան մեկնաբանները հաճախ փնտրում են աստվածաբանության հստակ, տրամաբանական համակարգ, հրեական ապոկալիպտիկ գրականության երկիմաստ, սիմվոլիկ, դրամատիկ ժանրի հանդեպ ազնվություն ցուցաբերելու փոխարեն: Այս ճշմարտությունը գեղեցիկ կերպով արտահայտված է Ռալֆ Պ. Մարթինի «Նոր Կտակարանի Էզգեզետիկայի հանդեպ մոտեցումներ» կոչվող հոդվածում /Ralf P. Martin, “Approaches to New Testament Exegesis” in *New Testament Interpretation*/ «Նոր Կտակարանի Մեկնություն» գրքում, խմբագրված Ի Հոուվարդ Մարշալի կողմից:

«Եթե մենք չճանաչենք այս գրվածքի դրամատիկ որակը և չհիշենք, թե ինչ լեզու է օգտագործվում, որպես կրոնական ճշմարտությունը արտահայտելու գործիք, մենք մեծապես կսխալվենք հայտնության մասին ունեցած մեր պատկերացումներում, և սխալմամբ կփորձենք մեկնաբանել իր տեսիլքը, կարծես թե դա գրական արձակ գիրք է եղել և փորձում է նկարագրել գործնական և մանրամասն պատմության դեպքեր: Վերջին քայլը փորձելն է մեկնաբանել բոլոր տեսակի խնդիրները: Ավելի լուրջ այն հանգեցնում է հայտնության կարևոր իմաստի խեղաթյուրմանը և այդպիսով կորցնում է Նոր Կտակարանի այս հատվածի մեծ արժեքը որպես դրամատիկ պնդում Քրիստոսում Աստծո ինքնիշխանության առասպելաբանական լեզվի և նրա իշխանության պարադոքսի, որը միաձուլում է գորությունն ու սերը (տես Հայտ. 5: 5,6; Առյուծը Գառնուկն է)» (էջ 235):

Ու. Ռենդոլֆ Թեյթը իր *Աստվածաշնչյան մեկնաբանություններ* /*Biblical Interpretations*, W. Randolph Tate/ գրքում գրել է.

«Աստվածաշնչյան ոչ մի ուրիշ ժանր այնքան ջերմեռանդորեն և այսպիսի ճնշող արդյունքներով չի կարողացվել, որքան Դանիելի և Հայտնության գրքերը: Այս ժանրը տուժել է սխալ մեկնաբանության ցավալի դեպքերի պատճառով, քանի որ հիմնովին սխալ են հասկացվել դրա գրական ձևերը, կառուցվածքը և նպատակը: Հենց գրքի այն պնդման պատճառով, որ հայտնում է շուտով տեղի ունեցող դեպքերը, հայտնությունը դիտարկվել է որպես ապագայի ուղեցույց և քարտեզ: Այս տեսանկյունն ունի իր ցավալի ենթադրությունը, որ իբրև այս գրքերը մատնացույց են անում ընթերցողի ներկայիս դարաշրջանը և ոչ թե բնագրի հեղինակի: Ապոկալիպսիսի հանդեպ այս սխալ մոտեցումը (հատկապես Հայտնության) աշխատությանը վերաբերվում է այնպես, կարծես թե այն գրված է ծածկագրերով, որոնց միջոցով ժամանակակից դեպքերը կարելի է օգտագործել մեկնաբանելու համար տեքստում առկա խորհրդապատկերները: Առաջին հերթին մեկնաբանը պետք է գիտակցի, որ հայտնությունն իր պատգամները փոխանցում է սիմվոլիզմի միջոցով: Որևէ սիմվոլ տառացի մեկնաբանելը արդեն իսկ սխալ մեկնություն է, երբ իրականում

այն փոխաբերություն է: Իսնդիրն այստեղ նրանում չէ, թե արդյոք դեպքերը ապոկալիպտիկ են, թե պատմական: Դեպքերը կարող են և լինել պատմական, հնարավոր է դրանք իրականում տեղի են ունեցել կամ տեղի են ունենալու, սակայն հեղինակը ներկայացնում է դեպքերը և դրանց նշանակությունը փոխանցում պատկերների և նախատիպերի միջոցով» (էջ՝ 137):

Աստվածաշնչյան Պատկերավոր Բառարան գրքից, որը խմբագրվել է Ռայկեն, Ուիլիսոսթ և Լոնգմեն III-ի կողմից /*Dictionary of Biblical Imagery* edited by Ryken, Wilhost and Longman III/.

«Այսօրվա ընթերցողները հաճախ շփոթվում և սարսափում են այս ժանրից: Անսպասելի պատկերները և այս աշխարհից դուրս փորձառությունները թվում են արտառոց և Սուրբ Գրքի բովանդակությունից դուրս: Այս գրականությունը բառացի ընդունելը շատ ընթերցողների կանգնեցնում է դժվարին որոշման առջև, թե «ինչը երբ կպատահի», որի պատճառով էլ նրանք աչքաթող են անում ապոկալիպտիկ ուղերձի նպատակը» (էջ՝ 35):

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (Աստծո Արքայությունը թեև ներկայում, բայց նաև ապագայում)

Աստծո Արքայությունը թե՛ ներկայում է, և թե՛ ապագայում: Աստվածաբանական այս պարադոքսը ուշադրության է արժանանում էսկատոլոգիայի տեսանկյունից: Եթե մենք սպասում ենք, որ Իսրայելի վերաբերյալ ՀԿ-յան բոլոր մարգարեությունները տառացիորեն իրականանալու են, ապա Արքայությունը դառնում է հիմնականում Իսրայելի վերականգնված վիճակն իր աշխարհագրական դիրքին և աստվածաբանական նախապատվությանը: Դրա համար պետք է, որ Եկեղեցին զաղտնի հափշտակվի 5-րդ գլխում և մնացած գլուխները վերաբերեն Իսրայելին:

Սակայն եթե ուշադրության կենտրոնում այն արքայությունն է, որը սկիզբ է առել ՀԿ-յան Մեսիայի մասին տված խոստումներով, ապա այն արդեն իսկ ներկա է Քրիստոսի առաջին գալստյան ժամանակ, ապա արքայության կենտրոնը դառնում է Քրիստոսի մարմնացումը, կյանքը, ուսմունքները, մահը և հարությունը: Աստվածաբանական շեշտադրումն ընկնում է փրկության վրա՝ ներկայում: Արքայությունը եկել է, ՀԿ-ը իրականացել է բոլորի համար Քրիստոսի կողմից առաջարկվող փրկության միջոցով և ոչ թե ոմանց վրա Իր հազարամյա տիրակալության միջոցով:

Անշուշտ ճիշտ է, որ Աստվածաշունչը խոսում է Քրիստոսի երկու գալուստների մասին, սակայն ո՞րի վրա պետք է դրվի շեշտը: Ես կարծում եմ, որ ՀԿ-յան մարգարեությունների մեծ մասը կենտրոնանում են առաջին գալստյան վրա՝ Մեսիական Թագավորության հաստատման (տես՝ Դան. 2): Սա շատ առումներով նման է Աստծո հավիտենական թագավորությանը (տես՝ Դան. 7): ՀԿ-ում ուշադրության կենտրոնում է Աստծո հավիտենական թագավորությունը, սակայն այդ թագավորության դրսևորման մեխանիզմը Մեսիայի ծառայությունն է (տես՝ 1 Կոնթ. 15:26-27): Հարցն այն չէ, թե որն է ճիշտ, քանի որ երկուսն էլ ճիշտ են, սակայն ո՞րն է ավելի շեշտադրված: Պետք է ասել, որ որոշ մեկնաբաններ այնքան են կենտրոնանում Մեսիայի հազարամյա թագավորության վրա (տես՝ Հայտն. 20), որը աչքաթող են անում աստվածաշնչյան Հոր հավիտենական թագավորությունը: Քրիստոսի թագավորությունը նախապատրաստական իրադարձություն է: Ինչպես որ ՀԿ-ում հատակ չէր երևում Քրիստոսի երկու գալուստները, այնպես էլ չի երևում Մեսիայի ժամանակավոր թագավորությունը:

Հիսուսի քարոզչության և ուսմունքների կենտրոնը Աստծո Արքայությունն է: Այն թե՛ ներկա է (փրկության և ծառայության մեջ) և թե՛ ապագա (համատարած և գորությանը): Հայտնությունը, եթե կենտրոնանում է Մեսիայի հազարամյա թագավորության վրա (տես՝ Հայտն. 20), ապա նախնական է և ոչ թե վերջնական (տես՝ Հայտն. 21-22): ՀԿ-ից ակնհայտ չէ, թե արդյոք ժամանակավոր թագավորությունն է անհրաժեշտ. իրականում Դանիել 7-ի Մեսիական թագավորությունը հավիտենական է, ոչ թե հազարամյա:

ՎԵՑԵՐՈՐԳ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (Քրիստոսի մոտալուտ վերադարձը ի հակադրություն ուշացած *Parousia*-ի)

Շատ հավատացյալների սովորեցրել են, որ Հիսուսը շուտով, հանկարծակի և անսպասելի գալու է (տես՝ Մատթ. 10:23; 24:27,34,44; Մարկ. 9:1; 13:30): Սակայն մինչև այժմ հավատացյալների յուրաքանչյուր սպասող սեչունդ սխալ է եղել: Հիսուսի վերադարձի շուտափույթ (անմիջապես) լինելը յուրաքանչյուր սերնդի խոստացված հզոր հույս է, սակայն իրականում է այն մի սերնդի է պատկանում (և դա հավանված սերունդն է): Հավատացյալները պետք է ապրեն այնպես, կարծես Նա վաղը գալու է, սակայն ծրագրել և գործադրեն Մեծ Հանձնարարությունը (տես՝ Մատթ. 28:19-20), եթե Նա ուշանում է:

Ավետարաններում որոշ հատվածներ (տես՝ Մարկ. 13:10; Դուկ. 17:2; 18:8) և 1 և 2 Թեսաղոնիկեցիները հիմնված են ուշացած Երկրորդ Գալստյան (*Parousia*) վրա: Կան որոշ պատմական իրադարձություններ, որոնք պետք է առաջին հերթին կատարվեն.

1. համաշխարհային ավետարանչություն (տես՝ Մատթ. 24:15; Մարկ. 13:10)

2. «Անիրավության մարդու» հայտնվելը (տես՝ Մատթ. 24:15; 2 Թեսաղ. 2; Հայտն. 13)

3. մեծ հալածանք (տես՝ Մատթ. 24:21,24; Հայտն. 13):

Այստեղ ամկա է դիտավորյալ անորոշություն (տես՝ Մատթ. 24:42-51; Մարկ. 13:32-36): Ապրե՛ք ամեն օր կարծես այն վերջինն է, բայց ծրագրե՛ք և սովորե՛ք հետագա ծառայության համար:

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆ

Պետք է ասել, որ էսկատոլոգիայի ժամանակակից մեկնաբանության տարբեր դպրոցներ բոլորն էլ պարունակում են կես ճշմարտությունները: Նրանք լավ են բացատրում և մեկնաբանում որոշ տեքստեր: Իսնդիրն ընկած է հետևողականության և հավասարակշռության մեջ: Հաճախ կան մի շարք ենթադրություններ, որոնք գործածում են աստվածաշնչյան տեքստը, որպեսզի լցնեն նախատեսված աստվածաբանական կմախքը: Աստվածաշունչը չի հայտնում տրամաբանական, ժամանակագրական, համակարգված էսկատոլոգիա: Այն նման է ընտանեկան արձմի: Պատկերները իրական են, սակայն ոչ միշտ իրենց հերթականությամբ, համատեքստի մեջ, տրամաբանական շարքով: Նկարներից ոմանք արբմից դուրս են ընկել և ընտանիքի անդամների հետագա սերունդները չգիտեն, թե որն է դրանց ճիշտ տեղը: Հայտնության մեկնաբանության բանալին բնագրի հեղինակի մտադրությունն է, ինչպես որ հայտնված է գրական ժանրի իր ընտրության մեջ: Շատ մեկնաբաններ փորձում են ՆԿ-յան մյուս ժանրերից կիրառել իրենց էզոթիկ գործիքներն ու ընթացակարգերը Հայտնության իրենց մեկնաբանության համար: Նրանք կենտրոնանում են ՀԿ-ի վրա, այն դեպքում, երբ պետք է թույլ տան Հիսուսի և Պողոսի ուսմունքներին դնելու աստվածաբանական կմախքը և ապա թույլ տան Հայտնությանը լուսաբանելու այն:

Ես պետք է ընդունեմ, որ այս մեկնաբանությանը մոտենում են որոշ չափով վախով ու անհանգստությամբ, ոչ թե Հայտն. 22:18-19-ում ամկա անեծքի պատճառով, այլ Աստծո ժողովրդի մեջ այս գրքի մեկնությունների պատճառով և դեռ պատճառող հակասության աստիճանի համար: Ես սիրում եմ Աստծո հայտնությունը: Ծիշտ է այն խոսքը, որ բոլոր մարդիկ ստախոս են (տես՝ Հռոմ . 3:4): Իսնդրում եմ այս մեկնաբանության գիրքը օգտագործեք որպես խորհելու առիթ տվող և ոչ թե վճռորոշ՝ վերջնական, որպես ճանապարհային ուղեցույց նշան և ոչ թե քարտեզ, որպես «խսկ եթե» և ոչ թե «այսպես է ասում Տերը»: Ես առերեսվել եմ ինքս իմ անպատեհության, հակումների և աստվածաբանական կողմնորոշումների հետ: Ես նաև դրանք ուրիշ մեկնաբանների մեջ եմ տեսել: Գրեթե միշտ թվացել է ինձ, որ մարդիկ Հայտնության մեջ գտնում են այն ակնկալում են գտնել: Ժանրը ինքնին շահարկվում է: Այնուհանդերձ այս գիրքը ինչ-որ նպատակով է հայտնվել Աստվածաշնչում: Ինչպես իր ամփոփիչ «խոսքն» է ասում դրա փոփոխությունը պատահական չի լինում: Այն Աստծուց պատգամ ունի Իր որդիների և բոլոր սերունդների համար: Աստված ուզում է, որ մենք հասկանանք: Եկեք ձեռք ձեռքի տանք և ոչ թե խմբավորումներ ստեղծենք. եկե՛ք հաստատենք այն, ինչ հստակ է և կարևոր, և ոչ թե այն ամենը ինչը կասկածելի է, հնարավոր է, կարող է ճիշտ է: Աստված մեզ բոլորիս օգնական:

Օգտագործեք այս բաց հատվածը նշելու ձեր սեփական ենթադրությունները, թե ինչպես կարելի է մեկնաբանել Հայտնության գիրքը: Մենք բոլորս ներկայացնում ենք մեր հակումները այս գրքի մեկնաբանության մեջ: Դրանց ճանաչումը օգնում է մեզ հաղթահարելու դրանց ազդեցությունը և սահմանափակումները մեր դոգմատիզմի վրա:

- 1.
- 2.
- 3.
- 4.

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

I. ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Իմ չափահաս ակադեմիական և աստվածաբանական կյանքի մեծ մասը ենթադրել եմ, որ Աստվածաշունչը պետք է ընդունել «բառացիորեն» (և, դա իհարկե ճիշտ է պատմական իրադարձության համար): Այնուամենայնիվ, ինձ համար ավելի ու ավելի ակնհայտ է դարձել, որ մարգարեությունը, պոեզիան, առակները և ապոկալիպտիկ գրականությունը բառացիորեն ընդունելը նշանակում է բաց թողնել ներշնչված տեքստի միտքը: Հեղինակի մտադրությունը Աստվածաշնչի ճիշտ ընկալման բանալին է: Աստվածաշնչի մեկնաբանության դեպքում, եթե արվում է այնպես, որ այն ավելի շատ (վարդապետական յուրահատկություն) բան ապի, նույնքան վտանգավոր է և մոլորեցնող, որքան մեկնաբանել այն այնպես, որ ավելի պակաս ապի, քան բնագրի ներշնչված հեղինակն էր մտադիր: Ուշադրության կենտրոնում պետք է լինի ավելի մեծ համատեքստը, պատմական տեղանքը և հեղինակի մտադրությունը՝ արտահայտված տեքստում և ժանրի ընտրությամբ: Ժանրը գրական պայմանագիր է հեղինակի և ընթերցողի միջև և սա հաշվի չառնելը անշուշտ հանգեցնում է սխալ մեկնաբանության:

Հայտնության գիրքը անկասկած ճիշտ է, բայց ոչ պատմական իրադարձություն, նախատեսված չէ բառացի ընդունելու համար: Այս առումով ժանրը այժի ընկնող է, եթե մենք միայն լսենք այն: Սա չի նշանակում, որ այն ներշնչված չէ, կամ ճիշտ չէ. դա պարզապես պատկերավոր, փոխաբերական, ծածում՝ հանելուկային, խորհրդանշական, այլաբանական և երևակայական է: Առաջին դարի հրեաները և քրիստոնյաները ծանոթ էին գրականության այս տեսակին, իսկ մենք՝ ոչ: Քրիստոնեական սիմվոլիզմը՝ «Մատանիների տիրակալը» կամ «Նարնիայի քրոնիկները», հնարավոր է, ժամանակակից գուգահեռներ են:

Բ. Հայտնությունը հատուկ հրեական գրական ապոկալիպտիկ ժանր է: Այն հաճախ օգտագործվում էր լարվածության մեջ գտնվող ժամանակներում (այսինքն, երբ Իսրայելի վրա տիրում էին հեթանոս ուժերը), համոզվելու համար, որ Աստված վերահսկում է պատմությունը և ազատագրելու է իր ժողովրդին: Գրականության այս տեսակը բնութագրվում է՝

1. Աստծո տիեզերական ինքնիշխանության ուժեղ զգացում (մոնոթեիզմ և դետերմինիզմ)
2. բարու և չարի պայքարը այս չար դարաշրջանի և գալիք արդարության ժամանակաշրջանի միջև (դուալիզմ)
3. ծածկագրերով բառերի կիրառությունը (սովորաբար Հին Կտակարանից կամ միջկտակարանյան հրեական ապոկալիպտիկ գրականությունից)
4. գույների, կենդանիների, երբեմն կենդանիների / մարդկանց օգտագործումը
5. հրեշտակային միջնորդության օգտագործումը տեսիլքների և երագների միջոցով, բայց սովորաբար, հրեշտակային մեկնաբանության միջոցով
6. հիմնականում կենտրոնանում է վերջին ժամանակի (նոր դարաշրջանի) շուտով եկող, կլիմատիկ իրադարձությունների վրա
7. հիմնված խորհրդանիշների, այլ ոչ թե իրականություն վրա, Աստծո վերջին ժամանակների պատգամը հաղորդելու համար
8. Այսպիսի ժանրի մի քանի օրինակներ են.

ա. Հին Կտակարան՝

(1) Եսայի 13-14; 24-27; 56-66

(2) Եզեկիել 1; 26-28; 33-48

(3) Դանիել 7-12

(4) Հովել 2: 28-3: 21

(5) Չաքարիա 1-6, 12-14

բ. Նոր Կտակարան՝

(1) Մատթեոս 24; Մարկոս 13; Դուկաս 21 և 1 Կորնթացիս 15 (որոշ առումով)

(2) 2 Թեսաղոնիկեցիս 2 (շատ ձևերով)

(3) Հայտնություն (գլուխ 4-22)

գ. Դանիել 7-12 և Հայտն. 4-22 Աստվածաշնչում այս ժանրի դասական օրինակներն են

9. անկանոն գրքեր (վերցված Դ.Ս. Ռասելը, Հրեական Ապոկալիպսիսի մեթոդը և ուղերձը /D. S. Russell, The Method and Message of Jewish Apocalyptic, էջ 37-38)
- ա. 1 Ենովք, 2 Ենովք (Ենովքի գաղտնիքները)
 - բ. Հոբեյարների գիրքը
 - գ. Սիրիլիանի քարոզները III, IV, V
 - դ. Տասներկու Նախահայրերի Կտակարանը
 - ե. Սողոմոնի Սաղմոսները
 - զ. Սովսեսի վերափոխումը
 - է. Եսայու նահատակությունը
 - ը. Սովսեսի վախճանը (Ադամի և Եվայի կյանքը)
 - թ. Աբրահամի ապոկալիպսիսը
 - ժ. Աբրահամի Կտակարանը
 - ի. II Եզրաս (IV Եզրաս)
 - լ. II և III Բարուք
10. Այս ժանրում կա դուալիզմի զգացողություն: Այն իրականությունը դիտարկում է որպես դուալիզմների, հակադրությունների կամ լարվածությունների մի շարք (որն այնքան բնորոշ է Հովհաննեսի գրքերին) հետևյալի միջև՝
- ա. երկինք ու երկիր
 - բ. չար դարաշրջանն (չար մարդիկ և չար հրեշտակները) ու արդարության նոր դարաշրջանը (աստվածավախ մարդիկ և աստվածավախ հրեշտակներ)
 - գ. ներկայիս գոյությունն ու ապագա գոյությունը
- Այս ամենը տանում է դեպի Աստծո կողմից նախասահմանված վախճանը: Սա այն աշխարհը չէ, որ Աստված կամենում էր լինել, բայց Նա շարունակում է պլանավորել, աշխատել և նախագծել Իր կամքը Եղեմի պարտեզում սկսված մտերմիկ փոխհարաբերության վերականգնման համար: Քրիստոսի դեպքը Աստծո ծրագրի ջրբաժանն է, սակայն երկու գալուստները բերում են ներկայիս դուալիզմին:

Գ. Այս ապոկալիպտիկ աշխատությունները երբեք բանավոր չեն ներկայացվել, դրանք միշտ գրավոր են եղել: Դրանք բարձրակարգ կառուցվածքով, գրական ստեղծագործություններ են: Կառուցվածքը կարևոր է ճիշտ՝ տեղին մեկնաբանության համար: Հայտնության գրքի նախատեսված կառուցվածքի հիմնական մասը յոթ գրական բաժիններն են, որոնք որոշակի չափով գուգահեռ են միմյանց (օրինակ, յոթ կնիքները, յոթ փողերը և յոթ սկավառակները): Յուրաքանչյուր փուլով դատաստանը մեծանում է. կնիքներով՝ 1/4 ոչնչացումը, փողերով՝ 1/3 ոչնչացումը, սկավառակներով՝ ամբողջական ոչնչացում: Յուրաքանչյուր գրական բաժնի մեջ Քրիստոսի Երկրորդ Գալստյան կամ ինչ-որ վախճանաբանական իրադարձություն է տեղի ունենում. (1) վեցերորդ կնիք, Հայտ. 6: 12-17; (2) յոթերորդ շեփոր, Հայտ. 11:15-18; վերջին ժամանակի հրեշտակի դատաստանը, Հայտ. 14: 14-20; (3) յոթերորդ սկավառակ, Հայտ. 16:17-21 և կրկին Հայտ. 19:11-21 և նորից Հայտ. 22: 6-16 (նաև ուշադրություն դարձրեք Աստծո համար եռապատիկ տիտղոսը՝ Հայտ. 1: 4 , 8 և Քրիստոսի համար՝ Հայտ. 1: 17,18-ում, «որ է, և որ էր, և որ գալու է», ուշադրություն դարձրեք, որ ապագայի կողմը բաց է թողնված՝ Հայտ 11:17 և Հայտ. 16: 5, ինչը նշանակում է, որ ապագան եկել է [այն է, երկրորդ գալուստը]): Սա ցույց է տալիս, որ գիրքը ժամանակագրական հերթականությամբ չէ, այլ մի շարք գործողություններում՝ դրամա, որը կանխատեսում է նույն ժամանակահատվածը՝ աստիճանաբար աստկացնելով Հին Կտակարանի դատաստանի հիմնական մտքերը (տես՝ Ջեյմս Բլեվինս, *Հայտնությունը որպես դրամա* և «Հայտնության ժանրը» *Վերանայում և վերլուծում*, Սեպտեմբեր 1980, էջ 393- 408/ James Blevins, *Revelation as Drama* and "The Genre of Revelation" in *Review and Expositor*):

Կան յոթ գրական բաժիններ, ինչպես նաև նախաբան և վերջաբան՝

1. նախաբան, 1: 1-8
2. գլուխներ 1-3 (Քրիստոսը և յոթ եկեղեցիները)
3. գլուխներ 4-8:1 (երկինքից և յոթ կնիքներ)
4. գլուխներ 8: 2-11 (յոթ հրեշտակները փողերով)
5. գլուխներ 12-14 (երկու համայնքներն ու նրանց ղեկավարները)
6. գլուխներ 15-16 (յոթ հրեշտակները սկավառակներով)

7. գլուխներ 17-19 (Բարեյոնը և նրա դատաստանը)
8. գլուխներ 20-22 (դատաստանը և նոր երկինք և նոր երկիր)
9. վերջաբան, 22: 6-21

Ուիլյամ Հենդրիքսենի *Ավելի քան նվաճողներ*/William Hendriksen's *More Than Conquerors*/, գրքի ուրվագիծն այս տեսքն ունի.

1. գլուխներ 1-3 (Քրիստոսը Յոթ Ճրագակալների միջև)
2. գլուխներ 4-7 (Յոթ կնիքներով Գիրքը)
3. գլուխներ 8-11 (դատաստանի յոթ փողերը)
4. գլուխներ 12-14 (վիշապի և իր գորքերի [Գազանը և Պոռնիկը] կողմից հալածվող կինը և արու գավակը)
5. գլուխներ 15-16 (բարկության յոթ սկավառակները)
6. գլուխներ 17-19 (Մեծ պոռնիկի և գազանների անկումը)
7. գլուխներ 20-22 (դատաստան վիշապի վրա (սատանան), որին հաջորդում է Նոր Երկինք ու Երկիրը, Նոր Երուսաղեմ), էջ 28:

Ավելի քան նվաճողներ գրքում, Ուիլյամ Հենդրիքսենն ասում է, որ Հայտնությունն ունի յոթ բաժին՝ Հայտն. 1-3; 4-7; 8-11; 12-14; 15-16; 20-22 և դրանցից յուրաքանչյուրը գուգահեռվում է և ընդգրկում Քրիստոսի առաջին և երկրորդ գալստյան ժամանակահատվածը: Յուրաքանչյուրն ավարտվում է որոշակի ասպեկտով՝ կապված դատաստանի և Երկրորդ Գալստյան հետ (էջ 22-31):

Չնայած որ ես անկասկած համաձայն եմ կնիքների, փողերի և սկավառակների դրամատիկ գուգահեռների հետ, և նաև ինձ շատ է գրավում այն, որ 17- 19 և 20- 22-ը գուգահեռներ են (կա երկրորդ գալուստ, Հայտ. 19: 11-21, իսկ մյուս երկրորդ գալուստը՝ Հայտ. 22: 6-15), ես չեմ կարող տեսնել, թե որտեղ է ավարտվում իր յոթ բաժիններից յուրաքանչյուրը Parousia- ում, հատկապես 1-3 գլուխները, եթե չկա դատաստանի մի ասպեկտ, որը դիտարկվում է որպես վախճանաբանական իրադարձություն (տես Հայտ. 2: 5, 7, 11, 16, 17, 25-26; 3: 5, 10, 12, 18-21): Այնուամենայնիվ, ինձ համար այս յոթ անգամյա վերանայումը դարձել է ավելի ու ավելի մեծ հնարավորություն՝ ամբողջ գրքում առկա գուգահեռների կառուցվածքը հասկանալու համար:

Գ. Այնհայտ է, որ «յոթ» թիվը մեծ մաս է կազմում գրքի կառուցվածքում, որը կարելի է տեսնել յոթ եկեղեցիներից, յոթ կնիքներից, յոթ փողերից և յոթ սկավառակներից: Մի քանի այլ «յոթի» օրինակներ են.

1. 7 օրհնությունները, Հայտ. 1:3; 14:13; 16:15; 19:9; 20:6; 22: 7,14
2. 7 ճրագակալները, Հայտ. 1:12
3. 7 Աստծո հոգիները, Հայտ. 1:4; 3:1; 4:5; 5:6
4. 7 աստղերը, Հայտ. 1:16,20; 2:1
5. 7 դամբարներ/կրակե լույսեր, Հայտ. 4: 5
6. 7 կնիքներ գրքի վրա, Հայտ. 5:1
7. 7 եղջյուրներ, գառան 7 աչքեր, Հայտ. 5:6
8. 7 հատկանիշները Հիսուսի գովաբանվում են, Հայտ. 5:12
9. 7 նշանները բնության մեջ, Հայտ. 6:12-14
10. 7 մարդկանց տեսակները, Հայտ. 6:15
11. 7 հատկանիշները Աստծո գովաբանվում են, Հայտ. 7:12
12. 7 հրեշտակները Աստծո առաջ, Հայտ. 8:2,6
13. 7 փողերը, որոնք հնչեցվում են յոթ հրեշտակների կողմից, Հայտ. 8:6 (15:1,6,7,8; 17:1; 21:9)
14. 7 նշանները, Հայտ. 12:1,3; 13:13,14; 15:1; 16:14; 19:20
15. 7 գլուխները, կարմիր վիշապի 7 թագերը, Հայտ. 12:3
16. 7 գլուխները ծովային գազանի, Հայտ. 13:1; 17:3,7
17. 7 հրեշտակները, Հայտ. 14:6-20
18. 7 պատուհասները, Հայտ. 15:1; 21:9
19. 7 բլուրները, Հայտ. 17:9
20. 7 թագավորները, Հայտ. 17:10
21. 7 բաներ, որոնք այլևս չեն հանդիպում 21-22 գլուխներում (Հայտ. 21: 1,4 (չորս անգամ), Հայտ. 21:25; 22:3)

- Ե. Այս գրքի մեկնաբանությունը ամենաշատն է ենթարկվում աստվածաբանական կողմնակալության: Մեկի ենթադրությունները տանում են անհասկանալի մանրամասների մեկնության: Այդ աստվածաբանական ենթադրությունները գործում են մի քանի մակարդակով՝
1. խորհրդանիշերի ծագումը՝
 - ա. Հին Կտակարանի ենթադրությունները
 - (1) Հին Կտակարանի թեմաները, ինչպիսիք են արարչագործությունը, անկումը, ջրհեղեղը, ելիցը, վերականգնված Երուսաղեմը
 - (2) հարյուրավոր ակնարկներ (ոչ ուղղակի մեջբերումներ) Հին Կտակարանի մարգարեներից
 - բ. միջկտակարանյան հրեական գրականությունը (I Ենոք, II Բարուք, Սիբիլիինի քարոզները, II Եզրաս)
 - գ. առաջին դարի հունա-հռոմեական աշխարհը
 - դ. հնագույն Մերձավոր Արևելքի տիեզերական-ստեղծագործության պատմությունները (հատկապես Հայտ. 12)
 2. գրքի ժամանակաշրջանը՝
 - ա. առաջին դարը
 - բ. յուրաքանչյուր դարը
 - գ. վերջին սերունդը
 3. սիստեմատիկ աստվածաբանական գոտիներ՝
 - ա. Պրետերիստ/ preterist
 - բ. Հիստորիցիստ/ historicist
 - գ. Ֆուտուրիստ/ futurist
 - դ. իդեալիստ /idealist
 4. 20-րդ գլխի աստվածաբանական դիրքորոշումները՝
 - ա. հազարամյա
 - բ. հետ հազարամյա
 - գ. նախահազարամյա
 - դ. դիսպենսացիոնալ նախահազարամյա

Հերմինևտիկական տարածայնությունների (մեկնաբանման տարբեր մոտեցումները) և անհամապատասխան դոգմատիզմի («իմանալ ամեն ինչ» վերաբերմունքը) լույսի ներքո, ինչպես պետք է մեկնաբանը շարունակի առաջ գնալ՝

 1. եկեք ընդունենք, որ ժամանակակից արևմտյան քրիստոնյաները չեն հասկանում ժանրը և չեն ճանաչում պատմական իրողությունները, որոնք անմիջապես կհասկանալին առաջին դարի քրիստոնյաները:
 2. եկեք խոստովանենք, որ քրիստոնյաների յուրաքանչյուր սերունդ Հայտնությունը բերում է իր անձնական պատմության մեջ և մինչ այժմ բոլորը սխալվել են:
 3. Նախքան աստվածաբանական համակարգեր կարդալը, եկեք կարդանք Աստվածաշունչը: Նայեք յուրաքանչյուր տեսիլքի/պատգամի գրական համատեքստին և նշեք կենտրոնական ճշմարտությունը պատմողական մի նախադասությամբ: Կենտրոնական ճշմարտությունը նույնն է լինելու հավատացյալների յուրաքանչյուր սերնդի համար, իսկ մանրամասների առանձնահատկությունը կարող է համապատասխանել միայն հավատացյալների առաջին և / կամ վերջին սերնդի համար: Մանրամասները կարող են համապատասխանել, բայց միայն պատմությունը, այլ ոչ թե աստվածաբանությունը, կբացահայտի դրանց իրականացումը:
 4. Հիշենք, որ այս գիրքը առաջին հերթին մխիթարության և խրախուսանքի խոսք է հավատարմության մասին՝ անհավատների կողմից հավատացյալների հպաժանքների մեջ: Այս գիրքը նպատակ չի հետապնդում պատասխանել հավատացյալների յուրաքանչյուր սերնդի հետաքրքրասիրությանը, ոչ էլ վերջին ժամանակների իրադարձությունների մանրամասն ծրագրի ուրվագիծն է:
 5. Հեշտ է հաստատել, որ ընկած մարդկային հասարակությունը գտնվում է Աստծո թագավորության հետ բախման փուլում: Սկզբում կթվա, թե աշխարհը հաղթել է (ինչպես Գողգոթան), բայց սպասեք. Աստված ինքնիշխան է, Նա վերահսկում է պատմությունը, կյանքը և մահը: Նրա ժողովուրդը հաղթական է Իրենով:

2. Չնայած մեկնաբանության դժվարությանը և երկիմաստությանը, այս գիրքն ունի պատգամ և Աստծո կողմից ներշնչված խոսքն է ուղղված Իր Ժողովրդին՝ բոլոր ժամանակներում: Այս եզակի գիրքը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ջանք: Նոր Կտակարանի կանոնում նրա ռազմավարական դիրքորոշումը խոսում է իր կարևորագույն պատգամի մասին: Ալեն Չոնսոնի, «*Վերլուծարանի Աստվածաշնչյան Մեկնաբանություն*», հատոր 12/ Alan Johnson, *The Expositor's Bible Commentary*, vol. 12/, ասում է. «Իրոք, կարող է լինել, որ Ավետարաններից բացի, Ապոկալիպսիսը պարունակում է ամենախորը և շարժիչ ուսմունքը քրիստոնեական վարդապետության և աշակերտության մասին, որոնք առկա են Սուրբ Գրքում: Ո՛չ ոմանց ֆանատիզմը, ովքեր իրենց ուշադրությունը կենտրոնացրել են մարգարեության վրա, այլ ոչ թե Քրիստոսի, ո՛չ էլ մեկնաբանական տեսակետների բազմազանությունը չպետք է վիատեցնեն մեզ այս հրաշալի գրքում քրիստոնեական ճշմարտությանը հետամուտ լինելուց» (էջ 399):

Հիշե՛ք, դրանք իսկապես Հիսուսի վերջին խոսքերն են Իր Եկեղեցուն: Ժամանակակից Եկեղեցին չպետք է համարձակվի անտեսել կամ ցածրացնել դրանք: Նրանք պետք է պատրաստեն հավատացյալներին հավաճանքների և հակամարտությունների Աստծո ամենակալության (մոնոթեիզմի), չարի իրականության (սահմանափակ դուալիզմի), անկման շարունակական արդյունքների (մարդու ապստամբությունը) և մարդկության փրկության Աստծո խոստումների լույսի ներքո (անպայմանական ուխտ, տես՝ Ծննդ. 3:15; 12:1-3; Ելից 19:5-6; Հովի. 3:16; 2 Կոր. 5:21):

II. ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Հովհաննես Առաքյալի հեղինակության մասին ներքին վկայությունը.

1. Հեղինակն ինքն իրեն անվանել է Հովհաննես չորս անգամ (տես Հայտ. 1: 1, 4, 9; 22: 8)
2. Նա նաև իրեն կոչել է
 - ա. ծառա (տես Հայտ. 1:1; 22:6)
 - բ. եղբայր և հավասար ընկեր նեղության մեջ (տես Հայտ. 1:9)
 - գ. մարգարե (տես Հայտ. 22:9) և իր գիրքը կոչեց մարգարեություն (տես Հայտ. 1:3; 22:7,10,18,19)
3. Նա գիտի Հին Կտակարանը (չի օգտագործում LXX- ը, այլ Թարգումը), ինչպես նաև Խորանի և Ժողովարանի ընթացակարգերը:

Բ. Հովհաննես Առաքյալի հեղինակության մասին վաղ Քրիստոնյա հեղինակների արտաքին վկայությունը

1. Հովհաննես Առաքյալը, Չերեղետոսի որդին
 - ա. Չասթին Մարթիրը (Հռոմ մ. թ. 110-165թթ.) *Dialogue with Trypho* 81.4
 - բ. Իրենեուսը (Լիոնս մ. թ. 120-202թթ.) *Against Heresies* IV.14.2; 17.6; 21.3; V.16.1; 28.2; 30.3; 34.6; 35.2
 - գ. Տերտուղիանոսը (Հյուսիսային Աֆրիկա մ. թ. 145-220թթ.) *Against Praxeas* 27
 - դ. Որոգինեսը (Ալեքսանդրիա 181-252թթ.)
 - (1) *Հոգու վրա* /On the Soul, L:8:1/
 - (2) *Մարկիոնին դեմ* /Against Marcion, II:5/
 - (3) *Հերետիկոսներին դեմ* /Against Heretics, III:14, 25/
 - (4) *Ցելցիոսին դեմ* /Against Celsus, VI:6, 32; VIII:17/
- ե. Սուրատորիան Կանոնը (Հռոմ 180-200թթ.)

2. Այլ թեկնածուներ

- ա. Հովհաննես Մարկոսը - այս մասին առաջին անգամ նշվեց Ալեքսանդրիայի եպիսկոպոս Դիոնիսիոսի կողմից (247-264թթ.), որը ժխտեց Հովհաննես առաքյալի հեղինակությունը, սակայն շարունակում էր աշխատանքը համարել կանոնական: Նա հիմնավորեց, թե ինչու է հերքում բառապաշարն ու ոճը, ինչպես նաև Հովհաննեսի այլ գրքերի անանուն բնույթը: Նա համոզեց Կեսարիայի Եվսեբիոսին:

- բ. Հովհաննես երեցը - Սա վերցված է Պապիասից՝ Եվսեբիոսի մեջբերմամբ (Eccl. His. 3.39.1-7): Սակայն Պապիասի մեջբերումը, հավանաբար, օգտագործել է այս տիտղոսը Հովհաննես Առաքյալի համար, այլ ոչ թե նրա հեղինակությունը հաստատելու:
- գ. Հովհաննես Մկրտիչը (հետագա խմբագրական հավելումներով), որն առաջարկվում է Ջ. Մասսինգրեթի Ֆորդի կողմից Անկոր Աստվածաշնչյան մեկնաբանության մեջ, որը հիմնականում հիմնված է Հովհաննես Մկրտչի Հիսուսին «գառ» անվանելու վրա: Այս տիտղոսը մեկ ուրիշ տեղ նշվում է Հայտնության գրքում:
- Գ. Դիոնիսիոսը՝ Ալեքսանդրիայի եպիսկոպոսը (247-264թթ.) և Որոզինեսի աշակերտը, առաջինն էր կասկածներ արտահայտել (նրա գիրքը կորել է, բայց մեջբերվում է Կեսարիայի Եվսեբիոսի կողմից, որը համաձայնել էր նրա հետ), Հովհաննես Առաքյալի հեղինակային իրավունքի վերաբերյալ, ըստ հետևյալ հիմնավորումների՝
1. Հովհաննես Առաքյալը նկատի չի ունենում իրեն ո՛չ Հովհաննես Ավետարանում, ո՛չ էլ իր նամակների մեջ, բայց Հայտնությունը «Հովհաննեսին» է,
 2. Հայտնության կառուցվածքը տարբերվում է Ավետարանից և նամակներից
 3. Հայտնության բառապաշարը տարբերվում է Ավետարանից և նամակներից
 4. Հայտնության քերականական ոճը որակապես տարբերվում է Ավետարանից և նամակներից
- Դ. Հավանաբար, Հովհաննես Առաքյալի հեղինակության շուրջ ժամանակակից ամենալուրջ քննարկումը գտնվում է Ռ. Հ. Չարլզի *Սուրբ Հովհաննես* գրքում /R. H. Charles *Saint John*, Vol. I p. xxxixff/:
- Ե. Մերօրյա գիտնականների մեծամասնությունը հերքել է Նոր Կտակարանի բազմաթիվ գրքերի ավանդական հեղինակությունը: Հայտնության հեղինակության հետ կապված այս միտման լավ օրինակ կարող է լինել Ռայմոնդ Ե. Բրաունը՝ հայտնի կաթոլիկ Հովհաննեսյան գիտնական: «Անկոր Աստվածաշնչի մեկնաբանություն» շարքի ներածական հատվածը գրում է. «գրված է Հովհաննես անունով մի հրեա քրիստոնյա մարգարեի կողմից, որը ո՛չ Չեբեդեոսի որդին էր, ո՛չ էլ Հովհաննես Ավետարանի կամ նամակների գրողը» (էջ 774):
- Զ. Շատ առումներով հեղինակությունն անորոշ է: Գոյություն ունեն գարմանալի զուգահեռներ Հովհաննեսի մյուս գրվածքների հետ, ինչպես նաև գարմանալի տարբերություններ: Այս գիրքը հասկանալու բանալին ոչ թե մարդկային հեղինակի մեջ է, այլ նրա Աստվածային հեղինակի: Հեղինակն իրեն համարում էր ներշնչված մարգարե (տես 1:3; 22:7,10, 18, 19):

III. ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Սա իհարկե լիովին կապված է հեղինակության և մեկնաբանական տեսանկյան հետ (տես Պատմական տեսություններ, Գ.)
- Բ. Մի քանի հավանական տարեթվեր՝
1. Ավանդական տարեթիվը Դոմիթիանի թագավորության օրոք (մ. թ. 81-96թթ.) է, քանի որ այն համապատասխանում է հայաժանքների ներքին վկայությանը
 - ա. Իրենեոսը (մեջբերում Եվսեբիոսի կողմից) *Հերձվածողությունների դեմ* գրքում /Irenaeus *Against Heresies*/, 5.30.3 ասում է՝ «Դա երևում է ոչ վաղ անցյալում, գրեթե մեր սերնդի մեջ, Դոմիթիանի թագավորության օրոք»:
 - բ. Կլեմենտ Ալեքսանդրիացին
 - գ. Որոզինես Ալեքսանդրիացին
 - դ. Կեսարիայի Եվսեբիոսը, *Church History*, iii.23.1
 - ե. Վիկտորինուս, *Apocalypse* x.11
 - զ. Ջերոմը
 2. Երրորդ դարի գրող Էպիֆանեսը, *Haer*, 51.12, 32, ասում է, որ Հովհաննեսը գրել է Պատմության ազատվելուց հետո, որը Կլավդիոսի օրոք էր (մ. թ. 41-54թթ.):
 3. Ոմանք կարծում էին, որ դա Ներոնի թագավորության ժամանակ էր (մ. թ. 54-68թթ.),
 - ա. Կայսրի կողմից աղանդներին հայաժելու ակնհայտ ֆոնի պատճառով
 - բ. Երբայրենով Ներոն Կայսր գրվածքը հավասար է գազանի թվին, 666

- գ. Եթե նախատիպերը ճիշտ են, որ Հովհաննեսի Հայտնությունը վերաբերում է Երուսաղեմի կործանմանը, ապա գիրքը մարգարեություն լինելու համար, այն պետք է գրված լինի մինչև մ. թ. 70թ:

IV. ԱՏԱՑՈՂՆԵՐԸ

- Ա. Հայտ.1:4-ից ակնհայտ է, որ բնօրինակը ստացողները Ասիայի հռոմեական նահանգի յոթ եկեղեցիներն էին: Այս եկեղեցիները նշված են այնպիսի հերթականությամբ, որ կարծես թե ցույց է տալիս նամակը տանողի երթուղին:
- Բ. Հայտնության ուղերձը միանշանակ վերաբերում է բոլոր եկեղեցիներին և հավատացյալներին, ովքեր մեղավոր աշխարհի համակարգի կողմից հալածվում էին:
- Գ. Որպես Նոր Կտակարանի կանոնական եզրակացություն, այս գիրքը հանդիսանում է բոլոր ժամանակների բոլոր հավատացյալների ուղերձը:

V. ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

- Ա. Իրավիճակը հալածանքն էր, որը պայմանավորված էր տեղական եկեղեցիների բաժանմամբ Հռոմի իրավական պաշտպանության ներքո գտնվող հուդայականությունից: Այս բաժանումը պաշտոնապես տեղի ունեցավ մ. թ. 70թ, երբ Ջամնիայի ռաբբիները ստեղծեցին երդման բանաձև, որով պահանջում էին տեղական ժողովարանների անդամներին հայիոյել Հիսուս Նագովրեցուն:
- Բ. Հռոմեական փաստաթղթերը ցույց են տալիս, որ կայսրի երկրպագությունը դարձավ հիմնական բախումը եկեղեցու հետ Ներոնի (մ. թ. 54-68թթ.) տիրապետությունից մինչև Դոմիթիանի գահակալությունը (մ. թ. 81-96թթ.): Սակայն կայսրության տարածքով պաշտոնապես մեծածավալ հալածանքի վերաբերյալ փաստաթղթեր չկան: Ըստ երևույթին Հայտնությունը արտացոլում էր տեղական կայսրի պաշտամունքի մեծամտությունը Հռոմեական կայսրության Արևելյան նահանգներում (տես՝ «Աստվածաշնչյան հնագիտական տեսություն», մայիս / հունիս 1993/ "Biblical Archaeology Review," May/June 1993/, էջ 29-37):

VI. ՇԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

- Ա. Հունարեն տեքստում կան բազմաթիվ քերականական խնդիրներ:
- Բ. Այս խնդիրների մի քանի հավանական պատճառները
 1. Հովհաննեսի արամերեն մտածելակերպը
 2. Նա Պատմոսում ոչ մի դպիր չունեք գրելու համար
 3. Տեսիլքների ոգևորությունը հուզիչ էր
 4. Դրանք նպատակային են արդյունքի համար
 5. Ժանրը (ապոկալիպտիկ) շատ այլաբանական էր
- Գ. Նմանատիպ քերականական առանձնահատկություններ կարելի է գտնել այլ հրեական ապոկալիպտիկ գրվածքներում: Հետևաբար, Հայտնությունը գրված չէ վատ քերականական ոճի մեջ, այլ քերականական բացառիկ ժանրում:

VII. ԿԱՆՈՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- Ա. Սկզբում այն մերժվեց Արևելյան Եկեղեցու կողմից: Գիրքը չկա Փեշիթայում (5-րդ դարի Սիրիակ տարբերակը):
- Բ. Չորրորդ դարի սկզբին Եվսեբիոսը, հետևելով երրորդ դարի վերջին Դիոնիսիոս Ալեքսանդրիացուն, ասաց, որ Հայտնությունը չի գրվել Հովհաննես Առաքյալի կողմից: Նա դասել է այն «վիճելի» գրքերի շարքին, սակայն ընդգրկել է իր կանոնական ցանկում (տես՝ *Ecclesiastical History*, III.24.18; III.25.4 and III.39.6):

- Գ. Լավոդիկեի Խորհուրդը (մոտ մ.թ. 360թ.) այն չներառեց կանոնական գրքերի ցանկում: Ձեռոմը դա մերժեց որպես կանոնավոր գիրք, սակայն Կարթագենի խորհուրդը՝ (մ.թ. 397թ.) ընդունեց: Հայտնությունը ընդունվել է արևելյան և արևմտյան եկեղեցիների միջև փոխզիջման շնորհիվ, որից հետո Եբրայեցիների և Հայտնության գրքերը ընդունվեցին Նոր Կտակարանի կանոնի մեջ:
- Դ. Մենք պետք է ընդունենք, որ հավատացյալների հավատքի ենթադրությունն է, որ Սուրբ Հոգին է ղեկավարում քրիստոնեական կանոնի ձևավորման պատմական գործընթացը:
- Ե. Բողոքական բարեփոխումների առաջին երկու հիմնական աստվածաբանները մերժեցին դրա տեղը քրիստոնեական վարդապետության մեջ՝
1. Մարտին Լյութերն այն համարել է ոչ մարգարեական, ոչ էլ առաքելական, ըստ էության, մերժել է գրքի ներշնչանքը:
 2. Ջոն Կալվինը, ով մեկնաբանություն է գրել Նոր Կտակարանի յուրաքանչյուր գրքի վերաբերյալ, բացառությամբ Հայտնության, մերժում է դրա արդիականությունը:

VIII. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Դժվար է եղել մեկնաբանել, հետևաբար, դոգմատիզմն անտեղին է:

Բ. Միմվոլները վերցված են

1. Հին Կտակարանի ապոկալիպտիկ հատվածներից՝
 - ա. Դանիել
 - բ. Եզեկիել
 - գ. Չաքարիա
 - դ. Եսայի
2. միջկտակարանյան հրեական ապոկալիպտիկ գրականությունից՝
3. առաջին դարի հունա-հռոմեական պատմական միջավայրից (հատկապես՝ Հայտն. 17)
4. Հնագույն Մերձավոր Արևելքի դիցաբանական աշխատությունների պատմություններից (հատկապես՝ Հայտն. 12)

Գ. Ընդհանուր առմամբ կան չորս մեկնաբանական գոտիներ կամ ենթադրություններ՝

1. ՊՐԵՏԵՐԻՍՍ - այս խումբը գիրքը դիտարկում է հիմնականում կամ բացառապես կապված Ասիայի հռոմեական նահանգի առաջին դարի եկեղեցիների հետ: Բոլոր մանրամասներն ու մարգարեությունները կատարվել են առաջին դարում:
 2. ՀԻՍՏՈՐԻՑԻՍՍ - այս խումբը գիրքը դիտարկում է որպես պատմության վերանայում՝ հիմնականում Արևմուտքի քաղաքակրթության և ինչ-որ իմաստով Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու: Հաճախ 2 և 3 գլուխների յոթ եկեղեցիների նամակները օգտագործվում են որպես որոշակի ժամանակաշրջանի նկարագրություն: Ոմանք սրանք դիտարկում են որպես ժամանակի մեջ միևնույն հատվածում, իսկ ոմանք էլ՝ որպես ժամանակագրորեն հերթականությամբ:
 3. ՖՈՒՏՈՒՐԻՍՍ - այս խումբը գիրքը դիտարկում է որպես Parousia -ին (Քրիստոսի Երկրորդ Գալուստը) նախորդող և հաջորդող իրադարձություններին վերաբերող, որոնք բառացիորեն և պատմականորեն տեղի կունենան:
 4. ԻԴԵԱԼԻՍՍ - այս խումբը գիրքը դիտարկում է բարու և չարի պայքարի վերաբերյալ բոլորովին խորհրդանշական իմաստով, որը չունի պատմական հղումներ:
- Այս բոլորն ունեն որոշակի վավերականություն, բայց դրանք բաց են թողնում Հովհաննեսի ժանրի և պատկերների միտումնավոր երկակիության ընտրությունը: Իսնդիորը հավասարակշռությունն է, այլ ոչ թե այն, թե որն է ճիշտ:

IX. ԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ա. Հայտնության նպատակն է ցույց տալ Աստծո գերիշխանությունը պատմության մեջ և բոլոր բաների խոստման գազաթնակետը Նրանում: Հավատարիմները պետք է ապրեն հավատքով և հույսով՝ այս ընկած աշխարհի համակարգի հալածանքների և ագրեսիայի մեջ: Գրքի ուշադրության կենտրոնը առաջին դարի և յուրաքանչյուր դարի հավատացյալների հալածանքն է (արևելյան նահանգներում կայսրի պաշտամունքը) և հավատարմությունը (կեղծ ուսուցիչները և մշակութային փոխզիջումը) (տես 2:10): Հիշեք, որ մարգարեները խոսում էին

ապագայի մասին՝ ջանք ներդնելով բարեփոխելու ներկան: Հայտնությունը ոչ միայն այն մասին է, թե ինչպես է ավարտվելու, այլ ինչպես է այն ընթանում: Իր հոդվածում, *Քարոզչի Աստվածաշնչյան Մեկնություն*, հատոր 1, վերնագրված «*Աստվածաշնչյան Էսկատոլոգիա*», Ռոբերտ L. Սենսին, /*The Expositors Bible Commentary, Vol. I* entitled, "*The Eschatology of the Bible*," Robert L. Sancy/ ասել է. «աստվածաշնչյան մարգարեները հիմնականում չէին մտահոգվում գալիք իրադարձությունների ժամանակի և ժամանակագրական ձևակերպման մասին: Նրանց համար կարևոր էր իրենց ժամանակակիցների հոգևոր վիճակը և Աստծո հրաշալի Էսկատոլոգիական այցելությունը անարդարության դատաստանի համար, իսկ աստվածապաշտների օրհնությունը ներդրված է ներկայում բարոյական ազդեցություն թողնելու համար» (էջ 104):

Բ. Ընդհանուր նպատակն ամփոփված է TEV և NJB թարգմանությունների համառոտ ներածության մեջ՝

1. TEV, էջ 1122, «Հովհաննեսի Հայտնությունը գրվել է այն ժամանակ, երբ քրիստոնյաները հալածվում էին Հիսուս Քրիստոսին որպես Տեր ընդունելու իրենց հավատքի համար: Գրողի հիմնական մտահոգությունն այն էր, որ իր ընթերցողներին հույս տա և քաջալերի՝ կոչ անելով նրանց հավատարիմ մնալու տառապանքի և հալածանքի ժամանակներում»:
2. NJB, էջ 1416, «Աստվածաշունչը ամփոփվում է հույսի ուղերձի և այս գրքի հարուստ սիմվոլիզմի մեջ: Սա փորձություններից փրկելու տեսիլք է, որոնք շրջապատում են Աստծո ժողովրդին, և փառահեղ ապագայի խոստում: Պատգամը արտահայտվում է պատկերների միջոցով, որոնք նկարագրում են ամբողջ Աստվածաշունչը այնպես, որ յուրաքանչյուր կերպար, կենդանիներ, գույներ, թվեր, հիշարժան է ընթերցողի համար Հին Կտակարանյան հնչերանգներով: Այս առումով այն գաղտնի և ակնարկող հայտնություն է գալիք բաների վերաբերյալ, չնայած պաշտամունքի մեծ արարողության բնական սիմվոլիզմը և նոր Սուրբ Քաղաքի Մեսիայի փառքի վերջին տեսիլքը բավականին հստակ է: Դանիելից սկսած հուդայականության մեջ նմանատիպ գրելատոնի ավանդույթ է եղել, որպեսզի Աստծո ժողովրդին հալածանքների մեջ գորացնի՝ վերջնական ազատագրման և հաղթանակի երաշխավորությամբ»:

Գ. Կարևոր է, որ մեկնաբանը առաջնահերթությունը տա փրկության թեմային

1. Աստված Քրիստոսով բերել է անհատական, միասնական և տիեզերական փրկություն:
2. Աստծո փրկագնումը հոգևոր է և ֆիզիկական: Եկեղեցին փրկված է, բայց ոչ անվտանգ: Մի օր կլինի այդպիսին:
3. Աստված դեռ սիրում է ընկած, ապստամբ, եսասեր մարդկությանը: Նրա բարկությունը կնիքների և փողերի մեջ փրկության համար է (9:20-21; 14:6-7; 16:9,11; 21:7; 22:17):
4. Աստված ոչ միայն վերականգնում է ընկած մարդկությանը, այլ նաև ընկած ստեղծագործությանը (տես՝ Հռոմ. 8:18-25): Յուրաքանչյուր փուլում չարը սրբվելու է:
 Աստծո հերթական փորձը Ավետարանի միջոցով ձեռք մեկնելու կորած մարդկությանը, մեծարում է Աստծո ողորմած բնավորությունը: Սկավառակների դատաստանները ըմբոստ չարի արդյունք են, այլ ոչ թե չսիրող Աստծո: Աստված միայն դատում է և մեկուսացնում է չարը, երբ կրկին ու կրկին մերժում է ապաշխարել: Շատ դեպքերում գիրքը արդարացնում է Աստծո դատավճիռը՝ ընկած, անհաշտ մարդկության վրա: Գիրքն ավարտվում է ավետարանի կոչով (տես՝ 22:17):

Դ. Այս գիրքը չպետք է դիտարկվի որպես իրադարձությունների, ժամանակների և Երկրորդ Գալստյան դեպքերի, ձևի, ժամանակագրության սանդղակ: Արևմտյան պատմության մեջ այն հաճախ մեկնաբանվել է որպես «գաղտնիք» (յոթ եկեղեցիները, որպես ժամանակաշրջան): Յուրաքանչյուր սերունդ իր պատմությունները պարտադրեց ապոկալիպտիկ խորհրդանիշների մեջ. մինչ այժմ բոլորն էլ սխալվել են: Այս մարգարեությունների մանրամասները ավելի ակնհայտ կլինեն Հակաքրիստոսի պատճառով տառապող հավատացյալների վերջին սերնդի համար (տես՝ 2 Թես. 2): Բառացի մեկնաբանությունը պատճառ է հանդիսացել, որ այս գիրքը անտեսվի ոմանց կողմից (Կավվին), ուրիշների կողմից արժեզրկվի (Լյուդեր, «ոչ առաքելական, ոչ մարգարեական»), իսկ մյուսների կողմից էլ չափից շատ ընդգծվի (հազարամյակի կողմնակիցները):

X. ԲՈՒԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Ա. Մենք պետք է հաշվի առնենք ՀԿ-ի կարծիքը՝

1. Հին Կտակարանյան ապոկալիպտիկ ժանրը բարձր խորհրդանշական գրական տեսակ է:
2. Բազմաթիվ մեջբերումներ են կատարվել ՀԿ-ից (ոմանք հաշվարկում են, որ 404 համարներից 275 ՀԿ-յան մեջբերումներ են). այս խորհրդանիշների իմաստը վերահաստատվել է առաջին դարի Հռոմում տիրող իրավիճակից ելնելով:
3. Մարգարեական նախանշանը վերցնում է ընթացիկ իրադարձությունները՝ ցույց տալով վախճանաբանական իրադարձությունները: Հաճախ այդ առաջին դարի պատմական դեպքերը մատնանշում են վերջին ժամանակի պատմական իրականացումները:

Բ. Գրքի ընդհանուր կառուցվածքը օգնում է մեզ տեսնել հեղինակի նպատակը՝

1. Կնիքները, փողերը և սկավառակները հիմնականում վերաբերում են նույն ժամանակահատվածին (6-16 գլուխները): Հայտնությունը դրամա է հաջորդական գործողություններով:
2. Հնարավոր է, որ 17-19 գլուխները գուգահեռ են 20-22-ին: 19-րդ գլխի մասերը (այսինքն՝ 19:11-21) ամփոփվում են 20:7-10-ում:
3. Տես՝ Բացման Խոսք, Գ. կետի յոթ գրական բաժինները:

Գ. Պատմական համատեքստը պետք է հաշվի առնել գրքի ցանկացած մեկնաբանության մեջ

1. Կայսրի պաշտամունքի առկայությունը
2. Տեղական հալածանքները Արևելյան մարզերում
3. Աստվածաշունչը չի կարող նշանակել այն, ինչը երբեք նկատի չի ունեցել: Հայտնության մեկնաբանությունը պետք է առաջին հերթին վերաբերի Հովհաննեսի օրերին: Այն կարող է ունենալ բազմակի իրականացումներ կամ կիրառումներ, սակայն դրանք պետք է հիմնավորվեն առաջին դարի միջավայրում:

Դ. Որոշ գաղտնի տերմիններ մեր մշակութային, լեզվական և գոյաբանական միջավայրի պատճառով կորցրել են իրենց նշանակությունը: Հնարավոր է վերջին ժամանակների իրադարձություններն իրենք լույս կգցեն այս խորհրդանիշների պատշաճ մեկնության վրա: Զգուշացե՛ք չպարտադրել այս ապոկալիպտիկ դրամայի բոլոր մանրամասները: Ժամանակակից մեկնաբանները պետք է փնտրեն գլխավոր ճշմարտությունը ամեն մի տեսիլքի մեջ:

Ե. Եկեք ամփոփենք մեկնաբանության մի քանի կարևոր տարրեր՝

1. Միմվոլիզմի պատմական ծագումը
 - ա. Հին Կտակարանի թեմաները, Հին Կտակարանից մեջբերումները
 - բ. Հնագույն Մերձավոր Արևելքի դիցաբանությունը
 - գ. Միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականությունը
 - դ. Հունա-հռոմեական առաջին դարի միջավայրը
2. Հեղինակն ինքն է սահմանում իր սիմվոլիզմը
 - ա. Երկխոսություններ առաջնորդող հրեշտակների հետ
 - բ. Երկնային երգչախմբերի օրհներգը
 - գ. Հեղինակն ինքն է սահմանում նշանակությունը
3. Գրքի կառուցվածքը (դրամատիկ գուգահեռականություն)

Զ. Լրացուցիչ օգնություն

1. Հայտնության Գրքի իմ երկու սիրված մեկնաբաններն են Ջորջ Էլդոն Լադը և Ալեն Ֆ. Չոնսոնը: Նրանք համաձայն չեն իրար հետ: Այնքան անհամաձայնություն կա աստվածավախ, կրթված, անկեղծ աստվածաբան գիտնականների միջև, որ զգուշության խոսքը տեղին է: Թույլ տվեք մեջբերել Ալեն Չոնսոնի Չոնդերվանի հրատարակած Հայտնության մեկնաբանությունից մի հատված. «Հաշվի առնելով պատկերների և տեսիլքների մանրակրկիտ կիրառությունը Հայտ. 4: 1-ից մինչև Հայտնության վերջ և այն հարցը, թե ինչպես է այս նյութը վերաբերում 1-3-րդ գլուխներին, զարմանալի չէ, որ մեկնաբանները տարբերվում են այս գլուխների վերաբերյալ ունեցած իրենց կարծիքներով: Խնդիրներից մեկը մեկնաբանությունն է. ի՞նչ են նշանակում պատկերները և տեսիլքները: Մյուս խնդիրը ընդգրկում է ժամանակագրությունը. Ե՞րբ են այդ բաները տեղի ունենալու: Բացի այդ, արդյո՞ք Հովհաննեսը մեկնաբանում է իր մշտական Հին Կտակարանյան պատկերները Հին Կտակարանի աղբյուրների ճիշտ չափորոշիչներով, թե՞ ազատ է վերանայել

այս պատկերները: Ո՞րն է խորհրդանշական, իսկ ո՞րը բառացի: Այս հարցերի պատասխանները որոշելու է մեկնաբանի մոտեցումը: Քանի որ այս հարցերից մի քանիսը կարող են դոգմատիկ պատասխաններ ունենալ, անհրաժեշտ է առանձին մոտեցումների հանդեպ հանդուրժողականություն, այն հույսով, որ Հոգին կարող է օգտագործել բաց մտքի քննարկումը, որը մեզ կտանի հետագա Ապոկալիպսիսի նշանակությանը» (էջ 69):

2. Հայտնության և Հին Կտակարանի կապի շուրջ ընդհանուր ներածության համար ես խորհուրդ եմ տալիս Ջոն Պ. Միլթոնի *Մեկնաբանված Մարգարեություն* գիրքը և Ջոն Բրայթի *Հին Կտակարանի հեղինակությունը* /John P. Milton's *Prophecy Interpreted* and John Bright's *The Authority of the Old Testament*: Հայտնության կապը Պողոս Առաքյալի հետ թեմայով լավ քննարկման համար խորհուրդ եմ տալիս Ջեյմս Ս. Ստյուարտի *Մարդ Քրիստոսում* /James S. Stewart's *A Man In Christ*:

XI. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «այն բաները, որոնք շուտով պիտի պատահեն», 1:1,3
2. «գալիս է ամպերով», 1:7
3. Ամեն, 1:7
4. «Ալֆան և Օմեգան», 1:8
5. «բերանից մի սրված երկսայր սուր էր դուրս գալիս», 1:16
6. «դժոխքի և մահվան բանալիները», 1:18
7. «քո առաջին սերը թողել ես», 2:4
8. «նրան, ով կհաղթի», 2:7
9. «կենաց ծառից, որ Աստծո Դրախտի մեջտեղում է», 2:7
10. «Սատանայի մի ժողով», 2:9; 3:9
11. «երկրորդ մահը», 2:11
12. «Սատանայի խորությունները», 2:24
13. «կյանքի գիրքը», 3:5
14. «Դավթի բանալին», 3:7
15. նոր Երուսաղեմը, 3:12
16. «ես Հոգու մեջ էի», 4:2
17. ապակե ծով, 4:6
18. մի գիրք, 5:1
19. յոթ կնիքներ, 5:1
20. «մի Գառնուկ, որ կարծես մորթված լիներ», 5:6
21. «յոթ եղջյուրներ և յոթ աչքեր», 5:6
22. «մեծ նեղությունը», 7:14
23. «ոսկյա խնկաման», 8:3
24. «անդունդի /անհատակ/ գուր», 9:2
25. Ալելուիա, 19:1
26. «Գառնուկի հարսանիքի ընթրիքը», 19:9
27. «Աստծո ահեղ ցասման զգինու հնձանը», 19:15
28. «կապեց նրան հազար տարով», 20:2
29. նոր Երուսաղեմ, 21:2
30. «Առավոտյան պայծառ աստղը», 22:16

XII. ՀԱՄԱՌՈՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁԻՔ

1. «Իր հրեշտակի միջոցով ուղարկելով», 1:1
2. Հովհաննես, 1:1
3. «ծառայող հոգիներ», 1:4
4. «Ամենակարողը», 1:8
5. Նա, ով նկարագրված է 1:12-16-ում: Որտեղի՞ց է թխում այս նկարագրությունը:
6. Նիկողայոսականներ, 2:6,15
7. Հեզաբել, 2:20
8. երեցներ, 4:4,10
9. Հուդայի ցեղի Առյուծը, 5:5
10. «մի ճերմակ ձի, որի հեծյալը մի աղեղ ուներ», 6:2
11. «զոհասեղանի տակ տեսա այն մարդկանց հոգիները, որ սպանված էին», 6:9

12. «ճակատները կնքենք», 7:3
13. «մի մեծ բազմություն», 7:9
14. «երկնքից մի աստղ», 9:1
15. «մի ուրիշ գորավոր հրեշտակ», 10:1
16. «երկու վկաները», 11:3
17. մի կին, 12:1
18. «մի մեծ կարմիր վիշապ», 12:3
19. «մի արու գավակ», 12:5
20. «ծովից մի գազան էր բարձրանում /դուրս գալիս», 13:1
21. «մի ուրիշ գազան, որ երկրից էր ելնում», 13:11
22. Բաբելոն, 14:8
23. մեծ պոռնիկը, 17:1
24. «մի ճերմակ ձի, որի հեծյալը», 19:11
25. Գոգ ու Մագոգ, 20:8

XIII. ՏԵՂԱՆՔՆԵՐ ԲԱՐՏԵԶԻ ՎՐԱ

1. Պատմոս, 1:9
2. Եփեսոս, 1:11
3. Չմյունիա, 1:11
4. Պերգամոն, 1:11
5. Թիվատիր, 1:11
6. Սարդիկե, 1:11
7. Ֆիլադելֆիա, 1:11
8. Լավոդիկե, 1:11
9. Սիոն սար, 14:1

XIV. ԲՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ ժանրի է պատկանում Հայտնությունը: Թվարկե՛ք դրան բնորոշ հատկանիշները:
2. Ինչո՞ւ են 2 և 3 գլուխներում նշված յոթ եկեղեցիները:
3. Ինչո՞ւ են երկրի բոլոր ցեղերը ողբալու Նրա վրա (1:7)
4. Թվարկե՛ք գլուխ 1-ում առկա բոլոր յոթերը:
5. Ի՞նչ է նշանակում այն խոսքը, որ Հիսուսը շարժելու է եկեղեցու ճրագակալը (2:5):
6. Թվարկե՛ք յոթ եկեղեցիներին ուղղված յուրաքանչյուր պատգամում առկա ընդհանրությունները:
7. Գլուխ 4-5-ում ո՞րն է միջավայրը:
8. Ի՞նչ կապ կա յոթ կնիքների, յոթ փողերի և յոթ սկավառակների միջև:
9. Ովքե՞ր են գլուխ 6-ի յոթ հեծյալները: Որտեղի՞ց է բխել այս պատկերավոր նկարագրությունը:
10. Ովքե՞ր են 144.000-ը: Ինչո՞ւ է հրեաների տասներկու ցեղերը սխալ թվարկված:
11. Ինչո՞ւ են դատաստաները շատանում 1/4 կնիքներից մինչև 1/3 փողերը, որպեսզի կործանումն ավարտվի սկավառակների մեջ:
12. 9:13-19 խոսքերում ո՞ւմ է վերաբերում 200,000,000 հոգանոց զորքը:
13. Նկարագրե՛ք 12:7-10-ում երկնքի պատերազմը:
14. Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս գազանին, որ սուրբերի դեմ պատերազմ սկսի (13:7):
15. Ինչպե՞ս է գազանը կրկնօրինակում Քրիստոսին:
16. Ովքե՞ր են առաջին հարության մեջ մաս կազմելու (2:4-6): Ովքե՞ր են երկրորդ հարության մեջ մաս կազմելու:
17. Ի՞նչ նշանակություն ունի 22:3:
18. Ի՞նչ կապ ունի 22:5-ը 20:4-ի հետ:
19. Բացատրե՛ք 22:18-19 ձեր բառերով:
20. Ո՞րն է Հայտնության կենտրոնական թեման:

ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ալեքսանդրիան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Եգիպտոսի Ալեքսանդրիայում՝ մ. թ. 2-րդ դարում: Այնտեղ օգտագործվում է Ֆիլոյի հիմնական մեկնաբանական սկզբունքները, որը Պլատոնի հետևորդն էր: Հաճախ այն կոչվում է այլաբանական մեթոդ: Մինչև Բարեփոխությունը եկեղեցին ընդունում էր այս մեթոդը: Սրա ամենաուժեղ կողմնակիցները եղել են Օրիգենը և Օգոստինոսը: Տե՛ս Սիլվա Մայիսեյի «Եկեղեցին ճիշտ չի՝ կարդացել Աստվածաշունչը» գիրքը (Moises Silva, *Has The Church Misread The Bible*) (հրատ. Academic, 1987):

Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու. սա 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս, որը պարունակում է ՀԿ-ը, Անկանոն Գրքերը և ՆԿ-ից շատ գրքեր: Սա հանդիսանում է ամբողջ հունարեն ՆԿ-ի գլխավոր օրինակներից մեկը (բացի Մատթեոսից, Հովհաննես Ավետարանից և 2 Կորնթացիներից որոշ մասերի): Գիտնականներից շատերը շատ դեպքերում համարում են, որ երբ այս ձեռագիրը, որը հայտնի է որպես «A» համընկնում է «B» (Վաստիկանյան) ձեռագրի հետ, ուրեմն տեքստը բնագիր է:

Այլաբանություն. սա Աստվածաշնչի մեկնաբանության տեսակ է, որը սկիզբ է առել ալեքսանդրիան հուդայականության մեջ: Այն հանրաճանաչ է դարձել Փիլոնոմ Ալեքսանդրիացու կողմից: Սրա հիմնական յուրահատկությունն է Մուրբ Գիրքը հարմարեցնել որևէ մեկի մշակությանը կամ փիլիսոփայական համակարգին, անտեսելով Աստվածաշնչի պատմական և/կամ գրական համատեքստը: Նրա մեջ փնտրում են թաքնված հոգևոր իմաստ յուրաքանչյուր սուրբգրային տեքստի ետևում: Պետք է խոստովանել, որ Հիսուսը, Մատթ.13-ում, և Պողոսը, Գաղ.4-ում, օգտագործել են այլաբանություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Դա, ինչևէ, սիմվոլիկ լեզու էր, և ոչ թե խիստ այլաբանություն:

Աշխարհի պատկերը և աշխարհայացքը. սրանք համախոհ տերմիններ են: Այս երկու փիլիսոփայական գաղափարները կապված են արարչագործության հետ: «Աշխարհի պատկեր» տերմինը վերաբերում է «ինչպես» է ստեղծվել աշխարհը հարցին, մինչ «աշխարհայացքը» թե «Ով» է ստեղծել այն: Այս տերմինները կարևոր են Ծննդ. 1-2 գլուխները մեկնաբանելու համար, որտեղ խոսքը գնում է, նախ և առաջ այն մասին, թե Ով է ստեղծել երկիրը, և թե ինչպես է այն ստեղծվել:

Անտիոքյան Դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Սիրիայի Անտիոքում, մ.թ. 3-րդ դարում որպես պատասխան Եգիպտոսի Ալեքսանդրիայի այլաբանական մեթոդին: Նրա հիմնական գաղափարն էր ուշադրություն դարձնել Աստվածաշնչի պատմական նշանակությանը: Այս դպրոցը թարգմանեց Աստվածաշունչը որպես սովորական, մարդկային գրականություն: Այն ներգրավվեց բանավեճի մեջ, թե արդյոք Քրիստոսն ուներ երկու բնություն (նեստորականություն), թե մեկ (յրիվ Աստված և յրիվ մարդ): Հռոմի կաթոլիկ եկեղեցին հռչակեց դա հերետիկոսություն և նրա ներկայացուցիչները բնակություն հաստատեցին Պարսկաստանում, սակայն քիչ ազդեցություն ունեին: Այս դպրոցի հիմնական հերմենևտիկական սկզբունքները ավելի ուշ սկսեցին օգտագործվել դասական բողոքական Ռեֆորմատորների կողմից (Լյութեր և Կալվին):

Ապոկալիպտիկ գրականություն. առավելապես, գուցե և բացառապես, հրեական ժանր էր: Գրելաոնի գաղտնի տեսակ էր, որը հրեաները օգտագործում էին օտար աշխարհակալների կողմից նվաճումների ու զավթումների ժամանակ: Ենթադրվում էր, որ անձ հանդիսացող Փրկիչ Աստվածը ստեղծել և վերահսկում է աշխարհի իրադարձությունները, և որ Աստված հատուկ ուշադրություն և խնամք է ցուցաբերում Իսրայելի հանդեպ: Այս գրականությունը Աստծո ժողովրդին խոստանում է վերջնական հաղթանակ Աստծո հատուկ ջանքերի շնորհիվ:

Սա շատ խորհրդավոր և ֆանտաստիկ ժանր է՝ բազմաթիվ հանելուկային տերմիններով: Այստեղ ճշմարտությունը հաճախ արտահայտվում է գույների, թվերի, տեսիլքների, երազների, հրեշտակների, գաղտնագրերի տեսքով, հաճախ կա նաև սուր դուալիզմ չարի և բարու միջև: Այս ժանրի մի քանի օրինակներ (1) Հին Կտակարանում՝ Եզեկիել (36-48 գլուխները), Դանիել (7-12 գլուխները), Չաքարիա; և (2) Նոր Կտակարանում՝ Մատթեոս 24; Մարկոս 13; 2 Թեսաղոնիկեցիներին 2 և Հայտնություն:

Ապոլոգետ (ապոլոգետիկա / հավատքի պաշտպանություն). Տերմինը առաջացել է հունարեն «օրինական պաշտպանություն» բառի արմատից: Աստվածաբանության մեջ սա հատուկ կարգուկանոն է, որը ձգտում է ներկայացնել ապացույցներ և ռացիոնալ փաստարկներ քրիստոնեական հավատքի օգտին:

Արիոսականություն. Արիոսը Եգիպտոսի Ալեքսանդրիայի եկեղեցու երեցն էր, 3-րդ և 4-րդ դարի սկզբին: Նա պնդում էր, որ Հիսուսը հավիտենական էր, բայց ոչ Աստված (Հոր նույն էությունը չուներ), հնարավոր է հենվելով Առակաց 8:22-31-ի վրա: Նրան մարտահրավեր է նետում Ալեքսանդրիայի եպիսկոպոսը և վեճը սկսում է (մ.թ. 318), որն էլ շարունակվում է երկար տարիներ: Արիոսականությունը դարձավ նույնիսկ հավատքի պաշտոնական խորհրդանիշը արևելքի եկեղեցում: Մ.թ. 325-ին Նիկիայի Ժողովը դատապարտեց Արիոսին և հռչակեց Հոր և Որդու աստվածության լիարժեք հավասարությունը:

Արիատոսել. Հին հունական փիլիսոփաներից էր, Պլատոնի աշակերտը և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նրա ներգործությունը մինչև այսօր զգացվում է Ժամանակակից ուսումնասիրություններից շատերի մեջ, քանի որ նա շեշտը դնում էր հետազոտության և դասակարգման միջոցով կատարվող գիտության վրա: Սա գիտական մեթոդների սկզբունքներից մեկն է:

Աստվածաշնչյան հեղինակություն. Այս տերմինը օգտագործվում է շատ մասնագիտացված նշանակությամբ: Այն սահմանվում է որպես մի հասկացողություն, թե իր օրերում բնագրի հեղինակն ինչ է ասել և մեր օրերում այդ ճշմարտությունը ինչպես կիրառել: Աստվածաշնչյան հեղինակությունը սովորաբար սահմանվում է որպես Աստվածաշունչը դիտարկելու ձև, որպես մեր միակ հեղինակավոր ուղեցույց: Ինչևէ, լայն տարածում գտած, սխալ մեկնաբանությունների լույսի ներքո, ես սահմանափակել եմ Աստվածաշնչի գաղափարը թարգմանված պատմական-քերականական մեթոդով:

Անհատական կարծիքի հաստատում աստվածաշնչյան տեքստի միջոցով. Սուրբ Գրքի մեկնության կիրառություն, երբ մեջբերվում է որևէ համար առանց ուշադրություն դարձնելու անմիջական տեքստին կամ գրական հատվածի ընդհանուր կոնտեքստին: Արդյունքում մոռացվում են բնագրի հեղինակի մտադրությունները և հաճախ փորձ է կատարվում հաստատելու որևէ անձնական կարծիք իր աստվածաշնչյան հեղինակությամբ:

Բնագրի հեղինակը. Սա վերաբերում է Սուրբ Գրքի իրական հեղինակներին՝ գրողներին:

Բնագրեր. Սա Աստվածաշնչի բնօրինակի գրվածքներին տրված անունն է: Այս բնագիր, ձեռագիր մատյանները բոլորն էլ կորել են: Միայն օրինակների օրինակներն են մնացել: Սա երբայերեն և հունարեն ձեռագրերի և հին տարբերակների շատ տեքստային տարբերակների աղբյուրն է:

Բիզայի հին ձեռագրերի ժողովածու. 6-րդ դարի հունարեն և լատիներեն ձեռագիր է, որը հայտնի է որպես «D»: Պարունակում է բոլոր Ավետարանները և Գործք Առաքելոցը, ինչպես նաև մի քանի թղթեր: Այն պարունակում է շատ լրացումներ, որոնք արվել են դպիրների կողմից: Սա հիմք է հանդիսացել «Textus Receptus» հիմնական հունարեն ձեռագրի համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել անգլերենի King James Նոր Կտակարանի թարգմանության համար:

Բարձր քննադատություն. Աստվածաշնչյան մեկնության ընթացակարգը, որը կենտրոնանում է աստվածաշնչյան առանձին գրքի պատմական կոնտեքստի և գրական կառուցվածքի վրա:

Բառացի թարգմանություն. Սա սերտողության միջոց է, որը թույլ է տալիս մարդկանց, որոնք չեն տիրապետում աստվածաշնչյան լեզվին, վերլուծել նրա նշանակությունը և կառուցվածքը: Սա բառացի թարգմանություն է, որը գրվում է աստվածաշնչյան լեզվով անմիջապես բնագրի տեքստի տակ: Այս ձևը, ինչպես նաև վերլուծական բառարանը, մեզ տալիս է Աստվածաշնչի հին երբայերեն և հունարեն տեքստի հիմնական նշանակությունները և ձևերը:

Բառացի ընթերցանություն. Եվս մեկ անուն հերմենևտիկական պատմական և կենտրոնացած տեքստի մեթոդի համար, որը զարգացել է Անտիոքում: Սա նշանակում է, որ մեկնաբանությունը ներառում է մարդկային լեզվի սովորական և ակնհայտ իմաստ, չնայած ընդունում է պատկերավոր լեզվի առկայությունը:

Բնական հայտնություն. Մարդու համար Աստծո հայտնության կատեգորիաներից մեկն է: Այն ներառում է բնության երևույթների հաջորդականությունը (Հռոմ.1:19-20) և բարոյական խղճմտանքը (Հռոմ.2:14-15): Այդ մասին խոսվում է Մաղմ.19:1-6 և Հռոմ.1-2: Այն տարբերվում է հատուկ հայտնությունից, որը Աստծո հատուկ հայտնությունն է Աստվածաշնչում և ամենակարևորը՝ Հիսուս Նազովրեցու մեջ:

Այս աստվածաբանական կատեգորիան կրկին վերընդգծվել է «հին աշխարհ» քրիստոնյա գիտնականների շարժման կողմից (օր.՝ Հյու Ռոսի գրվածքները /Hugh Ross/): Նրանք կիրառում են այս կատեգորիան, որպեսզի հաստատեն, որ ցանկացած ճշմարտություն Աստծուց է բխում: Բնությունը բաց դուռ է Աստծո մասին գիտություն ունենալու համար. այն տարբերվում է հատուկ հայտնությունից (Աստվածաշունչ): Այդպիսով ժամանակակից գիտությունը կարող է հետազոտել բնության երևույթների հաջորդականությունը: Իմ կարծիքով, սա նոր հիանալի հնարավորություն է վկայելու Աստծո մասին ժամանակակից արևմտյան գիտական աշխարհում:

Գնոստիցիզմ. Այս հերետիկոսության՝ աղանդի մասին ունեցած մեր իմացության մեծ մասը գալիս է 2-րդ դարի գնոստիկ գրվածքներից: Սակայն համապատասխան գաղափարներ գոյություն են ունեցել դեռևս առաջին դարում (և դրանից առաջ):

2-րդ դարի գնոստիկներ Վալենտինայի և Կերնիթիանի որոշ հաստատված հավատամքներ այսպիսին են՝ (1) նյութն ու հոգին հավասարապես հավիտենական են (օնթոլոգիական դյուալիզմ): Նյութը չար է, հոգին՝ բարի: Աստված, որ Հոգի է, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել մեղավոր նյութի ձևավորման գործընթացում; (2) Աստծո և նյութի միջև կան էմանացիաներ (*eons* կամ հրեշտակային մակարդակներ): Դրանցից վերջինը կամ ամենացածրը ՀԿ-ի Եհովան էր, որ ստեղծեց տիեզերքը (*kosmos*); (3) Հիսուսը էմանացիա էր, ինչպես Եհովան, բայց ավելի բարձր մակարդակի վրա, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն էին համարում, բայց Աստծուց ցածր, և անշուշտ ոչ մարմնացած Աստված (տես՝ Հովհ.1:14): Զանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և Աստված լինել: Նա հոգևոր ուրվական էր (տես՝ 1 Հովհ.1:1-3; 4:1-6); և (4) փրկությունը հասնում է Հիսուս Քրիստոսին հավատալով, գումարած հատուկ գիտություն, որն ունեն միայն հատուկ մարդիկ: Գիտությունը (ծածկագրեր) անհրաժեշտ էր, որպեսզի անցնեիր երկնային ոլորտների միջով: Հրեական օրինապաշտությունը նույնպես անհրաժեշտ էր՝ Աստծուն փնտրելու համար:

Գնոստիկ սուտ վարդապետները երկու հակադիր էթիկական համակարգերի կողմնակիցներ էին. (1) ոմանք կարծում էին, որ մարդու ապրելակերպը ոչ մի բանով կապ չունի փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հոգևորությունը սահմանափակվում էին գաղտնի գիտությամբ (ծածկագրեր), որը կատարվում էր հրեշտակային մարմինների միջոցով (*eons*), կամ (2) ուրիշների համար էլ ապրելակերպը խիստ անհրաժեշտ էր փրկության համար: Նրանք համարում էին, որ ասկետիկ ապրելակերպը ապացույց էր ճշմարիտ հոգևորության:

Գրական ժանր. Հատուկ ձևեր, որոնք կարող են ինֆորմացիա փոխանցել մարդկային հասարակությանը, ինչպես օրինակ՝ պոեզիան կամ պատմական արձակը: Գրականության յուրաքանչյուր տեսակ մեկնաբանվում է հատուկ հերմենևտիկական սկզբունքների վրա, ընդհանուր սկզբունքների հիման վրա, որոնք վերաբերում են ցանկացած գրավոր գրականությանը:

Գրական բաժին. Սա վերաբերում է աստվածաշնչյան գրքի գլխավոր մտքի բաժանումներին: Այն կարող է կազմված լինել մի քանի համարներից, պարբերություններից կամ գլուխներից: Այն ինքնաբավ տեքստ է կենտրոնական թեմայով:

Դեղուկտիվ. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որը ընդհանուր սկզբունքներից գնում է դեպի առանձին կիրարկումներ: Սա հակառակ է ինդուկտիվ դատողությանը, որն արտահայտում է գիտական մեթոդը, որը առանձին դեպքերի դիտարկումներից անցում է կատարում դեպի ընդհանուր եզրահանգումները (տեսություններ):

Դիալեկտիկական. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որտեղ թվացյալ հակասությունները կամ պարադոքսները գտնվում են լարվածության մեջ՝ փնտրելով համաձայնեցված պատասխան, որն իր մեջ ամփոփում է պարադոքսի երկու կողմերն էլ: Աստվածաշնչյան շատ վարդապետություններ ունեն դիալեկտիկական՝ բարբառային գույգեր. նախասահմանություն - ազատ կամք, ապահովություն - հարատևություն, հավատք - գործեր, Աստծուն ընդունելու որոշում - աշակերտ լինել, Քրիստոնեական ազատություն - Քրիստոնեական պատասխանատվություն:

Դինամիկ համագոր. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն «բառ-առ-բառ» համապատասխանության, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում» որին տրվում է իմաստ, որոշ չափով ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնագրի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագորի» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնագրի տեքստին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և դարձվածքներ: Տարբեր տեսությունների շուրջ

իրոք լավ քննարկում կարելի է գտնել Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «*Բնչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջական իմաստով*» (Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*), էջ՝ 35 և Ռոբերտ Բրեչչերի «*Ժամանակակից անգլերեն Աստվածաշունչի թարգմանության ներածությունը*» գրքում (Robert Bratcher's *Introduction to the TEV*):

ԵՀՈՎԱ. Հին Կտակարանում սա Աստծո Ուխտի անունն է: Սահմանումը գտնվում է Ելից 3:14-ում: Այն երբայերեն «լինել» բայի ՊԱՏՃԱՌ-ԱԿԱՆ ձևն է: Հրեաները վախենում էին արտասանել այդ անունը, որ զուր տեղը չլիներ, ուստի այն փոխարինեցին երբայերեն *Adonai*, «Տեր» բառով: Ահա, թե ինչպես է թարգմանվում այս ուխտի անունը շատ լեզուներում:

Երկիմաստություն. Տեքստի անհասկանալի մասեր, որտեղ գրավոր փաստաթղթում կամ ընթերցանության երկու կամ ավելի հնարավորություններ կամ երբ երկու կամ ավելի բաներ են առկա միառժամանակ: Հնարավոր է, որ Հովհաննեսը դիտավորյալ օգտագործել է երկիմաստ արտահայտություններ:

Չուզահեռ հատվածներ. Սրանք մաս ենկազմում այն գաղափարի, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և, ուստի, ինքն է լավագույնս օգնում մեզ իրեն մեկնաբանելու և բալանսի բերելու պարահոքսալ ճշմարտությունները: Այն նաև օգտակար է, երբ մեկը փորձում է մեկնաբանել անհասկանալի կամ բազմիմաստ հատվածները: Նրանք նաև օգնում են գտնել տվյալ թեմայի շուրջ ամենահստակ հատվածները, ինչպես նաև բոլոր մյուս սուրբգրային հատվածները նույն թեմայի վերաբերյալ:

Էլզեգետիկա. Էլզեգետիկայի հակադարձը: Եթե Էլզեգետիկան հիմնված է հեղինակների միտումների փնտրտուքի վրա, ապա էլզեգետիկան ենթադրում է տեքստի մեջ այնպիսի մտքի կամ կարծիքի ներմուծում, որը խորթ է հեղինակին:

Էկզեգետիկա. Հատուկ տերմին է, որը նշանակում է որոշակի հատվածի տեքստի մեկնաբանություն, բառացի՝ այդ հատվածի իրական մտքի պեղում. այսինքն հասկանալի հեղինակի մտադրությունները պատմական իրավիճակի, գրական համատեքստի՝ հատվածի, սինտաքսիսի՝ քերականության և բառերի նշանակությունների լույսի ներքո:

Էկլեկտիկա. Այս տերմինի կիրառությունը պայմանավորված է տեքստի քննադատության հետ: Այն ենթադրում է տեքստերի ընթերցանությունից տարբեր ձեռագրերի ավանդույթների հետ կապված տարբերակների դուրսբերում, որպեսզի ի հայտ գա այն տեքստը, որն ավելի մոտ կգտնվի բնագրին: Այս դեպքում հերքվում է այն կարծիքը, որ հունարեն ձեռագրերի ամեն խումբ ունի մի բնօրինակ:

Էթիմոլոգիա. Բառերի ուսումնասիրման ոլորտ, որտեղ ի հայտ է բերվում բառիսկզբնական նշանակությունը: Մեկնաբանության ժամանակ բառերի էթիմոլոգիան ամենակարևորը չէ, ավելի կարևոր է նրանց նշանակությունը և կիրառությունը որոշակի դարաշրջանի համար:

Թալմուդ. Գրքերի ժողովածուի անվանումն է, որտեղ շարադրված է հրեական բանավոր ավանդույթը: Հրեաները հավատում են, որ այն բանավոր կերպով տրվել է Աստծո կողմից Մովսեսին Սինա լեռան վրա: Իրականում սրանք հրեա վարդապետների իմաստուն ասացվածքներն են, որոնք հավաքվել են տարիների ընթացքում: Գոյություն ունեն Թալմուդի երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ Բաբելոնյանը և ավելի կարճը՝ թերի մնացած Պաղեստինյանը:

Թեմապետություն/Parochialism. Սա վերաբերում է այն հիմքերին, որոնք միացվում են տեղական աստվածաբանական, մշակութային համատեքստին: Սրանք չեն ընդունում աստվածաշնչյան ճշմարտության կամ նրա կիրառության միջնակութային բնությունը:

Թորա. Երբայերեն տերմին է, որը նշանակում է «ուսուցում, ուսմունք»: Այսպես պաշտոնական կոչվել են Մովսեսի գրքերը (Ծննդոցից մինչև 2 Օրինաց): Հրեաների համար սա երբայական կանոնի ամենահեղինակավոր մասն է հանդիսանում:

Թույլ քննադատություն. Տե՛ս «Տեքստային քննադատություն»:

Ժանր. Փրանսերեն տերմին, որը նշանակում է գրական աստղծագործության տարբեր տեսակներ: Աստվածաշնչյան գրական ձևերը բաժանվում են մի քանի կատեգորիաների, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ՝ պատմական արձակ, պոեզիա, առակներ, սպոկալիպտիկ՝ վախճանաբանական և օրենսդրություն:

Իդիոմա (դարձվածք). Արտահայտություն, որը տվյալ մշակույթին համապատասխան ունի հատուկ նշանակություն, որը կապ չունի առանձին վերցրած բառերի սովորական իմաստի հետ: Ժամանակակից օրինակներ՝ «դա սարսափելի լավն էր» կամ «դու պարզապես սպանում ես ինձ»: Աստվածաշունչը նույնպես պարունակում է այս տեսակի արտահայտություններ:

Իմաստային դաշտ. Սա վերաբերում է իմաստի ամբողջ ոլորտին, կապված կոնկրետ բառի հետ: Հիմնականում սրանք տարբեր համատեքստերի մեջ բառի ունեցած իմաստային երանգներն են:

Իմաստասիրական գրականություն. Գրական ժանր, տարածված հին Մերձավոր Արևելքում (և ժամանակակից աշխարհում): Նպատակն է երիտասարդ սերնդին պոեզիայի, առակի կամ ակնարկի միջոցով սովորեցնել կյանքի իմաստությունը: Այն ավելի ուղղված է առանձին անհատների, քան խմբային համայնքի: Հիմնված չէ պատմական ակնարկների վրա, այլ կյանքի փորձառությունների և դիտարկումների վրա: Աստվածաշնչում Հոբից մինչև Երգ Երգոցը ենթադրվում է ԵՀՈՎԱՅԻ ներկայությունը և Նրան երկրպագությունը, սակայն կրոնական աշխարհայացքը հստակ չի արտահայտվում:

Որպես ժանր, այն արտացոլում է ընդհանուր ճշմարտությունները: Բայց այս ժանրը չի կարող օգտագործվել ցանկացած կոնկրետ իրավիճակում: Դրանք ընդհանուր մտքեր են, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են անհատական իրավիճակներին:

Իմաստունները համարձակվել են բարդ հարցեր տալ կյանքի վերաբերյալ: Հաճախ նրանք մարտահրավեր են նետել ավանդական կրոնական հայացքներին (Հոր և Ժողովող): Այդպիսով նրանք հավասարակշռություն և լարվածություն են ստեղծում կյանքի ողբերգությունների հետ կապված հեշտ պատասխանների միջև:

Ինդուկտիվ. Տրամաբանական դատողության մեթոդ է, որը մասնավորից տանում է դեպի ընդհանուր: Այն ժամանակակից գիտության էմպիրիկական՝ փորձով հաստատված մեթոդ է: Հիմնականում սա Արիստոտելի մոտեցումն է:

Լուսավորում. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ, 2. Ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար, և 3. լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Կանխակարծիք. Որևէ թեմայի շուրջ նախօրոք ձևավորված պատկերացում: Հաճախ մենք ունենք կարծիքներ կամ դատողություններ ինչ որ հարցերի շուրջ մինչև Սուրբ Գրքին անդրադառնալը: Այս կանխակարծիքը հայտնի է նաև որպես հակվածություն, պնդում, իսկ կանխա- նախօրոք ձևավորված կարծիք:

Կանոն. Տերմինը օգտագործվում է այն գրվածքների համար, որոնք անկասկած համարվում են ներշնչված: Այն թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանի գրքերի համար է:

Հակադիր. Երեք բնութագրական տերմիններից մեկն է, որը ցույց է տալիս երբայերեն պոեզիայի տողերի միջև գոյություն ունեցող կապը: Այն վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք իմաստային առումով իրար հակադիր են (տես՝ Առակ.10:1; 15:1):

Համաբարբառ. Աստվածաշունչը ուսումնասիրելու միջոց: Աստեղ իրականում տրված են Հին և Նոր Կտակարաններից յուրաքանչյուր բառ: Սա օգնում է մեզ (1) սահմանել երբայերեն կամ հունարեն բառը, որն ընկած է հատուկ բառի թարգմանության ետևում, (2) համեմատել հատվածները, որտեղ օգտագործվում են նույն երբայերեն կամ հունարեն բառը, (3) ի հայտ բերել հատվածներ, երբ երկու տարբեր երբայերեն կամ հունարեն տերմիններ թարգմանվում են նույն բառով, (4) տեսնել տարբեր բառերի կիրառությունը տարբեր գրքերում կամ տարբեր հեղինակների մոտ, (5) Աստվածաշնչում գտնել որոշակի անհրաժեշտ հատված (տես՝ Ուոլթեր Զլարքի «*Ինչպես օգտագործել հունարեն Նոր Կտակարանի օժանդակ ձեռնարկը*» /Walter Clark's *How to Use New Testament Greek Study Aids*/):

Հայտնություն. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ 1. Հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ,

2.Ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար և 3. Լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Հերմենևտիկա. Սկզբունքներ նշանակող հատուկ տերմին, որն օգտագործում են մեկնաբանության ժամանակ: Սա թե՛ յուրահատուկ ուղեցույցների շարք է և թե՛ արվեստ, պարզև: Աստվածաշնչյան հերմենևտիկան սովորաբար բաժանվում է երկու կատեգորիաների՝ ընդհանուր սկզբունքներ և հատուկ սկզբունքներ: Նրանք կապված են Աստվածաշնչում եղած գրական տարբեր տեսակների հետ: Յուրաքանչյուր տեսակ (ժանր) ունի իր հատուկ սկզբունքը, բայց մեկնաբանության մի քանի ընդհանուր ենթադրությունների և ընթացակարգերի հիման վրա:

Հոմանիշ. Սա վերաբերում է այն բառերին, որոնք իմաստով նույնն են կամ համընկնում են (չնայած իրականում երկու բառերի իմաստաբանական մասը երբեք ամբողջությամբ չեն համընկնում): Նրանք իմաստով այնքան մոտ են իրար, որ կարող են նախադասության մեջ իրար փոխարինել՝ իմաստը չկորցնելով: Այս տերմինը նաև կիրառվում է հին եբրայերեն պոետիկ գուգախեռների երեք տեսակներից մեկի համար: Այս իմաստով, այն նշանակում է երկու պոետիկ տող, որոնք արտահայտում են նույն ճշմարտությունը (տես՝ Սաղմ.103:3):

Ձեռագիր. Այս տերմինը վերաբերում է հունարեն Նոր Կտակարանի տարբեր օրինակներին: Սովորաբար դրանք բաժանվում են տարբեր տեսակների՝ (1) նյութը, ինչ վրա որ գրվել են (պապիրուս, կաշի), կամ (2) գրության ձև (բոլորը մեծատառերով կամ սահուն ձեռագիր): Հակիճ կոչվում է "MS" (եզակի) կամ "MSS" (հոգնակի):

Մագորեթիկ տեքստ. Հին Կտակարանի եբրայերեն ձեռագիր է (9-րդ դար): Դա արվել է հայտնի հրեա գիտնականների կողմից, որը պարունակում է ձայնավոր հնչյուններ և այլ տեքստային նշումներ: Դրանք հիմք են հանդիսանում Հին Կտակարանի թարգմանության համար: Նրա տեքստը պատմականորեն հաստատված է եղել հին եբրայերեն ձեռագրերով, հատկապես Եսայի մարգարեությունը, հայտնի որպես Մեռյալ Ծովի գլանաձև մագաղաթներ: Հապավումն է՝ "MT":

Մարդակերպություն. Ունի «մարդկային էության հետ առնչվող առանձնահատկությունների» իմաստը: Այս տերմինը կիրառվում է նկարագրելու Աստծո մասին արտահայտվող մեր կրոնական լեզուն: Տերմինն առաջացել է հունարեն մի բառից, որը նշանակում է մարդկություն: Սա նշանակում է, որ մենք խոսում ենք Աստծո մասին որպես մարդու: Աստված նկարագրվում է որպես ֆիզիկական, սոցիոգիական և հոգեբանական այնպիսի տերմիններով, որոնք առնչվում են մարդկանց հետ և հասկանալի են մարդու համար (տես՝ Ծննդ.3:8; 3 Թագ.22:19-23): Իհարկե, սա միայն համանմանություն է: Այնուամենայնիվ մարդկային տերմիններից և կատեգորիաներից զատ ուրիշ ոչինչ չէր կարող մեզ համար կիրառելի լինել: Հետևաբար Աստծո մասին ունեցած մեր գիտությունը չնայած ճիշտ է, բայց և սահմանափակ:

Մեկնաբանություն. Աստվածաշունչը ուսումնասիրող հատուկ գիրք: Այն ներկայացնում է աստվածաշնչյան գրքի ընդհանուր համատեքստը: Այս բացատրում է գրքի յուրաքանչյուր բաժնի նշանակությունը: Որոշ մեկնաբանություններ հատուկ ուշադրություն են դարձնում ճշմարտության կիրառությանը, ուրիշներն էլ տեքստը դիտարկում են տարբեր հատուկ հարցերի օգնությամբ: Այս գրքերը օգտակար են, սակայն պետք է կիրառվեն միայն ինքնուրույն ընդհանուր սերտողությունից հետո: Մեկնաբանի մեկնությունները երբեք չպետք է ընդունվեն առանց քննադատության: Սովորաբար օգտակար է համեմատել մի քանի մեկնություններ, որոնց հեղինակները ունեն աստվածաբանական տարբեր տեսանկյուններ:

Մեռյալ Ծովի մագաղաթները. Սա վերաբերում է մի շարք եբրայերեն և արամերեն հին տեքստերի, որոնք գտնվել են Մեռյալ ծովի մոտակայքից 1947թ-ին: Դրանք պատկանում էին առաջին դարի հուդայական աղանդավորների կրոնական գրադարաններին: Հռոմի տիրապետության ճնշումը և 60-ականների կրոնական պատերազմները պատճառ հանդիսացան, որ նրանք մագաղաթները հերմետիկ տեղավորեցին գլանաձև կավե ամանների մեջ և թաքցնեցին քարանձավներում ու հորերում: Այս մագաղաթները օգնել են մեզ հասկանալու առաջին դարի պատմական իրադրությունը Պաղեստինում և հաստատել են Մագորեթիկ ձեռագիրը, որպես շատ ստույգ փաստաթուղթ, համեմատած մեր դարասկզբի հետ: Հապավումն է՝ "DSS":

Մուրատորիան հատվածներ. Սա ՆԿ-ի կանոնի գրքերի ցանկն է: Գրվել է Հռոմում մինչև մ.թ.200: Պարունակում է նույն 27 գրքերը, ինչպես Բաղդադական ՆԿ-ում: Այն պարզ ցույց է տալիս, որ հռոմեական կայսրության տարբեր տեղերում գտնվող տեղական եկեղեցիները „փորձնականում,, կանոն են որոշել մինչև 4-րդ դարի գլխավոր եկեղեցական խորհուրդը:

Նախատիպ. Մեկնաբանության յուրահատուկ ձև է: Մովորաբար պարունակում է ՆԿ-յան ճշմարտություն, որը գտնվում է ՀԿ-յան հատվածներում նույնատիպ խորհրդապատկերով: Հերմենևտիկայի այսպիսի տեսակը Ալեքսանդրիան մեթոդի գլխավոր տարրն է եղել: Եվ քանի որ մեկնաբանության այսպիսի մեթոդը հեշտ է աղավաղել, պետք է սահմանափակել դրա կիրառությունը կոնկրետ օրինակներով արձանագրված ՆԿ-ում:

Նեստորականություն. 5-րդ դարում Նեստորը Կոնստանդնուպոլսի նախահայրերից էր: Նա սովորել է Միրիայի Անտիոքում և պնդել է, որ Հիսուսն ուներ երկու բնություն՝ լիարժեք մարդ և լիարժեք Աստված: Այդ կարծիքը տարբերվում էր Ալեքսանդրիան դպրոցի՝ միայն մեկ բնություն, ուղղափառ կարծիքից: Նեստորի հիմնական մտահոգությունը Մարիամին տրված «Աստվածամայր» տիտղոսն էր: Նեստորի ուսմունքը հակասում էր ալեքսանդրիացի Կիրիլին և ըստ էության, իր իսկ սեփական Անտիոքյան դպրոցի ուսմունքին: Անտիոքը աստվածաշնչյան մեկնաբանության պատմա-քերականական-տեքստային մոտեցման կենտրոնն էր, իսկ Ալեքսանդրիան՝ մեկնաբանության քառապատիկ (+ այլաբանական) դպրոցը: Նեստորը պաշտոնագուրկ է լինում և վտարվում:

Ներշնչանք. Աստված խոսել է մարդու հետ աստվածաշնչյան հեղինակների միջոցով, ովքեր հստակ և ստույգ արձանագրել են Իր հայտնությունը: Մովորաբար ամբողջ գաղափարը արտահայտվում է երեք տերմինով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ, 2. ներշնչանք՝ Նա սվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար, 3. Լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունն Իր մասին:

Նկարագրող /պատկերավոր/ լեզու. Կիրառվում է դարձվածքների հետ, որոնց օգնությամբ գրվել է ՀԿ: Այն խոսում է մեր աշխարհի մասին այնպես, ինչպես ընկալվում է մեր հինգ զգայարաններով: Դա գիտական նկարագրություն չէ և չպետք է լինի:

Ճարահյուսություն /Syntax/. Հունարեն տերմին է, որը վերաբերում է նախադասության կառուցվածքին, թե ինչպես են վերջինիս տարբեր մասերը ավարտուն միտք ստանալու համար միացված իրար:

Շեղություն/հակվածություն. Ուժեղ հակվածություն որոշակի կարծիքի կամ տեսակետի հանդեպ: Մտածելակերպ, որն անհնարին է դարձնում կոնկրետ թեմայի կամ դիրքորոշման խտրականությունը:

Ոգեշնչում. Տեքստին խորհրդանշական իմաստ տալը: Աստվածաշնչի այլաբանական մեկնության հոմանիշն է, քանի որ այստեղ նույնպես անտեսվում է հատվածի պատմական և գրականական համատեքստը, իսկ մեկնաբանությունը հիմնվում է այլ չափանիշների վրա:

Որդեգրություն. Աստծո և Հիսուսի միջև եղած կապի վերաբերյալ վաղ կարծիքներից մեկն էր: Այն պնդում էր, որ Հիսուսը սովորական մարդ էր բոլոր առումներով և հատուկ որդեգրվել էր Աստծո կողմից Իր մկրտության պահին (տես՝ Մատթ.3:17; Մարկ.1:11) կամ հարության ժամանակ (տես՝ Հռոմ.1:4): Հիսուսն այնպիսի օրինակելի կյանքով ապրեց, որ Աստված ինչ-որ պահի (մկրտություն, հարություն) որոշեց որդեգրել Նրան որպես Իր «որդի» (տես՝ Հռոմ.1:4; Փիլ.2:9): Սա վաղ եկեղեցու և 8-րդ դարի մարդկանց փոքրաքանակ զանգվածի տեսակետն էր: Ոչ թե Աստված մարդ դարձավ (մարմնացում) այլ ընդհակառակը՝ մարդը դարձավ Աստված:

Դժվար է ասել, որ Հիսուսը՝ Որդի Աստվածը, Հավիտենական Աստվածը, վարձատրվեց կամ փառավորվեց Իր օրինակելի կյանքի համար: Եթե Նա արդեն Աստված էր, ինչպես կարող էր Նա վարձատրվել: Եթե Նա ուներ հավիտենական աստվածային փառք, ինչպես կարող էր ավելի մեծ պատվի արժանանալ: Չնայած դժվար է մեզ համար սա հասկանալը, Հայրը ինչ-որ կերպով պատվեց Հիսուսին այն ժամանակ, երբ Հիսուսը կատարելապես կատարեց Հոր կամքը:

Պապիրոս. Նյութի մի տեսակ, որի վրա գրում են. կիրառվել է Եգիպտոսում: Այն պատրաստում էին գետի եղեգից: Այդ նյութի վրա գրվել են հունարեն ՆԿ-ի հնագույն օրինակները:

Պարադոքս. Վերաբերում է այն ճշմարտություններին, որոնք թվում է, թե իրար հակասող են, սակայն երկուսն էլ ճշմարտություն են, չնայած նրանց միջև կա ներքին լարվածություն: Պարադոքսը փոխանցում է ճշմարտությունը՝ ներկայացնելով դրա երկու կողմերն էլ: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են պարադոքսալ (կամ բարբառային) գույգերով: Աստվածաշնչյան ճշմարտությունները առանձին աստղեր չեն, այլ համաստեղություններ, որոնք ձևավորել են առանձին պատկեր:

Պարբերություն. Սա արձակի հիմնական մեկնաբանության գրական բաժինն է: Ունի մի կենտրոնական միտք և դրա զարգացումը: Եթե մնանք այդ կենտրոնական մտքին հենված, ապա չենք փոքրացնի, մեծացնի կամ բաց թողնի բնագրի հեղինակի մտադրությունը՝ նպատակը:

Պլատոն. Հին Հունաստանի փիլիսոփաներից մեկն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել վաղ եկեղեցու վրա Ալեքսանդրիայի և Եգիպտոսի գիտնականների միջոցով, իսկ ավելի ուշ Օգոստինոսի միջոցով: Պլատոնը պնդում էր, որ երկրի վրա ամեն ինչ երևակայական է և հանդիսանում է հոգևոր աշխարհի բնօրինակը: Աստվածաբանները հետագայում Պլատոնի «գաղափարները՝ ոճր» հավասարեցնում էին հոգևոր արքայությանը:

Ռաբբիական Հուդայականություն. Շրջան, որը սկսվել է բաբելոնյան գերության ընթացքում (Ք. Ա. 586-538): Երբ քահանաների և Տաճարի ազդեցությունը դադարեց, հրեաների կյանքը սկսեց ձևավորվել տեղական ժողովարանների շուրջ: Հրեական մշակույթի, հաղորդակցության, երկրպագության և աստվածաշնչյան ուսմունքների այս կենտրոնները դարձան ազգային կրոնական կյանքի կենտրոնը: Հիսուսի օրոք «դպիրների այս կրոնը» հավասարազոր էր քահանաների կրոնին: Մ. թ. 70-ի Երուսաղեմի անկումից հետո, դպիրների կրոնը, որտեղ գերիշխում էին փարիսեցիները, սկսեց վերահսկել Հրեաների կրոնական կյանքը: Բնորոշվում է Թորայի գործնական, օրինապաշտական մեկնաբանությամբ, ինչպես որ բացատրում է բանավոր ավանդույթը (Թավմուդը):

A priori Սա հիմնականում «կանխակարծիք» տերմինի հոմանիշն է: Այն ենթադրում է նախապես ընդունված սահմանումների, սկզբունքների կամ դիրքերի հիման վրա քննարկում, որոնք ընդունվում են որպես ճշմարտություն: Սա այն է, ինչն ընդունվում է առանց քննելու և վերլուծության:

Սեպտուագինտա. Այսպես է կոչվում եբրայերեն ՀԿ-ի հունարեն թարգմանությունը: Ավանդույթն ասում է, որ այն գրվել է 70 օրում, 70 հրեա գիտնականների կողմից Եգիպտոսի Ալեքսանդրիական գրադարանի համար: Գրվելու ընդունված տարեթիվը Ք. Ա. 250 (իրականում թարգմանության համար, ավելի շուտ, պահանջվել է ավելի քան հարյուր տարի): Այս թարգմանությունը ունի մեծ նշանակություն, քանի որ (1) մեզ է տալիս հին տեքստը, որը կարող ենք համեմատել Սագորեթիկ եբրայերեն տեքստի հետ, (2) մեզ ցույց է տալիս հրեական մեկնաբանության վիճակը Ք. Ա. 3-րդ և 2-րդ դարերում, (3) մեզ է տալիս հրեական մեսիական հասկացողություն՝ նախքան Հիսուսին կմերժելին: Հասկանալով մեզ է «LXX»:

Սինայական հին ձեռագրերի ժողովածու /Codex Sinaiticus/. Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Այն գտնվել է գերմանացի գիտնական Թիստենդորֆի կողմից Ջերեկ Մուսա լեռան վրա գտնվող Մուրբ Եկատերինայի վանքից, որն ըստ ավանդության համընկում է Սինա լեռան հետ: Այս ձեռագիրը հայտնի է եբրայերեն այբուբենի առաջին *α* (*aleph*) տառով: Նրա մեջ ընդգրկված են թե՛ Հին Կտակարանը և թե՛ ամբողջ Նոր Կտակարանը: Մեր ունեցած ամենահին ունցիալ՝ մեծատառերով գրված ձեռագիրն է:

Սինթետիկ. Եբրայերեն պոեզիայի տեսակներին պատկանող երեք տերմիններից մեկն է: Այս տերմինը վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք ընդհանուր առմամբ կառուցվում են մեկը մյուսի վրա. երբեմն այսպիսի պոեզիան անվանում են «կուլմինացիոն» (տես՝ Սաղմ. 19:7-9):

Սիստեմատիկ աստվածաբանություն. Սա մեկնաբանության մի փուլ է, որը փորձում է աստվածաշնչյան ճշմարտությունները իրար հետ համակցել ավելի միահյուսված և ռացիոնալ կերպով: Ունի ավելի տրամաբանական, քան թե պատմական բնույթ, և ներկայացնում է Քրիստոնեական աստվածաբանությունը ըստ դասակարգման (Աստված, մարդ, մեղք, փրկություն և այլն):

Սուրբ Գրքի համանմանություն. Սա նշանակում է, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է, հետևաբար, նրա տարբեր տեքստերը չեն հակասում միմյանց, այլ լրացնում են: Այս նախապայմանը հիմք է աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու համար օգտագործելու գուգահեռ հաստատումներ:

Սփյուռք. Հատուկ հունարեն տերմին է, որն օգտագործում էին Պաղեստինի հրեաները այն հրեաների համար, ովքեր ապրում էին Խոստացյալ Երկրի աշխարհագրական սահմաններից դուրս:

Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու (Codex Vaticanus). Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում: Սկզբում պարունակել է ամբողջ ՀՎ-ը, անկանոն գրքերը և ՆԿ-ը: Սակայն որոշ մասեր անհետացել են (Ծննդոց, Սաղմոսներ, Եբրայեցիներին ուղղված թուղթը, Հովվական թղթերը, Փիլիմոն և Հայտնություն): Ծատ օգտակար ձեռագիր է հեղինակային բնագրերը ճանաչելու համար: Այն նշվում է «B»:

Վերափոխում. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխմանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դիմամիկ համագործ» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնօրինակի տեքստին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ոճեր և դարձվածքներ: Թարգմանության տարբեր տեսությունների վերաբերյալ հետաքրքիր քննարկում կարող եք գտնել Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «*Բնչպես կարդալ Աստվածաշուրջը իր ամբողջական իմաստով*» գրքում (Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*), էջ` 35:

Վերլուծական բառարան. Սա ուսումնասիրություն անելու միջոց է, որը թույլ է տալիս որոշել ՆԿ-ում առկա բոլոր հունարեն ձևերը: Այն հանդիսանում է հիմնական սահմանումների ժողովածու` հունարեն այբբենական կարգով: Բառացի թարգմանության հետ միասին օգնում է հունարեն չիմացող հավատացյալին վերլուծելու ՆԿ-ի հունարեն քերականական և շարահյուսական ձևերը:

Վուլգատա. Ջերոմի կողմից թարգմանված Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունն է: Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հիմնական թարգմանությունն է և կատարվել է մ.թ. 380-ականներին:

Տեքստային քննադատություն. Աստվածաշնչի ձեռագրերի ուսումնասիրություն: Տեքստային քննադատությունը անհրաժեշտ է, որովհետև բնագրերը մեզ չեն հասել, իսկ արտագրությունները տարբերվում են միմյանցից: Մենք փորձում ենք բացատրել տարբերակներն ու հնարավորինս մոտենալ Հին և Նոր Կտակարանների հեղինակների բնագրերին: Այն հաճախ կոչվում է «թույլ քննադատություն»:

Textus Receptus. Անվանումը վերցված է Էլզևիրի հունարեն ՆԿ-ի խմբագրված տարբերակից, մ.թ. 1633: Հիմնականում հունարեն ՆԿ-ի այս տարբերակը հիմնված է հունարենի մի քանի ավելի ուշ ձեռագրերի վրա և Երասմոսի (1510-1535), Ստեփանոսի (1546-1559) և Էլզևիրի (1624-1678) լատիներեն թարգմանությունների վրա: Ա. Թ. Ռոբերթսոնը («Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» գրքում) ասում է, որ «բյուզանդական տեքստը իրականում Textus Receptus-ն է»: Բյուզանդական տեքստը հնագույն առաջին հունարեն ձեռագրերի երեք ընտանիքների միջից ամենաքիչ արժեքավորն է (արևմտյան, ալեքսանդրիան և բյուզանդական): Այն պարունակում է սխալներ, որոնք հարյուրամյակներ շարունակ արել են արտագրողները: Համենայնդեպս, Ա. Թ. Ռոբերթսոնը նաև ասում է, որ «Textus Receptus տեքստը մեզ է հասել հիմնականում ճշգրիտ տեքստով» (էջ` 21): Այս հունարեն ձեռագիր ավանդական տարբերակը (հատկապես Երասմոսի 1522 թ-ի երրորդ խմբագրությունը) հիմք է հանդիսանում King James անգլերեն թարգմանության համար, 1611 թ.:

Փոխաբերություն (Metonymy). Սա պատկերավոր լեզու է, երբ ինչ-որ մի բանի անունը օգտագործվում է մեկ այլ բան ներկայացնելու համար: Օր.՝ «թեյնիկը եռում է» այնինչ թեյնիկի միջի ջուրն է եռում և ոչ թե թեյնիկն ինքը:

Քրիստոսակենտրոն. Այս տերմինը ընդգծում է Քրիստոսի կենտրոնական դերը: Ես այն կիրառում եմ կապված այն գաղափարի հետ, որ Հիսուսը Տերն է ամբողջ Աստվածաշնչի: ՀՎ-ը մատնանշում է Նրան. Նա է կատարողն ու նպատակը ՀՎ-ի (տես՝ Մատթ.5:17-48):

Օրինականություն. Այս մոտեցմանը բնորոշ է կանոններին կամ ծեսերին հետևելու խիստ շեշտադրումը: Այն հակված է ապավինելու մարդու կողմից որոշակի կանոններ և օրենքներ պահելուն, որպես Աստծո կողմից ընդունված լինելու միջոց: Օրինականությունը հակված է թերագնահատելու փոխհարաբերությունները և մեծարելու գործերը, երբ երկուսն էլ իհարկե կարևոր են սուրբ Աստծո և մեղավոր մարդու միջև եղած ուխտի փոխհարաբերության մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՈՒ ՏԵՔՍԱՅԻՆ ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին՝

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - Բ. Նոր Կտակարան
- II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:
- III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար:

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

- 1. Մագորեթիկ տեքստ (MT) – Մա հին հրեական կոնսոնանտ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված ռաբբի Աքիբայի կողմից մ. թ. 100-ին: Չայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր մագորեթներ էին: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Միշնան, թալմուդը, Թարգումները, Փեշիթան և Վուլգատան:
- 2. Սեպտուագինտա (LXX) – Ավանդույթն ասում է, որ Սեպտուագինտան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում, Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (Ք. Ա. 285-246): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստետոսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն այլ տեքստային ավանդության վրա, համեմատվելով ռաբբի Աքիբայի (MT) տեքստի հետ:
- 3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) - Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում (Ք. Ա. 200- մ. թ. 70) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեններ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարմեր մասերից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն ուրիշ տեքստային ընտանիքի՝ չտարբերվելով MT և LXX:
- 4. Ահա մի քանի հստակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու համար.
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) LXX, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆԲԱ վրա»
 - (2) MT, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵՉ վրա»
 - (3) դատելով Ես.52:15-ից ճիշտ տարբերակը LXX-ն է
 - (ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր ապշեն Նրանով»
 - (բ) MT, «այնպես շատ ազգերի Նա զարմացնում է»
 - բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) DSS, Ես.21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա եմ կանգնել Ես...»
 - (2) MT, Ես. 21:8, «Առյուժ, ո՛վ Տերս, ցերեկը շարունակ կանգնում եմ դիտանոցի վրա»
 - գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես.53:11-ը
 - (1) LXX և DSS, «Իր անձի աշխատությունից հետո նա կտեսնի լույսը և կբավարարվի»
 - (2) MT, «Իր անձի աշխատության պտուղը պիտի տեսնի ու պիտի բավարարվի»

Բ. Նոր Կտակարան

- 1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունցիալներ): Ավելի ուշ, մոտավորապես մ. թ. 9-րդ դարում հայտնվեցին գրչագիր՝ ձեռագրերը (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Հաշվվում է մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Սուրբ Գրքի մոտ 2100 օրինակներ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:
- 2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով ՆԿ-ի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են մ. թ. 2-րդ դարին, սակայն մեծամասնությունը մ. թ. 3-րդ և 4-րդ դարերին: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում ՆԿ-ն ամբողջությամբ: Եվ չնայած, որ նրանք հանդիսանում են ՆԿ-ի ամենահին օրինակները, դա ինքնըստինքյան չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ

- օրինակներից շատերը արվել են հապճեպ՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդ-քան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:
3. Մինայական հին ձեռագրերի ժողովածու (Codex Sinaiticus), որը հայտնի է երբայերեն *α* (*aleph*) տառով կամ (01), գտնվել է Թիաշենդորֆի կողմից Մինա լեռան վրա գտնվող Մուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է մ. թ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն ՆԿ-ի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
 4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Alexandrinus), որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Եգիպտոսի Ալեքսանդրիայում:
 5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Vaticanus), որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է մ. թ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
 6. Եփրեմի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Ephraemi), որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:
 7. Բիզայի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Bezae), որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա հանդիսանում է «Արևմտյան Տեքստ» կոչվող ձեռագրի հիմնական տարբերակը: Այն պարունակում է բազմաթիվ հավելումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը անգլերենի KING JAMES թարգմանության ժամանակ:
 8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.
 - ա. Ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P⁷⁵, P⁶⁶, (մոտ մ.թ. 200), պարունակում են Ավետարանները
 - (2) P⁴⁶ (մոտ մ.թ. 225), պարունակում է Պողոսի նամակները
 - (3) P⁷² (մոտ մ.թ. 225-250), պարունակում է Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ մ.թ. 325), ընդգրկում է ՀԿ և ՆԿ ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ MSS ձեռագրեր, որտեղ այս տեսակի տեքստ են ներկայացնում, հետևյալն են՝ ,*α*, C, L, W, 33
 - բ. Արևմտյան տեքստ՝ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի՝ Տերտուլիանոսի, Կիպրիանոսի մեջբերումները և հին լատիներեն թարգմանությունը
 - (2) Իրենեոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանությունը
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու “D” Բիզայի՝ այս տեսակի տեքստ
 - գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) Այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները՝ Կապադովկացիներ, Ոսկերեքան և Թերոդորեթ
 - (3) Հին ձեռագրերի ժողովածու A (Codex A), միայն Ավետարաններում
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու E (Codex E), 8-րդ դար՝ ամբողջ ՆԿ-ը
 - դ. Չորրորդ հնարավոր տեսակը «Կայսերական» է Պաղեստինից
 - (1) հիմնականում հանդիպում է միայն Մարկոս Ավետարանում
 - (2) մասամբ կարելի է գտնել P⁴⁵ և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (շատ դեպքերում՝ մեծամասամբ)

ա. Վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառը) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը (հոմեոտելետոն - homoioteleuton)

- (1) աչքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա - haplography)
- (2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնություն (դիտոգրաֆիա - dittography)

- բ. լսողական վրիպում. տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի գրելաձևի վրիպում (իտացիզմ - itacism): Հաճախ գրվել է նույնանման հնչողությամբ հունարեն բառի մեկ այլ տարբերակ:
- գ. Շատ հին հունարեն տեքստերում գուլխների և համարների բաժանումները չկան, գրեթե բացակայում է կետադրությունը և բառերը իրարից առանձնացված չեն: Տեքստը կարելի է բաժանել տարբեր մասերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:

2. Դիտավորյալ

- ա. Արտագրված տեքստի քերականական բարելավման համար արվել են փոփոխություններ
- բ. Տեքստը աստվածաշնչյան այլ տեքստերի հետ համաձայնեցնելու համար արվել են փոփոխություններ (գուգահեռ տեքստերի համաձայնեցում)
- գ. Ընթերցանության երկու կամ ավելի տարբերակներից մեկ երկար կապակցված տեքստ ստանալու համար կատարվել են փոփոխություններ (միաձուլում)
- դ. Անհասկանալի թվացող տեքստը ուղղելու համար կատարվել են փոփոխություններ (տես՝ 1 Կորնթ. 11:27 և 1 Հովհ. 5:7-8):
- ե. մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել պատմական կոնտեքստի կամ տեքստի ճիշտ մեկնաբանության վերաբերյալ լուսանցքներում, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (տես՝ Հովհ. 5:4):

Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)

1. ամենատարօրինակ կամ անսովոր քերականական տեքստը ավելի շուտ բնագիրն է
2. ամենակարճ տեքստը ավելի շուտ բնագիրն է
3. ավելի հին տեքստին ավելի շատ արժեք է տրվում՝ նրա պատմականորեն բնագիրն մոտ լինելու համար, իսկ մնացած ամեն ինչում հավասար են
4. ձեռագրեր, որոնք աշխարհագրական առումով բաժանված են, սովորաբար մոտ են բնագրին
5. վարդապետներն ավելի թույլ տեքստեր, հատկապես ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում մեծ աստվածաբանական քննարկումներին վերաբերող, ինչպես օրինակ Երրորդության թեման 1 Հովհ. 5:7-8-ում
6. գերադասելի է այն տեքստը, որն օգնում է բացատրել այլ տարբերակների գոյությունը,
7. այսպիսի խրթին տարբերակներում բալանսը ցույց տալու համար օգնող երկու մեջբերումներ՝
 - ա. Ջ. Հարոլդ Գրինլի «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն» (J. Harold Greenlee's book, *Introduction to New Testament Textual Criticism*) էջ՝ 68. «Ոչ մի Բրիտանական վարդապետություն չի հիմնվում վիճելի տեքստի վրա և ՆԿ-ը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի ուղղափառ կամ վարդապետական դարձնելուց, քան ներշնչված բնագիրն է»:
 - բ. Ու. Է. Կրիստելին ասում էր Գրեգ Գարիսոնին «Բիրնինգհեմ Նյուզ»-ից, որ նա՝ Կրիստելը, չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման՝ թարգմանիչների բազմադարյա գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց, - «Ես հավատում եմ տեքստային քննադատությանը: Եվ որպես այդպիսին, կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկը այն ավելացրել է...»:

SBC (“Southern Baptist Convention”) անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ «ինտերպոլացիա» նաև ակնհայտ է Հովհաննես 5-ում, Բեթհեզդայի ավագանի մոտ Հիսուսի պատմության մեջ: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (տես՝ Մատթեոս 27 և Գործք 1), Կրիստելին ասում էր, - «Մա պարզապես ինքնասպանությունը դիտարկելու մեկ այլ ձև է: Եթե դա այդպես է Աստվածաշնչում, ապա ունի բացատրություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու պատմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելին ավելացրեց, - «Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն անցողիկ և անհեթեթ չէ, այլ դիմամիկ է և շատ կարևոր...»:

III. Զեռագրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Հետագա ընթերցանության համար գրքեր.

1. *Biblical Criticism: Historical, Literary and Textual*, by R. H. Harrison (Ռ. Հ. Հարիսոն, «Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային»):

2. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration* by Bruce M. Metzger (Բրյուս Մ. Մեցգեր, «Նոր Կտակարանի Տեքստը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրումը և բնագրի վերականգնումը»):
3. *Introduction to New Testament Textual Criticism*, by J. H. Greenlee (Ջ. Հ. Գրինլի, «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն»)

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԵՔ
ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն, Միջերկրական աշխարհում ընդունված բարբառն էր՝ Ալեքսանդր Մակեդոնացու աշականքներից հետո (Ք. Ա. 336-323) մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (Ք. Ա. 300- մ. թ. 500): Այն պարզապես պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի մի նոր ձև, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրական աշխարհի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը ինչ որ առումով բացառիկ էր, որովհետև այն գործածողների հիմնական լեզուն՝ բացի Ղուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամեերենն էր: Ահա թե ինչու նրանց գրքերում առկա էին արամեերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարդում էին և մեջբերում կատարում Մեպտուազինտայից (ՀԿ-ի հունարեն թարգմանությունը), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Մակայն Մեպտուազինտան նույնպես գրել են հրեա դպիրները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա մեզ հիշեցնում է, որ մենք չենք կարող դիտարկել ՆԿ-ը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Մեպտուազինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիի գործերն են, ինչպես նաև (3) Եգիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի՞ մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և ՆԿ-յան կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոցն էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք համատեքստով: Բառերն իմաստավորվում են միայն համատեքստում, հետևաբար քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) ըստ հեղինակի հատուկ ոճի և (2) ըստ հատուկ համատեքստի: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայերով հարուստ լեզու է: Հաճախ մեկնության բանալին բայաձանգյալների տեսակը և ձևն է: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) համատեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՄԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի կապը կատարյալ կամ անկատար գործողության հետ: Այն համապատասխանաբար կոչվում է «կատարյալ» և «անկատար» ժամանակ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ կենտրոնանում են գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ զագաթնակետի մասին:
2. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ կենտրոնանում են գործողության շարունակական ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և ուժգնացող:

Բ. Ժամանակները կարող են դասակարգվել համաձայն հեղինակի կողմից գործողության ընթացքի դիտարկման:

1. Այն տեղի ունեցավ = ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ
2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ չոչափելի են = ԿԱՏԱՐՅԱԼ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում և հետևանքները չոչափելի են, սակայն ոչ հիմա = ԳԵՐԱ-ԿԱՏԱՐ
4. Այն տեղի է ունենում = ՆԵՐԿԱ
5. Այն տեղի էր ունենում = ԱՆԿԱՏԱՐ
6. Այն տեղի կունենա = ԱՊԱՌՆԻ

Որպես օրինակ, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանության մեջ, կվերցնենք «փրկել» տերմինը: Այն կիրառվում էր մի քանի տարբեր ժամանակներով՝ ցույց տալով թե՛ դրա ընթացքը, թե՛ կուլմինացիան:

1. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված» (տես՝ Հռոմ.8:24)
2. ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված են, և հետևանքը շարունակվում է» (տես՝ Եփես.2:5,8)
3. ՆԵՐԿԱ - «փրկվում են» (տես՝ 1 Կորնթ.1:18; 15:2)
4. ԱՊԱՌՆԻ - «կփրկվեն» (տես՝ Հռոմ.5:9,10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՆ, թարգմանիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել տվյալ ժամանակաձևը: Ստանդարտ «առանց ավելորդությունների» ժամանակաձևը՝ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, «աննշան» կամ «ոչնչով չթուլացող» ԲԱՅԻ ձև է: Այն կարող է կիրառվել տարբեր կերպերով՝ կախված համատեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Այնցյալ ժամանակձևն ընդունում էին միայն ՄԱՀ-ՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԲԱՅԵՐԸ: Եթե որևէ այլ ժամանակ էր կիրառվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ. Այն արտահայտում է կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Ինչ-որ առումով դա ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԻ և ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ-ՆԵՐԻ գույքողություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփես.2:5 և 8 «շնորհքով եք փրկված և շարունակում եք փրկվել»:
2. ԳԵՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. այն նման է ԿԱՏԱՐՅԱԼԻՆ, սակայն շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ «Պետրոսն էլ դռան մոտ կանգնած էր» (Հովհ.18:16):
3. ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ «Ով մնում է Նրա մեջ, մեղք չի գործում», «Ով որ Աստծուց է ծնված, մեղք չի գործում» (1 Հովհ.3:6 և 9):
4. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այս ժամանակաձևի կապը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ հետ ուղիղ համեմատական է ԿԱՏԱՐՅԱԼԻ և ԳԵՐԱԿԱՏԱՐԻ միջև կապին: ԱՆԿԱՏԱՐՆ արտահայտում է անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել է ներկա պահին կամ էլ անցյալում գործողության հենց սկզբում: Օրինակ՝ «Այդ ժամանակ նրա մոտ էին գնում Երուսաղեմից» (Մատթ.3:5):
5. ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ. Այն արտահայտում է մի գործողություն, որը տեղի կունենա ապագայում: Շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաճախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ «Երանի... նրանք» (Մատթ.5:4-9):

II. ՍԵՌ

Ա. ՍԵՌԸ ցույց է տալիս ԲԱՅԻ գործողության և դրա ԵՆԹԱԿԱՅԻ միջև եղած կապը:

Բ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԸ նորմալ, սպասված և չշեշտադրված միջոցն է, որը ցույց է տալիս, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:

Գ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ նշանակում է, որ ԵՆԹԱԿԱՆ կրում է ԲԱՅԻ արտահայտած գործողությունը, որը կատարվել է արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ ՆԱԽԴԻՐՆԵՐԸ և ՀՈԼՈՎՆԵՐԸ հունարեն ՆԿ-ում:

1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (տես՝ Մատթ.1:22; Գործք 22:30):
2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (տես՝ Մատթ.1:22):
3. Անորոշ գործող անձ՝ սովորաբար կիրառվող *en* ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:
4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:

Դ. ՉԵՉՈՔ ՍԵՌԸ նշանակում է, որ ԵՆԹԱԿԱՆ կատարում է ԲԱՅԻ արտահայտած գործողությունը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է ԲԱՅԻ գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական խիստ հետաքրքրվածության ՍԵՌ: Այս քերականական կառուցվածքը ուժեղացնում է ԵՆԹԱԿԱՅԻ նշանակությունը նախադասության մեջ: Անզվերենում նման քերականական կառուցվածք գոյություն չունի: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի մի քանի օրինակներն են՝

1. ԱՆԴՐԱԴԱՐՁՈՂ – ենթակայի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ «ինքն իրեն կախեց» (Մատթ.27:5):
2. ԻՆՏԵՆՍԻՎ – ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ «Սատանան ինքն էլ կերպարանափոխվում է լույսի հրեշտակի» (2 Կորնթ.11:14):
3. ՓՈԽԱԴԱՐՁ – երկու ԵՆԹԱԿԱՆԵՐԻ փոխազդեցությունը: Օրինակ՝ «Եվ խորհուրդ արին իրար հետ...» (Մատթ.26:4):

III. ԵՂԱՆԱԿ

Ա. Կոյնե հունարենն ունի չորս ԵՂԱՆԱԿ: Դրանք ցույց են տալիս բայի կապը իրականության հետ, սակայն համաձայն հեղինակի սեփական տեսանկյան: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և ԸՂՁԱԿԱՆ):

Բ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ արտահայտում է առնվազն հեղինակի տեսանկյունից տեղի ունեցած գործողություն ցույց տվող ստանդարտ եղանակ: Սա միակ հունարեն եղանակն է, որն արտահայտում է որոշակի ժամանակ, եթե անգամ այդ ասպեկտը երկրորդական է:

Գ. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է ապագայում հնարավոր գործողություն: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ բնօրինակություններ ունի ԱՊՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ: Տարբերությունն այն է, որ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆ արտահայտում է որոշ աստիճանի տարակուսանք: Անգլերենում հաճախ այն արտահայտվում է *could, would, may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):

Դ. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է ցանկություն, որը տեսականորեն կարող է ի կատար ածվել: ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ հետ համեմատած այն դիտարկվում է իրական գործողությունից մի քայլ առաջ: ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է գործողության հնարավորությունը որոշ հանգամանքների ներքո: ՆԿ-ում ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հազվադեպ է հանդիպում: Այն շատ հաճախ կիրառվում է Պողոսի հայտնի արտահայտության մեջ՝ «քավ լիցի», որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (տես՝ Հռոմ.3:4, 6:31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1,11; 1 Կորնթ.6:15; Գաղ.2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Դուկ.1:38, 20:16; 8:20 և 1 Թեսաղ.3:11:

Ե. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց է տալիս հրաման, որի կատարումը հնարավոր է, սակայն շեշտը դրվում է խոսողի մտադրության վրա: Այն հաստատում է միայն կամային հնարավորությունը և պայմանավորված է մեկ այլ անձի ըտրությամբ: ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հատկապես օգտագործվում է աղոթքներում և երրորդ անձի խնդրանքներում: ՆԿ-ում այս հրամաններն ունեին միայն ՆԵՐԿԱ և ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակաձևեր:

Զ. Մի քանի լեզուների քերականության մեջ ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն ՆԿ-ում և սովորաբար սահմանվում էին որպես ԲԱՅԱԾԱՆՑՅԱԼՆԵՐ: Դրանք թարգմանվում են գլխավոր առնչվելի ԲԱՅԻ հետ միասին: ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Դիտարկվել է լավագույն տարբերակը և հաշվի առնվել Աստվածաշնչյան մի քանի թարգմանություններ: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել Բեյքերի *Աստվածաշունչը Բասնիլեց Թարգմանություններով* ձեռնարկը (*The Bible in Twenty Six Translations, Baker*):

Է. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ օգտագործվում է որպես գործողության ստանդարտ կամ «աննշան» միջոց իրողությունն արձանագրելու համար: Ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ մեկնության համար ուներ որոշակի նշանակություն, որը հեղինակն էր ուզում հաղորդել:

IV. Հետևյալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, որոնք չեն տիրապետում հունարենին.

Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ, *Հունարեն Վերլուծական Նոր Կտակարան* /Frieberg, Barbara and Timothy, *Analytical Greek New Testament*, Grand Rapids: Baker, 1988/:

- Բ. Ալֆրեդ Մարշալ, *Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն* /Marshall, Alfred, *Interlinear Gree-English New Testament*, Grand Rapids: Zondervan, 1976/:
- Գ. Ուիլյամ Դ. Մաունս, *Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան* /Mounce, William D. *The Analytical Lexicon to the Greek New Testament*, Grand Rapids: Zondervan, 1993/:
- Դ. Ռեյ Սամերս, *Նոր Կտակարանի Հունարենի Կարևոր Առանձնահատկությունները* /Summers, Ray, *Essentials of New Testament Greek*, Nashville: Broadman, 1950/:
- Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուդիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

- Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը ԳՈՅԱԿԱՆԻ խոնարհվող ձևն է, որը ցույց է տալիս դրա կապը ԲԱՅԻ և նախադասության մյուս անդամների հետ: Կոյնե հունարենում ՆԱԽԴԻՐՆԵՐԸ ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովի ձևը կարող էր վկայել մի քանի տեսակ կապերի մասին, ՆԱԽԴԻՐՆԵՐՆ օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:
- Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով.
1. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր առարկաններն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ և ԱԾԱԿԱՆՆԵՐԸ «լինել» կամ «դառնալ» օժանդակ ԲԱՅԵՐԻ հետ:
 2. ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բառի հատկանիշը կամ որակը, որի հետ առնչվում էր: Պատասխանում էր «ի՞նչպիսի» հարցին: Այն հաճախ արտահայտվում էր անգլերենի «of» նախդիրի օգնությամբ:
 3. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ նույն խոնարհված ձևը, սակայն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Ընդհանրապես այն արտահայտում է ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի անջատում: Անգլերենում այն հաճախ կիրառվում է *from* նախդիրի օգնությամբ (հայերենում -ից վերջածանցով):
 4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր անձնական հետաքրքրությունը նկարագրելու համար: Սա կարող էր մատնանշել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ այն ԱՆՈՒՂՂԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆ էր: Թարգմանվում է անգլերենի *to* նախդիրի օգնությամբ:
 5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ ուներ ՏՐԱԿԱՆԻ նույն խոնարհված ձևը, սակայն նկարագրում էր դիրք կամ տեղանք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Հաճախ թարգմանվում է անգլերեն *in, on, at, among, during, by, upon* և *beside* նախդիրների օգնությամբ:
 6. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆ և ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ նույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Հաճախ թարգմանվում էր անգլերեն *by* և *with* նախդիրների օգնությամբ:
 7. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: ԳՈՅԱԿԱՆՆ այս ՀՈԼՈՎՈՒՄ հիմնականում օգտագործվում էր որպես ՈՒՂՂԻ ԼՐԱՑՈՒՄ: Այն պատասխանում է «որքա՞ն», «ի՞նչ աստիճանի» հարցերին:
 8. ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ԾԱՂԿԱՊՆԵՐ ԵՎ ԿԱՊԵՐ

- Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, քանի որ ունի շատ ԿԱՊԵՐ: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը հաճախ մեկնաբանության համար շատ նշանակալի է լինում: Փաստացի այս շաղկապները և կապերը մատնանշում են հեղինակի

մտքի ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու, թե ինչ է փորձում հաղորդել հեղինակը:

Բ. Ստորև ներկայացված է որոշ շաղկապների, կապակցող բոռերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Ի. Դանայի և Ջուլիուս Զ. Մենթեյի *Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Ձեռնարկ* գրքից /H. E. Dana and Julius K. Mantey's *A Manual Grammar of the Greek New Testament*):

1. ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՊ

ա. *epei, epeid ē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) – «երբ»

բ. *heōs* – «մինչդեռ»

գ. *hotan, epan* (ստ. եղ.) – «երբ էլ որ»

դ. *heōs, achri, mechri* (ստ. եղ.) – «մինչև որ»

ե. *priv* (անորոշ) – «նախքան»

զ. *hōs* – «ի վեր», «երբ», «այն ժամանակ, երբ»

2. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ

ա. Նպատակ

(1) *hina* (ստ. եղ.), *hopōs* (ստ. եղ.), *hōs* – «որպեսզի», «որ»

(2) *hōste* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԴՈՎ) – «որ»

(3) *pros* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԴՈՎ) կամ *eis* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԴՈՎ) – «որ»

բ. Հետևանք (նպատակի և հետևանքիքերականական ձևերիկ միջև սերտ կապ կա)

(1) *hōste* (ԱՆՈՐՈՇ, սա ամենատարածվածն է) – «որպեսզի», «այսպիսով»

(2) *hiva* (ստ. եղ.) – «այնպես որ» «որպեսզի»

(3) *ara* – «այնպես»

գ. Պատճառ

(1) *gar* (պատճառ-հետևանք կամ պատճառ-եզրահանգում) – «քանի որ», «որովհետև»

(2) *dioti, hotiy* – «որովհետև»

(3) *epei, epeidē, hōs* – «քանի որ»

(4) *dia* (ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՎ) և (ԱՆՈՐՈՇ ՀՈԴՈՎ) – «որովհետև»

դ. Եզրակացություն

(1) *ara, poinun, hōste* – «հետևաբար»

(2) *dio* (ամենաուժեղ ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՇԱՂԿԱԳԸ) – «ինչի կապակցությամբ» «ինչի համար», «ուստի»

(3) *oun* – «ուստի», «այսպիսով», «այն ժամանակ», «արդյունքում»

(4) *toinoun* – «համապատասխանաբար»

ե. Ընդդիմական կամ հակադրություն

(1) *alla* (խիստ ընդդիմական) – «բայց», «բացառությամբ»

(2) *de* – «բայց», «սակայն», «բայց և այնպես», «մյուս կողմից»

(3) *kai* – «բայց»

(4) *mentoi, oun* – «սակայն»

(5) *plēn* – «այնուամենայնիվ» (հիմնականում Ղուկասում)

(6) *oun* – «սակայն», «համենայն դեպս»

զ. Համեմատություն

(1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)

(2) *kata* (բաղադրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)

(3) *hosos* (Եբրայեցիսում)

(4) *ē* – «քան»

է. Ծարունակական կամ հաջորդական

(1) *de* – «և» «հիմա»

(2) *kai* – «և»

(3) *tei* – «և»

(4) *hina, oun* – «որ»

(5) *oun* – «այն ժամանակ» (Հովհաննեսում)

3. Էմֆատիկ (շեշտված) կիրառություն

a. *alla* – «անշուշտ», «այո», «իրականում»

b. *ara* – «իրապես», «անշուշտ», «իսկապես»

c. *gar* – «բայց իսկապես», «անշուշտ», «իսկապես»

- d. *de* – «խկապես»
- e. *ean* – «նույնիսկ»
- f. *kai* – «նույնիսկ», «խկապես», «իրապես»
- g. *mentoi* – «խկապես»
- h. *oun* – «իրապես», «ամեն դեպքում»

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ պարունակում է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառուցվածքը օգնում է մեկնաբանությանը, քանի որ տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու է հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի ունենում կամ տեղի չի ունենում: Գոյություն ունեւոր ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահղացման տեսանկյունից մինչև ցանկալին:

Բ. ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտադրության տեսանկյունից, թեև արտահայտվում էր «եթե» շաղկապով: Որոշ համատեքստերում այդ շաղկապը կարող էր թարգմանվել «քանի որ», «ապա» (տես՝ Մատթ.4:3; Հռոմ.8:31): Սակայն սա չի նշանակում, որ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած դեպքեր: Դրանք հաճախ կիրառվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (տես՝ Մատթ.12:27):

Գ. ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ հաճախ կոչվում է «իրականությանը հակասող»: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացուցել արտահայտած տեսակետը կամ ընդունվել որպես փաստ: Օրինակներ.

1. «Այս մարդը, եթե մարգարե լիներ (որ չէր), կիմանար (իսկ նա չգիտեր), թե ով և ինչպիսի կին է սա, որ դիպչում է Իրեն, որովհետև նա մեղավոր մեկն է» (Ղուկ.7:39):
2. «Քանի որ, եթե դուք Մովսեսին հավատայիք (իսկ դուք չեք հավատում), Ինձ էլ կհավատայիք (իսկ դուք չեք հավատում)» (Հովհ.5:46):
3. «Եթե մարդկանց հաճեցնեի (իսկ ես դա չեմ անում), ապա Քրիստոսին ծառա չէի լինի» (Գաղ.1:10):

Դ. ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ խոսում է ապագայում հնարավոր գործողության մասին: Հաճախ այն ենթադրում է գործողության հավանականությունը, իսկ սովորաբար ակնարկում է դրա պատահականությունը: Հիմնական ԲԱՅՈՎ արտահայտված գործողությունը պայմանավորված է այն բանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ 1 Հովհ.1:6-10; 2:4,6,9,15,20, 21,24,29; 3:21; 4:20; 5:14,16:

Ե. ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ ամենաառաջինը է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում ՆԿ-ում: Փաստացի գոյություն չունի լիարժեք ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որտեղ գլխավոր և ստորադասական նախադասությունները համապատասխանում են իրենց սահմանմանը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ օրինակ է 1 Պետ.3:14-ի բացման խոսքը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ մեկ այլ օրինակ է Գործք 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ա. ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ *ME* ՄԱՍՆԻԿԻ հետ հաճախ (բայց ոչ միայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են՝ «ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա...» (Մատթ.6:19), «հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար...» (Մատթ.6:25), «և ձեր անդամները անիրավության գործիք մի՛ ընծայեք

մեղքին...» (Հռոմ.6:13), «և մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին...» (Եփես.4:30), «և մի՛ արբենաք գինով...» (Եփես.5:18):

Բ. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ *ME* ՄԱՍՆԻԿԻ հետ շեշտադրում է, որ «նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն»: Մի քանի օրինակներից են՝ «Մի՛ կարծեք ...» (Մատթ.5:17), «հոգս մի՛ արեք ...» (Մատթ.6:31), «ամոթ մի՛ համարիր...» (2 Տիմ.1:8):

Գ. ԿՐԿՆԱԿԻ ԺԵՏՈՒՄԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ հետ շատ խիստ ժխտում է՝ «երբեք, ոչ երբեք» կամ «ոչ մի դեպքում»: Մի քանի օրինակներից են՝ «Նա մահ չի տեսնի հավիտյան» (Հովհ.8:51), «ես հավիտյան միս չեմ ուտի» (1 Կորնթ.8:13):

IX. ՀՈԴ

Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստը, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Դրա հիմնական ֆունկցիան բառի, անվան կամ արտահայտության վրա ուշադրություն հրավիրելու միջոց հանդիսանալն է կամ դրանք «մատնացույց» անելը: Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ տարբեր կերպերով են այն կիրառում: Որոշիչ հոդը կարող էր կատարել նաև հետևյալ ֆունկցիան.

1. որպես բացառում, հակասման սկզբունքի համաձայն, ինչպես որ ցուցական ԴԵՐԱՆՈՒՆԸ
2. որպես նշան, ավելի վաղ հիշատակված ԵՆԹԱԿԱՅԻ կամ անձի
3. որպես միջոց, նախադասության մեջ որոշելու ենթական իր հետ կապված ԲԱՅԻ հետ: Օրինակներ՝ «Աստված Հոգի է» Հովհ.4:24, «Աստված լույս է» 1 Հովհ.1:5, «Աստված սեր է» 4:8,16:

Բ. Կոյնե հունարենը չի ունեցել ԱՆՈՐՈՇ ՀՈԴ, ի տարբերություն անգլերենի: ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ բացակայությունը կարող էր նշանակել.

1. առարկայի առանձնահատկությունների կամ որակի շեշտադրություն
2. առարկայի դասակարգման շեշտադրություն

Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպերով էին կիրառում հոդը:

X. ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ՇԵՏՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է ՆԿ-ի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ հեղինակները Դուկասը և Եբրայեցիս թղթի հեղինակներն են:

Բ. Ավելի շուտ նշեցինք, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ստանդարտ է և չի շեշտադրվում, մինչ ցանկացած այլ ժամանակաձև, սեռ կամ եղանակ մեկնության համար իրենց նշանակությունն ունեն: Իհարկե դա չի նշանակում, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ հաճախ չէր կիրառվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռոմ.6:10 (երկու անգամ):

Գ. Բառային հաջորդականությունը Կոյնե հունարենում

1. Կոյնե հունարենը ճկուն լեզու էր, որ ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառերի ստանդարտ հերթականությունը, որպեսզի արտահայտեր՝
 - ա. ինչ էր ուզում հեղինակը ընդգծել ընթերցողի համար
 - բ. ինչը կարող էր ըստ հեղինակի զարմացնել ընթերցողին
 - գ. հեղինակի համար թանկ և կարևոր բաները
2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Սակայն, ենթադրվում է, որ բառային ստանդարտ հաջորդականությունը սա է՝
 - ա. Կապող ԲԱՅԵՐԻ համար
 - (1) ԲԱՅ
 - (2) ԵՆԹԱԿԱ
 - (3) ԼՐԱՑՈՒՄ
 - բ. անցողիկ ԲԱՅԵՐԻ համար

- (1) ԲԱՅ
- (2) ԵՆԹԱԿԱ
- (3) ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ
- (4) ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ
- (5) ՆԱԽԴԻՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

գ. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ համար

- (1) ԳՈՅԱԿԱՆ
- (2) ՈՐՈՇԻՉ
- (3) ՆԱԽԴԻՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

3. Բառային հաջորդականությունը կարող է մեկնաբանության համար խիստ կարևոր լինել: Օրինակներ՝

ա. «Աջ ձեռք տվեցին ինձ և Բառնաբասին հաղորդակցության համար» (Գաղ.2:9 /հունարենի հաջորդականությամբ/): «Աջ ձեռք հաղորդակցության համար» արտահայտությունը կիսվել է և դրվել սկզբում և վերջում, ցույց տալու դրա կարևորությունը:

բ. «Քրիստոսի հետ» (Գաղ.2:19) դրված էր առջևում /հունարենում՝ «Ես Քրիստոսի հետ խաչված եմ»/: Նրա մահը կենտրոնական իրադարձությունն էր:

գ. «Շատ մասերով և շատ կերպերով» (Եբր.1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե հենց հայտնության փաստը:

Դ. Սովորաբար շեշտադրման համար նաև կիրառվում էր՝

1. ԴԵՐԱՆՎԱՆ կրկնությունը, որն արդեն առկա էր ԲԱՅԻ խոնարհված ձևում: Օրինակ՝ «Ես Ինքս ձեզ հետ եմ...» /հայ.՝ «Եվ ահա Ես ձեզ հետ եմ»/ (Մատթ.28:20):

2. Սպասված ՇԱՂԿԱՊԻ կամ մեկ այլ ԿԱՊԵՐԻ, արտահայտությունների կամ նախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն («չկապված»): Սպասվում էր, որ ՇԱՂԿԱՊԸ պետք է լիներ, հետևաբար դրա բացակայությունը կարող էր ուշադրություն գրավել իր վրա: Օրինակներ՝

ա. Երանելիները, Մատթ.5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)

բ. Հովհ.14:1 (նոր թեմա)

գ. Հռոմ.9:1 (նոր բաժին)

դ. 2 Կորնթ.12:20 (շեշտադրվում է հերթականությունը)

3. Տրված համատեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ «Իր փառավոր շնորհքի գովասանքի համար» (Եփես.1:6,12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր շեշտադրելու Սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:

4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի կիրառությունը

ա. Մեղմասությունները թաքույի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ «ննջել»՝ մահ բառի փոխարեն (Հովհ.11:11-14) կամ «ոտքեր»՝ տղամարդու սեռական օրգանի փոխարեն (Հռոմ. 3:7-8; 1 Թագ.24:3):

բ. Շրջաբանությունները Աստծո անվանը փոխարինող բառեր են, ինչպես օրինակ՝ «Երկնքի թագավորություն» (Մատթ.3:21) կամ «ձայն Երկնքից» (Մատթ.3:17):

գ. Փոխաբերություններ

(1) անվանական չափազանցություններ (Մատթ.3:9; 5:29-30; 19:24)

(2) մեղմ չափազանցություններ (Մատթ.3:5; Գործք 2:36)

(3) անձնավորում (1 Կորնթ.15:55)

(4) հեզնանք (Գաղ.5:12)

(5) բանաստեղծական հատվածներ (Փիլ.2:6-11)

(6) բառախաղ

(ա) «եկեղեցի»

(i) «եկեղեցի» (Եփես.3:21)

(ii) «կոչում» (Եփես.4:1,4)

(iii) «կանչված» (Եփես.4:1,4)

(բ) «ազատ»

(i) «ազատ կին» (Գաղ.4:31)

(ii) «ազատություն» (Գաղ.5:1)

(iii) «ազատել» (Գաղ.5:1)

դ. Բարբառային լեզու՝ մի լեզու որը բնորոշ է տվյալ մշակույթին կամ լեզվին:

(1) «Կերակուր» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.4:31-34)

(2) «Տաճար» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.2:19; Մատթ.26:61)

- (3) Կարեկցանքի երբայերեն բարբառը «ատել» է (Ծննդ.29:31; 2 Օր.21:15; Ղուկ.14:36; Հովհ.12:25; Հռոմ.9:13):
 - (4) «Ամենքս» բառն՝ ի համեմատություն «շատերը» բառի: Համեմատություն՝ Եսայի 53:6 («ամենքս»), իսկ 53:11 և 12 («շատերը»): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռոմ.5:18 և 19:
 - 5. Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության կիրառություն: Օրինակ՝ «Տեր Հիսուս Քրիստոս»
 - 6. *autos* բառի կիրառումը՝
 - ա. հողի հետ (որոշիչ) այն թարգմանվում էր որպես «նույն»
 - բ. առանց հողի (ստորագյալ) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:
- Ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն լեզուն, կարող է գտնել շեշտադրված տեղերը հետևյալ կերպ.
- 1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:
 - 2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հատկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել «բառացի» թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) «համարժեք դինամիկ» թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Ձեզ նաև մեծապես կօգնի *Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով* Բեյքերի հրատարակության գիրքը (*The Bible in Twenty-Six Translations*, Baker):
 - 3. Օգտվելով Չոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ *Հասուն Ենթադրումն Աստվածաշունչում (the Emphasized Bible, Joseph Bryant Rotherham /Kregel/, 1994)*:
 - 4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.
 - ա. *Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ (The American Standard Version, 1901)*:
 - բ. *Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Լաուն Յանգի (Young's Literal Translation of the Bible /Gardian Press/, 1976)*:

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Դրանք չպետք է կիրառել դոգմատիկ և ոչ ճկուն կերպով, այլ որպես մի քայլ ՆԿ-յան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն նաև ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են ՆԿ-ի հատուկ սերտողությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Քերականությունը հասկանալը ծայրահեղ կարևոր է, սակայն մեզ նաև օգնում են պատմական և գրական համատեքստերը, ինչպես նաև բառերի ժամանակակից օգտագործման և զուգահեռ տեքստերի կիրառման մասին իրազեկությունը: